ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔՆԵՐԸ». ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ- ՀԱՏՈՐ 1)

Գիտաժողովը նվիրվում է թավշյա հեղափոխության երկամյակին (2018-2020 **թթ**.)

ՀՀ ԳԱԱ ՏԻ

ԵՐԵՎԱՆ - 2020

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ECONOMICS AFTER M. KONTANYAN

ECONOMIC MIRACLES: WAYS OF IMPLEMENTING BEST PRACTICIES IN ARMENIA

(The Contemporary Issues of Socioeconomic Development in the Republic of Armenia-Vol. 1)

The conference is dedicated to the second anniversary of velvet revolution (2018-2020)

Institute of Economics of NAS RA

YEREVAN - 2020

ՀՏԴ 338
ԳՄԴ 65.05
Տ 776

Երաշխավորված է հրատարակության
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր **Յուրի Սուվարյան** (Հայաստան)
տ. գ. դ., պրոֆեսոր **Ռոբերտ Սարինյան** (Հայաստան)
տ. գ. դ., պրոֆեսոր **Գրիգորի Վահանյան** (Հայաստան)
UNIDO-ի միջազգային փորձագետ **Վիկտոր Զախարյան** (Ավստրիա)
տ. գ. դ., պրոֆեսոր **Սերգեյ Դոխոլյան** (Ռուսաստան)
տ. գ. դ., դոցենտ **Տիգրան Հարությունյան** (Հայաստան)
տ. գ. դ. **Դավիթ Հարությունյան** (Հայաստան)
տ. գ. թ., դոցենտ **Քրիստինե Բաղդասարյան** (Հայաստան)
տ. գ. թ. **Լիլիթ Սարգսյան** (Հայաստան)
տ. գ. թ., դոցենտ **Մերի Մանուչարյան** (Հայաստան)
տ. գ. թ. **Սվետլանա Դալլաքյան** (Հայաստան)

Գիտական խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տ. գ. դ., պրոֆեսոր **ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Տ 776 «Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում: Գիտաժողովի նյութեր/ Գիտ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2020.- 488 էջ:

Գիտաժողովի նյութերն իրենց մեջ ներառում են 20-րդ դարում «տնտեսական հրաշքներ» իրականացրած եվրոպական, ասիական ու խաղաղօվկիանոսյան և այլ տարածաշրջանների ավելի քան երկու տասնյակ պետությունների առաջավոր փորձը, որն ընթերցողին հնարավորություն կտա առանց տարբեր աղբյուրների (էլեկտրոնային կամ տպագիր) դիմելու տեղեկություն ստանալու վերջին 70 տարիներին տարբեր երկրներում իրականացված, տնտեսական կյանքի վրա էական ազդեցություն թողած արմատական բարեփոխումների պատճառների, ընթացքի ու արդյունքների մասին, դրանցում կիրառված հիմնուղիներն ու գործիքակազմերն օգտակար և ուսանելի կարող են լինել նաև Հայաստանի գործադիր և օրենսդիր իշխանություններին իրենց ծանր, ստեղծագործ, հեղափոխական փոփոխությունների միտված գործունեության մեջ: Գիրքը օգտակար և ուսանելի կարող է լինել նաև բուհերի դասախոսների, գիտական աշխատողների, պետական կառավարման մարմինների աշխատակիցների, հայցորդների, ասպիրանտների ու ընթերցողների լայն շրջանակների համար:

ՀՏԴ 338
ԳՄԴ 65.05

ISSN 1829-4324
ISBN 978-9939-9214-2-6
© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2020

UDC 338
LBC 65.05
T 776

Approved for publication by the decision of Scientific Council of the Institute of Economics after M. Kotanyan of NAS RA

Editorial Board:

Yuri Suvaryan, Academician of NAS RA, D.Sc. (Economics), Professor (Armenia)
Robert Sarinyan, D.Sc. (Economics), Professor(Armenia)
Grigori Vahanyan, D.Sc. (Economics), Professor(Armenia)
Viktor Zakharian, International Expert (UNIDO) (Austria)
Sergey Dokholyan, D.Sc. (Economics), Professor(Russia)
Tigran Harutyunyan, D.Sc. (Economics), Associate Professor(Armenia)
Davit Harutyunyan, D.Sc. (Economics) (Armenia)
Christina Baghdasaryan, Ph.D. (Economics), Associate Professor(Armenia)
Lilit Sargsyan, Ph.D. (Economics) (Armenia)
Meri Manucharyan, Ph.D. (Economics), Associate Professor(Armenia)
Svetlana Dallakyan, Ph.D. (Economics) (Armenia)

Science editor: VLADIMIR HARUTYUNYAN, Corresponding Member of NAS RA, D.Sc. (Economics), Professor

T 776

Economic miracles: Ways of implementing best practices in Armenia
Conference proceedings/Science editor: V. L. Harutyunyan – Yerevan: Institute of Economics after M. Kotanyan of NAS RA, 2020 – 488 pages

Conference proceedings include best practices of more than two dozen of countries in European, America and other regions that made “economic miracles” in the 20th century, which will allow the reader to receive information about the causes, process and results of radical reforms implemented in different countries over the past 70 years with significant impact on economic life, without referring to various sources (electronic or printed), principal directions and toolkit applied wherein may be useful and instructive for the executive and legislative authorities of Armenia in their hard, creative activities aimed at revolutionary changes. The book may be also useful and instructive for a wide range of university lecturers, researchers, officials of state government bodies, applicants, postgraduate students and readers.

UDC 338
LBC 65.05

ISSN 1829-4324
ISBN 978-9939-9214-2-6
© Institute of Economics after M. Kotanyan of NAS RA, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ (Վլադիմիր Հարությունյան) 11

ՀՀ ԳԱԱ ՏԻ ՏՆՕՐԵՆԻ ԽՈՍՔԸ (Վլադիմիր Հարությունյան) 13

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈ՞ՒՆ», ԹԵ՞ «ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (Վալերի Միրզոյան) 16

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (Աշոտ Մարկոսյան, Էլյանորա Մաթևոսյան) 32

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔՆԵՐԸ». ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (Վլադիմիր Հարությունյան) 52

1. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐ

1.1. «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ (Ռոբերտ Սարինյան, Բելլա Գաբրիելյան) 56

1.2. ԻՏԱԼԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ» (Դավիթ Պետրոսյան, Աննա Հարությունյան) 80

1.3. ԻՌԼԱՆԴԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ» (Սևակ Թորգոմյան) 90

1.4. ԻՍՊԱՆԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ» (Գևորգ Հարությունյան) 113

1.5. ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ» (Թաթուլ Մկրտչյան, Աստղիկ Հովհաննիսյան) 125

1.6. ԼԵՀԱՍՏԱՆԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ» (Դավիթ Հախվերդյան, Շուշան Մովսիսյան) 138

1.7. ԻՍԼԱՆԴԻԱՅԻ «ԿԱԹՍԱՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ» (Ռուբիկ Թովմասյան, Գայանե Թովմասյան) 150

2. ԱՍԻԱԿԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐ

2.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄՈԴԵԼԸ (Գևորգ Բախշյան, Ռոբերտ Թումանյան) 168

2.2. ՍԻՆԳԱՊՈՒՐԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ» (Լիլիթ Սարգսյան, Դոնարա Գրիգորյան) 182

2.3. «ՃԱՊՈՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ
(Սվետլանա Դալլաքյան) 203

2.4. ՄԱԼԱՅԶԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» «ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՄՈԴԵԼԸ
(Քրիստինե Բաղդասարյան, Սոնա Մարգարյան) 224

2.5. ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»
(Տաթևիկ Փարսադանյան, Տաթևիկ Շահինյան) 238

2.6. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»
(Արմինե Զախարյան) 254

2.7. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ
(Գրիգոր Մանուկյան) 271

3. ԱՅԼ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՐԿՐՆԵՐ

3.1. ԻՍՐԱՅԵԼԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» ՀԵՏԱԳԻԾԸ
(Մերի Մանուչարյան, Մերի Մուրադյան) 289

3.2. ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»
(Եվգենյա Հակոբյան, Լիանա Ազատյան) 311

3.3. ՎՐԱՍՏԱՆԻ «ՎԱՐԴԵՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ԴԱՍԵՐԸ ԵՎ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»
(Վահագն Խաչատուրյան, Արամ Խաչատուրյան) 328

3.4. ՉԻԼԻԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»
(Շողեր Պողոսյան, Անուշ Սարգսյան) 348

3.5. ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»
(Ռազմիկ Իսահակյան) 375

3.6. ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»
(Գոհար Ոսկանյան, Ծաղկանուշ Միրզոյան) 391

3.7. ՄԻԱՑՅԱԼ ԱՐԱԲԱԿԱՆ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ» ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ
(Գրիգորի Վահանյան, Վիկտոր Զախարյան) 409

4. ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

4.1. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ (Սամվել Բալասանյան) 426

4.2. ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ (Մամիկոն Ասլանյան) 434

4.3. **ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔՈՒՄ (Դիանա Գասպարյան)** 440

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ (ՀՆԱ) ԲԵՎԵՌԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (Վլադիմիր Հարությունյան).....450

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ (Գագիկ Մակարյան) 459

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔՆԵՐԻ» ԱՐՏԵՐԿՐՅԱ ՓՈՐՁՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԽՄԲԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ԵՐԿՐՆԵՐԸ.....467

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔՆԵՐԸ». ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 469

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ 476

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔ» ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՆՐԱՆՑ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ...479

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀՐԱՎԻՐՅԱԼՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ.....483

CONTENT

INSTEAD OF A PREFACE (Vladimir Harutyunyan) 11

OPEN SPEECH OF THE DIRECTOR OF
THE INSTITUTE OF ECONOMICS OF NAS RA (Vladimir Harutyunyan) 13

"ECONOMIC REVOLUTION" OR "STABILITY MANAGEMENT"?
(Valeri Mirzoyan) 16

FEATURES OF FORMATION AND DEVELOPMENT OF CORPORATE
PROPERTY IN THE REPUBLIC OF ARMENIA
(Ashot Markosyan, Elyanora Matevosyan) 32

ECONOMIC MIRACLES: WAYS OF IMPLEMENTING BEST PRACTICES IN
ARMENIA (Vladimir Harutyunyan) 52

1. EUROPEAN COUNTRIES

1.1. **PRINCIPLES OF "THE GERMAN ECONOMIC MIRACLE"**
(Robert Sarinyan, Bella Gabrielyan) 56

1.2. **"THE ECONOMIC MIRACLE" OF ITALY**
(David Petrosyan, Anna Harutyunyan) 80

1.3. **"THE ECONOMIC MIRACLE" OF** IRELAND
(Sevak Torgomyan) 90

1.4. **"THE ECONOMIC MIRACLE" OF** SPAIN
(Gevorg Harutyunyan) 113

1.5. **"THE ECONOMIC MIRACLE" OF** FINLAND
(Tatul Mkrtchyan, Astghik Hovhannisyan) 125

1.6. **"THE ECONOMIC MIRACLE" OF** POLAND
(Davit Hakhverdyan, Shushan Movsisyan) 138

1.7. **"THE ECONOMIC MIRACLE" OF** ICELAND AND
"POTS AND PANS REVOLUTION"
(Rubik Tovmasyan, Gayane Tovmasyan) 150

2. COUNTRIES OF ASIA-PACIFIC REGION

2.1. MODEL OF ECONOMIC TRANSFORMATIONS OF CHINA
(Gevorg Bakhshyan, Robert Tumanyan) 168

2.2. "THE ECONOMIC MIRACLE" OF SINGAPORE
(Lilit Sargsyan, Donara Grigoryan)..... 182

2.3. THE PHILOSOPHY OF THE "JAPANESE ECONOMIC MIRACLE"
(Svetlana Dallakyan) 203

2.4. "THE ECONOMIC MIRACLE" OF MALAYSIA:
MODEL OF "CORPORATE NATIONALISM"
(Christina Baghdasaryan, Sona Margaryan) 224

2.5. "THE ECONOMIC MIRACLE" OF INDONESIA
(Tatevik Parsadanyan, Tatevik Shahinyan) 238

2.6. "THE ECONOMIC MIRACLE" OF THE SOUTH KOREA
(Armine Zakharyan) 254

2.7. OUTLINES OF ECONOMIC REFORMS OF INDIA (Grigor Manukyan).....271

3. OTHER COUNTRIES

3.1. TRAJECTORY OF "THE ECONOMIC MIRACLE" OF ISRAEL
(Mery Manucharyan, Mery Muradyan) 289

3.2. "THE ECONOMIC MIRACLE" OF NEW ZEALAND
(Yevgenya Hakobyan, Liana Azatyan) 311

3.3. "THE ECONOMIC MIRACLE" OF GEORGIA AND
THE LESSONS OF "ROSE REVOLUTION"
(Vahagn Khachaturyan, Aram Khachaturyan) 328

3.4. "THE ECONOMIC MIRACLE" OF CHILE
(Shogher Poghosyan, Anush Sargsyan) 348

3.5. "THE ECONOMIC MIRACLE" OF THE REPUBLIC OF ESTONIA
(Razmik Isahakyan).....375

3.6. "THE ECONOMIC MIRACLE" OF THE REPUBLIC OF LATVIA
(Gohar Voskanyan, Tsaghkanush Mirzoyan)..... 391

3.7. "THE ECONOMIC MIRACLE" OF THE UNITED ARAB EMIRATES
AND MAP OF ECONOMIC INNOVATIONS
(Grigory Vahanyan, Viktor Zakharyan) 409

4. THE RESULTS OF VELVET REVOLUTION IN THE REPUBLIC OF ARMENIA

4.1. IN GYUMRI COMMUNITY (Samvel Balasanyan) 426

4.2. IN VANADZOR COMMUNITY (Mamikon Aslanyan) 434

4.3. IN EJMIATSIN CITY (Diana Gasparyan) 440

INSTEAD OF EPILOGUE

CORONAVIRUS AS A MEANS OF POLARIZATION OF
GROSS DOMESTIC PRODUCT (GDP) OF THE REPUBLIC OF ARMENIA
(Vladimir Harutyunyan) 450

INFLUENCE OF CORONAVIRUS ON SOCIO-ECONOMIC INDICATORS IN THE
REPUBLIC OF ARMENIA. THE DYNAMICS OF THE NECESSARY STEPS
(Gagik Makaryan) 459

APPENDIX 1

GROUPS STUDYING BEST PRACTICES OF "ECONOMIC MIRACLE"
AND COUNTRIES UNDER REVIEW 467

APPENDIX 2

"ECONOMIC MIRACLES": WAYS OF IMPLEMENTING BEST PRACTICES IN
ARMENIA 469

APPENDIX 3

OUR AUTHORS 476

APPENDIX 4

INFORMATION ABOUT PERSONS WHO MADE "ECONOMIC MIRACLES",
POSITIONS THEY OCCUPY AND PERIODS "ECONOMIC MIRACLES" 479

APPENDIX 5

CONFERENCE INVITE LIST 483

Վլադիմիր Հարությունյան

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հարգելի՛ ընթերցող, այս ժողովածուի մեջ թաքնված է մի այնպիսի գանձ, որը կարող է փոխել Հայաստանի տնտեսությունը, մի գանձ, որը մարդու աղքատությունը կարող է վերածել հարստության: Ընթերցո՛ղ, այդ գանձից բաժին տուր մարդկանց՝ անկախ այն բանից, թե որքան է դրա չափը: Նույնիսկ փոքր չափն իսկ մեծ օգուտ կտա:

Սույն ժողովածուն յուրահատուկ է նրանով, որ ընթերցողին հնարավորություն է տալիս առանց տարբեր աղբյուրների (էլեկտրոնային կամ տպագիր) դիմելու տեղեկություն ստանալ վերջին 70 տարիներին տարբեր երկրներում իրականացված, տնտեսական կյանքի վրա էական ազդեցություն թողած բարեփոխումների պատճառների, ընթացքի և արդյունքների մասին:

2019 թվականի մայիսին ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի «Տնտեսական հեղափոխություն» խորագրով կազմակերպած գիտաժողովին հանրապետության վարչապետի և կառավարության անդամների մասնակցությունը պարտավորեցնող էր ՀՀ ԳԱԱ ՏԻ համար: Հղացավ նոր գաղափար: Կազմվեցին աշխատանքային խմբեր՝ 20-րդ դարում «տնտեսական հրաշք» իրականացրած երկու տասնյակ պետությունների առաջավոր փորձը ուսումնասիրելու և դրանք ՀՀ տնտեսությունում գործարկելու համար: Արդյունքում կատարվել են կիրառական առաջարկություններ և եզրակացություններ, որոնք հնարավոր գործնական կիրառում կարող են ունենալ ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում: Ընդ որում՝ դրանք ժողովածուում ներկայացված են գիտահանրամատչելի լեզվով՝ հասկանալի ոչ միայն տնտեսական քաղաքականություն իրականացնող պատասխանատուների, այլև շարքային քաղաքացիների համար: Այդ երկրները ներառված են ստորև բերված 3 խոշորացված խմբերում՝

1. ***Եվրոպական տարածաշրջանի երկրներ***
   1.1. Գերմանիա
   1.2. Իտալիա
   1.3. Իռլանդիա
   1.4. Իսպանիա
   1.5. Ֆինլանդիա
   1.6. Լեհաստան
   1.7. Իսլանդիա
2. ***Ասիական և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներ***
   2.1. Չինաստան
   2.2. Սինգապուր
   2.3. Ճապոնիա
   2.4. Մալայզիա

2.5. Ինդոնեզիա
2.6. Հարավային Կորեա
2.7. Հնդկաստան

3. ***Այլ տարածաշրջանի երկրներ***
3.1. Իսրայել
3.2. Նոր Զելանդիա
3.3. Վրաստան
3.4. Չիլի
3.5. Էստոնիա
3.6. Լատվիա
3.7. Միացյալ Արաբական Էմիրություններ

4. ***Թավշյա հեղափոխության պտուղները Հայաստանի Հանրապետությունում.***
4.1. Գյումրի համայնքում
4.2. Վանաձոր համայնքում
4.3. Էջմիածին քաղաքում

Գիտաժողովի նյութերի վերջում տեղադրված է 5 հավելված՝ ստորև բերված բովանդակություններով.

Հավելված *1*
«Տնտեսական հրաշքի» արտերկրյա փորձն ուսումնասիրող խմբերը և ուսումնասիրվող երկրները

Հավելված *2*
«Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում

Հավելված *3*
Մեր հեղինակները

Հավելված *4*
Տեղեկություններ «տնտեսական հրաշք» իրականացրած անձանց, նրանց զբաղեցրած պաշտոնների ու ժամանակաշրջանի մասին

Հավելված *5*
Գիտաժողովի հրավիրյալների ցուցակ:

Գիտաժողովը նվիրված է ՀՀ-ում թավշյա հեղափոխության երկամյակին (2018-2020 թթ.):

Հույս ունենք, որ սույն գիտաժողովի նյութերը կծառայեն իրենց նպատակին՝ օգտակար և ուսանելի կլինեն հայրենի կառավարությանը իր ծանր, ստեղծագործ, հեղափոխական փոփոխությունների միտված գործունեության մեջ:

Վլադիմիր Հարությունյան

ՀՀ ԳԱԱ ՏԻ ՏՆՕՐԵՆԻ ԽՈՍՔԸ

Հարգելի՛ գործընկերներ:

Գաղտնիք չէ, որ ժամանակակից աշխարհում տնտեսության մեջ առավել կարևոր գործոններ են դառնում մարդկանց հոգեբանությունը և տրամադրությունը: Զուր չէ «գերմանական հրաշքի» հեղինակ համարվող Լյուդվիգ Էրհարդը մի առիթով նկատել, թե տնտեսությունը 50%-ով հոգեբանություն է: Կամ, հիշենք, որ երկրորդ աշխարհամարտի ավարտին Ճապոնիայի կործանված տնտեսությունը ինչպես վերածնվեց. այդ «ճապոնական հրաշքը» տեղի ունեցավ շնորհիվ հենց ճապոնացիների մտածելակերպի առանձնահատկությունների: Ահավասիկ, մենք այսօր կանգնած ենք հայ մարդու մտածելակերպը արմատապես փոխելու գերխնդրի առջև: Չէ՞ որ սակավահող Հայաստանի հողերի զգալի մասը չի մշակվում, չի նվազում աղքատության մակարդակը, իսկ երբեմն իր խնդիրների լուծման նպատակով, հայ մարդը, ցավոք, բռնում է արտագաղթի ճամփան: Մտածելակերպ փոխելով՝ մեր ժողովրդի միջից պետք է հանել գաղթականի հոգեբանությունը:

Մենք պետք է դասեր քաղենք նաև պատմությունից: Բոլորիդ քաջ հայտնի է ռադիո և հեռուստահաղորդավար, ծագումով հրեա Յուրի Լևիտանի անուրանալի վաստակը Հայրենական Մեծ Պատերազմի հաղթանակի գործում. նա կարողացավ իր հզոր ձայնով, ձայնի մոգական տեմբրով ու հիպնոսի շնորհիվ խորապես ազդել խորհրդային ժողովրդի մտածելակերպի վրա և ոգեկոչել դեպի հաղթանակ: Ի դեպ, նա Մոսկվայից ընդամենը 2 հաղորդում է ունեցել, առաջինը, երբ սկսվել է պատերազմը, և երկրորդը, երբ Գերմանիան կապիտուլյացիայի է ենթարկվել, իսկ մնացած հաղորդումները նա կատարել է Սովետական Միության տարբեր վայրերից, քանի որ Հիտլերի հետախույզները նրան ոչնչացնելու ցուցում ունեին: Ասածիս նպատակն այն է, որ հայ ժողովրդի մտածելակերպը փոխելու համար անհրաժեշտ է օգտվել նաև նման հնարավորություններ ունեցող մարդկանց ծառայություններից: Դրանում պետք է ներգրավել նաև գրականագետների, լեզվաբանների ու գրողների ստեղծագործական ողջ ներուժը: Այլ կերպ ասած՝ այս գործում պետք է ներգրավվի հայ ժողովրդի մտավոր սերուցքն ամբողջությամբ, բոլոր նրանք, ում համար թանկ են հայոց պետականությունը և հայ ժողովրդի ճակատագիրը: 21-րդ դարում սա՛ է հայ ժողովրդի ամենամեծ մարտահրավերը:

Մենք պարտավո՛ր ենք այս փորձությունն էլ հաղթահարել:

Ժողովրդական խոսք կա. «Հացը տուր հացթուխին, մի բան էլ ավելի տուր»: Ստեղծված իրավիճակում մենք բոլորս, յուրաքանչյուրս մեր գործով և հնարավորությամբ պետք է բազմապատկենք սեփական ջանքերը հայոց պետականության ամրապնդման և բարգավաճման ուղղությամբ: Չմտածված, անհեռանկարային քայլեր կատարելու իրավունք այլևս չունենք, քանզի յուրաքանչյուր սխալ քայլ թանկ է նստում հասարակական կյանքի յուրաքանչյուր ոլորտի վրա՝ սկսած կենցաղային հարցերից մինչև պետական սահմանի պաշտպանություն:

Սա է այսօրվա գիտաժողովի առաքելության փիլիսոփայությունը՝ մեկտեղել հայ տնտեսագիտական միտքը՝ Հայաստանում մակրոտնտեսության մակարդակով «տնտեսական հրաշքի» իրականացման գործում: Միկրոմակարդակում մենք արդեն քաղում ենք թավշյա հեղափոխության պտուղները. դրանց մասին Գյումրի, Վանաձոր և Էջմիածին քաղաքների օրինակով կզեկուցեն քաղաքապետները:

Կարծում եմ, որ գիտաժողովի նյութերը պետք է լինեն հնարավորինս գիտահանրամատչելի՝ համահունչ շարքային քաղաքացիների հոգուն ու մտքին և դառնան նրանց սեփականությունը բոլոր իմաստուն խոսքերի պես, ինչպես, օրինակ, Հրանտ Մաթևոսյանի «սերմացու գողացող մկները», «թուխս գողացող աղվեսը» արտահայտությունները: Այս համատեքստում ցանկանում եմ բարձրաձայնել, որ հայ ժողովուրդը Հովհաննես Թումանյանին, Ավետիք Իսահակյանին ավելի լավ է ճանաչում, քան շատ և շատ ուրիշ գրողների ու գիտնականների, և դա լոկ այն պատճառով, որ նրանք գրել են գիտահանրամատչելի լեզվով, ինչը դժվար է, բայց մնայուն: Եվ եթե մենք՝ տնտեսագետներս, հետևենք նրանց օրինակին, ապա այդ դեպքում մեր գործը լավ արած կլինենք և տնտեսագիտությունը կբարձրացնենք «արվեստի մակարդակի», այն է՝ կատարելության:

Հարգելի՛ գործընկերներ:

ՀՀ ԳԱԱ ՏԻ-ը ինքնանպատակ գիտական գործունեություն չի ծավալել ու չի ծավալում: Վերջին տարիներին ինստիտուտը բազային հետազոտական թեմաների ընտրությունը կատարելիս հիմք է ընդունել կառավարության գործունեության ծրագրերի ելակետային դրույթները, որի արդյունքում 2019 թ. նոյեմբերի գիտաժողովում կիրառական առաջարկություններ են արվել «ԱԱՀ-ի մասին», «Շահութահարկի մասին», «Ակցիզային հարկի մասին», «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքների առանձին դրույթներ ուժը կորցրած ճանաչելու, փոփոխություններ, որոնց շնորհիվ անշուշտ կավելանան նաև հարկային մուտքերը:

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ակադեմիան գիտական գործունեության գծով ՀՀ կառավարության պաշտոնական խորհրդատուն է, որի առաջարկները քննարկում են ՀՀ կառավարությունը և պետական կառավարման համապատասխան մարմինները, ինչին էլ նպատակաուղղված է եղել ՀՀ ԳԱԱ ՏԻ նախորդ 15 տարիների գիտական գործունեությունը: Ասվածի խոսուն վկայությունն է այն, որ ինստիտուտի հետազոտական աշխատանքներից բխող շուրջ 5 տասնյակ կիրառական առաջարկություններ, որոնք վերաբերում են տարբեր բնագավառների ու ոլորտների, ամեն տարի ներկայացվել են ՀՀ կառավարությանը: Ընդ որում, այդ առաջարկություններից երկուսը Տիգրան Սարգսյանի կառավարությունը բարձրացրել է օրենսդրական մակարդակի, որի արդյունքում 2009թ. հունվարի 1-ից ուժը կորցրած են ճանաչվել «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը և «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթներ: Կիրառական որոշ առաջարկություններ իրենց արտացոլումն են ստացել կառավարության ռազմավարական փաստաթղթերում և որոշումներում: Սակայն կան նաև բավականին կիրառական առաջարկություններ, որոնք թեպետ հաշվի չեն առնվել, բայց չեն կորցրել իրենց արդիականությունը

և օգտակար կարող են լինել հեղափոխական կառավարությանը ռազմավարական խնդիրները լուծելիս:

Տնտեսագիտության ինստիտուտի նպատակամետ հետազոտության վառ օրինակ է նաև սույն գիտաժողովը, որն ամփոփում է 20-րդ դարում «տնտեսական հրաշքներ» իրականացրած եվրոպական, ասիական, խաղաղօվկիանոսյան և այլ տարածաշրջանների ավելի քան երկու տասնյակ պետությունների առաջավոր փորձը, որն ընթերցողին հնարավորություն է տալիս առանց տարբեր՝ էլեկտրոնային կամ տպագիր աղբյուրների դիմելու, տեղեկություն ստանալ վերջին 70 տարիներին տարբեր երկրներում իրականացված և այդ երկրների տնտեսական կյանքի վրա էական ազդեցություն թողած արմատական բարեփոխումների պատճառների, ընթացքի և արդյունքների մասին: Դրանցում կիրառված հիմնուղիներն ու գործիքակազմերը օգտակար և ուսանելի կարող են լինել նաև Հայաստանի գործադիր և օրենսդիր իշխանություններին՝ իրենց ծանր, ստեղծագործ, հեղափոխական փոփոխություններին միտված գործունեության մեջ: Այդ հետազոտությունների արդյունքում արվել են կիրառական առաջարկություններ, որոնք հնարավոր գործնական կիրառում կարող են ունենալ ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում. դրանք ժողովածուում ներկայացված են գիտահանրամատչելի լեզվով՝ հասկանալի ոչ միայն տնտեսական քաղաքականություն իրականացնող պատասխանատուների, այլև շարքային քաղաքացիների համար:

Մի հարցի մասին ևս ցանկանում եմ իրազեկել Ձեզ և շնորհակալություն հայտնել հանրապետության վարչապետին և կառավարության այն անդամներին, ովքեր 2019 թ. մայիսի 21-ին մասնակցեցին «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով Հայաստանի գիտությունների ակադեմիայում ինստիտուտի կազմակերպած գիտաժողովին և իրենց ներկայությամբ շահադրդեցին տնտեսագիտության ինստիտուտին կյանքի կոչելու այսպիսի խորագրով գիտաժողով կազմակերպելու գաղափարը:

Հարգելի՛ գործընկերներ, ուզում եմ Ձեզ տեղեկացնել, որ գիտաժողովի նյութերին Լոնդոնի միջազգային հեղինակավոր փորձագիտական խորհուրդը տվել է բարձր գնահատական, իսկ հոդվածները ճանաչվել են Scopus-ի պահանջներին բավարարված: Սա բացառիկ իրադարձություն է Հայաստանի տնտեսագիտության ողջ պատմության ընթացքում:

Հույս եմ հայտնում, որ 2019 թ. նոյեմբերի գիտաժողովի արդիական կիրառական առաջարկությունները այսօրվա գիտաժողովի առաջարկությունների հետ մեկտեղ առաջիկայում կդառնան քննարկման առարկա հանրապետության գործադիր և օրենսդիր մարմիններում: Այդ նպատակով գիտաժողովից հետո մասնակիցները փոստային առաքմամբ կստանան՝

1. Գիտաժողովի հոդվածների ժողովածուն, որը ներառում է նաև գիտաժողովի նյութերի էլեկտրոնային տարբերակը,
2. Գիտաժողովի զեկուցումների և ելույթների համառոտագրված տեքստերը, ինչպես նաև էլեկտրոնային տարբերակը:

Վալերի Միրզոյան

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈ՞ՒՆ», ԹԵ՞ «ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

Հայաստանյան արդի իրականության հիմնական բնութագիրը, բնականաբար, 2018 թ. գարնանը կատարված «թավշյա հեղափոխությունն» է և վերջինիցս սկիզբ առած քաղաքական, տնտեսական և կազմակերպական բնույթի վերափոխումները: Սա համաժողովրդական բողոքի և դժգոհության ալիք էր, որ կտրուկ հեռացրեց նախկին ռեժիմի ղեկավարներին՝ լայն ասպարեզ բացելով իրական բարեփոխումների համար:

Հայաստանյան փորձը, որ նույնիսկ ստացավ «հայկական հեղափոխություն» անվանումը, փորձագետների ուշադրության կենտրոնում է: Մեջբերենք նրանցից մեկի սկզբունքորեն արդարացի գնահատականը[1]. «Հայաստանում այսպես կոչված «հեղափոխական» գործընթացներն ունեին խաղաղ, ոչ բռնի բնույթ, ուստի դրանք ըստ էության հեղափոխական չէին այդ հասկացության ավանդական իմաստով, այլ որպես ազդակ ծառայեցին երկրում առաջադեմ էվոլյուցիոն վերափոխումների համար՝ ըստ համերաշխաբանության օրենքների[*]: Նման պնդման համար գլխավոր փաստարկն այն է, որ մի կաթիլ արյուն չի թափվել, չի նկատվել որևէ բռնություն, ոչ էլ հանրային կյանքն է ընդհանուր առմամբ փլուզվել, որոշումների մեծ մասը ընդունվել է փոխզիջման հիմքով, հակամարտության մեջ քաղաքական հալածանք չի եղել ո՛չ «նախահեղափոխական» իշխանությունների կողմից, ո՛չ էլ «հաղթողների»: Ահա թե ինչու հայկական «հեղափոխությունը», իր յուրահատկության շնորհիվ, կարիք ունի գիտական, սոցիոլոգիական, պատմական, քաղաքագիտական, մշակութաբանական, փիլիսոփայական վերլուծության և գեղարվեստական արտացոլման»:

Եվ, իսկապես, զուտ քաղաքական իմաստով Հայաստանում կատարվեց իշխանության խաղաղ փոխանցում, խաղաղ, քանի որ նախկին ռեժիմը համատարած ատելության էր արժանացել, այն աստիճանի, որ դիմադրության պաշարները սպառել էր, բացի դրանից՝ հակամարտության կողմերը դրվատելի իմաստնություն դրսևորեցին՝ խուսափելով իրավիճակի անհարկի սրացումից: Այդուհանդերձ, կատարվածը, ըստ իս, **լիակատար հեղափոխություն էր արժե-**

---

[1] **Х. А. Барлыбаев**, Армянская «революция» в контексте солидарологии // «Философские науки», 2018, № 4, с. 7.

[*] **Խալիլ Բարլիբաևը** Ռուսաստանի ակադեմիայի փիլիսոփայության ինստիտուտի առաջատար գիտաշխատող է, կրկնակի դոկտոր՝ փիլիսոփայական գիտությունների և տնտեսագիտության: Նա իր առաջարկած «համերաշխաբանությունը» (солидарология) դիտարկում է որպես մի նոր՝ «գիտափիլիսոփայական գիտաճյուղ»՝ մեկնաբանելով վերջինս որպես «բախումնաբանություն» (конфликтология) գիտաճյուղի յուրատեսակ լրացում և, միաժամանակ, հակակշիռ: Նա խիստ հետաքրքրված է հայաստանյան փորձով և համարում է, որ մեզանում կատարվածն այդ համերաշխաբանության սկզբունքների փայլուն հաստատումն է:

բանական առումով. մարդիկ սկսեցին հավատալ սոցիալական արդարությանը, վերածնվեց շարքային քաղաքացիների հավատը դեպի անկաշառ և նվիրյալ պաշտոնյաները, վստահություն առաջացավ համախմբմամբ տնտեսական բոլոր բարդությունները հաղթահարելու և «նոր Հայաստան» ստեղծելու: Այլ հարց է, թե որքանով օգտագործվեց կամ ինչպես մսխվեց իրական բարեփոխումների այդ հզոր ներուժը:

Հայտնի բան է, որ ժողովրդավարության պայմաններում իշխանության եկած քաղաքական ամեն մի ուժ իրեն ընտրած քաղաքացիներին խոստումներ է տալիս, առավել ևս դա վերաբերում է հեղափոխական ուժին, մանավանդ դյուրին, ոչ բռնի, «թավշյա» ճանապարհով եկած: Ե՛վ հեղափոխականներն են վստահ լինում իրենց ուժերին, և՛ զանգվածներն են հավատով լի: Բայց երբ որոշ ժամանակ է անցնում, իսկ խոստումները չեն կատարվում, իշխող ուժը սկսում է կորցնել վստահության քվեն և հաջորդ համապետական ընտրություն-ների ժամանակ իր տեղը զիջում է ընդդիմությանը. սա՛ է ժողովրդավարության էությունը, և առայժմ մարդկանց արդարացի համակեցության կազմակերպման ու կառավարման ավելի լավ ձև չի գտնվել: Դե, իսկ եթե խոստումները չես կատարել (էական չէ՝ օբյեկտիվ թե սուբյեկտիվ պատճառներով), բայց չես էլ ուզում իշխանությունը թողնել, այդժամ ասպարեզ է գալիս ժողովրդավարության աղավաղված ձևը՝ «ամբոխահաճությունը» (պոպուլիզմ), և ժամկետանց իշխա-նավորները սկսում են սեփական կառավարումն արդարացնել և երկարաձգել տարբեր քաղաքական բեմադրություններով. տալիս են նորանոր գրավիչ խոստումներ, մոգոնում են հեղաշրջման կեղծ սցենարներ, սկսում «վիուկների որս», սահմանափակում խոսքի ազատությունը, անգամ հրահրում կարճատև պատերազմ հարևան պետության դեմ և այլն. տարբեր երկրներում դա տարբեր կերպ է տեղի ունենում:

Ինչպես հայտնի է, քաղաքական հեղափոխությունն առաջնորդած և ներ-կայում իշխող կուսակցությունը 2019 թ. սկզբին առաջադրեց Հայաստանում «տնտեսական հեղափոխություն» իրականացնելու խնդիրը՝ որպես «թավշյա հեղափոխության» շարունակություն, հաջորդ փուլ: ՀՀ տնտեսական զար-գացման և ներդրումների նախարարն ավելի որոշակիացրեց ընդհանուր հար-ցադրումը. նա ուղղակի հայտարարեց «տնտեսական հեղափոխության» մեկ-նարկի մասին, նաև հակիրճ հավելեց հայեցակարգային բնույթի մի դրույթ. «Հեղափոխությունը չպիտի ավարտվի: Հեղափոխությունը պիտի երկար շարու-նակվի և տա սպասելի արդյունքներ»[1]: Այս ինքնին շատ հրապուրիչ գաղա-փարը խանդավառ ընդունելություն գտավ. թեմայով սկսեցին զբաղվել հիմնա-կանում տնտեսագետները, մասամբ՝ նաև քաղաքագետները, ծայր առավ հրա-պարակումների շարք տնտեսական հեղափոխության էության, պայմանների, շարժիչ ուժերի, փուլերի մասին և այլն:

[1] Տե՛ս https://armeniasputnik.am/economy/20190131/17047265/armenia-tntesakan-hexapoxutyun.html

Այս հարցի առթիվ տողերիս հեղինակի դիրքորոշումը, որպես սոցիալական փիլիսոփայի, հետևյալն է: **Նախ**՝ ընդհանուր առմամբ, արդի **Հայաստանի տնտեսության արագընթաց զարգացման**, **ներառյալ** «**թավշյա հեղափոխության**» **հռչակած նպատակների կենսագործման անհրաժեշտությունը կասկածից վեր է**: Սակայն միանգամայն ակնհայտ է նաև, որ դրա համար հարկավոր է հավասարակշռված պետական քաղաքականություն, ամենից առաջ՝ ռազմավարական հարցադրումների և մարտավարական լուծումների հստակեցում: Սա նշանակում է, ամեն ինչից զատ, որ «տնտեսական հեղափոխությունը» չի սկսվում պարզապես դրա մեկնարկի հռչակմամբ:

Երկրորդ՝ տնտեսությունը՝ որպես ինքնավերարտադրվող, ուստի ներքնապես էվոլյուցիոն զարգացմանը միտված մի համակարգ, բնավ հակված չէ հեղափոխական, այսինքն՝ կտրուկ, ցնցումային փոփոխությունների: Ահա թե ինչու **զուտ հեղափոխական պաթոսն այստեղ ոչ միայն օգտակար չէ**, **այլև կարող է վնասել իրական հիմնախնդիրների լուծմանը**:

Մեր այս երկու դիտարկումները կարևոր են, եթե ցանկանում ենք խուսափել չհիմնավորված նպատակադրումներից, ուստի և դրանց անխուսափելի ձախողման սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական ծանր հետևանքներից: Իսկ ձախողման վտանգը մեծանում է հատկապես, երբ հսկայական իշխանության տնօրինող ղեկավարի գերվստահությունը խարսխված է լինում նախկին պլանների անթերի կատարման վրա, մանավանդ երբ դրանք իրականում կեղծված են: Այդպիսի ղեկավարն ունակ է ինքն իրեն ներշնչելու և այլոց հավատացնելու, թե իբր հնարավոր է «վերակառուցել» այն, ինչը դեռ կառուցված չէ, ունակ է նաև անխոհեմաբար նման թերատ կառույցից ակնկալելու աճի աննախադեպ ընթացք՝ արագացում: Ընթերցողներից ոմանք, անտարակույս, հիշեցին «վերակառուցում» և «արագացում» բառերը, որոնք, հետահայաց դիտարկմամբ, այլ բան չեղան, քան Խորհրդային Միության պես հսկա տերության մոտալուտ փլուզումը գուժող խորհրդանիշներ (թեպետ ժամանակին հրամցվում էին որպես ողջ հասարակության բարեփոխման «կախարդական փայտիկ»): Ձախավեր բարեփոխիչ Միխայիլ Գորբաչովին դիպուկ է բնութագրել «սինգապուրյան հրաշքի» գլխավոր ճարտարապետը՝ **Լի Կուան Յուն**. «Նա փաստորեն նետվեց լողավազանի ամենախոր տեղը՝ նախապես չսովորելով լողալ»[1]: Եվ, իհարկե, այս բնույթի ձախողումներից, նաև թեկուզ բացահայտ արկածախնդրական նպատակադրումներից (իսկ դրանք քիչ չեն եղել պատմության ընթացքում և այսօր էլ, իսկն ասած, ամբոխահաճ որոշ առաջնորդների զինանոցում են) նույնպես հնարավոր է և անհրաժեշտ է օգտակար դասեր քաղել նույնաբնույթ սխալները չկրկնելու համար:

Երրորդ՝ «թավշյա հեղափոխության» քաղաքական և կազմակերպական որոշ նպատակադրումներ շատ արագ իրականացան: Գաղտնիք չէ, որ հեղափոխական խանդավառությունը գերլավատեսություն է ներշնչում, և **ամեն մի**

[1] **Ли Куан Ю**, Сингапурское чудо / Пер. с англ., М., АСТ, 2017, с. 180.

փոփոխություն ի սկզբանե հայտարարվում է «բարեփոխում», մինչդեռ միայն դրա համալիր ամփոփումն ու հետահայաց գնահատականը կարող են նման որակման հիմք տալ: Եվ սա միայն բառագործածության ճշգրտման խնդիր չէ. դյուրին է «բարեփոխման» խոստումներ տալը, դրանք շահեկան են ամբոխահաճական կառավարման համակարգում, սակայն ի վերջո մոլորեցնում են հենց իրենց՝ բարեփոխիչներին: Մինչդեռ եթե խոսենք չեզոք «փոփոխությունից» կամ «վերափոխումից», ապա դրանց հասցեատիրոջ մեջ ավելի իրական ակնկալիքներ կձևավորենք, ուստի և անհարկի դժգոհություն հիմք չենք տա:

Դեռ **Ադամն Սմիթն** է ժամանակին անդրադարձել «բարեփոխում» երևույթի ըմբռնմանը: Մասնավորապես՝ նա վտանգավոր էր համարում իշխանավոր բարեփոխչի «անմիտ ինքնավստահությունը», երբ սա մանրախնդրորեն իրականացնում է իր պատկերացումները, անտեսում այլոց կարծիքը՝ չնկատելով իսկ, որ միջոցը վերածվել է ինքնին նպատակի. այդպիսին «նախապատվությունը տալիս է միջոցին, այլ ոչ նպատակին և ավելի շատ ջանում է կատարելագործել համակարգը, քան հոգում է այն մարդկանց մասին, որոնք իրենց վրա են զգալու այդ համակարգի և՛ օգուտները, և՛ վնասները»[1]: «Փոփոխությունների մոլագարների» գոյությունն է հաստատում նաև Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր **Քրիստոֆեր Գրեյը** և «փոփոխությունների հիստերիայի» շարքում նշում. «Փոփոխություններ կատարելու անհագ ցանկությամբ՝ կառավարողներն անտեսում են նորամուծությունների կարիքի բացակայությունը և այդ փոփոխություններին ուղեկցող ծախքերը՝ անձնակազմի հոգնածությունը»: Իսկ սրա հիմնական պատճառը կայունության և փոփոխականության հարաբերակցության ճիշտ ըմբռնման բացակայությունն է. «Կառավարիչների և առաջնորդների մեծ մասը քիչ է հետաքրքրվում իր գործունեության բուն էությամբ, այն է՝ կայունության կառավարմամբ»[2]:

Չորրորդ՝ անտարակույս, մեզ **հարկավոր է լրջորեն ուսումնասիրել աշխարհի որոշ երկրներում իրականացված «տնտեսական հրաշքի»** ընթացքը, շարժիչ ուժերը, տնտեսական կյանքի կառավարման սկզբունքները և ընդօրինակել օգտակար փորձը՝ սեփական տնտեսական, քաղաքական և ազգամշակութային առանձնահատկությունների հաշվառմամբ:

Հինգերորդ՝ նշված առանձնահատկությունների համեմատությունը մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ հայաստանյան ներկա պայմաններում **հանրային կառավարման գերխնդիրը պետք է լինի երկրում տնտեսական**, **քաղաքական և սոցիալական կայունության ապահովումը**: Խոսքը հատկապես այնպիսի կայունության մասին է, որը ինքնին զարգացման հանգրվանի պահն է, ուստի և հիմքն է ու գլխավոր պայմանը տնտեսական հնարավոր առաջընթացի:

Սկզբունքորեն հանրային կյանքի կառավարման մեջ կայունության և առաջընթացի դիալեկտիկայի ըմբռնումը սոցիալական փիլիսոփայության համար նոր բան չէ: Առավել սեղմ դա ձևակերպել է սոցիոլոգիայի հիմնադիրներից

---

[1] **А. Смит**, Теория нравственных чувств. М., Республика, 1997, с. 230.

[2] C. Grey, The folly of change // World Business Magazine, 28 March 2006.

Օգյուստ Կոնտը՝ "L'Ordre et le Progrès". սա՛ էր նրա կարգախոսը[1]: Հասկացությունների նման զուգորդումը պատահական չէ, այլ արտահայտում է կազմակերպված ամբողջի բնականոն գործառության ընդոծին պատճառակցման առավել խոր ըմբռնումը: Կոնտը կայունության («կարգավորվածության») և առաջընթացի ներդաշնակումը դիտում էր որպես իր «նոր ընդհանուր փիլիսոփայության» հիմնաքարը, չէր դադարում կրկնել, թե «առաջընթացը կայունության զարգացումն է»[2]:

Վերջապես, **վեցերորդ**՝ «տնտեսական հեղափոխություն» ձևակերպումը, թերևս, ընդունելի է որպես Հայաստանում ներկայում իշխող քաղաքական ուժի կամքի արտահայտություն, նաև՝ բավական հաջող **քաղաքական կարգախոս**, **որի իրական բովանդակությունը և իրականացման հիմնական պայմանը պիտի դիտարկել «կայունության կառավարումը»**:

Արդ, ի՞նչ անել: Այս հարցին ի պատասխան՝ հրապարակվեցին Հայաստանի առաջատար տնտեսագետների երկու հիմնարար հետազոտությունները: Առաջին՝ «**Ի՞նչ անել**» ժողովածուն նվիրված է Հայաստանի տնտեսության զարգացման արդիական հիմնախնդիրներին և ռազմավարական ուղղություններին[3]: Հաջորդ ժողովածուն նույն հիմնախնդիրներին է անդրադարձել, բայց այս անգամ ավելի թիրախավորված՝ դրանք դիտարկելով Հայաստանի տնտեսության արագացված տնտեսական զարգացման հրամայականի՝ «տնտեսական հեղափոխության» լույսով, ուստի վերնագրված է համապատասխանաբար[4]: Ամենայն հավանականությամբ, սրանց կհետևեն նոր հրապարակումներ՝ արդեն նվիրված «տնտեսական հեղափոխության» նվաճումների և հետագա ընթացքի հիմնախնդիրների վերլուծությանը:

Ժողովածուները գիտագործնական խորհրդաժողովի նյութեր են և արդեն այդքանով արժանի են մեծ ուշադրության. տեսական դատողությունների կողքին կան ուշագրավ և օգտակար շատ առաջարկություններ և հանձնարարականներ՝ ուղղված Հայաստանի առջև ծառացած տնտեսական, սոցիալական և կազմակերպական առաջնահերթ խնդիրների լուծմանը: Համակողմանի պարզաբանված և հիմնավորված են, մասնավորապես, հաստատութենական և կառուցվածքային փոփոխությունների հիմնական ուղղությունները, առավել հասցեական և արդյունավետ սոցիալական ծրագրերի ներդրումը, տնտեսության պետական կառավարման համակարգի կատարելագործման, մասնավորապես՝ կառավարչական ծախսերի կրճատման և մակրոտնտեսական հիմնավոր վճիռներ կայացնելու պայմանների ապահովումը, ներդրումների խթանման բարելավման եղանակները, գործարարության համար բարենպաստ միջավայրի ստեղծման

---

[1] Տե՛ս A. Conte, Système de politique positive, Paris, Vrin, 2002, p. 19.

[2] Անդ, էջ 74:

[3] Տե՛ս «Ի՞նչ անել. Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները», Երևան, Անտարես, 2018:

[4] Տե՛ս «Ի՞նչ անել 2. Տնտեսական հեղափոխություն. ընկալումը և գործարկումը», Երևան, Անտարես, 2019:

օրենսդրական և կազմակերպական հիմքերը և այլն: Անտեսված չեն նաև տնտեսական զարգացման խնդիրների լուծմանն առնչվող ռիսկերը և խոչընդոտները, մասնավորապես՝ բնակչության եկամուտների գերբևեռացումը աղքատացման ընդհանուր խորապատկերի վրա, փոքրիշատե ստվար «միջին խավի» բացակայությունը՝ իր կայունացնող սոցիալական դերով հանդերձ, սահմանափակ ֆինանսական միջոցները, աղքատության դեռևս բարձր մակարդակը, բնակչության՝ տակավին չդադարող արտահոսքը, լիովին չհաղթահարված կլանայնությունը և կոռուպցիոն դեպքերը, ստվերային տնտեսության դանդաղ կրճատումը, քաղաքական նոր վերնախավի այլասերման վտանգը, նոր օլիգարխիայի ձևավորման հնարավորությունը և այլն:

Միով բանիվ՝ մեր առջև պարզված է **Հայաստանի տնտեսության ամբողջ** «**անատոմիան**», **խնամքով քննության է առնված նաև** «**ֆիզիոլոգիան**», և հայաստանյան առաջատար տնտեսագետները իրենց խոր վերլուծություններով և գիտագործնական բնույթի հանձնարարականներով պատրաստ են նպաստելու վիճակի արմատական բարելավմանը (մնում է, որ «հիվանդն» ինքն էլ ցանկանա ապաքինվել): Կրկնում ենք, տնտեսագետ-խորհրդատուները հերթական անգամ ապացուցել են իրենց բարձր արհեստավարժությունը և պետության ղեկավարությանն իրապես աջակցելու պատրաստամակությունը:

Միևնույն ժամանակ մեր խնդրո առարկայի դիրքերից նկատենք, որ առաջին «Ի՞նչ անել» ժողովածուի և **ոչ մի հոդվածում չի հանդիպում** «**տնտեսական հեղափոխություն**» արտահայտությունը, ոչ մի հեղինակ չի գործածել այս բառակապակցությունը: Ինչո՞ւ. պատասխանը, կարծում եմ, Օկկամի հայտնի «ածելին» է, այն է՝ **անհարկի չբազմացնել նորանոր հասկացություններ**, **եթե արդեն եղածով լիովին հնարավոր է ասելիքն ասել**: Այնպես որ, Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները քննարկելիս ոչ մի կարիք չի զգացվել «տնտեսական հեղափոխության» անունը տալու: Մինչ այս հարցը շարունակելը հարկ եմ համարում ընդգծել, որ սույն ժողովածուի լրջագույն հոդվածներից մեկը նվիրված է ոչ թե ապագային, այլ անցյալին, միանգամայն տեղին այն հարցադրմանը, թե ինչով բացատրել մեր նախորդ ուղու ձախողումները: «Անկախության հռչակումից երեք տասնամյակ անց մենք կարող ենք ասել, որ պատասխան չի տրվել հետևյալ հարցին. «Ինչո՞ւ Հայաստանում (ինչպես նաև հետխորհրդային մյուս երկրներում) իրականացված շուկայական վերափոխումները հանգեցրել են երկրի ապաարդյունաբերականացմանը, անարդյունավետ և անմրցունակ տնտեսության ձևավորմանը, բնակչության՝ դեպի լավը փոփոխությունների նկատմամբ սոցիալական հոռետեսական ճնշվածությանը»[1]:

Արդ, եթե ընդունում ենք այս մտահոգությունը, ապա ներկա պայմաններում «տնտեսական հրաշքից» խոսելը դառնում է առնվազն անլուրջ զբաղմունք: Միևնույն ժամանակ անհրաժեշտ եմ համարում գոհունակությամբ արձանագրել, որ քննարկվող ժողովածուի մեջ կան հեղինակներ, որոնց տեսակետը լիո-

[1] **Գ. Վարդանյան**, ՀՀ տնտեսական զարգացման հայեցակարգային հիմնախնդիրները // «Ի՞նչ անել», էջ 52:

վին համահունչ է մերին, այսինքն՝ շեշտը դրվում է կայունության ապահովման վրա՝ որպես հիմք և գլխավոր պայման հետագա առաջընթացն ապահովելու: Այսպես, տնտեսական առաջընթացի ֆինանսական կարևոր աղբյուրներից մեկի՝ ներդրումների վիճակի և հեռանկարի վերլուծությունը միանգամայն տրամաբանորեն բերել է հետևյալ եզրակացությանը. «Նորույթ չէ, եթե նշենք այն փաստը, որ ներդրումները հոսում են այնտեղ, որտեղ կա կայունություն և շահութաբերություն: Հետևաբար ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումային միջավայրի բարելավման առաջնահերթ խնդիրներից է տնտեսական և քաղաքական կայունության ապահովումը»[1]:

Այդպես է, իրոք՝ **կայունությո՛ւն և առաջընթա՛ց**: Այստեղ հիշեցնենք, որ կայունության ըմբռնումը չի սահմանափակվում հանրային կյանքի մի ոլորտով. դա պիտի համակարգային լինի, ընդգրկի հանրության կենսագործունեության բոլոր ոլորտները: Ի տարբերություն նեղ վերլուծության համար արդարացված հատվածական (սեգմենտալիստական) մոտեցման՝ սոցիալ-փիլիսոփայական դիտարկումը ձգտում է ամբողջականացնող (հոլիստական) մոտեցման: Վերջինիս շնորհիվ է հասկանալի դառնում, որ հանրային կյանքի առանձին հատվածներն ունեն կայունության և դրա կառավարման զանազան, երբեմն՝ ներհակ չափանիշներ, մինչդեռ գլխավոր չափանիշը պետք է լինի միայն առաջընթացի հեռանկարը: Կայունության կառավարման միակողմանի, հատվածական ըմբռնման պարագայում հանրային կյանքի մի ոլորտի կամ մարդկանց մի խավի կայուն կյանքը կարող է խոչընդոտ դառնալ ամբողջ համակարգի կայուն գործառության և ներդաշնակ առաջընթացի համար: Նույն կերպ լիովին հնարավոր է ուժերն ու պաշարները կենտրոնացել մի նեղ բնագավառի վրա, օրինակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, և ապահովել այստեղ մի այնպիսի առաջընթաց, որն իսկապես արժանի կլինի «տնտեսական հրաշք» կոչվելու: Սակայն համակարգի ներսում խզվածքը հասցնելու է այն բանին, որ **կարճաժամկետ հաջողությունները ի վերջո հանգեցնելու են լայնածավալ կորուստների**:

Անդրադառնանք երկրորդ ժողովածուին՝ նույնքան ուշագրավ և համակողմանի ուսումնասիրություններով հարուստ, բայց այս անգամ կենտրոնացած մեկ հիմնական թեմայի շուրջ՝ «տնտեսական հեղափոխության ընկալումը և գործարկումը»: Ի՞նչն է անմիջապես աչքի զարնում. արդեն ասվեց՝ ընդամենը մեկ տարի առաջ Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները խորապես վերլուծելով և հիմնավոր առաջարկություններ անելիս հեղինակներից ոչ մեկը ոչ մի անգամ չի խոսում «տնտեսական հեղափոխության» անհրաժեշտության մասին, այդ հասկացությունն առհասարակ ոչ մի անգամ չի գործածվել, մինչդեռ երկրորդ ժողովածուում մեկեն հայտնվել են «տնտեսական հեղափոխության» գիտակ տեսաբան-

[1] **Հ. Մնացականյան**, Ներդրումային միջավայրի բարելավման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում// «Ի՞նչ անել», էջ 128:

ներ, իսկ սույն հասկացությունը գործածվում է ամբողջ վաթսունութ անգամ*: Չեմ կարծում, որ քաղաքական պատվերը պիտի թելադրի գիտնականներին իրենց թեմատիկան. ճիշտ հակառակը պիտի լինի՝ գիտնական վերլուծաբանները և խորհրդածությունների հակված տնտեսվարողները (ցանկալի է՝ համատեղ) օբյեկտիվ իրողության ուսումնասիրությամբ պիտի հանգեն որոշակի եզրակացության և խորհուրդ տան պետության տնտեսական քաղաքականության ռազմավարական նպատակադրումները և մարտավարական ուղիները ձևակերպող ատյաններին: Հիշեցնենք, որ գորբաչովյան «արագացում» և «վերակառուցում» կոչերին էլ հետևեցին բազում գիտագործնական խորհրդաժողովներ, հրապարակվեցին հաստափոր մենագրություններ, մինչդեռ պետության ղեկավարները չանսացին այն տնտեսագետներին, սոցիոլոգներին, փիլիսոփաներին, պատմաբաններին, որոնք, միգուցե ոչ մեծ համառությամբ, այլ զգուշավոր կերպով փորձում էին հուշել քաղաքական վերնախավին վտանգների մասին: Իհարկե, ձախողումից հետո դյուրին դարձավ արձանագրել քաղաքական պատվերի անհիմն լինելը:

Ինչևէ, ի վերջո **կասկածից վեր է Հայաստանի տնտեսության արագացված զարգացման անհրաժեշտությունը**, **ուստի այդ ընթացքի անվանումը չէ կարևորը**, **այլ բուն գործողությունների էությունը**, **դրանց ուղղվածությունը և հիմնավորվածությունը**: Այս առումով ավելորդ չեմ համարում մեկ էլ շեշտել, որ քննարկվող երկու ժողովածուներն էլ բացառիկ արժեքավոր ներուժ ունեն թե՛ որպես տեսական հարցադրումներ, թե՛ որպես գործնական և գործադրելի հանձնարարականներ: Այդուհանդերձ, չենք կարող չնկատել, որ տնտեսական բարեփոխումների հիմնավորումը, թեկուզ այն անվանվի «տնտեսական հեղափոխություն», սկզբունքորեն չի կարելի հակադրել երկրի տնտեսության մեջ, ինչպես նաև հանրային կյանքի բոլոր բնագավառներում կայունության ապահովման և դրա նպատակասլաց կառավարման պահանջին: Ահա թե ինչու դժվար է համաձայնել այն տեսակետին, թե իբր նախկինում, այսինքն՝ մինչև 2018 թվականի «թավշյա հեղափոխությունը» Հայաստանի բոլոր կառավարություններն իրենց գործունեության շեշտը դրել են առավելապես կայունության խնդիրների վրա և անտեսել են զարգացման խնդիրները[1]: Սրան կարելի է առարկել, նախ՝ զուտ ձևական տրամաբանության տեսակետից, այն է՝ եթե իրոք այդպես է, ապա հատկապես նախորդ կառավարություններն են փաստորեն կուտակել կայունության այն պաշարը, որի վրա կարող է հիմնվել «տնտեսական հեղափոխության» սկիզբը, այլապես դա կմնար ընդամենը բարի ցանկություն: Իսկ, ըստ էության, կարևոր է ելնել կայունության և զարգացման դիալեկտիկայի ըմբռնումից. միայն կայունության հիմնավոր կառավարումն է նախապատրաստում գալիք առաջընթացը: Եվ ընդհակառակը՝ հեղափոխական

* Ըստ իս՝ «տնտեսական հեղափոխության» թեման այսպիսի խանդավառությամբ ընկալելը պրոֆեսոր **Ռոբերտ Սարինյանը** արդարացիորեն կբնութագրեր իբրև «**տնտեսագիտական ռոմանտիզմ**»:

[1] Տե՛ս «Ի՞նչ անել 2», էջ 13, 201:

ամենամեծ խանդավառությունն իսկ, առանց հենվելու կայունությամբ կուտակված պաշարների վրա, դատապարտված է ձախողման:

Նույնքան անհիմն է թվում մեկ այլ դրույթ, ըստ որի՝ քաղաքական հեղափոխությանը մշտապես հաջորդում է տնտեսական հեղափոխությունը[1]: Դժվար է համաձայնել ասվածին, այդ թվում՝ նաև այն պատճառով, որ լիովին պարզեցված չէ բուն «տնտեսական հեղափոխություն» հասկացությունը, ուստի հասկանալի չէ, թե տնտեսական կյանքի հատկապես ո՛ր փոփոխությունն է դրան առնչվում: Իհարկե, ինչպես հայտնի է, քաղաքական հեղափոխությունից հետո սկսվում է սեփականատիրության վերաբաշխում, և քաղաքական նոր վերնախավն արագորեն և բազմապատիկ բարելավում է իր տնտեսական վիճակը: Բայց դա մեզ հիմք չի տալիս եզրակացնելու «տնտեսական հեղափոխության» մասին որպես համակարգային երևույթի: Ավելին՝ **քաղաքական հեղափոխությունը**, **հեղաշրջմանը**, **իշխանափոխությանը**, **քաղաքական բնույթի այլ ցնցումների**, **որպես կանոն**, **հաջորդում են նաև տնտեսական առումով բնավ էլ ոչ ցանկալի երևույթներ**: Ինչպես վկայում է պատմությունը, քաղաքական հեղափոխությանը հետևում են տնտեսական անկումը, երկրից կապիտալի «փախուստը», արտերկրյա ներդրողների զգուշավորությունը, հակահեղափոխական խմորումները, բնակչության աղքատացումը և այլն: Հիշենք 1917 թվականի հեղափոխությունը Ռուսաստանում. քաղաքական և տնտեսական քաոս, տարածքների կորուստ, քաղաքացիական պատերազմ, բռնաճնշումներ, հալածանք, սով. որքա՜ն ժամանակ և ջանքեր պետք եղան երկրում քաղաքական, տնտեսական և կազմակերպական կայունություն վերահաստատելու համար: Նույնը կատարվեց Խորհրդային Միության փլուզումից հետո, իսկ դա չէ՞ որ սոցիալական հեղափոխություն էր բառի դասական իմաստով. ի վերջո կատարվեց տնտեսական համակարգի արմատական փոփոխություն՝ անցում սոցիալիստական տնտեսությունից դեպի ազատ շուկայական տնտեսություն: Եվ հայտնի է, թե նախկին խորհրդային հանրապետությունները որքան դժվարությամբ կարողացան հաղթահարել այդ հիմնարար փոփոխությունների ծանրագույն հետևանքները և հասնել սոցիալ-տնտեսական կայուն զարգացման:

Հարկ է նկատել, որ տողերիս հեղինակը բնավ միայնակ չէ իր դիրքորոշման մեջ: «Ինչ անել 2» ժողովածուի որոշ հեղինակներ միանգամայն տեղին զգուշացնում են ընթերցողներին (նաև գործընկերներին) **գերլավատեսական մոտեցման վտանգի մասին**. «Պատմության մեջ չի արձանագրված որևէ դեպք, երբ հեղափոխությունը երջանկացրած լինի հասարակությանը: Դժվար թե որևէ բանական էակ փորձի ժխտել հեղափոխություններով առաջադրված փոփոխությունների անհրաժեշտությունը, բայց, միաժամանակ, գրեթե անհնարին է հավաստել, որ հեղափոխությունները իրականացրել են այդ խնդիրների լուծումները»[2]:

---

[1] Տե՛ս **Ա. Մարկոսյան, Է. Մաթևոսյան**, Տնտեսական հեղափոխությունը և դրա նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում // «Ի՞նչ անել 2», էջ 19:

[2] **Գ. Գալստյան**, Տնտեսական հեղափոխությո՞ւն, թե՞ բարեփոխումներ // «Ի՞նչ անել 2», էջ 41:

Պատմության վկայակոչումը միանգամայն արդարացված է նաև մեկ այլ տեսակետից: Իսկապես, մեկ անգամ չէ, որ տարբեր երկրներում խնդիր է դրվել արագացված սոցիալ-տնտեսական զարգացում ապահովելու: Ընդ որում՝ բարեփոխիչների նպատակները միշտ հիմնավոր են թվացել, սակայն արագացման հետևանքները միշտ չէ, որ բարենպաստ են եղել: Կարող ենք, թերևս, ասել, որ Միխայիլ Գորբաչովը ցանկացել է անել «ավելի լավ», բայց ստացվեց «ինչպես միշտ»: Իհարկե, կան նաև հաջողված նպատակադրումներ, հիրավի «տնտեսական հրաշքի» փայլուն օրինակներ: Հիշենք մի քանիսը՝ Ճապոնիայի տնտեսական աճի ռեկորդային հատվածը 1950-ականների կեսից մինչև 1973 թ. նավթային ճգնաժամը, Արևմտյան Գերմանիայի արագացված տնտեսական զարգացումը և վերակառուցման ընթացքը հետպատերազմյան տարիներին, Չինաստանի տնտեսական բուռն զարգացումը 1978 թվականից մինչև այսօր, ասիական չորս «վագրերի»՝ Հարավային Կորեայի, Թայվանի, Հոնկոնգի և Սինգապուրի «ցատկը» 1960 – 1990 թվականներին, բրազիլական «հրաշքը» (1968 – 1973), Բելգիայի տնտեսական «հրաշքը» (1945 – 1948), բալթյան «վագրերը»՝ Էստոնիան, Լատվիան և Լիտվան 2000 – 2007 թվականներին և այլն:

Ինքնին հասկանալի է, կրկնեմ, որ մենք պարտավոր ենք մանրազնին վերլուծել նշված և մյուս այն երկրների փորձը, որոնք կարողացել են ապահովել աննախադեպ տնտեսական զարգացում: Միաժամանակ հասկանալի է նաև այն, որ նրանցից ամեն մեկի փորձն այնքան գործոնների համադրման արգասիք է, որ դառնում է եզակի, յուրօրինակ իրողություն, բառացիորեն անկրկնելի մեկ այլ երկրի պայմաններում:

Սա նշանակում է նաև, որ հնարավոր չէ ձևակերպել գերարագ տնտեսական զարգացման ինչ-որ ընդհանուր օրինաչափություններ և վերջիններիս ամփոփմամբ առաջարկել «տնտեսական հեղափոխության» իրականացման որևէ քայլաշար (ալգորիթմ): Ասվածը վերաբերում է տնտեսական զարգացման նախադրյալներին և պայմաններին, իրականացվող տնտեսական քաղաքականությանը և արժեքային գերիշխող համակարգին, արտաքին ֆինանսական օժանդակությանը և արտերկրյա խորհրդատուներիի դերակատարմանը, վերջապես, իսկ միգուցե հենց առաջին հերթին՝ արմատական տնտեսական բարեփոխումներ սկսած առաջնորդի անձնական հատկություններին: Ահա թե ինչու դժվար է կամ միգուցե ասենք՝ վաղաժամ է խոսել «տնտեսական հրաշքի» ինչ-որ տեսություն ստեղծելու բուն հնարավորության մասին, թեպետ լիովին ընդունելի է այդ գաղափարի հեղինակի հիմնական եզրակացությունը. «Այս տարբերություններով հանդերձ՝ այստեղ կա մի ընդհանրություն, որը ոչ թե տնտեսական հաստատությունների ձևին է վերաբերում, այլ այն իրողությանը, որ այդ տնտեսական հաստատությունները, հավանաբար, ապահովել են մասնավոր ներդրումների և մարդկային կապիտալի երկարաժամկետ կուտակում»[1]: Եվ ահա հենց սա է կայունության կառավարման կարևորագույն պահերից մեկը, այն է՝ ֆի-

[1] B. Seliger, Theories of economic miracles // “Diskurs“, 2010, n. 1, p. 17.

նանսների և մարդկային կապիտալի կուտակում՝ որպես տնտեսական թռիչքաձև զարգացման նախապատրաստում:

Միով բանիվ՝ հարկ չկա «հեծանիվ հայտնագործելու»: Ասվածին կցանկանայի ավելացնել ևս մի դիտարկում, որ վերաբերում է տարատեսակ «**տնտեսական հրաշքների**» և «վագրերի ցատկերի» պատմության ընդհանրությանը, այն է՝ դրանք բոլորն էլ, առանց բացառության, իրենց հնչեղ **անվանումները ստացել են** post factum**՝ հետահայաց վերլուծությամբ և գնահատմամբ**: Տնտեսական աննախադեպ զարգացում ապահոված ոչ մի ղեկավար, որ հետագայում պիտի ստանար «տնտեսական հրաշքի հայր» պատվանունը, նախապես չի հռչակել «տնտեսական հեղափոխության» մեկնարկը՝ ո՛չ Լյուդվիգ Էրհարդը (Արևմտյան Գերմանիա), ո՛չ Լի Կուան Յուն (Սինգապուր), ո՛չ Պակ Չո Հին (Հարավային Կորեա)... Սեփական երկրի տնտեսական ուղու մասին նրանց մտորումներում մենք կարդում ենք նպատակների ճշգրտման, դժվարությունների հաղթահարման, ուժերի համախմբման, այլ ոչ թե հրաշապատում երևույթների մասին: Տեղին է իսկապես նկատված՝ չկա ոչ մի հրաշք, կա լարված աշխատանք. հիրավի, խորիմաստ բառախաղ է՝ «քրտինք, ոչ թե խանդավառություն» (perspiration, not inspiration)[1]:

Արդ, մեր խնդիրը միանգամայն հստակ է՝ ամեն մի առանձին դեպքում պարզաբանել «տնտեսական հրաշքի» պայմանները և շարժիչ ուժերը, կառավարման սկզբունքները, ապա ընդօրինակել օգտակար փորձը՝ պարտադիր կերպով հաշվի առնելով հայաստանյան իրողության քաղաքական, տնտեսական և ազգամշակութային առանձնահատկությունները: Իսկն ասած՝ չանտեսենք նաև հակառակ ընթացքի կարևորությունը. նկատի ունեմ, որ այլոց փորձը ի սկզբանե հարկավոր է դիտարկել մեր առանձնահատկությունների յուրատեսակ ոսպնյակի միջով: Իսկ վերջիններս, կրկնենք, մեզ հուշում են, որ ոչ միայն տնտեսության, այլև հանրային բովանդակ կյանքի վարչական կառավարման գլխավոր խնդիրն այս պահին պիտի լինի երկրում տնտեսական, քաղաքական և սոցիալական կայունության ապահովումը: Իսկ կառավարել կայունությունը՝ նշանակում է նաև աստիճանաբար պայմաններ և հիմք ստեղծել տնտեսական առաջընթացի համար:

«Festina lente»՝ դանդաղ շտապիր,– ասում է հին հռոմեական ասացվածքը[2]՝ հակիրճ բնութագրելով հայաստանյան իրողության հրամայականը, այն է՝ տնտեսական համաչափ զարգացում, կայունության հավասարակշռված կառավարում՝ նպատակուղղված առաջընթաց թռիչքի իրական նախադրյալների և պայմանների ձևավորմանը: Իսկ ինչո՞ւ ենք «տնտեսական հեղափոխության»

---

[1] P. Krugman, The Myth of Asia's Miracle // Foreign Affairs, 1994, vol. 73, n. 6, p. 66.

[2] Գործարար կյանքում «դանդաղ շտապելու» խորհուրդներով հարուստ է նաև հայոց առածանին, օրինակ՝ «Կամաց-կամաց, բամպակը կ'ըլլի մանած», «Հանդարտ գնացող շուտ կերթա», «Շատ վռազողի գործը խափան է», «Ջուրը չտեսած չեն բոբիկնա», «Համբերե, որ համ բերե» և այլն: Հայոց առածանու վարքակարգավորիչ ներուժի և գործածության տիրույթի վերլուծությունը՝ օտարալեզու մի շարք առած-ասացվածքների համադրմամբ, տե՛ս **Վ. Միրզոյան**, Առածանին՝ գործնական փիլիսոփայություն, Երևան, Մեկնարկ, 2019:

օրակարգ հայտարարում, երբ բնավ դժվար չէ հասկանալը, որ դրան պատրաստ չենք ո՛չ սոցիալ-տնտեսական, ո՛չ էլ կազմակերպական իմաստով: Հնարավո՞ր է արդյոք արագացնել այն, ինչն սկսելու պայմանները դեռ չեն հասունացել: Եվ ինչո՞ւ են ոմանք (ոչ միայն քաղաքական գործիչները, այլև լրջմիտ տնտեսագետները) այդքան վստահ շուտափույթ հեղափոխության հարցում:

Այս հարցերի պատասխանների համար դիմենք **Դենիել Քանեմանին**՝ հոգեբանի, որը տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակի է արժանացել (2002 թ.) անորոշության պայմաններում կառավարչական վճիռների կայացման և դրանցից ածանցյալ ռիսկերի առաջացման ուսումնասիրության ասպարեզում հետազոտությունների համար: Իսրայելցի հոգեբան Ամոս Թվերսկիի հետ միասին (որի հիշատակին էլ Քանեմանը նվիրել է իր նշանավոր «Մտածելիք՝ արագ և դանդաղ» գիրքը[1]) նա բացահայտել է մարդու մտածողությանը բնորոշ իմացական խաթարումները, հատկապես որոշումների կայացման ընթացքում ռիսկերի սխալ գնահատման առնչությամբ: Հայեցակարգի հիմքում ընկած է մարդուն բնորոշ մտածելակերպի երկու տեսակի առանձնացումը. մեկն «արագ մտածումն» է (fast thinking), որ ներըմբռնողական մտքի բնույթ ունի (intuitive thought), երբ որևէ խնդրի լուծումը, կարծեք, ինքնաբերաբար է հայտնվում, մյուսը «դանդաղ մտածումն» է (slow thinking), երբ նույն խնդրի լուծումը ստացվում է շնորհիվ լարված, հաշվարկներին հիմնված, ուշադրության կենտրոնացում և ջանք պահանջող (effortful) մտավոր աշխատանքի: Համարակալելով դրանք որպես «1-ին համակարգ» և «2-րդ համակարգ»՝ Քանեմանը դիտարկում է դրանց փոխառնչությունները և դերը կառավարչական վճիռներ կայացնելու ընթացքում: Մասնավորապես՝ «1-ին համակարգը» գործում է զուգորդական հիշողության շնորհիվ, ուստի պատրաստ է ամեն մի պահի մեզ առաջարկել պարզ ու հասկանալի բազում պատասխաններ, բայց «2-րդ համակարգը» կառուցակարգում է բազմազան մտքերը, աստիճանավորում պատճառահետևանքային հիմքով:

Բազմաթիվ հետազոտությունների և թեստերի վրա հիմնվելով՝ Դ. Քանեմանը եզրակացնում է մեր մտածելակերպին բնորոշ մի օրինաչափության մասին. երբ մենք հայտնվում ենք որևէ բարդ հարցի պատասխանելու անհրաժեշտության առջև, 1-ին համակարգը մեր գործը «հեշտացնում» է՝ բարդ հարցն այլափոխելով ավելի պարզ հարցի. կատարվում է «տեղակալում» (substitution)՝ պարզեցված հարցն այդ կերպ գրավում է բարդի տեղը: 2-րդ համակարգին Քանեմանը հատկացնում է առաջինի հանդեպ վերահսկիչ գործառույթ, բայց բանն այն է, որ գրեթե մենք բոլորս վճիռ ենք կայացնում 1-ին համակարգի ազդեցությամբ, այսինքն՝ «արագ մտածումին» ենթարկվելով: Վերջինս մասնագետ-փորձագետի համար իր ներըմբռնողությունն է (ինտուիցիան), որին նա վստահաբար հենվում է, քանի որ նախկինում մեկ անգամ չէ, որ իրեն արդարացրել է: «Արագ մտածումի» մյուս տեսակը Դ. Քանեմանն անվանում է «էվրիստիկական»

[1] Տե՛ս D. Kahneman, Thinking, Fast and Slow. London: Penguin books, 2012.

(heuristic)՝ այդ կերպ նորովի գիտական շրջանառության մեջ դնելով հին հույն նշանավոր գիտնական Արքիմեդի նշանավոր «էվրիկա» («գտա՛») բացականչությունը: Այս երկու «մտային ինքնաբերական գործողությունների» (automatic mental activities) շնորհիվ մենք, որպես կանոն, լուծում ենք մեր ոչ միայն առտնին խնդիրները՝ միանգամայն վստահ լինելով, թե ճիշտ ենք վարվում, այլև անվարան փորձում ենք լուծել շատ ավելի լայն ընդգրկման և ըստ էության «դանդաղ մտածումի» կարիքն ունեցող խնդիրները:

Ինքնին հասկանալի է, որ երկրորդ դեպքն արդեն հիմք է տալիս մտածելու անհամարժեք լուծումներից հնարավոր վտանգների և դրանց իրականացմանը վերաբերող լուրջ ռիսկերի մասին: Բայց ավելի **տագնապահարույց է** «**արագ մտածումին**» **մշտապես գերադասություն տվող մարդկանց գերլավատեսական տրամադրվածությունը**: Եվ, կարծում եմ, Դ. Քանեմանը լրիվ հիմք ունի արձանագրելու, որ ամեն մեկիս էվրիստիկական մակարդակով ամեն ինչ թվում է հեշտ ու հասկանալի. «Մեր մտքի բնականոն վիճակում մենք ունենում ենք ներըմբռնողական զգացումներ ու կարծիքներ մեր ճանապարհին հանդիպող գրեթե ամեն մի բանի մասին: Մենք մարդկանց հանդեպ համակրանք կամ հակակրանք ենք զգում մինչև իսկ նրանց կարգին ճանաչելը, մենք վստահում ենք կամ չենք վստահում օտարականներին առանց նրանց իմանալու, մենք համարում ենք, որ նախագիծը դատապարտված է հաջողության առանց այն վերլուծելու: Անկախ նրանից՝ դուք արտահայտվում եք թե ոչ, բայց դուք հաճախ ունեք այն հարցերի պատասխանները, որոնք դուք լիովին չեք հասկացել, ակնհայտ է, որ չեք կարող ո՛չ բացատրել, ո՛չ հիմնավորել»[1]:

Իսկ այժմ պատասխանենք այն հարցին, թե այսօրինակ իմացական հոգեվիճակը ինչի կարող է հանգեցնել, երբ մենք հայտնվում ենք փորձագետի կարգավիճակում, որը իր եզրակացություններն ու խորհուրդներն է տալիս կառավարչական վճիռ կայացնող անձանց կամ ատյաններին: Ըստ Դ. Քանեմանի՝ այստեղ վտանգը մեր մեջ «արագ մտածումի» հետևանքով առաջացող գերլավատեսությունն է, որն էլ հանգեցնում է գերվստահության ապագայի ձևավորման կառավարմանը մասնակից դառնալու մեր հնարավորությունների գնահատման հարցում: «Մեր մեծ մասն աշխարհը որպես ավելի բարեհաճ է ընկալում, քան իրականում է, մեր հնարավորություններն ավելի բարենպաստ են գնահատվում, քան իրականում են, իսկ մեր ընտրած նպատակներն ավելի հասանելի են թվում, քան իրականում է: Մենք նաև հակված ենք չափազանցելու ապագան կանխատեսելու մեր կարողությունը, ինչը հանգեցնում է լավատեսական գերինքնավստահության»[2]:

Դենիել Քանեմանը առաջարկում է ընթերցողին հասկանալ լավատեսական դիրքորոշման տարբերությունն անհատի և ամբողջ կազմակերպության մակարդակում: Լավատես լինելը ինքնին բնականոն երևույթ է, նկատում է նա, դա ժառանգական հատկություն է, և լավատեսը հակված է տեսնելու առավելապես

[1] D. Kahneman, Thinking, Fast and Slow, p. 97:

[2] Անդ, էջ 255:

կյանքի լուսավոր կողմերը, հեշտորեն է հարմարվում դժվարություններին, չի ընկճվում, հուսավառ է ապագայի հարցում, ուստի մյուսներից ավելի առողջ է, երկարակյաց և այլն: Նկատված է, որ լավատեսները հաջողության են հասնում քաղաքական կյանքում: Բայց ահա ձեռներեց լավատեսները, առավել ևս տնտեսվարող կազմակերպության ղեկավարի դերում, հաճախ են կառավարչական սխալ վճիռներ կայացնում, որովհետև հակված են թերագնահատելու հնարավոր ռիսկերը. «Քանի որ լավատես ձեռներեցները չեն կարողանում ճիշտ գնահատել ռիսկերը, նրանք հաճախ հավատում են, թե իրենք խելամիտ են ու շրջահայաց, մինչդեռ իրենք այդպիսին չեն»[1]: Փաստորեն նրանք հավատում են, թե լիովին վերահսկում են իրավիճակը, այնինչ իրականում տուրք են տալիս «վերահսկողության պատրանքին» (illusion of control): Իսկ դրա պատճառը մեզ հայտնի է. դա «արագ մտածումի» լուծումներին ապավինելն է. «Մենք կենտրոնանում ենք այն բանի վրա, ինչը գիտենք, և անտեսում ենք այն, ինչը չգիտենք, ինչն էլ դարձնում է մեզ մեր իմացածի մեջ չափազանց ինքնավստահ»[2]: Ահա և Դ. Քանեմանը իր գրքով հանդես է գալիս այս վտանգավոր գերինքնավստահության պատճառների բացահայտմամբ, խորհուրդ է տալիս ազատվել հապճեպ, թեև գայթակղիչ որոշումներից, իսկ ձեռնարկվող քայլերը կառուցել սթափ գնահատականների հիման վրա: Եթե սա որոշակիացնենք մեր խնդրո առարկայի առումով, ապա պարզիպարզո նշանակում է՝ ազատվել «տնտեսական հեղափոխության» գերլավատեսական պատրանքներից և սկսել... դանդաղ շտապել:

Հավարտ՝ նշենք, որ Դենիել Քանեմանի խորհուրդներն ուղղված են ոչ այնքան քաղաքական գործիչներին, որքան գիտնականներին, ամենից առաջ՝ տնտեսագետներին և քաղաքագետներին: Գաղտնիք չէ, որ քաղաքական առաջնորդները հարկադրված են շտապել, խոստումներ տալ, նույնիսկ եթե տեղյակ են, որ դրանք ի վիճակի չեն լինելու կատարել: Նրանք պարզապես չեն կարող այլ կերպ վարվել. սա ժողովրդավարության ստվերոտ կողմերից մեկն է՝ աստիճանական հակվածությունը դեպի ամբոխահաճությունը: Որքան էլ տարօրինակ է, բայց անձնիշխանական (ավտորիտար) ոճի կառավարիչներն ավելի շահեկան վիճակում են, քանի որ ավելի դյուրին են կայացնում և իրականացնում ոչ ամբոխահաճ, սակայն իրերի դրությամբ արդարացված և հեռանկարում արդյունավետ որոշումները (և, ի դեպ, վերոնշյալ «տնտեսական հրաշքներն» իրականացրած առաջնորդներն ավելի շատ միանձնյա վճիռներ են կայացրել, քան համախոհության հիմքով):

Առավել ևս, ուրեմն, ժողովրդավարության ուղիով ընթացող ներկայիս Հայաստանում կարևոր են գիտնականների, հատկապես տնտեսագետների, քաղաքագետների, սոցիոլոգների սթափ վերլուծությունները և հիմնավոր հանձնարարականները, քաղաքական վերին իշխանության կայացնելիք վճիռներում նրանց պարտադիր խորհրդատվական դերակատարումը: Ավելորդ չէ, թերևս,

[1] Անդ, էջ 256:
[2] Անդ, էջ 259:

ասելը, որ այդ խորհուրդները չպիտի լինեն վերացական դատողություններ, առավել ևս չպիտի հարմարվեն քաղաքական պատվերին, այլ ամենից առաջ պիտի բխեն իրողության համակողմանի վերլուծությունից և ուղղված լինեն որոշակի խնդիրների լուծմանը: «Նոր Հայաստան» կերտելու քաղաքական կամքը պիտի հենվի գիտական մտքի վրա, այլ ոչ գիտությունը պատեհապաշտորեն հարմարվի օրվա իշխանության հերթական կարգախոսին: Արդ, հուսանք, որ արդի Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերում մեր առաջատար տնտեսագետներն իրենց հետազոտություններից բխող հավասարակշռված գնահատականներով և առաջարկություններով զորավիգ կլինեն քաղաքական ղեկավարությանը՝ կայացնելու ռազմավարական ճիշտ վճիռներ և կատարելու դրանց իրականացման ուղղված մարտավարական արդյունավետ քայլեր:

Վալերի Միրզոյան

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈ՞ՒՆ», ԹԵ՞ «ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

Համառոտագիր: Պատրա՞ստ է արդյոք ներկայիս Հայաստանը, իր քաղաքական, տնտեսական, կազմակերպական, բարոյահոգեբանական և ազգամշակութային ներկա առանձնահատկություններով հանդերձ, իրականացնելու այնքան հզոր մի տնտեսական թռիչք, որը պատշաճ լիներ «տնտեսական հեղափոխություն» անվանելու: Կարևորելով տնտեսական առաջընթաց զարգացման անհրաժեշտությունը և ընդունելով հեղափոխական բնութագրումը որպես քաղաքական գրավիչ կարգախոս՝ հոդվածի հեղինակը հիմնավորում է «կայունության կառավարման» հրամայականը՝ որպես ոչ միայն առավել իրատեսական, այլև հենց նույն հեղափոխական թռիչքի իրագործման հիմք և գլխավոր պայման:

Բանալի բառեր. Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ, «տնտեսական հեղափոխություն», կայունության կառավարում, «տնտեսական հրաշք», Դենիել Քանեման

Валерий Мирзоян

«ЭКОНОМИЧЕСКАЯ РЕВОЛЮЦИЯ», ИЛИ «УПРАВЛЕНИЕ СТАБИЛЬНОСТЬЮ»?

Аннотация: Насколько готова современная Армения к такому мощному экономическому рывку, которую руководители государства и некоторые экономисты заранее предрекли “экономической революцией”? Дают ли основания для оптимизма политические, экономические, организационные, морально-психо-

логические и этно-культурные характеристики нынешного состояния нашего общества? Автор данной статьи считает более реальной первостепенное решение насущных проблем стабилизации всех сфер общественной жизни. “Экономическую революцию” следует скорее рассматривать как формулировку воли правящей партии, как весьма привлекательный политический лозунг. Реальная же задача – это управление устойчивостью как основа и главное условие экономического прогресса.

Ключевые слова: вопросы социально-экономического развития Армении, «экономическая революция», управление устойчивостью, «экономическое чудо», Дэниэль Канеман

Valeri Mirzoyan

“ECONOMIC REVOLUTION” OR “STABILITY MANAGEMENT”?

Abstract: How ready is modern Armenia for such a powerful economic breakthrough, which the state leaders and some economists had predicted in advance with the “economic revolution”? Do the political, economic, organizational, moral-psychological and ethno-cultural characteristics of our society give grounds for optimism? The author of this article considers the paramount solution of urgent problems of stabilization of all spheres of public life more real. The “economic revolution” should rather be seen as a formulation of the will of the ruling party, as a very attractive political slogan. The real problem is sustainability management as the basis and main condition for economic development.

Keywords: issues of socio-economic development of Armenia, "economic revolution", sustainability management, "economic miracle", Daniel Kahneman

Աշոտ Մարկոսյան
Էլյանորա Մաթևոսյան

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ներածություն

Համատարած պետական սեփականությունից անցումը ազատ շուկայական հարաբերությունների ՀՀ-ում իրականացվեց երեք համապետական ծրագրերի միջոցով՝ հողի և գյուղատնտեսական տեխնիկայի մասնավորեցմամբ, բնակարանային ֆոնդի սեփականաշնորհմամբ, ինչպես նաև պետական գույքի մասնավորեցման ճանապարհով: Հատկապես վերջին ծրագիրը առանցքային դարձավ տնտեսությունում մասնավոր սեփականության իրավունքի լիարժեք գործածումն ապահովելու տեսանկյունից: Ընդ որում՝ պետական ձեռնարկությունների մասնավորեցման հիմնական ձև ընտրվեց դրանց բաժնետիրացումը, որի միջոցով հանրապետության միջին և խոշոր ձեռնարկությունների մեծ մասը վերակազմավորվեց բաժնետիրական ընկերությունների[1]: Նման մոտեցումը ընդունվեց, որպեսզի հանրապետությունում տասնամյակներ շարունակ ստեղծված կապիտալը հիմնականում վերադարձվի ժողովրդին և այդ ճանապարհով ՀՀ-ում կառուցվի «ժողովրդական կապիտալիզմ»: Բավական է նշել, որ այդ ժամանակահատվածում (մինչև 2000 թ.) ՀՀ-ում ձևավորվեց ավելի քան 1 մլն 400 հազար սեփականատեր, որից 235 հազարը՝ հողի և գյուղատնտեսական տեխնիկայի, շուրջ 480 հազարը՝ բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման արդյունքում, 80 հազարը՝ այգեգործական հողամասերի, 2 հազարը՝ մշակույթի գործիչների կողմից իրենց զբաղեցրած արվեստանոցների, 100 հազարը՝ «փոքր» օբյեկտների և ավելի քան 530 հազարը՝ միջին և խոշոր ձեռնարկությունների մասնավորեցման շնորհիվ: Ընդ որում՝ գյուղատնտեսական նշանակության հողամասերի և գյուղտեխնիկայի, ինչպես նաև բնակարանային ֆոնդի սեփականաշնորհումն իրականացվեց գրեթե անվճար (անհատույց), իսկ պետական գույքի մասնավորեցման ծրագրերին ողջ բնակչության մասնակցությունը ապահովելու նպատակով ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու տրվեց սեփականաշնորհման սերտիֆիկատ: Ենթադրվում էր նաև, որ բաժնետիրացման մեխանիզմի օգնությամբ ՀՀ-ում կձևավարվի արժեթղթերի շուկա, որը և հնարավորություն կտա հանրապետությունում ձևավորել շուկայական կառուցվածք ունեցող տնտեսություն՝ արդյունավետ սեփականատերերի խավի ստեղծման ճանապարհով:

---

[1] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս, մասնավորապես, Ա. Խ. Մարկոսյան, «Բաժնետիրացման մեխանիզմը և դրա բաղկացուցիչ մասերը (խորհուրդներ ապագա բաժնետերերին)», Եր., «Հակոբ Մեղապարտ» տպագրատուն., 1995, 80 էջ:

Պետք է նշել, որ մասնավորեցման ծրագրերի շրջանակներում իրականացված միջին և խոշոր պետական ձեռնարկությունների բաժնետիրացումը թույլ տվեց հանրապետությունում ստեղծել բաժնետերերի խոշոր բանակ, որը, սակայն, հետագա տարիների ընթացքում և' օբյեկտիվ, և' ավելի շատ սուբյեկտիվ պատճառներով չստացավ իր տրամաբանական զարգացումը, ինչի հետևանքով կապիտալի շուկան մինչ օրս գտնվում է թերզարգացած վիճակում:

Ուստիև՝ ներկայումս ՀՀ-ում կապիտալի շուկայի զարգացման փորձերը պետք է հաշվի առնեն անցյալի դասերը այն իմաստով, որ դրանք կարող են օգտակար լինել ոլորտի բարեփոխումների իրականացման ճանապարհին:

Անհրաժեշտ է նկատել, որ ՀՀ-ում շուկայական տնտեսության անցման գործընթացը բարդ էր և երկարատև, որն ուղեկցվեց նոր արտադրահարաբերությունների ստեղծմամբ (հների վերացման պայմաններում) կամ նոր պայմաններին ինչպես տնտեսվարողների, այնպես էլ կառավարչական որոշումներ ընդունողների հարմարեցմամբ: Այդպիսի հարաբերությունների կենսունակության ապահովման նպատակով անհրաժեշտ էր, նախ և առաջ, սեփականության իրավունքների օրենսդրորեն սահմանումը, փոխանցումը մասնավորին և այդպիսի փոխանցման ընթացքում իրավական նորմերի ապահովումը:

Մասնավորեցման (ապապետականացման) պետական ծրագրերը կարելի է ավարտել 1-3 տարվա ընթացքում, սակայն միջին և խոշոր ձեռնարկությունների հիման վրա ստեղծված բաժնետիրական ընկերությունների կառավարման սկզբունքները լիարժեք կյանքի կոչելու համար պահանջվում է անհամեմատ ավելի երկար ժամանակ: Դա պայմանավորված է զանգվածաբար ընկերություններ ստեղծելու հանգամանքով, որի արդյունում առաջին պլան է մղվում բաժնետիրական (կորպորատիվ) կառավարումը, այդպիսի կառավարման սկզբունքների յուրացումը և ապահովումը: Կառավարման այս ձևի հիմնարար սկզբունքները, որոնք հրատարակվել են ՏՀԶԿ կողմից դեռևս 1999 թ., համարվում են կորպորատիվ կառավարման միջազգային ուղենիշ: Սկզբունքները վերանայվեցին 2003-ին՝ հաշվի առնելով 1999 թվականից հետո տեղի ունեցած զարգացումները: ՏՀԶԿ անդամ երկրների կառավարությունները 2004 թ. ապրիլին համաձայնեցրեցին նոր սկզբունքները, որոնք կարգավորում են վեց հետևալ ոլորտները. ա) արդյունավետ կորպորատիվ կառավարման միջավայրի ապահովումը, բ) բաժնետերերի իրավունքները, գ) հավասար վերաբերմունքը բաժնետերերի նկատմամբ, դ) շահառուների դերը կորպորատիվ կառավարման մեջ, ե) տեղեկատվության բացահայտումը և թափանցիկությունը, զ) բաժնետիրական ընկերության խորհրդի իրավասությունները[1]:

Միջին և խոշոր ձեռնարկությունների մասնավորեցումը ՀՀ-ում

Հայաստանի Հանրապետությունում իրականացված սեփականության բարեփոխումների կարևորագույն ուղղությունը նախկին պետական ձեռնարկու-

[1] Տե՛ս նաև ՀՀ կառավարության 2010 թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» N 1769-Ա որոշումը:

թյունների և անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումն էր, որը հաջորդեց առաջին երկու (գյուղատնտեսական նշանակության հողերի և բնակարանային ֆոնդի) մասնավորեցման գործընթացներին: Նշենք, որ «մեծ» մասնավորեցմանը նախորդած «արտոնություններից» կապիտալի շուկայի ստեղծման տեսանկյունից առավել զգալի էր 1010 խոշոր և միջին արդյունաբերական, գյուղատնտեսական, շինանյութերի արտադրության, շինարարական, տրանսպորտային և այլ ոլորտների ձեռնարկությունների մասնակի անհատույց սեփականաշնորհումը դրանց աշխատավորական կոլեկտիվների անդամներին: Յուրաքանչյուր ընկերության բաժնետոմսերի 20%-ն անհատույց տրամադրվեց աշխատավորական կոլեկտիվի անդամ համարվող և բաժնետեր դառնալու ցանկություն հայտնած անձանց, որի արդյունքում ստեղծվեցին կանոնադրական կապիտալում 20:80 համամասնությամբ (20%-ը՝ մասնավոր, 80%-ը՝ պետական) «խառը» բաժնետիրական ընկերություններ: Նման քայլը հետապնդում էր հետևյալ նպատակները.

- բաժնետիրական կապիտալի ձևավորումը, «մինորիտար» բաժնետերերի ներգրավումը ընկերության կառավարմանը,
- սեփականատերերի (բաժնետերերի) լայն զանգվածի ստեղծումը (այս միջոցառման արդյունքում նախկին պետական ձեռնարկությունների 230 հազար աշխատակիցներ դարձան բաժնետերեր),
- ներդրումների ներգրավման հնարավորությունը «ներսից»՝ նոր սեփականատերերի միջոցների ընդգրկման ճանապարհով, որն իր հերթին խթան հանդիսացավ գործունեության արդյունավետության բարձրացման համար, քանի որ ընկերություններում ներդրումներն իրականացվելու էին իրենց իսկ գործունեության արդյունքում ստեղծված շահույթների հաշվին,
- խոշոր և միջին ընկերությունների ամբողջությամբ մասնավորեցման գործընթացի կազմակերպումը բաժնետոմսերի իրական (շուկայական) արժեքի ձևավորման պայմաններում:

Հետագայում մասնավորեցման երկրորդ փուլը (սկսած 1999 թվականից) բնութագրվեց ռազմավարական ներդրողների առավել լայն ներգրավմամբ և հենց մասնավորեցված օբյեկտներում ներդրումներ կատարելու հնարավորությունների ստեղծմամբ: Միևնույն ժամանակ մեծ նշանակություն տրվեց մասնավորեցվող ընկերություններում աշխատատեղերի պահպանմանը և նորերի ստեղծմանը, ինչպես նաև այնտեղ որոշակի սոցիալական ծրագրերի ու միջոցառումների իրականացմանը: Հիմնականում դա ապահովվում է պետությանը պատկանող բաժնետոմսերի փաթեթի մրցույթային վաճառքով, երբ բացի գնային պայմանից գնորդը պարտավորվում է բավարարել նաև այլ (հիմնականում՝ սոցիալական) պայմաններին: Նշենք նաև, որ 1998-2003 թթ. օտարերկրյա ներդրումների առյուծի բաժինը ընկնում է այն ընկերություններին, որոնք մասնավորեցվել են մրցութային եղանակով, իսկ համաձայն վաճառքի պայմանների՝ ներդրողները պետք է հետմասնավորեցման տարիներին (որպես կանոն,

մասնավորեցումից հետո 2-5 տարիների ընթացքում) ապահովեին մոտավորապես 370 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ներդրումներ[1]:

Մասնավորեցման ծրագրերի հաջողությունը մեծապես կախված է նախորդ տարիների իրադարձություններից դասեր քաղելու ունակությունից, ձեռնարկված միջոցառումների իրականացման համար քաղաքական կամքի դրսևորումից, ինչպես նաև բոլոր շահագրգիռ կողմերի (ինչպես պետական կառավարման մարմինների, այնպես էլ մասնավոր անձանց) կողմից կազմակերպական բնույթի գործնական միջոցառումների մշակումից և իրականացումից:

Պետական սեփականության մասնավորեցման հետևանքով Հայաստանում ձևավորվեց մասնավոր հատված տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում: Առաջին հերթին մասնավորեցվեցին առևտրի ճյուղերը, բնակչությանը մատուցվող ծառայությունների, կենցաղային սպասարկման ոլորտները, որոնք կազմում են «փոքր» օբյեկտների հիմնական զանգվածը: Մասնավորեցվեց թեթև և սննդի արդյունաբերության ձեռնարկությունների գերակշռող մասը, ինչպես նաև գյուղատնտեսությանը սպասարկող ձեռնարկությունները, ինչը հանրապետությունում գյուղատնտեսական հողերի բարեփոխումների տրամաբանական շարունակությունն էր: Մասնավորեցումը լայնորեն կիրառվեց նաև փայտամշակման, շինանյութերի արդյունաբերության, շինարարական, մեքենաշինական, քիմիական, մետալուրգիական, լեռնաարդյունահանման, տրանսպորտի, կապի, էլեկտրաէներգետիկայի ոլորտներում, հյուրանոցային տնտեսությունում: Նշված ճյուղերի արտադրանքի ծավալներն ապահովվում են մասնավորեցված ընկերությունների շնորհիվ:

Պետք է նկատել, որ մասնավորեցվող պետական գույքի գինը հաշվարկվում է որպես մասնավորեցվող ընկերության ակտիվների գումարի և պարտավորությունների գումարի տարբերություն, ինչը նշանակում է, որ մասնավորեցվող պետական գույքի գնորդը վճարում է ոչ միայն ձեռք բերվող պետական գույքի արժեքը, այլև գնորդին են փոխանցվում ընկերության բոլոր պարտավորությունները վճարելու պարտականությունները: Այլ կերպ ասած, ըստ էության, մասնավորեցվող գույքի արժեքը ձևավորվում է ոչ միայն դրա գնից, այլ նաև այն գումարային պարտավորությունների փոխհատուցման մեծությունից, որը տվյալ ընկերությունը պետք է կատարի ինչպես պետական բյուջեի, կենսաթոշակային հիմնադրամի, բանկերի, մատակարարների, այնպես էլ այլ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ: Այս հանգամանքը հատկապես կարևոր է հաշվի առնել «վաուչերային» սեփականաշնորհման ժամանակահատվածում (1995-1998 թթ.), քանի որ եթե ձեռնարկության գինը գնորդների կողմից կարող է վճարվել վաուչերներով (սեփականաշնորհման սերտիֆիկատներով), ապա ընկերությունների պարտավորությունները, օրինակ, հարկերի և տուրքերի,

[1] Առաջարկված ներդրումների մեծությունը հաշվարկվել է 1998-2000 թթ., 2001 թ. և 2002 թ. մասնավորեցման ծրագրերի կատարման հաշվետվությունների հիման վրա: Համապատասխան օրենքները տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական՝ www.arlis.am կայքում:

բանկային վարկերի, ջրամատակարարման, էլեկտրաէներգիայի, ինչպես նաև մյուս ծառայությունների համար պետք է կատարվեին «կենդանի» փողերով: Այսինքն՝ պետական գույքի մասնավորեցումը միայն պետության գույքը մասնավորին փոխանցելու պարզունակ գործընթաց չէ, այլ այն տնտեսության առողջացման, հատկապես ֆինանսական կարգապահության պահպանման և պետության ներսում տնտեսվարող սուբյեկտների միջև գոյություն ունեցող կապերի շարունակման ու ամրապնդման գործիք է:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում մասնավորեցված միջին և խոշոր ձեռնարկությունների պարտքերի վերաբերյալ կատարված հետազոտության արդյունքները վկայում են, որ այդ պարտքերը դասակարգվում են երեք խոշոր խմբերի՝ պետության (հիմնականում բյուջեի), բանկերի և այլ ձեռնարկությունների (հիմնականում մատակարարների) նկատմամբ: Ընտրանքային եղանակով ուսումնասիրված տնտեսության տարբեր ճյուղերի ապապետականացված 274 ձեռնարկությունների համար կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ այդ քանակության ձեռնարկությունների գումարային նախնական կանոնադրական հիմնադրամը կազմել է 28.5, իսկ վճարման ենթակա պասիվները՝ 7.7 մլրդ դրամ: Ասվածը նշանակում է, որ նշված քանակության ձեռնարկությունների ապապետականացված ակտիվների գնահատված ընդհանուր արժեքը կազմել է 36.2 մլրդ դրամ, կամ եթե այդ մեծությունը ընդունենք 100 միավոր, ապա պարտքերի բաժինը կկազմի 21.2%: Սակայն այստեղ կարևոր է նկատել, որ, նախ, խոսքը վերաբերում է բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ ապապետականացվող ձեռնարկությունների նախնական կանոնադրական հիմնադրամներին, որոնց փաստացի մեծությունը բաժանորդագրությունից հետո կազմում է նախնականի մոտ 60%-ը, և երկրորդ՝ այդ մեծությունը կարելի է ձեռք բերել ապապետականացման սերտիֆիկատներով, որոնց շուկայական գինը 1996 թ. վերջին 2.5-3 անգամ ցածր է (իսկ նախկինում այն ավելի ցածր էր) անվանական արժեքից: Այսինքն՝ 274 ձեռնարկությունների 28.5 մլրդ դրամ արժեքով նախնական կանոնադրական հիմնադրամը իրականում կարժենա 5.7-6.8 մլրդ դրամ (28.5 × 0.6 : 2.5(3)), կամ միջինում 6.25 մլրդ դրամ: Եթե նկատի ունենանք, որ ձեռնարկությունների պասիվները պետք է վճարվեն միայն դրամով, ապա 274 ձեռնարկությունները իրականում կարժենան 13.95 մլրդ դրամ (6.25 + 7.7), որի 55.2 %-ը կազմում են վճարման ենթակա պասիվները: Միջին հաշվով մեկ ձեռնարկության համար այդ ցուցանիշները կկազմեն 50.9 և 28.1 մլն դրամ: Այդ ցուցանիշները, ըստ տնտեսության տարբեր ճյուղերի, միմյանցից տարբերվում են, այսպես, օրինակ, հետազոտված 157 արդյունաբերական ձեռնարկությունների համար մեկ ձեռնարկության հաշվով միջինում վճարման ենթակա պասիվները կազմել են 37.8, իսկ փաստացի ձեռք բերված կանոնադրական հիմնադրամը՝ 31.8 մլն դրամ, ընդ որում՝ սննդի արդյունաբերությունում համապատասխանաբար 23.4 և 33.7 մլն դրամ: Գյուղատնտեսությունում (հետազոտվել է 31 ձեռնարկություն) այդ ցուցանիշները կազմել են 21.3 և 13.1, շինարարությունում (հետազոտվել է 30 ձեռնարկություն)՝ 17.0 և 13.1:

Պարտքերի զգալի մասը ձեռնարկություններում գոյացել է մինչև ապապետականացումը, և նոր սեփականատերերը, հանդիսանալով նախկին պետական կամ պետական մասնակցությամբ ձեռնարկությունների իրավահաջորդները, ապապետականացումից հետո պետք է դրանք մարեն: Այն տպավորությունն է ստեղծվում, որ պարտքերի և տուգանքների միջոցով պետությունը աշխատում է պահպանել իր վերահսկողությունը ապապետականացված ձեռնարկությունների վրա: Օրինակի համար՝ ձեռնարկությունները պարտավոր են ստացված շահույթից 75%-ը վճարել պետական պարտքերը մարելու համար: Մնացած 25%-ը նույնիսկ չի բավականացնում վճարելու կարճաժամկետ վարկերի տոկոսները, եթե այդպիսիք վերցվել են արտադրական նպատակներով: 1996 թ. հոկտեմբերի վերջին կառավարության կողմից ընդունված որոշումը մինչև դեկտեմբերի 1-ը ձեռնարկությունների կողմից պարտքերը մարելու դեպքում տուգանքներից ազատելու մասին որոշ չափով նպաստեց ձեռնարկությունների գործունեության աշխուժացմանը[1]:

Պետական ընկերությունների (ձեռնարկությունների) գույքի մասնավորեցումը՝ դրանց պարտքերով ծանրաբեռնված, ՀՀ իրականությունում ունեցավ իր «այլընտրանքը», երբ դատարանների միջոցով իրականացվում էր պետական ընկերությունների (ձեռնարկությունների) սնանկացումը: Այս դեպքում դատարանները դարձան պետական գույքի «վաճառքի» յուրատեսակ կետեր, ինչի հետևանքով գնորդների կողմից պետական գույքը ձեռք էր բերվում դրանց շուկայական արժեքից տասնյակ անգամներով ավելի էժան գնով և, ամենակարևորը, այդ ընկերությունների (ձեռնարկությունների) պարտավորությունները մյուս տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ «զրոյացվում» էին՝ դրանով իսկ խաթարելով ամբողջ տնտեսության վերարտադրողական պարբերաշրջանը՝ դրանից բխող ամենավատ բացասական հետևանքներով[2]:

Պետական գույքի մասնավորեցումը քննադատությունների թիրախ է դառնում, հաճախ անհիմն, և խոսելով թերությունների մասին՝ ոչ ոք «չի հիշում» նվաճումները: Օրինակ՝ սեփականաշնորհման սերտիֆիկատները հանրապետության բոլոր բնակիչներին բաժանելը համարելով սխալ՝ լռում են մասնավորեցման սկզբում բնակչության զանգվածային անվճարունակության և տնտեսական վերափոխումների սկզբնական փուլում «կրիտիկական զանգվածի» հավաքման անհրաժեշտության մասին: Հենց այդպես էլ քննադատելով վերջին տարիներին լայնորեն կիրառվող մասնավորեցման ուղղակի վաճառքի մեթոդը՝ մոռանում են այն ներդրումների և սոցիալական երաշխիքների մասին, որոնք իր վրա են վերցնում նոր սեփականատերերը: Քննադատելով մասնավորեցվող

---

[1] Տե՛ս Ա. Խ. Մարկոսյան. «Պետությունը և շուկան», Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2000, էջ 195-196:

[2] Տե՛ս ՀՀ կառավարության 2000 թ. ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրում ընդգրկված պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների գույքի վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ հայցերից հրաժարվելու, կատարողական վարույթները կարճելու և դրանց մասնավորեցման, լուծարման կամ սնանկացման գործընթացը կանոնակարգելու մասին» N 204 որոշումը և այն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 2000 թ. դեկտեմբերի 28-ի N 899 որոշումը:

գույքի բարձր գինը՝ չեն նշում այդ գույքի գնորդներին տարաժամկետ վճարումների իրավունքի տրամադրման արտոնության մասին:

Բարեփոխիչների հասցեին ուղղված քննադատությունները պատահական չեն, քանի որ վարչահրամայական տնտեսության վերափոխումը շուկայականի, ուղեկցվելով սեփականության ձևափոխմամբ, ազդեցություն է թողնում ամբողջ սերնդի, ինչպես նաև հաջորդ սերունդների վրա: Պետք է նախևառաջ հիշել, որ մասնավորեցումը քաղաքական որոշումների և քաղաքական կամքի դրսևորման արդյունք է, և այդպիսի բարեփոխումներ իրականացնելու համար շատ հաճախ պահանջվում է բարձր գին, որը հասարակությունը համաձայն չէ վճարել:

Բացի այդ, չի կարելի մասնավորեցումից անհապաղ «հրաշալի» արդյունքներ ակնկալել, այդ գործընթացը արդյունավետ շուկայական տնտեսության հիմքեր է ստեղծում, սակայն այն պետք է ուղեկցվի արմատական փոփոխություններով նաև այլ ոլորտներում՝ իրավական (հատկապես սեփականության իրավունքի պաշտպանության), հարկային, մաքսային, սոցիալական քաղաքականության և այլն: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ արդյունավետ սեփականատերն ի հայտ են գալիս մասնավորեցումից հետո միայն չորրորդ սերնդում:

Բաժնետիրական սեփականություն

Որպես սեփականության հատուկ ձև իմաստ ունի առանձնացնել բաժնետիրական սեփականությունը, որը մեծ հնարավորություն է ստեղծում մասնակիցների որոշակի մասի համար (որպես կանոն՝ փոքր մասի) կենտրոնացնել տնտեսական իշխանությունը: Բաժնետիրական սեփականությունն ունի հետևյալ հիմնական առանձնահատկությունները: Նախ՝ մասնակիցների (սեփականատերերի) կազմով այն միաժամանակ խառը և կորպորատիվ սեփականություն է: Երկրորդ՝ առանձին բաժնետիրական ընկերություններ ստեղծում են օտարերկրյա անշարժ գույքին և ակտիվներին տիրապետելու բազմացող (մուլտիպլիկացիոն) արդյունք, ընդ որում՝ կամավորության սկզբունքով: Բաժնետոմսերի հսկիչ փաթեթի տերերը որոշում են ընկերության այն մասնակիցների գույքի ճակատագիրը, որոնք չեն տիրում հսկիչ փաթեթին: Երրորդ՝ բաժնետիրական սեփականությունը անցումային ձևի նախապայման է ստեղծում, իր բովանդակությամբ այն համատեղում է մասնավոր և հանրային սեփականության գծեր:

Նշվեց, որ Հայաստանի Հանրապետությունում բաժնետիրական կապիտալը ձևավորվել է հիմնականում պետական գույքի մասնավորեցման արդյունքում (աղյուսակ 1), որից հետո առավել սրությամբ դրված են արժեթղթերի շուկայի զարգացման հիմնախնդիրները և պետական խթանող քաղաքականության իրականացումը, որի հիմնական խնդիրն է բաժնետիրական ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման համար պայմանների ստեղծումը:

Աղյուսակ 1

Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ մասնավորեցված ընկերությունները, բաժնետերերի թիվը և բաժանորդագրությանը մասնակցելու ձևերը ՀՀ-ում 1995-2000 թթ.[1]

Ընկերությունների թիվը	Բաժնետերերի թիվը	այդ թվում՝		
		բաց բաժանորդագրությամբ	փակ բաժանորդագրությամբ	մասնակի անհատույց մասնավորեցմամբ
1995 թ.				
135	41559	7765	11404	35065
մեկ ընկերության հաշվով 1995 թ.	308	58	84	260
1996 թ.				
431	55986	4349	10462	51211
մեկ ընկերության հաշվով 1996 թ.	130	10	24	119
1995-1996 թթ.				
566	97545	12114	21866	86276
մեկ ընկերության հաշվով 1995-1996 թթ.	172	21	39	152
1997 թ.				
317	40077	1793	9188	35613
մեկ ընկերության հաշվով 1997 թ.	126	6	29	112
1995-1997 թթ.				
883	137622	13907	31054	121889
մեկ ընկերության հաշվով 1995-1997 թթ.	156	16	35	138
1998 թ.				
140	10487	651	1743	8851
մեկ ընկերության հաշվով 1998 թ.	75	5	12	63
1995-1998 թթ.				
1023	148109	14558	32797	130740
մեկ ընկերության հաշվով 1995-1998 թթ.	145	14	32	128
1999 թ.				
24	1126	76	487	599
մեկ ընկերության հաշվով 1999 թ.	47	3	20	25
1995-1999 թթ.				
1047	149235	14634	33284	131339
մեկ ընկերության հաշվով 1995-1999 թթ.	142	14	32	125
2000 թ.				
3	34	21	0	12
մեկ ընկերության հաշվով 2000 թ.	11	7	0	4
1995-2000 թթ.				
1050	149269	14655	33284	131351
մեկ ընկերության հաշվով 1995-2000թթ.	142	14	32	125

[1] Աղբյուրը՝ Ա. Խ. Մարկոսյան, «Պետությունը և շուկան», Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2000, էջ 175:

Բաժնետիրական ընկերություններում օբյեկտիվորեն առկա են ինչպես առանձին բաժնետերերի, այնպես էլ բաժնետերերիի առանձին խմբերի և կառավարիչների ու այն բաժնետերերի շահերը, որոնք ձգտում են բաժնետիրական ընկերության վերահսկողությունը իրենց ձեռքում կենտրոնացնել: Հաճախ այս խմբերի շահերը հակասում են միմյանց: Նման հակասությունը գործնականում հանգեցնում է այսպես կոչված «կորպորատիվ կոնֆլիկտների»: Առավել հաճախ հանդիպող կորպորատիվ կոնֆլիկտներից մեկը մանր և խոշոր բաժնետերերի միջև հակամարտությունն է, որն առաջին հերթին կապված է նրանց՝ բաժնետիրական ընկերության գործնեության նկատմամբ ունեցած հետաքրքրության մակարդակից: Մանր բաժնետերերը ձգտում են, նախևառաջ, շահաբաժինների տեսքով բաշխել ընկերության շահույթը: Խոշոր բաժնետերերը, որոնք վերահսկում են ընկերության գործունեությունը, ձգտում են ներդնել ստացված շահույթը նոր ներդրումային ծրագրերում, որպեսզի ապագայում ավելի մեծ շահույթ ստանան: Կորպորատիվ կոնֆլիկտների մեկ այլ ձևը կապված է այնպիսի իրավիճակի հետ, երբ ընկերությունում կան բաժնետերեր, որոնք ունեն բաժնետոմսերի համեմատելի չափերի խոշոր փաթեթներ:

Հայաստանում գոյություն ունեն բաժնետիրական ընկերությունների վերահսկողության երկու տեսություն՝ վերահսկողություն բաժնետերերի կողմից և կառավարիչների կողմից, քանի որ պետական գույքի զանգվածային մասնավորեցման արդյունքում հիմնական բաժնետերեր դարձան տվյալ կազմակերպության նախկին վարչակազմը և աշխատավորական կոլեկտիվները: Ընդ որում՝ բաժնետերերի առաջին խումբն իր ձեռքում կուտակեց բաժնետոմսերի բացարձակ մեծամասնությունը, իսկ երկրորդ խումբը տիրեց դրա միայն աննշան մասին: Մինչդեռ ընկերությունների աշխատավորական կոլեկտիվները հանդես չեն գալիս որպես միասնական, ընդհանուր շահերով միավորված մարդկանց խումբ: Նրա անդամների շահերը, որպես կանոն, տարբերվում են, հետևաբար նրանք չեն կարող չնչին չափով անգամ մասնակցել ընկերության ղեկավարմանը: Վարչակազմի շահերը, ընդհակառակը, շատ պարզ են. պահպանել ընկերության նկատմամբ վերահսկողությունը, որը նրանք ունեին մինչև մասնավորեցումը: Ստեղծված իրավիճակում դա հաջողվում է: Իշխանության կենտրոնացումը կատարվում է մի քանի միջոցով, օրինակ՝ նպատակաուղղված ձևով աշխատողներից բաժնետոմսերի գնմամբ, որպեսզի սեփական բաժնետոմսերի փաթեթը հասցվի հսկիչ ծրարի մեծության կամ դրանից ավելի: Այդ մեթոդը կիրառելու անհնարության դեպքում «օգնության» են գալիս այլ մեթոդներ, որոնց թվում են կորպորատիվ օրենսդրության խախտումները: Մասնավորապես՝

- ընկերության բաժնետերերը տեղյակ չեն պահվում բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ քննարկվելիք հարցերի մասին կամ տեղյակ են պահվում ոչ օրենքով սահմանված ժամկետում և ձևով,
- տնօրենների խորհուրդը չի վերընտրվում ընդհանուր ժողովում, ինչպես դա պահանջում է օրենսդրությունը, այլ կազմվում է «գրպանային» տնօրենների խորհուրդ՝ կազմված տնօրենից, գլխավոր հաշվապահից և բաժնետիրական

ընկերության մի քանի այլ ղեկավարներից: Արտաքին ներդրողները, որպես կանոն, չեն ընդգրկվում խորհրդում,

- խոչընդոտվում է բաժնետիրական ընկերության ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտի անցկացումը, կամ աուդիտը պատվիրակվում է «բարեկամ» կազմակերպությանը,
- ընդհանուր ժողովների ժամանակ չեն պահպանվում քվեարկության ընթացակարգերը, քվեարկությունը կատարվում է ձեռք բարձրացնելով, այլ ոչ թե «մեկ բաժնետոմսը՝ մեկ ձայն» սկզբունքով,
- իրականացվում է ոչ արդարացի իջեցված գներով մինորիտար բաժնետերերից բաժնետոմսերի գնում՝ հենց բաժնետիրական ընկերության հաշվին,
- կանոնադրական կապիտալի ավելացումը նոր բաժնետոմսերի թողարկման միջոցով հիմնականում իրականացվում է բաժնետոմսերի թողարկման և դրածո անձանց միջև տեղաբաշխման ճանապարհով՝ առանց բաժնետերերի գիտության, կամ էլ բաժնետոմսերի փակ բաժանորդագրմամբ,
- իրականացվում է բաժնետիրական ընկերության գույքի էժանացված գներով վաճառք՝ առանց բաժնետերերի գիտության,
- խախտվում է շահութաբաժիններ վճարելու գործընթացը, կամ դրանք ընդհանրապես չեն վճարվում,
- կատարվում է աշխատողներից նրանց բաժնետոմսերի ստիպողական գնում՝ աշխատանքից ազատելու սպառնալիքի տակ,
- կառավարիչ-բաժնետերերի և աշխատող-բաժնետերերի շրջանում համաձայնություն է ձեռք բերվում՝ ընդդեմ արտաքին բաժնետերերի գործելու համար, կամ նյութական և վարչական պատժի են ենթարկվում այն աշխատող-բաժնետերերը, որոնք փորձում են վաճառել իրենց բաժնետոմսերը արտաքին ներդրողներին,
- նախաձեռնվում են սնանկացման կեղծ գործընթացներ՝ ընկերության ակտիվները ձեռք բերելու համար և այլն:

Չնայած արժեթղթերի շուկայի կարգավորման մասին այն ժամանակահատվածի համար առաջադիմական օրենքի ընդունմանը[1]՝ հայկական մտածելակերպը և վառ արտահայտված անհատապաշտությունը չբերեցին կորպորատիվ կառավարման ոլորտում սպասվելիք դրական արդյունքների: Բաժնետիրական ընկերության մասին բաց և հասանելի տեղեկատվության ապահովման, օրենսդրության և կարգավորող մարմնի պահանջները կատարելու փոխարեն խոշոր բաժնետերերը գերադասեցին գնել մանր (փոքրամասնական) բաժնետերերի բաժնետոմսերը՝ վերակազմակերպելով բաց բաժնետիրական ընկերությունները փակի կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների: Նման վերաբաշխումը հնարավոր էր նաև այն պատճառով, որ մասնավորեցման արդյունքում ստեղծված բաժնետիրական ընկերությունների մեծ մասում

[1] «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքը ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2000 թ. հուլիսի 6-ին (ՀՕ-82) և ուժը կորցրած ճանաչվել 2007 թ. հոկտեմբերի 11-ին «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ:

բաժնետոմսերի հսկիչ փաթեթը գտնվում էր սահմանափակ թվով մարդկանց ձեռքում (տե՛ս աղյուսակ 2):

Հայաստանում մասնավորեցման ճանապարհով պետական մասնակցությամբ խառը կորպորատիվ սեփականության ստեղծումը լայն տարածում չստացավ: Այդուհանդերձ, պետության՝ որպես բաժնետիրոջ դերը և խնդիրները կարևոր են, կորպորատիվ կառավարման բնագավառում առաջացող հիմնախնդիրները նույնպես մինչ օրս մնում են չլուծված, որի հիմնական պատճառներն են՝ կորպորատիվ կառավարման մշակույթի, ինչպես նաև կապիտալի շուկայի զարգացման համար անհրաժեշտ գործող ենթակառուցվածքների ու արդյունավետ կարգավորման և վերահսկողության, «փոքր» բաժնետերերի շահերի պաշտպանության կառուցակարգերի բացակայությունը (իսկ դրանց առկայության դեպքում՝ չկիրառումը):

Տնտեսական բարեփոխումների շարունակականությունը Հայաստանի Հանրապետությունում պահանջում է մշակել և կիրառել տնտեսության կարգավորման այնպիսի գործիքակազմ և մեխանիզմներ, որոնք բնորոշ են շուկայական տնտեսությանը: Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող և ոչ մի երկրում պետությունը չի հրաժարվել իր սեփականությունից, առավել ևս պետական և մասնավոր տնտեսվարող սուբյեկտների փոխհարաբերությունների կարգավորման իր լծակներից:

Մասնավորեցումը, ինչ խոսք, թույլ տվեց ձևավորել ոչ պետական հատված, որն այժմ գերակայում է և՛ արտադրության, և՛ ծառայությունների ոլորտներում: Սակայն դեռևս կան ամբողջությամբ պետական և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններ: Գրեթե առանց բացառության բոլոր տարիներին իրականացված ուսումնասիրությունների արդյունքները բացահայտել են պետական մասնակցությամբ ընկերությունների բազմաթիվ հիմնախնդիրներ:

Իսկ եթե հաշվի առնենք, որ պետական սեփականության մի մասը կազմում են բաժնետիրական ընկերություններում ներդրված ակտիվները, ապա պարզ է դառնում, որ ընկերությունների հիմնախնդիրների լուծումը կարևոր տեղ է զբաղեցնում պետության կողմից իր տնտեսական գործառույթների իրականացման գործում:

Պետության՝ որպես բաժնետիրոջ դերը կայանում է պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման արդյունավետության (շահութաբերության) բարձրացման, բյուջեի ոչ հարկային եկամուտների ավելացման, պետության մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների կողմից համապետական գործառույթների կատարման ապահովման, գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշների և կառավարման որակի բարելավման, ինչպես նաև կառավարչական ծախսերի օպտիմալացման մեջ:

Աղյուսակ 2

1995-2003 թվականներին բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ մասնավորեցված ընկերություններում տնօրենների բաժնետեմսերի (ՏԲ) չափի մասին [1]

N	Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ մասնավորեցված ԲԸ-ներում տնօրենների բաժնետոմսերը (%)	Բաժնետիրական ընկերություններ, որոնք մասնավորեցվել են բաց բաժանորդագրության մեթոդով																	Տեսակարար կշիռը, %
		1995 թ. ընթացքում		1996 թ. ընթացքում		1997 թ. ընթացքում		1998 թ. ընթացքում		1999 թ. ընթացքում		2000 թ. ընթացքում		2001 թ. ընթացքում		2002 թ. ընթացքում		Ընդամենը 1995-2002 թթ.	
		Քանակը	Տեսակարար կշիռը, %	Քանակը	Տեսակարար կշիռը, %	Քանակը	Տեսակարար կշիռը, %	Քանակը	Տեսակարար կշիռը, %	Քանակը	Տեսակարար կշիռը, %	Քանակը	Տեսակարար կշիռը, %	Քանակը	Տեսակարար կշիռը, %	Քանակը	Տեսակարար կշիռը, %		
1	ՏԲ = 0 %	4	3,0	45	10,4	65	20,5	27	19,3	11	45,8	7	100,0	10	100,0	2	100,0	171	16,0
2	0 % < ՏԲ < 10 %	39	28,9	95	22,0	42	13,2	23	16,4	0	0,0	0	0,0	0	0,0	0	0,0	199	18,7
3	10 % ≤ ՏԲ < 20 %	28	20,7	71	16,5	34	10,7	8	5,7	1	4,2	0	0,0	0	0,0	0	0,0	142	13,3
4	20 % ≤ ՏԲ < 30 %	18	13,3	41	9,5	25	7,9	13	9,3	2	8,3	0	0,0	0	0,0	0	0,0	99	9,3
5	30 % ≤ ՏԲ < 40 %	15	11,1	48	11,1	30	9,5	9	6,4	1	4,2	0	0,0	0	0,0	0	0,0	103	9,7
6	40 % ≤ ՏԲ < 50 %	8	5,9	41	9,5	23	7,3	8	5,7	1	4,2	0	0,0	0	0,0	0	0,0	81	7,6
	Ընդամենը ՏԲ < 50 %	112	83,0	341	79,1	219	69,1	88	62,9	16	66,7	7	100,0	10	100,0	2	100,0	795	74,6
7	50 % ≤ ՏԲ < 60 %	8	5,9	22	5,1	23	7,3	8	5,7	1	4,2	0	0,0	0	0,0	0	0,0	62	5,8
8	60 % ≤ ՏԲ < 70 %	12	8,9	24	5,6	19	6,0	11	7,9	2	8,3	0	0,0	0	0,0	0	0,0	68	6,4
9	70 % ≤ ՏԲ < 80 %	2	1,5	15	3,5	24	7,6	7	5,0	2	8,3	0	0,0	0	0,0	0	0,0	50	4,7
10	80 % ≤ ՏԲ < 90 %	1	0,7	17	3,9	20	6,3	7	5,0	1	4,2	0	0,0	0	0,0	0	0,0	46	4,3
11	90 % ≤ ՏԲ < 100 %	0	0,0	10	2,3	11	3,5	15	10,7	2	8,3	0	0,0	0	0,0	0	0,0	38	3,6
12	ՏԲ = 100 %	0	0,0	2	0,5	1	0,3	4	2,9	0	0,0	0	0,0	0	0,0	0	0,0	7	0,7
Ընդամենը 50% ≤ ՏԲ ≤ 100%		23	17,0	90	20,9	98	30,9	52	37,1	8	33,3	0	0,0	0	0,0	0	0,0	271	25,4
Ընդամենը		135	100,0	431	100,0	317	100,0	140	100,0	24	100,0	7	100,0	10	100,0	2	100,0	1066	100,0

[1] Աղյուսակը կազմվել է ուսումնասիրվող ժամանակահատվածում պետական գույքի կառավարման (մասնավորեցման) ոլորտում լիազորված պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տվյալներով:

Անցումային տնտեսություններում առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացումը արդիական խնդիրներից մեկն է: Տնտեսության շուկայական ուժերի ազատ զարգացումն ապահովող մակրոտնտեսական և քաղաքական պայմանների ստեղծումը հաջողված է համարվում և բերում է տնտեսության մրցունակության բարձրացման, երբ վերափոխվում և մրցունակ են դառնում ընկերությունները: Այն դեպքում, եթե ընկերությունների գործունեությունը, կազմակերպական կառուցվածքը, կառավարման մեխանիզմները ներդաշնակ չեն երկրի սոցիալ-տնտեսական և ինստիտուցիոնալ միջավայրին, տնտեսական բարեփոխումները կարող են գնահատվել որպես անարդյունավետ կամ հաջողված միայն մասնակի խնդիրների լուծման համար:

Հայաստանում, ինչպես և նախկին համայնավարական մյուս երկրներում, որտեղ ազատական բարեփոխումներն իրականացվեցին հրամայական տնտեսությանը բնորոշ սոցիալ-տնտեսական ինստիտուտների վերացմամբ, որոշակի ժամանակահատվածում առաջացավ ինստիտուցիոնալ «դատարկություն»: Խզվեցին նախկին ճյուղային կապերը, զարգացավ արտաճյուղային տարածքային առավելություններ ստանալու համար արտոնությունների տրամադրման և որոշակի «իրավունքների շնորհման» փորձը, գրեթե ոչնչացավ ոլորտային (հատկապես արդյունաբերական) գիտությունը, որը գիտատեխնիկական առաջընթացի արդյունքների ներդրման շարժիչ ուժն էր համարվում:

Առևտրային կազմակերպությունների ներքին և արտաքին ինստիտուցիոնալ միջավայրերի հավասարեցումը հանգեցրեց ֆինանսական երաշխավորված և կայուն հոսքերի դադարեցման, ինչպես նաև ներկազմակերպական տարբեր խմբերի (աշխատողներ, կառավարիչներ, տնօրինություն) շահերի սահմանազատման: Ի հայտ եկավ այնպիսի մի երևույթ, որը կարող է կոչվել «ֆիզիկական անձանց տնտեսություն»:

Նշենք, որ պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) արդյունքում ստեղծված 1147 բաց բաժնետիրական ընկերությունների (նկատի ունենք մինչև 2004 թ. միայն բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ մասնավորեցվածները, որից հետո, ըստ էության, մասնավորեցման այդ ձևը չի կիրառվել) շատ փոքր մասն է ընդունել, ներդրել և գործել կորպորատիվ կառավարման միջազգային սկզբունքներին համապատասխան: Այդ մասին է վկայում նաև բաց բաժնետիրական ընկերությունների թվի նվազման միտումը՝ սկսած 2002 թվականից, ինչը շարունակվում է մինչ օրս[1]:

Դիտարկելով բաժնետոմսերի բաց բաժանորդագրությամբ ընկերությունների մասնավորեցման դինամիկան՝ նկատելի է, որ բաժնետոմսերի ազատ բա-

[1] Այդ մասին են վկայում նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները: Օրինակ՝ 2019 թ. օրացուցային տարվա ընթացքում ՀՀ-ում չի գրանցվել ոչ մի հատ բաց բաժնետիրական ընկերություն (ԲԲԸ), 2018-ին և 2017-ին գրանցվել է մեկական ԲԲԸ: Տե՛ս համապատասխան տարիների ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-դեկտեմբերին, օր.՝ https://www.armstat.am/am/?nid=82&id=2236

ժանորդագրության միջոցով բաժնետիրական կապիտալի ստեղծումը բավականին արագ տեմպերով իրականացվել է մինչև 1999 թ. սկիզբը, երբ ազատ բաժանորդագրությամբ մասնավորեցվեցին 1085 նախկին պետական սեփականություն համարվող միջին և խոշոր ձեռնարկությունները, ընդ որում՝ 1995-1998 թթ. ժամանակահատվածում այս ձևով մասնավորեցման տեմպերն աննախադեպ էին. 1995 թ. ստեղծվեց 173, 1996 թ.՝ 453, 1997 թ.՝ 319 և 1998 թ.՝ 140 նոր բաժնետիրական ընկերություն: Սկսած 1999 թվականից՝ բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ մասնավորեցման տեմպերը նվազեցին. 1999 թ. ընթացքում այս ձևով մասնավորեցվեց 24, 2000 թ.՝ 15, 2001 թ.՝ 19, 2002 թ.՝ 3, 2003 թ.՝ 1 ընկերություն, իսկ հետագա տարիներին բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ մասնավորեցման ձևը ընդհանրապես չկիրառվեց:

Կարող է տեսակետ ձևավորվել, որ մասնավորեցվող ընկերությունների թիվը պակասել է, այդ պատճառով էլ նվազել է բաժնետիրացման եղանակով մասնավորեցվողների թիվը: Սակայն իրականում, հատկապես սկսած 2000 թվականից, բազմաթիվ խոշոր և շահութաբեր ձեռնարկություններ մասնավորեցվեցին ոչ թե բաժնետիրացման, այլ ավելի շատ սահմանափակ թվով (իսկ ավելի հաճախ՝ մեկ անձի) սեփականատեր ունենալու սկզբունքով: Մինդեռ հենց այդ ձեռնարկությունները կարող էին և պետք է դառնային հրապարակային առաջարկի օբյեկտներ, հանրության լայն շերտերի սեփականություն՝ դրանց բաժնետիրացման միջոցով:

Այսինքն՝ եթե մինչև 2000 թ. գործադրվում էին բոլոր ջանքերը, որպեսզի գոնե մասնավորեցվող ընկերությունների հաշվին ստեղծվեն, ավելանան և կայական կապիտալի շուկայի հիմնական բաղադրիչներից մեկի՝ բաժնետոմսերի շուկայի մասնակիցները, ապա հետագայում ինչպես ընկերությունների ներքին հիմնախնդիրները (դրանց մասին նշվեց վերևում), այնպես էլ կապիտալի շուկայի կարգավորման գործիքակազմը չձևավորելու պատճառով բաժնետիրական ընկերությունների գործելաոճը հավասարեցվեց սովորական «ընտանեկան» կազմակերպությունների գործելաոճին:

Այսպես, բաց բաժնետիրական ընկերությունների գերակշռող մասում տեղի ունեցավ բաժնեմասերի խոշորացում՝ «փոքր» (մինորիտար) բաժնետերերից նրանց պատկանող բաժնետոմսերը ընկերության խոշոր բաժնետերերի կողմից (որոնց թիվը լավագույն դեպքում գերազանցում է 2-ը) հետգնելու ճանապարհով: Նույն գործընթացը տեղի ունեցավ մասնակի անհատույց սեփականաշնորհման արդյունքում ստեղծված հազարավոր փոքրամասնական (մինորիտար) բաժնետերերի զանգվածի հետ:

Առևտրային կազմակերպությունների համար արտաքին հիմնախնդիրներին ավելացան նաև նորերը, որոնք կապված են կառավարման որակի, համակողմանի զարգացման և ծրագրանպատակային խնդիրների լուծման հետ: Կարճաժամկետ նպատակները գերակայում էին երկարատև զարգացման պլանավորման և, որպես հետևանք, վերարտադրության գործընթացի նկատմամբ, կառավարիչների, աշխատողների և սեփականատերերի միջև սոցիալական ու խմբա-

յին լարվածությունը ուժեղացավ, ինչը հատկապես նկատելի դարձավ տնտեսության մենաշնորհացման համայնապատկերում:

Սակայն առավել էական են համակարգային ինստիտուցիոնալ խնդիրները, որոնք չլուծելու դեպքում կարող են ընկերությունների ամբողջականության խախտման պատճառ դառնալ: Ընկերության ամբողջականություն ասելով հասկանում ենք արտադրության գործընթացների, արտադրանքի իրացման և օգտագործվող ռեսուրսների վերարտադրության, ինչպես նաև այդ ոլորտում նորարարական ներդրումների փոխադարձ համաձայնեցումը և ներքին հավասարակշռությունը: Նշված լիարժեքության այլընտրանքն ընկերության միասնականության կորուստն է, կուտակված փորձն օգտագործելու անհնարությունը և մի շարք այլ բացասական հետևանքներ:

Առևտրային կազմակերպության ամբողջականության ֆունկցիոնալ բաղադրիչների թուլացումը առաջին հերթին արտահայտվում է նորարարությունների մեջ իրականացվող ներդրումների ծավալների և ընկերության ենթահամակարգերի կրճատմամբ: Ամբողջականության թուլացումը արտահայտվում է նաև գործարարության ներքին համախմբման և համակարգման մակարդակի նվազման մեջ, այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են շուկայավարությունը, արտադրության նախապատրաստումը և կադրերի ուսուցումը, բավականաչափ համակարգված չեն: Ընկերությունների շատ փոքր մասն է միայն մշակում միասնական ծրագիր, ինչի արդյունքում առաջանում են ընթացիկ լրացուցիչ վարչական ծախսեր:

Անհրաժեշտ է նշել, որ որոշակի ծրագրի իրականացման համար ընկերության պատասխանատվությունը կառավարման բարձրագույն մարմինների ներկայացուցիչների մոտ անհատական բնույթ է կրում և կենտրոնանում է մեկ անձի շուրջ: Բաժնետերերի նկատմամբ պատասխանատվությունը թուլացել է կորպորատիվ վերահսկման թերությունների պատճառով: Բազմաթիվ ընկերություններում արտաքին ներդրողները վերահսկում են բաժնետոմսերի կեսից ավելին, ընդ որում՝ հիմնական մասը վերահսկվում է անմիջապես տնօրենի (տնօրենների խորհրդի) կողմից: Այսպիսով, ընկերության գործադիր մարմինների վրա «փոքր» (մինորիտար) բաժնետերերի ազդեցության մեխանիզմը գրեթե բացակայում է:

Ազատականացման և մասնավորեցման քաղաքականության քննադատների շարքում կան մարդիկ, ովքեր նշում են, որ բարեփոխումներն իրականացվեցին հետևյալ սկզբունքով. «լավագույն արդյունաբերական քաղաքականությունը դրա բացակայությունն է», և այդ քաղաքականությունը հանգեցրեց մեծ կորուստների: Այս կապակցությամբ պետք է ամրագրել, որ, նախ, տնտեսության ազատականացումը և մասնավորեցումը 1990-ական թվականներին (հատկապես այդ ժամանակահատվածի սկզբում) չունեին այլընտրանք: Բավական է նշել, որ երբ 1993 թվականին կազմվեց պետական ձեռնարկությունների մասնավորեցման (սեփականաշնորհման) առաջին ծրագիրը, պարզվեց, որ ՀՀ ռադիոէլեկտրոնիկայի և էլեկտրատեխնիկայի ճյուղերում աշխատողների թիվը կազմում է

452 հազար մարդ: Եվ եթե նկատի ունենանք, որ նշված ոլորտն ամբողջությամբ աշխատում էր «Մոսկվայի» համար, ապա անհասկանալի է դառնում, թե շուկաների ու պատվերների չգոյության պայմաններում էլ ի՞նչ պետք է արվեր, երբ պետությունը գտնվում էր պատերազմական իրավիճակում և ֆինանսական կոլապսի պայմաններում: Երկրորդ՝ հենց այդ տարիներին մասնավորեցումը դարձավ արդյունաբերական քաղաքականության իրականացման հիմնական գործիքը, որը դրսևորվեց հիմնականում հետևյալ ձևերով.

ա) նախկին պետական ձեռնարկությունները վերակազմավորվեցին բաժնետիրական ընկերությունների (կառավարման առավել արդյունավետ ձև, երբ «կարմիր տնօրենները» փոխարինվեցին կառավարման ներկայացուցչական մարմիններով (բաժնետերերի ընդհանուր ժողով, ընկերության խորհուրդ և այլն),

բ) իրականացվեց 1010 միջին և խոշոր ձեռնարկությունների բաժնետոմսերի մասնակի անհատույց սեփականաշնորհում, երբ բաժնետիրացված ընկերությունների ակտիվների հաշվեկշռային արժեքի 20 տոկոսը տրվեց աշխատավորական կոլեկտիվների անդամներին, որի հետևանքով ձևավորվեց 360 հազար բաժնետեր,

գ) խրախուսվեց ներդրումների հոսքը դեպի ընկերությունները և այդ ներդրումների չափով ընկերությունների կանոնադրական կապիտալում, ի հաշիվ պետականի, ավելացավ մասնավոր սեփականատերերի մասնաբաժինը,

դ) մասնավորեցումը դարձավ նաև օտարերկրյա ներդրումների ներգրավման գործուն (եթե չասենք՝ միակ) միջոց, և հենց այդ տարիներին՝ մասնավորեցման գործարքների արդյունքում կատարվեցին հիմնական ներդրումները ՀՀ-ում:

Բացի այդ, քննադատությունները ավելի ազնիվ կլինեին, եթե դիտարկվեին նախկին պետական ակտիվները պետության սեփականության ներքո պահելու հետևանքները և այն վնասները, որոնք կհասցվեին հանրապետությանը այդպիսի գործելակերպի հետևանքով:

Մասնավորեցման գործընթացի սկզբնական փուլում՝ 1990-ական թվականներին և 2000-ականների սկզբին, մասնավորեցման գործարքները եղել են ավելի թափանցիկ, ավելի արդարացի, ավելի հրապարակային և ավելի մեծ ծավալների ներդրումներ և աշխատատեղեր ապահովող գործարքներ: Ի վերջո ոչ միայն միամտություն է երկրի բոլոր դժվարություններն ու թերությունները բարդել մասնավորեցման վրա, այլև մասնագիտական կամ տնտեսագիտական կարճատեսություն է պարզունակացնել երկրի կառավարումը միայն մեկ հանգամանքով, այն էլ հստակ և պարզորոշ պատկերացում չունենալով դրա մասին:

Եզրակացություն

Վերը կատարված հետահայաց ուսումնասիրությունն այսօրվա տեսանկյունից թույլ է տալիս կատարել հետևյալ հիմնական եզրակացությունները.

1. 1990-ականների առաջին կեսին ՀՀ-ում սկսված պետական սեփականության ապապետականացման երեք խոշոր ծրագրերով (հողի և գյուղատնտեսական տեխնիկայի, բնակարանների ու պետական ձեռնարկությունների) սկզբնա-

վորեցին ՀՀ-ում խոշորամասշտաբ տնտեսական բարեփոխումները՝ ապահովելով անցումը պետական սեփականությունից մասնավոր և խառը սեփականության: Տնտեսությունում ձևավորված բազմակացութաձև սեփականությունը դարձավ այն տնտեսական հիմքը, որն ապահովեց ազատ շուկայական հարաբերությունների կայացումը և ՀՀ-ում քաղաքացիական հասարակության հիմքերի արմատավորումը:

2. Սեփականության իրավունքի ոլորտում իրականացված բարեփոխումները ՀՀ բնակչության ճնշող մեծամասնությանը դարձրին սեփականատերեր, ինչը նշանակում է, որ նրանք կարող են ինքնուրույն որոշումներ կայացնել՝ գործելով որպես շուկայական տնտեսության անկախ սուբյեկտներ: Դրանով իսկ ՀՀ-ում ձևավորվեց, ըստ էության, բաց (ազատ) հասարակություն, որտեղ յուրաքանչյուր ոք հնարավորություն ստացավ կայացնել ինքնուրույն որոշում՝ առանց «վերևների» ցուցումների և միջամտության:

3. Պետական սեփականության փոխանցումը բնակչությանը հիմնականում իրականացվեց առանց բնակչության կողմից այդ սեփականության ձեռքբերման համար փոխհատուցման, ինչպես հողի և գյուղատնտեսության տեխնիկայի, այնպես էլ բնակարանների ու արվեստանոցների սեփականաշնորհման դեպքում, իսկ պետական ձեռնարկությունների մասնավորեցման ժամանակ նախ՝ այդ գույքի արժեքի 20%-ը «բաժանվեց» ձեռնարկությունների աշխատավորական կոլեկտիվների անդամներին (այսպես կոչված մասնակի անհատույց սեփականաշնորհում)՝ ելնելով հանրային արտադրությանը նրանց աշխատանքի քանակական և որակական մասնաբաժնից, երկրորդ՝ մասնակի անհատույց սեփականաշնորհման ծրագրերի շրջանակում կիրառվեց «ներդրումային սեփականաշնորհումը», ըստ որի՝ ձեռնարկության կոլեկտիվի կողմից ներդրումներ կատարելու դեպքում այդ ներդրումները դառնում են կոլեկտիվի սեփականությունը՝ այդ չափով նվազեցնելով ընկերությունների կանոնադրական կապիտալում պետական բաժնեմասի մեծությունը: Երրորդ՝ յուրաքանչյուր բնակչի տրամադրվեց 20 հազար դրամ արժողությամբ սեփականաշնորհման սերտիֆիկատ, որը նա կարող էր որպես վճարման միջոց օգտագործել մասնավորեցման ցանկացած գործարքի (այդ թվում՝ մասնավորեցվող ընկերությունների բաժնետոմսերի ձեռքբերման) ժամանակ: Այս միջոցառումը ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու համար մատչելի դարձրեց մասնավորեցման միջոցով սեփականատեր դառնալու իրավունքի իրացումը:

4. Պետական գույքի մասնավորեցման ժամանակ նախապատվությունը տրվեց (չնչին բացառություններով) աշխատավորական կոլեկտիվին: Այս միջոցով ոչ միայն ապահովվեց մասնավորեցման գործընթացի անվտանգ իրականացումը, այլև ամուր սոցիալական բազա ձևավորվեց տնտեսական բարեփոխումների հիմքերի ստեղծման և բարեփոխումների անշրջելիության ապահովման համար: Այսպես, «փոքր» օբյեկտների (առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման ոլորտների) սեփականատերեր դարձան դրանց աշխատավորական կոլեկտիվների անդամները: Խոսքը վերաբերում է շուրջ 9 հա-

զար օբյեկտի: Ավելի քան 2000 միջին և խոշոր ձեռնարկությունների բաժնետիրացումն իրականացվեց բաժնետոմսերի փակ և բաց տեղաբաշխմամբ, որի համաձայն՝ մասնավորեցվող ընկերության բաժնետոմսերի 20%-ը նախ առաջարկվում էր աշխատավորական կոլեկտիվների անդամներին՝ նրանց կողմից ձեռքբերման համար, իսկ մնացածը ներկայացվում էր բաց բաժանորդագրության:

5. Միջին և խոշոր պետական ձեռնարկությունների մասնավորեցման հիմնական ձև ընտրվեց բաժնետիրացումը: Այդ ձևի ընտրությունը պատահական չէր, դրա օգնությամբ դրվեցին և լուծվեցին հետևյալ հիմնախնդիրները.

1. շուկայական առաջարկի և պահանջարկի միջոցով որոշել մասնավորեցվող ընկերության արժեքը,

2. ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու, առանց որևէ սահմանափակման, հնարավորություն տալ մասնակցելու ցանկացած ձեռնարկության բաժնետիրացմանը,

3. շուկայական պահանջարկի միջոցով ձևավորել ՀՀ տնտեսության նոր կառուցվածքը, ինչը կարևոր գրավական էր տնտեսության արդյունավետությունը բարձրացնելու համար:

Այսպիսով, միարժեքորեն կարելի է նշել, որ ՀՀ-ում իրականացված խոշորամասշտաբ և զանգվածային մասնավորեցման նպատակը հանրապետությունում «ժողովրդական կապիտալիզմի» ստեղծումն էր: Սակայն 2000 թվականից սկսած՝ տնտեսական բարեփոխումները չունեցան իրենց օրգանական և տրամաբանական շարունակությունը, ինչն էլ հանգեցրեց իրականացված տնտեսական բարեփոխումների ինչպես հեղինակազրկման, այնպես էլ արժեզրկման: Այլ կերպ ասած՝ այդ բարեփոխումները չհասցվեցին իրենց տրամաբանական ավարտին: Ասվածի լավագույն ապացույցն է ՀՀ-ում կապիտալի շուկայի, կարելի է ասել, «չգոյությունը», քանի որ 2019 թ. տվյալներով կորպորատիվ արժեթղթերով իրականացված գործարքներով կապիտալացման մակարդակը կազմել է 2.3%: Այս ինստիտուտը պետք է զարգացներ այն հնարավորությունները, որոնք ստեղծվել էին նախորդ տարիների ընթացքում, իսկ դրանց չօգտագործումը վերջիվերջո հիմք հանդիսացավ կորպորատիվ կառավարման ցածր արդյունավետության: Այս համգամանքն ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, որոնք առանձին հետազոտության առարկա են:

Աշոտ Մարկոսյան
Էլյանորա Մաթևոսյան

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Համառոտագիր: Անցյալ դարի 90-ական թվականների սկզբին Հայաստանի Հանրապետության անցումը ազատ շուկայական հարաբերությունների հիմնականում ծավալվեց լայնամասշտաբ ծրագրերի իրականացման միջոցով: Միջին և խոշոր պետական ձեռնարկությունների բաժնետիրացման արդյունքում ՀՀ բնակչության մի զգալի հատված (շուրջ մեկուկես մլն մարդ) դարձավ սեփականատեր, որոնք էլ ստանձնեցին ձեռնարկությունների պարտավորությունները պետության և մյուս պարտատերերի նկատմամբ:

Սակայն սկսած 2000 թվականից՝ նշված ծրագրերն ու բարեփոխումները չունեցան իրենց տրամաբանական շարունակությունը, ավելին՝ դրանք «փոշիացվեցին», ինչը հանգեցրեց կլանային և կոռուպցիոն տնտեսության ձևավորման: Ասվածի լավագույն ապացույցն է այն, որ հատկապես կապիտալի շուկան մինչ օրս գտնվում է խիստ թերզարգացած վիճակում, ինչն էլ պատճառ է հանդիսանում կորպորատիվ կառավարման մշակույթի չձևավորման համար, ինչպես նաև բաժնետիրական ընկերություններին զրկում է կապիտալի շուկայում ավելի էժան միջոցներ ձեռք բերելուց:

Բանալի բառեր. «ժողովրդական կապիտալիզմ», բաժնետիրական ընկերություն, բաժնետիրացում, պետական գույքի մասնավորեցում, սեփականատերեր, ձեռնարկության պարտքեր, կապիտալի շուկա

Ашот Маркосян
Элеонора Матевосян

ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ АКЦИОНЕРНОЙ СОБСТВЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Аннотация: Переход к свободным рыночным отношениям в Республике Армения, начавшийся в первой половине 90-х годов прошлого столетия, осуществлялся в основном посредством масштабных программ, рыночных реформ. В результате акционирования средних и крупных государственных предприятий значительная часть населения Армении (около 1,5 млн. человек) стала собственниками и новым владельцам передались обязательства предприятий перед государством и другими кредиторами.

Тем не менее, начиная с 2000 года программы и реформы начатые в 90-х

не нашли своего логического продолжения, более того, результаты реформ были "распылены", что привело к формированию клановой и коррумпированной экономики. Наглядным доказательством сказанного является то, что рынок капитала, несмотря на все условия, созданные для его становления и развития посредством приватизации, все еще находится в неразвитом состоянии, что лишает акционерные общества доступа к более дешевым рынкам капиталов.

Ключевые слова: "народный капитализм", акционерное общество, акционирование, приватизация государственного имущества, собственники, долги предприятий, рынок капитала

Ashot Markosyan
Elyanora Matevosyan

FEATURES OF FORMATION AND DEVELOPMENT OF CORPORATE PROPERTY IN THE REPUBLIC OF ARMENIA

Abstract: The transition to free market relations in the Republic of Armenia, which began in the first half of the 90's of the last century, was carried out mainly through large-scale programs and market oriented reforms. As a result of corporatization of medium and large scale state-owned enterprises, a significant part of the population of Armenia (about 1.5 million people) became the owner, and at the same time obligations of enterprises to the state and other creditors were transferred to the new owners.

Nevertheless, since 2000, the programs and reforms launched in the 90's did not find their logical continuation; moreover, the results of the reforms were "dispersed", which led to the formation of a clan and corrupt economy. A clear proof of the above is that the capital market, despite all the conditions created for its formation and development through privatization, is still in an undeveloped phase, which deprives joint stock companies of access to cheaper capital markets.

Keywords: "national capitalism", joint-stock company, corporatization, privatization of state property, owners, debts of enterprises, capital market

Վլադիմիր Հարությունյան

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔՆԵՐԸ». ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հարգելի՛ գործընկերներ:

Ժամանակակից աշխարհի բոլոր երկրներում տեղի են ունենում տնտեսությունների մոդեռնիզացիա (արդիականացում), տնտեսությունների նորացում տնտեսական բարեփոխումների անվան տակ, որոնք պատմությունից հայտնի են, օրինակ, Ստոլիպինյան ռեֆորմներ (բարեփոխումներ) և այլ անուններով: Ներկայումս այդ բարեփոխումները, որոնք հանգեցնում են տնտեսության արագացված կամ թռիչքային զարգացման, կոչվում են տնտեսական հեղափոխություններ, որոնք բնորոշվել են տարբեր եզրույթներով:

Այսպես, օրինակ,

1. «տնտեսական վագր» եզրույթը սկզբնապես օգտագործվում էր Ասիայի տարածքում գտնվող չորս պետությունների տնտեսությունները բնութագրելու համար[1], հետագայում վերագրվեց այլ երկրների: Վերոնշյալ երկրների շարքին դասվում է նաև Իռլանդիայի Հանրապետությունը, որը մարդկային կապիտալ «ազատ արտահանող» աղքատ, գործազրկության բարձր մակարդակ ունեցող երկրից վերածվեց գիտելիքահենք տնտեսություն ունեցող, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և օտարերկրյա ուղղակի ներդրումների ցուցանիշներով աշխարհում առաջատար դիրքերում գտնվող երկրի՝ շնորհիվ գյուղատնտեսության զարգացման:

2. Իսրայելում նախաձեռնված լայնամասշտաբ բարեփոխումները կոչվեցին *«տնտեսական հեղաշրջում»*, որի հեղինակը ֆինանսների նախարարն էր: Ինչպես և Ինդոնեզիան, Իսրայելը ևս սկսեց մեծ թափով զարգացնել գյուղատնտեսությունը և դարձավ թարմ մթերքների, գյուղատնտեսական տեխնոլոգիաների համաշխարհային շուկայի առաջատար արտահանողներից՝ չունենալով հող և ջուր: Եվ այդ ամենին նրանք հասնում են շնորհիվ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման: Հարկերի հարցում Իսրայելում գերադասում են չկատակել պետության հետ և ժամանակին ու ամբողջությամբ վճարում են հարկերը, քանի որ հարկերից խուսափելու համար պատիժը չափազանց մեծ է: Իսրայելի ուժեղ կողմերից մեկն էլ բժշկությունն է, քանի որ այնտեղ շատ բարձր է գնահատվում յուրաքանչյուր մարդու կյանքը: Իսրայելի մյուս ուժեղ կողմը նրա բանակն է, և այնտեղ բոլորը զորակոչվում են զինվորական ծառայության (տղամարդիկ ծառայում են 3 տարի, իսկ կանայք 2 տարի՝ սկսած 18 տարեկանից, նրանց

[1] Birdsall, Nancy M.; Campos, Jose Edgardo L.; Kim, Chang-Shik; Corden, W. Max; MacDonald, Lawrence [editor]; Pack, Howard; Page, John; Sabor, Richard; Stiglitz, Joseph E.. 1993. The East Asian miracle: economic growth and public policy: Main report (English). A World Bank policy research report. New York, New York : Oxford University Press.

բանակում 50 տարեկանից բարձր գեներալ չկա): Իսրայելում կյանքի մակարդակը ամենաբարձրն է Մերձավոր Արևելքում: Հրեա ժողովուրդն ունի բարձր մակարդակի միասնականություն, և նրանք հայրենասերներ են և սիրում են Իսրայելը, որում էլ կայանում է հրեաների ֆենոմենը[1]:

3. Չիլիի տնտեսական հեղափոխությունը կամ «տնտեսական հրաշքը» տեղի է ունեցել Ֆրիդմանի գաղափարների ազդեցության տակ, երբ իրականացվեցին տնտեսության ազատականացման բարեփոխումները, իսկ երբ 1970 թ. երկրում ընտրվում է նոր նախագահ, նա ձեռնամուխ է լինում պղնձի հանքերի, ինչպես նաև օտարերկրացիներին պատկանող այլ սեփականության ազգայնացմանը: Չիլիացիներին ամենամոտ համակարգը, որ կիրառեցին չիլիացիները, Հարավային Կորեայի և Թայվանի փորձն է, որտեղ կրթության համակարգը կարևոր դեր է խաղում, խրախուսվում է ուսումը արտերկրում, հատուկ ուշադրություն է դարձվում հայրենասիրության և թիմային ոգու զարգացմանը:

4. Վիետնամը բարեփոխումների համար ընտրում է չինական մոդելը՝ չդադարելով վերլուծել Արևելյան Եվրոպայի երկրների, Ռուսաստանի և ԱՊՀ երկրների փորձը: Տնտեսական աճի տեմպերով (միջին տարեկանը՝ 6-7%), գործազրկության ցածր մակարդակով (1.9%) Վիետնամը աշխարհի ամենաարագ զարգացող երկրներից մեկն է համարվում:

5. Թաիլանդը աշխարհում աչքի է ընկնում իր գործազրկության ամենացածր ցուցանիշով (2018 թ.՝ 1.2%): Թաիլանդի կառավարությունը ընդլայնել է թվային տեխնոլոգիաների ոլորտում պետական ներդրումները՝ բարձր գիտական հասարակության ստեղծելու համար: Այս համատեքստում առաջնային իրականացվել են արդյունաբերության, ռոբոտաշինության, զբոսաշրջության կազմակերպումը և գործարկման գործընթացը:

6. Ինդոնեզիայի կառավարությունը խրախուսում է թվային տնտեսության զարգացումը արդյունաբերության և էլեկտրոնային առևտրի միջոցով: Ինդոնեզիայում ևս հատուկ ուշադրություն է դարձվել ազգաբնակչության կրթությանը, քանի որ կառավարությունը գտնում է, որ պետությունը կկայանա առողջ ու կրթված ժողովրդի միջոցով:

Ինդոնեզիայի նախագահը արգելել էր չմշակված հանքաքարի արտահանումը, ինչը խթանեց ներդրումների ներհոսքը և դրդեց մեծ գումարներ ներդնելու վերամշակման գործարանների շինարարության մեջ:

Տնտեսական հրաշքներ իրականացրած երկրների զգալի մասը խրախուսել է թվային տնտեսության զարգացումը (Ինդոնեզիա, Վիետնամ, Թաիլանդ):

Եվ ահա այս ամենը հաշվի առնելով՝ 2019 թվականին ինստիտուտում ձևավորվեցին աշխարհի 2 տասնյակից ավելի երկրների՝ տնտեսական հրաշքների իրականացման փորձը ուսումնասիրող աշխատանքային խմբեր, որոնք նրանց փորձի ուսումնասիրության արդյունքում կիրառական առա-

[1] https://mnews.world/ru/video/fenomen-izrailva-v-chem-sekret-uspeha-evreiskogo-gosudarstva/

ջարկություններ են կատարել դրանք Հայաստանի Հանրապետությունում գործարկելու հնարավոր ուղիների վերաբերյալ:

Հետազոտությունների արդյունքում ինստիտուտը հրատարակեց ««Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում» խորագրով գիտական հոդվածների ժողովածուն, որը

1) շարադրված է գիտահանրամատչելի լեզվով, որպեսզի այն հասկանալի ու հասանելի լինի նաև շարքային քաղաքացիների համար,
2) այն փոստային առաքմամբ ուղարկվել է գործադիր և օրենսդիր իշխանության մարմինների ղեկավարներին, ՀՀ կառավարության անդամներին, ԱԺ հանձնաժողովների նախագահներին, ՀՀ ԳԱԱ բաժանմունքի ինստիտուտներ,
3) ՀՀ և ԼՂՀ գրադարաններ ու բուհեր և այլ կազմակերպություններ: Այլ կերպ ասած՝ տնտեսագիտության ինստիտուտը իր գիտակազմակերպչական գործունեության հիմքում որպես ուղենիշ շարունակում է դնել ՀՀ ԳԱԱ մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, որի համաձայն՝ Ակադեմիան գիտական գործունեության գծով ՀՀ կառավարության պաշտոնական խորհրդատուն է,
4) ժողովածուի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է ինստիտուտի կայք-էջում:

Վերոնշյալ հետազոտություններում հետազոտվել է աշխարհի 2 տասնյակից ավելի մեծ ու փոքր ասիական, եվրոպական ու ամերիկյան երկրների տնտեսական հրաշքների իրականացման փորձը. դրա համար հիմք են հանդիսացել գրքեր, գիտական հոդվածներ, կայքեր:

Դրանցում կարևորվել և արժևորվել են այն մոտեցումները, որոնց գործարկումը հնարավոր կլինի ՀՀ-ում: Դրանք ներկայացված են ժողովածուի թիվ 2 հավելվածում, ուստի դրանց մանրամասնորեն չեմ անդրադառնա, այլ կներկայացնեմ լոկ ընդհանուր գծերով և այն էլ ամենակարևորները, քանի որ «*հայկական հրաշքը» պետք է կառուցվի՝ հաշվի առնելով մեր առավելությունները, ինչպես նաև թերությունները:* Հայ ազգն ունի իրեն բնորոշ արժեհամակարգ (մենթալիտետ), ունի պրպտուն մտքի տեր, ստեղծագործ մտածողությամբ բնակչություն, բավականին արտաքին ներուժ (սփյուռք), ապրում է արևոտ, անվտանգ, բերրի, չքնաղ ու ազատ երկրում: Մեզ պետք չէ նոր Սինգապուր, նոր Ճապոնիա կամ նոր Իսրայել դառնալ: Մեզ միայն պետք է դառնալ նոր Հայաստան՝ առավել արդիական, ազատ ու հզոր:

Եվ այսպես, ստորև ընդհանուր գծերով ներկայացվում է տնտեսական հրաշք իրականացրած առանձին երկրների հիմնուղիներից ամենակարևորները

1. Սինգապուրի տնտեսական հրաշքի փորձից արժանահիշատակ է հակակոռուպցիոն գործողությունների լայնածավալ ու արդյունավետ կազմակերպումը:
2. «Ճապոնական տնտեսական հրաշքից» (որը համեմատում են Ջորջ Մարշալի պլանի հետ) արժանահիշատակ են

2.1. ճապոնացիների աշխատասիրությունը և կարգապահությունը, որում էլ կայանում է ճապոնացիների ֆենոմենը,
2.2. ճապոնական մենեջմենթի ներդրումը, որի էությունը կայանում է նրանում, որ պետական և ազգային նպատակներին հասնելու համար ճապոնացին անձնական շահը զոհում է հանուն պետության ու ազգի,
2.3. որոշումների կայացման գործընթացի համաձայնեցման սկզբունքի ներդրումը, երբ ընդունված որոշումը բխում է բոլորի շահերից, և դրա համար պատասխանատվությունն ընկնում է ոչ թե մեկի այլ բոլորի վրա, ինչը չի կարող հանգեցնել ընդվզումների ու սթրեսների,
2.4. բնակչության խնայողությունների ուղղորդումը դեպի կապիտալի շուկաներ՝ ներդրումների նպատակով՝ ակտիվացնելով բաժնեմասային ֆինանսավորման մշակույթը, որի արդյունքում երկիրը արձանագրում է լրացուցիչ տնտեսական աճ:
3. Ինդոնեզիայի տնտեսական հրաշքի փորձից արժանահիշատակ է այն, որ երկրում արգելվեց չմշակված հանքաքարի արտահանումը, որը խթանեց ներդրումների ներհոսքը և շահադրդեց մեծ գումարներ ներդնելու վերամշակող գործարանների շինարարության մեջ:

Կիրառական առաջարկություններ և եզրակացություններ

Հետազոտելով 20-րդ դարում տնտեսական հրաշք իրականացրած ավելի քան երկու տասնյակ պետությունների առաջավոր փորձը՝ եկել ենք այն եզրահանգման, որ դրանցում կիրառված հիմնուղիներից ու գործիքակազմերից Հայաստանում գործարկելի ու արդյունքաստեղծ են հետևյալները.

1) հակակոռուպցիոն գործողությունների լայնածավալ ու արդյունավետ կազմակերպումը, ինչպես կատարվեց Սինգապուրում,
2) ճապոնական մենեջմենթի և որոշումների կայացման գործընթացի համաձայնեցման սկզբունքի ներդրումը,
3) բնակչության խնայողությունների ուղղորդումը դեպի կապիտալի շուկաներ, ինչպես կատարվեց Ճապոնիայում ու Չիլիում,
4) չմշակված հանքաքարի արտահանման արգելումը, ինչպես կատարվեց Ինդոնեզիայում,
5) բնական ռեսուրսները սահմանադրորեն ընդմիշտ ժողովրդին ընդհանուր սեփականության իրավունքով ամրագրելը, ինչպես կատարվեց Իսլանդիայում,
6) հատուկ ուշադրություն պետք է դարձնել հայրենասիրության, միասնականության, թիմային ոգու բարձրացմանը,
7) անհրաժեշտ է խրախուսել թվային տնտեսության զարգացումը և ուսումը:

Վերջում ցանկանում եմ հույս հայտնել, որ վերոնշյալ առաջարկությունների կիրարկումը կբարելավի Հայաստանի Հանրապետության տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշները և կամրապնդի երկրի դիրքը տարածաշրջանում:

1. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐ

Ռոբերտ Սարինյան
Բելլա Գաբրիելյան

«ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

XX դարում երկրորդ անգամ Գերմանիայի տնտեսության համար նորից էր ստեղծվել ճգնաժամային կացություն: Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում երկրի արտադրական հզորությունների 2/3-ը չէր աշխատում: Գյուղատնտեսությունը, շինարարությունը, տրանսպորտը հետ էին շպրտվել տասնյակ տարիներ, տիրում էր խոր ինֆլյացիա, ֆինանսական համակարգը կազմալուծվել էր:

Տնտեսական ռեֆորմը դարձել էր անհրաժեշտություն: Այն իրականացվում էր ամերիկյան ղեկավարության ներքո, որը հիմնական շեշտը դնում էր մոնետար գործոնի վրա՝ մտցնելու կայուն արժույթ: Սակայն 1948 թ. հունիսի 20-ին Լյուդվիգ Էրհարդը, որն այն ժամանակ Բիզոնիայի տնտեսական կառավարման տնօրենն էր, հանդես է գալիս ռադիոյով և հայտարարում, որ հունիսի 21-ից հանվում է վերահսկողությունը շատ ապրանքների գների նկատմամբ, ինչպես նաև ղեկավարության շատ հրամաններ ու կարգադրություններ՝ ազատականացնելով տնտեսությունը:

Լյուդվիգ Էրհարդ (1897-1977): 1922-ին ավարտել է Նյուրնբերգի բարձրագույն առևտրական դպրոցը և ընդունվել Ֆրանկֆուրտի համալսարան: Դոկտորական ատենախոսությունը պաշտպանելուց հետո Նյուրնբերգի համալսարանում աշխատում է որպես ասիստենտ, կարճ ժամանակ անց դառնում տնօրենի տեղակալ: 1943-ից եղել է ոչ մեծ հետազոտական կենտրոնի ղեկավար, որը ձևավորվել էր «արդյունաբերության կայսերական խմբի» հովանու ներքո և զբաղվում էր ապագա ռեֆորմի մշակմամբ: 1945-ից եղել է Բավարիայի էկոնոմիկայի նախարար, 1948-ից՝ Բիզոնիայի տնտեսական կառավարման տնօրեն, ԳՖՀ-ի

Ամերիկյան գոտու զինվորական մարզպետ գեներալ Լյուցիուս Քլեյի այն հարցին, թե ինչու է նա փոխել հրամաններն ու կարգադրությունները, Էրհարդը պատասխանում է, թե «ինքը ոչինչ չի փոխել, պարզապես դրանք չեղյալ է հայտարարել»: Քլեյը ասում է. «Իմ խորհրդականները համարում են, որ դա սխալ է»: Էրհարդը պատասխանում է. «Նրանք միայնակ չեն, իմ խորհրդականները ինձ նույնն են ասել»: Ի վերջո Քլեյը պաշտպանում է Էրհարդին[1]: Մի առիթով նա նկատել է. «Ես ինձ չեմ զգում ունևոր խավերի շահերի ներկայացուցիչ, առավել ևս արդյունաբերական կամ առևտրական շրջանների ներկայացուցիչ: Պատասխանատու լինել տնտեսական քաղաքականության համար՝ նշանակում է պատասխանատվություն կրել ամբողջ ժողովրդի

[1] Տե՛ս Зариций Б.Е., Людвиг Эрхард, Секреты «экономиического чуда» , М., 2002, с. 83.

կազմավորումից հետո՝ 1949-63-ին եղել է էկոնոմիկայի նախարար, 1963-66-ին՝ ֆեդերատիվ կանցլեր, 1966-ից Բունդեստագի դեպուտատ:

Աշխ.՝ «Բարեկեցություն բոլորի համար» (1956):

առաջ»: Այդ առաքելությամբ սկսվում է տնտեսական ռեֆորմների գործնական ուղին, որն իր արտացոլումն է գտել նրա «Բարեկեցություն բոլորի համար» (1956) աշխատության մեջ: «Սույն գիրքը,- գրում է Էրհարդը,- չի հավակնում գիտական համակարգված աշխատության: Այն իր տեսակի մեջ հաշվետվություն է՝ ներկայացված գերմանական ժողովրդին՝ անցած ուղու վերաբերյալ, ներկայից նայելու անցյալին: Բանը հանգում է ոչ թե կոնյունկտուրային կանխագուշակմանը, այլ ավելի շուտ մեր հասարակական-տնտեսական և քաղաքական կյանքի դրսևորումների տարբեր ձևերի գնահատումներին և հետևությանը՝ փորձելու ինձ համար պարզել մեր հասարակական ու ազգային կենցաղի հնարավոր գիծը՝ իր բոլոր հնարավոր տարբերակներով: Դրանք եղել են Գերմանիայի տնտեսության հիմնավոր նորոգության որոնումների, դժվարությունների, հակասությունների ու իրականացվող ռեֆորմների հասարակական չհասկացված տրամադրությունների հաղթահարման, տնտեսության նոր մոդելի հաստատման տարիներ»[1]:

«Ընթերցենք» Էրհարդի աշխատությունը, որում ըստ էության շարադրված են «գերմանական հրաշքի» սկզբունքները:

Էրհարդը, մինչև նախարարի պաշտոնը զբաղեցնելը, իր ելույթներից մեկում նկատել է, թե ճիշտ ու նպատակահարմար չի դիտում նորից կյանքի կոչելու եկամուտների բաշխման հին կարգը և նպատակ ունի բնակչության բոլոր շերտերի գնողունակության բարձրացման միջոցով վերջնականապես հաղթահարել հին պահպանողական սոցիալական կառուցվածքը:

Գերմանիայի նախորդ կարգում հասարակությունը բաժանված էր երկու շերտերի՝ սոցիալական շահերի իրենց կողմնորոշումներով. բարձր՝ ոչ մեծ շերտը, որը սպառման իմաստով ազատ էր որևէ սահմանափակումից, և բնակչության ստորին, բայց լայն շերտը, որը տնօրինում էր ոչ բավարար բարձր գնողունակության: Հենց այս հակասության մեջ պիտի տեսնել ռեֆորմներից սպասվող առաջընթացի ուղղությունը, տնտեսական կարգի վերակազմավորման համար այնպիսի նախադրյալի ապահովումը, որը թույլ կտա լուծելու հանգույցը: Այդ փիլիսոփայական մեկնակետը՝ Ադամ Սմիթից եկող պատգամախոսությունը, մրցակցությունն է. «Բարեկեցության հասնելու և ապահովման համար ամենաարդյունավետ միջոցը մրցակցությունն է: Այն միակն է, որ մարդկանց հնարավորություն է տալիս օգտվելու տնտեսական առաջընթացից, հատկապես սպառողների դերում: Այն վերացնում է աշխատանքի արտադրողականության բարձրացման անմիջական արդյունք չհանդիսացող բոլոր արտոնությունները:

Մրցակցության միջոցով կարելի է հասնել բառիս լավագույն իմաստով առաջընթացի և շահույթի հասարակայնացմանը, ընդ որում՝ այն թույլ չի տալիս մարելու աշխատանքային նվաճումների հասնելու յուրաքանչյուրի ձգտումը: Իմ

[1] Людвиг Эрхард, Благосостояние для всех, М., 2001, с. 176.

համոզմունքի անբաժան մասը, որ հենց այդ ճանապարհով է կարելի առավելապես բազմապատկել բարեկեցությունը, հանդիսանում է ցանկությունը՝ ապահովելու բոլոր աշխատողներին, աշխատանքի արտադրողականության աճին համապատասխան, աշխատավարձի մշտական բարձրացումը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր ստեղծել կարևոր նախադրյալներ»[1]:

Էրհարդը կատարում է տեսակետների վերանայումներ, տնտեսագիտության մեջ տեղ գտած որոշակի դրույթներին հակադրում իր մոտեցումները: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է տնտեսության ցիկլային զարգացման տեսությանը: Ընդունված է, որ տնտեսությունը զարգանում է ցիկլային սկզբունքով, որպես թե լրիվ ցիկլը տևում է յոթ տարի՝ վերելք, բարձր կոնյունկտուրա, անկում և ճգնաժամ, այս վերջին փուլում են ծնվում այն առողջացնող ուժերը, որոնք տնտեսությունը նորից հասցնում են վերելքի փուլին: Մինչդեռ տասը տարիների Գերմանիայի տնտեսական քաղաքականության իր փորձը հիմք է տալիս ստուգաբանելու այդ թեզի ճշմարտացիությունը, ընդհատելու այդ «անփոփոխ» ռիթմիկ շրջապտույտը և տնտեսության հաստատուն վերելքի միջոցով զուգորդելու լրիվ զբաղվածությունն ու կոնյունկտուրային բարձր արտադրողականությունը: Այս իմաստով ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն է ստանում ցիկլայնության գնահատության հարցը: Իրականում վերջինս հանգում է նրան, որ տնտեսական քաղաքականությունը և տնտեսագիտության տեսությունը գտնեն խնդրի պարբերական լուծումներ, և հաջողությունը կուղեկցի այնքան ժամանակ, քանի դեռ մրցակցության համար չեն առաջացել խոչընդոտներ, կամ էլ այն չի վերացվել «արհեստական կամ իրավական մանիպուլյացիաներով»:

Դրանում պիտի տեսնել պետության գլխավոր ձգտումը: Նա մերժում է հզոր տնտեսական միավորումները՝ տարբերելով այն երեք հիմնական ձևերը, որոնք կարող են առաջանալ.

- օրինական կազմակերպության հիմքի վրա, երբ մի շարք իրավաբանորեն ինքնուրույն ձեռնարկություններ պարտավորվում են փոխադարձ պայմանագրերի և համաձայնությունների հիման վրա, շուկայում առկա գործոնների կարգավորման միջոցով սահմանափակել կամ ընդհանրապես բացառել մրցակցությունը,
- կապիտալի հիմքի վրա, այնպես, որ իրավաբանորեն ինքնուրույն ձեռնարկությունները կարող են ինքնակամ, շահերի միաձուլման արդյունքում կամ տնօրինման իրավունքի հարաբերակցության հիման վրա գտնվել մի այլ ձեռնարկության ազդեցության ներքո այն իմաստով, որ նա չի կարող կամ չի համարձակվում շուկայում օգտագործել իր արտադրական հզորությունները լրիվ չափով,

[1] Նույն տեղում, էջ 4:

- առանձին շատ մեծ ձեռնարկությունների ստեղծման միջոցով, որոնք շուկայում ունեցած նշանակալից դերով հիմնարար կերպով ազդում են ապրանքների առաջարկի և գների կազմավորման վրա:

Սովորաբար տնտեսության ազատ մրցակցության պայմաններում գինը չի կարող թելադրվել շուկայի այս կամ այն սուբյեկտի կողմից: Սակայն հզոր տնտեսական սուբյեկտը հնարավորություն է տալիս փոխելու գինը և դրանով գիտակցական և արհեստական ձևով շուկայական գործառնությունների ընթացքն ուղղել տվյալ տնտեսական խմբի հունը: Տնտեսական մրցակցությունը սահմանափակող այս միտումները սկսվել են հատկապես XIX դ. վերջին տասնամյակներից: Իսկ շուկայական գործառնություններում մոնոպոլիստական միավորումների կողմից կաշկանդվող գները դադարում են մրցակցային լինելուց՝ ի վերջո վնաս հասցնելով սպառողներին, տեխնիկական ու տնտեսական առաջընթացին: Խնդրի դրվածքը ինքնին պարտադրում է հարցը՝ ինչպե՞ս վերացնել շուկայական գործառնություններին խանգարող գործոնները, իսկ օրենսդիրն իր որոնումների մեջ պետք է առաջնորդվի հետևյալ սկզբունքներով.

ա) պահպանել ազատ մրցակցությունը հնարավորինս մեծ ծավալներով,

բ) այն շուկաներում, որոնցում մրցակցությունը չի կարող իրականացվել ամբողջությամբ, խոչընդոտել հզոր տնտեսական խմբերի չարաշահումներին,

գ) այդ նպատակով հիմնել վերահսկողության մարմին, անհրաժեշտության դեպքում նաև շուկայական գործառնությունների ընթացքի վրա ազդելու համար[1]:

Ինչպես նշում է Էրհարդը, «Իմ բոլոր ճիգերը հանգում են նրան, որ մրցակցությունը՝ որպես դրդիչ ուժ, իսկ ազատ գները՝ որպես կարգավորիչ, երաշխավորվեն համապատասխան օրենքներով»: Սակայն տվյալ պարագայում խնդիրն առնչվում է սոցիալական շուկայական տնտեսության հետ կապակցելուն: Այս սկզբունքից ելնելով է նա ասում, թե «նույնիսկ շատ մեծ ցանկության դեպքում կարտելներում չեմ կարող գտնել ոչինչ դրական. ընդհակառակը, ժողովրդական տնտեսության շահերի տեսակետից ես դրանցում տեսնում եմ միայն բացասականը»: Նա չի ընդունում կարտելների պաշտպանության կողմնակիցների կողմից բերվող ո՛չ այն դրույթը, թե կարտելները միջոց չեն ճգնաժամերի հաղթահարման համար, ո՛չ էլ այն, թե իբր դրանք բարիք են և ծառայում են միջին դասակարգերի պաշտպանությանը, ո՛չ էլ այլ ինչ-ինչ փաստարկներ: «Իմ անդրդվելի համոզմամբ,-նշում է Էրհարդը,-ազատ ձեռնարկատիրական տնտեսությունը մնում է կանգուն և անկում է ապրում շուկայական տնտեսության համակարգի հետ միասին: Ցանկացած այլ կարգի ժամանակ ձեռնարկատերը ավելի ու ավելի է հակադրվում օտարի կամքին հասարակ կատարողի դերին, պլանային տնտեսության պաշտոնյային: Եթե նա այլևս չի ցանկանում կատարել ժողովրդատնտեսական խնդիրը՝ ազատ մրցակցության մեջ չափվել ուժերով, եթե օրինականացվի այն կարգը, որն այլևս չի պահանջում անհատական ուժեր,

[1] Նույն տեղում, էջ 95:

երևակայություն, հնարամտություն, ունակություններ և կազմակերպական տաղանդ, և եթե առավել ունակություն ունեցողը այլևս չի կարող և չի հավակնի առավելության պակաս ունակություն ունեցողի նկատմամբ, ապա այդ դեպքում ազատ ձեռնարկատիրական տնտեսությունը այլևս չի կարող գոյություն ունենալ: Կթագավորի համընդհանուր հավասարեցում՝ պատասխանատվությունը գցելով մյուսների վրա, ձգտումը իր վիճակի ամրապնդմանը և կայուն իրավիճակի, կբերի այնպիսի մտայնություն, որն այլևս անհամատեղելի է իսկական ձեռնարկատիրական ոգու հետ»[1]: Ինչպես ակներև է, Էրհարդը Գերմանիայի տնտեսական զարգացման ուղին իմաստավորում է ազատական տնտեսագիտական մտքի գաղափարներով՝ այն կապակցելով համաշխարհային փորձի իրադարձություններին. «Ես ազատությունը համարում եմ միասնական ու անբաժանելի ամբողջություն: Իմ հասկացողությամբ քաղաքական ու տնտեսական ազատությունը և մարդու ազատությունն ընդհանրապես կազմում են բարդ միասնություն: Անիմաստ է այստեղ մի մասը պոկել, որպեսզի չփլվի մյուսը՝ մնացած ամբողջը»:

Սոցիալական շուկայական տնտեսության սկզբունքը հանգեցնում է կտրական պահանջի, որպեսզի քաղաքացիներից և ոչ մեկին իրավունք և հնարավորություն չտրվի ճնշելու անհատական ազատությունը կամ էլ այն սահմանափակի հանուն կեղծ հասկացված ազատության: «Բարեկեցությունը բոլորի համար» և «բարեկեցությունը մրցակցության միջոցով» կարգախոսները կապված են անխզելիորեն: Մեկը նպատակն է, մյուսը՝ այդ նպատակին տանող ճանապարհը:

Սույն ուրվագծերն արդեն ցույց են տալիս սոցիալական շուկայական տնտեսության հիմնադրույթային տարբերությունը դասական լիբերալ տեսությունից: Հարկ է նկատել, որ Էրհարդի սոցիալական շուկայական տնտեսության խորհրդածությունների տեսական ուղղվածությունը մի զգալի մասով սկիզբ է առնում գերմանական սոցիալական դպրոցի հայեցությունից և հատկապես Ֆրանց Օպենհեյմերից: «Մեր ժամանակի սոցիալ-քաղաքական հիմնախնդիրների նրա վերլուծությունները,- գրում է Էրհարդը,- ինձ վրա թողել է խոր տպավորություն՝ անջնջելիորեն ազդելով իմ հայացքների վրա: Նա «կապիտալիզմը» համարում էր սկզբունք, որը տանում է անհավասարության. թերևս նա որևէ բանի նկատմամբ չի տածել այնպիսի մեծ նողկանք, ինչպես տխրալի հավասարության: Մյուս կողմից՝ նա մերժում էր կոմունիզմը, որն անխուսափելիորեն տանում է անազատության: Նա ենթադրում էր, որ պետք է գոյություն ունենա երրորդ ուղի, որը կնշանակի երջանիկ սինթեզ՝ ելք: Ես փորձել եմ, գրեթե ամբողջությամբ նրա պատգամներին համապատասխան, սոցիալական շուկայական տնտեսության ձևով ցույց տալ ոչ թե սենտիմենտալ, այլ իրատեսական ուղին»[2]:

---

[1] Նույն տեղում, էջ 96:

[2] Худокормов А., Невский С., Национальные экономические школы в Германии и теория социального рыночного хозяйства, Экономическая политика, 2017, т. 12, № 4, с. 228.

Էրհարդի դիտողությունները զուգորդվում են համապատասխան փաստական տվյալներով՝ ցույց տալով իր տնտեսական քաղաքականության ճշմարտացիությունը, կապված ազգային հարստության աճի արդյունքում բնակչության եկամուտների բարձրացման հետ, ասելիքն ամփոփելով աֆորիզմով. «Ավելի հեշտ է յուրաքանչյուրին տալ մի խոշոր կտոր իր չափերով մեծացող տորթից, քան օգուտ քաղել փոքր տորթի մասին վեճերից, քանի որ այդ ժամանակ ամեն մի օգուտ պետք է փոխհատուցվի որևէ այլ վնասով»:

«Ազգային արդյունքի արդարացի բաշխման» մասին բանավեճերն իրենց հիմքում ունեն աշխատավարձի բարձրացման պահանջը, որը ոչ այլ ինչ է, քան «ձգտում օգուտի համար մյուսների հաշվին»՝ մի կողմ թողնելով, որ այն իբրև նախադրյալ պետք է ունենա աշխատանքի արտադրողականության բարձրացումը: Հենց այս տեսանկյունից է ձև առնում խնդիրը, այլապես «վտանգի տակ կդրվեն մեր առաջընթացի հիմքերը»: Այստեղ է, որ «մրցակցությունը կարող է արգելել դանդաղ եսասիրությանը»: Մտայնության այս ոլորտներում է Էրհարդի սոցիալական շուկայական տնտեսության փիլիսոփայական մեկնակետը, որը թույլ կտա անապահով խավերին մասնակից դառնալու բարեկեցության աճին (կապված սոցիալական նպաստների աճի հետ):

Ի սկզբանե Էրհարդը հետևել է հենց այդ սկզբունքին՝ բացառելով այլ լուծումների բազմազանությունը: Օրինակ՝ ինչպես վկայում է պլանային տնտեսության երկրների փորձը, «ուռճացված բյուրոկրատական ապարատը ոչ միայն կուլ է տալիս ազգային եկամտի նշանակալից մասը, այլև ազգային եկամտի վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն կոչված չէ մարդկային բարեկեցության բարձրացմանը: Ոչ մի լուրջ մարդ չի պնդի, իսկ առավել ևս ապացուցի, որ վերևի հրամանով գործող պետական տնտեսության սոցիալ-տնտեսական ձեռքբերումները կարող են բարձր լինել, քան շուկայական տնտեսության ժամանակ»[1]: Աշխատավարձի մեծությունը կապակից է երկրի տնտեսական հնարավորությունների հետ և կարող է թույլատրելի լինել արդյունքի աճի սահմաններում, այլապես այն կհանգեցնի գների կառուցվածքի խախտումների՝ ծայր տալով ինֆլյացիոն միտումների, և կործանարար կլինի «խնայողությունների կուտակման ձգտման համար»: Վալտեր Օյկենն այն կարծիքին էր, որ ամենալավ սոցիալական քաղաքականությունը չի կարող տալ ամենադրական արդյունքները, եթե մարդու արտադրողականությունը բարձր չէ: Աշխատանքի բաժանման վրա է հիմնված տնտեսական կարգի կարգավորման գործող համակարգի ստեղծումը՝ բոլոր սոցիալական հարցերի կարգավորման կարևորագույն նախադրյալը: «Եթե արդարացի է այն պնդումը,- Էրհարդը վկայակոչում է Օյկենին,- որ բաշխել կարելի է միայն այն, ինչը նախապես ստեղծվել է, ապա բոլոր սոցիալ-ռեֆորմատորները պետք է ամենից առաջ հասնեն բարձր արդյունավետությամբ գործող տնտեսական կարգի: Միայն հետագայում կարող են ծագել այլ պահանջներ: Քանի որ եթե որևէ կարգի պայմաններում բոլոր մար-

[1] Людвиг Эрхард, նշվ. աշխ., էջ 114-115:

դիկ հավասարապես քաղցած են, ապա դա չի հանդիսանում արդարացի բաշխման կամ ապահովվածության կամ որևէ սոցիալական հարցի լուծում: Այդ հարցերը չեն լուծվում վատ կարգի ժամանակ և այն դեպքում, երբ դա համեմվում է էթիկական պճնազարդերով և բոլոր մարդկանց ընդհանուր շահերի կոչերով»[1]: Այսինքն՝ հասարակությունը պետք է գիտակցի, որ կենսամակարդակի բարձրացումը կապված է ոչ այնքան բաշխման խնդրի, որքան արտադրության, ավելի ստույգ՝ արտադրողականության հետ: Լուծումը պետք է փնտրել ոչ թե բաշխման, այլ ազգային արդյունքի բազմապատկման մեջ:

Այսպիսի հարցադրումն իր մեջ արդեն պարունակում է տնտեսության ապագա վիճակի որոշակի գծերը: Հասարակությունը գտնվում է ժողովրդական տնտեսության «տեխնիկականացման» նոր փուլի նախօրեին՝ կապված ավտոմատացման հետ, որպես երկրորդ արդյունաբերական հեղափոխության, որը ենթադրում է հսկայական պահանջ կապիտալի նկատմամբ: Էրհարդը տեսականորեն առանձնացնում է ֆինանսավորման երեք ուղիներ.

- ֆինանսավորումը կարող է իրականացվել ազատ և դիֆերենցված շուկայի կապիտալների կողմից, որում ամեն քաղաքացի հնարավորության չափով պետք է մասնակից դառնար: Սա համարվում է ավելի դասական և առավել առողջ մեթոդ, երբ կապիտալը ստեղծվում է բազմաթիվ անհատական խնայողություններից,
- ֆինանսավորում գների միջոցով, սպառողների միջոցների հաշվին, որն իր մեջ թաքցնում է սոցիալական-պայթունավտանգ հնարավորություն, որն էլ այս ուղին ինքնին դարձնում է ոչ նպատակահարմար,
- ֆինանսավորում պետության միջոցների հաշվին, սակայն առանց արտարժույթի վտանգման և գների մակարդակի խանգարման պետությունը չի կարող տրամադրել ավելին, քան «հարկերի միջոցով կողմնակի ճանապարհով իր քաղաքացիներից վերցրածը»: Այս ուղին ենթադրում է ոչ միայն անփոխհատույց բռնագանձում հսկա կապիտալիստ պետության օգտին, այլև յուրաքանչյուր առանձին քաղաքացու ստրկական կախվածությունը պետությունից[2]:

Էրհարդի նշած մեթոդներում տրված են և՛ ֆինանսավորման աղբյուրների, և՛ դրանց հետևանքների պատասխանները: Ավելի արգասաբեր կլինի այն, եթե ստեղծվեն անհրաժեշտ նախադրյալներ կապիտալաստեղծման համար: Իսկ դրա պարտադրող ուժը ազգի վստահությունն է քաղաքական, սոցիալական և տնտեսական կարգի նկատմամբ: Շարքային մարդու համար դա գինն է, որը նա վճարում է կենսական ապրանքների նկատմամբ: Դա հենց այն կետն է, որում հանդիպադրվում են աշխատավարձի հարցում այնպիսի տնտեսական քաղաքականության ճիգերը, որը կոչված կլինի ապահովել այդ կացությունը: Այսպիսի պարագայում աշխատավարձի բարձրացման «գայթակղիչ» թվացող

[1] Նույն տեղում, էջ 117:
[2] Նույն տեղում, 118-119:

պահանջների բավարարումը կարող է խարխլել գների կառուցվածքը և ունենալ հակառակ սոցիալական էֆեկտը:

Հետպատերազմյան առաջին տարիներին կազմալուծված տնտեսության ու ֆինանսական համակարգի պայմաններում «Գերմանիան զբաղված էր հաշվարկներով, համաձայն որոնց՝ յուրաքանչյուր շնչին բաժին էր ընկնում հինգ տարին մեկ՝ մեկ ափսե, տասներկու տարին մեկ՝ մեկ զույգ կոշիկ, հիսուն տարին մեկ՝ մեկ կոստյում և այլն», և այն միտքը, թե հումքի հաշվարկների և վիճակագրական տվյալների միջոցով կարել է որոշել ազգի ճակատագիրը ապագայի հեռանկարով, վկայում է միայն տնտեսական պլանավորման կողմնակիցների միամտության մասին: Աճող ինֆլյացիան գների սառեցման միջոցով վերացնելու փորձերը ճիշտ չէին ինչպես գործնական, այնպես էլ խնդրի տեսական գիտակցման առումներով[1]:

Դրամական ռեֆորմի իրականացումը դարձել էր անհրաժեշտություն, որպես կարևոր նախադրյալ Գերմանիայի տնտեսության ընդհանուր վերափոխումների համար: 1948 թ. հունիսից սկսում է գործել նոր արժույթ՝ գերմանական մարկը: Ռեֆորմի ընթացքում ամեն մի քաղաքացի կարող էր փոխանակել 60 մարկ 1:1 հարաբերությամբ (սկզբում՝ 40 և ապա երկու ամիս անց՝ 20): Կենսաթոշակները, աշխատավարձը, բնակարանային վարձը վերահաշվարկվում էին 1:1-ի հարաբերակցությամբ: Կանխիկ փողի, խնայողությունների կեսը, ինչպես նաև ձեռնարկությունների փոխառությունները փոխանակվում էին 1:10-ի, մնացածը սառեցվում էր՝ավելի ուշ փոխանակելով 1:20-ի հարաբերակցությամբ: Ձեռնարկությունները համապատասխան միջոցներ ստանում էին առաջին աշխատավարձը վճարելու համար, հետագայում՝ իրենց գործունեությունից ձևավորված հասույթով: Ընդունվում է «Օրենք տնտեսական կառուցվածքի և տարադրամի ռեֆորմից հետո գների քաղաքականության մասին», որով «աղբարկղն են նետվում տնտեսական կյանքը և գները կարգավորող բազմաթիվ կարգադրություններ»: Դա, Էրհարդի կարծիքով, «ժողովրդի մոտ բարոյական սկզբունքների վերածնունդ էր և տնտեսության առողջացման սկիզբը»: Էրհարդը չի կիսում տեղ գտած այն կարծիքը, թե տնտեսական և սոցիալական հաջողությունները հետևանք են բացառապես դրամական ռեֆորմի և այլ երջանիկ պատահականությունների, այլ ոչ թե իր կողմից տնտեսական քաղաքականության շրջադարձային փոփոխության: Ինչ խոսք, դրամական ռեֆորմի ժամանակ կարևոր էր առկա բոլոր հնարավորությունների օգտագործումը, սակայն յուրաքանչյուր ոչ կանխակալ և առողջ բանականություն ունեցող մարդուն պարզ է, որ վճռական երջանիկ շրջադարձը եղել է երկու բաղադրիչների համակցության արդյունք՝ դրամական ռեֆորմի և շուկայական տնտեսական քաղաքականության:

Էրհարդը վկան էր Առաջին համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայում ծայր առած հիպերինֆլյացիայի, երբ գները փոխվում էին այնպիսի

[1] Նույն տեղում, էջ 9:

արագությամբ, որ ռեստորանում ճաշելու ժամանակ մատուցողը մի քանի անգամ մոտենում էր և փոխում ճաշացուցակի գները: Նրա մտահղացած դրամական ռեֆորմը լոկ սկիզբն էր, որը կարող էր հաջողություն ունենալ, եթե նոր փողերը «խորհրդանշեին իրական գնողունակություն» և կարճ ժամանակ անց «չվերածվեին բաշխման կտորները լրացնող թղթի կտորների»: Ռեֆորմը պետք է «ամրակցվի համապատասխան քանակի ապրանքային մասսայով»: Էրհարդը վկայակոչում է մի հատված ֆրանսիացիներ Ժակ Ռյուեֆի և Անդրե Պիեռի «Տնտեսություն առանց հրաշքի» գրքից, որում պատկերվում են Գերմանիայի տնտեսության նորոգության արդյունքները ռեֆորմից ոչ շատ ժամանակ անց. «Միանգամայն անսպասելիորեն վերացավ սև շուկան: Ցուցափեղկերը լեփ-լեցուն էին ապրանքներով, գործարանները ծխում էին, իսկ փողոցներում անհամար մեքենաներ էին: Փլատակների մեռյալ լռության փոխարեն ամենուր հնչում էր շինարարության աղմուկը: Արդեն վերականգնման չափերը զարմանք էին առաջացնում, իսկ ավելի շատ՝ նրա հանկարծահասությունը: Այդ վերականգնումը տնտեսական կյանքի բոլոր ճյուղերում սկսվել է հենց դրամական ռեֆորմի օրը: Միայն ականատեսները կարող են պատմել այդ ակնթարթային ազդեցության մասին... Դեռևս նախօրեին գերմանացիները աննպատակ վազվզում էին քաղաքում՝ լրացուցիչ ինչ-որ չնչին սննդամթերք փնտրելու համար: Իսկ արդեն հաջորդ օրը նրանց միտքը սևեռված էր այդ սննդամթերքի արտադրության վրա: Նախօրյակին գերմանացիների դեմքն արտահայտում էր հուսահատություն, հաջորդ օրը ամբողջ ազգը հույսով էր նայում ապագային»[1]:

Էրհարդը այսպիսի մի նկատում ունի. «... Տնտեսական երևույթները չեն ենթարկվում մեխանիկայի օրենքներին: Տնտեսությունը չի ապրում սեփական ինչ-որ կյանքով, անհոգի ավտոմատիզմի իմաստով, այն ստեղծում և ձևավորում են մարդիկ: Եթե դա այդպես է, իսկ այլ կերպ լինել չի կարող, ապա ժողովրդական տնտեսության կառուցվածքը և պատկերը չեն կարող չփոփոխվել մեր գործողությունների ազդեցությամբ»[2]: Ուստի ոչ պակաս նշանակություն է ստանում հոգեբանական ազդեցության խնդիրը: Ավտոմատ կարգավորման «դասական» ազատականների փաստարկները կորցրել են իրենց նշանակությունը: Դրանք միայն թվացող են: Իրականում ժամանակակից հոգեբանությունը լայն հնարավորություն է տալիս տնտեսական երևույթների ճանաչողական խորացումների համար: Պատմական դպրոցի հոգեբանական-էթիկական և տնտեսական ուժերի միասնության առաջադրույթի և XX դարի փորձարարական հոգեբանության ոգով նա նկատում է, թե «ժամանակակից հոգեբանությունն ուղղակի պահանջում է, որ տնտեսական գործընթացները ընկալվեն ոչ միայն որպես մեխանիկական, տեխնիկական գործընթացներ»:

Մարդն է ժողովրդական տնտեսության շարժիչ ուժը, հետևապես վճռորոշ նշանակություն է ստանում, թե ինչպես ենք մենք գործում՝ լավատեսորե՞ն ենք տրամադրված, թե՞ հոռետեսորեն, ինչպիսին է պահվածքը գների բարձրացման

[1] Նույն տեղում, էջ 10-11:
[2] Նույն տեղում, էջ 126:

կամ իջեցման ժամանակ, ուզում ենք կուտակե՞լ, թե՞ ծախսել: Դրանք իրենց արտահայտությունն են գտնում տնտեսական ցուցանիշների վրա, իսկ վերջիններս, իրենց հերթին, մարդկանց գործողությունների կերպի վրա: Դա Էրհարդին ներկայանում է որպես տնտեսական քաղաքականության մեթոդ, որն առաջիկա տասնամյակների համար դառնալու է գիտության առաջատար ուղղություններից մեկը: Տնտեսության սոցիալ-հոգեբանական կապերի բացահայտումը դարձել է անհրաժեշտություն՝ շուկայի մասնակիցներին բացատրելու, թե ինչպիսի խելամիտ տնտեսական որոշումների կայացումն է համապատասխանում նրանց շահերին: Հոգեբանական ազդակների միջոցով նա միտում ուներ փոխելու մարդկանց այս կամ այն գործողությունների բնույթն ու դրանով իսկ «վերախմբավորել տնտեսական գործոնները» ժողովրդատնտեսական առավել նպատակահարմարության տեսանկյունից, ինչը բնավ չի հակասում կոնյունկտուրայի քաղաքականության ազատամտական մոդելին: Առավել ևս, որ տնտեսության մեջ կատարվող փոփոխությունները քննելի են ոչ միայն անհատների, այլև, առավել մեծ չափով, հասարակական խմբերի համար[1]: Նա մի առիթով նկատել է, թե տնտեսությունը 50 տոկոսով հոգեբանություն է: Նրա կարծիքով, «Տնտեսական համակարգը պետք է լինի ապագաղափարայնացված իր մեթոդներում, բայց ոչ նպատակներում»: Հետևապես գաղափարական աշխատանքը պետք է ուղղված լինի ռեֆորմների վերջնական նպատակները մասսաներին տեղ հասցնելուն[2]: Այս հարթության մեջ նրա հաճախակի ելույթներն ու շրջագայությունները Գերմանիայում ստացել են «հոգևոր մերսում» անվանումը: Նա ազգին կոչ էր անում արագ տնտեսական աճի հետ չտրվել ցանկությունների արագ աճի գայթակղությանը, այլապես «գների՝ աշխատավարձի վրա և աշխատավարձի՝ գների վրա փոխներգործության» անտեսումը կարող է հանգեցնել կործանարար ինֆլյացիոն միտումների: Ի դեպ, աշխատության ամբողջ շարադրանքի ընթացքում Էրհարդը մեկ անգամ չէ, որ շեշտում է ինֆլյացիայի վտանգը, ինչը հակադիր էր դեֆիցիտային ֆինանսավորման միջոցով տնտեսությունը կարգավորելու քեյնսյան կոնցեպցիային:

Ինչպես նկատում է Բ. Զարիցկին, Էրհարդը «զգուշավորությամբ էր վերաբերվում քեյնսականության տեսությանը: Ընդդիմադիրների կողմից վարկային լծակների օգտագործման միջոցով «մեկ գիշերվա ընթացքում» լրիվ զբաղվածության և «սոցիալական կորուստների» հարցերը լուծելու քեյնսյան «խեղաթյուրված» շահարկումները ավելին չեն, քան «արկածախնդրություն»: Սխալ է տարածում գտած այն կարծիքը, թե ինֆլյացիան կարող է նպաստել տեխնիկական առաջընթացի արագացմանը: Այդ թվացող շահումի դիմաց վճարը լինելու է շատ թանկ՝ ազատ հասարակության քայքայումը: Հասարակական գործընթացների «մաթեմատիկական կանխատեսելիության թյուր հավատը ոչ քիչ է

[1] Նույն տեղում, էջ 126-128:

[2] Людвиг Эрхард, Полвека размлышлений.Речи и статьи, М., 1996, с. 345 (մեջբերումը կատարված է Владимир Гутник, Политика хозяйственного порядка в Германии գրքից, М., 2002, с. 66.).

նպաստել կոնյունկտուրային քաղաքականության ոչ ճիշտ կողմնորոշմանը»[1]: Ճիշտ տնտեսական քաղաքականությունը ստուգվում է «սպառում, խնայողությունների կուտակում և կապիտալների ներդրում» եռանդամ կախվածություններում, որը «հազվադեպ է ճիշտ և ամբողջությամբ ընկալվում»: Եվ Էրհարդը սոցիալական շուկայական տնտեսության առանձնահատկության իր հակումը հակադրում է «մանչեստերյան դպրոցի» ազատամտական հայեցությանը, թե «գիշերային պահակի» պետությունը մնացել է անցյալում. «Այստեղ, նույնիսկ սկզբունքորեն, ես հավատարիմ եմ մնում այլ կարծիքի. ժամանակակից և իր պատասխանատվությունը գիտակցող պետությունը պարզապես չի կարող իրեն թույլ տալ նորից վերադառնալ «գիշերային պահակի» դերին: Այդ ոչ ճիշտ հասկացված ազատությունը հենց այն էր, ինչը գերեզման է իջեցրել ազատությունն ու ազատ կարգը» [2]:

Էրհարդը պետության դերը համեմատում է ֆուտբոլի դաշտում դատավորի դերի հետ, որը կոչված է ոչ թե խաղին մասնակցելու, այլ պահպանելու խաղի կանոնները: Ճիշտ և լավ խաղի էական նախադրյալն այն է, որ խաղացողները հետևեն սահմանված կանոններին: Հարձակվողները պետք է հարձակվեն, այլ ոչ թե կանգնեն դարպասի առաջ այն պաշտպանելու համար, որը կլինի խաղի կանոնների խախտում: Ֆուտբոլային խաղի հանդիսատեսները խաղացողների նկատմամբ կարող են պահանջներ ներկայացնել, եթե, օրինակ, նրանք համաձայնության գան մյուս թիմի հետ, թե որքան գոլ պետք է խփեն: Արդեն հանդիսատեսներն ականատես չեն լինի ազնիվ մրցության, որի համար նրանք վճարել են: Ազնիվ մրցակցության սկզբունքն էլ նա համարում է շուկայական տնտեսության հիմքը[3]:

Էրհարդի սոցիալական շուկայական տնտեսության կարգի էական բաղադրիչն անձնական ազատության վերաբերյալ հայեցությունն է: Այս ելակետով է նա տեսնում ազատ տնտեսական կյանքի հարատևության երաշխիքը, եթե «ազգի սոցիալական կյանքում ապահովված է առավելագույն ազատությունը, և առավելագույն չափով դրսևորվում է մասնավոր նախաձեռնությունն ու յուրաքանչյուրի հոգսն իր նկատմամբ»: Սոցիալական քաղաքականությունը պետք է ուղղված լինի մարդու ինքնադրսևորման պայմանների ստեղծմանը, իսկ եթե այն նպատակ ունի «ծնված պահից նրան զերծ պահել կյանքի, ճակատագրի անակնկալներից», ապա հազիվ թե կարելի է նրանից պահանջել կյանքը շարժման մեջ դնող այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ կենսական ուժը, նախաձեռնությունը, ձգտումը արտադրողականության մեջ հաջողության և ազգի ապագայի համար կարևոր նշանակության հատկանիշների դրսևորումների: Դրանում արտահայտվում է նաև կապը տնտեսական և սոցիալական քաղաքականության միջև: Այն, որ սոցիալական քաղաքականությունն ավտոնոմ է և չեզոք է ժողովրդական տնտեսության հանդեպ, անցյալի մտայնություն է, որն

---

[1] Зарицкий Б. Е., նշվ. աշխ.,էջ 104-105:
[2] Людвиг Эрхард, նշվ. աշխ., էջ 128:
[3] Նույն տեղում, էջ 77:

ավելի ու ավելի իր տեղը պիտի զիջի այնպիսի սոցիալական քաղաքականությանը, որը սերտ կապի մեջ է տնտեսական քաղաքականության հետ: Դա չի հակասում շուկայական տնտեսության հիմքերին: Հենց դրանում էլ Էրհարդը տեսնում է սոցիալական շուկայական տնտեսության բարոյական արժեքը: Հարցի տեսական սկզբունքների վրա էլ կերպ է առնում այն մտայնությունը, որպես թե ընդհանրապես մարդկանց բարեկեցությունը խարսխված է կոլեկտիվ պատասխանատվության ձևի վրա: Դա այսպես կոչված «բարեկեցության պետության» մտակառույցն է, որը բոլորի համար կապահովի ոչ այնքան ճոխ, սակայն ապահով կյանք: Բայց գործում է առանձին մարդու՝ իր, ընտանիքի, ծերության ապահովման բնական ձգտումը: Իսկ ո՞ւր կտանի հասարակությանը կոլեկտիվ ապահովվածության սկզբունքը: Այդպիսի սոցիալական կառուցվածքը Էրհարդը դիտում է անհեռանկար առաջընթացի առումով, դեպի «ես հոգում եմ ուրիշների համար, և մյուսները հոգում են ինձ համար» սկզբունքով մի հասարակական կարգի ստեղծում, որի ժամանակ յուրաքանչյուրը «ձեռքը պիտի մտցնի հարևանի գրպանը»: Այդպիսի պետությունը պարզապես պատրանք է, որը կվերածվի դժբախտության, մարդու մոտ կկորչի նրանում դրված «առաքինության», «մերձավորի նկատմամբ սիրո» հատկությունները: «Բարեկեցության պետության» վերաբերյալ թյուր պատկերացումներում խոսքն իրականում «հարկերի իջեցման և ֆինանսական մարմինների նկատմամբ պահանջների բարձրացման» մասին է: Արդյունքը պետության միջամտության ուժեղացումն է:

Էրհարդը բազմաթիվ էջեր է նվիրել սոցիալական քաղաքականության, տնտեսական ու անձնական ազատության, «կոլեկտիվ ապահովության» սկզբունքների և այլ հարցերին՝ ցույց տալով իր դոկտրինայի ընդհանուր և բաժանարար գծերը նեոլիբերալիզմի և «բարեկեցության պետության» հայեցությունների հետ: «Սոցիալական ապահովությունը,- գրում է Էրհարդը,- իհարկե բարիք է, և այն վերին աստիճանի ցանկալի է, բայց այն պետք է հիմնված լինի առաջին հերթին յուրաքանչյուրի սեփական էներգիայի, սեփական նվաճումների, յուրաքանչյուրի առանձին ձգտումների վրա: Սոցիալական ապահովությունը չի նշանակում սոցիալական ապահովություն բոլորի համար, այն չի նշանակում մարդու անհատական պատասխանատվության փոխադրումը կոլեկտիվի վրա: Սկզբում պետք է լինի սեփական անձնական պատասխանատվությունը և միայն այդ դեպքում, երբ պարզվի, որ այդ պատասխանատվությունը անբավարար է կամ անարդյունք, ուժի մեջ է մտնում մարդու նկատմամբ պետության կամ հասարակության պարտավորությունը»: Այս նախադրյալների վրա է նա կառուցում ազգի հետագա առաջընթացի ուղին: Գերմանական ազգի սոցիալական շարժիչը նա արգասաբեր է համարում այն դեպքում, «եթե մենք ձգտենք դրսևորել ավելի շատ սոցիալական գիտակցություն և կենսակերպ, քան չափազանց շատ սոցիալական կոլեկտիվ կամք»[1]: Անհատի պահվածքի վերաբերյալ

[1] Գերմանացի տնտեսագետ Հորստ Զիբերտի «Կոբրայի էֆեկտը» աշխատությունն այն բացթողումների և ոչ ճիշտ քաղաքականության մասին է, որ խոչընդոտում են երկրի ավելի արդյունավետ զարգացմանը: Նրանում արծարծվող հարցերը շատ են: Տվյալ դեպքում խոսքը վերաբե-

հայացքների հավատամքը արտահայտված է հետևյալ տողերում. «Ես ուզում եմ օգտագործել իմ ուժերը և ցույց տալ, թե ինչի եմ ես ընդունակ, ես ուզում եմ այս կյանքում ինքս գնալ ռիսկերի, ես ուզում եմ ինքս պատասխանատու լինել իմ ճակատագրի համար: Պետություն, հոգ տար այն բանի համար, որ ես ունենամ այդպիսի հնարավորություն»*:

* *
*

Էրհարդի աշխատությունն ուշագրավ դիտողություններ է պարունակում Եվրոպայում սկիզբ առած ինտեգրացիոն գործընթացների վերաբերյալ, թե ինչ սկզբունքներ է ենթադրում այդ կառույցը: Եվրոպական երկրներն ունեն իրենց առանձնահատկությունները, և որքան էլ ինտեգրացիան անհրաժեշտություն է, որպես կարևոր պայման հենց «ապագա Եվրոպայի համար», այն պետք է կառուցված լինի բազմաթիվ գործոնների հաշվառման հենքի վրա. «Մենք Եվրոպայի ինտեգրացման կարիք ունենք, քան երբևէ, այն պարզապես դարձել է անհրաժեշտություն: Բայց Եվրոպայի լավագույն ինտեգրացիան, որ ես ինձ կարող եմ պատկերացնել, պիտի կառուցված լինի ոչ թե տարբեր տեսակի կազմակերպությունների և գերատեսչությունների ստեղծման և ոչ էլ բյուրոկրատական աչալրջության վրա. նրա նախադրյալն առաջին հերթին ազատ միջազգային տնտեսական կարգի վերականգնումն է, որն առավել լավ ու լրիվ իր արտահայտությունը կգտնի տարադրամի ազատ փոխանակության մեջ: Տարադրամի ազատ փոխանակումը ինքնին ենթադրում է ապրանքների, ծառայությունների և կապիտալի ազատ շրջանառություն»[1]: Աշխարհը և, մասնավորապես, կյանքը կանգնած են բազմաթիվ հնարավորությունների առջև, էական է, որ օգտագործվեն այդ հնարավորությունները: Այս իմաստով ինտեգրացիան

րում է սոցիալական ապահովության խնդիրներին: 1970-80-ական թվականներին Գերմանիայում զարգանում էին համընդհանուր բարեկեցության պետության ուժեղ սկզբունքները: Սոցիալական ապահովության բարձր վճարումները, առաջ էին բերել ֆինանսավորման դժվարություններ՝ բացասական ներգործություն ունենալով ինչպես բուն սոցիալական ապահովագրության համակարգի, այնպես էլ զբաղվածության և գործազրկության վրա: Սոցիալական ապահովության կեղծ խթանների արդյունքում աշխատանքի շուկան դարձել էր «ոչ գրավիչ», «կրճատվել էին աշխատանքի շուկայում լրացուցիչ աշխատավարձ ստանալու խթանները» (տե՛ս Хорст Зимберт, Эффект кобры, М., 2005, с. 122-146): Խոսելով նույն երևույթի մասին՝ Կարեն Իլզե Հորնը վկայակոչում է Լյուդվիգ Էրհարդին, որը դեռևս 1960-ական թվականներին կասկած էր հայտնում, որ «սոցիալական արդյունքի մեջ ունենալով պետական ծախսերի 40 տոկոսանոց բաժինը, մենք հանդիսանում ենք ոչ կոմունիստական աշխարհում առաջատարի դիրքեր զբաղեցնող երկիր... իսկ հետո այդ 40 տոկոսը կդառնա 45 կամ 50 տոկոս: Դուք առաջվա նման հավատում եք այն բանին, որ այդ դեպքում էլ կապահովվի լիբերալ կարգը, որ մեր ժողովուրդն այդ ժամանակ էլ դեռևս կազմված կլինի մարդկանցից, որոնք, տնօրինելով հոգևոր և նյութական անկախության, կարող են մնալ դեմոկրատական իմաստով իսկական քաղաքացիներ» (տե՛ս Карен Ильзе Хорн, Социальное рыночное хозяйство. все, что вам нужно знать о неолиберализме , М., 2017, с. 145):

* Մեջբերումը կատարված է Карен Ильзе Хорн, Социальное рыночное хозяйство գրքից, М., 2017, с. 189:

[1] Людвиг Эрхард, նշվ. աշխ., էջ 152:

ինքնանպատակ ինչ-որ գործընթաց չէ, և կարևոր է, թե ինչպիսին պիտի լինի նրա ձևավորման ընթացքը, ինչպես պիտի ընթանա երկրների միջև ինտեգրացիոն կապերի որոնումը՝ «առանձին մասնակի միավորների գումարման ճանապարհո՞վ (քարածխի և պողպատի եվրոպական միավորման օրինակով), թե՞ այնպիսի հիմքերի ստեղծման, որը կտանի իսկական և լրիվ ինտեգրացիայի: Առաջին հերթին դա վերաբերում էլ վալյուտային քաղաքականության համաձայնեցվածության սահմանմանը, որը որպես թե իր մեջ խտացնում է տնտեսությունների ամբողջ շարժը որպես մի միասնություն»: Ժողովրդական տնտեսությունն Էրհարդին ներկայանում է որպես ավելին, քան «առանձին արկղերից բաղկացած կառույց»՝ առանձին ոլորտների կարգավորման ձևերով: Այն մարմնավորում է ինչ-որ ամբողջություն և անբաժանելի ինչ-որ ֆունկցիա՝ իր բազմապիսի ներքին կապերով ու հարաբերություններով: Այստեղ գործը վերաբերում է տարասեռ, մարդկանց միջև և նյութական կարգի հարաբերություններին, որոնց միջև կապը չի կարող խարխլվել, որպեսզի հետո կամայական ձևով նորից միավորեն: Սա կարևոր նկատառում է, որը փարատում է ինտեգրացիայի վերաբերյալ պարզունակ պատկերացումը, երբ երևույթներն ընկալվում են նեղ շփումներով: Դրանով պիտի բացատրել այն մտայնությունը, թե ինտեգրման արդյունքում ազատ մրցակցությունը կարող է վտանգավոր լինել խոշոր մասշտաբներով շուկայի ստեղծման պարագայում՝ կապված մրցակցության անհավասար պայմանների առկայության հետ, հետևապես նախքան ազատ մրցակցությանն ընթացք տալը անհրաժեշտ է վերացնել այդ անհավասարությունը կամ տարբերությունները բերել մի ընդհանուր մակարդակի:

Տնտեսական-սոցիալական կյանքի երևույթները պայմանավորող պատճառները բազմազան են ու բազմաթիվ, գործում են միասին, հաճախ հակառակ ուղղություններով և անընդհատ փոփոխվում են: Դրանք էլ ինքնին բացառում են մրցակցության համար հավասար պայմանների ստեղծման պատրանքը: Ուստի ենթադրել, թե «մրցակցության վրա հիմնված աշխարհում ժողովրդատնտեսական կյանքի բոլոր մասնակիցների համար կարելի է ստեղծել առանձին գործոնների բնագավառում արտադրական ծախքերը որոշող միատեսակ ելակետային պայմաններ», ավելին չէ, քան պատրանք. «Ողորմած Աստված այդ հարցում իր գործն արել է ոչ այնքան վատ՝ մի ժողովրդի տալով ավելի շատ, մյուսներին օժտելով այլ առավելություններով»: Եվ նա հարցը տեղափոխում է կիրառական ոլորտը՝ նկատելով. «Ինչպես էլ որ զուգորդվեն ծախքերի առանձին հոդվածները, գնի մեջ նրանք կգտնեն իրենց ինտեգրացիան: Միայն գինն է (որում բնականորեն իր արտահայտությունն է գտնում նաև որակը) աշխատանքի և նվաճումների գնահատման տնտեսական մասշտաբը: Ուստի չի կարելի ինտեգրացիան հասկանալ լոկ որպես մեխանիկական կամ քանակական ինչ-որ բան, այլապես մենք շատ շուտով կվերադառնանք անցյալի մեղքերին և թերություններին: Բոլոր նրանց համար, ովքեր առողջ են դատում, ինտեգրացիան նշանակում է ազատ և լայն ընդգրկումներով մրցակցություն, նշանակում

է տնտեսական համագործակցություն ֆունկցիոնալ ավելի բարձր մակարդակում»[1]:

Էրհարդը չէր ընդունում եվրոպական երկրների ինտեգրացիայի հարցում «վաղաժամ իդեալների արմատավորման քաղաքականությունը»: Մինչդեռ «ներդաշնակեցման» վտանգավոր գաղափարներով փորձեր են արվում տնտեսական հարաբերությունները հավասարեցնել, արտադրության բոլոր ծախսերի համար գծել նույն մակարդակը՝ սկսած «Սիցիլիայից մինչև Ռուրի ավազանը»: Դա, նրա կարծիքով, պարզապես վկայում է տնտեսական օրենքների չիմացության մասին: Եթե նույնիսկ ինչ-որ արհեստական մանիպուլյացիաների միջոցով ինչ-որ մի կետից սահմանվեն միևնույն ելակետային պայմանները, ապա անմիջապես կհաջորդեն փոփոխությունները, քանի որ երբեք հնարավոր չէ ընդհանուր հայտարարի բերել մարդկանց և ժողովուրդների կողմնորոշումներն ու պահվածքը՝ կապված «խնայողությունների կուտակման և սպառման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, աշխատասիրության հետ, նույնիսկ ընդհանուր շուկայի պայմաններում»: Դա նշանակում է, որ ներդաշնակեցման վերաբերյալ դատողությունները չեն ուղեկցվում տեսական հիմնավորումներով: Դրանք ոչ միայն պատրանք են, այլ անմտություն՝ «հավատալ, թե «բնական տրվածքները ենթակա են ուղղումների»: Նման մոտեցումներով աշխատանքի միջազգային բաժանման առավելությունները կմնան չիրացված, իսկ պետությունների միջև փոխանակությունը՝ ավելորդ: Սակայն այդ կարգի ըմբռնումները ենթադրում են նաև մի այլ նկատառում, այսպես կոչված «սոցիալական ռոմանտիկա», երկրների սոցիալական ներդաշնակության իրագործում: Իսկ տրամաբանությունը ենթադրում է, որ «սոցիալական ներդաշնակության խնդիրը կանգնած է ոչ թե ինտեգրացիայի սկզբում, այլ վերջում, այն իրագործելի է ոչ թե հորինված մտակառույցների, այլ առաջադիմող ինտեգրացիային զուգահեռ ապրելակերպի և կյանքի նկատմամբ հայացքների մերձեցման միջոցով: Ու թեև ես դրականորեն եմ վերաբերվում ընդհանուր շուկային, այնուհանդերձ հավատարիմ եմ այն կարծիքին,որ նույնիսկ այդպիսի ինտեգրացված Եվրոպայում կյանքի ու արտադրության պայմանները երբեք չեն լինելու միասնական ու միանման: Մի հայտնի իմաստով, ընդհակառակը, ընդհանուր շուկայի կոչումը հիմնված է այդ երկրներից յուրաքանչյուրին հատուկ տարբեր աշխատունակությունների և տարբեր բնական ու կառուցվածքային առանձնահատկությունների հնարավորությունների օգտագործման անհրաժեշտության վրա»[2]:

* *
*

«Գերմանական հրաշքի» տասնամյակներին հատկացվում է 1948-67 թթ. ժամանակահատվածը: Էրհարդին փոխարինում է Կարլ Շիլլերը, որը, ունենալով «Մրցակցություն՝ որքան հնարավոր է, պլանավորում՝ որքան անհրաժեշտ է»

[1] Նույն տեղում, էջ 153:
[2] Նույն տեղում, էջ 154:

նշանաբանը, փորձում էր կապակցել չկապակցվողը՝ ազատությունը և նեոքեյնսականությունը, մրցակցությունը և պլանավորումը, նեոլիբերալիզմն ու նեոքեյնսականությունը[1]:

Թերևս, այդ փոփոխությամբ պիտի բացատրել 1971-ին Լյուդվիգ ֆոն Միզեսի 90-ամյակին նվիրված Էրհարդի «Մտորումներ շուկայական կարգի մասին» հոդվածը, որում անդրադարձ է կատարվում սոցիալական շուկայական տնտեսության ակունքների և բովանդակության սահմանների հարցերին: Շուկայական տնտեսությունը՝ որպես լիբերալ սկզբունքի կարգ, իր ձևավորումը սկսել է միջին դարերից, երբ սկսվում է անցումը կյանքի խիստ հիերարխիկ կապերից մերկանտիլիզմին, որը, ապահովելով թեկուզ սահմանափակ հնարավորություն անհատական զարգացման համար և հիմնված լինելով «հզոր պետական և ազգային գիտակցության վրա ... պետական իշխանությունն առաջին անգամ վերածեց տնտեսական կարգի գործոնի»: Սակայն հայտնի է, որ ժամանակակից հասկացությամբ շուկայական տնտեսությունը սկիզբ է առել լիբերալիզմի ձևավորման հետ, որը ծայր տվեց նոր հասկացությունների. ամենազոր պետության փոխարեն՝ քաղաքացիական իրավունքներ, վերևների հրամանատարական իշխանության փոխարեն՝ քաղաքացիների ազատ որոշումներ: Տնտեսական զարգացումն ունի իրեն իմանենտ օրենքները, և միայն գործողությունների պատշաճ ազատության պայմաններում կարելի է հասնել հասարակության բարեկեցության: Էրհարդը դրանում է տեսնում Ադամ Սմիթի, Դավիդ Ռիկարդոյի և Ժան Բատիստ Սեյի ուսմունքի այն հեղափոխական նշանակությունը, որը ոչ միայն «շարժել է աշխարհը, այլ նաև ամբողջությամբ վերափոխել այն»: Դրանում նրանք բացահայտել են այն տնտեսական փոխկախվածությունները, որոնք բացարձակ գերակայություններ ունեն այսպես կոչված մաքուր տնտեսական համակարգում: Կարծես անտեսվել էր տնտեսական գործընթացի վրա քաղաքական գործոնների ազդեցությունը, որոնց արդյունքում, հատկապես ինդուստրացման ժամանակներում ուժեղացող «սոցիալական հակամարտությամբ» պայմանավորված, նորոգություն էր պարտադրվում լիբերալիզմի հայեցակարգում: Փոխվեցին տնտեսական ազատության և սոցիալական արդարության վերաբերյալ պատկերացումները: Եվ այդ հարցում Էրհարդը հատկապես արժևորում է Գերմանիայի ֆրայբուրգյան դպրոցի և նրա գլխավոր տեսաբան Վալտեր Օյկենի ներդրումը: «Լիբերալիզմի թերությունները,- գրում է Էրհարդը,- կայանում են ոչ թե մտածողության սխալներում, այլ սոցիալական ու իրավական հայացքների նկատմամբ ոչ ճիշտ մոտեցման մեջ, որոնք երբեմնի եղել են ճիշտ, իսկ հետո ժամանակի հետ դարձել են ավելի շատ անհիմն: Եթե սկզբում շուկայում խաղակիցների անհավասարությունը թույլ էր տալիս աշխատուժն օգտագործել անողոքաբար, ապա ավելի ուշ խղճի արթնացումը ստիպեց տեսնելու այդպիսի պահվածքի սոցիալական վնասը և հասարակությանը ակ-

[1] Социальное рыночное хозяйство: концепция, практический опыт и перспективы применения в России, М., 2007, с. 14.

տիվացնելու դրա դեմ պայքարի»[1]: Այս իմաստով ֆրայբուրգյան դպրոցը մրցակցության հարցը նորից դարձնում է քննության առարկա: Եվ Էրհարդը նկատում է, թե սկզբնական լիբերալ մտայնության և շուկայական տնտեսության ժամանակակից ըմբռնումները, հատկապես կապված սոցիալական շուկայական տնտեսության հետ, ճշգրտման կարիք ունեն: Վերջինիս համար կարևոր նշանակություն ունեն հավասարակշռության պահպանման ոչ միայն տեխնիկական, ավտոմատ կարգավորման մեխանիզմները, այլ նաև հոգևորի և բարոյականի ներկայությունը: Գների ազատ ձևավորման միջոցով պահանջարկի և առաջարկի հավասարակշռության պահպանումը քիչ է «հասարակական կարգի արդարացման կամ գաղափարական բովանդակության հարստացման համար»: Դա է, որ կանխորոշում է այն մոտեցումը, թե տնտեսության մեջ մասնավոր նախաձեռնությունը դեռևս չի նշանակում, թե միայն առանձին անհատների որոշումներն են դեր խաղում: Որքան էլ կոլեկտիվ հիմունքներով (օրինակ՝ բաժնետիրական ընկերություններում) որոշումներ ընդունվեն, այնուամենայնիվ նորարարական, իսկական ստեղծագործական գաղափարները «միշտ էլ ունեն անհատականության կնիք»: Հենց այս տեսակետից պիտի տրվի շուկայական տնտեսության արդյունավետության գնահատականը՝ ի հակակշիռ կոմունիստական երկրների, որոնցում ամենակարևորը ենթարկված է կոլեկտիվի համահավասարեցման միջին թվաբանական սկզբունքին: Այդ երկրներում նույնպես առկա են բարձր որակավորման մասնագետներ, սակայն բացակայում են «ձեռնարկատերերի հատուկ կատեգորիայի մարդիկ», որոնք կարող են գործել միայն ազատ շուկայի պայմաններում: Այդ երկրները չեն կարող բավարարել արևմտյան պատկերացումներին համապատասխան հասարակ պահանջմունքները: Սոցիալական շուկայական տնտեսության մեջ պիտի տեսնել այն անմիջական կապը, որն առկա է ձեռնարկատիրական գործունեության, բարեկեցության և սոցիալական պաշտպանվածության միջև:

Ինչպես նկատել ենք, ֆրայբուրգյան դպրոցի հայեցության մեջ հաճախ է շրջանառվում «կարգ» հասկացությունը: Այն, նկատում է Էրհարդը, նպատակ ուներ «տափակ, անհոգի պրագմատիզմին հակադրելու հոգևոր կարգի պաշտամունքը»: Տեղի է ունենում տնտեսական մտածողության որակափոխություն: Կարծես ուղենիշ է դարձել ոչ այնքան համակարգի կատեգորիաներով, որքան «ռեգլամենտացիաներով» մտածողությունը: Ստեղծվում են բազմաթիվ ազգային և միջազգային մասշտաբի հաստատություններ, որոնք նպատակ ունեն հասարակական-տնտեսական և սոցիալական կյանքը հասցնելու կատարելության՝ պետության միջամտության միջոցով վերացնելով «անարդարությունները»: Իսկ դա խախտում է իրերի բնական կարգը, ու թերևս դրանով պիտի բացատրել, որ «մեր այսօրվա հասարակությունը, որն այնքան սիրում է ընդգծել իր արդիականությունը, մշտապես ցանկանում է ուղղել Աստծուն, կամ, եթե կցան-

[1] Эрхард Л., Мышление порядка в рыночной экономики. Социальное рыночное хозяйство: концепция, практический опыт и перспективы, с. 33.

կանք, նրա ստեղծագործությունը»[1]: Տնտեսական կյանքը շարժողը մրցությունն է՝ որպես ընտրության ամենաօգտավետ սկզբունք՝ հակառակ այն կարծիքի, թե «հավասարության համար իշխանությունը պետք է կարգավորի մարդկային անհատների կենսական հնարավորությունները»: Էրհարդը կարծես վերջավորում է իր հայեցությունը. «Թող ինձ մեղադրեն սուբյեկտիվիզմի մեջ, որ ես, կյանքի կոչելով սոցիալական շուկայական տնտեսությունը, փորձել եմ միացնել ազատությունը կարգի հետ, որպեսզի հաստատվի մեծ արդարություն: Կարգը մենք հասկանում ենք ոչ միայն և ոչ այնքան որպես թեմատիկ հասկացողությամբ իրավակարգ, այլև որպես հանրության կյանքի կարգ: Այն կարելի է մեկնաբանել և՛ նեղ, և՛ լայն առումներով, ընտանիքից մինչև պետություն՝ փոխելով իր ձևը, բայց վերջին հաշվով՝ ո՛չ էությունը և ո՛չ էլ բովանդակությունը: Դա նշանակում է, որ մարդկային հանրության ցանկացած ձև պահանջում է պարտադիր «խաղի կանոններ»: ... Կարող են հարցնել, թե ինչպես հաշտեցնել ազատությունը կարգի հետ: ... Ես բազմիցս հայտարարել եմ, որ կարգն առանց ազատության ծնում է չափազանց շատ հարկադրանք, իսկ ազատությունն առանց կարգի սպառնում է չափազանց հեշտ վերածվել քաոսի: Պատմությունը բավական օրինակներ է տալիս մեկ և մյուս դրույթի վերաբերյալ...»[2]: Տեսական այս պատկերացումներին հաջորդում է նրա այն հետևությունը, թե «... շուկայական տնտեսությունը մեխանիկական սկզբունք չէ, այլ ավելի շուտ կացութաձևի արտահայտություն, կյանքի կարգ՝ հիմնված համոզմունքների և բարոյականության, ազատության և իրավունքի վրա»[3]: Այսինքն՝ նյութական կապակցություններից շատ ավելի լայն հասկացություն:

* *
*

«Բարեկեցություն բոլորի համար» աշխատության մեջ այսպիսի մի գլուխ կա՝ «Բարեկեցությունն արդյո՞ք տանում է նյութապաշտության», որն ուղղված է սոցիալական շուկայական տնտեսության քննադատների այն կարծիքին, թե այն մարդկանց մղում է դեպի կործանարար նյութապաշտության: Էրհարդը նկատում է, թե տնտեսական գործընթացներում զբաղված մարդկանց ստեղծարար գործունեությունը տնտեսական և սոցիալական բովանդակություն է ստանում միայն լավի և ավելի ազատ կենսակերպի ստեղծման ճանապարհին. «Մենք եգիպտական բուրգեր ենք կառուցում ոչ թե բուրգեր կառուցելու համար, դա ինքնանպատակ չէ... Ամեն մի նոր մեքենա, էլեկտրական, նոր աշխատատեղ... ի վերջո ծառայում է մարդու հարստացմանը, սոցիալական շուկայական տնտեսությունում ապրող և աշխատող բոլոր մարդկանց համար»[4]: Տնտեսությունում, որում ոչինչ չի արտադրվում, եկամուտներ լինել չեն կարող: Այն, ինչ արտադրվում է, պետք է ունենա իր սպառումը: Հետևապես «ակտիվ և լավա-

---

[1] Տե՛ս Социальное рыночное хозяйство: концепция, практический опыт и перспективы..., с. 36.
[2] Նույն տեղում, էջ 37:
[3] Նույն տեղում, էջ 40:
[4] Людвиг Эрхард, Благосостояние ..., էջ 120:

տեսական սպառողական դինամիկությունը այն բանի նախադրյալն է, որ ժողովրդական տնտեսության մեջ մշտապես և օպտիմալ ձևով օգտագործվում են տնտեսական գործունեության հնարավորությունները, այդպիսի տնտեսության մեջ են ի հայտ գալիս ձգտումը՝ ամրապնդելու աճի ուժերը, և առաջընթացի ձգտումը: Միայն «սպառման կամքի» ձգտումը թույլ կտա արտադրության անխափան զարգացման և կնպաստի ռացիոնալացման ձգտման պահպանմանն ու արտադրողականության բարձրացմանը»:

Խնդիրը, ըստ էության, հանգում է նյութականի և հոգևորի խնդրին: Էրհարդը այդ կապը տեսնում է այն պարզ ճշմարտության մեջ, որ միայն բարեկեցությունն է մարդուն վեր բարձրացնում պրիմիտիվից և պայմաններ ստեղծում, նրան կտրում միայն նյութականի մասին մտածողությունից: Եվ քանի դեռ բարեկեցության բարձրացումը ոչ միայն ձգտում է լավ կյանքի, այլ նաև հասնելու ավելի բարձր արտադրողականության, ապա տեղ ունի ներդաշնակություն: Հակառակ դեպքում միտումը դառնում է վտանգավոր, սոցիալական տեսակետից՝ ոչ իրական և կորցնում իր «բարոյական հիմնավորվածությունը»: Նյութապաշտության և հոգևորի առումով հանդիպադրվում են երկու ըմբռնումներ: Էրհարդի կարծիքով բանվորների և հասարակության մյուս շերտերի նյութական բարձրացումը բացարձակ առավելություն է: Մի այլ կարծիքով՝ սոցիալական շուկայական տնտեսությունը սրում է նյութապաշտության պահվածքը: Էրհարդը միանգամայն պարզ հետաքրքրասիրությամբ փարատում է հարցի ավելորդ երկիմաստությունը. «...Արդյո՞ք նշանակում է, թե ռադիոընդունիչի, փոշեկուլի, սառնարանի և այլնի առկայությունը ունևոր մարդու մոտ ինչ-որ այլ բան է, քան բանվորի բնակարանում: Կամ դա մի դեպքում քաղաքակրթության և մշակույթի արտահայտություն է, իսկ մյուս դեպքում՝ նյութապաշտական մտայնության հատկանիշ»[1]: Կամ «...եկամտի շահը չի հանդիսանում սպառման վրա ծախսերի բարոյական գնահատման ո՛չ մասշտաբը, ո՛չ էլ չափանիշը: Ես չգիտեմ նաև այն, թե բարեկեցության և հարստության արդյունքում մարդու հոգուն, իբրև այդպիսինի, ինչու և ինչ աստիճանի վտանգ կարող է սպառնալ: Այդ դեպքում անհրաժեշտություն կլիներ պատասխան հարցը՝ եկամտի ո՞ր չափից սկսած մարդու հոգին այլևս չի գտնվում վտանգի մեջ»[2]:

Էրհարդը դիտողություններ ունի աղքատության, նյութական ու հոգևոր կախվածության, մարդու ազատության ու ստեղծագործելու կապի և այլ հարցերի մասին: Սակայն ձգտումը, որին նա դավանում է, «նպատակ ունի ժողովրդի լայն շերտերի համար ապահովելու ավելի շատ բարեկեցություն, բայց ոչ Աստվածաշնչում ենթադրվող հարստությունն ու առատությունը, որոնք ճանապարհ են բացում ցոփության և արատների»[3]:

---

[1] Նույն տեղում, էջ 122:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 123:

* *
*

Լյուդվիգ Էրհարդի սոցիալական շուկայական համակարգի մոդելը իր հիմքում ունի հետևյալ սկզբունքները.

- սոցիալական շուկայական տնտեսությունը պլյուրալիստական, հաշտարարական կարգի մոդել է, որը հիմնվում է ոչ թե դասական տնտեսագիտության laisser-faire լիբերալ մտայնության սկզբունքի վրա, այլ կոչված է հաղթահարելու սոցիալական առաջընթացի և ազատ ձեռներեցության հակադրությունը:
- Սոցիալական շուկայական տնտեսական կարգի էական բաղադրիչն անձնական ազատությունն է. սա է ազատ տնտեսական կյանքի հարատևության երաշխիքը, եթե «ազգի սոցիալական կյանքում ապահովված է առավելագույն ազատությունը, և առավելագույն չափով դրսևորվում են մասնավոր նախաձեռնությունն ու յուրաքանչյուրի հոգսն իր նկատմամբ»: «Որքան տնտեսությունն ազատ է, այն առավել սոցիալական է»:
- «Բարեկեցությունը բոլորի համար» և «բարեկեցությունը մրցակցության միջոցով»: Մեկը նպատակն է, մյուսը՝ այդ նպատակին տանող ճանապարհը:
- Հասարակությունը պետք է գիտակցի, որ կենսամակարդակի բարձրացումը կապված է ոչ այնքան բաշխման խնդրի, որքան արտադրության, ավելի ստույգ՝ արտադրողականության հետ: Լուծումը ոչ թե բաշխման, այլ ազգային արդյունքի բազմապատկման մեջ է: «Ավելի հեշտ է յուրաքանչյուրին տալ մի խոշոր կտոր իր չափերով մեծացող տորթից, քան օգուտ քաղել փոքր տորթի մասին վեճերից, քանի որ այդ ժամանակ ամեն մի օգուտ պետք է փոխհատուցվի որևէ այլ վնասով»:
- «Գիշերային պահակի» պետությունը մնացել է անցյալում: Տնտեսությունը գործում է ոչ թե «անհոգի ավտոմատիզմի» սկզբունքով, այլ այն ձևավորում է պետությունը՝ նման ֆուտբոլի դաշտում դատավորի հետ, որը կոչված է ոչ թե խաղին մասնակցելու, այլ պահպանելու խաղի կանոնները: Մարդկային հանրության ցանկացած ձև պահանջում է պարտադիր «խաղի կանոններ», ...կարգն առանց ազատության ծնում է հարկադրանք, իսկ ազատությունն առանց կարգի սպառնում է չափազանց հեշտ վերածվել քաոսի: Մրցակցությունը՝ որպես դրդիչ ուժ, իսկ ազատ գները՝ որպես կարգավորիչ, պետք է երաշխավորվեն համապատասխան օրենքներով:
- Սոցիալական ապահովությունը վերին աստիճանի բարիք է, բայց այն պետք է հիմնված լինի առաջին հերթին յուրաքանչյուրի սեփական էներգիայի, սեփական նվաճումների, յուրաքանչյուրի առանձին ձգտումների վրա: Սոցիալական ապահովությունը չի նշանակում սոցիալական ապահովություն բոլորի համար, այն չի նշանակում պատասխանատվության փոխադրումը կոլեկտիվի վրա: Սկզբում՝ սեփական անձնական պատասխանատվությունը, և միայն այն դեպքում, երբ պարզվի, որ այդ պատասխանատվությունը անբավարար է կամ անարդյունք է, ուժի մեջ է մտնում մարդու նկատմամբ պետության կամ հասարակության պարտավորությունը: Ազգի սոցիալական շարժիչը ավելի արգա-

սաբեր կլինի այն դեպքում, եթե «դրսևորենք ավելի շատ սոցիալական գիտակցություն և կենսակերպ, քան չափազանց շատ սոցիալական կոլեկտիվ կամք»:

«Տնտեսությունը հիսուն տոկոսով հոգեբանություն է»: «Տնտեսական համակարգը պետք է լինի ապագաղափարայնացված իր մեթոդներում, բայց ոչ նպատակներում՝ ուղղված ռեֆորմների նպատակները վերջնական մասսաներին տեղ հասցնելուն»:

* *
*

Լյուդվիգ Էրհարդի անվան ֆոնդի տնօրեն Հ.Վյունշեն վկայակոչում է մի դրվագ, որ Էրհարդը զրույցների ժամանակ սիրում էր կրկնել Ֆոյերբախի մասին Կարլ Մարքսի այն թեզը, թե փիլիսոփաները լոկ տարբեր եղանակներով բացատրել են աշխարհը, խնդիրը կայանում է այն փոխելու մեջ[1]: Նրա ռեֆորմները կառուցված էին տնտեսական կյանքի իրական ընթացքի, այլ ոչ թե հաճախ ոչինչ չասող գիտական կոչված, բայց, իր իսկ խոսքերով, «կյանքից չափազանց հեռու», ինչ-որ պատրաստի ու սխեմատիկ, որոշակի պատճառահետևանքային կապերի վրա: Ոչ պատահականորեն նրա քաղաքականությունը ընդունելություն չէր գտնում գիտության ոլորտում, ոչ ոք նրան հրապարակային չէր առարկում, բայց և ոչ ոք չկանգնեց նրա կողքին: Սոցիալական շուկայական տնտեսության նրա կոնցեպցիան լուրջ չէր ընդունվում՝ որպես ոմանց գիտական դրույթների և եզրակացությունների «փորձարարական ապացույցներ»՝ ավելի շուտ մշակումներ կատարելով «այլընտրանքային» ուղղություններով:

Գրականության մեջ հաճախ սոցիալական շուկայական տնտեսության կոնցեպցիան կապում են ֆրայբուրգյան դպրոցի մշակումների հետ: Հ.Վյունշեն նկատում է, թե «Էրհարդը իր սեփական հայացքներն ուներ շուկայի պայմաններում տնտեսական քաղաքականության վերաբերյալ: Դրանք խորը արմատավորված էին այն սոցիալ-փիլիսոփայական, սոցիալ-էթիկական և սոցիալ-հոգեբանական դիտողություններում, որոնք անհնար է առանձնացնել նրա սոցիալական շուկայական տնտեսության կոնցեպցիայից»: Օյկենն անհրաժեշտություն էր դիտում սոցիալական քաղաքականության նոր հայեցակարգի մշակումը: Սակայն այն ժամանակ, երբ «լոկ նա շարադրում էր դրա անհրաժեշտությունը, Էրհարդը իր սոցիալական շուկայական տնտեսությամբ դնում էր այդպիսի նոր սոցիալական քաղաքականության հիմքը»[2]: Վերը նշվածը բնավ չի նշանակում, թե Էրհարդի հայացքները մեկուսի էին ժամանակի տնտեսագիտական մտքի որոնումներից ու նստվածքներից: Թերևս, տնտեսագիտական դպրոցների առաջադրած դրույթների նրա մոտեցումներում պիտի տեսնել սեփական հայացքի ձևավորման առանձնահատկությունը: Այսպես՝ ֆրայբուրգյան դպրոցի՝ Վալտեր Օյկենի և նրա ընկերների (որոնցից մի մասի հետ իրականացվել են ռեֆորմները) ծառայությունը տեսնում էր այն բանում, թե «քաղաքատնտեսու-

---

[1] Вюнше Х. Ф., Социальное рыночное хозяйство: представления о хозяйственном порядке ..., Տե՛ս Социальное рыночное ..., с. 142.

[2] Նույն տեղում, էջ 140.

թյունը վերադարձրել են կարգի մտածողությանը... որպեսզի տափակ պրագմատիզմին հակադրվի հոգևոր կարգի պաշտամունքը»[1], կամ փորձել «գրեթե ամբողջությամբ», սոցիալական դպրոցի հայտնի տեսաբան Ֆրանց Օպենհեյմերի «պատգամներին համապատասխան, սոցիալական շուկայական տնտեսության ձևով ցույց տալ ոչ թե սենտիմենտալ, այլ իրատեսական ուղին»[2], կամ Քեյնսի տեսության զգուշավոր մոտեցումներով հակադրվել իր ընդդիմադիրներին, կամ անհամաձայնություններ ունենալ Ֆրիդրիխ Հայեկի ազատական հայեցության ծայրահեղությունների հետ և այլն: Ռեֆորմների ուղին պիտի լիներ տեսությունից եկող իմաստավորումներով ու դժվար գործնական իրացումների մեջ:

Մյուլլեր-Արմակը մի առիթով նկատել է, թե «մեր տեսությունն աբստրակտ է, այն հասարակական ճանաչման կարժանանա միայն այն դեպքում, եթե ձեռք բերի կոնկրետ իմաստ և փողոցում ցանկացած մարդու ցույց տա, որ դա նրա համար լավ է»: Դա հաջողվել է անել Էրհարդին: Ֆրանսիացի գրող Ֆրանսուա Մորիակը նկատում է. «Պետական գործիչները նման են վիրաբույժների, որոնց սխալները մահացու են»: Էրհարդը չսխալվեց: Զուգորդելով ռեֆորմատորի և գիտնականի տրվածքը՝ նա շուկայական տնտեսության մասին պատկերացումներն իրացրեց սոցիալական չափումների նոր բանաձևերով՝ իրեն վերապահելով «գերմանական հրաշքի» հեղինակի անվանումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Зариций Б. Е., Людвиг Эрхард: Секреты «экономиического чуда» , М., 2002, с. 83.
2. Людвиг Эрхард, Благосостояние для всех, М., 2001, с.176.
3. Худокормов А., Невский С., Национальные экономические школы в Германии и теория социального рыночного хозяйства, Экономическая политика, 2017, т. 12, № 4, с. 228.
4. Людвиг Эрхард, Полвека размлышлений. Речи и статьи, М., 1996, с. 345 (մեջբերումը կատարված է Владимир Гутник, Политика хозяйственного порядка в Германии գրքից, М., 2002, с. 66).
5. Социальное рыночное хозяйство: концепция, практический опыт и перспективы применения в России, М., 2007, с. 14.
6. Эрхард Л., Мышление порядка в рыночной экономики. Социальное рыночное хозяйство: концепция, практический опыт и перспективы, с. 33.

---

[1] Эрхард Л. Мышление порядка в рыночной экономики. Социальное рыночное хозяйство: концепция..., с. 36.

[2] Александр Худокормов, Сергей Невский, Национальные экономические школы в Германии и ..., с. 228.

References
1. Zaricij B. E., Ljudvig Jerhard: Sekrety «jekonomiicheskogo chuda» , M., 2002, s. 83.
2. Ljudvig Jerhard, Blagosostojanie dlja vseh, M., 2001, s.176.
3. Hudokormov A., Nevskij S., Nacional'nye jekonomicheskie shkoly v Germanii i teorija social'nogo rynochnogo hozjajstva, Jekonomicheskaja politika, 2017, t. 12, # 4, s. 228.
4. Ljudvig Jerhard, Polveka razmlyshlenij. Rechi i stat'i, M., 1996, s. 345 (Vladimir Gutnik, Politika hozjajstvennogo porjadka v Germanii գրքից, M., 2002, s. 66).
5. Social'noe rynochnoe hozjajstvo: koncepcija, prakticheskij opyt i perspektivy primenenija v Rossii, M., 2007, s. 14.
6. Jerhard L., Myshlenie porjadka v rynochnoj jekonomiki. Social'noe rynochnoe hozjajstvo: koncepcija

Ռոբերտ Սարինյան
Բելլա Գաբրիելյան

«ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Համառոտագիր: XX դարում երկրորդ անգամ Գերմանիայի տնտեսության համար նորից էր ստեղծվել ճգնաժամային կացություն: Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում երկրի արտադրական հզորությունների 2/3-ը չէր աշխատում: Գյուղատնտեսությունը, շինարարությունը, տրանսպորտը հետ էին շպրտվել տասնյակ տարիներ, տիրում էր խոր ինֆլյացիա, ֆինանսական համակարգը կազմալուծվել էր:

Հետպատերազմյան երկու տասնամյակների ռեֆորմների արդյունքում երկիրը դարձավ աշխարհի հզորագույն և իր կենսամակարդակով ամենաբարձր երկրներից մեկը: Ռեֆորմները, որոնք իրականացվել են, ստացել են «սոցիալական շուկայական տնտեսության» մոդել անվանումը: Սույն հոդվածը «գերմանական հրաշքի» սկզբունքների մասին է:

Բանալի բառեր. բարեկեցություն, սոցիալական շուկայական տնտեսություն, մրցակցություն, դրամական ռեֆորմ, ինֆլյացիա, մոնոպոլիա, հոգեբանություն, անձնական ազատություն, ինտեգրացիա

Роберт Саринян
Белла Габриелян

ПРИНЦИПЫ «НЕМЕЦКОГО ЭКОНОМИЧЕСКОГО ЧУДА»

Аннотация: В XX веке для экономики Германии вновь создавалась кризисная ситуация. В результате Второй мировой войны бездействовали 2/3 производственных мощностей страны. Сельское хозяйство, строительство, транспорт были отброшены назад на десятки лет, царила глубокая инфляция, разложилась финансовая система.

В результате реформ послевоенных двух десятилетий, страна стала одной из самых могущественных и по уровню благосостояния одной из самых высокоразвитых стран мира. Реформы, которые были проведены, получили название модель «социального рыночного хозяйство». Данная статья посвящена принципам «немецкого чуда».

Ключевые слова: благосостояние, социальное рыночное хозяйство, конкуренция, денежная реформа, инфляция, монополия, психология, личная свобода, интеграция

Robert Sarinyan
Bella Gabrielyan

PRINCIPLES OF "THE GERMAN ECONOMIC MIRACLE"

Abstract: In the XX century a crisis situation again occurred for the economy of Germany. As a result of World War II, 2/3 of the country's production capacity was inactive. Agriculture, construction, transport were thrown back for decades, deep inflation reigned, the financial system broke down.

As a result of the reforms of the post-war two decades, the country became one of the most powerful countries of the world with the highest standard of living. The reforms that were carried out were named the model of "social market economy". This article is devoted to the principles of the "German miracle".

Keywords: welfare, social market economy, competition, monetary reform, inflation, monopoly, psychology, personal freedom, integration

Դավիթ Պետրոսյան
Աննա Հարությունյան

ԻՏԱԼԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Իտալիայի տնտեսական հրաշքը տարեգրվում է նախորդ դարի 50-60-ական թթ.՝ Արևմտյան Եվրոպայի «տնտեսական ոսկեդարի ժամանակաշրջանին»: Վերջինս բնութագրվում է հետպատերազմյան վերակառուցման և արդյունաբերական զարգացման, առևտրի ազատականացման և տեխնոլոգիաների ու գիտելիքների փոխանակման աննախադեպ գործընթացներով, որոնք ուղեկցվում էին մեծածավալ ներդրումներով ինչպես սեփական միջոցների, այնպես էլ Մարշալի պլանի ներքո տրամադրվող վարկերի հաշվին: Այս ժամանակաշրջանում Իտալիային հաջողվում է ոչ միայն վերականգնել պատերազմի տարիներին գրեթե ամբողջությամբ քայքայված տնտեսությունը, այլև ապահովել տնտեսական աճի բարձր ցուցանիշներ՝ հավասարվելով և նույնիսկ գերազանցելով տարածաշրջանի այլ երկրներին: Մասնավորապես՝ ՀՆԱ տարեկան աճի ցուցանիշը 1950-1973 թթ. միջինում կազմում է 5%, աշխատանքային ռեսուրսների արդյունավետության աճը գյուղատնտեսության ոլորտում՝ 5,7%, արդյունաբերության ոլորտում՝ 6,8%, ընդհանուր արտադրողականությունը (Total Factor Productivity, TFP) աճում է տարեկան միջինը 5.7%, արտաքին առևտրի ծավալները՝ տարեկան մինչև 8%: Միևնույն ժամանակ 1951-1958 թթ. ընթացքում Մարշալի պլանի ներքո տնտեսության վերականգմանն ուղղված ներդրումները կազմում են ընդամենը 1,5 մլրդ ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ 2%-ը՝ զիջելով Արևմտյան Գերմանիայի համապատասխան ցուցանիշին 0,5%-ով և Մեծ Բրիտանիային՝ 0,7%-ով[1]:

Իտալիայի վերածումը ագրարային-արդյունաբերական տնտեսությունից զարգացած առաջատար արդյունաբերական տնտեսությամբ երկրի դառնում է լայն քննարկման առարկա, որի առանցքային հիմնահարցերից մեկը պետության դերն է անցումային շրջանում: Հետպատերազմյան շրջանում Իտալիայի տնտեսության զարգացումը ուղեկցվել է պետության էքստենսիվ արդյունաբերական քաղաքականությամբ, որն ուղղված էր մի քանի հիմնական նպատակների իրականացման. տնտեսության զարգացման առումով՝ ներդրումների կենտրոնացում կապիտալատար և նորարարական ճյուղերում, տնտեսական միջավայրի բարելավման տեսանկյունից՝ կայունության ապահովում, սոցիալական տեսանկյունից՝ գործազրկության մակարդակի նվազեցում, որի արդյունքում արդեն 1962 թ. կառավարությանը հաջողվեց ապահովել լրիվ զբաղվածություն, տարածքային և ենթակառուցվածքների զարգացման տեսանկյունից՝ պատմականորեն ժառանգած Հյուսիս-Հարավ զարգացման անհամաչափության հաղթահարում և այլն: Պետությունն իր քաղաքականությունն իրականացնում էր հա-

[1] Christian Grabas, “Planning the economic miracle? Industrial policy in Italy between boom and crisis, 1950-1975”, p.138, Palgrave Macmillan, DOI: 10.1057/9781137329905

սարակական-մասնավոր համագործակցության ընդլայնման հիման վրա՝ հաշվի առնելով գործարար միջավայրի կարիքները, ինչն ուղեկցվում էր համապատասխան ինստիտուտների՝ նախարարությունների, գործակալությունների, պետության մասնակցությամբ կազմակերպությունների ստեղծմամբ[1]:

1947 թ. սահմանադրության ընդունումից ի վեր Իտալիայի կառավարությունը ձեռնամուխ է լինում մի շարք տնտեսական և իրավական բարեփոխումների՝ ուղղված երկրի երկարաժամկետ ռազմավարական նպատակների իրականացմանը, որոնք և ձևավորում են Իտալիայի տնտեսության զարգացման մոդելի հիմքը: Այս բարեփոխումներից առանցքային նշանակություն են ունեցել հետևյալները.

Առաջինը 1947 թ. սկսած ազատ տնտեսական հարաբերությունների քաղաքականության որդեգրումն էր, որը սկզբունքորեն տարբերվում է և՛ ամերիկյան ազատ շուկայական տնտեսության (LME), և՛ գերմանական կառավարվող շուկայական տնտեսության (CME) մոդելներից: Իտալիայի արդյունաբերական քաղաքականությունը բնութագրվում էր երկկողմանի մոտեցմամբ՝ Գ. Ամատոյի բնութագրմամբ՝ «լիբերալ պրոտեկցիոնիզմով» մի կողմից, և կազմակերպությունների առավելագույն ազատության ապահովման ու օպերացիոն զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովմամբ մյուս կողմից: Պետությունը մեծապես օժանդակում էր արտահանման միտված ճյուղերի զարգացմանը առևտրային խոչընդոտների աստիճանական վերացման և նպատակային սուբսիդավորման միջոցով: Բացի այդ, պետությունն ամբողջությամբ իր վրա էր վերցնում երկրի ներդրումային միջավայրի ձևավորման գործառույթը ակտիվ ներդրումային քաղաքականության՝ հիմնականում պետական կամ պետության մասնակցությամբ բանկերի, ներդրումային կազմակերպությունների միջոցով[2]: Բանկային համակարգում պետության մասնակցությունը նպաստեց երկրի ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության բարձրացմանը, արդյունավետ վարկային քաղաքականության միջոցով հնարավորություն ընձեռեց մասնավոր հատվածի ֆինանսական ռեսուրսները ուղղելու տնտեսության իրական հատվածի ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերի զարգացմանը:

Երկրորդը 1948 թ. կառավարության կողմից ընդունված որոշումն էր անդամակցելու Եվրոպայի Վերակառուցման ծրագրին, որը հնարավորություն ընձեռեց աստիճանաբար ազատականացնել արտաքին առևտուրը: 1950-70-ականներին Իտալիան հանդիսանում էր եվրոպական ինտեգրման առաջամարտիկ՝ միաժամանակ վարելով արդյունավետ դրամավարկային քաղաքականություն՝ մի կողմից ազգային արժույթի կառավարման գործառույթների իրականացման, մյուս կողմից Բրետտոն-Վուդսյան համակարգի ներքո ֆիքսված արժույթի ռեժիմի ներդրման միջոցով: Եվրոպական ինտեգրման գործընթացի

---

[1] Christian Grabas, “Planning the economic miracle? Industrial policy in Italy between boom and crisis, 1950-1975”, p.141, Palgrave Macmillan, DOI: 10.1057/9781137329905

[2] Alexander Stevenson, 1951 ,“Italy's Economic Position And Prospects”, p.1, International Bank For Reconstruction And Development, Economic Department, Addendum to 16 The Creditworthiness of Italy· dated August 15, 1950, E 978.

ներքո տնտեսության ազատականացումը Իտալիայի տնտեսական զարգացման հետագիծն ուղղեց դեպի արտահանման միտված տնտեսության տրամաբանություն՝ նպաստելով առևտրի ծավալների ընդլայնմանը: Հարկ է նշել, որ 1950-1962 թթ. Իտալիայի արտաքին առևտրի ծավալները աճում էին ավելի արագ, քան ՀՆԱ-ն՝ կազմելով տարեկան միջինը 7,3%:

Երրորդը տարածաշրջանային արագացված զարգացման ծրագիրն էր, որը միասնական Իտալական պետականության ձևավորումից ի վեր առաջին հասցեական ծրագիրն էր՝ ուղղված երկրի հարավային շրջանների տնտեսական հետամնացության հաղթահարմանը: 1957 թ. Իտալիայի խորհրդարանի կողմից ընդունվեց Հարավի արդյունաբերական զարգացման մասին օրինագիծը, որը սահմանում էր բոլոր պետական և պետության մասնակցությամբ կազմակերպություններին իրենց տարեկան ներդրումների 40%-ը և նոր ներդրումների 60%-ը իրականացնել երկրի հարավային շրջաններում[1]:

Արդյունաբերական քաղաքականությունը ներառում էր նաև պետական միջամտության տարբեր մեխանիզմներ, որոնցից առավել կարևոր էր պետական կամ պետության մասնակցությամբ կազմակերպությունների կարգավիճակի սահմանումը: Ըստ Ս. Թոլիդեյլի՝ Իտալիայի կառավարությունը գտնում էր, որ «միայն տնտեսական բարենպաստ միջավայրի ձևավորումը բավարար չէ տնտեսական զարգացման համար, այդ պատճառով անհրաժեշտություն է առաջանում պետության ուղղակի միջամտության հատկապես ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում»: 1950-ական թթ. սկզբից պետությունն ինքն էլ խորապես ներգրավված էր երկրի տնտեսական կյանքում՝ պետության մասնակցությամբ կազմակերպությունների և հոլդինգների միջոցով, ներառյալ Արդյունաբերական վերակառուցման ինստիտուտը (Institute for industrial reconstruction, IRI), որը 1960 թ. արդեն ընդգրկում էր բանկային համակարգի, արդյունաբերության, էներգետիկայի, ենթակառուցվածքների ոլորտում գործող 2000-ից ավելի կազմակերպություններ, 1953 թ. հիմնադրված Ազգային հիդրոկարբոնային գործակալությունը (ENI)՝ ներառյալ քիմիական և վառելիքահումքային արդյունաբերության 850-ից ավելի կազմակերպություններ, և 1926 թ. ձևավորված ENEL ընկերությունը՝ ներառյալ մշակող արդյունաբերության, քիմիական արդյունաբերության 1000-ից ավել կազմակերպություններ: 1950-ական թթ. Արդյունաբերական վերականգման ինստիտուտը և Ազգային հիդրոկարբոնային գործակալությունը ամենազարգացած և եկամտաբեր կազմակերպություններն էին, որոնց ներդրումները արդյունաբերության ոլորտում իրականացված ներդրումների 1951 թ. 16%-ից հասան 27% 1962 թ.[2]:

1956 թ. Իտալիայի խորհրդարանը ընդունեց թիվ 1589 ակտը, որով հիմնադրվեց Պետական սեփականության կառավարման նախարարությունը: Այս

---

[1] Christian Grabas, "Planning the economic miracle? Industrial policy in Italy between boom and crisis, 1950-1975", p.p.139-140, Palgrave Macmillan, DOI: 10.1057/9781137329905

[2] Matteo Lucchesea, Leopoldo Nascia, Mario Pianta, 2016, "Industrial policy and technology in Italy", p.7, Economia e Politica Industriale: Journal of Industrial and Business Economics.

օրինագիծն ուղղված էր կարգավորելու հասարակական մասնավոր հարաբերությունները և հիմնվում էր հետևյալ սկզբունքների վրա.

- պետական և պետության մասնակցությամբ բոլոր կազմակերպությունները և դրանցում պետության մասնաբաժինը անցնում էին պետությանը պատկանող Արդյունաբերական վերակառուցման ինստիտուտի և Ազգային հիդրոկարբոնային գործակալության սեփականությանը:
- Պետական և պետության մասնակցությամբ կազմակերպությունների գործունեությունը պետք է հիմնված լիներ իրացվելիության ապահովման սկզբունքի վրա:
- Պետական և պետության մասնակցությամբ կազմակերպությունների գործունեությունը վերահսկում էր նորաստեղծ Պետական սեփականության կառավարման նախարարությունը:
- Պետական սեփականության կառավարման նախարարությունը միջնորդ օղակ էր պետության և պետական ու պետության մասնակցությամբ կազմակերպությունների միջև[1]:

Գծապատկեր 1-ում ներկայացված է Իտալիայի արդյունաբերական քաղաքականության իրականացման մեխանիզմը: Ընդ որում՝ պետական կազմակերպությունների ազդեցությունը 1950-ական թթ. վերջին տարածվեց տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում: Արդյունաբերական վերակառուցման ինստիտուտի և Ազգային հիդրոկարբոնային գործակալության գործառույթները այս ժամանակաշրջանում ընդլայնվեցին՝ ընդգրկելով ինչպես ավանդական ֆինանսական, բանկային, արտադրական, արդյունաբերական, այնպես էլ նորարարական, գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանակման և հետազոտական ոլորտները:



Գծապատկեր 1. *Իտալիայի արդյունաբերական քաղաքականության իրականացման մեխանիզմը*[2]

[1] Roberto Cafferata, 2010. "The enduring presence of groups and public enterprises in the Italian economy", p.198, Journal of Management & Governance, Springer; Accademia Italiana di Economia Aziendale (AIDEA), vol. 14(3).

[2] Նույն տեղում, էջ 206:

Պետական սեփականության կառավարման նախարարությունն իր գործունեությամբ լուծում էր մի քանի հիմնախնդիր՝ մենաշնորհների վերացում, ներքին շուկայում մրցակցային պայմանների ապահովում ինչպես կարգավորման օրենսդրա-իրավական, այնպես էլ ուղղակի միջամտության եղանակով, տնտեսության ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտների՝ էներգետիկայի, մետաղագործության, մշակող արդյունաբերության ուղղակի և անուղղակի ֆինանսավորում, նորարարությունների և հետազոտությունների ու մշակումների խթանում: Ուղղակի միջամտությունը ներառում էր նաև ձախողված կազմակերպությունների վերականգնմանն ուղղված քաղաքականություն ինչպես արտոնյալ տնտեսական պայմանների ապահովման, այնպես էլ նշված կազմակերպությունների կլանման և ձուլման եղանակով: Հարկ է նշել, որ այս գործընթացների արդյունքում մինչև 1962 թ. պետության սեփականությանն անցավ արդյունաբերության ոլորտում գործող կազմակերպությունների 41%-ը, որոնց հիմնական մասն ընդգրկված էր Արդյունաբերական վերակառուցման ինստիտուտի կազմում[1]:

Կազմակերպա-իրավական տեսանկյունից Արդյունաբերական զարգացման ինստիտուտն ուներ փակ բաժնետիրական ընկերությանը բնորոշ իրավասություններ: Արդյունաբերական վերակառուցման ինստիտուտի ֆինանսական միջոցները գոյանում էին գանձապետարանի կողմից տրամադրված և ֆինանսական շուկայից ներգրավված միջոցներից: Ընդ որում՝ գանձապետական միջոցների տրամադրման սահմանաչափը կարող էր փոխվել միայն Իտալիայի խորհրդարանի հաստատմամբ: Ֆինանսական շուկայից միջոցների ներգրավումը իրականացվում էր պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման միջոցով: Պետության մասնակցությունը նպաստում էր ինստիտուտի նկատմամբ հանրային վստահության մակարդակի բարձրացմանը, ինչն ակնհայտ է դառնում՝ հաշվի առնելով պետական-մասնավոր ներդրումների հարաբերակցությունը: Այսպես՝ 1951-1960 թթ. ընթացքում պետության մասնակցությունը Արդյունաբերական վերակառուցման ինստիտուտի հիմնական կապիտալում միջինում կազմում էր ընդամենը 7%[2]:

Ֆինանսական շուկայից միջոցների ներգրավման գործում մեծ դեր է խաղացել դեռևս 1930-ական թթ. վերջին Հանրային հատվածի վարկավորման կոնսորցիումի տնօրեն Ալբերտո Բենեդուչեի նախաձեռնությամբ արդյունաբերական պարտատոմսերի (Industrial Bonds) ներդրումը: Նշված ֆինանսական գործիքն ուներ մի շարք առավելություններ ի շահ ներդրողների. երաշխավորված էր պետության կողմից, ապահովում էր տարեկան միջին 9% եկամտաբերություն, թողարկման ծավալները կարգավորվում էին՝ ելնելով թողարկող կազմակերպության հիմնական կապիտալից և իրացվելիության մակարդակից:

Թողարկող կազմակերպությունների տեսանկյունից դրանք արդյունավետ էին ինչպես կարճաժամկետ միջոցների, այնպես էլ երկարաժամկետ փոխառու-

---

[1] "The Institute for Industrial Reconstruction (I.R.I.)", p.4, Giuseppe Petrilli, President of the Institute, first published 1962.

[2] Elizabeth Wiskemann, 1971, "Italy since 1945", p. 26, Palgrave Macmillan; 1-st ed. 1971.

թյունների ներգրավման գործում: Այս պարտատոմսերը հնարավորություն էին տալիս երեք տարի և ավելի ժամկետով ներդրողներին փոխանակել իրենց պարտատոմսերը թողարկող կազմակերպության բաժնային արժեթղթերով:

Արդյունաբերական պարտատոմսերի թողարկումն ու տեղաբաշխումը վերահսկվում էին պետության կողմից: Պարտատոմսերը ապահովում էին համեմատաբար կայուն եկամտաբերություն և շնորհիվ պետության կողմից տրվող երաշխավորության՝ բարձր իրացվելի էին ֆինանսական շուկայում:

Արդյունաբերական վերակառուցման ինստիտուտի գործունեությունը հիմնված էր իրավասությունների և պատասխանատվության հստակ բաժանման սկզբունքների վրա: Ենթակա կազմակերպություններն անկախ էին իրենց տնտեսական քաղաքականության մեջ, սակայն պետությունը, ի դեմս Պետական սեփականության կառավարման նախարարության, իրավասու էր միջամտելու հետևյալ դեպքերում.

- եթե ենթակա կազմակերպության տնտեսական ծրագիրը անիրատեսական էր կամ հակասում էր պետության տնտեսական ռազմավարությանը տվյալ ոլորտում,
- եթե ենթակա կազմակերպությունը տարեկան կտրվածքով չէր ապահովում իրացվելիության բավարար մակարդակ,
- եթե ենթակա կազմակերպության գործունեությունը կարող էր հանգեցնել ոլորտում մենաշնորհային իրավիճակի առաջացման,
- ենթակա կազմակերպության սնանկության կամ սնանկության վտանգի առաջացման դեպքում և այլն:

Արդյունաբերական վերակառուցման ինստիտուտի ներդրումների մեծ մասն ուղղվում էր այն ոլորտներ, որտեղ մասնավոր հատվածի կազմակերպությունները ինքնուրույն չէին կարող ապահովել անհրաժեշտ ծավալի ներդրումներ: Տնտեսական գործունեության դիվերսիֆիկացիայի բարձր մակարդակը նպաստում էր ենթակա կազմակերպությունների մրցունակությանը ինչպես ներքին տնտեսությունում, այնպես էլ համաշխարհային շուկայում:

Արդյունաբերական վերակառուցման ինստիտուտի և Ազգային հիդրոկարբոնային գործակալության գործունեությունն արդյունավետորեն նպաստում էր տնտեսական զարգացմանը մինչև 1970-ական թթ. սկիզբը: Գլոբալացման գործընթացների արդյունքում հիմնականում ասիական երկրների կողմից մրցակցության բարձր մակարդակը, վառելիքահումքային ճգնաժամն ու համաշխարհային սպառման կրճատումը բացասական են անդրադառնում Իտալիայի տնտեսական աճի տեմպերի վրա: 1980-ական թթ. ընթացքում պետական և պետության մասնակցությամբ մի շարք կազմակերպությունների մասնավորեցումը հանգեցնում է տնտեսության կառուցվածքային և կոորդինացման խնդիրների առաջացման: Համաշխարհային շուկայի ազատականացման պայմաններում ասիական երկրների մրցակցային ճնշումներին դիմակայելու Իտալիայի հիմնական գործիք է դառնում ազգային արժույթի արժեզրկումը: Տնտեսության կայունության ապահովումն հիմնականում իրականացվում է պետական պարտքի ծա-

վալների մեծացմամբ: Իրավիճակն է՛լ ավելի է բարդանում խոշոր վերազգային կազմակերպությունների գործունեության ընդլայնման հետևանքով[1]:

Ինստիտուցիոնալ զարգացման ինստիտուտի գոյությունը դե յուրե դադարում է 2002 թ.: Ազգային հիդրոկարբոնային ընկերությունում պետության մասնաբաժինը մասնավորեցման գործընթացի արդյունքում աստիճանաբար նվազում է՝ 2017 թ. կազմելով ընդամենը 3%[2]:

Եզրակացություններ

Իտալիայի «տնտեսական հրաշքը» համընկնում է արևմտաեվրոպական երկրների «տնտեսական ոսկեդարի» ժամանակաշրջանին: Միևնույն ժամանակ տնտեսական աճի ապահովումն արդյունք է ոչ այնքան կապիտալ ներդրումների, որքան տնտեսության կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների, որոնցում առանցքային դերակատարում է ունեցել պետությունը: «Տնտեսական հրաշքի» կարևոր բաղկացուցիչ է հանդիսանում պետության էքստենսիվ արդյունաբերական քաղաքականությունը, որի իրականացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ հիմքերը ձևավորվել են 1946 թ. սկսած: Իտալիայի արդյունաբերական քաղաքականության առանձնահատկություններից է պետական և պետության մասնակցությամբ կազմակերպությունների՝ հատկապես Ինստիտուցիոնալ զարգացման ինստիտուտի և Ազգային հիդրոկարբոնային գործակալության գործունեությունը:

«Տնտեսական հրաշքի» իրագործումը մեծապես պայմանավորված է եղել Իտալիայի կառավարության՝ տնտեսությանն ակտիվ միջամտության քաղաքականությամբ: Պետությունը հանդես է եկել և՛ որպես կարգավորող մարմին, և՛ որպես տնտեսվարող սուբյեկտ: Պետական կազմակերպությունների գործունեությունը նպաստել է տնտեսության նկատմամբ վստահության մակարդակի բարձրացմանը, արդյունաբերության զարգացման տարեկան 8% աճին, տարածքային զարգացման անհամաչափության կրճատմանը, ենթակառուցվածքների զարգացմանը և այլն:

Իտալիայի «տնտեսական հրաշքը» պայմանավորող գործոնների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ արագացված տնտեսական աճի ապահովման համար պետության կողմից աճը խթանող միջավայրի ձևավորումը կարող է լինել անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման: Մասնավորապես՝ կապիտալատար և նորարարական ճյուղերի երկարաժամկետ աճը հնարավոր է ապահովել միայն պետական-մասնավոր համագործակցության ընդլայնման և պետության՝ տնտեսությանն առավել ակտիվ միջամտության մեխանիզմների կիրառման միջոցով:

---

[1] Renata Targetti Lenti , 2014, "The Italian Economy 1961–2010: From Economic ''Miracle'' to Decline", p. 187, Published at Springer Milan.

[2] https://www.eni.com/assets/documents/fact-sheet.pdf

Օգտագործված գրականության ցանկ

1. Seliger, Bernhard, 2010. "Theories of economic miracles," Discourses in Social Market Economy, 2010-01, Ordnungs Politisches Portal (OPO)., p. 3.
2. Osińska,Osinska M. (Ed.). (2019). “Economic Miracles in the European Economies.”, p. 21, doi:10.1007/978-3-030-05606-3.
3. Christian Grabas, 2014, “Planning the economic miracle? Industrial policy in Italy between boom and crisis, 1950-1975”, Humboldt University Berlin, Palgrave Macmillan, DOI: 10.1057/9781137329905.
4. Matteo Lucchesea, Leopoldo Nascia, Mario Pianta, 2016, “Industrial policy and technology in Italy”, Economia e Politica Industriale: Journal of Industrial and Business Economics.
5. Roberto Cafferata, 2010. "The enduring presence of groups and public enterprises in the Italian economy," Journal of Management & Governance, Springer;Accademia Italiana di Economia Aziendale (AIDEA), vol. 14(3), pages 199-220, August.
6. “The Institute for Industrial Reconstruction (I.R.I.)” Giuseppe Petrilli, President of the Institute, first published 1962.
7. Renata Targetti Lenti , 2014, “The Italian Economy 1961–2010: From Economic ‘‘Miracle’’ to Decline”, Published at Springer Milan.
8. Alexander Stevenson, 1951 ,“Italy's Economic Position And Prospects”, International Bank For Reconstruction And Development, Economic Department, Addendum to 16 The Creditworthiness of Italy· dated August 15, 1950, E 978.
9. Elizabeth Wiskemann, 1971, “Italy since 1945”, Palgrave Macmillan; 1st ed. 1971.

References

1. Seliger, Bernhard, 2010. "Theories of economic miracles," Discourses in Social Market Economy, 2010-01, Ordnungs Politisches Portal (OPO)., p. 3.
2. Osińska,Osinska M. (Ed.). (2019). “Economic Miracles in the European Economies.”, p. 21, doi:10.1007/978-3-030-05606-3.
3. Christian Grabas, 2014, “Planning the economic miracle? Industrial policy in Italy between boom and crisis, 1950-1975”, Humboldt University Berlin, Palgrave Macmillan, DOI: 10.1057/9781137329905.
4. Matteo Lucchesea, Leopoldo Nascia, Mario Pianta, 2016, “Industrial policy and technology in Italy”, Economia e Politica Industriale: Journal of Industrial and Business Economics.
5. Roberto Cafferata, 2010. "The enduring presence of groups and public enterprises in the Italian economy," Journal of Management & Governance, Springer;Accademia Italiana di Economia Aziendale (AIDEA), vol. 14(3), pages 199-220, August.
6. “The Institute for Industrial Reconstruction (I.R.I.)” Giuseppe Petrilli, President of the Institute, first published 1962.

7. Renata Targetti Lenti , 2014, "The Italian Economy 1961–2010: From Economic ''Miracle'' to Decline", Published at Springer Milan.
8. Alexander Stevenson, 1951 ,"Italy's Economic Position And Prospects", International Bank For Reconstruction And Development, Economic Department, Addendum to 16 The Creditworthiness of Italy· dated August 15, 1950, E 978.
9. Elizabeth Wiskemann, 1971, "Italy since 1945", Palgrave Macmillan; 1st ed. 1971.

Դավիթ Պետրոսյան
Աննա Հարությունյան

ԻՏԱԼԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համառոտագիր: Իտալիայի «տնտեսական հրաշքը» տարեգրվում է 1950-60-ական թթ., որի ընթացքում Իտալիային հաջողվեց ագրարային հետամնաց տնտեսությամբ երկրից վերածվել արդյունաբերական առաջատար երկրի: Այս անցումային շրջանում առանցքային դերակատարում է ունեցել Իտալիայի կառավարությունը իր էքստենսիվ արդյունաբերական քաղաքականությամբ: Հոդվածում ուսումնասիրվել են 1950-ական թթ. ընթացքում Իտալիայի կառավարության տնտեսական քաղաքականության առանձնահատկությունները, պետության դերը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում, տնտեսությանը միջամտության մեխանիզմների առանձնահատկությունները:

Բանալի բառեր. արդյունաբերական քաղաքականություն, արտադրողականություն, պետական միջամտություն, տնտեսական զարգացում, տնտեսական աճ

Давид Петросян
Анна Арутюнян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» ИТАЛИИ

Аннотация: «Экономическое чудо» Италии восходит к 1950-1960-м годам, в период трансформации Италии от отсталой аграрной в ведущую индустриальную страну. В данном переходном периоде правительство Италии сыграло ключевую роль за счет своей экстенсивной индустриальной политики. В статье рассматриваются особенности экономической политики правительства Италии в 1950-е годы, роль государства в процессе социально-экономического развития страны, а также особенности механизмов вмешательства в экономику.

Ключевые слова: промышленная политика, производительность, государственное вмешательство, экономическое развитие, экономический рост

David Petrosyan
Anna Harutyunyan

"THE ECONOMIC MIRACLE" OF ITALY

Abstract: The "economic miracle" of Italy dates back to the 1950-1960s, during which Italy succeeded in transforming to a leading industrial country from a country with a backward agrarian economy. In this transitional period the government of Italy played a key role due to its extensive industrial policy. The article reviews the peculiarities of the economic policy of the government of Italy during the 1950s, the role of the state in the process of social and economic development of the country and specifics of the mechanisms of intervention in the economy.

Keywords: industrial policy, productivity, state intervention, economic development, economic growth

Սևակ Թորգոմյան

ԻՌԼԱՆԴԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Ներածություն

Դեռևս Բրիտանական կայսրության կազմալուծման գործընթացի մեկնարկից տարիներ առաջ՝ 1922 թվականին, Իռլանդիա կղզու հարավային մասում՝ 70 հազար կմ² տարածքի վրա (կղզու ավելի քան 5/6 մասը), ձևավորվեց 3 մլն 70 հազար բնակչությամբ Իռլանդիայի Հանրապետությունը (այսուհետ՝ Իռլանդիա): Լինելով Եվրամիության լիիրավ անդամ պետություն՝ ըստ պետական կառուցվածքի և կառավարման ձևերի՝ Իռլանդիան ներկայում 4.85 մլն բնակչությամբ ունիտար, խորհրդարանական հանրապետություն է: Երկրի օրենսդրական մարմինը կազմված է ստորին և վերին պալատներից և որոշակի լիազորություններով ու պարտականություններով օժտված, ընտրված նախագահից: Կառավարության ղեկավարը վարչապետն է, որը ընտրվում է ստորին պալատի կողմից և նշանակվում է Նախագահի հրամանով: Վարչապետն իր հերթին ձևավորում է կառավարությունը, նշանակում ոլորտային նախարարների[1]: Տնտեսական կառուցվածքի և ցուցանիշների համատեքստում՝ Իռլանդիան բնութագրվում է գիտելիքահենք տնտեսությամբ, որտեղ 2018 թ. մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն (անվանական) կազմել է 77771[2] ԱՄՆ դոլար (ըստ ցուցանիշի՝ աշխարհում զբաղեցրել է 4-րդ հորիզոնականը), ապրանքների և ծառայությունների արտահանումը և ՕՈՒՆ-ները կազմել են ՀՆԱ-ի համապատասխանաբար՝ 122.3 %[3] (ըստ ցուցանիշի՝ զբաղեցրել է աշխարհում 5-րդ հորիզոնականը) և 16.87 %-ը, իսկ պետական պարտք – ՀՆԱ հարաբերակցությունը՝ 63.6 %[4]: Նույն տարում Իռլանդիայում աղքատության և սոցիալական մեկուսացման վտանգի տակ է գտնվել բնակչության 21.1 %-ը[5] (ԵՄ 28-ի համար այդ ցուցանիշը կազմել է 21.9 %), իսկ գործազրկության մակարդակը հաշվարկվել է 5.6 %:

Իռլանդիայի տնտեսության ձևավորումը և թռիչքաձև աճը (1922-2000)

Անկախացման հենց առաջին տարիներից Իռլանդիան հայտնվեց սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում, ինչի հանգուցային հանգամանքներից հայտնի տնտեսագետներն առանձնացնում են արտադրողականության ու կատարո-

---

[1] Իռլանդիայի Հանրապետության կառավարության պաշտոնական կայք, https://www.gov.ie/en/publication/d5bd8c-constitution-of-ireland/

[2] ԱՄՀ պաշտոնական կայք, https://www.imf.org/external/datamapper/NGDPDPC@WEO/OEMDC/ADVEC/WEOWORLD

[3] ՀԲ պաշտոնական կայք, https://data.worldbank.org/indicator/NE.EXP.GNFS.ZS?name_desc=false

[4] Եվրոստատի պաշտոնական կայք, https://ec.europa.eu/eurostat/en/web/products-datasets/-/GOV_10DD_EDPT1

[5] Եվրոստատի պաշտոնական կայք, https://appsso.eurostat.ec.europa.eu/nui/submitViewTableAction.do

ղականության աճի ինստիտուցիոնալ և մշակութային սահմանափակումները[1], 1932 թվականից որդեգրված ներմուծմանը փոխարինող (import-substituting) արդյունաբերականացման, իսկ ավելի ուշ՝ 1970-ականների նավթային ճգնաժամերին արձագանքելուն ուղղված հարկաբյուջետային, ապա նաև 1980-ականների հակասղաճային ձախողված քաղաքականությունները[2]: Որպես արդյունք՝ գործազրկության բարձր մակարդակն ու խրոնիկ բնույթը հանգեցրին արտագաղթողների մեծ հոսքի, և 1961 թվականին բնակչության քանակում անկախությունից ի վեր գրանցվեց պատմականորեն ամենացածր ցուցանիշը՝ 2 մլն 818 հազար մարդ (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. *ՀՆԱ-ի[3], բնակչության և աշխատուժի[4] տարեկան աճը Իռլանդիայում:*

1973 թվականին Իռլանդիան անդամակցեց Եվրոպական համայնքին (European Community), իսկ 6 տարի անց՝ նաև Եվրոպական դրամավարկային համակարգին (EMS): Այս կառույցներին անդամակցումը առաջ բերեց ազատ առևտրի անհամեմատ ավելի լայն ռեժիմ ու զգալի դրական փոփոխություններ, հատկապես գյուղատնտեսության և կրթական ոլորտներում: Ազատ առևտրի ռեժիմի շնորհիվ Իռլանդիայի արտահանման ծավալներն արագորեն աճեցին՝ ՀՆԱ-ի 38% -ից (1973 թ.) հասնելով նախ մինչև 62 % (1991 թ.), ապա նաև՝ 86 %-ի (1999 թ., տե՛ս գծապատկեր 2): Իռլանդիան վիթխարի օգուտներ քաղեց Եվրոպական համայնքի Գյուղատնտեսական ընդհանուր քաղաքականությունից (CAP), որը գյուղացիական տնտեսությունների սուբսիդավորման, արտահանման խթան-

[1] Lee J. J., Ireland: 1912-1985: Politics and Society, Cambridge: Cambridge University Press, 1989, p. 402.

[2] O'Grada Cormac and Kevin O'Rourke, "Irish Economic Growth 1950-1988." In N.F.R. crafts and G. Toniolo, eds. Economic Growth in Europe since 1945. Cambridge: Cambridge University Press, 1995, p. 5.

[3] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից Համաշխարհային բանկի տվյալների հիման վրա:

[4] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից ՏՀԶԿ տվյալների հիման վրա, OECD (2019), Labour force (indicator). doi: 10.1787/ef2e7159-en (Accessed on 22 December 2019):

մանն ուղղված և մի շարք այլ ծրագրերի միջոցով նպատակամիտված էր զարգացնելու գյուղատնտեսությունը՝ խթանելով աշխատատեղերը անմիջապես գյուղատնտեսությունում, գյուղատնտեսական սննդի արդյունաբերությունում և հարակից այլ ոլորտներում:



Գծապատկեր 2. *Իռլանդիայի արտահանման տարեկան աճը և արտահանման[1] ու ՕՈՒՆ-ների մասնաբաժինը ՀՆԱ-ում[2]:*

Այս շրջանում Իռլանդիան, լինելով գյուղատնտեսական ապրանքների զուտ արտահանող և գյուղատնտեսությանը բաժին ընկնող զբաղվածների բարձր տեսակարար կշռով բնութագրվող երկիր (1973, 1981, 1988, 1993 թվականներին գյուղատնտեսությանը, համապատասխանորեն, բաժին է ընկել զբաղվածների մոտ 24, 14,7, 16 և 13 %-ը), հայտնվեց շահեկան ու նպաստավոր վիճակում (տե՛ս գծապատկեր 3): Վերոնշյալից զատ, միևնույն ժամանակաշրջանում Իռլանդիան զգալի ռեսուրսներ ստացավ նաև այնպիսի հիմնադրամներից, ինչպիսիք էին աղքատ տարածաշրջանների աջակցմանն ուղղված Եվրոպական տարածաշրջանային զարգացման հիմնադրամը (ERDF), Եվրոպական սոցիալական հիմնադրամը (ESF), տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված հիմնադրամը և այլն:

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից ՀԲ տվյալների հիման վրա, https://data.worldbank.org/indicator/NE.EXP.GNFS.ZS?most_recent_year_desc=false

[2] https://www.theglobaleconomy.com/Ireland/Foreign_Direct_Investment/



Գծապատկեր 3[1]. *Գործազրկության և զբաղվածության մակարդակների շարժընթացը, զբաղվածությունն ըստ սեռի և ոլորտների:*

Այդուամենայնիվ, չնայած վերոնշյալ հանգամանքներին՝ թե՛ գործազրկությունը և թե՛ արտագաղթը դեռևս շարունակում էին մնալ որպես գերակա խնդիրներ: 1980-ականների կեսերին Իռլանդիայի տնտեսությունում նշմարվեցին ճգնաժամային միտումներ, իսկ երբ 1987 թվականին արտաքին պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը կազմեց 120 %, լայն հնչեղություն ստացան հնարավոր դեֆոլտի վերաբերյալ քննարկումներն ու բանավեճերը[2]: Չնայած սոցիալական լարվածությանն ու ձևավորված հասարակական տրամադրություններին, իսկ ավելի ստույգ՝ հասարակական դժգոհությունների մեծ ալիքին՝ ձեռք բերվեց կտրուկ բարեփոխումներ կատարելու վերաբերյալ քաղաքական կոնսենսուս: Առաջ քաշված բարեփոխումների առանցքը կազմում էր սոցիալական պակտը՝ «Ազգային վերականգնման ծրագիրը (1987-1990)», որը, հարկաբյուջետային քաղաքականության բարեփոխումից զատ, ուղղված էր գործազրկության մակարդակի, արտագաղթի ահագնացող տեմպերի, աշխատանքային հարաբերությունների և, ընդհանուր առմամբ, վատթարացող կենսամակարդակի բարելավմանը: Հատկանշական է, որ բարեփոխումների ընթացքը զուգադիպեց 1980-ականների վերջին համաշխարհային մակարդակում մի շարք գործոնների փոփոխությունների հետ: Մասնավորաբար, արդյունաբերության կառուցվածքում տեղի ունեցան խոշոր փոփոխություններ, քանզի վերազգային ընկերությունները

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից ՏՀԶԿ և ՀԲ տվյալների հիման վրա, https://stats.oecd.org/index.aspx?queryid=54741# , https://data.worldbank.org/indicator/SL.SRV.EMPL.ZS

[2] F. Desmond McCarthy, The Irish Experience, Policy research working paper 2736, The World Bank, 2001, p. 7.

զանգվածային արտադրության մոդելից անցում կատարեցին ճապոնական մոդելին՝ ավելի մեծ ճկունությանը: Գիտատեխնիկական նոր նվաճումները, տեղեկատվական տեխնոլոգիաներն ու կապերի ստանդարտացումը իջեցրին տրանսպորտի և կապի ծախսերը, ինչով էլ կտրուկ չեզոքացավ Իռլանդիայի՝ «կղզի»–տնտեսություն լինելու աշխարհագրական թերությունը:



Գծապատկեր 4[1]. *Հարկային դրույքաչափերի շարժընթացը և հարկային եկամուտների մասնաբաժինը ՀՆԱ-ում:*

Դեռևս տարիներ առաջ հիմնադրված և օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման և խթանման նպատակ հետապնդող «Արդյունաբերական զարգացման մարմին (The Industrial Development Authority, IDA)» պետական ոչ առևտրային կազմակերպությունը արագորեն ընկալեց և արձագանքեց վերոնշյալ միջազգային միտումներին և կարողացավ իռլանդական շուկա ներգրավել տեղեկատվական տեխնոլոգիաների, քիմիական արդյունաբերության և դեղագործության ոլորտներում գործունեություն ծավալող և համաշխարհային մակարդակում ճանաչված և սրընթաց աճ գրանցող մի շարք ընկերությունների, ինչպիսիք էին Intel-ը, Microsoft-ը և այլն: Ի տարբերություն տեղական ընկերությունների՝ վերազգային կազմակերպությունները կարողացան արագ կերպով արձագանքել բարելավված տնտեսական պայմաններին և հարկային բարենպաստ քաղաքականությանը (թեթև արդյունաբերության (1981) և ֆինանսական ծառայությունների (1987) համար սահմանվեց 10% հարկային դրույքաչափ, տե՛ս գծապատկեր 4):

Անմիջական արդյունքները բավականին ուշագրավ են: Արդեն 1990 թվականին գրանցվեց ՀՆԱ 8,5 տոկոսանոց աճ (տե՛ս գծապատկեր 1), ընդամենը 4 տարի առաջ գրանցված ՀԱԱ-ի 1,8 տոկոսը կազմող առաջնային դեֆիցիտը

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից ՏՀԶԿ տվյալների հիման վրա, https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=REV#

վերածվեց ՀԱԱ-ի 6.9 տոկոսի չափով հավելուրդի, միևնույն ժամանակահատվածում արտահանման ծավալներն աճեցին 48 %-ով[1], իսկ ինչ վերաբերում է գործազրկության մակարդակին, ապա վերջինս թեկուզև զգալիորեն կրճատվեց, սակայն մինչև 1996 թ. շարունակում էր մնալ երկնիշ (տե՛ս գծապատկեր 3): Տասնամյակների հեռավորությունից հետհայացք գցելով՝ կարելի է նշել, որ ըստ էության 90-ականների առաջին կեսին ձևավորվել էին բոլոր անհրաժեշտ նախապայմանները տնտեսական կայուն և թռիչքաձև աճի համար, որոնցից կարելի է առանձնացնել.

- աշխատաշուկայում կանանց մասնակցության խթանումն ու մասնաբաժնի արագ աճը: 1973-ին զբաղվածների քանակում կանանց մասնաբաժինը կազմում էր ընդամենը 27 % (287.800 կին), իսկ 2000 թվականին մասնաբաժինը գերազանցեց 50 %-ը (տե՛ս գծապատկեր 3),
- տնտեսական աճի բարձր տեմպերը և դրա աստիճանական տարածումը տնտեսության այլ ճյուղերում, հատկապես ծառայությունների ոլորտում,
- առողջության և կրթության ոլորտում պետական ծախսերի աճը (տե՛ս գծապատկեր 5),
- զբաղվածության ակտիվ քաղաքականությունը և Եվրագոտու մեջ ընդգրված միակ անգլալեզու, ինչպես նաև կրթված, որակյալ և համեմատաբար էժան աշխատուժի առկայությունը (տե՛ս գծապատկեր 6): Բանն այն է, որ բարձր և շարունակական գործազրկության ու արտագաղթի ժամանակաշրջանում նրանց համար, ովքեր նախընտրեցին չարտագաղթել, աշխատանքի տեղավորման հիմնական հնարավորություններ առաջարկողներից մեկը դարձավ պետական համակարգը: Թափուր աշխատատեղերի համալրումը իրականացվեց խիստ մրցութային քննություններով, ինչն էլ հանգեցրեց կայուն, տեխնիկապես իրավասու և կոմպետենտ կադրային բազայի ձևավորմանը, ինչը հետագայում վճռական դեր խաղաց հաջորդող քաղաքականության նախաձեռնությունների իրականացման գործում[2],
- Եվրամիության ինստիտուցիոնալ, տեխնիկական և ֆինանսական լայնածավալ աջակցությունը, հարկային բեռի համընթաց նվազեցումը, ԱՄՆ տարածքում իռլանդական սփյուռքի ուժեղ ազդեցության շնորհիվ ԱՄՆ-ի հետ սերտ կապերը, ներդրումների ներգրավմանն ուղղված պետական քաղաքականությունը,
- ներգաղթը. 90-ական թվականները բնութագրվեցին ներգաղթի աննախադեպ տեմպերով: 1990 թվականից ի վեր բնակչության քանակում արձանագրվեց կայուն և սրընթաց աճ՝ 14 տարվա ընթացքում 3.5 մլն-ից հասնելով և հատելով 4 մլն-ի շեմը (տե՛ս գծապատկեր 1): Հատկանշական է, որ հայրենադարձ իռլանդացիներն իրենց հետ բերեցին միջազգային առաջավոր

[1] F. Desmond McCarthy, The Irish Experience, Policy research working paper 2736, The World Bank, 2001, p. 15.

[2] F. Desmond McCarthy, The Irish Experience, Policy research working paper 2736, The World Bank, 2001, p. 6.

փորձ, տեխնոլոգիական ու ձեռնարկատիրական զարգացած հմտություններ և բավականին լավ հարմարվեցին երկրում ձևավորված դինամիկ տնտեսության պահանջներին:



Գծապատկեր 5[1]. *Կրթության ոլորտում կատարված պետական ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում և ընդհանուր պետական ծախսերում:*

«**Կելտական վագրի**» **ժամանակաշրջան** (1995-2000): Կայուն և բարձր տնտեսական աճը (1995-2000 թթ. Իռլանդիայի ՀՆԱ-ն միջինում աճեց 9.4 %-ով) հանգեցրեց զբաղվածության աճին և գործազրկության կտրուկ անկմանը (տե՛ս գծապատկերներ 1 և 2): Զբաղվածության աճի գերակշիռ մասը բաժին ընկավ ծառայությունների ոլորտին, որտեղ զբաղվածների թվաքանակը 1973-2003 թթ. ընթացքում աճել է 700 հազարով՝ կազմելով մոտ 1,2 միլիոն[2] կամ զբաղվածների երկու երրորդը: 2001 թվականին Իռլանդիայում գրանցվեց գործազրկության մակարդակի պատմականորեն ամենացածր մակարդակը՝ 4.2 %:

Արդեն 1995 թվականին Իռլանդիայի ներդրումային և արտահանման կառուցվածքներում ի հայտ եկան նշանակալի փոփոխություններ: Այսպես՝ 1960-ականների սկզբին գյուղատնտեսության ոլորտի գերիշխանությունը արտացոլվում էր արտահանման ցուցանիշների մեջ, ի մասնավորի՝ արտահանման ավելի քան 60 տոկոսը բաղկացած էր սննդամթերքներից, երբ արտադրված ապրանքների մասնաբաժինը կազմում էր ընդամենը 20 տոկոս: 1995 թ. նշյալ

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների հիման վրա, http://data.uis.unesco.org/Index.aspx?queryid=183

[2] Central Statistics Office Ireland, Ireland and the EU 1973-2003; Economic and Social Change, https://www.cso.ie/en/media/csoie/releasespublications/documents/statisticalyearbook/2004/ireland&theeu.pdf

հարաբերակցությունը հիմնովին փոխվել էր՝ 16% սնունդ՝ արտադրված ապրանքների 64% -ի դիմաց[1]:



Գծապատկեր 6[2]. *Հիմնական, երկրորդական և երրորդական կրթություն ունեցողների մասնաբաժինը համապատասխան տարիքային խմբերում:*

Այսպես՝ տնտեսական կայուն և թռիչքաձև աճի պայմաններում Իռլանդիայի Հանրապետությունը գյուղատնտեսության վրա հիմնված տնտեսությունից վերածվեց գիտելիքահենք տնտեսության՝ կենտրոնացած լինելով բարձր տեխնոլոգիաների, բնական գիտությունների, ֆինանսական ծառայությունների վրա: Ավելին՝ արդեն 1998 թվականին Իռլանդիան ծրագրաշարերի (software) արտահանման ցուցանիշով առաջ անցավ անգամ նախորդող տարիների աշխարհի առաջատարից՝ ԱՄՆ-ից. Իռլանդիայում գործունեություն ծավալող ընկերությունները արտահանել են 3.29 միլիարդ դոլար արժողությամբ ծրագրաշար՝ ԱՄՆ-ում գործող ընկերությունների արտահանած 2,96 միլիարդ դոլարի դիմաց: 2000 թվականին արտահանումը կազմեց ՀՆԱ-ի 85%, երբ ԵՄ-28-ի համար այդ ցուցանիշը կազմել էր ընդամենը 31% (2014 թվականին այս ցուցանիշները կազմել են համապատասխանորեն 113% և 44%)[3]: Արտահանման կառուցվածքը ներկայացնող աղյուսակ 1-ից ակնհայտ է դառնում, որ Իռլանդիայի տնտեսության և արտահանման շարժիչ ուժերն են եղել քիմիական արդյունաբերությունն ու դեղագործությունը, ՏՏ ոլորտը և բիզնես ու ֆինանսական ծառայությունները:

[1] Kieran Anthony Kennedy, Thomas Giblin and Deirdre McHugh, The economic development of Ireland in the twentieth century, Routledge, 1988, p. 58.

[2] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից ՏՀԶԿ տվյալների հիման վրա:

[3] David Purdue and Hansi Huang, Irish Exports: The facts, the fiction and the risks, National Treasury Management Agency, NTMA Economics, Dublin, 2017, p. 3.

Աղյուսակ 1[1]

***Իռլանդիայի և աշխարհի արտահանման կառուցվածքները** 2000 **և** 2013 **թթ**.*

Արտահանում				
	2000		2013	
	Աշխարհ	Իռլանդիա	Աշխարհ	Իռլանդիա
Ապրանքներ, որից՝	79.3	78	78.8	49.9
Գյուղատնտեսական և սնունդ	9	9.21	9.9	12.3
Քիմիական և դեղագործական	9.6	34.5	11.4	59
Գրասենյակային և էլեկտրական	15.8	34.5	9.9	6.5
Այլ	65.5	21.9	68.8	22.9
Ծառայություններ, որից՝	20.7	22	21.2	50.1
Համակարգչային և տեղեկատվական	5.3	34.5	8.6	41.7
Ապահովագրություն և այլ ֆինանսական	8.2	19	9.3	16.7
Բիզնես ծառայություններ	21.4	17.9	26.4	28.6
Այլ	66.1	28.7	55.7	13

Իռլանդիայի տնտեսությունը տնտեսական «պղպջակի» և հետճգնաժամային պայմաններում (2000-2018)

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2001 թվականից ի վեր ՀՆԱ աճի տեմպերում գրանցվեց նվազման միտում, ինչը պայմանավորված էր 1990-ականների սրընթաց աճից հետո համաշխարհային մակարդակում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ներդրումների կտրուկ անկմամբ[2], և ինչով էլ երևան եկան վերազգային կազմակերպություններից (վերջիններս ապահովում էին արտահանման ծավալների ավելի քան 80 %-ը[3]), օտարերկրյա ներդրումներից և արտահանումից խիստ կախվածություն ունեցող տնտեսության թերություններն ու դրանից բխող խնդիրները:

[1] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից Իռլանդիայի Կենտրոնական բանկի տվյալների հիման վրա, Stephen Byrne and Martin O'Brien, The Changing Nature of Irish Exports: Context, Causes and Consequences, Quarterly Bulletin Articles, Central Bank of Ireland, Dublin, 2015, p. 61.

[2] Mark Doms, The Boom and Bust in Information Technology Investment, FRBSF Economic Review 2004, pp.7-9, http://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.204.3835&rep=rep1&type=pdf

[3] Roger Baxter and Arch G. Woodside, Interfirm Business-to-Business Networks: Theory, Strategy and Behavior, Vol. 17, Emerald Group Publishing Limited, Bingley, 2011, p. 205.



Գծապատկեր 7[1]. *Շինարարության և անշարժ գույքի հետ կապված գործարքների ավելացված արժեքի մասնաբաժինը համախառն ավելացված արժեքում:*

Այդուամենայնիվ, չնայած վերոնշյալ հանգամանքներին՝ Իռլանդիայի ՀՆԱ-ում շարունակվում էր գրանցվել կայուն աճ (2001-2007 թթ. ՀՆԱ-ն միջինում աճեց 5.9 %-ով), ինչը գերազանցապես պայմանավորված էր անշարժ գույքի շուկայում, իսկ ավելի կոնկրետ՝ բնակարանային շուկայում տեղի ունեցող զարգացումներով: Վերոնշյալը, մակրոտնտեսական մի շարք այլ ցուցանիշներից զատ, հաստատում են հետևյալ կուռ փաստարկները.

- 2000-2008 թթ. ընթացքում համախառն ավելացված արժեքում շեշտակիորեն աճել է շինարարության և անշարժ գույքի հետ կապված գործարքների ավելացված արժեքի մասնաբաժինը՝ 2006 թվականին կազմելով 17.54 % (որից՝ շինարարություն՝ 10.7%, անշարժ գույք՝ 6.84 % (տե՛ս գծապատկեր 7)):
- Միևնույն ժամանակահատվածում զգալի աճ գրանցվեց նաև շինարարության ճյուղում և անշարժ գույքի շուկայում զբաղվածների մասնաբաժնում, ինչը 2006 և 2007 թ. կազմել է 13.2 % (տե՛ս գծապատկեր 8):

Այսպես՝ LTV (վարկ հարաբերած գրավի արժեք) և LTI (վարկ հարաբերած եկամուտ) գործակիցների շարունակական բարձրացումը, հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների նվազեցումը և տրամադրման պայմանների մեղմացումն ու անշարժ գույքի գների դինամիկ աճը հանգեցրին անշարժ գույքի շուկայի աշխուժացմանն ու այդ շուկայում կատարվող գործողությունների «թեժացմանը»: Եթե մինչ 2005 թ. առաջին անգամ գնորդների միայն 50 %-ին էին տրամադրվել 90 %-ը գերազանցող LTV գործակիցներով հիփոթեքային վարկեր, ապա 2005 թվականից հետո առաջին անգամ գնորդների համար նախատեսված վարկերի ավելի քան 66 %-ը տրամադրվել էր 90 %-ը գերազանցող LTV գործակիցներով, իսկ 33 %-ը՝ 100 %-ը գերազանցող գործակիցներով[2]: 2009 թ., երբ LTV գործակիցը գտնվում էր իր բարձրության գագաթնակետին, տարեկան

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից ՏՀԶԿ տվյալների հիման վրա, https://data.oecd.org/natincome/value-added-by-activity.htm

[2] Dirk Schoenmaker, Stabilising and Healing the Irish Banking System: Policy Lessons, Paper prepared for the CBI-CEPR-IMF Conference, Dublin, 2015, p. 8.

LTV-ի միջին գործակիցը առաջնային շուկայում հաշվարկվել է 94.2%, իսկ երկրորդայինում՝ 85 %:



Գծապատկեր 8[1]. *Անշարժ գույքի շուկայում զբաղվածների տեսակարար կշիռը Իռլանդիայում:*

Հիփոթեքային վարկերի ծավալների աճի մասին պատկերացում կազմելու համար բավական է նշել խոսուն այն փաստը, որ ընդամենը 4 տարվա ընթացքում հիփոթեքային վարկային բեռը գրեթե կրկնապատկվեց՝ 2016 թ. կազմելով ՀՆԱ-ի 64 %-ը (տե՛ս գծապատկեր 9):

2000-2012 թթ. ընթացքում բնակարանային ֆոնդի մակերեսը աճեց մոտ 1 մլն կմ²-ով, միայն 2005-2007 ժամանակահատվածում շահագործման հանձնվեցին 80 հազար նոր բնակելի միավորներ (տե՛ս գծապատկեր 10): 1995 թվականից մինչև 2007 թվականը բնակարանների անվանական գները աճեցին տարեկան միջինում մոտ 12 %-ով (տե՛ս գծապատկեր 10):

2007 թվականին, երբ սկիզբ առավ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, և Իռլանդիայի բնակելի անշարժ գույքի գներում գրանցվեց 7.5 %-անոց շեշտակի անկում, այլևս հաստատվեցին ԱՄՀ-ի, ՏՀԶԿ-ի, մի շարք տնտեսագետների և այլ կառույցների կողմից տարիներ առաջ կատարված կանխագուշակումներն ու դիտարկումներն առ այն, որ անշարժ գույքի գները գերագնահատվել են, շինարարությունը կրել է սպեկուլյատիվ բնույթ, իսկ բանկային համակարգն ու ֆինանսական ինստիտուտները «էժան փողի» քաղաքականության, թույլ վերահսկողության պայմաններում գերֆինանսավորել են անշարժ գույքի շուկան՝ վարկային և անշարժ գույքի շուկաներում գոյացնելով «պղպջակ» (housing bubble)[2]:

---

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից Եվրոստատի տվյալների հիման վրա, https://appsso.eurostat.ec.europa.eu/nui/show.do?dataset=nama_10_a10&lang=en

[2] ԱՄՀ պաշտոնական էլեկտրոնային կայք, https://www.bookstore.imf.org/books/title/ireland-staff-report-for-the-2000-article-iv-consultation



Գծապատկեր 9[1]. *Չմարված հիփոթեքային վարկերի և արժեթղթերի թողարկման ծավալների շարժընթացը:*

Շինարարական «բումի» հետևանքները խիստ բացասական ազդեցություն ունեցան երկրի տնտեսության վրա: 2007-2012 թվականների ընթացքում բնակարանների անվանական գները նվազեցին 50 տոկոսով: Հաշվի առնելով, որ հիփոթեքային վարկերի ընդհանուր ծավալի գրեթե 40 տոկոսը տրամադրվել էր 2004-ից մինչև 2007 թ. ժամանակահատվածում, երբ գները գտնվում էին իրենց բարձրագույն մակարդակում, հետագա կտրուկ անկումը, ըստ էության, հանգեցրեց մի իրավիճակի, երբ բազմաթիվ տնային տնտեսությունների մոտ ձևավորվեց բացասական կապիտալ[2]: Բանկային համակարգի ճգնաժամը հանգեցրեց նրան, որ բազմաթիվ բանկեր և ֆինանսական ինստիտուտներ հայտնվեցին սնանկացման եզրին:

Ստեղծված իրավիճակը մեղմելու նպատակով Իռլանդիան ստիպված էր վարել դեպի բանկեր «կանխիկ փողի ներարկման» քաղաքականությունը, իսկ 2009 թվականին պետականացվեց Իռլանդիայի խոշորագույն բանկերից մեկը՝ Anglo Irish բանկը: 2008 և 2009 թվականներին ՀՆԱ-ի 3.94 և 4.63 տոկոսանոց անկումը զուգորդվում էր գործազրկության մակարդակի զգալի աճով, և մինչև 2010 թվականի վերջն ընկած ժամանակահատվածում, միասին վերցրած, ավելի քան 300,000 մարդ (յուրաքանչյուր յոթ աշխատողից մեկը) դարձան գործա-

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից Եվրոպական հիփոթեքային ֆեդերացիայի հրատարակած տարեգրքերի տվյալների հիման վրա, https://hypo.org/ecbc/publications/hypostat/

[2] Բացասական կապիտալը ձևավորվում է այն ժամանակ, երբ ակտիվի արժեքը (շուկայական գինը) ընկնում է և դառնում դրա ձեռքբերման համար ստացված վարկի չմարված մնացորդից ավելի ցածր:

զուրկ[1], ավելին՝ 2009-2016 թթ. գրանցվեցին գործազրկության մակարդակի երկնիշ ցուցանիշներ:



Գծապատկեր 10[2]. *Հիփոթեքային շուկայի ցուցանիշները և բնակելի անշարժ գույքի գների տարեկան աճը Իռլանդիայում:*

Այսպիսով՝ կարելի է եզրահանգել, որ Իռլանդիայում անշարժ գույքի գների աճը նախորդվել է հիփոթեքային վարկավորման, ռիսկային և թույլ վերահսկելի շինարարական նախագծերի ֆինանսավորման ծավալների ընդլայնումով: Անշարժ գույքի շուկայի ֆինանսավորմանը բանկային ոլորտի անվերահսկելի կերպով մասնակցությամբ և անշարժ գույքի գների սրընթաց անկմամբ պայմանավորված՝ բանկային համակարգում առաջ են եկել այնպիսի խնդիրներ, որոնց արդյունքում ոլորտը հայտնվել է ճգնաժամային իրավիճակում: Բանկային համակարգում ծայր առած ճգնաժամը իր հերթին նպաստել է անշարժ գույքի գների հետագա անկմանը՝ է՛լ ավելի խորացնելով ճգնաժամը:

Նպատակ ունենալով ընդլայնել վերահսկողական գործառույթները՝ 2014 թվականին Իռլանդիայի կենտրոնական բանկը սահմանեց LTV և LTI թույլատրելի առավելագույն գործակիցները (ուժի մեջ է մտել 2015 թ.)[3]: Կառավարության կողմից վերջին տարիներին հրապարակվել են բազմաթիվ ռազմավարական փաստաթղթեր, որոնք պարունակում են անշարժ գույքի շուկայի առողջացմանը և զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ:

Հետճգնաժամյան միջոցառումներից ուշագրավ է հատկապես 2013 թ. REIT

---

[1] International Monetary Fund, Ireland: From Tiger to Phoenix, https://www.imf.org/en/Countries/IRL/ireland-from-tiger-to-phoenix

[2] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից Եվրոպական հիփոթեքային ֆեդերացիայի հրատարակած տարեգրքերի տվյալների հիման վրա, https://hypo.org/ecbc/publications/hypostat/

[3] Central Bank of Ireland, Review of residential mortgage lending requirements, 2016, https://www.centralbank.ie/docs/default-source/financial-system/financial-stability/macroprudential-policy/policy-documents/2016-review-of-residential-mortgage-lending-requirements.pdf?sfvrsn=12&fbclid=IwAR0SSBLWCIfcazJmZUiplYXBHTXXFu1ps860s7FJsCBWvqP35Exh7CFrOVs

(real estate investment trust) տեսակի անշարժ գույքի ներդրումային ֆոնդի գործարկման համար անհրաժեշտ օրենսդրական պայմանների ներդրումը՝ նպատակ ունենալով օգտագործել վերջինիս գործառնության առավելությունները, ինչպիսիք են՝ անշարժ գույքի շուկայի ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիան, եկամուտների և հարստության ապակենտրոնացումը, կոլեկտիվ ներդրումային համակարգի և ներառական տնտեսության աճի խթանումը[1]: Հիրավի, գծապատկեր 11-ից ակնհայտ է դառնում, որ, ըստ էության, շինարարության ճյուղի և անշարժ գույքի շուկայի վերելքի փուլում բնակչության եկամուտների ապաբևեռացման փոխարեն տեղի է ունեցել դրանց հետագա բևեռացում:



Գծապատկեր 11[2]. *Ջինիի գործակիցը Իռլանդիայում:*

Խոսելով REIT-ի մասին՝ հարկ է նշել, որ առաջին անգամ՝ դեռևս 1960 թվականին, վերջինս ներդրվել է ԱՄՆ նախագահ Դուայթ Էյզենհաուերի ստորագրած օրինագծով, ինչի շնորհիվ նախկինում միայն ֆինանսական խոշոր միջնորդներին և բնակչության հարուստ խավին հասանելի անշարժ գույքում ներդրումները մատչելի դարձան նաև փոքր ներդրողների համար[3]: 2016 թվականի դրությամբ ԱՄՆ-ի բնակչության մոտավորապես 24%-ը ունեցել է REIT բաժնետոմսեր, և բոլոր REIT-ների ընդհանուր համախառն ակտիվները կազմել են 3 տրիլիոն դոլար[4]: Իռլանդիայում REIT-ը հանդես է գալիս որպես կազմակերպություն, որի հիմնական նպատակը հիփոթեքային արժեթղթերի և տարբեր գործառնական նշանակության (կամ որոշակի գործառնական նշանակության) անշարժ գույքի օբյեկտների ձեռքբերումը, զարգացումը և կառավարումն է:

[1] Department of Finance of Irish Government, REITs, IREFs and s.110 companies as they invest in the Irish property market, Tax Strategy Group, 2019, p.p. 9-15.
[2] Եվրոստատ, https://appsso.eurostat.ec.europa.eu/nui/submitViewTableAction.do
[3] https://www.reit.com/what-reit/history-reits
[4] https://www.reit.com/data-research

Վերադառնալով Հայաստանյան մերօրյա իրականություն՝ պետք է նշել, որ հետհեղափոխական շրջանում ՀՀ անշարժ գույքի գների դինամիկ աճը և այդ շուկայի միտումները, ինչպես նաև հիփոթեքային վարկավորման տոկոսադրույքների, կանխավճարների նվազեցումն ու պայմանների մեղմացումը հիմք են տալիս փաստելու, որ ՀՀ կառավարության կողմից վարվում է բնակարանային շինարարությունը և հիփոթեքային վարկերը խթանող քաղաքականություն: Ելնելով ՀՀ բնակարանային ֆոնդի իրավիճակի վերլուծությունից՝ պետք է փաստել, որ նշված քաղաքականությունը այժմեական և արդարացված է՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները.

1. 2017 թվականի դրությամբ հանրապետության մեկ բնակչի ապահովվածությունը բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսով կազմել է 31.9 քառակուսի մետր, ընդ որում՝ քաղաքաբնակինը՝ 28.3, գյուղաբնակինը՝ 38.3 քառակուսի մետր[1]: Ըստ Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ ՄԱԿ ԵՏՀ)՝ բնակչության բնակարանային ապահովվածության այսպիսի բարձր մակարդակն (այս ցուցանիշը էականորեն բարձր է, քան Ռուսաստանում ու Ուկրանիայում և շատ մոտ է գտնվում եվրոպական երկրների ցուցանիշներին) ավելի շատ պայմանավորված է եղել արտագաղթով, քան բնակարանային շինարարության բավարար աճով: Ըստ ՄԱԿ ԵՏՀ-ի՝ բնակարանային ապահովվածության իրական վիճակը արտացոլվում է, երբ կիրարկվում է վիճակագրության այլ մեթոդաբանություն, այն է՝ «1000 բնակչի հաշվով կացարանների թիվ» ցուցանիշը, որով Հայաստանը էականորեն զիջում է թե՛ Ռուսաստանին ու Ուկրանիային և թե՛ եվրոպական մի շարք երկրների[2]: Ելնելով վերոնշյալից՝ կարելի է եզրահանգել, որ իրականում ՀՀ-ում առկա է զգալի բնակարանային կարիք:

2. Ըստ արտակարգ իրավիճակների նախարարության եզրակացության՝ սեյսմակայունության զգալիորեն ցածր մակարդակ ունեն[3].

- քարե պատերով կառուցված 4-ից 6 հարկանի շենքերի 30%-ը,
- հավաքովի պանելային եղանակով կառուցված ինը հարկանի շենքերի 15 %-ը,
- հարկերի բարձրացման եղանակով կառուցված 12-ից 16 հարկանի շենքերի 7 %-ը:

Մոտավոր հաշվարկներով ներկայում ԲԲՇ-ների 50 տոկոսը կա՛մ ընդհանրապես ենթակա են քանդման, կա՛մ վերանորոգման ու սեյսմակայունության մակարդակի բարձրացման կարիք ունեն: Ավելին՝ բնակարանային ֆոնդի մեծ մասը բաղկացած է սովետական դարաշրջանի ԲԲՇ-ներից, որոնցից հատկապես 70 և ավելի տարիներ առաջ կառուցված «հին» ֆոնդի և արդյունաբերական տնաշինության առաջին սերնդի («խրուշչովյան» 60-ական թթ.) տների շի-

[1] ՀՀ վիճակագրական կոմիտե, https://www.armstat.am/file/doc/99507878.pdf

[2] United Nations Economic Commision for Europe, Country Profiles on Housing and Land Management Republic of Armenia, United Nations, 2017, p.34.

[3] United Nations Economic Commision for Europe, Country Profiles on Housing and Land Management Republic of Armenia, United Nations, 2017, p.21.

նարարության, ձայնամեկուսացման և ջերմամեկուսացման որակը չափազանց ցածր է, իսկ էներգաարդյունավետությունը ընդհանրապես հաշվի չի առնվել: Հետևաբար կարելի է պնդել, որ ներկայում ՀՀ-ում բնակարանային ֆոնդի թարմացումը առաջնային կարևորության խնդիր է:

Հայաստանում, ի տարբերություն բազմաթիվ զարգացած և զարգացող երկրների, անշարժ գույքի շուկայի սուբյեկտային կառուցվածքում բացակայում են անշարժ գույքի ֆոնդային շուկայի մասնակիցները և, հետևաբար, անշարժ գույքի շուկայում զգալիորեն գերակշռում են ուղղակի ներդրումները, որոնք բնութագրվում են ցածր լիկվիդայնությամբ, անբաժանելիությամբ, կառավարման անհրաժեշտությամբ ու բարձր կապիտալատարությամբ, ինչը խոչընդոտում է անշարժ գույքի շուկայում բնակչության լայն զանգվածների ներգրավմանը: Ներկայացված իրավիճակը, որպես կանոն, եթե ոչ միջնաժամկետում, ապա երկարաժամկետում հանգեցնում է եկամուտների ու հարստության հետագա բևեռացմանը:

Թվում է, թե օրինաչափ է, որ շուկայի մասնակիցների կազմի քանակական ու որակական զարգացումները չեն կարող ընթանալ գործընթացներից արագ, որոնք տեղի են ունենում անշարժ գույքի շուկայում և իրական կյանքում: Այդուհանդերձ, անշարժ գույքի ներդրումային ֆոնդերի ներդրման և գործարկման միջազգային փորձը այլ բան է ցույց տալիս: Մասնավորապես՝ REIT-ը, Իռլանդիայից և զարգացած տնտեսական համակարգ ունեցող տասնյակ պետություններից զատ, հաջողությամբ ներդրվեց և արագորեն յուրացվեց անգամ թույլ զարգացած անշարժ գույքի և արժեթղթերի շուկա[1] ունեցող զարգացող երկրներում (ցածր-միջին եկամուտների տնտեսություն), ինչպիսիք են Քենիան, Նիգերիան և Պակիստանը[2]:

ՀՀ անկախությունից ի վեր բնակչության կատարած խնայողությունները բացառապես ուղղվում են ֆինանսական հաստատություններից ՀՀ-ում գրեթե միակ ներկայացուցիչ՝ բանկային համակարգ: Ավելի պատկերավոր դարձնելու համար նշենք, որ 2017 թվականին բանկային համակարգին բաժին է ընկել ֆինանսական համակարգի ընդհանուր ակտիվների 85.5%-ը, որին հաջորդում են վարկային կազմակերպությունները (9.3%), ապահովագրական ընկերությունները (1.3 %), ներդրումային ընկերությունները (1%), կենսաթոշակային ֆոնդերը (1%) և այլ ֆինանսական կազմակերպություններ (0.9%)[3]:

Ֆինանսական համակարգում, մասնակիցների քանակական տեսանկյունից, նույն տարում ՀՀ-ում գործել են 17 առևտրային բանկեր՝ 526 մասնաճյուղերով (ամեն 100 հազար չափահասին բաժին է ընկնում 23 մասնաճյուղ, որը 2.3-ով գերազանցում է աշխարհի միջինը), 35 վարկային կազմակերպություններ՝ 208 մասնաճյուղերով, այն դեպքում, երբ ներդրումային ֆոնդերի կառավարիչների

[1] ՀԲ պաշտոնական կայք, https://data.worldbank.org/indicator/CM.MKT.LCAP.GD.ZS?locations=NG

[2] ՀԲ պաշտոնական կայք, https://datahelpdesk.worldbank.org/knowledgebase/articles/906519-world-bank-country-and-lending-groups

[3] ՀՀ Կենտրոնական բանկ, «Ֆինանսական կայունության հաշվետվություն», 2017, էջ 28:

և ներդրումային ընկերությունների քանակը ընդամենը կազմել է համապատասխանաբար 3 և 9[1]: 2006-2017 թվականների ընթացքում բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցություն ցուցանիշը քառապատկվել է՝ հասնելով 80 %-ի, ինչին գլխավորապես նպաստել է նույն ժամանակաշրջանում ավանդների մոտ 675 %-ով աճը[2]: Վերոնշյալ զարգացումների ներքո ավանդներ/ՀՆԱ ցուցանիշը 2006 թվականին գրանցած 10 %-ից աճել է՝ 2017 թվականին հասնելով 44,2%-ի, ինչը կուռ փաստարկ է՝ արձանագրելու, որ արժեթղթերի շուկայի թույլ զարգացվածության ու անշարժ գույքի ներդրումային ֆոնդերի իսպառ բացակայության պայմաններում բնակչության խնայողությունները ավանդների տեսքով ուղղվում են գլխավորապես բանկային համակարգ:

Թերևս նաև այս վերջինով կարելի է մեկնաբանել այն փաստը, որ ՀՀ-ում չափահաս բնակչության կազմում ընդամենը 18%-ն[3] է համարվում ֆինանսապես գրագետ[4], ինչն ամենացածր ցուցանիշն է թե՛ Եվրասիական տնտեսական միության անդամ (Ռուսաստան (38%), Բելառուս (38%), Ղազախստան (40%), Ղրղզստան (20%)) և թե՛ հարևան երկրների (Վրաստան (30%), Թուրքիա (24%), Ադրբեջան (36%) և Իրան (20%)) շարքում:

Հաշվի առնելով ՀՀ-ում անշարժ գույքի ներդրումային ֆոնդերի բացակայությունը և դրանից բխող հետևանքները, ինչպես նաև բնակչության խնայողությունների կառուցվածքը՝ առաջարկում ենք ողջ սրությամբ դնել անշարժ գույքի շուկայում անուղղակի ներդրումների խթանման, իսկ ավելի կոնկրետ՝ REIT տեսակի ներդրումային ֆոնդի ներդրման հարցը: REIT-ի ներդրմամբ ՀՀ անշարժ գույքի շուկայում ներդրողների համար հնարավորություններ կստեղծվի ձեռք բերել տեղաբաշխվող արժեթղթեր վերջինիս արհեստավարժ կառավարվող անշարժ գույքի պորտֆելից:

Նկատի առնելով Իռլանդիայում REIT մոդելի[5], ինչպես նաև ՀՀ օրենսդրության համակարգի առանձնահատկությունները՝ առաջարկում ենք REIT-ների համար սահմանել հետևյալ պահանջները.

- կազմակերպությունը պետք է ունենա բաց բաժնետիրական ընկերության, տրաստի կամ ասոցիացիայի կազմակեպաիրավական ձև և չլինի ֆինանսական հաստատություն կամ ապահովագրական ընկերություն,
- կազմակերպության կառավարումը պետք է իրականացվի տնօրենների կամ հոգաբարձուների խորհրդի կողմից,
- բաժնետոմսերը պետք է գտնվեն ազատ շրջանառության մեջ,

---

[1] Nurbekyan A. and N. Hovanessian. 2018. Financial Inclusion, Regulation, Financial Literacy and Financial Education in Armenia. ADBI Working Paper 843. Tokyo: Asian Development Bank Institute, p. 6.

[2] Հաշվարկվել է հեղինակի կողմից ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների հիման վրա:

[3] Klapper L., A. Lusardi and P. Van Oudheusden (2015). Financial Literacy Around the World. Standard & Poor's Ratings Services Global Financial Literacy Survey, 2016, p.23.

[4] Ցույց է տալիս մարդու անձնական ֆինանսները կառավարելու հմտությունները:

[5] https://www.reit.com/what-reit/how-form-reit

- յուրաքանչյուր հարկային տարվա վերջին 6 ամիսների ընթացքում 5 (կամ ավելի քիչ) անձի պատկանող բաժնետոմսերի մասնաբաժինը չպետք է գերազանցի կազմակերպության ընդհանուր բաժնետոմսերի 50 %-ը,
- կազմակերպության ներդրումային ակտիվների առնվազն 75%-ը պետք է ներդրված լինի անշարժ գույքում և կանխիկում[1],
- համախառն եկամտի առնվազն 75%-ը պետք է ձևավորվի անշարժ գույքի հետ կապված աղբյուրներից, ներառյալ անշարժ գույքից ստացվող վարձավճարները և հիփոթեքային շուկայի ֆինանսավորումից ստացվող տոկոսները,
- հարկվող եկամտի առնվազն 90 %-ը պետք է դիվիդենտների տեսքով բաշխվի բաժնետերերի միջև, այսինքն՝ դիվիդենտների վճարման գործակիցը պետք է կազմի 90%:

Կարծում եմ՝ համապատասխան իրավական հիմքերի ներդրման, չափահաս բնակչության ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացմանն ուղղված պետական ծրագրերի հետևողական իրականացման, պետական համապատասխան հաստատությունների նախաձեռնության և աջակցության պայմաններում անշարժ գույքի REIT տեսակի ներդրումային ֆոնդը հաջողությամբ կներդրվի նաև Հայաստանում: Մասնավորապես, հիմնվելով Իռլանդիայի փորձի վրա, առաջարկում ենք հարկային խթանող քաղաքականության վարման համատեքստում, ի տարբերություն այլ կազմակերպությունների, REIT-ներին չհարկել կորպորատիվ մակարդակում: Այսինքն՝ վերջիններիս ազատել կրկնակի հարկումից և հարկել միայն ներդրողների եկամուտները (դիվիդենտների տեսքով): Հարկ է նշել, որ թեկուզև հայ մարդու տնտեսական վարքագծում դեռևս չի կայացել կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերի ձեռքբերման մշակույթը, այդուհանդերձ, կարծում եմ, նշյալ անտարբեր վարքագիծը չի տարածվի REIT-ի վրա՝ հաշվի առնելով, որ դրա արժեթղթերը ապահովված են նյութական, տեսանելի և շոշափելի ակտիվներով՝ անշարժ գույքի օբյեկտներով:

Վերը ներկայացված առաջարկի ընդունումն ու գործադրումը որոշակի չափով կլրացնի անշարժ գույքի շուկայում անուղղակի ներդրումների և շուկան ֆինանսավորող ներդրումային ֆոնդերի բացը, ինչպես նաև կնպաստի բնակչության խնայողությունների հաշվին ներդրումների դիվերսիֆիկացիային: Հնարավորություններ կստեղծվեն ՀՀ սահմաններից դուրս բնակվող հայերի համար առանց ֆիզիկական ներկայության անհրաժեշտության առցանց ձեռք բերել տեղաբաշխվող REIT արժեթղթեր՝ դրանով իսկ օգտագործելով Սփյուռքի ներուժը: Վերջին հաշվով, REIT տեսակի ֆոնդի ներմուծմամբ ներդրումներ կատարելու հնարավորություն կտրվի նաև փոքր ներդրողներին, ինչը կխթանի կոլեկտիվ ներդրումային համակարգի զարգացումն ու հարստության ապակենտրոնացումը (ՀՀ-ում հարստության կենտրոնացման աստիճանը բավականին բարձր է. 2017 թ. Ջինիի գործակիցը հաշվարկվել է 33.6 (ըստ Համաշխար-

[1] Երբ գումարը ներդրվում է ընթացիկ, խնայողական և ժամկետային ավանդային հաշիվներում:

հային բանկի գնահատման մեթոդի), իսկ ըստ այլ գնահատումների՝ ՀՆԱ-ի 61.2%-ը վերահսկվում է շուրջ 74 ընտանիքի կողմից)[1]: Ավելին՝ ներկայացված առաջարկությունը համահունչ է կառավարության առաջիկա տնտեսական քաղաքականության առանձնահատկություններին, ի մասնավորի՝ ներառական տնտեսական աճի խթանմանը և կարող է մեծապես նպաստել կառավարության նպատակի իրականացմանը առ այն, որ տնտեսական զարգացմանը մասնակցեն զգալիորեն ավելի մեծ թվով քաղաքացիներ[2]:

Եզրակացություններ և առաջարկություններ

Հետազոտության և կատարված վերլուծությունների արդյունքների հիման վրա ստացվել են հետևյալ եզրահանգումները.

- ելնելով բնակֆոնդի քանակական և որակական վերլուծությունից՝ ենթադրվել է, որ ՀՀ կառավարության վարած հիփոթեքային վարկերն ու բնակարանային շինարարությունը խթանող քաղաքականությունն այժմեական է և նպատակահարմար: Այսուամենայնիվ, հիմք ընդունելով Իռլանդիայի բանկային համակարգ և անշարժ գույքի շուկա հարաբերությունների փորձը՝ կարծում եմ՝ Հայաստանի բանկային համակարգի կողմից անշարժ գույքի շուկայի ֆինանսավորումը պետք է գտնվի պատկան մարմինների մշտադիտարկման առանցքում և անհրաժեշտության դեպքում կարգավորվի վերահսկողության որակական և քանակական հայտնի մեթոդների գործադրմամբ:
- Անշարժ գույքի շուկայում անուղղակի ներդրումների համար համապատասխան պայմանների ստեղծումը կարող է մեծապես նպաստել ներդրումային միջավայրի ակտիվացմանն ու եկամուտների ապաբևեռացմանը:
- Կատարվել է ՀՀ-ում REIT տեսակի անշարժ գույքի ներդրումային ֆոնդի ներդրման հնարավորությունների վերաբերյալ ուսումնասիրություն (Իռլանդիայի փորձի և ՀՀ ֆինանսական համակարգի վերլուծության միջոցով) և տրվել է REIT-ի ներդրման նպաստմանը միտված առաջարկ: Մասնավորաբար՝ հարկային խթանող քաղաքականության վարման համատեքստում առաջարկվել է, ի տարբերություն այլ կազմակերպությունների, REIT-ներին չհարկել կորպորատիվ մակարդակում:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշում, 02/03/2019 թ.:
   ՀՀ Կենտրոնական բանկ, «Ֆինանսական կայունության հաշվետվություն», 2017, 57 էջ :

[1] Հարցազրույց, Հրանտ Բագրատյան, «Առաջին լրատվական» տեղեկատվական-վերլուծական կենտրոն, 14/05/2018: https://www.youtube.com/watch?v=uEyVmrM1jlM

[2] «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ Ազգային ժողովի օրոշում, 02/03/2019 թ.:

2. Birdsall, Nancy M.; Campos, Jose Edgardo L.; Kim, Chang-Shik; Corden, W. Max; MacDonald, Lawrence [editor]; Pack, Howard; Page, John; Sabor, Richard; Stiglitz, Joseph E.. 1993. The East Asian miracle: economic growth and public policy: Main report (English). A World Bank policy research report. New York, New York : Oxford University Press.
3. David Purdue and Hansi Huang, Irish Exports: The facts, the fiction and the risks, National Treasury Management Agency, NTMA Economics, Dublin, 2017, 11 pages.
4. Department of Finance of Irish Government, REITs, IREFs and s.110 companies as they invest in the Irish property market, Tax Strategy Group, 2019, 39 pages.
5. F. Desmond McCarthy, The Irish Experience, Policy research working paper 2736, The World Bank, 2001, 27 pages.
6. Kieran Anthony Kennedy, Thomas Giblin and Deirdre McHugh, The economic development of Ireland in the twentieth century, Routledge, 1988, 288 pages.
7. Klapper L., A. Lusardi and P. Van Oudheusden (2015). Financial Literacy Around the World. Standard & Poor's Ratings Services Global Financial Literacy Survey, 2016, 27 pages.
8. Lee J. J., Ireland: 1912-1985: Politics and Society, Cambridge: Cambridge University Press, 1989, 754 pages.
9. Nurbekyan A. and N. Hovanessian. 2018. Financial Inclusion, Regulation, Financial Literacy, and Financial Education in Armenia. ADBI Working Paper 843. Tokyo: Asian Development Bank Institute, 30 pages.
10. O'Grada Cormac and Kevin O'Rourke, "Irish Economic Growth 1950-1988." In N.F.R. crafts and G. Toniolo, eds. Economic Growth in Europe since 1945. Cambridge: Cambridge University Press, 1995, 209 pages.
11. Roger Baxter and Arch G. Woodside, Interfirm Business-to-Business Networks: Theory, Strategy, and Behavior, Vol: 17, Emerald Group Publishing Limited, Bingley, 2011, 496 pages.
12. Stephen Byrne and Martin O'Brien, The Changing Nature of Irish Exports: Context, Causes and Consequences, Quarterly Bulletin Articles, Central Bank of Ireland, Dublin, 2015, pp. 58-72.
13. United Nations Economic Commision for Europe, Country Profiles on Housing and Land Management Republic of Armenia, United Nations, 2017, 124 pages.
14. www.imf.org,
15. www.worldbank.org
16. https://ec.europa.eu/
17. www.cso.ie
18. https://www.centralbank.ie/
19. https://www.armstat.am/am/
20. https://www.oecd.org/

References

1. «Hayastani Hanrapetowt'yan kar'avarowt'yan c'ragrin havanowt'yown talow masin» HH Azgayin jhoghovi oroshowm, 02/03/2019 t'.:
2. HH Kentronakan bank, «Finansakan kayownowt'yan hashvetvowt'yown», 2017, 57 e'j :Birdsall, Nancy M.; Campos, Jose Edgardo L.; Kim, Chang-Shik; Corden, W. Max; MacDonald, Lawrence [editor]; Pack, Howard; Page, John; Sabor, Richard; Stiglitz, Joseph E.. 1993. The East Asian miracle: economic growth and public policy: Main report (English). A World Bank policy research report. New York, New York : Oxford University Press.
3. David Purdue and Hansi Huang, Irish Exports: The facts, the fiction and the risks, National Treasury Management Agency, NTMA Economics, Dublin, 2017, 11 pages.
4. Department of Finance of Irish Government, REITs, IREFs and s.110 companies as they invest in the Irish property market, Tax Strategy Group, 2019, 39 pages.
5. F. Desmond McCarthy, The Irish Experience, Policy research working paper 2736, The World Bank, 2001, 27 pages.
6. Kieran Anthony Kennedy, Thomas Giblin and Deirdre McHugh, The economic development of Ireland in the twentieth century, Routledge, 1988, 288 pages.
7. Klapper L., A. Lusardi and P. Van Oudheusden (2015). Financial Literacy Around the World. Standard & Poor's Ratings Services Global Financial Literacy Survey, 2016, 27 pages.
8. Lee J. J., Ireland: 1912-1985: Politics and Society, Cambridge: Cambridge University Press, 1989, 754 pages.
9. Nurbekyan A. and N. Hovanessian. 2018. Financial Inclusion, Regulation, Financial Literacy, and Financial Education in Armenia. ADBI Working Paper 843. Tokyo: Asian Development Bank Institute, 30 pages.
10. O'Grada Cormac and Kevin O'Rourke, "Irish Economic Growth 1950-1988." In N.F.R. crafts and G. Toniolo, eds. Economic Growth in Europe since 1945. Cambridge: Cambridge University Press, 1995, 209 pages.
11. Roger Baxter and Arch G. Woodside, Interfirm Business-to-Business Networks: Theory, Strategy, and Behavior, Vol: 17, Emerald Group Publishing Limited, Bingley, 2011, 496 pages.
12. Stephen Byrne and Martin O'Brien, The Changing Nature of Irish Exports: Context, Causes and Consequences, Quarterly Bulletin Articles, Central Bank of Ireland, Dublin, 2015, pp. 58-72.
13. United Nations Economic Commision for Europe, Country Profiles on Housing and Land Management Republic of Armenia, United Nations, 2017, 124 pages.
14. www.imf.org,
15. www.worldbank.org
16. https://ec.europa.eu/
17. www.cso.ie

18. https://www.centralbank.ie/
19. https://www.armstat.am/am/
20. https://www.oecd.org/

Սևակ Թորգոմյան

ԻՌԼԱՆԴԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համառոտագիր: 20-րդ դարում տնտեսագիտական բառարաններում ի հայտ եկան նոր եզրույթներ, ինչպիսիք են՝ «տնտեսական վագր», «արևելաասիական հրաշք», «խաղաղօվկիանոսյան պումաներ» և այլն: «Տնտեսական վագր» եզրույթը, սկզբնապես օգտագործվելով Ասիայի տարածքում գտնվող չորս պետությունների տնտեսությունները բնութագրելու համար[1], հետագայում վերագրվեց տասնյակ այլ երկրների: Վերոնշյալ երկրների շարքում դասվում է նաև Իռլանդիայի Հանրապետությունը, որը մարդկային կապիտալ «զուտ արտահանող», աղքատ և գյուղատնտեսության վրա հիմնված տնտեսություն ունեցող երկրից վերածվեց ներգաղթ, գիտելիքահենք տնտեսություն ունեցող և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ու օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ցուցանիշներով աշխարհում առաջատար դիրքերում գտնվող երկրի: Հոդվածում քննարկվել և ամփոփվել են Իռլանդիայի տնտեսության թռիչքաձև զարգացումը, ապա նաև դրան հաջորդած սրընթաց անկումն ու առողջացումը կանխորոշող և ապահովող որոշիչ գործոնները: Հիմք ընդունելով կատարված վերլուծության արդյունքները, ինչպես նաև նկատի առնելով ՀՀ սոցիալ-տնտեսական համակարգին ներհատուկ բնութագրերը՝ առաջ են քաշվել ՀՀ-ի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված կոնկրետ ոլորտային առաջարկներ:

Բանալի բառեր. տնտեսական «պղպջակ», թռիչքաձև աճ, ներառական տնտեսություն, հիփոթեքային շուկա, կոլեկտիվ ներդրումներ, գիտելիքահենք տնտեսություն, ֆինանսական գրագիտություն, ՏՏ ոլորտ

Севак Торгомян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» ИРЛАНДИИ

Аннотация: В 20-м веке в экономических словарях появились новые термины, такие как «экономический тигр», «восточноазиатское чудо», «тихоокеанские пумы» и прочие. Первоначально использованный для описания экономики четырех стран в Азии[1] термин «экономический тигр» в дальнейшем был припи-

[1] Birdsall, Nancy M.; Campos, Jose Edgardo L.; Kim, Chang-Shik; Corden, W. Max; MacDonald, Lawrence [editor]; Pack, Howard; Page, John; Sabor, Richard; Stiglitz, Joseph E.. 1993. The East Asian miracle: economic growth and public policy: Main report (English). A World Bank policy research report. New York, New York : Oxford University Press.

сан десяткам стран. В список вышеупомянутых стран входит также Ирландская Республика, которая превратилась из бедной страны, «чистого экспортера» человеческого капитала с экономикой основанной на сельском хозяйстве, в страну с иммиграцией и экономикой, основанной на знаниях, которая является одной из ведущих стран мира по ВВП на душу населения и уровню прямых иностранных инвестиций (ПИИ). В статье обсуждены и обобщены решающие факторы, предопределяющие и обеспечивающие быстрый рост экономики Ирландии, ее последующий стремительный спад и восстановление. Основываясь на результатах анализа и с учетом особенностей, характерных для социально-экономической системы Республики Армения, были выдвинуты конкретные отраслевые предложения относительно социально-экономического развития Республики Армения.

Ключевые слова: экономический «пузырь», быстрый рост, инклюзивная экономика, ипотечный рынок, коллективные инвестиции, экономика, основанная на знаниях, финансовая грамотность, сектор ИТ

Sevak Torgomyan

"THE ECONOMIC MIRACLE" OF IRELAND

Abstract: In the 20th century new terms such as "economic tiger", "East Asian miracle", "Pacific Pumas" and others appeared in economic dictionaries. The term "economic tiger", originally used to describe the economies of four countries in Asia[1], was subsequently attributed to dozens of countries. Among the aforementioned countries is also the Republic of Ireland, which turned from a poor country, "net exporter" of human capital with the agriculture-based economy to a country with immigration and knowledge-based economy, which is one of the leading countries in the world in terms of GDP per capita and foreign direct investment (FDI). In this article the decisive factors that predetermine and ensure high growth of the economy of Ireland, its subsequent rapid decline and recovery are discussed and summarized. Based on the results of the analysis and considering the characteristics specific to the social and economic system of the Republic of Armenia, specific sectoral proposals for social and economic development of the Republic of Armenia have been put forward.

Keywords: economic "bubble", high, inclusive economy, mortgage market, collective investments, knowledge-based economy, financial literacy, IT sector

Գևորգ Հարությունյան

ԻՍՊԱՆԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Որպեսզի Իսպանիան վերածնվի, նա պետք է հավատա ինքն իրեն:
Ֆրանցիսկո Ֆրանկո

Ներածություն

Հայաստանի առջև ծառացած գերխնդիրը պետության ընդլայնված միջամտությամբ տնտեսության անհապաղ արդիականացումն է: Սա ենթադրում է թռիչքային զարգացում, ինչը, իր հերթին, հստակ պատվեր է գիտությանը՝ բացահայտել գերարագ տնտեսական աճի ֆինանսական և վարչական խթանման այն մեխանիզմները, որոնք առավել ընդունելի են Հայաստանի տնտեսության համար: Այդ նպատակով կատարվել է Իսպանիայի տնտեսության վերլուծություն: Այս երկիրը իր առաջընթացն ունեցել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ պետական կարգավորման այլ հարացույցի պայմաններում:

Իսպանիան՝ որպես ինքնիշխան պետություն, գտնվում է հարավարևմտյան Եվրոպայում, անդամ է Եվրամիության և ՆԱՏՕ-ի: Նրա տարածքը ընդգրկում է 505.990 կմ[2], բնակչությունը, 2018 թվականի տվյալների համաձայն, կազմում է ավելի քան 46 միլիոն մարդ[1]:

Իսպանիայի տնտեսության կարևոր ճյուղերն են ավանդական գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը և զբոսաշրջությունը, որը հատուկ տեղ է զբաղեցնում: Ամեն տարի Իսպանիա է հաճախում ավելի քան 80 միլիոն զբոսաշրջիկ[2]:

Այդ երկիրը հայտնի է իր տնտեսության թռիչքային զարգացմամբ և հակաճգնաժամային արդյունավետ կառավարմամբ: Իսպանական երկու «տնտեսական հրաշքներին» անդրադառձ է կատարվել բազմաթիվ գիտական աշխատանքներում, մասնավորաբար՝ «Գերարագ աճի խթանման մեխանիզմները. համաշխարհային փորձը»՝ Յա. Միրկինի հեղինակությամբ, «Արդիականացումը իսպաներեն»՝ Ս. Խենկինի հեղինակությամբ, «Իսպանական տնտեսական հրաշքի ֆինանսական բանաձևը»՝ Տ. Ժուկովայի հեղինակությամբ, «Տնտեսական ռեֆորմները և աճը Ֆրանկոյի կառավարման ժամանակ»՝ Ռ. Ռոսեսի հեղինակությամբ:

Իսպանական առաջին «տնտեսական հրաշքը» 1963-1973 թվականներին տեղի ունեցած տնտեսական բումի անվանումն է, երբ Ֆրանցիսկո Ֆրանկոյի

---

[1] Համաշխարհային բանկ, էլեկտրոնային հղում՝ https://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL?locations=ES

[2] А.Мишурова, «Адаптация зарубежного опыта развития туристической индустрии как драйвера роста национальной экономики» // Национальные интересы: приоритеты и безопасность. 2018, т. 14, № 1, стр. 24.

աջակցությամբ տեխնոկրատների կառավարությունը զարկ տվեց զարգացման նոր քաղաքականությանը:

1986-1991 թվականներին՝ ժողովրդավարության վերականգնումից հետո, տեղի ունեցավ քիչ հայտնի երկրորդ «տնտեսական հրաշքը»:

Հիմնական վերլուծություն

Առաջին տնտեսական հրաշքը: 1963 թվականից ի վեր Իսպանիան ապահովեց տնտեսության թռիչքային զարգացում՝ արդյունաբերական աճով գերազանցելով Եվրոպային և ԱՄՆ-ին: Առաջին «տնտեսական հրաշքի» առանձնահատկություններն են՝ արդյունաբերական զարգացման ցուցիչ պլանավորում, արտաքին առևտրի և ներդրումների ազատականացում, օտարերկրյա ուղղակի ներդրումների մուտք: Օտարերկրացիները ստեղծեցին գործարաններ՝ Renault, Citroen, FIAT, Ford:

Տնտեսական քաղաքականության ընդհանուր նպատակն էր լճացած հատվածներում ապահովել արտադրության աճ, պետության և մասնավոր կապիտալի համատեղ մասնակցությամբ տնայնագործական արտադրությունը վերածել արդյունաբերական համալիրների:

Առաջին «տնտեսական հրաշքը» իրականություն է դարձել հետևյալ գործոնների համադրմամբ.

- առաջնահերթ արդյունաբերական ոլորտների աջակցություն, որն իր մեջ ներառել է ուղղակի սուբսիդիաներ, հարկային արտոնություններ, պետական և մասնավոր ֆինանսական ռեսուրսների հասանելիություն, ներդրումային կողմնորոշիչներ և չափորոշիչներ, խթանում պետություն-մասնավոր համագործակցությանը (արտոնություններ նախագծերի համաֆինանսավորմանը մասնակցող մասնավոր ընկերություններին)[1]:
- Վճարային հաշվեկշռի դրական մնացորդի ապահովում առևտրի դեֆիցիտի պայմաններում, որի ապահովման հիմնական գործոններն են՝ արտահանումից եկամուտներ, տուրիզմից եկամուտներ, դրամական փոխանցումներ սփյուռքից, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, բարենպաստ արտաքին կոնյուկտուրա[2]:
- Դրամավարկային քաղաքականության մեղմացում (տոկոսադրույքների դիրեկտիվային իջեցում, տրամադրվող վարկերի սահմանափակումների վերացում (վարկերի մասնաբաժինը ՀՆԱ-ի նկատմամբ նույնպես ցույց էր տալիս արագ աճ, 1959-1974 թվականներին՝ 33.1% -ից մինչև 197.4%)), կուտակման նորմայի աճ, ֆինանսական կարգապահության և կայունության աճ, Իսպանիայի բանկի կարգավորիչ իրավասությունների ամրապնդում (1973-1983 թվականներին Իսպանիայի բանկը պատասխանատու էր դրամավարկային քաղաքականության, այդ թվում՝ փոխարժեքի քաղաքականության իրակա-

[1] Я.Миркин, Механизмы стимулирования сверхбыстрого роста: мировая практика, Москва, 2018, стр. 269.

[2] Wright A., The Spanish economy 1959-1976. The Macmillan Press LTD, London, 1977, p. 149.

նացման գործում), պետական բյուջեի եկամուտների աճ (պետական պարտատոմսեր, հարկային բեռի համահարթեցում)[1]:

- Արտաքին տնտեսական գործունեության ազատականացման խորացում՝ առևտուր, օտարերկրյա ուղղակի ներդրումներ[2]:
- Արտաքին առևտուրը պետությունից փոխանցվեց մասնավոր սեփականությանը: Վերացվեց իսպանական ընկերությունների կապիտալում օտարերկրացիների մասնակցության 25%-ը սահմանափակող շեմը: Ներդրողներին տրամադրվեցին լրացուցիչ երաշխիքներ: Ձեռնարկվում էին քայլեր՝ ուղղված արտահանման աջակցությանը (սակագնի իջեցում, արտահանման վարկավորում և ապահովագրություն) և տեղական արտադրողների պաշտպանությանը (ներմուծման մաքսատուրքեր, քվոտաներ)[3]:
- Բանկային համակարգի և զարգացման ինստիտուտների խիստ նպատակային կարգավորում. ծավալների, ուղղությունների և վարկավորման արժեքի նորմավորում, ինչպես նաև զարգացման ծրագրերի, գործառնությունների, ակտիվների և պասիվների կառուցվածքի վերահսկողություն[4]:

Երկրորդ տնտեսական հրաշքը: 1985-1991 թվականների երկրորդ «տնտեսական հրաշքը» կապված էր օտարերկրյան ուղղակի ներդրումների աճի, ֆինանսական շուկայի հասունության, ազատականացման գործընթացի արագացման, ԵՏՄ-ին անդամակցության, գնաճի և գործազրկության պայմաններում արդյունաբերական աճի հետ:

Երկրորդ «տնտեսական հրաշքը» պայմանավորված էր հետևյալ գործոններով.

- ազատականացում, որն իրենից ենթադրում է հետևյալ ենթագործոնները. լողացող փոխարժեք, միջսահմանային գործառնությունների կարգավորված արժութային վերահսկողություն, կապիտալի հաշվի լայնածավալ ազատականացում, օտարերկրյա ուղղակի ներդրումների կարգավորման համակարգի փոփոխություն՝ ԵՏՄ համակարգի օրինակով:
- Արդյունաբերության ոլորտի ապապետականացում (արդյունաբերության ազգային ինստիտուտի վերակառուցում, ակտիվների մասնակի մասնավորեցում, որպես հետևանք՝ արդյունավետ կառավարում) և օտարերկրյա ուղղակի ներդրումների աճ, խնայողությունների բարձր նորմա:
- Բաց շուկայական գործառնությունների միջոցով ինֆլյացիայի զսպում, պետական պարտքի կառուցվածքի կարգավորում, ծրագրանպատակային

---

[1] Я.Миркин, Механизмы стимулирования сверхбыстрого роста: мировая практика, Москва, 2018, стр. 270.

[2] *Lieberman S.,* Growth and Crisis in the Spanish Economy: 1940–1993, p. 51.

[3] Lieberman S., Growth and crisis in the Spanish Economy: 1940-1993, p. 51.

[4] Я.Миркин, Механизмы стимулирования сверхбыстрого роста: мировая практика, Москва, 2018, стр. 271.

բյուջետային պլանավորում, բյուջեի խնայողություն և ծախսերի վերահսկողություն, տոկոսի լիարժեք ազատականացում[1]:

- Հարկային արտոնությունների սոցիալականացում. հարկային բեռի մի մասի տեղափոխում բնակչությունից դեպի կորպորատիվ հատված և հարկային եկամուտների աճ[2]:
- Բանկային վարկերից կախվածության նվազեցում. ձեռնարկությունների ինքնաֆինանսավորման բարձրացում[3], բանկային համակարգի ապակարգավորում, ինչպես նաև ֆինանսական շուկայի այլ հատվածների զարգացում, մասնավորապես՝ բանկերի միջոցով, առկա գործառույթների ընդլայնում[4]:

Գերարագ աճի ուղին ընտրած Իսպանիան ուներ իր զարգացման վարչակազմը: Այն կոչվում էր Իսպանիայի վարչապետին առընթեր տնտեսական համակարգման և պլանավորման գրասենյակ (Office of Economic Coordination Planning), որն ընդգրկում էր զարգացման ծրագրի կոմիսարիատը և մի շարք աշխատանքային հանձնաժողովներ[5]:

Այդ վարչակազմին շնորհվել էին բացառիկ լիազորություններ՝ գերարագ տնտեսական զարգացման գործընթացի կենտրոնական կառավարում, մշակվող ռազմավարությունների և ծրագրերի վերահսկողություն, մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչների կազմում և իշխանության լիազոր մարմինների գործողությունների համակարգում:

Իսպանիայի զարգաման վարչակազմի հիմնական նպատակներն էին.

- Իսպանիայի տնտեսության վերափոխում,
- կյանքի որակի բարելավում,
- արտադրանքի կառուցվածքի արդիականացում,
- տնտեսության տարբեր ոլորտներում աճի պլանավորում,
- զարգացման մակարդակի համահարթեցում ըստ տարածաշրջանների[6]:

Ինչպես ցույց է տալիս բազմաթիվ երկրների փորձը, գերարագ զարգացումը խթանող տնտեսական համակարգի կարգավորումն անհնարին է նման վարչակազմի բացակայության պայմաններում:

Իսպանիայի օրինակը հաստատում է «տնտեսական հրաշքի» օրինաչափությունները, որոնք եղել են այլ երկրների օրինակներում: Դրանք են՝ վարչահրամայական համակարգի և ավտորիտար ռեժիմի պայմաններում ընդլայնված

---

[1] Я.Миркин, Механизмы стимулирования сверхбыстрого роста: мировая практика, Москва, 2018, стр. 272-273.

[2] The Royal Decree Law of December 29, 1989.

[3] OECD Economic Surveys: Spain 1988. P. 48.

[4] Garsia-Santos N., Los Mercados Monetarios en Espana: 1982–1992 // Boletin Economico. Madrid, 1993, № 2357, p. 324.

[5] Zaratiegui J.M., Indicative Planning in Spain (1964-1975) // International Journal of Business, Humanities and Technology University of Navarra. Vol. 5, April, 2015, № 2.

[6] Zaratiegui J.M., Indicative Planning in Spain (1964-1975) // International Journal of Business, Humanities and Technology University of Navarra. Vol. 5, April, 2015, № 2.

պետական միջամտության շնորհիվ զարգացման հետագծի փոփոխություն, այնուհետև՝ ժամանակակից շուկայական տնտեսություն վերափոխման գործընթացի արդիականացում, հասարակության ժողովրդավարացում, լիարժեք ազատականացում, օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսք, տնտեսության և ֆինանսների «հասունացում»[1]:

Տնտեսության զարգացման ընթացքում Իսպանիան տնտեսական արագ աճի հետ մեկտեղ ունեցել է նաև ճգնաժամի շրջան: Այնուամենայնիվ, պետության և մասնավոր հատվածի համատեղ ջանքերի շնորհիվ ճգնաժամի խնդիրները հաղթահարվել են: Մասնավորապես՝

- գյուղատնտեսության ոլորտում ճգնաժամի հետևանքով քայքայման և գյուղական վայրերից բնակչության արտագաղթի վտանգը կանխելու միջոց դարձավ ագրոտուրիզմի լայնածավալ զարգացումը: Ֆերմերների և պետության համատեղ ջանքերի շնորհիվ տուրիզմի այս տեսակը վերակենդանացրեց գյուղը, դուրս հանեց տնտեսական ճգնաժամից[2]: Հատկանշական էր այն, որ ագրոտուրիզմը խթանեց մշակութային և պատմական ավանդույթների պահպանումը, ավանդական արհեստների վերածնունդը, գյուղական բնակավայրերի տնտեսության բարելավումը, շուկայի առաջացումը, սպասարկման և օրգանական սննդի արտադրության ոլորտներում տեղական բնակչության զբաղվածության բարձրացումը[3]:
- Գյուղատնտեսական կայուն արտադրություն ապահովելու նպատակով 1978 թվականից ի վեր Իսպանիայում կիրառվեց ապահովագրության համակարգի նոր մոդել: Այն ճանաչվեց որպես առավել արդյունավետ և ուղղված է պետության և գյուղատնտեսական արտադրողների շահերի լավագույն զուգակցմանը:

  Գյուղատնտեսական ապահովագրության համալիր համակարգը նախատեսում է.

  ա) գյուղատնտեսական արտադրողների կամավոր մասնակցություն,

  բ) անհատական կամ կոլեկտիվ ապահովագրության պայմանագրեր,

  գ) ապահովագրության տրամադրում մասնավոր ընկերությունների կողմից՝ պետության զգալի աջակցությամբ:

  Միևնույն ժամանակ պետությունն օժանդակում է ապահովագրության զարգացմանը՝

  ա) տրամադրելով սուբսիդիաներ ինչպես ֆերմերներին, այնպես էլ ապահովագրական ընկերություններին,

---

[1] Я. Миркин, Финансовые стратегии модернизации экономики: мировая практика, М., Магистр, 2014.

[2] Агаларова Е. Г., Косинова Е. А., Особенности формирования агротуристического рынка в России // Молодой ученый, 2012, № 11.

[3] Казьмина Е. Б., Развитие услуг сельского туризма в российских условиях: автореф. дис. канд. эконом. наук: 08.00.05. – М.: ГУУ, 2012., стр. 10.

բ) առաջնություն տալով փոխօգնության գյուղատնտեսական ընկերությունների ստեղծմանը,

գ) նպաստելով տվյալների հավաքագրմանը և տեխնիկական աջակցություն տրամադրելով ապահովագրական ընկերություններին: Ավելին, բոլոր տեսակի ապահովագրություններն իրականացվում են ըստ պլանների, որոնք նախապատրաստում են պետության կողմից լիազորված հաստատությունները[1]:

- 20-րդ դարի երկրորդ կեսին, ի պատասխան իսպանական տնտեսության մարտահրավերների, որպես կոլեկտիվ ձեռներեցության ձև ստեղծվեցին «աշխատանքային ընկերություններ» (sociedades laborales՝ SL): 1973 թվականի նավթային ճգնաժամի պայմաններում սնանկացման եզրին գտնվող մի շարք ձեռնարկությունների աշխատակիցներ, ձեռք բերելով բաժնետոմսեր, ստանձնեցին դրանց կառավարումը: 1986 թվականին «Բաժնետիրական աշխատանքային ընկերությունների մասին» օրենքի ընդունումը նպաստեց դրանց հետագա զարգացմանը: Կոլեկտիվ ձեռներեցության նման մոդելը ենթադրում է աշխատողների երկարաժամկետ զբաղվածություն և ընկերության լիակատար վերահսկողություն: Փորձը ցույց է տալիս, որ SL-երը հաջողությամբ մրցակցում են դասական մասնավոր կապիտալիստական ընկերությունների հետ, որոնք պատկանում են սահմանափակ քանակությամբ սեփականատերերին: SL-ը իսպանական ընկերությունների տնտեսվարման արդյունավետ ձև է, ինչը պայմանավորում է աշխատատեղերի ստեղծումը, զբաղվածությունը և սոցիալական համախմբումը: Աշխատանքային ընկերություններում աշխատավորների բաժնետիրական սեփականության հիմունքներով կորպորատիվ հարաբերությունների ձևը Եվրոպայում նմանօրինակը չունի[2]:

Իսպանիային հաջողվեց միջամտողական և ավտորիտար քաղաքական ռեժիմով կարգավորվող տնտեսությունից անցնել արդյունաբերական ժողովրդավարությանը՝ զուգորդելով տնտեսության թռիչքային զարգացումը: Տնտեսական պատմության որոշ դասեր կարող են օգտակար լինել Հայաստանի համար:

Գերարագ աճի հնարավորությունները գնահատելիս կարևոր է սկզբնական կետը՝ տնտեսության մոդելը, նրա առջև ծառացած հիմնական մարտահրավերները, ապագայի սցենարները, դրանց հավանականության գնահատումը, տնտեսական և ֆինանսական քաղաքականությունը:

Տնտեսության թռիչքային զարգացման սեփական նոր ուղին Հայաստանի համար լավագույն ընտրությունն է: Ինչպե՞ս դա անել:

Բազմաթիվ երկրների փորձը, ընդհանուր միտումները, «տնտեսական հրաշքի» նմանատիպ մեխանիզմները հիմք են տալիս նկարագրելու Հայաստանի

---

[1] Гутко Л. М., Досвід державної підтримки страхування ризиків сільськогосподарського виробництва // Економіка АПК., 2009, № 10, с. 147–152.

[2] Хабибуллин Р. И., Испанская модель коллективного предпринимательства: sosedades laborales, European science № 7 (39), стр. 23-24.

համար նման ընտրության շրջանակներում հիմնական գաղափարները, աճի ֆինանսական աղբյուրները, վարչական, տնտեսական, ինստիտուցիոնալ և ֆինանսական քաղաքականության հիմնական կառուցվածքները:

Հայաստանի տնտեսության արդի վիճակը: ՀՀ-ն աշխարհում զբաղեցնում է 108-րդ տեղը մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի հաշվով՝ ըստ գնողունակության հավասարության (2018)[1]: Տնտեսական աճի տեմպը բարձր չէ, հաճախ զիջում է համաշխարհային միջին ցուցանիշին: Կուտակման նորմայի համակարգված ցածր տոկոսադրույք է գրանցվում: 2017-ին ներդրումներ / ՀՆԱ ցուցանիշը հիմնական կապիտալի մասով կազմել է 20.66%[2]: Այդպես չեն աճում: Անհրաժեշտ է այդ ցուցանիշը հասցնել առնվազն 30% -ի (Չինաստանում ներդրումների նորման («ներդրում / ՀՆԱ») վերջին տարիներին հասել է 44–45% -ի, Հնդկաստանում՝ 30–32%[3]): Բնակչության մեծ մասը չունի բանկային խնայողություն: Դեռ այդպես էլ չի ստեղծվել նորարարական տնտեսություն: ՀՆԱ-ում պետական վերջնական սպառման տեսակարար կշիռը կազմում է 12–13%[4]: Պետական հատվածում աշխատող մարդկանց մասնաբաժինը հասնում է երկրում աշխատող մարդկանց ընդհանուր թվի 25%-ին[5]: Հայաստանը տնտեսություն է, որտեղ գերակշռում են ամենամեծ ընկերությունները, գերկենտրոնացած գույքով օլիգոպոլիաները, միջին և փոքր գործարարության տեսակարար կշիռը չի գերազանցում 25-30%-ը: Նման տնտեսությունը կոլեկտիվ վարքագծի մոդելի հետևանք է: Անկախ նրանից, թե ինչ է տեղի ունենում Հայաստանում, թվում է, թե մեր առջև նույն կոլեկտիվ մարդն է՝ իր բնավորությամբ: Ինչ կառավարման ձև էլ ընտրի Հայաստանը, այն պետության նույն մոդելն է: Բոլոր «իզմերի» հետևում թաքնված է նույն դեմքը: Եվ կարևոր չէ, թե ինչ ռեժիմ է այսօր տիրում՝ սոցիալիզմ, լիբերալիզմ, ոչ մարդկային դեմքով կապիտալիզմ կամ այլ բան:

Այդ կոլեկտիվ մարդու էությունն է՝ մեծ ուղղաձիգ կառույցների, հիերարխիաների հանդեպ սերը, պաշտպանվելու համար նրանց ճյուղերի տակ թաքնվելու կիրքը, ինչպես էլ նրանք կոչվեն՝ «պետություն», «կորպորացիա»: Եվ բացարձակ անհավատություն, որ ճակատագրական րոպեներին, X ժամին այդ պաշտպանությունը կգա: Եվ, հետևաբար, մասնավոր պահվածքը նման է անտառում միայնակ գայլի պահվածքի, համապատասխան ագրեսիվությամբ, որպեսզի արագորեն բռնի և տանի իր անձնական տիրույթ: Մի՛ հավատա, մի՛ վախեցիր, մի՛ խնդրիր: Ոչ ոք չի օգնի: Պաշտպանիր ինքդ քեզ:

---

[1] Համաշխարհային բանկ, էլեկտրոնային հղում՝ https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.PP.CD?view=chart

[2] Համաշխարհային բանկ, էլեկտրոնային հղում՝ https://tcdata360.worldbank.org/indicators/inv.all.pct?country=ARM&indicator=345&viz=line_chart&years=1980,2024

[3] Համաշխարհային բանկ, էլեկտրոնային հղում՝ https://tcdata360.worldbank.org/indicators/inv.all.pct?country=CHN&indicator=345&countries=IND&viz=line_chart&years=1980,2024

[4] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2019, էջ 242:

[5] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2019, էջ 72:

«Կոլեկտիվ վարքագծի մոդելին» բնորոշ առանձնահատկություններն են.

- մեծ կառույցներ,
- քիչ շարժունակություն,
- ռիսկերի, նորամուծությունների, փոփոխությունների նկատմամբ հանդուրժողականության ցածր մակարդակ,
- կարճ ժամանակային հորիզոններ,
- անհավատություն, որ գույքը կարող է սերունդներին փոխանցվել, չի վերաբաշխվի,
- խոչընդոտումը՝ որպես լինելու միջոց,
- որպես իրական պաշտպանության միջոց ուղղաձիգ կառույցների հանդեպ անհավատություն, մասնավոր «ինքդ»-ի առանձնացում արտաքին «նրանք»-ից՝ որպես անդիմադրելի ուժ[1]:

Ինչպիսի՞ պետություն է կառուցվում դրանից: Մարդկանց պետություն դե ֆակտո ստրկացված ունեցվածքի բացակայության պայմաններում: Որտեղ հաց՝ այնտեղ կաց: Ուղղաձիգ կառույցների տարածություն: Իշխանության գերկենտրոնացում:

Փոխվո՞ւմ է արդյոք «կոլեկտիվ վարքագծի մոդելը»: Այո՛, փոխվում է:

Չինաստան, Հարավային Կորեա, Գերմանիա, Իսպանիա. Այս երկրները «կոլեկտիվ վարքագծի մոդելի» փոփոխության վառ օրինակներ են:

Գուցե դա տեղի կունենա նաև Հայաստանո՞ւմ:

Կարևորը՝ մենք էլ լինենք այդ երկրների շարքում: Լինենք, չնահանջենք՝ ընդունելով արագացված զարգացման մարտահրավերը:

Անհրաժեշտ է միայն հաջորդականություն՝ տնտեսությունը տաքացնել խթաններով (հիմնականում՝ տնտեսական, ֆինանսական), մղել դեպի աճ և դրա ներքո նախաձեռնել ինստիտուցիոնալ բարեփոխումներ (դատարաններ, գույքի պաշտպանություն, վարչական բարեփոխումներ):

Թվում է, թե այդ ամենը պետության լայնածավալ միջամտություն է (բայց մեկ այլ տեսակի՝ «զարգացման» պետության): Այնուհետև, երբ «հիվանդի» վիճակը կկարգավորվի, նա ազատ կարձակվի: Թող ինքնուրույն քայլի: Կհեռացվեն բոլոր «հենակները»: Ազատականացում պետության վիրահատական միջամտությունից հետո: Դա տեղի է ունեցել «տնտեսական հրաշքի» բոլոր երկրներում:

Նման շրջադարձի համար, նախ և առաջ, հայ քաղաքական էլիտան պետք է իրական պատկերացում ունենա իրավիճակի մասին և այն փոխելու ցանկություն, ինչը իր շահերից է բխում: Ինչո՞ւ: Որպեսզի փրկվի, դուրս գա հաղթանակած անձնական նախագծերից: Որպեսզի արտաքին հակամարտությունները սառեցվեն: Պատմության մեջ մնա գումարած նշանով:

[1] Миркин Я., Финансовое будущее России: экстремумы, бумы, системные риски, стр. 423-426.

Եզրակացություններ և առաջարկություններ

Իսպանիայի տնտեսության պատմական զարգացման փորձի ուսումնասիրության արդյունքում պարզվեցին գերարագ տնտեսական աճի հիմնական գործոնները, որոնք հաստատում են համաշխարհային օրինաչափությունները: Երկրի հակաճգնաժամային քաղաքականության վերլուծությունը նույնպես ապարդյուն չէր. բացահայտվեցին բավականին արդյունավետ և յուրօրինակ մոտեցումներ: Այդ ամենը կարող է կողմնորոշել Հայաստանի հետագա մակրոտնտեսական քաղաքականությունը:

Ամփոփելով օտարերկրյա փորձը՝ ՀՀ տնտեսության գերարագ աճի առաջարկվող համակարգային մոտեցումը հետևյալն է.

- «զարգացման վարչակազմի» ստեղծում,
- մատչելի վարկերի ընդլայնում (հիմնականում՝ մարզերում),
- չափավոր մեղմ դրամավարկային քաղաքականություն,
- ոչ դրամական գնաճի ճնշում (պետության կողմից կարգավորվող գներ և սակագներ),
- չափավոր թույլ դրամի փոխարժեք,
- խիստ պարզ հարկային խթաններ՝ ուղղված աճին և արդիականացմանը + արագացված ամորտիզացիա,
- առավելագույն արտոնություն օտարերկրյա ուղղակի ներդրումներին,
- ընդհանուր հարկային բեռի զգուշավոր նվազեցում,
- բյուջետային ներդրումներ տնտեսության մեջ (այդ թվում՝ պետական պարտքի աճի միջոցով),
- առավելագույն արտոնություն միջին խավի համար՝ գույքի ձեռքբերման, մարզերի սոցիալական ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու համար,
- մարզերի համաչափ զարգացման կարևորում, մասնավորաբար՝ ագրոտուրիզմի ոլորտի զարգացման ծրագրի մշակում՝ որպես գյուղատնտեսական ոլորտի քայքայումը և գյուղական վայրերից բնակչության արտագաղթը կանխելու միջոց,
- գործարար միջավայրում կոլեկտիվ ձեռներեցության իսպանական մոդելի ներդրման քաղաքականության մշակում,
- գյուղատնտեսության ապահովագրության պետական քաղաքականության իրականացման համակարգված մոտեցման մշակում՝ հիմք ընդունելով իսպանական մոդելը,
- կառուցվածքային բարեփոխումներ (ապակենտրոնացում, մրցակցային միջավայրի ստեղծում, ուժեղ հակամենաշնորհային կարգավորում, գույքի պաշտպանվածություն, անկախ դատարաններ):

Միայն համակարգային բուժման արդյունքում հանրապետությունում կձևավորվի բիզնեսի բոլորովին այլ մթնոլորտ՝ «ազատություն», ավելի ցածր ռիսկեր,

հարկային և վարչական ավելի ցածր բեռ: Կձևավորվեն «երկար փողեր» և ներդրումների հորիզոններ:

Ի վերջո՝ մենք կունենանք արժանապատիվ, զարգացած տնտեսությամբ երկիր:

Օգտագործված գրականության ցանկ

1. https://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL?locations=ES
2. А. Мишурова, «Адаптация зарубежного опыта развития туристической индустрии как драйвера роста национальной экономики» // Национальные интересы: приоритеты и безопасность. – 2018, т. 14, № 1, стр. 19-36.
3. Я. Миркин, Механизмы стимулирования сверхбыстрого роста: мировая практика. Москва, «Магистр», 2018, 480 с.
4. Wright A., The Spanish economy 1959-1976. The Macmillan Press LTD London, 1977, 200 p.
5. Жукова Т. В., Финансовая формула испанского экономического чуда // Финансы, деньги, инвестиции. 2016, № 4. с. 26-34.
6. *Lieberman S.,* Growth and Crisis in the Spanish Economy: 1940-1993, 370 p.
7. The Royal Decree Law of December 29, 1989.
8. OECD Economic Surveys: Spain 1988. 106 p.
9. Garsia-Santos N., Los Mercados Monetarios en Espana: 1982-1992 // Boletin Economico. Madrid, 1993, № 2357.
10. Zaratiegui J. M., Indicative Planning in Spain (1964-1975) // International Journal of Business, Humanities and Technology, University of Navarra, vol. 5, April 2015. № 2.
11. Я. Миркин, Финансовые стратегии модернизации экономики: мировая практика / Монография / М., «Магистр», 2014.
12. Агаларова Е. Г., Косинова Е. А., Особенности формирования агротуристического рынка в России // Молодой ученый, 2012, № 11.
13. Казьмина Е.Б., Развитие услуг сельского туризма в российский условиях: автореф. дис. канд. эконом. наук: 08.00.05. М., ГУУ, 2012, 163 с.
14. Гутко Л.М., Досвід державної підтримки страхування ризиків сільськогосподарського виробництва // Економіка АПК, 2009, № 10, с. 146–153.
15. Хабибуллин Р. И., Испанская модель коллективного предпринимательства: sosedades laborales, European science № 7 (39), стр. 23-24.
16. Я. Миркин, Финансовое будущее России: экстремумы, бумы, системные риски, 480 с.

References
1. https://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL?locations=ES
2. A. Mishurova, «Adaptacija zarubezhnogo opyta razvitija turisticheskoj industrii kak drajvera rosta nacional'noj jekonomiki» // Nacional'nye interesy: prioritety i bezopasnost'. – 2018, t. 14, # 1, str. 19-36.
3. Ja. Mirkin, Mehanizmy stimulirovanija sverhbystrogo rosta: mirovaja praktika. Moskva, «Magistr», 2018, 480 s.
4. Wright A., The Spanish economy 1959-1976. The Macmillan Press LTD London, 1977, 200 p.
5. Zhukova T. V., Finansovaja formula ispanskogo jekonomicheskogo chuda // Finansy, den'gi, investicii. 2016, # 4. s. 26-34.
6. Lieberman S., Growth and Crisis in the Spanish Economy: 1940-1993, 370 p.
7. The Royal Decree Law of December 29, 1989.
8. OECD Economic Surveys: Spain 1988. 106 p.
9. Garsia-Santos N., Los Mercados Monetarios en Espana: 1982-1992 // Boletin Economico. Madrid, 1993, # 2357.
10. Zaratiegui J. M., Indicative Planning in Spain (1964-1975) // International Journal of Business, Humanities and Technology, University of Navarra, vol. 5, April 2015. # 2.
11. Ja. Mirkin, Finansovye strategii modernizacii jekonomiki: mirovaja praktika / Monografija / M., «Magistr», 2014.
12. Agalarova E. G., Kosinova E. A., Osobennosti formirovanija agroturisticheskogo rynka v Rossii // Molodoj uchenyj, 2012, # 11.
13. Kaz'mina E.B., Razvitie uslug sel'skogo turizma v rossijskij uslovijah: avtoref. dis. kand. jekonom. nauk: 08.00.05. M., GUU, 2012, 163 s.
14. Gutko L.M., Dosvid derzhavnoï pidtrimki strahuvannja rizikiv sil's'kogospodars'kogo virobnictva // Ekonomika APK, 2009, # 10, s. 146–153.
15. Habibullin R. I., Ispanskaja model' kollektivnogo predprinimatel'stva: sosedades laborales, European science # 7 (39), str. 23-24.
16. Ja. Mirkin, Finansovoe budushhee Rossii: jekstremumy, bumy, sistemnye riski, 480 s.

Գևորգ Հարությունյան

ԻՍՊԱՆԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համառոտագիր: Հայաստանի առջև ծառացած գերխնդիրը պետության ընդլայնված միջամտությամբ տնտեսության անհապաղ արդիականացումն է: Սա ենթադրում է թռիչքային զարգացում:

Այդ նպատակով աշխատանքում վերլուծվել է Իսպանիայի տնտեսությունը, որը հայտնի է իր թռիչքային զարգացմամբ և հակաճգնաժամային արդյունավետ կառավարմամբ:

Ներկայացված են նաև գերարագ տնտեսական աճի ֆինանսական և վարչական խթանման մեխանիզմները, որոնք առավել ընդունելի են Հայաստանի տնտեսության համար:

Բանալի բառեր. գերարագ, զարգացում, Հայաստան, արդիականացում, տնտեսական հրաշք, Իսպանիա, մեխանիզմներ, օրինաչափություններ

Геворг Арутюнян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» ИСПАНИИ

Аннотация: Сверхзадачей для Армении является незамедлительная модернизация экономики посредством расширенного вмешательства государства. Это предполагает сверхбыстрое развитие.

С этой целью в данном труде был проведен анализ экономики Испании, которая известна своим сверхбыстрым экономическим ростом и эффективным антикризисным управлением.

Также представлены механизмы финансового и административного стимулирования сверхбыстрого экономического роста, которые наиболее приемлемы для экономики Армении.

Ключевые слова: сверхбыстрый, развитие, Армения, модернизация, экономическое чудо, Испания, механизмы, закономерности

Gevorg Harutyunyan

“THE ECONOMIC MIRACLE” OF SPAIN

Abstract: The ultimate priority for Armenia is the immediate modernization of the economy through the expanded state intervention. This suggests superfast development.

For this purpose, in this paper the economy of Spain has been analyzed, which is known for its superfast economic growth and effective anti-crisis management.

The mechanisms of financial and administrative stimulation of superfast economic growth, which are most applicable for the economy of Armenia, are also presented.

Keywords: superfast, development, Armenia, modernization, economic miracle, Spain, mechanisms, patterns

Թաթուլ Մկրտչյան
Աստղիկ Հովհաննիսյան

ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Ներածություն

Ֆինլանդիան ինքնիշխան, խորհրդարանական հանրապետություն է Հյուսիսային Եվրոպայում: Տարածությունը՝ 338 հազար կմ² (առանց ներքին ջրերի՝ 305,5 հազար կմ²), բնակչությունը՝ 5,5 մլն մարդ (2019 թ.): Վարչականորեն բաժանված է 12 լյանի (նահանգի): Անկախ պետություն է 1917 թվականից: Սկսած 1956 թվականից՝ Հյուսիսային խորհրդի, 1995 թվականից՝ Եվրոպական միության և 1996 թվականից Շենգենյան համաձայնության անդամ է:

Վերջին տարիներին Ֆինլանդիան, ըստ տարբեր ցուցանիշների, վարկանիշավորման զեկույցներում զբաղեցնում է հետևյալ առաջատար դիրքերը.

- աշխարհի ամենակայուն երկիր (Հայաստան՝ 102-րդ տեղ)[1],
- աշխարհի ամենաազատ երկիր (100 միավոր, Հայաստան՝ 45 միավոր)[2],
- աշխարհի ամենաապահով երկիր (Հայաստան՝ 34-րդ տեղ)[3],
- Ֆինլանդիան ունի աշխարհում ամենալավ կառավարման համակարգը[4],
- Ֆինլանդիայի դատական համակարգը ամենաանկախն է աշխարհում (Հայաստան՝ 85-րդ տեղ)[5],
- կոռուպցիայի բացակայությամբ երրորդն է (Հայաստանը՝ 77-րդը, 2019 թ.)[6],
- սեփականության իրավունքի պաշտպանությամբ՝ առաջինը (Հայաստանը՝ 55-րդը)[7],
- արդեն երկու տարի անընդմեջ Ֆինլանդիան աշխարհի ամենաերջանիկ երկիրն է (Հայաստանը՝ 116-րդը)[8]:

Մինչ 1990-ականների ճգնաժամը (կապված ԽՍՀՄ փլուզման հետ) մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն Ֆինլանդիայում անընդհատ աճ է գրանցել (գծապատկեր 1): 90-ականներին ձեռնարկված լայնամասշտաբ բարեփոխումներն արդեն 10 տարի անց սկսեցին նկատելի արդյունքներ ապահովել, և 2003 թվականին 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը գերազանցեց մինչ այդ գրանցված ամենաբարձր մակարդակը՝ 32 855 ԱՄՆ դոլար, որից հետո շարունակվել է բարձր տեմպերով աճը մինչ 2008 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամը և դրա

---

[1] The Fund for Peace, Fragile States Index 2018
[2] Freedom House, Freedom in the World 2018
[3] World Economic Forum, The Travel & Tourism Competitiveness Report 2017
[4] Legatum Institute, The Legatum Prosperity Index 2018: Finland
[5] World Economic Forum, The Global Competitiveness Report 2018: Judicial independence
[6] Transparency International, Corruption Perceptions Index 2019
[7] World Economic Forum (WEF), The Global Competitiveness Report 2018: Property Rights
[8] Sustainable Development Solutions Network, World Happiness Report 2019

արդյունքում շուրջ 13.2% անկումը: Դրանից հետո՝ 2011 և 2014 թթ., նույնպես գրանցվել են անկումներ, իսկ 2018 թ. դրությամբ Ֆինլանդիային դեռ չի հաջողվել 1 շնչի հաշվով ցուցանիշը հասցնել 2008 թ. մակարդակին:



Գծապատկեր 1. *Ֆինլանդիայի՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շարժընթացը 1960-2018 թթ. (ընթացիկ գներով, $)*[1]

Միևնույն ժամանակ, եթե 1993 թ. գործազրկության մակարդակը 16,2% էր, ապա 2008 թ. արդեն նվազել էր մինչև 6,3%, սակայն ճգնաժամի հետևանքով նորից սկսել է աճել: Չնայած դրան՝ ֆինլանդիային հաջողվել է 2019 թ. դրությամբ արդեն երկրում գործազրկության մակարդակն իջեցնել 7,2%-ի:

1990-ականներից սկսած Ֆինլանդիային հաջողվել է նաև կառավարելի միջակայքում պահել ինֆլյացիայի մակարդակը. Այսպես, եթե 1960-90 թթ. ինֆլյացիայի մակարդակը երկրում տատանվել է 5 %-ից ընդհուպ մինչև 22% միջակայքում, ապա վերջին 30 տարիների ընթացքում՝ 0-4 %-ի շրջանակներում[2]:

Գրականության ակնարկ

Ֆինլանդիայում ազգային նորարարական համակարգի ճգնաժամը հաղթահարելու համար կիրառվում է այնպիսի գործիքների համադրություն, ինչպիսիք են սոցիալական և տնտեսական պետական ռազմավարական ծրագրերը, որոնց իրագործումը հնարավոր է մի կողմից միայն նորարարական բարձր տեխնոլոգիական որոշումների կայացման, մյուս կողմից՝ երկրի նորարարական ներուժի զարգացման մեջ բիզնեսի մասնակցության խթանման շնորհիվ (Դ. Վո-

[1] https://data.worldbank.org/
[2] Նույն տեղում:

ռոբյովա, Ի. Կիրիչենկո)[1]: Ընդ որում՝ Ֆինլանդիայում պետական նորարարական քաղաքականության արդյունավետության կարևոր պայմաններ են.

1) երկրի տնտեսության զարգացման գործընթացի բոլոր շահագրգիռ կողմերի համաձայնությունն առ այն, որ այդ զարգացման հիմքը նորարարությունն է,
2) ազգային նորարարական համակարգի ավելի վաղ և հաջողված փուլերում կուտակված գիտելիքի և նոու-հաու-ների վրա հիմնվելը:

Պետական տնտեսական քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունները պետք է կենտրոնացած լինեն առաջատար նորարարական տեխնոլոգիաների, տնտեսության դիվերսիֆիկացման և գործարար միջավայրում խելացի (smart) տեխնոլոգիաների վրա հիմնված համագործակցության ապահովման վրա (Ս. Բոլշակով)[2]: Պետության խնդիրը համագործակցության և գործընկերության կազմակերպումն է համալսարանների և R&D արդյունաբերության միջև, ինչի հաջողության պայմանը Ֆինլանդիայի համալսարանների համագործակցությունն է ինչպես ֆիննական, այնպես էլ համաշխարհային բիզնեսի հետ: Ֆիննական փորձն ապացուցում է, որ գիտական հետազոտություններն ու որակյալ կրթական համակարգը նորարարական տնտեսության հիմքն են:

Գիտելիքի կառավարման ծրագրերի համատարած ներդրումը Ֆինլանդիային թույլ տվեց հաջողությամբ հաղթահարել համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքները (Վ. Ուտկինա)[3]: Ընդ որում՝ գիտելիքների կառավարման հայեցակարգը հաջողությամբ իրականացվել է բոլոր մակարդակներում և օղակներում՝ խորհրդարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, ոչ առևտրային կազմակերպությունների, կրթական հաստատությունների, մասնավոր ընկերությունների կողմից:

Որպես Ֆինլանդիայի՝ գիտելիքի վրա հիմնված՝ «գիտելիքահենք» տնտեսության հայեցակարգային առանձնահատկություններ՝ կարելի է դիտարկել.

- 1990-ականների ճգնաժամը տնտեսական թռիչքի բարենպաստ հնարավորության վերածելը (որի հիմքում ընկած էր նորագույն տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների յուրացումը),
- «գիտելիքահենք տնտեսության» և «տեղեկատվական հասարակության» զարգացման շրջանակներում ծրագրային փաստաթղթերի մշակման հարցում իշխանության բոլոր մակարդակների համակարգային մոտեցումը,
- գիտելիքի վրա հիմնված տնտեսություն ձևավորելու ընդհանուր գաղափարի շուրջ բնակչության միավորումն ու, որպես հետևանք, պետական մարմինների, բիզնեսի, գիտահետազոտական ինստիտուտների, կրթական հաս-

---

[1] Воробьева Д. А., Кириченко И. В., «Финляндия: инструменты инновационной политики в условиях кризиса национальной инновационной системы» // МИР (Модернизация. Инновации. Развитие). 2017, т. 8, No 4, с. 544–553. DOI: 10.18184/2079– 4665.2017.8.4.544–553

[2] Большаков С. Н., «Инновационный кластер в системе территориального развития: опыт Финляндии», 2017, УДК 338.24(1-3)(480)

[3] В. В. Уткина, «Экономика знаний» Финляндии: есть чему поучиться», Вестник Томского государственного университета, 2015, No 390, с. 171–178. DOI 10.17223/15617793/390/29, УДК 3.07, 334.025

տատությունների ակտիվ փոխգործակցությունն ու համատեղ նախագծերի իրականացումը,

- տնտեսության ճկունությունն ու շուկայի, այդ թվում՝ ՏՀՏ, ազատականացումը,
- նորարարական մշակումների՝ ՏՀՏ ոլորտում կիրառումն ու վերջիններիս ներդրումն ապահովող օրենսդրաիրավական բազայի ձևավորումը,
- խորհրդարանին՝ որպես գիտելիքների կառավարման ծրագրերի փորձնական հարթակի առաջատար դերի վերապահումը, խորհրդարանականներին որպես նոր կազմավորման մտավոր աշխատակիցներ ընկալելը,
- դեպի R&D և կրթական հաստատություններ ֆինանսավորման անընդհատ աճը,
- քաղաքացիների մոտ ամբողջ կյանքի ընթացքում անընդհատ ու շարունակական կրթության անհրաժեշտության արմատավորումն ու համապատասխան հայեցակարգի ընդունումը:

Վերլուծություն

Ֆինլանդիայի կառավարության տնտեսական բարեփոխումների հաջողությունը պայմանավորված է մի շարք գործոններով[1]:

Ամենակարևորը, կարծում ենք, Ֆինլանդիայի կառավարության գիտակցումն էր, որ շրջապատող աշխարհը փոխվում է, և հիմնականում բնական ռեսուրսների մշակմամբ զբաղվող սեփական արտադրությունը պահպանելու ֆիննական ընկերությունների փորձերը կարող էին հանգեցնել տնտեսական նոր ճգնաժամի կամ խորացնել եղածը: Երկրի ղեկավարությունը հասկանում էր, որ գնալով մեծանում է երկրների միջև խզումը, ու զարգացած երկրների հետ մեկտեղ կան շատ ցածր եկամուտներ և էժան աշխատանքային ռեսուրսներ ունեցող երկրներ, և Ֆինլանդիայի համար ռիսկային է երկար տարիներ մնալ այդպիսի երկրներից մեկը: Այդպիսի ապագայից խուսափելու համար երկրի կառավարությունը վճռական քայլերի դիմեց՝ ձեռնարկելով տնտեսությունը նոր, տեխնոլոգիական բարձր մակարդակի հասցնելու գործընթաց, ինչը հանգեցրեց հանքահումքային ռեսուրսների արդյունահանման, թղթի, էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտներում պետական և մասնավոր ներդրումների կրճատմանը և փոխարենը երկրի կառավարության կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ստեղծման և զարգացման ուղղությամբ ներդրումների խրախուսմանը: Դրան զուգահեռ արագ տեմպերով աճում էին ներդրումային հոսքերը գիտահետազոտական աշխատանքներում: ՏՀՏ ոլորտի զարգացմանն ուղղված Ֆինլանդիայի կառավարության ջանքերը շատ կարճ ժամանակ անց ունեցան իրենց ազդեցությունն, ու Ֆինլանդիան, արդեն հազարամյակի ավարտին, փոքր արդյունաբերական երկրների խմբում հասավ զարգացման ամենաբարձր մակարդակին:

Ֆինլանդիայի տնտեսության տեխնոլոգիական զարգացումն և առաջընթացն

[1] Kimmo Halme, Ilari Lindy, Kalle A. Piirainen, Vesa Salminen and Justine White, «Finland as a Knowledge Economy 2.0», The World Bank, https://doi.org/10.1596/978-1-4648-0194-5

ապահովող առանցքային ուղղություններն են.

1) ***կրթությունը***,
2) *R&D (Research & Development),*
3) ***նորարարությունները***,
4) ***կառավարման համակարգը***:

1) ***Կրթություն***

Ֆինլանդիայի կրթական քաղաքականության հիմնական նպատակը բոլոր քաղաքացիներին կրթություն ստանալու ***հավասար հնարավորություններ առաջարկելն է՝*** անկախ տարիքից, ընտանեկան, ֆինանսական իրավիճակից, սեռից, մայրենի լեզվից կամ բնակավայրից[1]: Կրթական բոլոր մակարդակներում՝ նախադպրոցականից մինչ բարձրագույն, ***կրթությունն անվճար է*** (տրվում են կրթաթոշակներ, ուսման վարկեր՝ ավարտելուց հետո աշխատելու և մարելու պայմանով և այլն):

Որակյալ կրթության առանցքը Ֆինլանդիայում ***դպրոցական*** կրթությունն է: Մանկավարժությունը գրավիչ և շատ հարգի մասնագիտություն է այստեղ, և դիմորդների միայն 10%-ին է հաջողվում ընդունվել մանկավարժական բուհեր և ստանալ մանկավարժի մասնագիտություն:

Հիմնական կրթության տրամադրումը ներառում է դպրոցական պարագաները, դպրոցի սնունդը, առողջապահական, ատամնաբուժական ծառայությունները, տեղափոխությունը (փոխադրամիջոցով ապահովումը), հատուկ կարիքներով երեխաների կրթությունը և վերականգնողական ուսուցումը[2]:

Կրթական բոլոր հաստատություններն ունեն անհրաժեշտ ակադեմիական ինքնավարություն, ինչն ապահովում է կրթական հաստատությունների անկախության *բարձր* մակարդակ: Պետական, գերատեսչական բոլոր ստուգումները կրթական հաստատություններում թեև կարևոր էին ֆիննական դպրոցների զարգացման համար, սակայն 1990-ականներին ավարտվել են, և կրթության որակի ապահովումն այժմ հիմնված է օրենսդրությամբ սահմանված նպատակների, ազգային պետական ուսումնական ծրագրերի և որակավորման պահանջների վրա: Դպրոցների վարկանիշավորում, որպես այդպիսին, չի արվում, սակայն Ֆինլանդիայում մանկավարժներն ունեն կանոնադրական պարտականություն՝ գնահատելու սեփական գործունեությունն ու մասնակցելու արտաքին գնահատումներին, ինչը կրթության որակի վերահսկողության հիմնական և, ըստ էության, միակ գործոնն է:

Այս հանգամանքները պայմանավորել են ֆիննական կրթական համակարգի արդյունավետությունն, ու արդեն բավական մեծ է այն երկրների ցանկը, որոնք փորձում են ուսումնասիրել ու օգտագործել Ֆինլանդիայի կրթական համակարգի փորձը սեփական երկրում: Այսպես, 2017 թվականի օգոստոսին ԵԱՏՄ անդամ երկրներից Ղազախստանի և Ֆինլանդիայի ոլորտային նախա-

---

[1] Basic Education Act, https://www.finlex.fi/en/laki/kaannokset/1998/en19980628.pdf

[2] Ministry of Education and Culture, https://minedu.fi/en/frontpage

ռարությունների միջև համագործակցության հուշագիր է ստորագրվել, համաձայն որի՝ Ղազախստանի ուսուցիչները կարող են մագիստրոսական կրթական ծրագրով ուսումնառել ֆիննական համալսարաններում: Արդյունքում Ղազախստանը երկրի ներսում հատվածական ձևով փորձարկելու է ֆիննական կրթական մոդելը: Այս մոտեցումը կիրառելի կարող է լինել նաև Հայաստանի դեպքում:

2) R&D (Research & Development)

Ֆինլանդիայի նորարարական տնտեսության ***կենտրոնական ոլորտը հետազոտական և կրթական համակարգն է***: Ներդրումները գիտահետազոտական ոլորտում անընդհատ աճում են, ընդ որում՝ բավական բարձր տեմպերով (հավելաճի միջին տարեկան տեմպը՝ մոտ 10%): Դա նպաստել է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ուժեղ կլաստերի ձևավորմանն ու զարգացմանը, որն իր մեջ ներառում է խոշոր և փոքր ընկերությունների մի ամբողջ ցանց, որոնք միմյանց հետ համագործակցում են հետազոտությունների և կրթության ոլորտում, իսկ տնտեսությունը «կլանում է» այդ արդյունքները: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների առաջատար միջազգային մի շարք ընկերություններ սկսել են իրենց արտադրանքն արտահանել Ֆինլանդիա, իսկ բազմաթիվ ընկերություններ էլ (մասնավորապես՝ ICL, IBM, Siemens, Hewlett Packard, Ericsson և Lotus) բացել են իրենց հետազոտական կենտրոնները Ֆինլանդիայում, համագործակցություն են հաստատել ֆիննական ընկերությունների հետ և ձեռք են բերել այս ոլորտում փոքր ընկերություններ:

3) ***Նորարարություններ***

Ֆիննական գիտելիքահենք, նորարարական տնտեսության գործունեությունն ապահովող ինստիտուտները կարելի է բաժանել երեք խմբի՝

1. ռազմավարություններ ու քաղաքականություն մշակողներ,
2. ֆինանսավորում և աջակցություն ապահովող պատասխանատուներ,
3. հետազոտական և կրթական հաստատություններ:

Հետազոտության և նորարարության խորհուրդը պատասխանատու է ֆիննական գիտության և տեխնոլոգիաների, ինչպես նաև ամբողջ երկրի ազգային նորարարական համակարգի քաղաքականության համար: Այն ղեկավարում է վարչապետը, դրա կազմում ընդգրկված են բոլոր առանցքային նախարարություններն ու գերատեսչությունները:

Sitra-ն անկախ հասարակական կազմակերպություն է կամ ուղեղային կենտրոն, որն անմիջականորեն ենթարկվում է խորհրդարանին:

Tekes-ը տեխնոլոգիաների և նորարարության ֆինանսավորման գործակալություն է, որը պատասխանատու է ինչպես հետազոտական կենտրոնների և ինստիտուտների, այնպես էլ կազմակերպությունների R&D և նորարարական գործունեության ֆինանսավորման համար: Գործակալությունը հաշվետու է Զբաղվածության և էկոնոմիկայի նախարարությանը:

Ֆինլանդիայի ակադեմիան պատասխանատու է կրթության և մշակույթի նախարարության համար կատարված ակադեմիական հետազոտությունների և դրանց ֆինանսավորման համար:

Finnvera-ն բանկային, վարկային ծառայություններ է մատուցում այն ՏՀՏ և այլ ոլորտների ընկերություններին, որոնք նպատակ և ներուժ ունեն միջազգային շուկա դուրս գալու համար:

Գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների ռազմավարական կենտրոնները (SHOKs) հասարակական-մասնավոր ընկերություններ են, որոնց գործունեությունն ուղղված է տնտեսությունում նորարարական գործընթացներն արագացնելուն և ակադեմիական հետազոտություններն ու R&D գործունեությունն իրար կապելուն:

4) ***Կառավարման համակարգ***

Տնտեսության տեխնոլոգիական առաջընթացի ապահովման տեսանկյունից Ֆինլանդիայում կիրառվում է համակարգային կառավարման մոտեցում: Վերոնշյալ բոլոր մարմինների գործունեությունն ուղղված է ազգային մակարդակում նշված ուղղություններով քաղաքականությունների մշակմանն ու ֆինանսավորման մեխանիզմների կարգավորմանը, սակայն նշված մարմիններից զատ, գործում են նաև *Տնտեսական զարգացման, տրանսպորտի և շրջակա միջավայրի 15 կենտրոններ,* որոնք պատասխանատու են կենտրոնական կառավարության առաջադրանքների՝ տեղական մակարդակում իրագործման և զարգացում ապահովելու համար:

Բարեփոխումներին նպաստող այլ իրողություններ

• Բարեփոխումների իրականացմանը բավականաչափ նպաստել է Ֆինլանդիայի անդամակցությունը Եվրամիությանը: Այս որոշումը կառավարությանն օգնել է երկրի ներսում հասնել քաղաքական կայունության և կենտրոնանալ նորարարական գործունեության ոլորտում ներդրումներ ներգրավելու ուղղությամբ: Իսկ Եվրոպական արժութային միությանն անդամակցելուց հետո Ֆինլանդիան այլևս կարիք չուներ իրականացնելու փոխարժեքի կայունության ապահովմանն ուղղված քաղաքականություն:

• Ֆինլանդիայի կառավարությունը ձեռնարկատիրությունը համարում է երկրի մրցունակության կարևորագույն պայմանը և ձգտում է հնարավոր բոլոր միջոցներով ապահովել անհրաժեշտ պայմաններ կազմակերպությունների ակտիվ բիզնես-գործունեության համար՝ հիմնված պետություն-մասնավոր հատված համագործակցության վրա: Այդ շրջանակներում, Ֆինլանդիայի տնտեսական քաղաքականությունը միտված է տնտեսության արտադրողականության բարձրացմանը՝ նոր գաղափարների օգտագործման, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների ստեղծման և արագ ներդրման միջոցով: Ֆինլանդիայի տնտեսության հաջողությունն ապահովող հիմնական գործոններից մեկը պետության, գործատուների և արհմիությունների կառուցողական գործընկերությունն էր:

• Ֆինլանդիայի *հաջողության հիմնական պատճառներից* է այն, որ ներկայում Ֆինլանդիայի ***արտահանման կառուցվածքում էական մասնաբաժին ունեն հենց երկրում ստեղծված տեխնոլոգիաները***: Մինչ այժմ Ֆինլանդիայում բարձր տեխնոլոգիական ընկերություններում օտարերկրյա կապիտալի մասնա-

բաժինը փոքր է, սակայն դա չի նշանակում, որ երկիրը «փակել է» արտասահմանյան կազմակերպությունների առաջ դռները: 1993 թ. «Օտարերկրյա սեփականության կարգավորման մասին» օրենքի չեղարկումից հետո արտասահմանյան ընկերությունները զգալիորեն ավելացրին իրենց ներդրումները Ֆինլանդիայում: Այնուամենայնիվ, արտասահմանում ֆիննական ներդրումների ծավալը գերազանցում է երկրում օտարերկրյա ներդրումների ծավալին:

Դիտարկված գործոնների համալիր ազդեցությամբ ֆիննական տնտեսական համակարգի բարեփոխումներն և տեխնոլոգիական «ճեղքումը» հանգեցրել են տնտեսության բազմազանեցման, ինչի արդյունքում վերջին տարիների ընթացքում երկրում զգալիորեն նվազել է տնտեսության կախվածությունը հումքի վերամշակման գործընթացից կամ մեկ ընկերության գործունեությունից. 2008 թ. միայն ֆիննական Nokia ընկերության արտահանման ծավալն ավելի մեծ էր, քան նախկինում տնտեսության մեջ գերակշռող թղթի արդյունաբերության արտադրանքը, ինչն էլ գործնականում պատճառ դարձավ Ֆինլանդիայի տնտեսության խորը անկման, երբ միջազգային շուկայում նվազեցին Nokia ընկերության արտադրանքի մրցունակությունը, ընկերության արտահանման ծավալները, և արդյունքում փակվեց ընկերության խոշոր մասնաճյուղը:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ Ֆինլանդիայի բարեփոխումների ուղին և կառուցվածքը կարելի է պատկերել հետևյալ աղյուսակով (աղյուսակ 1)՝

Աղյուսակ 1

Ֆինլանդիայի բարեփոխումների ուղին և կառուցվածքը

Ցուցանիշ	**Հիմնական կառույցների բարեփոխում** (1960 **թ.-ից)**	**Տեխնոլոգիական առաջընթաց** (1980 **թ.-ից)**	**Ճգնաժամից դուրս** (1990-**ականներ)**	**Գիտելիքահենք տնտեսությունը գլոբալացող աշխարհում** (2000 **թ.-ից)**
Քաղաքականության իրականացման հիմքերը	Միջազգային առևտրի ազատականացում	«Միկրոէլեկտրոնային հեղափոխություն»	Վերականգնում ճգնաժամից	Գլոբալացում
Հիմնական նպատակները	Նոր քաղաքականություն	Տեխնոլոգիական նոր հնարավորությունների օգտագործում	Գիտելիքահենք աճի ինտենսիվացում	Զարգացող ընկերությունների ստեղծում
Քաղաքականության ուղղվածությունը	Կրթություն, գիտություն	Տեխնոլոգիա	Ազգային նորարարական համակարգ	Նորարարություն, նորարարական էկոհամակարգեր
Հիմնական կատարողները	Կրթության և մշակույթի նախարարություն, Ֆինլանդիայի ակադեմիա	Նորարարության ֆինանսավորման ֆիննական գործակալություն	Գիտության և տեխնոլոգիայի քաղաքականության խորհուրդ	Մի քանի կատարողներ
Ակնկալվող արդյունքները	Ազգային մրցունակություն	Բարձր տեխնոլոգիական արտադրանքների աճ	Զբաղվածության աճ	Նորարարական ընկերությունների աճ
Միջամտության աստիճանը	Ազգային	Ազգային, տարածաշրջանային	Տարածաշրջանային, անդրազգային (ԵՄ)	Ազգային, տեղական
Ներկայացուցչական գործիքը	Ծրագրի ֆինանսավորում	Ազգային տեխնոլոգիաների ծրագրեր	R&D ֆինանսավորման ԵՄ աղբյուրներ	SHOKs[1]

[1] Գիտության, տեխնոլոգիայի և նորարարության ռազմավարական կենտրոններ:

Ինչպես տեսնում ենք աղյուսակում, բարեփոխումների սկիզբը դրվել է շատ ավելի վաղ, ուստի պետք է հաշվի առնել, որ նման փոփոխությունների արդյունքը նկատելի է լինում տարիներ հետո:

Ֆինլանդիայի փորձից կարելի է քաղել մի շարք ***դասեր***, որոնք կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. մարտահրավերները հասկանալը, հարմարվելը և դրանք որպես հնարավորություն դիտարկելը (նորացման ունակությունը),
2. կրթության վճռորոշ կարևորության գիտակցումը,
3. կառավարման արդյունավետ համակարգի և հիերարխիայի ստեղծումը,
4. նորարարական քաղաքականության իրականացումը բոլոր աստիճաններում,
5. ներդրումների մշտադիտարկումը և գնահատումը,
6. զարգացող երկրների հետ գիտելիքի բնագավառում գործընկերության ստեղծումը:

Ֆինլանդիայի տնտեսական «ճեղքումը» երկարաժամկետ հատվածում դիտարկելիս գիտելիքահենք տնտեսության վերջին զարգացումները մասնավորապես կարևոր ազդակներ ունեն, որոնք խիստ ուսուցողական են: Քաղաքականության մշակման, իրականացման և արդյունքների ստացման առումով ֆիննական փորձի ամենաէական ազդակներն են.

- Ֆինլանդիան շատ ժամանակ և միջոցներ է ներդրել արդյունավետ կրթական համակարգ կառուցելու վրա, որն էլ իր՝ գիտելիքի վրա հիմնված տնտեսության հիմքն է: Ուստի նման փոփոխությունների արդյունքը կարճ ժամկետում նկատելի չէ: Սա հատկապես կարևոր է զարգացող երկրների համար քաղաքականության մշակման և արդյունքներ ակնկալելու տեսանկյունից:
- Գիտելիքահենք տնտեսություն կառուցելու համար կարևոր են շահերի հաշվեկշռման սկզբունքի վրա հիմնված քաղաքականություններն և ռազմավարությունները: Դրանց մշակման և իրականացման գործում Ֆինլանդիան համակարգված ձևով կիրառել է բոլոր շահագրգիռ կողմերի միջև համաձայնեցված և համաձայնեցման մեխանիզմներ:
- Ֆիննական զարգացման մեջ մեծ է ՏՀՏ դերը, միևնույն ժամանակ այդ զարգացումը չպիտի հենվի մեկ ընկերության վրա: Այս պարագայում նվազում է երկրի տնտեսական անկախության աստիճանը:
- Կառավարությունը գիտելիքահենք տնտեսության մեջ մեծ դերակատարում ունի որպես համակարգող և միջնորդ՝ միևնույն ժամանակ գործակալություններին և տեղական իշխանության մարմիններին տալով նշանակալի անկախություն՝ ռազմավարության արդյունավետ իրագործման համար:

Եզրակացություններ և առաջարկություններ

Անշուշտ, ուսումնասիրված բոլոր գործոնների՝ Հայաստանում կիրառման արդյունավետությունն անհրաժեշտ է դիտարկել իրավիճակի, ազգային առանձ-

նահատկությունների և ժամանակի տեսանկյունից: Այնուամենայնիվ, փորձենք առանձնացնել այն խնդիրները, որոնք, կարծում ենք, կարող են կիրառական լինել Հայաստանի տնտեսության ժամանակակից պայմաններում.

- «գիտելիքի տնտեսություն» ձևավորելու ընդհանուր գաղափարի շուրջ հասարակության միավորում և, որպես հետևանք, պետական կառավարման մարմինների, բիզնեսի, հասարակական կազմակերպությունների, գիտահետազոտական ինստիտուտների, կրթական հաստատությունների ակտիվ փոխգործակցություն, համատեղ նախագծերի իրականացում,
- դեպի R&D և կրթական հաստատություններ ֆինանսավորման շարունակական աճ,
- կրթություն ստանալու հավասար հնարավորություններ բոլոր քաղաքացիների համար,
- յուրաքանչյուր քաղաքացու կյանքում կրթության շարունակական և անընդհատության ընկալման արմատավորում,
- հետազոտական և կրթական համակարգի կազմակերպությունների կլաստերի ձևավորում՝ դրանց համագործակցության պայմանների հնարավորինս ապահովմամբ,
- հիմնական կրթության տրամադրման մեջ անվճար դպրոցական պարագաների, դպրոցում սննդի, առողջապահական ծառայությունների, տեղափոխության (փոխադրամիջոցով ապահովում) ներառում,
- կրթության դերի արժևորում՝ ուսուցիչների հասարակական գնահատման բարձրացման շեշտադրմամբ (որպես ուսուցիչ լավագույնների ընտրություն, անվճար կրթության տրամադրում, վերապատրաստումներ, ֆինանսական պայմանների բարելավում),
- Ֆինլանդիայի կրթության ոլորտի պատասխանատու մարմնի հետ համագործակցության հաստատում՝ փոխանակման ծրագրերի իրականացման նպատակով,
- ֆիննական կառավարման մոդելների, ինստիտուցիոնալ կառուցվածքների և լիազորությունների, համակարգում համագործակցության ընդլայնման մեխանիզմների ներդրման և դրանց արդյունավետության ուսումնասիրություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Большаков С. Н., «Инновационный кластер в системе территориального развития: опыт Финляндии», 2017, УДК 338.24(1-3)(480)
2. Воробьева Д. А., Кириченко И. В., «Финляндия: инструменты инновационной политики в условиях кризиса национальной инновационной системы» // МИР (Модернизация. Инновации. Развитие). 2017, т. 8, No 4, с. 544–553. DOI: 10.18184/2079– 4665.2017.8.4.544–553
3. Уткина В. В., «Экономика знаний» Финляндии: есть чему поучиться», Вестник Томского государственного университета. 2015, No 390, с. 171–178. DOI 10.17223/15617793/390/29, УДК 3.07, 334.025

4. Basic Education Act, https://www.finlex.fi/en/laki/kaannokset/1998/en19980628.pdf
5. Corruption Perceptions Index 2019, Transparency International.
6. Fragile States Index 2018, The Fund for Peace.
7. Freedom in the World 2018, Freedom House.
8. Kimmo Halme, Ilari Lindy, Kalle A. Piirainen, Vesa Salminen and Justine White, «Finland as a Knowledge Economy 2.0», The World Bank.
9. Ministry of Education and Culture, https://minedu.fi/en/frontpage
10. The Global Competitiveness Report 2018: Property Rights, World Economic Forum (WEF).
11. The Legatum Prosperity Index 2018: Finland, Legatum Institute.
12. The Travel & Tourism Competitiveness Report 2017, World Economic Forum.
13. The World Bank data, https://data.worldbank.org/.
14. World Happiness Report 2019, Sustainable Development Solutions Network.

References

1. Bol'shakov C. N., «Innovacionnyj klaster v sisteme territorial'nogo razvitija: opyt Finljandii», 2017, UDK 338.24(1-3)(480)
2. Vorob'eva D. A., Kirichenko I. V., «Finljandija: instrumenty innovacionnoj politiki v uslovijah krizisa nacional'noj innovacionnoj sistemy» // MIR (Modernizacija. Innovacii. Razvitie). 2017, t. 8, No 4, s. 544–553. DOI: 10.18184/2079–4665.2017.8.4.544–553
3. Utkina V. V., «Jekonomika znanij» Finljandii: est' chemu pouchit'sja», Vestnik Tomskogo gosudarstvennogo universiteta. 2015, No 390, s. 171–178. DOI 10.17223/15617793/390/29, UDK 3.07, 334.025
4. Basic Education Act,
5. https://www.finlex.fi/en/laki/kaannokset/1998/en19980628.pdf
6. Corruption Perceptions Index 2019, Transparency International.
7. Fragile States Index 2018, The Fund for Peace.
8. Freedom in the World 2018, Freedom House.
9. Kimmo Halme, Ilari Lindy, Kalle A. Piirainen, Vesa Salminen and Justine White, «Finland as a Knowledge Economy 2.0», The World Bank.
10. Ministry of Education and Culture, https://minedu.fi/en/frontpage
11. The Global Competitiveness Report 2018: Property Rights, World Economic Forum (WEF).
12. The Legatum Prosperity Index 2018: Finland, Legatum Institute.
13. The Travel & Tourism Competitiveness Report 2017, World Economic Forum.
14. The World Bank data, https://data.worldbank.org/.
15. World Happiness Report 2019, Sustainable Development Solutions Network.

Թաթուլ Մկրտչյան
Աստղիկ Հովհաննիսյան

ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համառոտագիր: Ֆինլանդիայի տնտեսական հեղափոխության վերաբերյալ մի շարք հետազոտությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ի թիվս այլ գործոնների՝ նորարարական տնտեսության կենտրոնական ոլորտը հետազոտական և կրթական համակարգն է: Հաջողության հասնելու համար Ֆինլանդիան երկար ճանապարհ է անցնել՝ վերակառուցելով իր տնտեսական համակարգը և ավելի շատ միջոցներ ուղղելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ստեղծմանն ու գիտահետազոտական ոլորտի ֆինանսավորմանը:

Բանալի բառեր. Ֆինլանդիա, տնտեսական հեղափոխություն, նորարարական տնտեսություն, «գիտելիքահենք տնտեսություն», տեղեկատվական տեխնոլոգիաներ, կառավարման համակարգ, կրթական համակարգ, R&D, մրցունակություն

Татул Мкртчян
Астхик Оганнисян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» ФИНЛЯНДИИ

Аннотация: Изучение ряда исследований относительно экономической революции в Финляндии показало, что, помимо прочих факторов, центральной сферой инновационной экономики является исследовательская и образовательная система. Финляндия прошла долгий путь для достижения успеха, перестроив свою экономическую систему и направив больше средств на создание сферы информационных технологий и финансирование научно-исследовательской сферы.

Ключевые слова: Финляндия, экономическая революция, инновационная экономика, «экономика, основанная на знаниях», информационные технологии, система управления, система образования, исследования и разработки, конкурентоспособность

Tatul Mkrtchyan
Astghik Hovhannisyan

"THE ECONOMIC MIRACLE" OF FINLAND

Abstract: The review of a number of studies on the economic revolution in Finland showed that, among other factors, the research and education system is the central area of the innovative economy. Finland covered long way to achieve success, by restructuring its economic system and spending more resources on creating the information technology sector and financing scientific research sector.

Keywords: Finland, economic revolution, innovative economy, "knowledge-based economy", information technology, management system, education system, R&D, competitiveness

Դավիթ Հախվերդյան
Շուշան Մովսիսյան

ԼԵՀԱՍՏԱՆԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Ներածություն

Լեհաստանի Հանրապետությունը Կենտրոնական Եվրոպայի խոշորագույն պետությունն է: Տարածքի մեծությամբ աշխարհում զբաղեցնում է 69-րդ տեղը, ԵՄ անդամ երկրների շարքում՝ 6-րդ տեղը: Բնակչության թվով (2019 թ.՝ 37.9 մլն մարդ) աշխարհում զբաղեցնում է 38-րդ տեղը, ԵՄ երկրների շարքում՝ 6-րդ տեղը: Լեհաստանը մոնոէթնիկ պետություն է: Բնակչության 94.8%-ը կազմում են լեհերը:

Լեհաստանը 1995 թվականից ԱՀԿ, 1996-ից՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, 1999-ից՝ ՆԱՏՕ-ի, 2004- ից՝ Եվրոպական միության անդամ է: Շենգեն գոտի է մտել 2007 թ.:

1989 թվականից սկսած Լեհաստանն իրականացնում է շուկայական տնտեսության անցման բարդ գործընթաց և այս բնագավառում հասել է անվիճելի հաջողության: Լեհաստանը արևելաեվրոպական երկրներից առաջիններից է, որ բռնել է համակարգային վերափոխումների ուղին, ինչպես նաև առաջիններից է, որ «քաղել է» շուկայական տնտեսության վերափոխման «պտուղները»:



Գծապատկեր 1. *Լեհաստանի ՀՆԱ աճը (%)*[1]

1992 թվականից Լեհաստանի տնտեսությունն ունեցել է տպավորիչ տնտեսական աճ (տե՛ս գծապատկեր 1): Արդեն 1996 թ. հաջողվել է գերազանցել համախառն ներքին արդյունքի նախաանցումային՝ 1989 թ. մակարդակը[2]: Ընդ որում՝

[1] International Monetary Fund, World Economic Outlook Database, October 2019.
[2] Sinitsina I., Chudakova N., Fundamental Reforms: Poland's Experience, 2005, p. 6.

Լեհաստանը Եվրոպական միության միակ երկիրն է, որը 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում խուսափել է լճացումից և արձանագրել դրական տնտեսական աճ: Ըստ ԱՄՀ կանխատեսումների՝ 2019 թ. Լեհաստանի տնտեսական աճը կկազմի 4%, ինչը նշանակում է, որ ԵՄ անդամ երկրներից ավելի արագ են աճում միայն Մալթայի, Հունգարիայի և Իռլանդիայի տնտեսությունները:

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն աճում է արագ և կայուն տեմպերով (տարեկան 4%[1]): Այս ցուցանիշը 1990-2019 թթ. ավելացել է 2.7 անգամ: Արդյունքում Լեհաստանը 15 տարվա ընթացքում կարողացել է միջին եկամուտ ունեցող երկրներից անցում կատարել բարձր եկամուտ ունեցող երկրների շարքը:

Գրականության ակնարկ: Լեհաստանի սոցիալ-տնտեսական վերափոխումների ընթացքն ուսումնասիրվել է Հ. Լեհմանի, Ի. Սինիցինայի, Ն. Չուդակովայի, Գ. Կոլոդկոյի, Ս. Հուֆմանի, Ս. Ջոնսոնի և այլոց կողմից: Առանձնացվում է հետսոցիալիստական բարեփոխումների երեք փուլ: Առաջին փուլը մեկնարկեց 1990 թ., երբ կառավարությունը միաժամանակ ներկայացրեց 10 բարեփոխումներ՝ հիմնված «շոկային թերապիայի» մոտեցման վրա: Բարեփոխումների երկրորդ մեծ խումբը ներկայացվեց 1999 թ. և ընդգրկում էր առողջապահական, կենսաթոշակային, կրթական համակարգերը: Այնուհետև ԵՄ անդամակցությամբ իրականացվեցին մի շարք այլ կառուցվածքային բարեփոխումներ (աշխատաշուկայի, ֆինանսական հատվածի բարեփոխումներ, եկամտահարկի կատարելագործում, բարենպաստ գործարար միջավայրի ստեղծում և այլն):

Իսկ ինչպե՞ս հաջողվեց այդպիսի արմատական փոփոխություններ իրականացնել: Ի. Սինիցինայի և Ն. Չուդակովայի կարծիքով՝ տնտեսությունն ու հասարակությունը պատրաստ էին ընդունելու նոր շուկայական համակարգը[2]: Դեռևս 1980-ականներին Լեհաստանը փորձել էր անցում կատարել շուկայական սոցիալիզմի համակարգին: Թեև այս համակարգը ձախողվեց, սակայն հիմքեր դրվեցին մասնավոր հատվածի զարգացման համար, և որոշ չափով ազատականացվեցին ներքին գները: Բացի տնտեսական գործոններից, ահռելի դերակատարում ունեցավ հասարակության աջակցությունը: Հանրությունը գիտակցում էր, որ ծանր և ցավոտ է լինելու, բայց և այնպես, բարեփոխումներն անհրաժեշտ են[3]:

Հ. Լեհմանի կարծիքով՝ Լեհաստանի ՀՆԱ «աճի հրաշքը» պայմանավորված է այն հանգամանքով, որ հետսոցիալիստական ողջ ժամանակահատվածում ոչ մի կարևոր բարեփոխում չի ընդհատվել: Այն պարագայում, երբ բարեփոխումների նկատմամբ դժգոհությունները հանգեցրել են իշխանափոխության, նոր

---

[1] "World Bank Group. 2017. Lessons from Poland, Insights for Poland: A Sustainable and Inclusive Transition to High Income Status. World Bank, Washington, DC.

[2] Տե՛ս Sinitsina I., Chudakova N., Fundamental Reforms: Poland's Experience, 2014, p. 8.

[3] Можейко В., «Чем опыт польских реформ может быть полезен Беларуси?» http://liberalclub.biz/analytics/economics/external-articles/-chem-opyt-polskih-reform-mozhet-byt-polezen-belarusi?fbclid=IwAR1oKkN-1SSQ73YXTEa-OAOMgY9bW8-_t_v_tjg2nLHa49npe9u-2diZ4iQ

կառավարությունը (ընդդիմությունը) թեև նոր ծրագրեր չի ներկայացրել, սակայն չի էլ ընդհատել նախորդ ծրագրերը և թույլ է տվել, որ կատարված փոփոխություններն արդյունք տան: Դրական արդյունքն ի վերջո համոզել է հասարակությանը վերափոխումների արդյունավետ լինելու մեջ և ընտրելու բարեփոխումների հակված ուժերի, որոնք էլ նախաձեռնել են նոր ծրագրեր[1]: Կարևոր դեր է խաղացել նաև լեհերի՝ որպես եվրոպական երկիր իրենց նույնականացնելու հանգամանքը: Նրանք պատրաստ էին կրել որոշակի սահմանափակումներ՝ ԵՄ ընտանիքին միանալու համար: 1990-ականների սկզբին մեծ դեր խաղաց նաև արտաքին օժանդակությունը:

Հիմնական վերլուծություն

Լեհաստանի սոցիալ տնտեսական բարեփոխումների սկիզբը: Լեհաստանի՝ շուկայական տնտեսության կառուցման վերափոխումների մի մասը հնարավոր եղավ իրականացնել անմիջապես՝ ստեղծելով ազատ մրցակցային տնտեսվարման հնարավորություններ, իսկ կառուցվածքային վերափոխումները տևեցին տարիներ:

1989 թ. ընտրվեց առաջին ոչ սոցիալիստական կառավարությունը, որը ձեռնամուխ եղավ շուկայական տնտեսության կառուցման ծրագրի պատրաստմանը և տնտեսական քաղաքականության որոշմանը: Թեև իշխանությունների նպատակը պետության նվազագույն մասնակցությամբ տնտեսության ստեղծումն էր, տնտեսական քաղաքականության հիմնական տարրը դարձավ պետության մասնակցությունը տնտեսական զարգացմանը, և հենց պետական հետևողական քաղաքականություն շնորհիվ հնարավոր եղավ զարգացման բարձր ցուցանիշների ձեռքբերումը:

Շուկայական տնտեսության անցման սկզբում Լեհաստանի տնտեսությունն ուներ մակրոտնտեսական անհավասարակշռություն: 1990 թ. հունվարին կառավարությունը նախաձեռնեց շուկայական տնտեսության անցման ծրագիրը, որն ուներ երեք բաղկացուցիչներ՝

1. դրամավարկային և գների կայունացում,
2. կառուցվածքային վերափոխումներ,
3. արտաքին տնտեսական օժանդակություն և արտաքին պարտքի նվազեցում[2]:

1990 թ. Լեհաստանը սկսեց իրականացնել բավականին կոշտ դրամավարկային քաղաքականություն, որը կապված էր «շոկային թերապիայի» մոտեցման հետ: «Շոկն» առաջին հերթին պայմանավորված էր գների ազատականացմամբ: Դեռևս 1989 թ. օգոստոսին ազատականացվել էին սննդամթերքի գները: 1990 թ. հունվարից վերացվեց գնային վերահսկողությունը՝ բացառությամբ մի

---

[1] Տե՛ս Lehmann H., The Polish growth miracle: outcome of persistent reform efforts, IZA Policy Paper No. 40, 2012, p. 7 /http://ftp.iza.org/pp40.pdf/

[2] Lehmann H., The Polish growth miracle: outcome of persistent reform efforts, IZA Policy Paper No. 40, 2012, p. 13 /http://ftp.iza.org/pp40.pdf/

քանի ոլորտների (էլեկտրաէներգիա, գազ, ջեռուցում, հեռահաղորդակցություն, տրանսպորտ): Կառավարությունը 1990 թ. կանխատեսում էր սպառողական գների ինդեքսի աճ 94 %-ով, իրականում աճը կազմեց 250 %, ինչը, իր հերթին, հանգեցրեց իրական աշխատավարձի զգալի անկման: Կոշտ դրամավարկային քաղաքականությունը, որն իրագործվում էր ներքին վարկավորման ընդլայնումը սահմանափակելու միջոցով, իր հերթին, բերեց իրացվելիության պակասուրդի:

Պետությունն ամբողջությամբ վերացրեց պետական ձեռնարկություններին տրվող սուբսիդիաները և հարկային արտոնությունները, որը նպատակ էր հետապնդում վերացնել բյուջեի պակասուրդը և պետական ձեռնարկություններին դնել շահույթի մաքսիմալացման ուղու վրա:

Կայունացման ծրագրի մյուս տարրը միասնական փոխարժեքի սահմանումն էր: Ազգային արժույթի փոխարժեքը սահմանվեց հավասարակշռված մակարդակից բավականին ցածր, ինչը և պաշտպանեց ներքին արտադրողին, ինչպես նաև խթանեց արտահանումը, որի արդյունքում 1990 թ. Լեհաստանն ունեցավ առևտրային հաշվեկշռի ավելցուկ և կուտակեց զգալի արտարժութային պաշարներ: Հաջորդող տարիներին Խորհրդային Միության փլուզումը, ինչպես նաև Արևմտյան և Արևելյան Գերմանիայի միավորման արդյունքում վերջինում արդյունաբերության փլուզումը հանգեցրին լեհական ձեռնարկությունների ավանդական կապերի կորստին: Արդեն 1991 թ. Լեհաստանն ուներ առևտրային հաշվեկշռի պակասուրդ: Մյուս կողմից, ավանդական տնտեսական կապերի խզումը հիմք հանդիսացավ, որպեսզի լեհական ձեռնարկությունները կողմնորոշվեն դեպի արևմտյան շուկաներ:

Մինչև շուկայական տնտեսության անցումը Լեհաստանի տնտեսության մեջ տիրապետող էին պետական ձեռնարկությունները: Կառուցվածքային վերափոխումները նախատեսում էին պետական ձեռնարկությունների մասնավորեցում և հարկային բարեփոխումներ, որոնք կարճ ժամանակահատվածում իրագործելի չէին: Բաժնետոմսերի վաճառքը ներքին ներդրողներին կարճաժամկետում անհնար էր, քանի որ գնաճը «ոչնչացրել էր» խնայողությունների մեծ մասը, վաճառքն օտարերկրացիներին քաղաքականապես անիրատեսական էր: Հետևապես, ինչպես ԿԱԵ մյուս երկրներում, Լեհաստանում ևս բաժնետոմսերը տրվեցին քաղաքացիներին՝ առաջ բերելով կորպորատիվ կառավարման խնդիրներ: Յուրաքանչյուր քաղաքացի ուներ փոքր մասնաբաժին, որը հնարավորություն չէր տալիս վերահսկողություն սահմանել ընկերության գործունեության նկատմամբ: Այս խնդիրը լուծելու համար հիմնվեցին Ազգային ներդրումային հիմնադրամներ (ԱՆՀ): Մանրածախ առևտրի օբյեկտների մասնավորեցումն իրագործվեց միանգամից, այն դեպքում, երբ խոշոր ձեռնարկությունների մասնավորեցումը բավականին դանդաղ գործընթաց էր: Լայնամասշտաբ մասնավորեցման գործընթացի մասին օրենքն ընդունվեց միայն 1993 թ., ԱՆՀ հիմնումը տևեց մոտ 6 տարի:

Պետական ձեռնարկությունների մասնավորեցմանը զուգահեռ ստեղծվում էին նոր մասնավոր ձեռնարկություններ: Վերջիններս աշխատատեղերի ստեղծ-

ման ավելի մեծ կարողություններ ունեին, ինչը պայմանավորված էր ոչ միայն իրականացվող քաղաքականությամբ, այլև այն հանգամանքով, որ սոցիալիստական համակարգի վերջին տարիներին մասնավոր ձեռնարկություններ արդեն իսկ գոյություն ունեին:

Չնայած հասարակության և պետական ձեռնարկությունների կողմից մեծ ճնշմանը՝ իշխանությունը չզիջեց և շարունակեց բարեփոխումները: Զրկվելով սուբսիդիաներից՝ պետական ձեռնարկությունները ստիպված էին բարձրացնել գործունեության արդյունավետությունը:

Տնտեսության բարեփոխումների ընթացքն ու դինամիկան Լեհաստանում

Հետագա բարեփոխումներն իրականացվեցին 1990-ականների վերջին և ընդգրկում էին առողջապահության, կրթության և կենսաթոշակային համակարգն ու աշխատաշուկան:

Կրթություն: 1999 թ. Լեհաստանն իրականացրեց մի շարք կառուցվածքային բարեփոխումներ դպրոցական համակարգում, որի նպատակն էր բարելավել կրթության որակը և մեծացնել կրթական հնարավորությունները բոլորի համար: Այսօր Լեհաստանի կրթական համակարգը լավագույններից մեկն է Եվրոպայում և հետ չի մնում անգամ աշխարհում լավագույններից:

Մինչև 1990-ական թթ. միջնակարգ դպրոցների սովորողների մեծ մասը հաճախում էր տարբեր միջին մասնագիտական (արհեստագործական) կրթական հաստատություններ, իսկ բարձրագույն կրթությունը հասանելի էր հարաբերականորեն փոքր խմբի: Դպրոցական կրթությունը բաղկացած էր հետևյալ փուլերից՝

1. նախադպրոցական – կամավոր,
2. հիմնական դպրոց - 8 տարի,
3. լրիվ միջնակարգ դպրոց - 4-5 տարի:

1999 թ. բարեփոխումներով համապարփակ կրթությունն ավելացավ մեկ տարով, և հենց սա է համարվում բարեփոխումների ամենակարևոր կետը: Հիմնական կրթությունը 8-ից դարձավ 6 տարի, որին հետևում է 3 տարի ժամկետով ոչ լրիվ միջնակարգ կրթությունը (lower secondary education), որը նախկինում գոյություն չուներ: Լրիվ միջնակարգ կրթությունը (upper secondary education) կրճատվեց մեկ տարով: Նոր համակարգում սովորողները նույն ուսումնական ծրագիրն անցում են 9 տարում՝ 8 տարվա փոխարեն: Փաստորեն կրթական ծրագրերի ընտրությունը հետաձգվեց մեկ տարով: Արդեն 2012-2015 թթ. բարեփոխումների ծրագրով նախադպրոցական կրթության վերջին տարին (5 տարեկան երեխաներ համար) դարձավ պարտադիր, 2014 թ. տարրական դպրոցում գործող զրո դասարանը վերացվեց, 6 տարեկան բոլոր երեխաները ուսումը սկսում են առաջին դասարանում: Հիմնական և ոչ լրիվ միջնակարգ կրթությունը պարտադիր է[1]:

[1] Տե՛ս Jakubowski M., Opening up opportunities: education reforms in Poland, 2015.

1999 թ. բարեփոխումները հիմք դրեցին նաև համապետական քննությունների համար: Դրանք անցկացվում են կրթության յուրաքանչյուր փուլի ավարտին, ստանդարտացված են, անհատական արդյունքները բաց և հասանելի են բոլոր աշակերտների և ուսուցիչների համար: Սա, իր հերթին, ճնշում է գործադրում վերջիններիս վրա՝ հասնելու ավելի բարձր արդյունքների: Նախկինում միջնակարգ կրթությունը չէր ապահովում ուղղակի մուտք դեպի բուհ: Ներկայումս լրիվ միջնակարգ դպրոցները ավարտվում են քննություններով, որոնք ծառայում են նաև որպես բուհի ընդունելության քննություն:

Գիտելիքների արտաքին գնահատումը և Լեհաստանի դպրոցների՝ ուսուցման ինքնավարությունը ապահովում են ազատության և արտաքին մոնիթորինգի լավ համադրություն: Մինչև վերջերս ուսուցիչներն էին որոշում՝ որ գրքերն ու ուսուցման մեթոդները կիրառել: Կառավարությունը անցում կատարեց միասնական դասագրքերի՝ պահպանելով ուսուցման մեթոդների ընտրության ազատությունը:

Վերջին ժամանակներում իրականացվել են նաև ուսումնական պլանի բարեփոխումներ: Կրթական ծրագրերը կենտրոնացած են ոչ թե գիտելիքի ձեռքբերման, այլ կրթական վերջնարդյունքների վրա, որոնք պետք է ձեռք բերվեն կրթության յուրաքանչուր փուլի վերջում: Նոր ուսումնական պլանը սահմանափակում է գիտելիքի ձեռքբերման անհրաժեշտությունը և շեշտը դնում է սովորողի՝ խնդիրներ լուծելու, վերլուծական կարողությունների զարգացման վրա:

Առողջապահություն: Մինչև 1998 թ. Լեհաստանի յուրաքանչյուր քաղաքացի ուներ առողջապահության անվճար հասանելիություն, բժշկական հաստատությունները ֆինանսավորվում էին պետության կողմից: Այս համակարգին բնորոշ էին աշխատանքների կազմակերպման ցածր մակարդակը և ֆոնդերի ոչ ռացիոնալ կառավարումը: Պետական բյուջեի ծախսերի մեջ գնալով ավելի ու ավելի էին գերակշռում սոցիալական ապահովության ծախսերը, այն դեպքում, երբ առողջապահությունը տնային տնտեսությունների բյուջեի փոքր մասն էր կազմում[1]:

1999 թ. Առողջության համընդհանուր ապահովագրության օրենքի ընդունումը առողջապահական համակարգում պետության դերի սահմանափակման, հիվանդանոցների ինքնավարության հաստատման և առողջապահական ֆոնդերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակ էր հետապնդում: Բարեփոխումների առանցքը ֆինանսավորումն էր: Ստեղծվեցին տարածաշրջանային առողջապահության ապահովագրական ընկերություններ, որոնք ֆինանսավորվում էին աշխատողների պարտադիր վճարած ապահովագրավճարներից: Այդ ընկերություններն առողջապահական ծառայություններ էին ձեռք բերում հիվանդանոցներից: Մյուս կարևոր կետը առողջապահության կառավարումը ազգային առողջապահության և սոցիալական ապահովության նախարարությունից տարածաշրջանային մարմիններին փոխանցումն էր: Վեր-

[1] Տե՛ս Piotrowska-Marczak K., Kietlińska K., Reforming Health And Social Services In Poland - An overview, 2010, p. 288.

ջիններս պատասխանատու էին առողջապահական ծառայությունների որակի համար և ֆինանսավորման հետ առնչություն չունեին[1]: Բարեփոխումների արդյունքում հիվանդանոցները դարձան պետական բյուջեից անկախ և ձեռք բերեցին ավելի շատ ֆինանսական ռեսուրսներ իրենց գործունեության համար:

2016 թ. տվյալներով բնակչության 91.5 տոկոսը ներառված է պարտադիր առողջության ապահովագրության համակարգում, որը ներառում է ապահովագրական վճարներ կատարող աշխատողներին: Աշխատավարձ կամ այլ եկամուտներ չստացող անձանց առողջապահական վճարները ֆինանսավորվում են պետական միջոցներից: Կառավարությունը պարտավորվում է անվճար առողջապահական ծառայություններ ապահովել երեխաների, հղիների, հաշմանդամների և տարեցների համար:

Առողջապահական բարեփոխումները, կարելի է ասել, ձախողվել են, քանի որ առողջապահության որակի ցուցանիշներով երկիրը հետ է Եվրոպական միության գրեթե բոլոր երկրներից: Բացի այդ, առողջապահության ծախսերը ՀՆԱ նկատմամբ զարգացող երկրների շարքում ամենացածրերից է: Բարեփոխումների համակարգը խստորեն քննադատվել է, քանի որ չափազանց բյուրոկրատական է, հիվանդները խնդիրներ են ունենում այն դեպքում, երբ բուժումը անհնար է կազմակերպել իրենց ապահովագրության տարածաշրջանում: Լեհաստանի առողջապահական համակարգը ունի նաև անձնակազմի, մասնագետների պակասի խնդիր[2]:

Կենսաթոշակային համակարգ: 1999 թ. ընդունվեցին Սոցիալական ապահովության համակարգի մասին և Կենսաթոշակային համակարգի մասին օրենքները, որոնց նպատակը անցումն էր հաստատագրված նպաստների համակարգից հաստատագրված վճարների/մուծումների համակարգին: Այս հիմնարար բարեփոխման հիմնական շարժառիթը հասարակության ծերացման գործընթացն էր[3]:

Նոր համակարգը ենթադրում էր բազմաստիճան համակարգի ստեղծում՝ երկու պարտադիր և մեկ կամավոր աստիճան: Առաջին աստիճանը հիմնված էր PAYG սկզբունքի վրա, այն դեպքում, երբ երկրորդ աստիճանը ֆինանսավորվում էր վճարների հիման վրա, որոնք պարտադիր են 1949 թ. և դրանից հետո ծնվածների համար: Երրորդ աստիճանը կամավոր է: Երբ բարեփոխումներն ընդունվեցին, սոցիալական ապահովության վճարները կազմում էին համախառն եկամտի 19.52 տոկոսը, որի կեսը վճարում էր գործատուն, մյուս կեսը՝ աշխատողը: Բարեփոխումներից հետո վճարների երկու երրորդը փոխանցվում է առաջին աստիճանին, մեկ երրորդը՝ երկրորդ աստիճանին: Երկրորդ՝

---

[1] Filinson R., Niklas D., Chmielewski P., Health care reform and older adults: notes from the Polish experience, 2004, p. 72.

[2] Bukowski H., Pogorzelczyk K., Polish Healthcare Sector: Overview, evolution and opportunities, 2019, p. 4.

[3] Kuśmierczyk P., Daniel P., The optimal portfolio for the two-pillar mandatory pension system: the case of Poland, 2018, p. 1.

ֆինանսական աստիճանի ծագումը նվազեցրեց առաջին աստիճանի եկամուտները՝ ճեղք առաջացնելով ներկա թոշակառուների ֆինանսավորման մեջ: Այս կորուստը սկզբնապես ծածկվեց պետական ձեռնարկությունների մասնավորեցումից ստացվող եկամուտներով:

Աշխատաշուկայի բարեփոխումներ: Լեհաստանի տնտեսության ամենախնդրահարույց ոլորտը աշխատանքի շուկան է: Չնայած հաջողությամբ իրագործած բազմաթիվ բարեփոխումներին՝ Լեհաստանի իշխանությունները ամբողջ 30 տարիների ընթացքում չկարողացան լուծել գործազրկության և արտագաղթի խնդիրը: 1991 թ. գործազրկության մակարդակը կազմում էր 12.2%, որը 2002-2004 թթ. հասավ 20%-ի, 2015 թ. կազմել է 9.7%[1]: Իրականում լեհական աշխատաշուկայի իրավիճակը ավելի բարդ է, քանի որ վիճակագրությունը չի արտացոլում իրական պատկերը: Աշխատող բնակչության 23%-ը ֆերմերներն են, որոնց 80%-ը 15 հեկտարից պակաս տնտեսություն ունի: Ֆերմերները ազատված են եկամտահարկից, սուբսիդիաներ են ստանում: Իրականում, կառավարության աջակցությունը ֆերմերներին գործազրկության նպաստի թաքնված ձև է:

Լեհական իշխանությունները, իրականացնելով մի շարք միջոցառումներ, զգալիորեն նպաստեցին մեծահասակների և ոչ որակավորված աշխատողների՝ աշխատաշուկայից դուրս գալուն, մասնավորապես՝ վաղ կենսաթոշակի անցնելու միջոցով: Կենսաթոշակային և հաշմանդամության նպաստները եկամտային աջակցության հիմնական աղբյուրն էին, որը նպատակ ուներ այս մարդկանց դուրս մղել աշխատաշուկայից:

2013 թ. ուժի մեջ մտավ կենսաթոշակային բարեփոխումների ծրագիր, որը նպատակ ուներ կենսաթոշակային տարիքը երկարաձգել մինչև 67 տարեկան: Գործազրկության նպաստները դարձան պակաս «առատաձեռն» և այդպիսով մեծացրին աշխատանք փնտրելու խթանները: Հաշվի առնելով, որ թաքնված գործազրկությունն առկա է ցանկացած երկրում, և հիմնվելով միայն պաշտոնական տեղեկատվության վրա, կարելի է պնդել, որ Լեհաստանի աշխատաշուկան դեռևս գտնում է ճգնաժամային վիճակում:

Տնտեսական աճի ինտեգրացիոն մոդելը

ԵՄ անդամակցությունը առաջանցիկ աճի պայմաններ ստեղծեց երեք ուղղություններով՝ ինստիտուցիոնալ ադապտացում, տնտեսական ինտեգրում և ֆինանսական օժանդակություն:

2004 թվականից հետո տնտեսական աճի հիմնական գործոններից մեկը եղել է ԵՄ կառուցվածքային հիմնադրամներից դրամական միջոցների ներհոսքը: 2005-2011 թթ. ԵՄ հիմնադրամներից Լեհաստանին հատկացվել է 49.8 մլրդ

[1] Տե՛ս Karlik M., Polish labor market - a summary of 25 years of socio economic reforms on the road from centrally planned economy to the first decade of the European Union membership (1989-2015), 2015, p. 226.

եվրո[1]: Բացի այդ, ԵՄ աշխատանքի շուկայի բացումը հանգեցրել է լեհ աշխատանքային միգրանտներից ստացվող տրանսֆերտային միջոցների ներհոսքին: ԵՄ անդամակցությամբ Լեհաստանը հնարավորություն ստացավ առանց սահմանափակումների մուտք գործել եվրոպական շուկա: 2004-2018 թթ. Լեհաստանի առևտուրը ավելացավ 73.8 մլրդ ԱՄՆ դոլարից մինչև 261.8 մլրդ ԱՄՆ դոլար (3.5 անգամ)[2]: Լեհաստանի արտահանման 80%-ը բաժին է ընկնում ԵՄ երկրներին:

2016 թ. ուժի մեջ է մտել Պատասխանատու զարգացման ռազմավարությունը, որի վրա է հիմնված Լեհաստանի տնտեսական զարգացման ներկայիս մոդելը, և որն ընդգրկում է երկրի տնտեսական զարգացման հեռանկարները մինչև 2020 թ. ընկած ժամանակահատվածում՝ հաշվի առնելով մինչև 2030 թ. զարգացման հեռանկարները[3]: Դրա առանցքային տարրը ներառական տնտեսական զարգացումն է, արտահանման կողմնորոշում ունեցող նորարարական տնտեսության զարգացումը:

Եզրակացություններ և առաջարկություններ

Լեհական տնտեսության կայուն և անընդհատ զարգացումը, սկսած 1992 թվականից, պայմանավորված էր երկրի իշխանությունների կողմից իրականացվող համակարգային բարեփոխումներով և դրանց շարունակականությունն ապահովելու հաստատակամությամբ: Ամբողջ 30 տարիների ընթացքում տնտեսական քաղաքականությունն արմատական փոփոխությունների չի ենթարկվել, կառավարության փոփոխությունը չի հանգեցրել արմատական փոփոխությունների տնտեսական քաղաքականության մեջ: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ յուրաքանչյուր ծրագրի ընդունմանը նախորդում են լայն հանրային քննարկումներ քաղաքացիների, պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ, ինչի արդյունքում էլ քաղաքականությունը լինում է լավ մտածված, տեղին և իրագործելի, որն էլ պայմանավորում է քաղաքականության հաջողությունները:

Ցանկացած բարեփոխում իրականացնելիս պետությունը ձգտում էր նվազագույնի հասցնել դրա հետ կապված բացասական հետևանքները: Օրինակ՝ երբ ձեռնարկությունների սուբսիդավորման դադարեցման բարեփոխումները հանգեցրին գործազրկության կտրուկ ավելացմանը, պետությունը, մյուս կողմից, սոցիալական նպաստների միջոցով օժանդակեց քաղաքացիներին:

Կարծում ենք՝ մեր երկրի համար կիրառելի կարող է լինեն լեհական կրթական համակարգի բարեփոխումների փորձը, մասնավորապես՝ կրթական ծրագրերի բարեփոխումները, որոնք կենտրոնացած են ոչ թե ուսանողի կողմից գիտելիքի

---

[1] https://mirec.mgimo.ru/2011-03/analiz-sostoyaniya-polskoj-ekonomiki-cherez-sem-let-posle-vstupleniya-v-es

[2] https://comtrade.un.org/data/

[3] Strategy for Responsible Development, https://www.gov.pl › documents ›SOR_2017_streszczenie_en

ձեռքբերման, այլ կրթական վերջնարդյունքների վրա և շեշտը դնում են ուսանողի՝ խնդիրներ լուծելու, վերլուծական կարողությունների զարգացման վրա:

Լեհաստանի առողջապահական ոլորտի փորձը կարող է լավ ուղեցույց լինել Հայաստանի համար առողջապահության պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման տեսանկյունից: Լեհաստանը առողջապահության որակի ցուցանիշներով հետ է մնում ԵՄ գրեթե բոլոր երկրներից: Այս համակարգի հիմնական խնդիրներն են ըստ տարածաշրջանների առողջապահական ծառայությունների որակի տարբերությունը, որակյալ մասնագետների պակասը, բյուրոկրատական քաշքշուկները: Սրանք խնդիրներ են, որոնց բախվելու է նաև հայ հասարակությունը առողջապահության պարտադիր ապահովագրության ներդրման պարագայում:

Ինտեգրման համակարգից օգուտներ քաղելու իմաստով ուսանելի կարող է լինել աշխատաշուկայի բացման, արտահանման խթանման, ինչպես նաև ինտեգրացիոն միավորման բազմաբնույթ կառույցներից (Հայաստանի դեպքում՝ ԵԱՏՄ) տարբեր ուղղություններով ֆինանսական միջոցների ներգրավումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Bukowski H., Pogorzelczyk K., Polish Healthcare Sector: Overview, evolution and opportunities, 2019.
2. Filinson R., Niklas D., Chmielewski P., Health care reform and older adults: notes from the Polish experience, 2004.
3. International Monetary Fund, World Economic Outlook Database, October 2019.
4. Jakubowski M., Opening up opportunities: education reforms in Poland, 2015.
5. Karlik M., Polish labor market - a summary of 25 years of socio economic reforms on the road from centrally planned economy to the first decade of the European Union membership (1989-2015), 2015.
6. Kuśmierczyk P., Daniel P., The optimal portfolio for the two-pillar mandatory pension system: the case of Poland, 2018.
7. Lehmann H., The Polish growth miracle: outcome of persistent reform efforts, IZA Policy Paper No. 40, 2012, /http://ftp.iza.org/pp40.pdf/
8. Piotrowska-Marczak K., Kietlińska K., Reforming Health And Social Services In Poland - An overview, 2010.
9. Sinitsina I., Chudakova N., Fundamental Reforms: Poland's Experience, 2014.
10. Sinitsina I., Chudakova N., Fundamental Reforms: Poland's Experience, 2005.
11. Strategy for Responsible Development, https://www.gov.pl› documents ›SOR_2017_streszczenie_en
12. World Bank Group. 2017. Lessons from Poland, Insights for Poland: A Sustainable and Inclusive Transition to High Income Status. World Bank, Washington, DC.
13. https://mirec.mgimo.ru/2011-03/analiz-sostoyaniya-polskoj-ekonomiki-cherez-sem-let-posle-vstupleniya-v-es
14. https://comtrade.un.org/data/

References
1. Bukowski H., Pogorzelczyk K., Polish Healthcare Sector: Overview, evolution and opportunities, 2019.
2. Filinson R., Niklas D., Chmielewski P., Health care reform and older adults: notes from the Polish experience, 2004.
3. International Monetary Fund, World Economic Outlook Database, October 2019.
4. Jakubowski M., Opening up opportunities: education reforms in Poland, 2015.
5. Karlik M., Polish labor market - a summary of 25 years of socio economic reforms on the road from centrally planned economy to the first decade of the European Union membership (1989-2015), 2015.
6. Kuśmierczyk P., Daniel P., The optimal portfolio for the two-pillar mandatory pension system: the case of Poland, 2018.
7. Lehmann H., The Polish growth miracle: outcome of persistent reform efforts, IZA Policy Paper No. 40, 2012, /http://ftp.iza.org/pp40.pdf/
8. Piotrowska-Marczak K., Kietlińska K., Reforming Health And Social Services In Poland - An overview, 2010.
9. Sinitsina I., Chudakova N., Fundamental Reforms: Poland's Experience, 2014.
10. Sinitsina I., Chudakova N., Fundamental Reforms: Poland's Experience, 2005.
11. Strategy for Responsible Development, https://www.gov.pl› documents ›SOR_2017_streszczenie_en
12. World Bank Group. 2017. Lessons from Poland, Insights for Poland: A Sustainable and Inclusive Transition to High Income Status. World Bank, Washington, DC.
13. https://mirec.mgimo.ru/2011-03/analiz-sostoyaniya-polskoj-ekonomiki-cherez-sem-let-posle-vstupleniya-v-es
14. https://comtrade.un.org/data/

Դավիթ Հախվերդյան,
Շուշան Մովսիսյան

ԼԵՀԱՍՏԱՆԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համառոտագիր: Լեհաստանն աշխարհում առաջին երկիրն է, որ հրաժարվեց սոցիալիստական համակարգից, 1989 թ. սկսեց շուկայական տնտեսության անցման գործընթաց ու այս գործընթացում ունեցավ աննախադեպ հաջողություն: 1992 թվականից առ այսօր Լեհաստանն արձանագրել է դրական տնտեսական աճ, արդեն 1996 թ., հաղթահարելով անցման հետ կապված անկումը, գերազանցել է սոցիալիստական՝ 1989 թ. ՀՆԱ ցուցանիշը:

Հոդվածն ուսումնասիրում է Լեհաստանի ինստիտուցիոնալ բարեփոխումների ընթացքը, սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները շուկայական տնտեսության պայմաններում, ինչպես նաև քննարկում փորձի տեղայնացման հնարավորությունները Հայաստանում:

Բանալի բառեր. Լեհաստան, տնտեսական բարեփոխումներ, մասնավորեցում, գնաճ, աշխատանքի շուկա, գործազրկություն, կենսաթոշակային համակարգ, կրթություն

Давит Ахвердян
Шушан Мовсисян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» ПОЛЬШИ

Аннотация: Польша первая страна в мире, которая отказалась от социалистической системы, начала процесс перехода к рыночной экономике в 1989 году и добилась беспрецедентного успеха в этом процессе. С 1992 года до настоящего времени Польша зафиксировала положительный экономический рост, и уже в 1996 году, преодолев спад, связанный с переходом, превысила показатель социалистического ВВП 1989 года.

В статья изучается процесс институциональных реформ Польши, особенности социально-экономического развития в условиях рыночной экономики, а также рассматриваются возможности применения опыта в Армении.

Ключевые слова: Польша, экономические реформы, приватизация, инфляция, рынок труда, безработица, пенсионная система, образование

Davit Hakhverdyan
Shushan Movsisyan

“THE ECONOMIC MIRACLE” OF POLAND

Abstract: Poland is the first country in the world that abandoned socialist system, started the process of transition to a market economy in 1989 and achieved unprecedented success in this process. From 1992 to the present, Poland has recorded positive economic growth, and already in 1996, having overcome the decline associated with the transition, it exceeded the 1989 socialist GDP.

The article studies the process of institutional reforms in Poland, features of social and economic development under the conditions of market economy, and also considers the possibilities of applying the practice in Armenia.

Keywords: Poland, economic reforms, privatization, inflation, labor market, unemployment, pension system, education

Ռուբիկ Թովմասյան
Գայանե Թովմասյան

ԻՍԼԱՆԴԻԱՅԻ «ԿԱԹՍԱՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

«Իսլանդիա» անգլերենից բառացի թարգմանությամբ նշանակում է սառցե երկիր: Իսլանդիան կղզային պետություն է 103.000 կմ² տարածքով՝ Հյուսիսային սառուցյալ և Ատլանտյան օվկիանոսների սահմանագծին գտնվող համանուն կղզում՝ Հյուսիսային Ամերիկայի և Եվրոպայի ճամփաբաժանում, և ներառված է Հյուսիսային Եվրոպա տարածաշրջանի մեջ: Իսլանդիան հրաբխային ծագման կղզի է՝ մայրցամաքից ավելի քան 1000 կմ հեռավորության վրա: Այն աշխարհի 18-րդ, իսկ Եվրոպայում երկրորդ ամենամեծ կղզին է Մեծ Բրիտանիայից հետո[1]: Կղզու տարածքի 12%-ը ծածկված է սառույցով: Կղզու բնակեցումը սկսվել է 870 թ., այդ ժամանակ բնակչությունը կազմել է 30.000 մարդ: Մեծամասնությունը գաղթել է Նորվեգիայից՝ քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով: Մյուս մասը եկել է Դանիայից, Շվեդիայից, Բրիտանական կղզիների վիկինգների բնակավայրերից[2]: 2018 թ. վերջին երկրի բնակչությունը կազմել է 357.050 մարդ[3]:

Իսլանդիայի մայրաքաղաք Ռեյկյավիկի գրավիչ պայմանները՝ ամառային մեղմ ու զով կլիման, մաքրությունը, բնակչության բարձր կուլտուրան, մարդասիրությունն ու դիմացինի նկատմամբ բարեհամբույր վերաբերմունքը հիմք հանդիսացան, որ 1972 թ. այստեղ անցկացվեց շախմատի աշխարհի թագի համար Բ. Սպասսկի - Ռ. Ֆիշեր մրցամարտը: Այն գրեթե երեք ամիս աշխարհի մարզասեր հասարակության ուշադրության կենտրոնում էր և համարվում էր 20-րդ դարի մրցամարտ, որն ավարտվեց Ռ. Ֆիշերի հաղթանակով, և նա հռչակվեց շախմատի աշխարհի 11-րդ չեմպիոն:

Իսլանդիայում պետական լեզուն իսլանդերենն է, դրամական միավորը կրոնն է: Իսլանդիան անդամակցում է ՆԱՏՕ-ին 1949 թվականից, և միակ անդամ երկիրն է, որը զինված ուժեր չունի: Իսլանդացիները վաղուց հպարտանում են իրենց երկրի խաղաղ ավանդույթով, ինչը սկսվել է 1944 թ.՝ Դանիայից անկախանալուց հետո[4]: Իսլանդիան ՄԱԿ-ի, ՏՀԶԿ-ի անդամ է, սակայն չի անդամակցում Եվրոպական միությանը:

Իսլանդիայի ՀՆԱ-ի աճի տեմպը 2008 թ. կազմել է 1,99%, 2018 թ.՝ 4,8%,:

---

[1] Iceland is the youngest country in the world, https://www.inspiredbyiceland.com/about-iceland/geography/

[2] Iceland history and heritage, https://www.inspiredbyiceland.com/about-iceland/history-heritage/

[3] The population increased by 1,420 in the 4th quarter of 2018, 2019, https://www.statice.is/publications/news-archive/inhabitants/population-in-the-4th-quarter-2018/

[4] ICELAND and NATO, https://www.nato.int/cps/en/SID-21A87C2D-BE06D3F1/natolive/declassified_162083.htm?selectedLocale=en

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2008 թ. կազմել է 35.779 եվրո, 2018 թ.՝ 43.604 եվրո, գործազրկության մակարդակը 2009 թ. կազմել է 7.22%, 2018 թ.՝ 2,95%[1]: Ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը 2008 թ. կազմել է 502.300 մարդ, 2018 թ.՝ 2.343.773 մարդ:

2000-ական թվականների սկզբին Իսլանդիայի տնտեսությունն արագ աճում էր՝ համարվելով Եվրոպայի նոր տնտեսական հրաշքը: 2007 թ., ՄԱԿ-ի զեկույցի համաձայն, Իսլանդիան աշխարհում ամենաառաջատար երկրներից էր կյանքի որակի, կյանքի տևողության, մեկ շնչի հաշվով եկամտի և կրթության հասանելիության առումով: Այդ ժամանակ իսլանդական բոլոր մասնավոր բանկերը վարում էին ագրեսիվ քաղաքականություն՝ օգտվելով կրոնի կուրսի աճող տեմպից և, արդյունքում, պարտքերի մեջ ընկան: Երբ սկսվեց համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, երկիրը հայտնվեց անմխիթար վիճակում[2]: Իսլանդական բանկերի արտաքին պարտքը կազմեց 3.5 միլիարդ եվրո՝ 10 անգամ ավելի շատ, քան երկրի ՀՆԱ-ն, իսլանդական կրոնը եվրոյի դիմաց արժեզրկվեց 85%-ով: Իսլանդացիները չցանկացան վճարել բանկերի պարտքերը, դուրս եկան փողոց, բողոքի ցույցեր սկսեցին, անկարգություններ՝ ի վերջո ստիպելով կառավարությանը հրաժարական տալ[3]:

2008 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամը մահացու հարված էր երկրի համար: Բանկերը սնանկացան, և տարեվերջին Իսլանդիան հայտարարեց իր սնանկության մասին: Միջազգային հանրությունը մեծացրեց ճնշումը Իսլանդիայի վրա: Բրիտանիան և Հոլանդիան սպառնում էին մեկուսացնել երկիրը, Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ)՝ երկիրը զրկել որևէ օգնությունից, բրիտանական կառավարությունը՝ սառեցնել իսլանդացիների խնայողությունները և ընթացիկ հաշիվները: Սակայն պետության ղեկավարը հրաժարվեց վավերացնել օրենքը, ըստ որի՝ Իսլանդիայի քաղաքացիները պետք է պատասխանատվություն կրեին Իսլանդիայի բանկիրների պարտքերի համար, և 2010 թ. հանրաքվե գումարեց: Բնակչության 93%-ը դեմ քվեարկեց պարտքերի վճարմանը: ԱՄՀ-ն անմիջապես սառեցրեց վարկերի տրամադրումը: Իսլանդացիները որոշեցին ընդունել նոր սահմանադրություն, ինչը երկիրը պետք է ազատեր միջազգային ֆինանսների և վիրտուալ փողերի իշխանությունից: Իսլանդիայի ժողովուրդը գրեց նոր սահմանադրություն համացանցի օգնությամբ՝ քննարկումները կազմակերպելով առցանց, և քաղաքացիները կարող էին գրել իրենց առաջարկությունները՝ հետևելով նոր սահմանադրության ձևավորմանը[4]:

Իսլանդացիները պահանջում էին իշխանափոխություն, քանի որ կորցրել էին վստահությունը կառավարության հանդեպ: 2008 թ. հունվարին բանաս-

---

[1] Iceland: Unemployment rate, https://www.theglobaleconomy.com/Iceland/unemployment_rate/

[2] Сакоян А., Исландская революция, 2012, https://polit.ru/article/2012/01/16/revolution/

[3] «Экономическая революция» Исландии – спектакль, организованный мировыми ростовщиками?, 2015, https://stockinfocus.ru/2015/11/17/ekonomicheskaya-revolyuciya-islandii-spektakl-organizovannyj-mirovymi-rostovshhikami/

[4] Исландская революция и почему её нет в новостях, http://www.kabbalah.info/rus/content/view/frame/99842?/rus/content/view/full/99842&main

տեղծ և երգիչ Հորդուր Տորֆասոնը խորհրդարանի շենքի դիմաց սկսեց քաղաքական բնույթի երգեր երգել, իսկ հոկտեմբերին դուրս եկավ փողոց խոսափողով և բոլոր ցանկացողներին առաջարկեց խոսել: Մեկ շաբաթ անց սկսվեցին զանգվածային կազմակերպված ցույցերը: Ցուցարարները Ռեյկյավիկում իրենց հետ բերում էին ամաններ և կաթսաներ, խորհրդարանի շենքի դիմաց դղրդացնում էին դրանք՝ փորձելով խափանել խորհրդարանի նիստերը... Ոստիկանները որոշ ժամանակ դիմադրում էին՝ օգտագործելով արցունքաբեր գազ, բայց, ի վերջո, աջակողմյան լիբերալ կառավարությունը ստիպված եղավ հրաժարական տալ: 2009 թ. փետրվարին ձևավորվեց ձախակողմյան նոր կառավարություն, որը ղեկավարում էր վարչապետ Յոհաննա Սիգուրդարդոտիրը:

Մամուլում այս իրադարձությունն անվանեցին «թեյնիկների և կաթսաների հեղափոխություն» կամ «սպասքի հեղափոխություն»[1]:

2008 թ. հոկտեմբերին, մեկ շաբաթվա ընթացքում, փոքրիկ երկիր Իսլանդիայում փլուզվեցին երեք խոշորագույն բանկեր՝ Glitnir, Landsbanki և Kaupthing: Lehman Brothers-ի սնանկացումից հետո ներդրողների խուճապ սկսվեց, որին հաջորդեց կապիտալի զանգվածային արտահոսքը, և, ըստ էության, Իսլանդիայի բանկային համակարգը փլուզվեց:

Ճգնաժամից դուրս գալու համար արվեցին որոշակի քայլեր: Սկզբում բոլոր բանկերը վերցվեցին կառավարության վերահսկողության տակ: Սեպտեմբերի 29-ին Glitnir բանկն ազգայնացվեց: Բայց հետո կառավարությունը հաշվարկեց, որ չի կարող իրեն թույլ տալ փրկել այդ բանկերը: Ճգնաժամից առաջ վերը նշված երեք ֆինանսական հաստատությունների ակտիվները կազմել են 110 միլիարդ եվրո, իսկ Իսլանդիայի ՀՆԱ-ն 2007 թվականին կազմել է ընդամենը 14,7 միլիարդ եվրո: Անմիջապես ընդունվեց նոր օրենսդրություն, որը թույլ տվեց ստեղծել երեք նոր պետական սեփականություն հանդիսացող բանկեր և այնտեղ փոխանցել պրոբլեմային բանկերի ակտիվների մի մասը և ներքին ավանդները: Օտարերկրացիների ավանդները հարվածի տակ էին, քանի որ իսլանդական բանկերում Դանիայի և Մեծ Բրիտանիայի քաղաքացիներն էին ակտիվ ներդրումներ անում: Իսլանդիայի իշխանությունները նրանց չվճարեցին փոխհատուցում և չերաշխավորեցին նրանց ավանդները: Երկու հանրաքվեի ընթացքում իսլանդացիները դեմ են քվեարկել միլիարդավոր պետական փողեր ծախսելուն՝ բանկերը փրկելու համար:

Առևտրային պայմանների վատթարացման և բանկային ճգնաժամի պայմաններում իսլանդական կրոնը սկսեց կտրուկ արժեզրկվել: Եթե 2007 թ. դոլարն արժեր 64 կրոն, ապա 2009 թ. այն արդեն ավելի քան 120 կրոն էր: 2008 թ. վերջին իրավիճակը կայունացնելու համար երկիրը ներգրավեց 2,1 միլիարդ ԱՄՆ դոլարի վարկ ԱՄՀ-ից: Ներդրվեցին նաև կապիտալի շարժի սահմանափակումներ: Այսինքն՝ օտարերկրյա ներդրողները կորցրին իրենց փողերն անմիջապես դուրս բերելու հնարավորությունը: Եվ այդ ժամանակ երկրում

[1] Сакоян А., Исландская революция, 2012, https://polit.ru/article/2012/01/16/revolution/

օտարերկրյա կապիտալի ծավալը համապատասխանեց ՀՆԱ-ի 40% -ին:

2009-2010 թթ. Glitnir և Kaupthing բանկերի հիման վրա ձևավորված պետական բանկերը ստացան նոր անուններ, նրանց բաժնետոմսերի մեծ մասը փոխանցվեց պարտատերերին: Երրորդ բանկը մնաց պետական սեփականության տակ: Նույնիսկ ձկնորսությունն այդ ժամանակ ավելի հեղինակավոր մասնագիտություն էր, քան բանկային համակարգը: Այդ տարի Իսլանդիան դարձավ Եվրոպայում առաջին երկիրը, որտեղ սնանկացած բանկիրները (Kaupthing-ի մի քանի ղեկավարներ և բաժնետերեր) ֆինանսական մանիպուլյացիայի համար դատապարտվեցին 4-5 տարի ազատազրկման:

Նոբելյան մրցանակի դափնեկիր Պոլ Կրուգմանը Իսլանդիան նշում է որպես մի երկրի օրինակ, որը հաջողությամբ հաղթահարել է ճգնաժամը: Հաջողության գաղտնիքը, նրա կարծիքով, այն է, որ թույլ են տվել բանկերին սնանկ ճանաչվել և արժեզրկել ազգային արժույթը: Արժեզրկումը թույլ տվեց վերականգնել արտահանման մրցունակությունը, պետական բյուջեն մնաց հավասարակշռված՝ բանկերը չփրկելու որոշման շնորհիվ: Շատ տնտեսագետներ համաձայն չեն Կրուգմանի հետ. աշխույժ քննարկումներ են ընթանում Իսլանդիայի ճգնաժամի կառավարման բաղադրատոմսերի վերաբերյալ: Բայց փաստն այն է, որ 2011 թվականից ի վեր Իսլանդիայի տնտեսությունն աճում է և Եվրոպայում առաջիններից մեկն էր, որը վերադարձավ նախաճգնաժամային մակարդակի[1]:

Իսլանդիան մինչ ճգնաժամը վերածվել էր օֆշորի՝ մասնագիտանալով ֆինանսական գործարքների մեջ, որի արդյունքում երկրի համախառն ներքին արդյունքի ցուցանիշները կտրուկ աճում էին, ինչը, սակայն, ֆինանսական փուչիկ էր, որը փլուզվեց 2008 թ.: Իսլանդիայի տնտեսությունը քանդեցին «տնտեսական մարդասպանները»: Այս տերմինը շրջանառության մեջ է դրվել Ջոն Պերկինսի կողմից, ով 2000-ական թթ. սկզբին գրել է «Տնտեսական մարդասպանի պատմությունը» գիրքը: «Տնտեսական մարդասպանները» այն մարդիկ են, որոնք ներկայացնում են խոշոր բանկերի և միջազգային ֆինանսական հաստատությունների շահեր, ինչպիսիք են Համաշխարհային բանկը և ԱՄՀ-ը: Նրանց հիմնական խնդիրն է երկիրը դնել պարտքի ասեղի վրա: Գրքի հեղինակն աշխատել է այդ կառույցներից մեկում: Տեխնոլոգիան մտրակի և բլիթի քաղաքականությունն է[2]:

Նոր կառավարության օրակարգում հիմնական խնդիրը նոր սահմանադրության մշակումն էր: Իսլանդիայի առաջին սահմանադրությունն ընդունվել էր 1944 թ., երբ երկիրը անկախացավ Դանիայից: Այդ ժամանակվանից այն համարյա թե չէր փոխվել, սակայն հասարակությունը պահանջում էր մեծացնել

---

[1] Три примера разрушительных банковских кризисов, которые были преодолены, 2015, https://minfin.com.ua/2015/10/09/9951990/

[2] «Экономическая революция» Исландии – спектакль, организованный мировыми ростовщиками?, 2015, https://stockinfocus.ru/2015/11/17/ekonomicheskaya-revolyuciya-islandii-spektakl-organizovannyj-mirovymi-rostovshhikami/

կառավարության աշխատանքի թափանցիկությունը: Անհրաժեշտ էին արմատական փոփոխություններ: Ուստի նոր իշխանությունն անմիջապես ձեռնամուխ եղավ նոր սահմանադրության ստեղծմանը՝ որոշելով այնպես անել, որ քաղաքացիներն իրենք սահմանադրություն գրեն: Այդ նպատակով 2010 թ. նոյեմբերին ստեղծվեց ազգային ժողով, որին կարող էին մասնակցել բոլոր ցանկացողները ամբողջ երկրի մասշտաբով: Խնդիր էր դրված սահմանել սոցիալական գերակայությունները և արժեքները, որոնց վրա պետք է կառուցվեր նոր սահմանադրությունը: Անհրաժեշտ էր ընտրել քաղաքացիներից 25 հոգու, որոնք պետք է ստեղծեին սահմանադրական խորհուրդ և սահմանադրություն գրեին: Յուրաքանչյուր քաղաքացի, ով ձեռք էր բերել սահմանված թվով ստորագրություններ, կարող էր դառնալ թեկնածու: Քվեարկության արդյունքում ընտրվեցին սահմանադրական խորհրդի 25 անդամ: 2011 թ. ապրիլին խորհուրդը սկսեց աշխատանքը: Այն չորս ամիս ժամանակ ուներ սահմանադրության նախագիծը գրելու համար: Յուրաքանչյուր շաբաթ հատուկ կայքում տեղադրվում էին սահմանադրության նախագծի աշխատանքային տարբերակները, որպեսզի մարդիկ ծանոթանան, մեկնաբանություն և առաջարկություններ անեն: 2011 թ. հուլիսի 29-ին սահմանադրության նախագիծը ներկայացվեց խորհրդարան:

Այս գործընթացի առանձնահատկությունը տարբեր կերպ է գնահատվում: Ոմանք կարծում են, որ սա ժողովրդավարության մասնակցային սկզբունքների կիրառման հաջող փորձ է, ինչը համաշխարհային մասշտաբով ընդօրինակման է ենթակա: Մյուսները կարծում են, որ նման մեթոդները կարող են գործել միայն շատ փոքր երկրներում: Ըստ նրանց՝ Իսլանդիայում սահմանադրության նախագծի վրա կատարված աշխատանքը նույնիսկ եթե ուղեկցվել է հանրային քննարկումներով, այնուամենայնիվ, մի փոքր թիմ է աշխատել տեքստի վրա:

Թորվալդուր Գիլֆասոնը, այնուամենայնիվ, կարծում է, որ Իսլանդիայի նոր սահմանադրության նախագիծը մարդաշատության արդյունք է, քանի որ խորհրդի գործողություններին մարդկանց արձագանքները մասսայական էին, հասարակական կարծիքի հարցումները ցույց են տվել, որ քաղաքացիները բարձր են գնահատում խմբի աշխատանքը, և, վերջապես, խումբն ինքնին բաղկացած էր մարդկանցից, որոնք չէին պատկանում քաղաքական կուսակցություններին և աշխատում էին ոչ թե որպես մրցակիցներ և ընդդիմադիրներ, այլ որպես ընդհանուր առաջադրանք կատարող թիմի անդամներ[1]:

2012 թ. հոկտեմբերի 20-ին հանրաքվեով հաստատվեցին նոր սահմանադրության հիմնական դրույթները[2]: Հանրաքվեի արդյունքները, սակայն, այդպես էլ չընդունվեցին խորհրդարանի կողմից[3]: Գործող սահմանադրությունը, որը բաղկացած է 79 հոդվածներից, ընդունվել է 1944 թ. հունիսի 17-ին, փոփո-

---

[1] Сакоян А., Исландская революция, 2012, https://polit.ru/article/2012/01/16/revolution/

[2] Виктория Доронина , «Мы, народ Исландии…» Краудсорсинг политики, 2013, http://www.chaskor.ru/article/my_narod_islandii_31851

[3] Давид Ван Рейбрук, «Против выборов»: Ад Маргинем Пресс; Москва; 2018, էջ 77, https://vk.com/doc-2879585_507714063?hash=e782dd6b2d0bafad08&dl=f8e4bf371a75d6f948

խություններ կատարվել են 1984, 1991, 1995, 1999 թվականներին[1]:

Ներկայացնենք տնտեսության զարգացումը կաթսաների հեղափոխությունից հետո և ներկայիս վիճակը:

2018 թ. ՄԱԿ-ի մարդկային զարգացման զեկույցում Իսլանդիան զբաղեցրել է 6-րդ տեղը (0.938 գործակցով)[2]: Համեմատության համար նշենք, որ Հայաստանը 83-րդ տեղում է (0.755 գործակցով), իսկ առաջին հնգյակում եղել են Նորվեգիան, Շվեյցարիան, Ավստրալիան, Իռլանդիան և Գերմանիան: Նշենք, որ 2007-2008 թթ. մարդկային զարգացման զեկույցում Իսլանդիան եղել է 1-ին տեղում՝ 0.968 գործակցով[3]:

2017 թ. Իսլանդիայում աշխատուժի թվաքանակը կազմել է 199.500 մարդ, գործազրկության մակարդակը՝ 2.8%: Վերջինս բարձր է 16-24 տարեկանների շրջանում՝ 7,9%: Գծապատկեր 1-ից երևում է, որ Իսլանդիայում գործազրկության մակարդակն իր բարձր կետին հասել է 2008-2009 թթ. ճգնաժամային տարիներին, իսկ հետագայում տարեցտարի նկատվել է նվազման միտում:



Գծապատկեր 1. *Իսլանդիայում գործազրկությունն ըստ սեռի 1991-2017 թթ.*[4]

2018 թ. աշխատողների թվաքանակն առավելագույնն է եղել տնտեսության հետևյալ ոլորտներում՝ մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում, մարդու առողջության և սոցիալական աշխատանքի ոլորտ, արտադրություն, կրթություն, հյուրանոցային տնտեսություն և հանրային

[1] Constitution of the Republic of Iceland, https://www.government.is/Publications/Legislation/Lex/?newsid=89fc6038-fd28-11e7-9423-005056bc4d74

[2] Latest Human Development Index (HDI) Ranking, http://hdr.undp.org/en/2018-update

[3] Human development report 2007/2008, p. 229, http://hdr.undp.org/sites/default/files/reports/268/hdr_20072008_en_complete.pdf

[4] Iceland in figures, 2018, Volume 23, էջ 8, https://hagstofa.is/media/51192/iceland_in_figures_2018.pdf

սննդի սպասարկում, փոխադրում և պահեստավորում, շինարարություն[1]:

Իսլանդիայի ՀՆԱ-ն 2008-2010 թթ. դրսևորել է նվազման միտումներ (2008 թ. 35.779 եվրոյի դիմաց 2010 թ. կազմել է 32.146 եվրո մեկ շնչի հաշվով), իսկ 2011 թ. սկսել է աճել՝ 2018 թ. հասնելով 43.604 եվրոյի[2]: 2018 թ. ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է 4,8%, ընդ որում՝ 2007 թ.՝ մինչ հեղափոխությունը, այն 9,36% էր, 2008 թ.՝ 1,99%, 2009 թ. անկումը կազմեց (-6,77%), 2010 թ.՝ (-3,4%)[3]:



Գծապատկեր 2. *Իսլանդիայի ՀՆԱ-ի աճի տեմպը, %*

Տնտեսության տարբեր ոլորտների ներդրումը ՀՆԱ-ում ունի հետևյալ պատկերը.

Աղյուսակ 1

Տնտեսության ոլորտների ներդրումը ՀՆԱ-ում, %[4]

Տնտեսության ոլորտ	2005	2010	2017
Գյուղատնտեսություն, անտառտնտեսություն և ձկնորսություն	5.7	7.3	5.7
Հանքարդյունաբերություն և քարհանք; արտադրություն; էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և օդորակման մատակարարում; ջրամատակարարում; կոյուղու, թափոնների կառավարման և վերականգնման աշխատանքներ	14.0	20.2	14.9
Շինարարություն	10.7	4.4	7.7
Մեծածախ և մանրածախ առևտուր; ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում; փոխադրում և պահեստավորում; գիշերակաց և սննդի սպասարկում	16.3	16.2	21.4

[1] Number of employed persons, jobs and hours worked by economic activity 2008-2018, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Efnahagur/Efnahagur__vinnumagnogframleidni__vinnumagn/THJ11002.px/table/tableViewLayout1/?rxid=545f6c4a-2876-444f-9eea-942d4e2e5cf1

[2] GDP per capita 1980-2018, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Efnahagur/Efnahagur__thjodhagsreikningar__landsframl__1_landsframleidsla/THJ01401.px/table/tableViewLayout1/?rxid=25b0a1c6-9881-4f55-8a84-161b9936c415

[3] Gross domestic product, https://www.statice.is/statistics/economy/national-accounts/gross-domestic-product/

[4] Iceland in figures 2018. Volume 23, էջ 19, https://hagstofa.is/media/51192/iceland_in_figures_2018.pdf

Տնտեսության ոլորտ	2005	2010	2017
Տեղեկատվություն և հաղորդակցություն	5.6	3.9	4.8
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	8.6	8.6	5.6
Անշարժ գույքի գործունեություն	9.5	10.3	9.2
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն; վարչական և օժանդակ ծառայության գործունեություն	6.7	7.0	9.5
Պետական կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովություն; կրթություն; մարդու առողջության և սոցիալական աշխատանքի գործունեություն	20.5	19.1	18.6
Արվեստ, ժամանց և հանգիստ; տնային տնտեսությունների ապրանքների վերանորոգման և այլ ծառայություններ	2.4	2.8	2.7

Իսլանդիայի արտահանման ծավալները ՖՕԲ գներով 2017 թ. կազմել է 517,649 մլն իսլանդական կրոն, որի 25.5%-ը բաժին է ընկել Նիդեռլանդներին, 13.5%-ը՝ Իսպանիային, 9.4%-ը՝ Միացյալ Թագավորությանը, 7.6%-ը՝ Գերմանիային, 7%-ը՝ ԱՄՆ-ին: Ներմուծման ծավալները ՍԻՖ գներով 2017 թ. կազմել է 741,162 մլն իսլանդական կրոն, որի 10.6%-ը բաժին է ընկել Գերմանիային, 9.1%-ը՝ Նորվեգիային, 6.9%-ը՝ Չինաստանին, 6.6%-ը՝ Նիդեռլանդներին, 6.4%-ը՝ ԱՄՆ-ին: Արտահանման 54.1%-ը կազմել են արտադրական ապրանքները, 38.1%-ը՝ ծովամթերքը, իսկ ներմուծման 27.4%-ը կազմել են արդյունաբերական պարագաները, 21.3%-ը՝ կապիտալ ապրանքները, 18.4%-ը՝ տրանսպորտային սարքավորումները, 13.4%-ը սպառողական ապրանքները, 11.1%-ը՝ վառելիքը և քսանյութերը, 8.4%-ը՝ սնունդը և խմիչքը[1]:

Սպառողական գների ինդեքսը 2018 թ. կազմել է 3,7%, այն դեպքում, երբ 2008 թ. 18,1% էր:



Գծապատկեր 3. *Սպառողական գների ինդեքսը 1989-2017 թթ.*[2]

[1] Iceland in figures, 2018, Volume 23, էջ 21-22, https://hagstofa.is/media/51192/iceland_in_figures_2018.pdf

[2] Consumer price index, https://www.statice.is/statistics/economy/prices/consumer-price-index/

Կրթության և գիտության ոլորտի համար պատասխանատու է Իսլանդիայի կրթության, գիտության և մշակույթի նախարարությունը: Այժմ երկիրն ունի ընդամենը յոթ բարձրագույն ուսումնական հաստատություն[1]: Դրանցից 4-ը պետական են, 3-ը՝ մասնավոր: Ընդհանուր առմամբ՝ բուհերում սովորողների թիվը շուրջ 18.000 ուսանող է: Պետական բուհում ուսումն անվճար է, և ուսանողները վճարում են միայն ռեգիստրացիոն վճար տարեկան 750 եվրո: Մասնավոր բուհերը օտարերկրյա ուսանողներից գանձում են տարեկան 5.000-20.000 եվրո վճար[2]: Հետազոտությունների վրա կատարված ծախսերը 2018 թ. կազմել են 59.600 միլիոն իսլանդական կրոն կամ ՀՆԱ-ի 2,02%-ը[3]:

Իսլանդիայում զարգացած է նաև զբոսաշրջությունը: 2019 թ. Իսլանդիայում կար 167 հյուրանոց՝ 11.048 հյուրանոցային համարներով, 23.133 մահճակալտեղով[4]: 2018 թ. հյուրանոցներում և հյուրատներում գիշերակացերի թիվը կազմել է 5,861,091 մարդ/օր (2008 թ.՝ 1,924,020 մարդ/ օր)[5], իսկ հյուրանոցային տնտեսության բոլոր օբյեկտներում միասին՝ 8,548,886 մարդ/օր (2008 թ.՝ 2,735,989 մարդ/ օր)[6]:

Իսլանդիայում զբոսաշրջության ոլորտում աշխատողների թիվը կազմել է 28.200 մարդ, որի մեծամասնությունը բաժին է ընկել հանրային սննդի օբյեկտներին և հյուրանոցներին[7]: 2017 թ. զբոսաշրջության ուղղակի ազդեցությունը ՀՆԱ-ում կազմել է 8,6%, 2009 թ.՝ 3,5%:

Իսլանդիայի արտասահմանյան այցելուների թիվը գրեթե քառապատկվել է 2010 թվականից ի վեր՝ տարեկան միջին աճի տեմպը կազմելով 24.3%: 2017 թ. այցելությունների 35,4%-ը եղել է ամռանը, 33,3%-ը՝ ձմռանը, 17,6%-ը՝ աշնանը, 13,6%-ը՝ գարնանը: Այցելուների մեծ մասը Հյուսիսային Ամերիկայից են, Կենտրոնական և Հարավային Եվրոպայից, Միացյալ Թագավորությունից[8]:

---

[1] Education, https://www.government.is/default.aspx?PageID=5981a617-a8fc-11e7-941d-005056bc4d74

[2] How to Study in Iceland for Free, 2019, https://uscollegeinternational.com/2019/08/27/how-to-study-in-iceland-for-free/

[3] R&D, https://www.statice.is/statistics/business-sectors/science-and-technology/rd/

[4] Number of Hotels, bedrooms and bedplaces in regions 2015-2019, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Atvinnuvegir/Atvinnuvegir__ferdathjonusta__gisting__1_hotelgistiheimili/SAM01202.px/table/tableViewLayout1/?rxid=fd64c688-a3c7-4846-8948-f20290eeb7d7

[5] Overnight stays in hotels and guesthouses 1998-2019, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Atvinnuvegir/Atvinnuvegir__ferdathjonusta__gisting__1_hotelgistiheimili/SAM01201.px/table/tableViewLayout1/?rxid=764a8729-09f7-4835-91a7-0462a038a865

[6] Overnight stays and arrivals in all types of registered accommodation 1998-2019, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Atvinnuvegir/Atvinnuvegir__ferdathjonusta__gisting__3_allartegundirgististada/SAM01601.px/table/tableViewLayout1/?rxid=f3b8c286-982c-4465-927b-8b2870ae373a

[7] Number of employees in activities related to tourism 2008-, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Atvinnuvegir/Atvinnuvegir__ferdathjonusta__ferdaidnadurhagvisar/SAM08051.px/table/tableViewLayout1/?rxid=fc266520-6ef6-484b-8d03-24e46eb6ac36

[8] Tourism in Iceland in figures 2018, էջ 5, 8, https://www.ferdamalastofa.is/static/files/ferdamalastofa/talnaefni/tourism-in-iceland-2018_2.pdf



Գծապատկեր 4. *Զբոսաշրջության ուղղակի ազդեցությունը ՀՆԱ-ում, 2009-2017 թթ.*[1]

Աղյուսակ 2

Իսլանդիայի ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը *2007-2018* ***թթ.*** [2]

Տարիներ	Զբոսաշրջիկների թվաքանակը	Նախորդ տարվա համեմատ աճի կամ նվազման տոկոսը
2007	485,000	14,9
2008	502.300	3,5
2009	493.940	-1,7
2010	488.622	-0,2
2011	565.611	15,8
2012	672.773	18,9
2013	807.349	20,0
2014	997.344	23,6
2015	1.289.139	29,2
2016	1.792.060	39,0
2017	2.224.603	24,1
2018	2.343.773	5,4

Զբոսաշրջության 2019 թ. մրցունակության զեկույցում Իսլանդիան զբաղեցրել է 30-րդ տեղը՝ 4.5 միավորով[3]: Ապահովության և անվտանգության ցուցանիշով 2-րդ տեղում է, մարդկային ռեսուրսներ և աշխատանքի շուկա, զբոսաշրջային գերակայություններ ցուցանիշներով՝ 4-րդ, միջազգային բացությամբ՝ 12-րդ, ենթակառուցվածքներով՝ 19-րդ, զբոսաշրջիկներին գրավելու մարքեթինգի և

[1] Tourism satellite accounts, https://statice.is/statistics/business-sectors/tourism/tourism-satellite-accounts/

[2] Numbers of foreign visitors, https://www.ferdamalastofa.is/en/recearch-and-statistics/numbers-of-foreign-visitors

[3] The Travel & Tourism Competitiveness Report 2019, էջ 65, World Economic Forum, Geneva, http://www3.weforum.org/docs/WEF_TTCR_2019.pdf

բրենդինգի արդյունավետությամբ՝ 5-րդ, երկրի բրենդի ռազմավարության ցուցանիշով՝ 24-րդ տեղում[1]:

Իսլանդիայի Թինգվելիր ազգային պարկը, Սուրտսեյ հրաբխային կղզին և Վատնայոկյուդլ ազգային պարկն ընդգրկված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում[2]:

Ըստ IESE Cities in Motion Index-ի՝ 2018 թ. ամենախելացի 165 քաղաքների ցուցակում Իսլանդիայի մայրաքաղաք Ռեյկյավիկը զբաղեցրել է 5-րդ տեղը՝ զիջելով Նյու Յորքին, Լոնդոնին, Փարիզին և Տոկիոյին[3]:

Իսլանդիան ամենակայուն երկրներից է աշխարհում, որն ունի 100 տոկոս հիդրո և երկրաջերմային վերականգնվող էներգիայի աղբյուրներ:

Ռեյկյավիկը շրջապատված է տաք աղբյուրներով, որոնք արտադրում են տաք ջուր: Սա Ռեյկյավիկին հնարավորություն է տալիս մաքուր և արդյունավետ կերպով արտադրել էլեկտրաէներգիա և ջերմություն իրենց տների և շենքերի համար: Ռեյկյավիկի շենքերի 95%-ը օգտագործում է երկրաջերմային (geothermal) ջեռուցում, որը վերականգնվող էներգիայի աղբյուր է և սահմանափակում է ածխաթթու գազի արտանետումները: Սա քաղաքը դարձնում է կայուն էներգիայի օգտագործման մեջ առաջատարներից մեկը[4]: Դեստինացիաների կայունության համաշխարհային ինդեքսում (Global Destination Sustainability Index) 2019 թ. Ռեյկյավիկը եղել է 6-րդը 58 քաղաքների մեջ[5]:

Ռեյկյավիկի օպտիկամանրաթելային ցանցը քաղաքին ապահովում է գերարագ ինտերնետով: Իսլանդիայում խելացի լուծումներ են կիրառում նաև տրանսպորտի համակարգում: Straetó օգտակար տրանսպորտային հավելվածը, որը ներբեռնվել է 85,000 անգամ, օգնում է քաղաքացիներին և զբոսաշրջիկներին՝ օգտվելու քաղաքային տրանսպորտից:

«Better Reykjavik»[6]՝ ավելի լավ Ռեյկյավիկ կայքի միջոցով քաղաքացիները կարող են գաղափարներ ներկայացնել ամեն ինչի հետ կապված՝ դպրոցի բացման ժամից մինչև նոր խաղահրապարակների կառուցում: Այնուհետև քաղաքային խորհուրդը քննարկում է ամենատարածված գաղափարները՝ տեսնելու, թե որոնք արժե իրականացնել: Այս անվճար բաց հարթակով քաղաքացիներին հնարավորություն է տրվում քաղաքում իրական փոփոխություններ իրականացնել[7]:

Ռեյկյավիկի քաղաքային պլանը կենտրոնանում է վերականգնվող էներ-

---

[1] Iceland, http://reports.weforum.org/travel-and-tourism-competitiveness-report-2019/country-profiles/#economy=ISL

[2] World Heritage List, https://whc.unesco.org/en/list/?search=iceland&order=country

[3] IESE Cities in Motion Index, 2018, էջ 25, https://media.iese.edu/research/pdfs/ST-0471-E.pdf

[4] Reykjavík is at the forefront in sustainable energy usage, https://visitreykjavik.is/reykjavik-forefront-sustainable-energy-usage

[5] Top 20 destinations for 2019, https://www.gds-index.com/top-destinations

[6] Better Reykjavík, https://reykjavik.is/en/better-reykjavik-0

[7] 3 ways Reykjavik is rising as a sustainable leader, https://eu.smartcitiescouncil.com/article/3-ways-reykjavik-rising-sustainable-leader

գիայի և էներգախնայողության, կանաչ շինարարության, թաղամասերի ջեռուցման, քաղաքային միջավայրի խտության, կայուն հանրային տրանսպորտի համակարգերի մշակման, աղտոտման նվազեցման և կանաչ տարածքների պահպանման վրա: Քաղաքի 10 բնակիչներից 9-ն արդեն ապրում են հանրային կանաչ տարածքից հինգ րոպե հեռավորության վրա[1]: Travel Bird առցանց զբոսաշրջային ծառայության հրապարակած 2018 թ. Կանաչ քաղաքների ինդեքսը գլխավորում է Ռեյկյավիկը՝ յուրաքանչյուր անձի համար 411 քմ կանաչ տարածքով[2]:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ Իսլանդիայի տնտեսական հեղափոխության և դրանից հետո տնտեսական զարգացման փորձը հետաքրքիր օրինակ է ժողովրդավարական և զարգացած երկիր կառուցելու համար:

Հայաստանին թավշյա հեղափոխությունից հետո առավել օգտակար կարող է լինել Իսլանդիայի փորձը մասնակցային ժողովրդավարության, սեփական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, տնտեսական զարգացման առումով:

Հայաստանը պետք է կենտրոնանա կայուն և կանաչ զարգացման սկզբունքների վրա՝ խելացի լուծումների կիրառմամբ տնտեսության տարբեր ոլորտներում, ինչպես Իսլանդիայում է: Հայաստանում կայուն զարգացման համար խիստ կարևոր է վերականգնվող էներգիայի և էներգախնայողության, կանաչ շինարարության, կայուն հանրային տրանսպորտի համակարգերի մշակման, աղտոտման նվազեցման և կանաչ տարածքների ընդլայնման քայլերի իրականացումը:

Հայաստանում զարգացման մեծ հեռանկարներ ունի զբոսաշրջությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսները, ուստի պետք է քայլեր ձեռնարկվեն զբոսաշրջության մրցունակության հիմնական պարամետրերի բարելավման ուղղությամբ:

Հեղափոխությունից հետո շատ է քննարկվում սահմանադրության փոփոխության և խորհրդարանական համակարգից կիսանախագահականին անցման հարցը: Կարծում ենք, որ այստեղ ևս Իսլանդիայի՝ նոր սահմանադրություն մշակելու փորձը կարող է կիրառվել՝ ներգրավելով հանրության տարբեր շերտերին դրա ստեղծման աշխատանքներում՝ ներդնելով աշխատանքների կազմակերպման և կատարման առցանց համակարգ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Доронина В., «Мы, народ Исландии…», Краудсорсинг политики, 2013, http://www.chaskor.ru/article/my_narod_islandii_31851
2. Исландская революция и почему её нет в новостях, http://www.kabbalah.info/rus/content/view/frame/99842?/rus/content/view/full/99842&main
3. Рейбрук Д. В., «Против выборов»: Ад Маргинем Пресс; Москва; 2018,

[1] Green City: Reykjavik (renewable energy mecca), https://www.greencitytimes.com/reykjavik/

[2] Reykjavík: The greenest city in the world, https://visitreykjavik.is/reykjavik-greenest-city-world

https://vk.com/doc-2879585_507714063?hash=e782dd6b2d0bafad08&dl=f8e4bf371a75d6f948
4. Сакоян А., Исландская революция, 2012, https://polit.ru/article/2012/01/16/revolution/
5. Три примера разрушительных банковских кризисов, которые были преодолены, 2015, https://minfin.com.ua/2015/10/09/9951990/
6. «Экономическая революция» Исландии – спектакль, организованный мировыми ростовщиками?, 2015, https://stockinfocus.ru/2015/11/17/ekonomicheskaya-revolyuciya-islandii-spektakl-organizovannyj-mirovymi-rostovshhikami/
7. Better Reykjavík, https://reykjavik.is/en/better-reykjavik-0
8. Constitution of the Republic of Iceland, https://www.government.is/Publications/Legislation/Lex/?newsid=89fc6038-fd28-11e7-9423-005056bc4d74
9. Consumer price index, https://www.statice.is/statistics/economy/prices/consumer-price-index/
10. Education, https://www.government.is/default.aspx?PageID=5981a617-a8fc-11e7-941d-005056bc4d74
11. Iceland in figures 2018, Volume 23, https://hagstofa.is/media/51192/iceland_in_figures_2018.pdf
12. Iceland, http://reports.weforum.org/travel-and-tourism-competitiveness-report-2019/country-profiles/#economy=ISL
13. Iceland is the youngest country in the world, https://www.inspiredbyiceland.com/about-iceland/geography/
14. ICELAND and NATO, https://www.nato.int/cps/en/SID-21A87C2D-BE06D3F1/natolive/declassified_162083.htm?selectedLocale=en
15. Iceland history and heritage, https://www.inspiredbyiceland.com/about-iceland/history-heritage/
16. Iceland: Unemployment rate, https://www.theglobaleconomy.com/Iceland/unemployment_rate/
17. IESE Cities in Motion Index, 2018, https://media.iese.edu/research/pdfs/ST-0471-E.pdf
18. GDP per capita 1980-2018, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Efnahagur/Efnahagur__thjodhagsreikningar__landsframl__1_landsframleidsla/THJ01401.px/table/tableViewLayout1/?rxid=25b0a1c6-9881-4f55-8a84-161b9936c415
19. Green City: Reykjavik (renewable energy mecca), https://www.greencitytimes.com/reykjavik/
20. Gross domestic product, https://www.statice.is/statistics/economy/national-accounts/gross-domestic-product/
21. Human development report 2007/2008,

http://hdr.undp.org/sites/default/files/reports/268/hdr_20072008_en_complete.pdf
22. How to Study in Iceland for Free, 2019, https://uscollegeinternational.com/2019/08/27/how-to-study-in-iceland-for-free/
23. Latest Human Development Index (HDI) Ranking, http://hdr.undp.org/en/2018-update
24. Number of employed persons, jobs and hours worked by economic activity 2008-2018, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Efnahagur/Efnahagur__vinnumagnogframleidni__vinnumagn/THJ11002.px/table/tableViewLayout1/?rxid=545f6c4a-2876-444f-9eea-942d4e2e5cf1
25. Number of employees in activities related to tourism 2008-, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Atvinnuvegir/Atvinnuvegir__ferdathjonusta__ferdaidnadurhagvisar/SAM08051.px/table/tableViewLayout1/?rxid=fc266520-6ef6-484b-8d03-24e46eb6ac36
26. Number of Hotels, bedrooms and bedplaces in regions 2015-2019, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Atvinnuvegir/Atvinnuvegir__ferdathjonusta__gisting__1_hotelgistiheimili/SAM01202.px/table/tableViewLayout1/?rxid=fd64c688-a3c7-4846-8948-f20290eeb7d7
27. Numbers of foreign visitors, https://www.ferdamalastofa.is/en/recearch-and-statistics/numbers-of-foreign-visitors
28. Overnight stays in hotels and guesthouses 1998-2019, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Atvinnuvegir/Atvinnuvegir__ferdathjonusta__gisting__1_hotelgistiheimili/SAM01201.px/table/tableViewLayout1/?rxid=764a8729-09f7-4835-91a7-0462a038a865
29. Overnight stays and arrivals in all types of registered accommodation 1998-2019, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Atvinnuvegir/Atvinnuvegir__ferdathjonusta__gisting__3_allartegundirgististada/SAM01601.px/table/tableViewLayout1/?rxid=f3b8c286-982c-4465-927b-8b2870ae373a
30. R&D, https://www.statice.is/statistics/business-sectors/science-and-technology/rd/
31. Reykjavík is at the forefront in sustainable energy usage, https://visitreykjavik.is/reykjavik-forefront-sustainable-energy-usage
32. Reykjavík: The greenest city in the world, https://visitreykjavik.is/reykjavik-greenest-city-world
33. The population increased by 1,420 in the 4th quarter of 2018, 2019, https://www.statice.is/publications/news-archive/inhabitants/population-in-the-4th-quarter-2018/
34. The Travel & Tourism Competitiveness Report 2019, World Economic Forum, Geneva, http://www3.weforum.org/docs/WEF_TTCR_2019.pdf
35. Tourism satellite accounts, https://statice.is/statistics/business-sectors/tourism/tourism-satellite-accounts/

36. Tourism in Iceland in figures 2018, https://www.ferdamalastofa.is/static/files/ferdamalastofa/talnaefni/tourism-in-iceland-2018_2.pdf
37. Top 20 destinations for 2019, https://www.gds-index.com/top-destinations
38. World Heritage List, https://whc.unesco.org/en/list/?search=iceland&order=country
39. 3 ways Reykjavik is rising as a sustainable leader, https://eu.smartcitiescouncil.com/article/3-ways-reykjavik-rising-sustainable-leader

References

1. Doronina V., «My, narod Islandii...», Kraudsorsing politiki, 2013, http://www.chaskor.ru/article/my_narod_islandii_31851
2. Islandskaja revoljucija i pochemu ejo net v novostjah, http://www.kabbalah.info/rus/content/view/frame/99842?/rus/content/view/full/99842&main
3. Rejbruk D. V., «Protiv vyborov»: Ad Marginem Press; Moskva; 2018, https://vk.com/doc 2879585_507714063?hash=e782dd6b2d0bafad08&dl=f8e4bf371a75d6f948
4. Sakojan A., Islandskaja revoljucija, 2012, https://polit.ru/article/2012/01/16/revolution/
5. Tri primera razrushitel'nyh bankovskih krizisov, kotorye byli preodoleny, 2015, https://minfin.com.ua/2015/10/09/9951990/
6. «Jekonomicheskaja revoljucija» Islandii – spektakl', organizovannyj mirovymi rostovshhikami?, 2015, https://stockinfocus.ru/2015/11/17/ekonomicheskaya-revolyuciya-islandii-spektakl-organizovannyj-mirovymi-rostovshhikami/
7. Better Reykjavík, https://reykjavik.is/en/better-reykjavik-0Constitution of the Republic of Iceland, https://www.government.is/Publications/Legislation/Lex/?newsid=89fc6038-fd28-11e7-9423-005056bc4d74
8. Consumer price index, https://www.statice.is/statistics/economy/prices/consumer-price-index/
9. Education, https://www.government.is/default.aspx?PageID=5981a617-a8fc-11e7-941d-005056bc4d74
10. Iceland in figures 2018, Volume 23, https://hagstofa.is/media/51192/iceland_in_figures_2018.pdf
11. Iceland, http://reports.weforum.org/travel-and-tourism-competitiveness-report-2019/country-profiles/#economy=ISL
12. Iceland is the youngest country in the world, https://www.inspiredbyiceland.com/about-iceland/geography/
13. ICELAND and NATO, https://www.nato.int/cps/en/SID-21A87C2D-

BE06D3F1/natolive/declassified_162083.htm?selectedLocale=en
14. Iceland history and heritage, https://www.inspiredbyiceland.com/about-iceland/history-heritage/
15. Iceland: Unemployment rate, https://www.theglobaleconomy.com/Iceland/unemployment_rate/
16. IESE Cities in Motion Index, 2018, https://media.iese.edu/research/pdfs/ST-0471-E.pdf
17. GDP per capita 1980-2018, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Efnahagur/Efnahagur__thjodhagsreikningar__landsframl__1_landsframleidsla/THJ01401.px/table/tableViewLayout1/?rxid=25b0a1c6-9881-4f55-8a84-161b9936c415
18. Green City: Reykjavik (renewable energy mecca), https://www.greencitytimes.com/reykjavik/
19. Gross domestic product, https://www.statice.is/statistics/economy/national-accounts/gross-domestic-product/
20. Human development report 2007/2008, http://hdr.undp.org/sites/default/files/reports/268/hdr_20072008_en_complete.pdf
21. How to Study in Iceland for Free, 2019, https://uscollegeinternational.com/2019/08/27/how-to-study-in-iceland-for-free/
22. Latest Human Development Index (HDI) Ranking, http://hdr.undp.org/en/2018-update
23. Number of employed persons, jobs and hours worked by economic activity 2008-2018, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Efnahagur/Efnahagur__vinnumagnogframleidni__vinnumagn/THJ11002.px/table/tableViewLayout1/?rxid=545f6c4a-2876-444f-9eea-942d4e2e5cf1
24. Number of employees in activities related to tourism 2008-, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Atvinnuvegir/Atvinnuvegir__ferdathjonusta__ferdaidnadurhagvisar/SAM08051.px/table/tableViewLayout1/?rxid=fc266520-6ef6-484b-8d03-24e46eb6ac36
25. Number of Hotels, bedrooms and bedplaces in regions 2015-2019, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Atvinnuvegir/Atvinnuvegir__ferdathjonusta__gisting__1_hotelgistiheimili/SAM01202.px/table/tableViewLayout1/?rxid=fd64c688-a3c7-4846-8948-f20290eeb7d7
26. Numbers of foreign visitors, https://www.ferdamalastofa.is/en/recearch-and-statistics/numbers-of-foreign-visitors
27. Overnight stays in hotels and guesthouses 1998-2019, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Atvinnuvegir/Atvinnuvegir__ferdathjonusta__gisting__1_hotelgistiheimili/SAM01201.px/table/tableViewLayout1/?rxid=764a8729-09f7-4835-91a7-0462a038a865

28. Overnight stays and arrivals in all types of registered accommodation 1998-2019, https://px.hagstofa.is/pxen/pxweb/en/Atvinnuvegir/Atvinnuvegir__ferdathjonusta__gisting__3_allartegundirgististada/SAM01601.px/table/tableViewLayout1/?rxid=f3b8c286-982c-4465-927b-8b2870ae373a
29. R&D, https://www.statice.is/statistics/business-sectors/science-and-technology/rd/
30. Reykjavík is at the forefront in sustainable energy usage, https://visitreykjavik.is/reykjavik-forefront-sustainable-energy-usage
31. Reykjavík: The greenest city in the world, https://visitreykjavik.is/reykjavik-greenest-city-world
32. The population increased by 1,420 in the 4th quarter of 2018, 2019, https://www.statice.is/publications/news-archive/inhabitants/population-in-the-4th-quarter-2018/
33. The Travel & Tourism Competitiveness Report 2019, World Economic Forum, Geneva, http://www3.weforum.org/docs/WEF_TTCR_2019.pdf
34. Tourism satellite accounts, https://statice.is/statistics/business-sectors/tourism/tourism-satellite-accounts/
35. Tourism in Iceland in figures 2018, https://www.ferdamalastofa.is/static/files/ferdamalastofa/talnaefni/tourism-in-iceland-2018_2.pdf
36. Top 20 destinations for 2019, https://www.gds-index.com/top-destinations
37. World Heritage List, https://whc.unesco.org/en/list/?search=iceland&order=country
38. 3 ways Reykjavik is rising as a sustainable leader, https://eu.smartcitiescouncil.com/article/3-ways-reykjavik-rising-sustainable-leader

Ռուբիկ Թովմասյան
Գայանե Թովմասյան

ԻՍԼԱՆԴԻԱՅԻ «ԿԱԹՍԱՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համառոտագիր: Հոդվածում ներկայացվել է իսլանդական ֆենոմենը կամ կաթսաների հեղափոխությունը, որը տեղի ունեցավ 2008 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով: Հոդվածում քննարկվում են Իսլանդիայում հեղափոխությունից հետո նոր սահմանադրություն գրելու փորձերը, ինչպես նաև տնտեսական զարգացումը հեղափոխությունից հետո, տնտեսության արդի վիճակը և հիմնական ցուցանիշները: Իսլանդայի փորձի վերլուծությունը կարող

է օգտակար լինել Հայաստանին մասնակցային ժողովրդավարության, տնտեսական զարգացման առումով:

Բանալի բառեր. Իսլանդիա, կաթսաների հեղափոխություն, ճգնաժամ, բանկ, սահմանադրություն, տնտեսություն, զբոսաշրջություն, գործազրկություն, մրցունակություն, ժողովրդավարություն, կայուն զարգացում, խելացի լուծումներ

Рубик Товмасян
Гаяне Товмасян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» ИСЛАНДИИ И «КАСТРЮЛЬНАЯ РЕВОЛЮЦИЯ»

Аннотация: В статье представлен исландский феномен или революция кастрюль, произошедшая в 2008 году в результате мирового финансового кризиса. В статье рассматриваются попытки написать новую конституцию после революции в Исландии, а также постреволюционное экономическое развитие, текущее состояние экономики и основные показатели. Анализ опыта Исландии может быть полезен для Армении с точки зрения партисипаторной демократии и экономического развития.

Ключевые слова: Исландия, кастрюльная революция, кризис, банк, конституция, экономика, туризм, безработица, конкурентоспособность, демократия, устойчивое развитие, умные решения

Rubik Tovmasyan
Gayane Tovmasyan

"THE ECONOMIC MIRACLE" OF ICELAND AND "POTS AND PANS REVOLUTION"

Abstract: The article presents the Iceland phenomenon or the pots and pans revolution that took place in 2008, as a result of the global financial crisis. The article reviews attempts to write a new constitution after revolution in Iceland, as well as post-revolutionary economic development, current state of the economy and key indicators. The analysis of Iceland's practice can be useful for Armenia in terms of participatory democracy and economic development.

Keywords: Iceland, pots and pans revolution, crisis, bank, constitution, economy, tourism, unemployment, competitiveness, democracy, sustainable development, smart solutions

2. ԱՍԻԱԿԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐ

Գևորգ Բախշյան
Ռոբերտ Թումանյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄՈԴԵԼԸ

Տնտեսական բարեփոխումների պատմական ակնարկ

1979 թվականից Չինաստանում սկսեցին իրականացվել մի շարք տնտեսական բարեփոխումներ: Կենտրոնական կառավարությունը գյուղատնտեսությամբ զբաղվողների համար նախաձեռնել էր գների խթանմանն ու արտադրանքի ավելացմանն ուղղված միջոցառումներ, ինչը նրանց հնարավորություն էր տալիս շուկայում ազատ վաճառել իրենց բերքի մի մասը: Բացի այդ, կառավարությունը արտաքին ներդրումներ ներգրավելու, արտահանումը խթանելու և բարձր տեխնոլոգիական արտադրանք Չինաստան ներմուծելու նպատակով ափերի երկայնքով ստեղծեց չորս հատուկ տնտեսական գոտիներ: Փուլային զարգացման հաջորդական քայլերը ուղղված էին որոշ ոլորտներում, հատկապես առևտրի ոլորտում տնտեսական քաղաքականության մշակումը ապակենտրոնացնելուն: Որոշակի ձեռնարկությունների տնտեսական վերահսկողությունը պատվիրակվել էր մարզային և տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց, ընդհանուր առմամբ, թույլատրվել էր գործել և մրցել ազատ շուկայական տնտեսության սկզբունքներով, այլ ոչ թե պետական պլանավորման ուղղակի հսկողության ներքո: Առևտրի ազատականացումը խթանեց մրցակցությունը և ապահովեց օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքեր: Չինաստանի տնտեսական բարեփոխումների աստիճանական (հատվածային) իրականացման նպատակն էր պարզել, թե որ տնտեսական քաղաքականությունն էր հանգեցում տնտեսության համար բարենպաստ արդյունքների (և որը՝ ոչ)՝ ապահովելով դրանց դյուրին ներդրումը նաև երկրի այլ մասերում:

Տնտեսագետները, ընդհանուր առմամբ, Չինաստանի արագ տնտեսական աճը վերագրում են երկու հիմնական գործոնների.

- լայնամասշտաբ կապիտալ ներդրումներ, որոնց աղբյուրներն էին ներքին խնայողությունները և օտարերկրյա ներդրումները,
- արտադրողականության արագ աճ:

Դրանք ընթանում էին զուգահեռաբար: Տնտեսական բարեփոխումները հանգեցրին տնտեսության մեջ արդյունավետության բարձրացման՝ նպաստելով արտադրության աճին և ռեսուրսների ավելացմանը՝ խթանելով տնտեսությունում լրացուցիչ ներդրումները:

Խնայողությունների մասնաբաժինը Չինաստանի տնտեսության մեջ միշտ մեծ է եղել: 1979 թ.՝ տնտեսական բարեփոխումների սկիզբում, ներքին խնայողությունները կազմում էին ՀՆԱ-ի 32%-ը: Դրանց մեծ մասն առաջացել է պետական ձեռնարկությունների շահույթից, որոնք կենտրոնացված կառավարության կողմից օգտագործվում էին որպես տեղական ներդրումներ:

Որոշ տնտեսագետներ Չինաստանի արագ տնտեսական աճի ևս մեկ հիմնական գործոններից են համարում արտադրողականության աճը (աշխատանքի արդյունավետության բարձրացումը): Այն հիմնականում պայմանավորված էր ռեսուրսների արդյունավետ վերաբաշխմամբ, հատկապես տնտեսության այն ճյուղերում (գյուղատնտեսություն, առևտուր և ծառայություններ), որոնք նախկինում վերահսկվում էին կենտրոնական կառավարության կողմից:

Տնտեսական աճի նոր տեսություններ.
անցումային և ինստիտուցիոնալ փոփոխություններ

Չինաստանի տնտեսական աճն ուսումնասիրելիս անհրաժեշտ է այն դիտարկել որպես անցումային տնտեսություն, որը միևնույն ժամանակ զարգացող երկիր է: Կենտրոնացված պլանավորվող տնտեսությունից անցումը շուկայական տնտեսական հարաբերություններին Չինաստանում տևել է շուրջ երեսուն տարի: Երկրում բարեփոխումներն իրականացվում էին աստիճանաբար՝ մասնակի բարեփոխումների ռազմավարության սկզբունքով, որին բնութագրական էին ինստիտուցիոնալ նորամուծությունները և տարածաշրջանային փորձարկումները[1]: Ձեռնարկված միջոցառումները գյուղական համայնքներում հաջողության հասնելուց հետո միայն ներկայացվում էին քաղաքային բնակավայրերում իրականացնելու համար՝ սկսած 1984 թվականից:

Երկուղի անցումային քաղաքականության (dual-track transition) արդյունավետության կարևորագույն գործոն է համարվում կայունությունը: Թույլատրելով ձեռնարկություններին իրենց արտադրանքի մի մասը վաճառել շուկայական գներով՝ իշխանությունները պետք է կարողանային վերահսկել շուկայի կառավարվող մասի ապրանքների վաճառքը, որ մասնակի ազատականացման ռազմավարությունը հաջողություն ունենար[2]: Չինաստանի բարեփոխումների վերջնական փուլը «բաց դռան» քաղաքականությունն էր: Չինաստանը, հարավային առափնյա նահանգներում ստեղծեց հատուկ տնտեսական գոտիներ, որոնք, ըստ էության, արտահանման համար նպաստավոր գոտիներ էին և բաց էին միջազգային առևտրի և արտաքին ներդրումների համար[3]:

Հատուկ տնտեսական գոտիներում շուկայական հարաբերությունների ներդրումը կառավարությանը թույլ տվեց փորձարկումների ենթարկել շուկայա-

---

[1] Qian, Y., Roland, G., & Xu, C. (1999). Why is China different from Eastern Europe? Perspectives from organization theory. *European Economic Review*, *43*(4-6), 1085-1094.

[2] Murphy, K. M., Shleifer, A., & Vishny, R. W. (1992). The transition to a market economy: Pitfalls of partial reform. *The Quarterly Journal of Economics*, *107*(3), 889-906.

[3] Lardy, N. R. (1998). *China's unfinished economic revolution*. Brookings Institution Press.

կան ազատ հարաբերությունները չինական հասարակության մեջ: Այս միջոցառումները, սկսվելով 1979 թվականից, լիարժեքորեն կիրառություն գտան 1992 թվականից: Չինական բարեփոխումների հայր Դեն Սյաոփինը շրջագայեց Ֆուցզյանում և Գուանդունում գտնվող ամենավաղ ստեղծված հատուկ տնտեսական գոտիներում, և այդ ժամանակվանից ի վեր Չինաստանը ստեղծեց հատուկ տնտեսական գոտիների հետագա զարգացման ձևեր, ինչպիսիք են ազատ առևտրի գոտիները և բարձր տեխնոլոգիաների զարգացման գոտիները (HTDZs), որոնք ուղղված էին տեխնոլոգիական ոլորտներում օտարերկրյա ներդրումների ներգրավմանը և հետազոտությունների ու զարգացման խթանմանը (R&D):

Ինստիտուցիոնալ զարգացման և տնտեսական աճի միջև կապը հանդես եկավ որպես կարևոր գործոն աճի չբացահայտված մասերը բացատրելու համար[1]: Չինաստանի թերզարգացած հաստատությունների առկայությունը, միևնույն ժամանակ համեմատաբար կայուն անցումը և նկատելի աճի տեմպերը Չինաստանի տնտեսական աճը դարձրին ֆենոմեն՝ առավել հանգամանալի ներկայացնելով ինստիտուտների փոխգործակցությունը տնտեսական աճի հետ:

20-րդ դարի վերջին ականատես եղանք, թե ինչպես աշխարհի շատ երկրներում կենտրոնացված պլանավորված տնտեսությունները ամենատարբեր սցենարներով անցում կատարեցին շուկայական տնտեսության համակարգին: Այս անցումներից շատերը բնութագրվում էին «մեծ պայթյունով», որը տնտեսության ազատականացումը համատեղում էր արագ սեփականաշնորհման և ժողովրդավարացման հետ:

Ըստ այդ տեսության՝ աճը տեղի կունենա միայն իշխանության անարդյունավետ կառավարման չեղարկմամբ և շուկայական հարաբերությունների ներդրումից հետո: Աճի տեսությունը արագացնում էր անարդյունավետության և անկայուն վիճակի վերացումը և շուկայական հարաբերությունների ներդրումը[2]: Արդյունքում որոշ երկրներ անցումային ժամանակաշրջանում անկում գրանցեցին, երբ կենտրոնացված պլանավորված համակարգի փլուզումից հետո ժողովուրդը տասնամյակներ շարունակ ապրում էր անկման և անորոշության լճացման պայմաններում:

Ի հակադրություն նրանց՝ Չինաստանը հետևեց միանգամայն այլ ուղու, որով տեղի ունեցան տնտեսական բարեփոխումներ, և անցումը դեպի շուկայական տնտեսություն կատարվեց առանց ժողովրդավարության հաստատման:

Շուկայական տնտեսությանը անցման մեկնակետից սկսած՝ ազատականացումը իրականացվեց աստիճանաբար, և մասնավորեցումը հետաձգվեց գրեթե երկու տասնամյակ: Չինաստանի աստիճանական մոտեցումը բարեփոխումներին հանգեցրեց ավելի քան երեք տասնամյակի բարձր և համեմատաբար կայուն

---

[1] Acemoglu, D., Johnson, S., & Robinson, J. A. (2005). Institutions as a fundamental cause of long-run growth. *Handbook of economic growth*, *1*, 385-472.

[2] Persson, T., & Tabellini, G. (2006). Democracy and development: The devil in the details. *American Economic Review*, *96*(2), 319-324.

աճի տեմպերի[1]: Աճի ուշագրավ տեմպերը ուղեկցվեցին չզարգացած իրավական և ֆինանսական համակարգերով, ինչը Չինաստանը դարձնում էր հանելուկ կամ պարադոքս՝ շեշտադրում կատարելով ձևավորված արդյունավետ իրավական և ֆինանսական համակարգերի կարևորությանը:

Անցումային տնտեսության համար ամենակարևորը ինստիտուցիոնալ զարգացումների և շուկայական տնտեսության ձևավորման օրինականացումն է՝ սեփականության իրավունքի հաստատումը և մասնավոր հատվածի զարգացումը, ֆինանսական ոլորտի հաստատությունների ու շուկաների զարգացումը և քաղաքական ինստիտուտների ազատականացումը:

Նեոդասական աճ. աշխատուժի արտադրողականություն և կորպորատիվ վերակառուցում

Նեոդասական աճի տեսությունը տնտեսական կայուն աճի համար կարևորում է երեք գործոնների համադրում՝ աշխատուժ, կապիտալ, տեխնոլոգիա:

Չինաստանի արագ տնտեսական աճը դարձավ լայն քննարկումների առարկա. դա պայմանավորված է արտադրողականության աճո՞վ, թե՞ կապիտալի և աշխատուժի կուտակումներով: Ոմանք գտնում են, որ բարեփոխումների ժամանակահատվածում ընդհանուր արտադրողականության գործակիցը (TFP) հստակ բարելավվել է: Ոմանք էլ գտնում են, որ Չինաստանի տնտեսական աճը մեծամասամբ պայմանավորված է կապիտալ ներդրումներով:

Այս տարակարծությունների մեջ առկա է միտում, որի հետ համաձայնում է ուսումնասիրողների մեծ մասը, այն է՝ ընդհանուր արտադրողականության գործակցի դանդաղումը 90-ականների կեսերից հետո: Օրինակ՝ ըստ Համաշխարհային բանկի 1997 թ. հաշվարկների՝ ընդհանուր արտադրողականությունը 1978-1995 թվականներին կազմել է Չինաստանի աճի 30-58 տոկոսը, որն այնուհետև ակնհայտորեն նվազել է 1995 թ. ապրիլից հետո[2]: Ընդհանուր արտադրողականության գործակցի դանդաղումը համընկնում է գյուղական եկամուտների աճի անկման և արտադրության մեջ համատարած անարդյունավետության հետ: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (OECD) 2002 թ. դրա պատճառներից է համարում մարդկային կապիտալի, հողի և այլ ռեսուրսների սխալ տեղաբաշխումը, աշխատուժի սխալ և անարդյունավետ օգտագործումը: Այսպիսով՝ աճը հիմնականում ապահովել է կապիտալի կուտակումը, քանի որ աշխատուժի աճը նույնպես նվազել է 1978-1995-ի 2.34% -ից մինչև 1.07% 1995-2005 թվականներին:

Հարկ է նշել, որ Չինաստանի տնտեսության աճը 1970-ականների վերջից մինչև 1990-ականների սկիզբը, Արևելյան Ասիայի մյուս երկրների համեմատ, ավելի շատ պայմանավորված էր արտադրողականության, քան կապիտալի

---

[1] Prasad, E. S., & Rajan, R. G. (2006). Modernizing China's growth paradigm. *American Economic Review*, *96*(2), 331-336.

[2] Zheng, J., Bigsten, A., & Hu, A. (2009). Can China's growth be sustained? A productivity perspective. *World Development*, *37*(4), 874-888.

աճով: Այնուամենայնիվ, այդ ժամանակվանից ի վեր կապիտալ ներդրումների աճը հաճախ գերազանցել է ՀՆԱ-ի աճը: Պետք է գտնել հարցի պատասխանը՝ ընդհանուր արտադրողականության գործակիցը դանդաղե՞լ է, թե՞ բարեփոխումների արդյունքում բարելավումները կրել են մեկանգամյա բնույթ: Թերևս ավելի խոր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բարեփոխումներն ընդհանուր արտադրողականության վրա ունեցել են մեկանգամյա ազդեցություն[1], օրինակ՝ կապիտալի տեղաշարժը պետական սեփականությունից դեպի մասնավոր ձեռնարկություններ:

Նմանատիպ դրական միտում է նկատվել նաև աշխատուժի արտադրողականության վրա, երբ աշխատուժը գյուղատնտեսության ոլորտից 1995 – 2004 թվականներին տեղաբաշխվեց արդյունաբերության և ձեռնարկատիրության ոլորտ: Սակայն տնտեսական աճի վրա վերաբաշխման ազդեցությունը նվազում է 2000-ականներից[2], ինչը չի կարելի պնդել աշխատուժի արտադրողականության վերաբերյալ:

Աշխատուժի արտադրողականության աճին նպաստող հիմնական գործոնը տեխնիկական արդյունավետության բարձրացումն է, ինչը խոստումնալից հիմք է կայուն աճի համար: Սակայն եթե տնտեսության զարգացման գործում կապիտալի և աշխատուժի ռեսուրսների ազդեցությունը կարող է չափելի լինել, ապա տեխնոլոգիաների ազդեցությունը տնտեսության զարգացման հարցում սահմաններ չունի:

Էնդոգեն աճ. մարդկային կապիտալի և աշխատաշուկայի բարեփոխումները

Էնդոգեն աճի տեսությանը համաձայն՝ տնտեսական աճը ստեղծվում է համակարգի ներսում՝ որպես ներքին գործընթացների անմիջական արդյունք: Մասնավորապես՝ կարևորվում է հետևյալը. ազգի մարդկային կապիտալի կատարելագործումը կհանգեցնի տնտեսական աճի՝ նոր տեխնոլոգիաների և արտադրության արդյունավետ միջոցների ստեղծման ճանապարհով:

Չինաստանի համար աշխատուժի մատակարարման աճը, կապիտալ ներդրումների և ընդհանուր արտադրողականության գործակցի հետ համեմատ, ընդհանուր առմամբ համարվել է աճի ոչ այդքան կարևոր գործոն: Չինաստանի տնտեսական զարգացման հարցում «մեկ ընտանիք, մեկ երեխա» դեմոգրաֆիկ քաղաքականությունը դանդաղեցրեց բնակչության աճը, ինչպես նաև աշխատուժի լիարժեք գործոնը: Սակայն տվյալ տեսությունը կարևորում է մարդկային կապիտալի զարգացումը՝ համարելով այն արտադրողականության և տեխնոլոգիական առաջխաղացման աղբյուր, ինչը ենթադրում է, որ տնտեսական աճը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մարդկային կապիտալը բարելավվում և կատարելագործվում է: Տեխնոլոգիական առաջընթացը, այսպիսով, բացատրվում

---

[1] Jefferson, G. H., Hu, A. G., & Su, J. (2006). The sources and sustainability of China's economic growth. *Brookings Papers on Economic Activity*, *2006*(2), 1-60.

[2] Brandt, L., & Zhu, X. (2010). Accounting for China's growth

է որպես կրթության, հմտությունների և վերապատրաստումների արդյունք՝ լրացնելով նեոդասական մոդելը:

Աշխատաշուկայի զարգացումը Չինաստանի համար ամենալայնածավալ բարեփոխումներից է: Երեսուն տարուց պակաս ժամանակահատվածում նրա զբաղվածության համակարգը վերածվեց մրցունակ համակարգի:

Այդ բարեփոխումները նպաստել են աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և, հետևաբար, էնդոգեն տնտեսական աճի, որտեղ արդյունավետությունը բարելավվում է մարդկային կապիտալի զարգացմամբ և խրախուսմամբ:

Աշխատանքային բարեփոխումների համակարգը հեռացավ պլանային տնտեսության սոցիալիստական արժեքային համակարգից: Շուկայական ուժերին ապավինելու հետևանքը հանգեցրեց տարբերակման և անհատական նվաճումների կարևորության բարձրացմանը՝ որպես բարձր մրցակցային աշխատաշուկայում գոյատևման միջոց: Աշխատող հասարակությանը կոչ արվեց փոփոխություններ իրականացնել ինչպես սեփական արժեքային համակարգում, այնպես էլ իրենց հմտություններում՝ նոր աշխատաշուկայում և անորոշության ու անապահովության միջավայրում գոյատևելու համար:

Աշխատակիցների ապագայի բարձր անկանխատեսելիությունը, ղեկավարների և աշխատակիցների միջև իշխանության և եկամուտների վիհի ընդլայնումը պատճառ դարձան աշխատանքային իրավունքի արմատական փոփոխությունների իրականացման համար: Աշխատաշուկայի բարեփոխված քաղաքականությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք արտահայտվում են պահանջների և անձեռնմխելիության կտրուկ կրճատումներով, որոնք ուղեկցվում են բժշկական նպաստների վերացմամբ. ընկերությունները դրանք փոխարինում են սոցիալական ապահովագրությամբ, ազատականացվում է աշխատանքից ազատելու հնարավորությունը[1,2]:

Այնուամենայնիվ, աշխատողների կորուստները որոշակի առումով փոխհատուցվում են: Մարդիկ ձեռք բերեցին իրենց զբաղվածությունը ընտրելու ազատություն, աշխատանքի էլաստիկություն՝ ըստ ձեռնարկությունների, և աշխարհագրական սահմանների ազատություն: Սոցիալական ապահովագրության համակարգի ներդրումը ոչ միայն ենթադրում էր պետության, ձեռնարկությունների և անհատ աշխատողների միջև բարեկեցության ապահովման պատասխանատվության բաժանում, այլև նախատեսված էր աշխատողներին ազատել ձեռնարկություններից կախվածությունից, ինչը բնութագրվում էր որպես նոր ինքնավարություն:

Մարդկանց տեղաշարժվելու ազատություն տրամադրելով՝ մասամբ կրճատվեց գյուղական և քաղաքային բնակչության կենսամակարդակների տարբերու-

---

[1] Liu, L. 1996. 'A Gradual Approach'. *The China Business Review* 23: 19-25.

[2] Duo,].D.C. 1995. *Xin Shi Qi Zhong Guo She Hui Bao Zhang Ti Zhi Gai Ge De Li Lun Yu Shi }ian* (Reform of the Social Security System in the New Era of China: Theory and Practice).Beijing: Central Cadre School of Chinese Communist Party Publisher.

թյունը, քանի որ գյուղական տարածքներից տեղի ունեցավ մարդկանց մեծ հոսք դեպի քաղաքներ: Սա էլ, իր հերթին, նպաստեց արդյունաբերության խթանմանը՝ ապահովելով էժան աշխատուժ:

Կոնվերգենցիոն տնտեսական աճ[1].
տեխնոլոգիական փոխանցումներ և նորարարություն

Կոնվերգենցիոն տնտեսական աճը ենթադրում է, որ աղքատ տնտեսություն ունեցող երկրները հակված են ավելի արագ տնտեսական աճի, քան հարուստ տնտեսություն ունեցող երկրները:

Չինաստանում մի շարք ուսումնասիրություններ նվիրված են նաև նորարարության վրա հիմնված տեխնոլոգիայի դերակատարմանը: Կառավարությունը բարեփոխման վերջին շրջանի մասում, գիտակցելով նորարարության կարևորությունը, 1985 թ. ընդունեց արտոնագրային օրենսդրություն և հետագայում ստեղծեց հեղինակային իրավունքի և ապրանքային նշանի օրենսդրություն: Մտավոր սեփականության իրավունքի ներդրումից հետո (որպես 2001 թ. իրականացված Առևտրի համաշխարհային կազմակերպությանը միանալու գործընթացի մաս) չինական ընկերությունների ուշադրությունը և ձեռնարկատիրական ջանքերը ավելի ակտիվացան նորարարական գործունեության և արտոնագրային հայտերի նկատմամբ[2]: Սակայն բարեփոխումների սկզբնական շրջանում Չինաստանի իշխանությունները հիմնականում մտածում էին օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը և առևտրի խթանմանը նպաստող գործառույթների քաղաքականությունների մասին: Նպատակը տեխնոլոգիաներից և նոու-հաուներից օգուտ քաղելն էր, ինչը բնութագրում է զարգացման կոնվերգենցիոն փուլը: Նման քաղաքականության միջոցով, գյուտեր անելուն և նորարարություններ ստեղծելուն ուղղված ջանքերի փոխարեն, երկիրը սովորում և ընդօրինակում է:

Կան մի քանի փաստարկներ այն մեխանիզմների վերաբերյալ, որոնց միջոցով օտարերկրյա ուղղակի ներդրումները և առևտուրը տնտեսական աճ են խթանում[3]: Ընդունված տեսակետներից մեկն այն է, որ օտարերկրյա ուղղակի ներդրումները և առևտուրը ժամանակակից տեխնոլոգիաներ և առաջադեմ գիտելիքներ կլանելու գործիք են: Օտարերկրյա ուղղակի ներդրումների առավելություններից մեկն այն է, որ նոր տեխնոլոգիաները արտասահմանյան ընկերություններն են բերում: Տեխնոլոգիաների փոխանցումը տեղի է ունենում երկու ճանապարհով՝ ուղղակիորեն լիցենզավորման պայմանագրերի միջոցով վաճառվող տեխնոլոգիայի փոխանցում, կամ նոր տեխնոլոգիայի փոխանցումը արտահանողներին իրականացվում է արտասահմանյան գնորդների կողմից:

---

[1] Հիպոթեզ, ըստ որի՝ աղքատ երկրները (մեկ շնչի հաշվով ցածր եկամուտ ունեցող) կունենան ավելի բարձր տնտեսական աճի տեմպեր, քան հարուստ երկրները:

[2] Hu, A. G., & Jefferson, G. H. (2009). A great wall of patents: What is behind China's recent patent explosion?. *Journal of Development Economics*, *90*(1), 57-68.

[3] Gylfason, T. (1999). Principles of economic growth. *OUP Catalogue*.

Հարկ է հաշվի առնել նաև արտադրողականության արդյունքը՝ պայմանավորված միջազգային մակարդակում ավելի մեծ մրցակցության դիմակայությունով: Այն փաստարկը, որ օտարերկրյա ուղղակի ներդրումները և միջազգային առևտուրը 1980-ականների վերջից մինչև 1990-ականների կեսերը դրականորեն նպաստել են Չինաստանի ավելի արագ աճին, լայնորեն քննարկված և հիմնավորված է[1,2]:

Չինաստանի համար օտարերկրյա ուղղակի ներդրումները նպաստել են պետական և կոլեկտիվ հատվածների վերափոխմանը[3]:

Հարկ է նշել նաև, որ օտարերկրյա ուղղակի ներդրումների տեղաբաշխումը պայմանավորված է էկզոգեն աշխարհագրական և քաղաքական գործոններով.

- հեռավորությունը խոշոր նավահանգիստներից,
- հատուկ տնտեսական և ազատ առևտրի գոտիներ ստեղծելուն նպաստելը,
- տեղական ինստիտուցիոնալ բնութագրերը, օրենքները և կանոնակարգերը,
- պայմանագրերի կատարումը,
- ենթակառուցվածքների տեղական ծախսերը,
- աշխատանքի շուկայի պայմանները,
- դպրոցների առկայությունը և այլն:

Անդրադառնալով R&D-ին՝ Չինաստանում հետազոտությունների և զարգացումների, դրանց տեղայնացման և աճի վերաբերյալ ուսումնասիրությունները սահմանափակ են: Օգտագործելով մարզային տվյալները, որոնք ընդգրկում են 1996–2002 թվականների ժամանակահատվածը, հայտնաբերվել է, որ տեղական R&D-ի զարգացումը դրական և վիճակագրորեն էական ազդեցություն ունի տնտեսական աճի վրա[4]: Գնահատականները վկայում են նաև, որ միջազգային տեխնոլոգիական տեղայնացումները պայմանավորված են դրանց իրականացման նահանգից: Հաջողությունը պայմանավորված է տեղայնացման ունակությունից, որը չափվում է մարդկային կապիտալի ներդրումներով և թափանցելիության աստիճանով:

Գիտելիքի կապիտալը զգալիորեն նպաստում է ինչպես R&D կապիտալի, այնպես էլ տեխնոլոգիաների ներմուծման կատարելագործմանը[5]: Նշվածը հիմնավորվում է նաև այն փաստով, որ ընդհանուր արտադրողականության գործակցի աճը պայմանավորված է ավելի շատ տեխնիկական առաջընթացով, քան արդյունավետության բարձրացմամբ, հատկապես այն ձեռնարկություն-

---

[1] Chen, C., Chang, L., & Zhang, Y. (1995). The role of foreign direct investment in China's post-1978 economic development. *World development*, *23*(4), 691-703.

[2] Liu, X., Burridge, P., & Sinclair, P. J. (2002). Relationships between economic growth, foreign direct investment and trade: evidence from China. *Applied economics*, *34*(11), 1433-1440.

[3] Liu, Z. (2008). Foreign direct investment and technology spillovers: Theory and evidence. *Journal of Development Economics*, *85*(1-2), 176-193

[4] Mingyong, L., Shuijun, P., & Qun, B. (2006). Technology spillovers, absorptive capacity and economic growth. *China Economic Review*, *17*(3), 300-320.

[5] Brun, J. F., Combes, J. L., & Renard, M. F. (2002). Are there spillover effects between coastal and noncoastal regions in China?. *China Economic Review*, *13*(2-3), 161-169.

ներում, որոնք առավել զգայուն են աճող մրցակցության և պահանջկոտ սպառողների նկատմամբ:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ամփոփելով ասվածը՝ կարելի է անդրադառնալ Չինաստանի երկարատև տնտեսական աճը բնութագրող երեք ժամանակաշրջաններին:

1. *Ազատականացման առաջին շրջան:* 1970-ականների վերջին և 1980-ականների սկզբին կենտրոնական կառավարության իրականացրած քաղաքականություններն ուղղված էին սոցիալական կապիտալ ստեղծելուն: Վերացնելով այն օրենքները և կարգավորումները, որոնք սահմանափակում էին չինացու արդյունավետ աշխատանքը՝ այս բարեփոխումները հանգեցրին տնտեսական գործունեության հեղեղի, որն ստեղծեց հսկայական հարստություն: Վատ կառավարվող կոլեկտիվի և կազմակերպությունների փոխարեն՝ քաղաքացիների համար օրինական դարձավ արտադրելն ու վաճառելը որպես անհատ: Սահմանափակ թվով ֆերմերներին թույլատրվեց տնօրինել քվոտաներից ավել մնացած, իրենց արտադրած ցանկացած մթերք, որից հետո գյուղատնտեսական բերքատվությունը գրեթե անմիջապես կրկնապատկվեց:

2. *Ենթակառուցվածքների զարգացման շրջան:* Չնայած աշխատանքի արտադրողականության ակտիվության աճին՝ շուտով սկսվեցին ենթակառուցվածքների և կարողությունների սահմանափակումներ: Սա Չինաստանի զարմանալի աճի երկրորդ փուլի սկիզբն էր, որը բնութագրվում է ներքին ռեսուրսների հստակ դասակարգմամբ՝ հանուն ներդրումային բում իրականացնելու: Ներդրումները ուղղված էին ենթակառուցվածքների ստեղծմանը: Քանի որ Չինաստանի ենթակառուցվածքների ունակությունը շատ ցածր էր տարածքային ենթակառուցվածքներն արդյունավետ օգտագործելու և շահագործելու հնարավորությունից[1], կենտրոնական մարմինների համար համեմատաբար հեշտ էր նույնականացնել արդյունավետ ներդրումային ծրագրերը: Տվյալ նախագծերում ներդրումներ իրականացնելու արդյունքում առաջացավ հարստության ստեղծման ևս մեկ աճ՝ 1990-ականների սկզբից մինչև 2000-ականների սկիզբ: Թեև բոլոր չինացիներն օգտվեցին հարստության այս ստեղծումից, սակայն նոր էլիտայի օգուտը անհամաչափ մեծ էր՝ կապված տնային տնտեսությունների եկամուտների աճի խոչընդոտների հետ[2], որոնք պայմանավորված էին մեծ խնայողական ֆոնդերի առկայությամբ: Ժամանակի ընթացքում այս նոր էլիտան նույնպես քաղաքականացվեց:

3. *Ներդրումների գերակապարում:* Չինաստանը դեռ շարունակում էր մնալ որպես համեմատաբար չզարգացած տնտեսություն՝ ոչ կատարելագործված սոցիալական, իրավական, ֆինանսական և տնտեսական հաստատություններով, ինչն էլ իր հերթին կաշկանդում էր իր քաղաքացիներին՝ հասնելու զարգացած

[1] Երբ սոցիալական կապիտալը գերազանցում է իր ֆիզիկական կապիտալը:

[2] Նման միջոցառումները թույլ կտային ապահովել ներքին ներդրումները, որոնք հետամնաց տնտեսություն ունեցող երկրներում հիմնականում անբավարար են:

երկրներին բնորոշ արտադրողականության մակարդակներին: Տնտեսության սոցիալական կապիտալը դեռևս շատ ցածր էր, որոշ դեպքերում՝ պայմանավորված այն քաղաքականաթյամբ, որը հանգեցրել էր ներդրումներով պայմանավորված տնտեսական աճին՝ թույլ տալով էլիտաներին վերահսկել սուբսիդիաների, էժան կապիտալի և հողի հասանելիությունը: Ներդրումների աճի հետ մեկտեղ Չինաստանի ֆիզիկական կապիտալը հավասարվեց սոցիալական կապիտալին[1], որից հետո լրացուցիչ ֆիզիկական կապիտալի ստեղծումը իրատեսական չէ, կամ, այլ կերպ ասած, իրական հարստություն այլևս չի ստեղծվում: Սակայն վերահսկող էլիտաների (հատկապես տեղական և քաղաքային մակարդակներում) կողմից ներդրումների շարունակական աճը խթանում է տնտեսական աճի ցուցանիշների բարելավումը: Այս ընթացքը շարունակվում է մինչ օրս:

Չինաստանի տնտեսության զարգացման մոդելների ուսումնասիրության, դրանց արդյունավետությունը հասկանալու և փուլային մակարդակով դիտարկման արդյունքում հնարավոր է Հայաստանի համար ընդօրինակելի զարգացման ծրագրերի առաջադրումը: Այսպիսով՝ զարգացող երկրի համար, ինչպիսին Հայաստանն է, առաջարկվում է իրականացնել քաղաքականությունների երկու ուղղություն:

1. Քաղաքականություններ, որոնք ուղղված են ուղղակիորեն բարելավելու գործարար միջավայրը՝ նրանց տալով իրենց անհրաժեշտ ռեսուրսները, ինչպիսիք են լավ ենթակառուցվածքները, կապիտալը և կրթված աշխատուժը: Տվյալ դեպքում, հաշվի առնելով Չինաստանի փորձը, հարկավոր է կիրառել տնտեսության զարգացման էնդոգեն մոտեցումը, այն է՝ կատարելագործել մարդկային կապիտալը.

1.1. պետությունը կարող է տնտեսական հաջողության ամուր հիմք դնել՝ կրթության ոլորտում ներդրումներ կատարելով, ապահովելով բարձրորակ կրթության լայնածավալ հասանելիություն, ընդլայնելով ոչ միայն բնակիչների տնտեսական հնարավորությունները, այլև տնտեսության զարգացման հավանականությունը:

1.2. Պետությունը կարող է բարձրացնել իր տնտեսական հնարավորությունները՝ ներգրավելով և խթանելով բարձր աշխատավարձ տրամադրող օտարերկրյա գործատուներին: Այս մոտեցումը հնարավոր է կիրառել այն դեպքում, երբ կրթության ոլորտում ներդրումների իրականացմամբ ավելացվում է կրթված, վերազգային կազմակերպություններին անհրաժեշտ աշխատողների թիվը:

1.3. Մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված միջոցառումները կարող են ներգրավել ոլորտներ, որոնք ունեն միջազգային կարևորություն և նշանակալի են մարդկության զարգացման ասպարեզում: Նման ոլորտներից են.

- նոր, առաջադեմ տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- ավտոմատացված հաստոցներ և ռոբոտներ,
- ավիատիեզերական և ավիացիոն սարքավորումներ,

[1] Ենթակառուցվածքների զարգացվածությունը համընկնում էր այդ ենթակառուցվածքները արդյունավետ օգտագործելու ունակության հետ:

- նոր էներգետիկ տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ,
- էլեկտրասարքավորումներ,
- գյուղատնտեսական ապրանքներ,
- բիոֆարմա և առաջադեմ բժշկական ապրանքներ:

2. Քաղաքականություններ, որոնք ուղղված կլինեն սոցիալական կապիտալի բարելավմանը, որ անհատները և ձեռնարկությունները կարողանան արդյունավետ օգտագործել հասանելի ռեսուրսները: Բարեփոխումները ներառում են միջոցառումներ՝ ուղղված

- արտադրողականության խթանման կառույցների ստեղծմանը,
- կայուն և արդյունավետ իրավական համակարգի ստեղծմանը,
- կապիտալի արդյունավետ բաշխումը ապահովող ֆինանսական համակարգերին,
- հարստության ստեղծման գործընթացում քաղաքական վերնախավի աննշան միջամտությանը,
- վարձակալության կողմնորոշվածությամբ վարքի խոչընդոտման վերացմանը[1],
- գործարարության կամ հասարակության համար տնտեսական արժեք ստեղծելու դյուրինության ապահովմանը:

Հարկ է նշել, որ սոցիալական կապիտալ ստեղծող բարեփոխումները յուրաքանչյուր երկրում խիստ անհատական են և կախված են այդ երկրի մշակույթից և պատմությունից, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ զարգացման տեսությունների՝ իրենց ծագման երկրից դուրս միատեսակ կիրառումը տարբեր երկրներում հնարավոր չէ: Այս առումով՝ Չինաստանում կիրառված միջոցառումները կրկնօրինակելը նպատակահարմար չէ: Հարկավոր է մտածել հայկական սոցիալական առանձնահատկությունների մասին, ինչը կարող է հիմք հանդիսանալ այլ հետազոտական աշխատանքների:

Օգտագործված գրականության ցանկ

1. Qian Y., Roland G. & Xu C. (1999). Why is China different from Eastern Europe? Perspectives from organization theory. *European Economic Review*, *43* (4-6), 1085-1094.
2. Murphy K. M., Shleifer A. & Vishny R. W. (1992). The transition to a market economy: Pitfalls of partial reform. *The Quarterly Journal of Economics*, *107* (3), 889-906.
3. Lardy N. R. (1998). *China's unfinished economic revolution*. Brookings Institution Press.

[1] Հասարակության ընտրության և տնտեսագիտության տեսության մեջ վարձակալության կողմնորոշվածություն նշանակում է, որ անհատը/ձեռնարկությունը ձգտում է մեծացնել իր ունեցվածքի բաժինը՝ առանց նոր արժեք, հարստություն ստեղծելու: Վարձակալության կողմնորոշվածության վարքագիծը հանգեցնում է տնտեսական արդյունավետության իջեցման՝ ռեսուրսների սխալ տեղաբաշխման, հարստության ստեղծման կրճատման, կառավարության վատնված եկամուտների, եկամտի անհավասար բաշխվածության մեծացման և ազգային հնարավոր պոտենցիալի անկման միջոցով:

4. Acemoglu D., Johnson S. & Robinson J. A. (2005). Institutions as a fundamental cause of long-run growth. *Handbook of economic growth*, *1*, 385-472.
5. Persson T. & Tabellini G. (2006). Democracy and development: The devil in the details. *American Economic Review*, *96* (2), 319-324.
6. Prasad E. S. & Rajan R. G. (2006). Modernizing China's growth paradigm. *American Economic Review*, *96* (2), 331-336.
7. Zheng J., Bigsten A. & Hu A. (2009). Can China's growth be sustained? A productivity perspective. *World Development*, *37* (4), 874-888.
8. Jefferson G. H., Hu A. G. & Su J. (2006). The sources and sustainability of China's economic growth. *Brookings Papers on Economic Activity*, *2006* (2), 1-60.
9. Brandt L. & Zhu X. (2010). Accounting for China's growth.
10. Liu L. 1996. 'A Gradual Approach'. *The China Business Review,* 23, 19-25.
11. Duo]. D. C. 1995. *Xin Shi Qi Zhong Guo She Hui Bao Zhang Ti Zhi Gai Ge De Li Lun Yu Shi }ian* (Reform of the Social Security System in the New Era of China: Theory and Practice). Beijing: Central Cadre School of Chinese Communist Party Publisher.
12. Hu A. G. & Jefferson G. H. (2009). A great wall of patents: What is behind China's recent patent explosion?. *Journal of Development Economics*, *90* (1), 57-68.
13. Gylfason T. (1999). Principles of economic growth. *OUP Catalogue*.
14. Chen C., Chang L. & Zhang Y. (1995). The role of foreign direct investment in China's post-1978 economic development. *World development*, *23* (4), 691-703.
15. Liu X., Burridge P. & Sinclair P. J. (2002). Relationships between economic growth, foreign direct investment and trade: evidence from China. *Applied economics*, *34* (11), 1433-1440.
16. Liu Z. (2008). Foreign direct investment and technology spillovers: Theory and evidence. *Journal of Development Economics*, *85* (1-2), 176-193.
17. Mingyong L., Shuijun P. & Qun B. (2006). Technology spillovers, absorptive capacity and economic growth. *China Economic Review*, *17* (3), 300-320.
18. Brun J. F., Combes J. L. & Renard M. F. (2002). Are there spillover effects between coastal and noncoastal regions in China?. *China Economic Review*, *13* (2-3), 161-169.

References

1. Qian Y., Roland G. & Xu C. (1999). Why is China different from Eastern Europe? Perspectives from organization theory. *European Economic Review*, *43* (4-6), 1085-1094.
2. Murphy K. M., Shleifer A. & Vishny R. W. (1992). The transition to a market economy: Pitfalls of partial reform. *The Quarterly Journal of Economics*, *107* (3), 889-906.
3. Lardy N. R. (1998). *China's unfinished economic revolution*. Brookings Institution Press.

4. Acemoglu D., Johnson S. & Robinson J. A. (2005). Institutions as a fundamental cause of long-run growth. *Handbook of economic growth*, *1*, 385-472.
5. Persson T. & Tabellini G. (2006). Democracy and development: The devil in the details. *American Economic Review*, *96* (2), 319-324.
6. Prasad E. S. & Rajan R. G. (2006). Modernizing China's growth paradigm. *American Economic Review*, *96* (2), 331-336.
7. Zheng J., Bigsten A. & Hu A. (2009). Can China's growth be sustained? A productivity perspective. *World Development*, *37* (4), 874-888.
8. Jefferson G. H., Hu A. G. & Su J. (2006). The sources and sustainability of China's economic growth. *Brookings Papers on Economic Activity*, *2006* (2), 1-60.
9. Brandt L. & Zhu X. (2010). Accounting for China's growth.
10. Liu L. 1996. 'A Gradual Approach'. *The China Business Review,* 23, 19-25.
11. Duo]. D. C. 1995. *Xin Shi Qi Zhong Guo She Hui Bao Zhang Ti Zhi Gai Ge De Li Lun Yu Shi }ian* (Reform of the Social Security System in the New Era of China: Theory and Practice). Beijing: Central Cadre School of Chinese Communist Party Publisher.
12. Hu A. G. & Jefferson G. H. (2009). A great wall of patents: What is behind China's recent patent explosion?. *Journal of Development Economics*, *90* (1), 57-68.
13. Gylfason T. (1999). Principles of economic growth. *OUP Catalogue*.
14. Chen C., Chang L. & Zhang Y. (1995). The role of foreign direct investment in China's post-1978 economic development. *World development*, *23* (4), 691-703.
15. Liu X., Burridge P. & Sinclair P. J. (2002). Relationships between economic growth, foreign direct investment and trade: evidence from China. *Applied economics*, *34* (11), 1433-1440.
16. Liu Z. (2008). Foreign direct investment and technology spillovers: Theory and evidence. *Journal of Development Economics*, *85* (1-2), 176-193.
17. Mingyong L., Shuijun P. & Qun B. (2006). Technology spillovers, absorptive capacity and economic growth. *China Economic Review*, *17* (3), 300-320.
18. Brun J. F., Combes J. L. & Renard M. F. (2002). Are there spillover effects between coastal and noncoastal regions in China?. *China Economic Review*, *13* (2-3), 161-169.

Գևորգ Բախշյան
Ռոբերտ Թումանյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄՈԴԵԼԸ

Համառոտագիր: Հոդվածում քննարկվում է Չինաստանի տնտեսական աճը տարբեր տնտեսական մոդելների տեսանկյունից: Հոդվածի նպատակն է ներդրում ունենալ Հայաստանի Հանրապետության հետագա աճի ապահովման ռազմավարական պլանավորման գործընթացում՝ վերլուծելով աճի պայմաննե-

րի ստեղծման քաղաքականությունը: Ուսումնասիրությունը կատարվել է՝ հաշվի առնելով տնտեսական զարգացման մոդելների դրսևորումները, ինչպես նաև դրանց առանձնահատուկ մոտեցումները՝ առավել նպատակահարմար մոդելի ընտրության և դրա արդյունավետ տեղայնացման ապահովության համար:

Բանալի բառեր. տնտեսական մոդել, բարեփոխումներ, նեոդասական զարգացում, էնդոգեն զարգացում, կոնվերգենցիային զարգացում, մարդկային կապիտալ

Геворг Бахшян
Роберт Туманян

МОДЕЛЬ ЭКОНОМИЧЕСКИХ ПРЕОБРАЗОВАНИЙ КИТАЯ

Аннотация: В статье рассматривается экономический рост Китая с точки зрения различных экономических моделей. Целью статьи является содействие процессу стратегического планирования обеспечения дальнейшего роста Республики Армения посредством анализа политики создания условий роста. Исследование проводилось с учетом проявлений моделей экономического развития, а также их особенных подходов к выбору наиболее целесообразной модели и обеспечению ее эффективной локализации.

Ключевые слова: экономическая модель, реформы, неоклассическое развитие, эндогенное развитие, развитие конвергенции, человеческий капитал

Gevorg Bakhshyan
Robert Tumanyan

MODEL OF ECONOMIC TRANSFORMATIONS OF CHINA

Abstract: The article reviews economic growth of China in terms of various economic models. The purpose of the article is to contribute to the process of strategic planning of ensuring the further growth of the Republic of Armenia by analyzing the policy of creating growth conditions. The study was carried out considering manifestations of economic development models, as well as their special approaches to the selection of the most appropriate model and ensuring its effective localization.

Keywords: economic model, reforms, neoclassical development, endogenous development, convergence development, human capital

Լիլիթ Սարգսյան
Դոնարա Գրիգորյան

ՍԻՆԳԱՊՈՒՐԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Ներածություն

Սինգապուրն աշխարհում հայտնի է տնտեսական հեղափոխության իրականացման հաջող փորձով: Սինգապուրի տնտեսական հաջողությունները մինչ օրս ապշեցնում են համաշխարհային հանրությանը: 1959 թ. Սինգապուրն անկախացավ Բրիտանիայից և 1963 թ. միացավ Մալայզիային՝ որպես դաշնության մաս, որի կազմում էին Հյուսիսային Բոռնեոն, Սարավակը և այլ նահանգներ: Այդուհանդերձ, անհամասեռ բնակչության միջև մշտապես ծագող հակամարտությունների պատճառով 1965 թ. օգոստոսի 9-ին Սինգապուրն անկախացավ և երեք տասնամյակի ընթացքում աղքատ երկրից վերածվեց հարուստ ու առաջատար երկրի: Ներկայումս Սինգապուրը, ինչպես և Հայաստանը, խորհրդարանական հանրապետություն է:

Սինգապուրը քաղաք-պետություն է Հարավ Արևելյան Ասիայում, այն գտնվում է 63 կղզիների վրա: Սինգապուրն իր տարածքով (2019 թ.՝ 725,1 քկմ[1]) դասվում է աշխարհի ամենափոքր պետությունների շարքին, սակայն փոքր մակերեսը քաղաք-պետության համար խոչընդոտ չի հանդիսանում լինել աշխարհի ամենազարգացած պետություններից մեկը: Սինգապուրի բնակչությունը 2018 թ. կազմել է 5.82 մլն մարդ[2]:

1965-2015 թթ. Սինգապուրում 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն 500 ԱՄՆ դոլարից դարձել է 55.000 ԱՄՆ դոլար: Ընդ որում՝ հարկ է նշել, որ տնտեսական աճը ազդել է բնակչության բոլոր շերտերի բարեկեցության վրա. մասնավորապես՝ նվազագույն եկամուտ ստացող 10% բնակչության իրական եկամուտը 2007 թ. աճեց 30,2%-ով, իսկ 2017 թ.՝ 38,7%[3]-ով:

Համաձայն 2019 թ. Համաշխարհային մրցունակության զեկույցի[4]՝ Սինգապուրն աշխարհում առաջին տեղն է զբաղեցնում մրցունակության տեսանկյունից, Ասիական և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում հանդիսանում է ամենամեծ ֆինանսական կենտրոնը, իսկ աշխարհում 3-րդն է Լոնդոնի և Նյու Յորքի ֆինանսական կենտրոններից հետո: Սինգապուրում կոռուպցիայի և հանցավորության մակարդակը ամենացածրերից է աշխարհում: Ներկայում Սինգապուրն աչքի է ընկնում մեկ այլ առանձնահատկությամբ ևս. Բրունեյից հետո այս երկիրն աշխարհում ամենացածր հարկադրույքներ ունեցողն է:

---

[1] https://www.singstat.gov.sg/find-data/search-by-theme/society/environment/latest-data
[2] https://www.worldometers.info/world-population/singapore-population/
[3] https://sustainabledevelopment.un.org/content/documents/19439Singapores_Voluntary_National_Review_Report_v2.pdf
[4] https://www.weforum.org/reports/how-to-end-a-decade-of-lost-productivity-growth

Ինչպե՞ս հաջողվեց Սինգապուրին նման կարճ ժամանակահատվածում այսպիսի թռիչքաձև զարգացում ապահովել: Սինգապուրի տնտեսական հրաշքի հարցի պատասխանը փորձում են տալ բազմաթիվ վերլուծաբաններ: Այդուհանդերձ, հստակ է, որ նման հաջողության հիմքում ընկած են համապետական միջոցառումները, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝ տնտեսական և սոցիալական բարեփոխումներ, կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար, քաղաքական կայունություն, երկարաժամկետ զարգացման կայուն ծրագրերի առաջադրում բոլոր ոլորտներում:

Գրականության տեսություն

Բազմաթիվ վերլուծություններ են իրականացվել՝ փորձելով բացատրել Սինգապուրի տնտեսական հրաշքը: Այսօր Սինգապուրը ժամանակակից արդյունաբերական կենտրոն է, որն ունի դիվերսիֆիկացված տնտեսություն, և ձեռնարկությունների միջև առևտուրը շարունակում է հիմնական դերն ունենալ իր տնտեսության զարգացման մեջ: Սինգապուրի բարգավաճման հիմնաքարը առաջին հերթին գրագետ տնտեսական քաղաքականությունն է, որը ներառում է օտարերկրացիների ներդրումների խթանումը, ազատ տնտեսական գոտիների ստեղծումը, մանր ու միջին բիզնեսի նկատմամբ պետական հոգածությունը և այլն:

Սինգապուրի տնտեսական աճի և տնտեսական կայունության շնորհիվ երկրում ներգրավված օտարերկրյա կապիտալը տարեցտարի շարունակում է աճել, և համաձայն մի շարք տնտեսագետների՝ Սինգապուրի տնտեսական զարգացման ռազմավարությունը հիմնվել է օտարերկրյա ներդրումների ներգրավման, ներդրումային բարենպաստ միջավայրի և օտարերկրյա ներդրողների համար լայն հնարավորությունների ստեղծման վրա: Սինգապուրը գործարար հանրույթի կողմից սկսեց համարվել ներդրումային տեսանկյունից ամենահեռանկարային երկրներից մեկը:

Սինգապուրի 1960-1970-ական թվականների զարգացման ռազմավարությունը վերլուծվել է Կ. Ուինսթոնի կողմից[1]: Համաձայն հեղինակի աշխատության՝ Սինգապուրը, ունենալով սահմանափակ բնական ռեսուրսներ, իրականացնում է արևմտյան անդրազգային կորպորացիաների ներգրավմանը միտված տնտեսական քաղաքականություն, ինչի շնորհիվ երկիրը կարողացավ արտադրել համաշխարհային շուկայում մրցունակ ապրանքներ: Սինգապուրի զարգացման ռազմավարական մոդելը ուսումնասիրվել է տարբեր ազգերի հեղինակների աշխատություններում: Այսպես, համեմատական վերլուծության միջոցով Լ. Ֆ. Պախոմովան բացահայտում է երկրների տնտեսական զարգացման ուղիների առանձնահատկությունները, նրանց հաջողությունները և ձախողումները տնտեսական աճի որոշ հարցերում[2]: Երկրի ներդրումային գրավչու-

---

[1] Koh Winston T. H., Singapore's Transition to Innovation-Based Economic Growth: Infrastructure, Institutions and Government's Role – 2006. – 143-160.

[2] Пахомова Л.Ф., Модели процветания (Сингапур, Малайзия, Таиланд, Индонезия). – М.: Институт востоковедения РАН, 2007, 256 с.

թյան համար կարևոր գործոնի՝ կոռուպցիայի դեմ պայքարի[1] ուսումնասիրությամբ զբաղվել է Գ. Վ. Եֆիմովը: Ըստ հեղինակի՝ Սինգապուրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում հակակոռուպցիոն բաղադրիչը կարևոր դեր է խաղացել: Հեղինակների մի այլ խումբ[2] վերլուծել է Սինգապուրի քաղաքական և տնտեսական բնութագիրը և սահմանել այն հիմնարար գործոնները, որոնք ազդել են քաղաքական վերնախավի և տնտեսության կայացման վրա, օրինակ՝ թե ինչ ազդեցություն են ունեցել բազմամշակութայնությունը, տարածքը, աշխարհագրական դիրքը երկրի տնտեսության մեջ արտաքին շուկաների դերի բարձրացման գործում: Ինչպես նաև հեղինակների կողմից ուշադրություն է դարձվում Սինգապուրում զարգացող այնպիսի ոլորտների, ինչպիսիք են առևտուրը, վերամշակումը, բանկային ծառայությունները, ապահովագրությունը, մարքեթինգը, փոխադրումները և կապը: Հեղինակները կարևորում են նաև պետության ձևավորման պատմական համատեքստը: Իսկ մեկ այլ հեղինակի՝ Վ. Հաֆի մենագրությունը[3] ներառում է Սինգապուրի զարգացման առանձին փուլերը՝ գաղութային շրջան, Մեծ Բրիտանիայից անկախացման շրջան և անկախ, գլոբալ քաղաքի կայացման ժամանակակից փուլեր՝ կենտրոնանալով տարբեր տարիների տնտեսական ցուցանիշների վրա, և նկարագրում է առանձին իրադարձություններ, որոնք ազդել են «Ժողովրդական գործողություն» կուսակցության որոշումների վրա: Էդգար Շեյնի «Ռազմավարական պրագմատիզմ. Սինգապուրի տնտեսական զարգացման մշակույթը»[4] մենագրությունը, որը հրատարակվել է 1966 թ., նվիրված Տնտեսական զարգացման խորհրդի՝ կիսապետական մի մարմնի կողմից ստեղծված քաղաքական մշակույթին, որը կարողացավ հասնել տնտեսության մեջ անմիջական ներգրավվածության՝ միաժամանակ պահպանելով արտաքին և ներքին շուկաների ճկունությունը և ձեռնարկատիրական ազատությունը: Հեղինակը նկարագրում է, թե Տնտեսական զարգացման խորհրդի կողմից նախաձեռնված կառավարչական գործընթացները ինչպես ազդեցին հանրապետության տնտեսական աճի վրա: Նա նշում է, որ Տնտեսական զարգացման խորհուրդը պարզեցրել է հարկային խթանման սխեմաները՝ ներդրողների ավելի մեծ հոսք ներգրավելու համար: Օրինակ՝ 1970-ականների վերջին հարկային արտոնությունները տրվել են տեղական արտադրողներին: 1976 թ. մեկնարկվեց փոքր արդյունաբերական ձեռնարկություններին ֆինանսավորելու ծրագիրը, իսկ արդեն 1985-ից այն տարածվեց նաև ծառայությունների ոլորտում փոքր ձեռնարկությունների վրա: 1987 թվականին վարկերի ընդհանուր ծավալը հասավ 141 միլիոն դոլարի: Էդգար Շեյնի աշխատանքում Տնտեսական զարգացման խորհուրդը հետազոտության հիմնական օբյեկտներից մեկն է: Մեկ

---

[1] Ефимов Г.В., Борьба с коррупцией в Сингапуре // Азия и Африка сегодня, 2002, №9.

[2] Krause L.B., The Singapore economy reconsidered. Institute of Southeast Asian Studies, 1987, p. 231.

[3] Huff W.G., The economic growth of Singapore: Trade and development in the Twentieth century. Department of economics, University of Glasgow, Cambridge University Press, 1994.

[4] Schein E.H., Strategic Pragmatism: The Culture of Singapore's Economic Development Board. Cambridge, the MIT Press, 1996.

այլ հեղինակ՝ Մանու Բասկարանը, «Սինգապուրի տնտեսության մարտահրավերները»[1] հոդվածում վերլուծում է Սինգապուրի տնտեսության արտաքին և ներքին մարտահրավերները, գնահատվում են աշխատանքային քաղաքականությունը, անշարժ գույքի շուկան, շուկայի մրցունակությունը: Հաջորդ հեղինակը՝ Ալի Մ. Նիզամուդդինը, իր հոդվածում[2] շեշտը դնում է այն փաստի վրա, որ Սինգապուրում արդիականացման գործընթացը անբաժանելիորեն կապված է օտարերկրյա ներդրումների ոլորտում լիբերալ քաղաքականության հետ՝ ուղղված համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելուն: Պրոֆեսոր Ջոն Կուանը 30 տարի շարունակ գրում է ասիական երկրներում պետական կառավարման մասին: Ջոն Կուանը վերլուծել է Սինգապուրի վարչական բարեփոխումները և պետական քաղաքականությունը իր «Պետական կառավարումը սինգապուրյան ձևով» և «Վարչական բարեփոխում և զարգացման կառավարում Սինգապուրում: Սինգապուրի բնակարանաշինության հիմնադրամի և Զարգացման խորհրդի համեմատական ուսումնասիրություն»[3] աշխատություններում: Իսկ Մ. Շամսուլ Հաքեի «Պետական վարչարարությունը և կառավարումը Սինգապուրում»[4] աշխատությունը նվիրված է երկրի պետական կառուցվածքին, քաղաքական համակարգին և վարչաքաղաքական հարաբերություններին, ինչպես նաև վերջին շրջանում իրականացվող բարեփոխումների, շուկայական քաղաքականության, կառուցվածքային և ֆունկցիոնալ փոփոխությունների գերազանցապես միկրո մակարդակի վերլուծությանը:

Բացի հոդվածներից, գրքերից և աշխատություններից, կան նաև հուշեր և հարցազրույցներ Սինգապուրի նախկին վարչապետ Լի Կուան Յուից (1923-2015), մասնավորապես՝ այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են «Սինգապուրյան հրաշքը[5]», «Երրորդ աշխարհից դեպի առաջին. Սինգապուրյան պատմությունը 1965-2000 թթ.[6]», ինչպես նաև Լի Կուան Յուի հարցազրույցները և զրույցները Թոմ Փլեյթի հետ, երբ դրանք միավորվել են մեկ աշխատության մեջ՝ «Քաղաքացի Սինգապուր կամ ինչպես են ազգեր ստեղծում[7]»: Լի Կուան Յուն իր գրքերում ուսումնասիրում է նախկինում չհրապարակված կառավարական և պաշտոնական փաստաթղթերը, ինչպես նաև խոսում է այն ջանքերի մասին, որոնք

---

[1] Bhaskaran Manu. Challenges facing the Singapore economy [Электронныйресурс] // Southeast Asian Affairs, 2014, p. 290-302. URL: https://www.jstor.org/stable/44112079 - доступ свободный. Дата обращения: 01.11.2018.

[2] Nizamuddin A. M., Multinational corporations and economic development: the lessons of Singapore. International Social Science Review, 2007, p. 149-162.

[3] Quah J. S. T., Administrative Reform and Development Administration in Singapore: A Comparative Study of the Singapore Improvement Trust and the Housing and Development Board. Florida State University, 1996, p. 160.

[4] Haque M.S., Public Administration and Public Governance in Singapore.DaeyoungMoonhwasa Publishing Company, 2009, p. 246-271.

[5] Ли К. Ю., Сингапурское чудо. АСТ. М., 2015, с. 210.

[6] Ли К. Ю., Сингапурская история. Из третьего мира в первый / МГИМО. МИД России; 2005, с. 420.

[7] Плейт Т., Беседы с Ли Куан Ю. Гражданин Сингапур, или как создают нации. ЗАО «Олимп–Бизнес», 2014, с. 232.

գործադրվել են Հարավարևելյան Ասիայի կղզի-պետության գոյատևման համար, բացատրում է, թե ինչպես վարչակազմը կարողացավ վերջ տալ երիտասարդ պետության անվտանգությանը կոմունիստական սպառնալիքին և սկսեց պետության կառուցման դժվարին գործընթացը, ինչպես նաև ներկայացնում է քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ իր կոպիտ մոտեցումն ու մարդու իրավունքների և ժողովրդավարության վերաբերյալ իր ոչ ավանդական հայացքները:

Հետազոտության տեսամեթոդական հիմքերը

Սինգապուրի տնտեսական հրաշքի վերլուծության հիմնական նպատակն է պարզել՝ արդյո՞ք իրականացված բարեփոխումները կամ դրանց որոշ տարրեր կարող են արդյունավետորեն տեղայնացվել Հայաստանի Հանրապետությունում: Այդ պատճառով նախ անհրաժեշտ է պարզել այն նմանություններն ու տարբերությունները, որոնք առկա են Սինգապուրի և Հայաստանի միջև: Վերլուծությունը կիրականացնենք երկու ուղղությամբ. նախ կքննարկենք այն նմանություններն ու տարբերությունները, որոնք առկա էին նորանկախ Հայաստանում և նորանկախ Սինգապուրի միջև՝ պարզելու համար, թե արդյո՞ք ՀՀ-ն նախորդ 30 տարիների ընթացքում կարող էր հասնել նմանատիպ հաջողությունների, և որոնք էին այն բացթողումները, որոնց արդյունքում ՀՀ-ն չկարողացավ ապահովել տնտեսական հրաշք անկախության գրեթե 30 տարիների ընթացքում: Այնուհետև կվերլուծենք ներկայիս Հայաստանի և նորանկախ Սինգապուրի նմանություններն ու տարբերությունները՝ հասկանալու համար՝ ինչ է անհրաժեշտ իրականացնել այս պահից ի վեր, որպեսզի Հայաստանը առաջիկա 30-50 տարիների ընթացքում ունենա էական թռիչքաձև զարգացում: Նշյալ նպատակներին հասնելու համար կկիրառենք համեմատական վերլուծության, ինչպես նաև քննական վերլուծության մեթոդը: Վերլուծության համար վիճակագրական տվյալները վերցված են Համաշխարհային բանկի[1], ինչպես նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի[2] տվյալների բազայից:

Հիմնական վերլուծություն

Դիտարկենք նորանկախ Սինգապուրի և նորանկախ Հայաստանի նմանություններն ու տարբերությունները:

Մալայզիայից առանձնանալուց հետո Սինգապուրը հայտնվեց բարդ կացության մեջ. չուներ բանակ, զրկվել էր արտաքին տնտեսական կապերի գերակշիռ մասից, գտնվում էր հակամարտող Ինդոնեզիայի և Մալայզիայի միջև, ուստիև ակամայից մշտապես գտնվում էր հակամարտության վտանգի տակ: Անկախություն ձեռք բերելու ժամանակաշրջանում Սինգապուրում շատ բարձր մակարդակի էր հասնում կոռուպցիան: Գրեթե նույն իրավիճակում էր գտնվում Հայաստանը 1990-ականներին. ԽՍՀՄ փլուզումից հետո ՀՀ-ն կորցրել էր

[1] https:// worldbank.org/

[2] https://armstat.am

արտաքին տնտեսական բոլոր կապերը, գտնվում էր պատերազմական իրավիճակում, հարևան 4 երկրներից 2-ի հետ սահմանները փակ էին, ինչպես նաև Սպիտակի երկրաշարժի արդյունքում կորցրել էր տնտեսական հզորությունների գրեթե 40%-ը: Սրանք երկու երկրների մեկնարկային պայմանների նմանություններն էին: Ինչպես Սինգապուրի, այնպես էլ Հայաստանի պարագայում զարգացման սկզբնական շրջանում պետք էր հիմնվել էժան աշխատուժի առկայության վրա: Դիտարկելով մի շարք երկրների թռիչքաձև աճի մոդելները՝ կարող ենք տեսնել, որ դրանք բոլորը սկզբնական ժամանակահատվածում հիմնվել են էժան աշխատուժի միջոցով զարգացման վրա: Այսպես՝ Ճապոնիան, օգտագործելով էժան աշխատուժի առավելությունը, թռիչքաձև աճ գրանցեց այնքան ժամանակ, մինչև որ երկրի տնտեսության որակապես զարգանալու արդյունքում թանկացավ նաև աշխատուժը: Այնուհետև Ճապոնիան թևակոխեց կայուն տնտեսական աճի փուլը, իսկ էժան աշխատուժի մոդելով աճի սկզբունքը որդեգրեցին Հարավային Կորեան, Թայվանը, Սինգապուրը, Հոնկոնգը և այլն, որոնք ևս հասնելով զարգացման որոշակի փուլի՝ կայուն տնտեսական աճը շարունակեցին թանկ աշխատուժի պարագայում: Ներկայումս էժան աշխատուժի մոդելով արագ աճ արձանագրում է Չինաստանը: Կլինի՞ Հայաստանը այս երկրների շարքում՝ կախված է ինչպես պետական քաղաքականությունից, այնպես էլ յուրաքանչյուրիցս:

Այդուհանդերձ, երկու երկրների մեկնարկային պայմաններում առկա էին նաև տարբերություններ: Մասնավորապես՝ Սինգապուրը բնական ռեսուրսներ չուներ, նույնիսկ խմելու ջուրը բերվում էր Մալայզիայից: Հայաստանը ևս հարուստ չէ բնական ռեսուրսներով, սակայն ունի քաղցրահամ խմելու ջրի, ինչպես նաև մի շարք հանքանյութերի պաշարներ: Սինգապուրը, ի տարբերություն Հայաստանի, գրեթե չուներ գյուղատնտեսության համար պիտանի հողեր. նրա հողային տարածքը մշտապես արհեստականորեն մեծացվել է՝ շնորհիվ հողի մելիորացման աշխատանքների: Տարբեր են նաև կլիմայական պայմանները. Սինգապուրը գտնվում է հասարակածային գոտում, ուստի տարվա ամենացուրտ և ամենատաք ամիսների ջերմաստիճանները այստեղ տարբերվում են 6-7 աստիճանով, եղանակը հիմնականում խոնավ է: Հայաստանին բնորոշ է չորային եղանակը՝ հստակ արտահայտված տարվա 4 եղանակներով: Բացի այդ, Սինգապուրի տարածքը անհամեմատ փոքր էր Հայաստանի տարածքից: Տարբեր էին նաև երկու հանրապետությունների կառավարման մոդելները. Հայաստանը նախագահական հանրապետություն էր, իսկ Սինգապուրը՝ խորհրդարանական: Սինգապուրի կարևոր առանձնահատկությունն այն էր, որ երկիրը սեփական ժողովուրդ չուներ: Բնակչության շուրջ երեք քառորդը չինացիներ էին, 15%-ը՝ մալայացիներ, ակտիվ փոքրամասնությունը՝ հնդիկներ: Այդ խմբերի միջև հարաբերությունները միշտ չէին հարթ: Փոխարենը՝ ՀՀ հիմնական բնակչությունը տեղաբնակ հայեր են: Տարբեր էր նաև Հայաստանի և Սինգապուրի բնակչության մենթալիտետը, ինչպես նաև կառավարման եղանակը. Սինգապուրը, ի տարբերություն Հայաստանի, սկզբնական շրջանում առհասարակ զերծ մնաց

ժողովրդավարության ներդրումից, կառավարության որոշումները քննադատելու համար ընդդիմության շատ ներկայացուցիչներ բանտարկվեցին, ամբողջապես վերահսկվում էր լրատվամիջոցների գործունեությունը: Սա, իհարկե, դժգոհություններ էր առաջացնում հասարակության շրջանում, այդուհանդերձ մարդիկ սիրում էին վարչապետին և վստահում էին նրա ազնիվ մղումներին: Հայաստանում, թերևս, փորձ էր արվում առավել ժողովրդավարական մեթոդների կիրառմամբ պետական քաղաքականություն իրականացնելու, այդուհանդերձ հասարակությունը դժգոհ էր, և, որպես կանոն, դժգոհություն արտահայտող հատվածն ամենևին էլ սիրով լցված չէր իշխանության հանդեպ: Մեկ այլ էական տարբերություն ևս. ի տարբերություն Հայաստանի՝ Սինգապուրի բնակչության գերակշիռ մեծամասնությունն աղքատ էր:

Այս ծանր պայմաններից դուրս գալու նպատակով Սինգապուրի առաջնորդները որդեգրեցին տնտեսական և քաղաքական երկարաժամկետ ռազմավարություն՝ մեծ ուշադրություն դարձնելով կրթության, անվտանգության, առողջապահության ոլորտների և ենթակառուցվածքների զարգացման վրա: Ինչպես Սինգապուրի, այնպես էլ Հայաստանի պարագայում ակնհայտ էր, որ հնարավոր չի լինի առաջանցիկ աճ ապահովել միայն տեղական կապիտալի ներդրման արդյունքում, և երկու երկրներն էլ որդեգրեցին ՕՈՒՆ ներգրավման քաղաքականություն: Այդուհանդերձ, անկախացումից գրեթե 30 տարի անց Հայաստանը դեռևս աչքի չի ընկնում ՕՈՒՆ զուտ ներհոսքի մեծ ծավալներով (0,3 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2018 թ., Սինգապուրն այս ցուցանիշին հասել էր անկախացումից 10 տարի անց), մինչդեռ Սինգապուրում անկախացումից 30 տարի անց ՕՈՒՆ ներհոսքը կազմում էր 11.5 մլրդ ԱՄՆ դոլար (1995 թ.): Թերևս այստեղ արդարացված չէ այն միֆը, թե փոքր ներքին սպառման շուկա ունեցող երկրները չեն կարող մեծածավալ ՕՈՒՆ ներհոսքի համար գրավիչ լինել, քանզի 1965 թ. Սինգապուրն ուներ 2 միլիոնից էլ քիչ բնակչություն:

Դիտարկենք մի քանի ցուցանիշների փոփոխությունը անկախացման առաջին 28 տարիների համար (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. *ՀՆԱ-ն և 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն Հայաստանում և Սինգապուրում՝ արտահայտված ԱՄՆ դոլարով*

Ինչպես նկատելի է, թե՛ ՀՆԱ-ի, թե՛ 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը մեկնարկային տարում առավել բարձր էր Հայաստանում, այդուհանդերձ վարվող պետական քաղաքականության արդյունքում հետագա զարգացումները երկու երկրներում խիստ անհամաչափ էին: Համանման պատկեր է առկա նաև արտահանման և ՕՈՒՆ զուտ ներհոսքի պարագայում (տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2. *Արտահանման և ՕՈՒՆ զուտ ներհոսքի դինամիկան անկախության 28 տարիներին Հայաստանում և Սինգապուրում՝ արտահայտված ԱՄՆ դոլարով*

Ակնհայտ է, որ նշյալ 2 ցուցանիշների մասով ևս Սինգապուրը, ի տարբերություն Հայաստանի, արձանագրել է թռիչքաձև աճ:

Վերլուծենք այն գործիքակազմը, որի շնորհիվ Սինգապուրի կառավարությանը հաջողվեց արձանագրել տնտեսության թռիչքաձև աճ: Տնտեսական գործիքակազմում պայմանականորեն կարելի է տարանջատել իրականացված քայլերը 3 հիմնական ուղղություններում՝ ընդհանուր տնտեսական քաղաքականություն, ներդրումային և հարկային քաղաքականություն, դրամավարկային և արժութային քաղաքականություն: Ընդհանուր տնտեսական, ինչպես և մյուս բոլոր քաղաքականություններն իրականացվել են մի քանի փուլով: Նախնական փուլում ընդհանուր տնտեսական քաղաքականությունը միտված էր առևտրի ազատականացմանն ու արտահանմանն ուղղված արդյունաբերության զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելուն: Առաջին 5 տարիներին այս նպատակով ամենահեռանկարային ոլորտ էր համարվել էլեկտրոնիկայի արտադրությունը: Դրան հաջորդեց գիտատար և կապիտալատար արտադրության զարգացմանը նպաստող պայմանների ստեղծումը (համակարգիչների արտադրություն, ճշգրիտ մեքենաշինություն, նավթավերամշակում), ստեղծվեց վենչուրային հիմնադրամ, որի հիմնական նպատակը նորարարական նախագծերի ֆինանսավորումն էր, ինչպես նաև գիտահետազոտական կենտրոնների և արդյունաբերության սերտ համագործակցության խթանումը: Այս շրջանում սկիզբ դրվեց Սինգապուրի՝ որպես միջազգային ֆինանսական կենտրոնի զարգացմանը: Բարեփոխումների հաջորդ փուլն ուղղված էր արտադրության և արտահանման բազմազանեցմանը՝ հօգուտ բարձր ավելացված արժեք ստեղծող արտադրությունների՝ բարձր տեխնոլոգիաների, բիոտեխնոլոգիաների, քիմիական ապրանքների, ինչպես նաև ֆինանսական և բանկային ծառայություն-

ների ստեղծում և արտահանում: Այս ժամանակահատվածում ստեղծվեց նաև Սինգապուրի ֆոնդային բորսան: Սրանք էին այն հիմնաքարերը, որոնց շնորհիվ Սինգապուր ներհոսեց բազմաթիվ վերազգային կորպորացիաների կապիտալը: Բարեփոխումների հաջորդ փուլում զարկ է տրվում ծառայությունների արտադրության և արտահանման բազմազանեցմանը. բանկային և ֆինանսական ծառայությունների կողքին իրենց ուրույն տեղն են գրավում բժշկական, կրթական, տրանսպորտային, լոգիստիկ և այլ ծառայությունների արտադրությունն ու արտահանումը, իսկ արդյունաբերությունն աստիճանաբար անցում է կատարում նորարարական մոդելների կիրառմանը:

Ներդրումային և հարկային քաղաքականությունը բոլոր փուլերում համահունչ էր ընդհանուր տնտեսական քաղաքականությանը, ուստիև իրականացվում էր ՕՈՒՆ ներգրավման ակտիվ քաղաքականություն, իսկ բարեփոխումների յուրաքանչյուր փուլում հարկային արտոնություններ էին ստանում այն ոլորտում գործող ձեռնարկությունները, որը տվյալ ժամանակահատվածում հեռանկարային էր համարվել կառավարության կողմից: Սկզբնական փուլում այդպիսիք էին արտահանման ուղղվածության արտադրությունները, ապա՝ գիտատար և կապիտալատար ոլորտները, օֆշորային բանկային ծառայությունները: 1980-ականներից հարկային քաղաքականությունն առանձնացավ ևս մեկ կարևոր միտումով. տեղի ունեցավ եկամտահարկի և շահութահարկի աստիճանական նվազեցում: Դրամավարկային և արժութային քաղաքականության բարեփոխումները ներառում են հետևյալ միջոցառումները. դրամավարկային կարգավորման ուղղակի մեթոդներից աստիճանաբար անցում կատարվեց շուկայական կարգավորման եղանակի, ստեղծվեց Սինգապուրի ազգային արժույթը՝ սինգապուրյան դոլարը, որը ակտիվորեն կապակցվեց այլ միջազգային արժույթների հետ՝ լողացող փոխանակային կուրսի կիրառմամբ: Բարեփոխումների հաջորդ փուլում Սինգապուրի կառավարությունն իսպառ հրաժարվեց տոկոսադրույքի կարգավորումից՝ թողնելով այն առաջարկ-պահանջարկ սկզբունքով ինքնակարգավորման վրա, և անցում կատարեց արժույթի փոխարժեքի կարգավորմանը՝ որդեգրելով լողացող կարգավորվող փոխարժեքի քաղաքականություն: Ժամանակ առ ժամանակ կառավարությունն իրականացնում էր նաև գնաճի նպատակադրման և անհրաժեշտության դեպքում՝ զսպման քաղաքականություն:

Ներդրումների ներգրավման ակտիվ քաղաքականության հաջողության հիմնական պատճառներից կարող ենք նշել հետևյալները. հավասար պայմանների ստեղծումը ներքին և օտարերկրյա ներդրողների համար, սեփականության սահմանափակումների բացակայությունը, հարկային արտոնությունները, կառավարության կայուն քաղաքականությունը՝ ուղղված օտարերկրյա ներդրողներին: Ներդրումների ներգրավման քաղաքականության հաջողության գրավականներից մեկն էլ այն էր, որ Սինգապուրի կառավարությունը գիտակցեց ենթակառուցվածքների զարգացման բարձր աստիճանի անհրաժեշտությունը: Ներկայումս Գլոբալ մրցունակության համաթվի բոլոր ենթասյուներով

Սինգապուրն աշխարհում գրավում է առաջատար դիրքեր՝ շնորհիվ գերզարգացած ենթակառուցվածքների: Բացի այդ, ներդրումների ներգրավման կարևոր նախադրյալներից մեկը հանդիսացավ 1961 թ. Սինգապուրի տնտեսական զարգացման գործակալության ստեղծումը, որը հանդես էր գալիս որպես միասնական պատուհան օտարերկրյա ներդրողներ ներգրավելու հարցում: Ներդրողների համար գրավիչ էին նաև Սինգապուրի հարկերի ցածր տոկոսադրույքները, ինչպես նաև հարկատեսակների պարզությունը: Առկա են հարկային արտոնություններ հատկապես բարձր տեխնոլոգիաների ոլորտում հիմնադրվող օտարերկրյա կազմակերպությունների համար, որոնք կարող են ընդհուպ մինչև 10 տարի ազատվել հարկերից: Հարկերից ազատված է նաև շահաբաժիններից ստացված շահույթի հայրենադարձումը: Օտարերկրյա և նաև տեղական ներդրումների ներգրավման համար կառավարությունը որոշակի ժամանակահատվածով ազատում էր արտադրական գործունեություն իրականացնող փոքր ձեռնարկություններին:

Իսկ ահա ֆինանսական ոլորտի ակտիվ զարգացման նպատակը ոչ միայն Սինգապուրի արտադրության և արտահանման խթանումն էր, այլև տնտեսության մասնագիտացված ուղղության ստեղծումը. կարճ ժամանակահատվածում Սինգապուրը, օգտագործելով ժամային գոտու իր առավելությունը, դարձավ համաշխարհային ֆինանսական կենտրոններից մեկը: Ներկայումս Սինգապուրի ֆինանսական ոլորտի գերակշիռ մասը բաժին է ընկնում բանկային գործարքներին, դրան հաջորդում են արժութայինը, արտաբորսայական ֆինանսական ածանցյալների առքուվաճառքը, ապահովագրական գործարքները և բորսային առևտուրը:

Բարեփոխումները տարածվում էին ոչ միայն տնտեսական, այլև մյուս բոլոր ոլորտների վրա: Արդյունքում իրականացվեց լայնածավալ հակակոռուպցիոն քաղաքականություն, որի շրջանակներում բանտարկվեցին անգամ վարչապետի մտերիմները: Ակտիվ սոցիալական քաղաքականության արդյունքում սինգապուրի բնակչության գրեթե 90%-ն ապահովվեց սեփական բնակարաններով: Կրթական բարեփոխումների արդյունքում էապես մեծացավ հասարակության կրթական մակարդակը, որի շարունակականությունը հանգեցրեց բարձր որակավորում ունեցող կադրերի մեծ քանակի, ինչը ևս օտարերկրյա ներդրողների ներգրավման հիմնական գործիքներից է: Ներդրվեց առողջապահության ապահովագրության համակարգ, որի զուգակցումը առողջ ապրելակերպի պետական քարոզարշավների հետ նպաստեց, որ Սինգապուրի բնակչությունը արդեն մեր օրերում համարվի աշխարհի ամենաառողջներից մեկը:

Ինչպես նկատել ենք, Սինգապուրի հաջողության հիմնասյուներից է նաև կոռուպցիայի դեմ լայնածավալ պայքարը: Այս քաղաքականության համատեքստում կտրուկ բարձրացվեցին դատավորների աշխատավարձերը, դատական պաշտոններում ներգրավվեցին «լավագույն մասնավոր փաստաբանները»: Սինգապուրյան դատավորի աշխատավարձը տարեկան հասավ մի քանի հարյուր հազար դոլարի (իսկ 1990-ական թվականներին՝ արդեն ավելի քան 1 մլն դո-

լարի): Պատասխանատու պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների աշխատավարձերը բարձրացվեցին մասնավոր ձեռնարկությունների թոփ-մենեջերներին բնորոշ մակարդակի, ինչը թույլ տվեց այս պաշտոններում ընդգրկել լավագույն փորձառու մասնագետներին:

Հարկ է նշել, որ վերոնշյալ սկզբունքները միայն ընդհանրական պատկերացում են տալիս Սինգապուրի տնտեսական հաջողությունը ձևավորած գործիքների մասին: Իրականում հաջողության բացահայտման համար շատ կարևոր է յուրաքանչյուր քաղաքականության շրջանակում առկա իրավիճակի, դրա համար կիրառվող գործիքակազմի և դրանցից յուրաքանչյուրի նրբությունների հաշվառումը: Այս քայլերի իրականացումը մեզ հնարավորություն կտա ներկայացնել Սինգապուրի հաջողության բանալիների արդյունավետ տեղայնացման հնարավորությունը Հայաստանում:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ներկայիս Հայաստանն ու 1960-ականների Սինգապուրն էապես են տարբերվում իրարից թե՛ տնտեսությունների զարգացման աստիճանով, թե՛ արտաքին տնտեսական և քաղաքական միջավայրի տեսանկյունից: Մասնավորապես՝ տեխնոլոգիաների հնացման ցիկլը 1960-ականներին 15-20 տարի էր՝ ի տարբերություն ներկայիս 2-3 տարվա: Բայց և այնպես, արտաքին գործոնների նմանությունը Սինգապուրի և ներկայիս Հայաստանի համար ևս պահպանվում է. այժմ ևս առկա է հակամարտությունների վտանգը, ինչպես նաև ոչ բարիդրացիական հարաբերությունները հարևան Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Այժմ ավելացել է մեկ նմանություն ևս. կառավարման ձևը ներկայիս Հայաստանում ևս խորհրդարանական հանրապետությունն է, ինչպես նորանկախ Սինգապուրում էր:

Եվ քանի որ ներկայիս Հայաստանում Սինգապուրի զարգացման մոդելը այլևս արդյունավետորեն չի աշխատի, այդ պատճառով մենք առանձնացրել ենք Սինգապուրի հաջողության այն գործիքները, որոնք ներկայումս կարող են արդյունավետորեն տեղայնացվել ՀՀ տնտեսությունում: Այս հիմքով մենք առանձնացրել ենք այն հնարավոր ծուղակները, որոնք կարող են շեղել ՀՀ տնտեսությունը առաջանցիկ աճի ճշմարիտ ուղուց:

ՀՀ ներկայիս քաղաքականությունը թերևս հարում է Սինգապուրում իրականացված կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական սկզբունքներին, սակայն տվյալ պարագայում մենք կարող ենք բախվել ձախողման միաժամանակ 2 ծուղակների՝ ***ժողովրդավարության ծուղակի և մեդալի երկու կողմերի անհամադրելիության ծուղակի***: Ժողովրդավարության ծուղակի իմաստն այն է, որ պետական պաշտոնյաների աշխատավարձերի բարձրացումը մեզանում շատ հաճախ հանդիպում է բնակչության դիմադրությանն ու դժգոհությանը, և նման դիմադրությանը տեղի տալու պարագայում կարելի է կորցնել փորձառու կադրերի պետական կարևորագույն պաշտոններում ներառելու հնարավորությունը: Այդուհանդերձ, այս ծուղակից խուսափելու պարագայում անհրաժեշտ է մեծ զգուշավորություն՝ մեդալի երկու կողմերի անհամադրելիության ծուղակում չհայտնվելու համար: Ներկայիս ՀՀ տնտեսությունում դեռևս պատասխանատու

պաշտոններում գրեթե ներառված չեն բազմամյա փորձառությամբ լավագույն մասնագետներ: Ներկայիս պետական կառավարման գործընթացը կձախողվի մեդալի երկու կողմերի անհամադրելիության ցանկացած իրավիճակում՝ և՛ այն դեպքում, երբ պատասխանատու պաշտոններում ներառված լինեն լավագույն մասնագետներ, որոնց աշխատավարձը չի համապատասխանի մասնավոր ոլորտում նրանց ստացած այլընտրանքին, և՛ այն դեպքում, երբ պատասխանատու պաշտոնների համար նախատեսվի մասնավորին համարժեք աշխատավարձ, սակայն այդ պաշտոնները վստահվեն ոչ լավագույն մասնագետների:

Սինգապուրի իշխանության տնտեսական քաղաքականության հաջողության գործիքներից մեկն էլ այն էր, որ կառավարությունը սկսեց հետևել երկրի զարգացման ռազմավարությանը մեթոդական ճշգրտությամբ: Նա իր դինամիկ քաղաքականությամբ, հեռատեսությամբ, հաստատակամությամբ, ծանր աշխատանքով և ազնվությամբ Սինգապուրը «մեկ սերնդի» ընթացքում երրորդ կարգի երկրից դարձրեց աշխարհի առաջատար երկրներից մեկը: Կայուն զարգացման քաղաքականությունը շարունակվում է այսօր ևս: Մասնավորապես՝ 2018 թ. Սինգապուրի կառավարությունը մշակեց կայուն զարգացման ծրագիր, որում ներառված են 2030 թ. 17 թիրախներ՝ աղքատության և սովի վերացում, առողջություն և բարեկեցություն, որակյալ կրթություն, սեռերի հավասարություն, մաքուր ջրի և ջրահեռացման հասանելիություն բոլորի համար, մատչելի, վերականգնվող և կայուն էներգետիկ հասանելիություն բոլորի համար, պատշաճ աշխատանքի և ներառական տնտեսական աճի ապահովում, ճկուն ենթակառուցվածքների և նորարարական տնտեսության ապահովում, եկամուտների անհավասարության կրճատում, բոլոր տարածաշրջանների կայունության, ճկունության և ներառականության ապահովում, կայուն սպառման և արտադրության ապահովում, կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների մեղմացման հրատապ միջոցառումների իրականացում, ջրային պաշարների պահպանողական և արդյունավետ օգտագործում, արդյունավետ հողօգտագործում, արդարադատության և այլ ինստիտուտների արդյունավետության ապահովում հասարակության բոլոր շերտերի համար, կայուն աճի համար հնարավոր բոլոր տեսակի համագործակցության օգտագործում: Նշված բոլոր թիրախների համար սահմանված են հստակ չափելի ցուցանիշներ, որոնք հնարավորություն կտան առաջիկա 10 տարիներին անշեղորեն հասնել թիրախավորված նպատակներին:

Ի տարբերություն՝ ՀՀ-ում տարիներ շարունակ տիրում էր տնտեսական անկայունության մթնոլորտը՝ հարկադրույքների և հարկատեսակների պարբերաբար փոփոխություններ, պետական ռազմավարական և ոչ ռազմավարական ծրագրերի մշակում, որոնցում թիրախավորված ցուցանիշները, որպես կանոն, երբևէ իրականություն չէին դառնում, և դրանց բազմաթիվ դրույթներ երբեմն հակասում էին միմյանց: Այս ծուղակը կարելի է անվանել ***անկայունության և անորոշության ծուղակ***: Սա թերևս առկա է նաև այսօր և որոշակի չափով օբյեկտիվ հիմքեր ունի առ այն, որ հասկանալի է՝ առկա հեղափոխության պայմաններում անհրաժեշտ է փոփոխել տնտեսական գործունեության պայման-

ները՝ արդյունավետ զարգացման նպատակով: Այդուհանդերձ, երևույթի երկարաձգման ու շարունակականության պարագայում տնտեսությունը կարող է հայտնվել խոր անդունդում: Այս վտանգը մեր կողմից առանձնացվում է հատկապես այն պատճառով, որ դրա նախկին ծիլերը ներկայումս երևում են մշակվող մի շարք պետական ռազմավարական ծրագրերի մեջ: Մասնավորապես՝ ՀՀ գործարար միջավայրի բարելավման 2019-2024 թվականների (բաժին 5.11-5.13), Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների (բոլոր բաժինները) և այլ ռազմավարություններ մեծամասամբ չեն ներառում որևէ հստակություն, դրանցում ներառված են վերացական իրականացվելիք միջոցառումներ, որոնց ո՛չ հասցեատերն է հայտնի, ո՛չ ժամկետը, ո՛չ էլ չափելիության թիրախային ցուցանիշ է ներկայացված, ուստիև նախ դրանց իրականացումն անհնար է վերահսկել, և բացի այդ՝ որևէ տնտեսվարող սուբյեկտ չի կարող այդ ռազմավարություններից հասկանալ, օրինակ, մոտակա 3–5 տարվա կտրվածքով ի՞նչ փոփոխություններ կարող է ակնկալել: Տվյալ պարագայում ՀՀ տնտեսությանը սպառնում է մեկ այլ ծուղակ ևս՝ իրականությունը ոչ ճշգրիտ ներկայացնելու կամ այլ կերպ ասած՝ ***ջայլամի ծուղակը***: Այսպես՝ երբ մշակվող ռազմավարություններում մենք ներկայացնում ենք ոչ ճշգրիտ տվյալներ և մեր առջև դնում ենք ոչ ճշգրիտ նպատակներ, արդյունքում ռազմավարության իրականացման ժամկետի ավարտին անգամ ամենաարդյունավետ իրականացման պարագայում կանգնելու ենք կոտրած տաշտակի առջև. չի իրագործվելու ռազմավարության հիմնական առաքելությունը, իսկ դրա համար ծախսված գումարն ու ժամանակն այլևս անդառնալի կորած են լինելու: Մասնավորապես՝ երբ ՀՀ գործարար միջավայրի բարելավման 2019-2024 թթ. ռազմավարությունում թիրախավորվում է նախատեսվող միջոցառումների արդյունքում լինել գործարար և ներդրումային միջավայրի գրավչությամբ աշխարհի առաջին 15 երկրների շարքում, այնուհետև ռազմավարության հետագա շարադրանքում այս թիրախը նույնականացվում է Doing Business ինդեքսով 15-րդ տեղը գրավելու հետ, սա նշանակում է, որ ռազմավարության իրագործման ժամկետի ավարտին ՀՀ-ն, միևնույնն է, չի լինելու գրավիչ ներդրումային և գործարար միջավայր ունեցող երկիր: Որպես ասվածի ապացույց նշենք, որ 2019 թ. Doing Business-ի տվյալներով Լիտվան զբաղեցնում է 14-րդ հորիզոնականը, Ադրբեջանը՝ 25-ը, իսկ, օրինակ, Ճապոնիան՝ 39-ը, Բելգիան՝ 45-ը, Լյուքսեմբուրգը՝ 66-ը: Արդյո՞ք սա նշանակում է, որ վերջին 3 երկրները ներդրումային ավելի քիչ գրավչություն ունեն, քան Ադրբեջանն ու Լիտվան: Ընդ որում՝ նույն երկրում ներդրումների հոսքը մեծացել է այն պարագայում, երբ նրա դիրքերը Doing Business վարկանիշային աղյուսակում վատացել են: Ուստիև ստիպված ենք փաստել, որ Doing Business վարկանիշային աղյուսակում բարձր դիրք գրավելն ու դիրքի բարելավումը չեն կարող հանդիսանալ ներդրումային գրավչության վրա ազդող էական գործոն, հատկապես որ տվյալ ցուցանիշի շրջանակում դիտարկվում են հիմնականում ընթացակարգային խնդիրներ, այլ ոչ հիմնարար բարեփոխումներ: Առավել ևս ռազմավարությունում ներառված թիրախային

ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը սխալ է: Թիրախները և դրանց չափման մեթոդաբանությունը՝ 4.1 բաժնում նշվում է. «Սույն ռազմավարության շրջանակը միայն մասամբ է ներառված Գլոբալ մրցունակության ինդեքսի և Տնտեսական ազատության ինդեքսի հաշվարկման մեթոդաբանության հիմքում: Մասնավորապես, գլոբալ մրցունակության ինդեքսի հաշվարկման համակարգում սույն ռազմավարության շրջանակից ներառված գործոնների ընդհանուր կշիռը չի գերազանցում ինդեքսի հաշվարկման վրա ընդհանուր ազդեցության 15%-ը»: Այս պնդումն անհասկանալի է, քանի որ գլոբալ մրցունակության ինդեքսի հաշվարկում ներառված 116 ցուցանիշներից 86-ը էականորեն ազդում են գործարար միջավայրի զարգացման վրա, դրանց ազդեցությունը ընդհանուր ինդեքսի հաշվարկի վրա կազմում է ավելի քան 80%: Ուստիև, եթե տվյալ ռազմավարության շրջանակում ներառված են գլոբալ մրցունակության ինդեքսի հաշվարկման վրա ընդհանուր 15% ազդեցություն ունեցող գործոններ, դա առնվազն նշանակում է, որ գործարար միջավայրի զարգացման վրա ազդող շատ մեծ թվով գործոններ չեն քննարկվել տվյալ ռազմավարության շրջանակում: Ռազմավարության Թիրախները՝ 4.2 բաժնում փորձ է արվել թիրախավորել Doing Business-ի ենթասյուներում ՀՀ դիրքն այնպես, որ վերջնական արդյունքում ՀՀ դիրքը Doing Business վարկանիշային աղյուսակում լինի առնվազն 15-րդը: Ընդ որում՝ Ռազմավարության Հավելված 1-ում վերլուծվում են 15-րդ հորիզոնականում հայտնված երկրների միավորները մի քանի տարվա համար, և նշվում է. «Բոլոր դեպքերում տարեցտարի աճում է տվյալ տեղում հայտնվելու համար անհրաժեշտ միավորի թիվը»: Այս ամենով հանդերձ՝ ՀՀ-ի համար ընտրված թիրախները ոչ մի պարագայում հնարավորություն չեն տա հայտնվել առնվազն 15-րդ հորիզոնականում: Քննարկենք դրանցից մեկը: Շինարարական թույլտվությունների համար թիրախային միավոր է սահմանվել 80.83: 2019 թ. զեկույցում այս ցուցանիշի մասով 15-րդ հորիզոնականում գտնվում է Հյուսիսային Մակեդոնիան, որի միավորը 83.5 է: Ուստի հարց է առաջանում. ինչպե՞ս կարող է տարիներ անց ավելի ցածր միավոր հավաքած երկիրը զբաղեցնել առնվազն 15-րդ հորիզոնականը: Իսկ ռազմավարության SWOT վերլուծություն՝ 7-րդ բաժնում ներկայացված է չափազանց մակերեսային վերլուծություն, որը չի ներառում խնդիրների մանրակրկիտ ուսումնասիրություն: Ընդ որում՝ SWOT վերլուծությունը պետք է իրականացվեր ոչ թե ռազմավարության վերջում, այլ սկզբում, և առհասարակ իմաստ չունի ռազմավարության մեջ այն ներառել: Նմանատիպ իրավիճակում է նաև Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը, որում բազմաթիվ միջոցառումներ նախատեսվում են ՓՄՁ-ի համար՝ առանց հստակ տարանջատելու՝ տվյալ միջոցառումն անհրաժեշտ է փո՞քր, գերփո՞քր, թե՞ միջին ձեռնարկության համար: Այս հանգամանքները չհստակեցնելու պարագայում մենք մեծ հավանականությամբ պետական ֆինանսները կուղղենք սխալ հասցեականությամբ: Ջայլամի ծուղակը թերևս ամենակործանարարներից է տնտեսության համար, քանզի այս ծուղակում հայտնվելու պարագայում մենք անար-

դյունավետ վատնում ենք մեր ֆինանսական և ժամանակային ռեսուրսները՝ թիրախավորելով զարգացման ոչ ճիշտ ուղի:

Տնտեսական քաղաքականության նման գործիքակազմի շրջանակում կարող ենք նշել Սինգապուրի զարգացման գործակալության և Զարգացման հայկական գործակալության ստեղծումը: Այդուհանդերձ, Զարգացման Սինգապուրյան գործակալության ստեղծումը մեծապես նպաստեց ՕՈՒՆ ներգրավմանը, Զարգացման հայկական գործակալության ստեղծումը՝ ոչ: Զարգացման հայկական գործակալության ձախողման պատճառները հետևյալն են. այն հիմնականում զբաղված էր վերլուծությունների իրականացմամբ, ուներ նույն գործառույթները, ինչ մի շարք պետական այլ կառույցներ, ուստիև պատասխանատվություն չէր կրում դրանց իրականացման, առավել ևս՝ ձախողման համար: Բացի այդ, ԶՀԳ-ն իրականացնում էր խորհրդատվություն առ այն, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ այս կամ այն ապրանքի արտահանման կամ ներմուծման համար, որը, ըստ էության, իրականացնում էր նաև էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանումը: Փոխարենը Սինգապուրի զարգացման գործակալությունը հանդիսացավ միասնական պատուհան օտարերկրյա ներդրողների համար և ուղղորդեց ներդրողներին անգամ ամենաանշան խնդիրների առկայության պարագայում: Այսօր արդեն ակնհայտ է, թե վերոնշյալ 2 կառույցներից որի գործունեությունն էր առավել արդյունավետ երկրի զարգացման տեսանկյունից:

Այս տեսանկյունից շատ կարևոր է գիտակցել, որ պետական մի քանի կառույցների նույն գործառույթով օժտելը միանշանակ հանգեցնելու է լավագույն դեպքում այդ գործառույթի թերակատարմանը, իսկ վատագույն դեպքում՝ առհասարակ չիրականացմանը: Սա մեծ բեռ է պետության համար, քանզի ոչ միայն ձախողվում է որևէ պետական գործառույթի իրականացումը, այլև այդ ձախողման համար ֆինանսավորվում են միաժամանակ մի քանի պետական կառույց: Այս երևույթը պայմանականորեն կարելի է անվանել ***տնտեսական գործառույթների կրկնության ծուղակ***: Այս ծուղակն ամենավտանգավորներից է տնտեսության զարգացման համար: Անհրաժեշտ է նշել, որ այն առկա է նաև այսօրվա ՀՀ տնտեսությունում՝ հանձինս ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Բիզնես Արմենիա գործակալության, ինչպես նաև էկոնոմիկայի նախարարության առանձին ստորաբաժանումների (օրինակ՝ Գործարար և ներդրումային միջավայրի բարելավման վարչության ու Ձեռներեցության զարգացման վարչության գործառույթները ամենայն հավանականությամբ հիմնականում կրկնվում են, նույնը կարելի է ասել նաև Սննդամթերքի անվտանգության վարչության ու Պարենային անվտանգության և ագրովերամշակման զարգացման վարչության, ինչպես նաև Գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման և կոոպերացիայի զարգացման վարչության և Գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչության մասին): Այս ամենին ներկայումս ավելանում են նաև այլ կառույցներ, մասնավորապես՝ 2019 թ. տարեվերջին հայտնի դարձավ, որ էկոնոմիկայի նախարարության կազմում գործում է Ներդրումների

աջակցման «Մեկ պատուհան» կենտրոնը, որի մասին հիշատակումը 2020 թ. հունվարի դրությամբ դեռևս բացակայում էր նախարարության կառուցվածքում:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ներկայացնելով այն ծուղակները, որոնք կարող են սպառնալ ՀՀ տնտեսական առաջանցիկ աճի ձեռքբերմանը, անհրաժեշտ ենք համարում այն ներկայացնել նաև համապատասխան միջոցառումների համախումբը, որը հնարավորություն կտա ՀՀ տնտեսությանը խուսափել նշյալ բոլոր ծուղակներից:

Մշակվող ռազմավարությունները անհրաժեշտ է քննարկել շահագրգիռ բոլոր կողմերի հետ, որոնք նաև կպարտավորվեն ներկայացնել արձանագրված թերությունների շտկման ուղիներ: Մասնավորապես՝ ՀՀ գործարար միջավայրի բարելավման 2019-2024 թթ. ռազմավարության SWOT վերլուծությունը պետք է իրականացվի ռազմավարության մշակման նախնական փուլում, որի արդյունքում կբացահայտվեն ՀՀ գործարար միջավայրի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները: Եվ միայն դրանց խորքային բացահայտումից հետո պետք է մշակվի ռազմավարություն, որը միտված կլինի առկա ուժեղ կողմերի պահպանմանն ու կատարելագործմանը, թույլ կողմերի հնարավորինս առավելագույն չափով նվազեցմանը, հնարավորությունների օգտագործմանը և ռիսկերը մեղմելուն ուղղված քայլերի մշակմանը: SWOT վերլուծության խորքային իրականացումը անհրաժեշտաբար պետք է պարունակի առնվազն 3 փուլով վերլուծություն՝

1. գործարարների խնդիրների բացահայտում նրանց շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման միջոցով,

2.միջազգային վարկանիշային աղյուսակներում երկրի դիրքի և այն պայմանավորող գործոնների դինամիկայի, ինչպես նաև տարածաշրջանի կամ այլ թիրախային երկրների խմբի (օրինակ՝ ԵՏՄ) հետ համեմատական վերլուծություն,

3. գործարար միջավայրի վրա ազդող այլ ցուցանիշների դինամիկայի և երկրների թիրախային խմբի հետ համեմատական վերլուծություն:

Առնվազն այս 3 փուլերից հետո միայն դրանց արդյունքների ընդհանրացմամբ հնարավոր կլինի վեր հանել ՀՀ գործարար միջավայրի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները: Հակառակ դեպքում, եթե խորապես բացահայտված չեն վերոնշյալները, ապա ինչի՞ բարելավմանն է ուղղված ռազմավարությունը՝ բացահայտ խնդիրների՞, որոնք առանց որևէ վերլուծության պարզ են: Սա անթույլատրելի մոտեցում է ռազմավարության մշակման համար, քանի որ ռազմավարության հիման վրա հետագա 5 տարիների ընթացքում մշակվելու են գործողությունների ծրագիր և ժամանակացույց, որոնք փաստորեն միայն ակնհայտ խնդիրների լուծմանն են ուղղվելու՝ բաց թողնելով ուշադրությունից շատ կարևոր խնդիրներ: Սրա արդյունքում տնտեսությունը կա՛մ շատ փոքր տեմպերով կզարգանա, կա՛մ չի զարգանա: Մինչդեռ հետևելով Սինգապուրի օրինակին՝ մենք պարտավոր ենք հանգամանորեն վերլուծել մեր տնտեսության բոլոր խնդիրները, որից հետո միայն առաջադրել միջնաժամկետ կամ

երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր, որպեսզի հնարավորություն ունենանք մոտակա 20-30 տարիներում ապրելու տնտեսապես հզոր Հայաստանում: Բացի այդ, անհրաժեշտ է յուրաքանչյուր պետական ծրագրում հստակ չափելի թիրախներ նշել, որպեսզի հնարավոր լինի վերահսկել դրա իրագործումը ողջ ընթացքում, ինչպես նաև բացահայտված շեղումների պարագայում արագ վերացնել դրանք՝ անշեղորեն հետևելով և հասնելով վերջնական նպատակին, որը և կապահովի տնտեսական կայունություն, իսկ տնտեսվարող սուբյեկտներին էլ հնարավորություն կտա հստակ պատկերացումներ ունենալ վաղվա օրվա մասին:

Հաջորդը տնտեսական գործառույթների կրկնության ծուղակից խուսափելու միջոցառումներն են: Սինգապուրի տնտեսական հրաշքի ժամանակահատվածում իրականացվող քաղաքականության վերլուծությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր պետական կառույց պետք է ունենա միայն իրեն ամրագրված գործառույթների համախումբ, որոնց իրականացման համար պատասխանատու կլինի միայն տվյալ կառույցը, իսկ ձախողման պարագայում կսահմանվեն հստակ միջոցառումներ: Սա հնարավորություն կտա խնայելու և առավել արդյունավետորեն օգտագործելու ֆինանսական, ժամանակային և մարդկային ռեսուրսները:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ միայն ծուղակներից խուսափելուն ուղղված քաղաքականությունը չի կարող հանգեցնել արագ աճի: Դրա համար անհրաժեշտ է ՀՀ-ում տեղայնացնել նաև Սինգապուրի տնտեսական քաղաքականության մի քանի հաջողված այլ գործիքներ: Մասնավորապես՝ ներդրումային առցանց հարթակի ստեղծում կամ նախկինում մշակված հարթակի էական բարեփոխում՝ ծրագրային համապատասխան լուծումների միջոցով: Սինգապուրի ներդրումային հարթակը լավագույններից է աշխարհում, և ստեղծվել է 2007 թ.՝ https://www.investmentnetwork.sg: Համանման մոդելով մեր կողմից առաջարկվում է ստեղծել ներդրումային առցանց հարթակ, որտեղ կհանդիպեն ներդրման կարիք և ներդրման հնարավորություն ունեցող տնտեսական սուբյեկտները: 2017 թ. Հայաստանի զարգացման հիմնադրամը մշակեց նման մի հարթակ՝ investmentprojects.am, որը, սակայն, շատ թերի էր և ներկայում անգամ չի էլ գործում անհայտ պատճառներով: Սինգապուրի մոդելով ստեղծվող կայքը կունենա առանձնացված բաժիններ՝ start-up-ի համար և տարբեր ոլորտներում գործող սկսնակ և ոչ սկսնակ բիզնեսների համար: Ներդրման կարիք ունեցողների համար կայքը կսահմանի պարտադիր դաշտեր, որոնք պետք է լրացվեն գրանցվելիս, այդ թվում՝ նաև էլեկտրոնային ստորագրություն: Նրանք մուտք կգործեն համակարգ առանձին մուտքանունով և գաղտնաբառով և կունենան հնարավորություն իրենց հատկացված օգտահաշվում ստանալ հարցեր կամ մեկնաբանություններ պոտենցիալ ներդրողներից՝ դրանց պատասխանելու հնարավորությամբ: Առաջարկվող մեխանիզմով հարթակը հնարավորություն կտա ներդրողներին միաժամանակ գումարներ ներդնել տարբեր նախագծերում կամ գործող ձեռնարկություններում՝ այսպիսով դիվերսիֆիկացնելով և նվազեցնելով ռիսկերը: Մյուս կողմից՝ հարթակը հնարավորություն կտա նաև

օտարերկրյա տնտեսական սուբյեկտներին ևս ներդրումներ իրականացնելու ներկայացված տարբեր նախագծերում: Բացի այդ, Սինգապուրի օրինակը ցույց է տալիս, որ շատ արդյունավետ է այն մոդելը, երբ կայքը նախատեսում է հնարավորություն նաև յուրաքանչյուր նախագծի համար անհրաժեշտ գումարի մի մասի ներդրման համար՝ հնարավորություն տալով տվյալ նախագծի համար անհրաժեշտ գումարը հավաքագրել տարբեր աղբյուրներից: Սա ունի 3 հիմնավորում. նախ՝ հնարավորություն կտրվի ներդրողին տարբերակել իր ներդրումային պորտֆելը, բացի այդ՝ հնարավորություն կտրվի նախագծի հեղինակին կախում չունենալ մեկ ներդրողից, և, ի վերջո, նախագծի հեղինակը կկարողանա առաջարկվող բոլոր ներդրողների հետ բանակցություններ վարելու և ընտրելու իր տեսանկյունից առավել վստահելիներին: Այսինքն՝ մեր առաջարկած մոդելում ընտրության հնարավորություն է տրվում ոչ միայն ներդրողին, որն առկա էր investmentprojects.am-ի պարագայում, այլ նաև նախագծի հեղինակին: Հետագա զարգացման պարագայում կայքը կունենա նաև համապատասխան բջջային հավելված՝ առավել ճկունություն ապահովելու համար: Հարկ է նշել նաև, որ կայքի ստեղծումը ինքնին չի կարող հանդիսանալ ներդրումների ներգրավմանն ուղղված քայլ: Անհրաժեշտ է նաև անհապաղ իրականացնել դրա առաջմղում արտերկրում ինչպես սոցիալական ցանցերի, այնպես էլ արտերկրում գործող ՀՀ ներկայացուցչությունների կամ դիվանագիտական ներկայացուցչությունների ստորաբաժանումների միջոցով:

Ներդրումների ներգրավման Սինգապուրի հաջողված գործիքներից է նաև ներդրողներին պատասխանող «1 պատուհանի սկզբունքի» ներդրումը: Ի պատիվ մեր կառավարության՝ պետք է նշել, որ 2019 թ. վերջից այն արդեն իսկ ստեղծվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կազմում և արդյունավետ գործարկման պարագայում կարող է մեծ հաջողություններ արձանագրել:

Տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման Սինգապուրի հաջողված գործիքներից է նաև պարբերաբար որոշակի ժամանակահատվածում ռազմավարական համարվող ոլորտներում հատկապես օտարերկրյա ձեռնարկություններին, ինչպես նաև արտադրական գործունեություն իրականացնող տեղական ձեռնարկություններին հարկային պարտավորություններից ազատելը: Կարծում ենք՝ այս գործիքները կարող են արդյունավետորեն իրականացվել նաև ՀՀ տնտեսությունում:

Մեր կարծիքով՝ սրանք են Սինգապուրի տնտեսական հրաշքին նպաստող գործիքակազմի այն հատվածները, որոնք արդյունավետորեն կարելի է տեղայնացնել ներկայիս ՀՀ տնտեսությունում և արձանագրել զգալի հաջողություններ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ефимов Г. В., Борьба с коррупцией в Сингапуре // Азия и Африка сегодня. 2002, №9.
2. Ли К. Ю., Сингапурская история. Из третьего мира в первый / МГИМО. МИД России; 2005, с. 420.

3. Ли К. Ю., Сингапурское чудо. АСТ. М., 2015, с.210.
4. Пахомова Л. Ф., Модели процветания (Сингапур, Малайзия, Таиланд, Индонезия). – М.: Институт востоковедения РАН, 2007, 256 с.
5. Плейт Т., Беседы с Ли Куан Ю. Гражданин Сингапур, или как создают нации. ЗАО «Олимп–Бизнес», 2014, с. 232.
6. Bhaskaran Manu. Challenges facing the Singapore economy [Электронныйресурс] // Southeast Asian Affairs, 2014, P. 290-302. URL: https://www.jstor.org/stable/44112079 - доступ свободный. Дата обращения: 01.11.2018.
7. Haque M. S., Public Administration and Public Governance in Singapore. DaeyoungMoonhwasa Publishing Company, 2009, p. 246-271.
8. Huff W. G., The economic growth of Singapore: Trade and development in the Twentieth century. Department of economics, University of Glasgow, Cambridge University Press, 1994.
9. Koh Winston T. H., Singapore's Transition to Innovation-Based Economic Growth: Infrastructure, Institutions and Government's Role – 2006. – 143-160.
10. Krause L. B., The Singapore economy reconsidered. Institute of Southeast Asian Studies, 1987, p. 231.
11. Nizamuddin A. M., Multinational corporations and economic development: the lessons of Singapore. International Social Science Review, 2007, p. 149-162.
12. Quah J. S. T., Administrative Reform and Development Administration in Singapore: A Comparative Study of the Singapore Improvement Trust and the Housing and Development Board. Florida State University, 1996, p. 160.
13. Schein E. H., Strategic Pragmatism: The Culture of Singapore's Economic Development Board. Cambridge, the MIT Press, 1996.
14. https://armstat.am
15. https://sustainabledevelopment.un.org/content/documents/19439Singapores_Voluntary_National_Review_Report_v2.pdf
16. https://worldbank.org
17. https://www.singstat.gov.sg/find-data/search-by-theme/society/environment/latest-data
18. https://www.weforum.org/reports/how-to-end-a-decade-of-lost-productivity-growth
19. https://www.worldometers.info/world-population/singapore-population/

References

1. Efimov G. V., Bor'ba s korrupciej v Singapure // Azija i Afrika segodnja. 2002, #9.
2. Li K. Ju., Singapurskaja istorija. Iz tret'ego mira v pervyj / MGIMO. MID Rossii; 2005, c. 420.
3. Li K. Ju., Singapurskoe chudo. AST. M., 2015, c.210.
4. Pahomova L. F., Modeli procvetanija (Singapur, Malajzija, Tailand, Indo-nezija). – M.: Institut vostokovedenija RAN, 2007, 256 s.

5. Plejt T., Besedy s Li Kuan Ju. Grazhdanin Singapur, ili kak sozdajut nacii. ZAO «Olimp–Biznes», 2014, s. 232.
6. Bhaskaran Manu. Challenges facing the Singapore economy [Jelektronnyjresurs] // Southeast Asian Affairs, 2014, P. 290-302. URL: https://www.jstor.org/stable/44112079 - dostup svobodnyj. Data obrashhenija: 01.11.2018.Haque M. S., Public Administration and Public Governance in Singapore. DaeyoungMoonhwasa Publishing Company, 2009, p. 246-271.
7. Huff W. G., The economic growth of Singapore: Trade and development in the Twentieth century. Department of economics, University of Glasgow, Cambridge University Press, 1994.
8. Koh Winston T. H., Singapore's Transition to Innovation-Based Economic Growth: Infrastructure, Institutions and Government's Role – 2006. – 143-160.
9. Krause L. B., The Singapore economy reconsidered. Institute of Southeast Asian Studies, 1987, p. 231.
10. Nizamuddin A. M., Multinational corporations and economic development: the lessons of Singapore. International Social Science Review, 2007, p. 149-162.
11. Quah J. S. T., Administrative Reform and Development Administration in Singapore: A Comparative Study of the Singapore Improvement Trust and the Housing and Development Board. Florida State University, 1996, p. 160.
12. Schein E. H., Strategic Pragmatism: The Culture of Singapore's Economic Development Board. Cambridge, the MIT Press, 1996.
13. https://armstat.am
14. https://sustainabledevelopment.un.org/content/documents/19439Singapores_Voluntary_National_Review_Report_v2.pdf
15. https://worldbank.org
16. https://www.singstat.gov.sg/find-data/search-by-theme/society/environment/latest-data
17. https://www.weforum.org/reports/how-to-end-a-decade-of-lost-productivity-growth
18. https://www.worldometers.info/world-population/singapore-population/

Լիլիթ Սարգսյան
Դոնարա Գրիգորյան

ՍԻՆԳԱՊՈՒՐԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համառոտագիր: Սինգապուրի օրինակը վկայում է, որ արդյունավետ կառավարման պարագայում բավական աղքատ երկիրը կարող է մի քանի տասնամյակում վերածվել տնտեսապես զարգացած երկրի: Նորանկախ Հայաստանի և նորանկախ Սինգապուրի տնտեսություններն ունեին նմանություններ և տարբերություններ: Հոդվածի նպատակն է ներկայացնել Սինգապուրի տնտեսական հրաշքի գործիքակազմը, վերլուծել դրա տեղայնացման հնարավորու-

թյունը ՀՀ–ում, ինչպես նաև նշել այն տնտեսական ծուղակները, որոնցից խուսափելով միայն ՀՀ տնտեսությունը կարող է արագ աճ արձանագրել:

Բանալի բառեր. տնտեսական հրաշք, արագ տնտեսական աճ, բարեփոխումներ, արդյունավետ գործիքակազմ, տնտեսական ծուղակներ

Лилит Саргсян
Донара Григорян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» СИНГАПУРА

Аннотация: Пример Сингапура свидетельствует о том, что при эффективном управлении довольно бедная страна может перерасти в экономически развитую страну в течение нескольких десятилетий. Экономики Армении и Сингапура, обе которые недавно получили независимость, имели сходства и различия. Целью данной статьи является представление инструментария экономического чуда Сингапура, анализ возможности его применения в Республике Армения, а также раскрытие тех экономических ловушек, только избежав которых, экономика Республики Армения сможет достичь высокого темпа роста.

Ключевые слова: экономическое чудо, быстрый экономический рост, реформы, эффективный инструментарий, экономические ловушки

Lilit Sargsyan
Donara Grigoryan

“THE ECONOMIC MIRACLE” OF SINGAPORE

Abstract: Example of Singapore evidences that with effective management a rather poor country may transform into an economically developed country within a few decades. The economies of newly independent Armenia and newly independent Singapore had similarities and differences. The purpose of this article is to present the tool set of the economic miracle of Singapore, analyze the possibility of its application in the Republic of Armenia, and disclose economic traps, by only avoiding which the economy of the Republic of Armenia can reach high rates of growth.

Keywords: economic miracle, rapid economic growth, reforms, effective tool set, economic traps

Սվետլանա Դալլաքյան

«ՃԱՊՈՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1

Ճապոնիայի ընդհանուր բնութագրիչները 1960 **թ. և** 2018 **թ.**[1]

Բնութագրիչներ	*1960 թ.*	*2018 թ.*
Տարածքը	377,835 կմ [2]	377.835 կմ [2]
Բնակչությունը	92.5 մլն մարդ	126.5 մլն մարդ
ՀՆԱ մեծությունը ընթացիկ գներով	44.307 մլրդ ԱՄՆ դոլար	4.971 տրլն ԱՄՆ դոլար
ՀՆԱ–ն մեկ շնչի հաշվով	479 ԱՄՆ դոլար	39.290 ԱՄՆ դոլար
Գործազրկության մակարդակը	1.7 %	2.4%
Տնտեսական աճի տեմպը	12%	0,7%
Գնաճի տեմպ	3.5%	0.98%

Ներածություն

Տնտեսական զարգացումը ազգային (երկրի) զարգացման մի մասն է, որը ենթադրում է փոփոխության անհրաժեշտության ընկալում և ընդունում ինչպես անձնական, այնպես էլ համազգային մակարդակով: Նկատենք, որ զարգացումը, նախ և առաջ, փիլիսոփայական մոտեցման և մտածելակերպի ու դրանից բխող տնտեսական քաղաքականության և քայլերի արդյունք է: Աշխարհում հայտնի են երկրների հաջողության տարբեր օրինակներ, որոնցից մի քանիսի անցած ուղին բնութագրվում է որպես «հրաշք»: «Ճապոնական տնտեսական հրաշքը» դասվում է աշխարհում տեղի ունեցած տնտեսական հրաշքների շարքին և ունի իր առանձնահատկությունները: Դա տվյալ երկրի պատմության կոնկրետ ժամանակաշրջանում ու աշխարհաքաղաքական որոշակի միջավայրում տեղի ունեցած տասնյակ գործոնների համադրման արդյունք է՝ իր էությամբ բացառիկ, և ենթակա չէ արհեստական ընդօրինակման: Այս առումով ընդունված ակադեմիական կարծիք է, թե ճապոնացիները, ներմուծելով որևէ օտար կամ նոր բան, այն հարմարեցնում են իրենց ընկալումներին և կիրառում մեծ արդյունավետությամբ՝ ստանալով ոչ ավանդական և ավանդական մշակութային արժեքների մի յուրօրինակ հիբրիդ: Տվյալ հանգամանքով է նաև պայմանավոր-

[1] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով https://www.mofa.go.jp/territory/page1we_000006.html, https://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL?locations=JP, https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=JP, https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.NE.ZS?locations=JP https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?locations=JP-CN

ված այն տարածված արտահայտությունը, թե «ճապոնացիները չեն կրկնօրինակում, այլ յուրացնում են»[1]:

Հարկ է նշել նաև, որ Ճապոնիայում, ի տարբերություն եվրոպական երկրների, ավանդական կառույցների ճգնաժամ տեղի չունեցավ: Դա պայմանավորված էր բնակչության հարմարվողականությամբ, այսինքն՝ հասարակությունը, այլ քաղաքակրթությունների տարբեր տարրեր յուրացնելով (առաջին հերթին՝ չինական), դրանք վերածում էր սեփական ազգային արժեքների բաղադրիչի, ինչի հետևանքով նույնիսկ արմատական վերափոխումներն ուղեկցվում էին առանց սոցիալական ցնցումների՝ բարենորոգումների միջոցով: Նույնը չենք կարող ասել հայերի մասին, ովքեր շատ դժվար են ընկալում ցանկացած փոփոխություն և ամենաչնչին վերափոխում ընկալում են որպես ահազանգող իրավիճակ: Ինչքան էլ տնտեսական զարգացման և արդիականացման ճապոնական մոդելը թվա արտաքնապես գրավիչ, դրա մեխանիկական ընդնօրինակումն անհնար է և ոչ արդյունավետ:

Մեր նպատակն է ներկայացնել «ճապոնական հրաշքի» փիլիսոփայությունը և սկզբունքային մոտեցումները՝ կապված ֆինանսատնտեսական լծակների, ճապոնական մենեջմենթի, ինչպես նաև էթնոմշակութային առանձնահատկությունների հետ: Նպատակ չի դրվել մեկ երկրի փորձն այլ երկրում նույնությամբ կրկնօրինակելու, այլ ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա վերհանվել են «ճապոնական տնտեսական հրաշքի» առանձնահատկությունները, փորձ է արվել այն որոշ ուղղություններով ծառայեցնել Հայաստանի տնտեսական հեղափոխությանը:

Ներկայումս հետխորհրդային գրեթե բոլոր երկրների առջև ծառացած խնդիրներից է հասարակական կյանքի ոլորտների արդիականացումը, որը ենթադրում է զարգացած ժամանակակից տնտեսության առկայություն և վերջինիս համար անհրաժեշտ որոշակի մշակութային և հոգեբանական մթնոլորտի ստեղծում: Արդեն մի քանի տասնամյակ որպես արդիականացման հաջողված օրինակ է բերվում Ճապոնիան: Վերջին 150 տարիների ընթացքում Ճապոնիան, հաղթահարելով հետամնացությունը, կարողացավ առաջատար դիրքերից մեկը գրավել աշխարհում: Արդիականացումը Ճապոնիային հնարավորություն տվեց «հետապնդող զարգացման» մոդելից անցնելու համընթաց զարգացմանը և նույնիսկ աշխարհին առաջարկելու կատարելագործման հետագա ուղիներ:

Նախքան «ճապոնական տնտեսական հրաշքի» ֆենոմենին անդրադառնալը անհրաժեշտ է ներկայացնել Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման գործընթացը, որն էլ հենց հիմք հանդիսացավ «ճապոնական հրաշքի» իրագործման համար: 1941 թ. դեկտեմբերին Ճապոնիան ռազմական գործողություններ սկսեց ԱՄՆ-ի դեմ՝ հարձակվելով ամերիկյան խաղաղօվկիանոսյան նավատորմի Փերլ Հարբոր բազայի (Հավայան կղզիներ), Գուամ կղզու և անգլիական գաղութ Հոնկոնգի վրա: Պատերազմի առաջին տարիներին Ճապո-

[1] Kuwabara T., Japan and Western Civilization: Essays on Comparative Culture. Tokyo, University of Tokyo Press, 1986, p. 125.

նիան լուրջ հաջողություններ ունեցավ, սակայն 1942 թ. կեսերից բեկում առաջացավ պատերազմում ԱՄՆ-ի օգտին, և մինչև պատերազմի վերջը Ճապոնիան պարտություններ էր կրում: 1945 թ. սեպտեմբերի 2-ին Ճապոնիան հայտարարեց իր կապիտուլյացիան և օկուպացվեց ամերիկյան զորքերի կողմից: Ճապոնիայի պարտությունը ծանր հետևանքներ ունեցավ տնտեսության վրա, երկիրը զրկվեց գրաված տարածքներից, գաղութներից, Հարավարևելյան Ասիայի երկրներում ներդրված կապիտալներից ու վաճառահանման շուկաներից և պետք է վճարեր ռեպարացիաներ: Ահա այս պայմաններում 1946-1952 թվականներին՝ օկուպացիայի տարիներին, Ճապոնիայում սկսվեցին պետության արդիականացման գործընթացներ, որոնք ուղեկցվում էին հասարակական կարգի և պետական կառուցվածքի վերափոխմամբ, համընդհանուր դիրեկտիվ վերահսկողությունից շուկայական տնտեսության անցումով, որով պետք է արմատախիլ արվեր միլիտարիզմը, և պայմաններ ստեղծվեին երկիրը ժողովրդավարական ուղիով զարգացնելու համար:

Գրականության ակնարկ

Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման վերաբերյալ առանձնացվում են գիտական երկու ուղղություններ.

1. «Քրիզանթեմ և սուր» կամ «Ամերիկյան դպրոց», որի հիմնադիրներից է Ռուդ Բենեդիկտը, ըստ որի՝ Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման հիմնական ուղին «պարտադիր արևմտականացումն» է[1]:

2. Ռևիզիոնիստական տեսություն, որի հիմնադիրներից է Չալմերս Ջոնսոնը. ըստ նրա և այդ ուղղության մյուս ներկայացուցիչների՝ հետպատերազմյան արդիականացման հիմքերը պետք է որոնել նախապատերազմյան և հետպատերազմյան Ճապոնիայի պատմական շարունակականության, ինչպես նաև նրա մշակութային ինքնատիպության և հասարակական կյանքի կազմակերպման յուրօրինակության մեջ[2]:

Է. Այալը Ճապոնիայի արդիականացման գործում մեծ առաքելություն էր վերագրում սիտոյականությանը՝ հատկապես կարևորելով «պետությանը ճապոնացու նվիրվածության հանգամանքը»[3]:

Մեկ այլ ճապոնագետ՝ ամերիկացի մշակութաբան Ջոն, գրել է. «Ճապոնացիների աշխատասիրությունը, զգուշավորությունը և կարգապահությունը խոր պատմական արմատներ ունեն ճապոնական սովորույթների ու գաղափարների մեջ և կապված չեն որոշակի կրոնական ուղղության հետ»[4]:

Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման վերը նշված ուղղու-

---

[1] Benedict R., The Chrysanthemum and the Sword. Boston: Houghhton Miffin, 1946, p 32.

[2] Jonson Ch., MITI and Japanese Miracle, the Growth of Industrial Policy 1925-1975, Stanford, 1982, p. 128.

[3] Ayal E., Value Systems and Economic Development in Japan and Thailand, Journal of Social Issues, v. 19, N 1, 1963, p. 41.

[4] Jo M., Japanese Traditional Values and Industrialization, international social Science Review, v. 62, N 1, 1987, p. 7.

թյուններից բացի կան նաև մի շարք այլ մոտեցումներ, որոնք անդրադարձել են «ճապոնական հրաշքին», և դրանք անընդհատ ավելանում են ու կատարելագործվում: Շատ պատկերավոր է բնութագրում Սարկիսովը. «Եթե Ամերիկան հայտնագործեցին մեկ անգամ և վերջնականապես, ապա Ճապոնիան շարունակաբար հայտնագործում են մինչ օրս՝ փորձելով հասկանալ այդ երկիրը, որի խորհրդավորությունը վաղուց էր հետաքրքրություն առաջացրել»[1]:

Այսպիսով՝ եթե ամփոփելու լինենք Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման գործընթացը, կարող ենք առանձնացնել հետևյալ չորս կարևոր հանգամանքները.

1. Ճապոնիայի տնտեսական համակարգը տարբերվում է այլ զարգացած արդյունաբերական երկրների համակարգերից, և այդ տնտեսական մոդելը կարևոր դերակատարություն ունեցավ Ճապոնիայի արդիականացման գործում,

2. չնայած տնտեսության հետպատերազմյան վերականգնումը և գարգացումը հիմնված չէին նրա նախապատերազմյան կառուցվածքի վրա, սակայն դրանում պահպանվեցին նախապատերազմյան շրջանի տնտեսությանն ու տնտեսական կյանքին բնորոշ էական առանձնահատկություններ, ինչը, մասնագետների կարծիքով, պայմանավորված էր ճապոնացիների էթնոմշակութային յուրահատկություններով կամ պատմական գործոններով,

3. որքան էլ արտաքնապես գրավիչ թվա տնտեսական զարգացման ճապոնական մոդելը, այդուհանդերձ, դրա մեխանիկական կրկնօրինակումն անհնար է, որովհետև յուրաքանչյուր տնտեսություն ունի զարգացման իր ներքին և երբեմն միայն իրեն հատուկ օրինաչափությունները,

4. ժամանակակից, այլ կերպ ասած՝ հատուկ ինտենսիվությամբ ընթացող համընդհանրացման պայմաններում ճապոնական տնտեսական համակարգի շատ տարրեր «արտահանվելով» նպաստում են այդ գործընթացների է՛լ ավելի խորացմանը, քանի որ Ճապոնիան հանդես է գալիս մի կողմից «մատակարարի», մյուս կողմից՝ «սպառողի» դերում:

Հետազոտության տեսամեթոդական հիմքերը

Գիտական առարկայականության սկզբունքն ապահովելու համար սույն հետազոտության համար մեթոդաբանական հիմք են ծառայել դիալեկտիկական, պատմական, տրամաբանական, համակարգային մոտեցման, համեմատական վերլուծության և այլ գիտական մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս «ճապոնական տնտեսական հրաշքի» առանձնահատկությունները դիտարկել դինամիկայի մեջ, բացահայտել պատճառահետևանքային կապերը, առկա տրամաբանական հետևությունները և ազգային ու տարածաշրջանային առանձնահատկությունները: Հետազոտության մեջ օգտագործված տարբեր մեթոդների կիրառումը բացատրվում է նյութի բազմաբնույթ լինելով, մասնավորապես՝ ազգաբանական–սոցիոլոգիական և տնտեսապատմական: Ավելին, հետազոտու-

[1] Саркисов К. О., "Россия и Япония. Сто лет отношений", Москва, 2015, стр. 85.

թյունը մի քանի մեթոդների համադրությամբ կատարելու դեպքում ապահովվում են ավելի համապարփակ արդյունքներ և ծանրակշիռ եզրակացություններ, քան դա հնարավոր կլիներ անել միայն մեկ մեթոդի կիրառման պարագայում:

Նախանշված նպատակին համար հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատանքները և գիտական հոդվածները: Իսկ տեղեկատվական հիմք են հանդիսացել Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի և այլ կառույցների պաշտոնական նյութերը: Տեսական վերլուծությունների ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել տեսությունների տնտեսագիտական ու մեթոդաբանական առավելություններին և թերություններին:

Հիմնական վերլուծություն

Ճապոնական տնտեսության արդիականացման հենքի վրա էլ տեղի ունեցավ «ճապոնական տնտեսական հրաշքը», որը բնութագրվում էր «խաղաղության տնտեսության» ստեղծմամբ, քանի որ նախապատերազմյան տնտեսությունը մեծամասամբ կառուցված էր ճապոնական միլիտարիզմի պահանջարկների վրա: Այդ պատճառով ավերված հին գործարանները կամ արտադրամասերը վերականգնելու փոխարեն շատ հաճախ կառուցվում էին նորերը: Հետպատերազմյան տնտեսության վերականգնման հարցում, անշուշտ, չպետք է թերագնահատել Միացյալ Նահանգների դերակատարությունը, որովհետև նրա պնդմամբ սահմանադրության 9-րդ հոդվածի ուժով Ճապոնիան ապառազմականացվեց: Որպես արդյունք՝ այն հսկայական միջոցները, որոնք պետք է ծախսվեին ռազմական բնագավառում, ուղղվեցին տնտեսության զարգացմանը: Ուստի պատահական չէ, որ որոշ քաղաքագետներ, քննարկելով «ճապոնական հրաշքին» առնչվող խնդիրները, առաջ են քաշում այն թեզը, թե հետպատերազմյան արագ արդիականացումը սառը պատերազմի հետևանք էր՝ նկատի ունենալով խորհրդա-ամերիկյան մրցակցության պայմաններում ստեղծված «նպաստավոր» աշխարհաքաղաքական մթնոլորտը: **Եթե փորձենք տալ «տնտեսական հրաշքի» հեղինակային սահմանումը, ապա կարող ենք ասել, որ դա տնտեսության՝ արագ տեմպերով և ցատկանման երկարաժամկետ զարգացումն է, որը բերում է տվյալ երկրի արմատական և անդառնալի որակական դրական փոփոխություններին:** Ճապոնիայի տնտեսական վերելքին նպաստող գործոններին անդրադարձել են Ճապոնացի տնտեսագետ Յ. Կանեմորին[1] և ԱՄՆ-ի նախագահ Զ. Քարտերի ազգային անվտանգության գծով խորհրդական, հայտնի քաղաքագետ Զ. Բժեզինսկին[2]: Կանեմորին թվարկում է հետևյալ 9 *պատճառները*, որոնք, ըստ նրա, կարևոր դերակատարություն են ունեցել «ճապոնական հրաշքի» կերտման գործում, իսկ Բժեզինսկին նշում է այն

[1] Kanemori Y., Postwar Japan: Lessons for Asia. New York, Columbia University Press, 1988.

[2] Brzezinski Z., The Fragile Blossom: Crisis and Change in Japan. New York: Harper and Row, 1972, pp. 24 -108.

12 կարևոր *գործոնները,* որոնք, իր կարծիքով, նպաստել են Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացմանը:



Գծապատկեր 1. *«Ճապոնական հրաշքի» կերտման գործում Կանեմորիի և Բժեզինսկու կողմից առաջադրված գործոնները և պատճառները*

Անհրաժեշտ է նշել, որ ամեն մի տնտեսական իրավիճակ, մասնավորապես՝ «տնտեսական հրաշքը», ունի իր տրամաբանությունը, և այն պետք է վերլուծել ըստ դրա պատճառահետևանքային կապերի: Այս իմաստով թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրներում տարբեր դրսևորումներով ընթացող տնտեսական փոփոխությունները ենթակա են հավաստի տվյալների վերլուծության և որոշակի ախտորոշման, ինչը հնարավորություն է տալիս մշակելու իրատեսական լուծումներ և ծրագրեր: Պատմությունը վկայում է, որ հենց համակարգված վերլուծությունների շնորհիվ են ձևավորվել մոտեցումներ, մշակվել և իրագործվել ընդգրկուն տնտեսական ծրագրեր, որոնք ապահովել են զարգացման և ճգնաժամերի հաղթահարման արդյունավետ ուղիներ: Մասնավորապես՝ այդպես են տեղի ունեցել անցումը 1929–1933 թթ. Մեծ դեպրեսիայից դեպի տնտեսական աշխուժացում[1], Երկրորդ համաշխարհային պատերազմից ավերված տնտեսությունների վերականգնումը (Ջորջ Մարշալի պլան[2]), ինչպես նաև

[1] Thayer Watkins. The Recovery from the Great Depression of the 1930s. San José State University, Department of Economics (http://www.sjsu.edu/faculty/ watkins/recovery.htm)

[2] “The Marshall Plan – “The Europeans did the job themselves””. Moments in U.S. Diplomatic History. “Association for Diplomatic Studies and Training» (http:// adst.org/2015/05/the-marshall-plan-the-europeans-did-the-job-themselves/)

Ճապոնիայի թռիչքաձև զարգացումն[1] ու նրա վերածվելը համաշխարհային տնտեսության ուժի կենտրոնի: Դիտարկենք ճապոնական տնտեսության մեջ տնտեսական ցուցանիշների փոփոխության դինամիկան և փորձենք ներկայացնել դրանց հասնելու առանձնահատկությունները, որն ի վերջո հանգեցրեց «ճապոնական տնտեսական հրաշքին»:

Զարգացման ուղի և արդյունքներ

1945 թ. օգոստոսի 15–ին կայսր Հիրոհիտոն հայտարարեց Ճապոնիայի անվերապահ կապիտուլյացիայի մասին և կոչ արեց «տանելու անտանելին և հանդուրժելու անհանդուրժելին»[2]: Պատերազմի ընթացքում զոհվեց և վիրավորվեց շուրջ 8 մլն ճապոնացի, ամբողջությամբ կամ մասամբ ավերվեց մոտ 2,5 մլն շինություն, իսկ Տոկիոյի բնակչությունը 6,7 մլն-ից նվազեց՝ հասնելով 2,8 մլն-ի: Մասնագետների հաշվարկով պատերազմում Ճապոնիան ընդհանուր առմամբ կորցրեց իր ազգային հարստության 41,5 %-ը[3]: Սակայն 1952 թ. ամերիկյան զինուժը լքեց Ճապոնիան, և երկրի կառավարումն ամբողջությամբ անցավ ճապոնացիներին: Այսպես՝ *1955 թ. դեկտեմբերին ընդունվեց 1956-1960 թթ. համար վարչապետ Իչիրո Հատոյամայի «Ինքնուրույն տնտեսության ստեղծման»* ծրագիրը: Այն նախատեսում էր տարեկան նվազագույնը 5% տնտեսական աճ: Սակայն տնտեսական աճի միջին տեմպերը նշված ժամանակաշրջանում գերազանցեցին ծրագրվածը և կազմեցին միջինը 8,8%: Տնտեսական զարգացման «Ինքնուրույն տնտեսության ստեղծման» ծրագրին հաջորդեց 1958-1962 թթ. համար «Նոր երկարաժամկետ տնտեսական ծրագիրը», որն ընդունվեց վարչապետ Կիսիի ղեկավարությամբ 1957 թ. դեկտեմբերին և նախատեսում էր տարեկան 6,5% միջին տնտեսական աճ, սակայն փաստացի տնտեսական աճի տարեկան միջին ցուցանիշը կազմեց 9,7%: Հաջորդ՝ 1961-1964 թթ. համար տնտեսական պլանավորման ռազմավարական ծրագիրն ընդունվեց Հայաթո Իկեդայի վարչապետության օրոք՝ 1960 թ. դեկտեմբերին: Այն կոչվում էր «Ազգային եկամուտների կրկնապատկման ծրագիր»: Դրանով նախատեսվում էր տարեկան նվազագույնը 7.2% տնտեսական աճ, սակայն իրական տեմպերը տարեկան միջին կտրվածքով կազմեցին ուղիղ 10%[4]: Ավելի հանգամանալից պատկերացնելու համար Ճապոնիայի տնտեսության թռիչքաձև զարգացումը ներկայացնենք այն աղյուսակ 2-ում և գծապատկեր 2–ում:

Այս ցուցանիշների աճը հիմք ընդունելով՝ պետք է փաստել, որ 60–ական թվականների կեսերից ճապոնական տնտեսությունը սկսում է վերելք ապրել: Այսպես՝ 1951-68 թթ. ընթացքում Ճապոնիայում արդյունաբերական արտադրանքի

---

[1] Sunny Mewati. How did Japan rebuild itself and become an advanced nation and a major economic power in the aftermath of the World War II? https://www.quora.com/How-did-Japan-rebuild-itself-and-become-an-advanced-nation-and-a-major-economic-power-in-the-aftermath-of-the-World-War-II

[2] Smith D., Japan since 1945: The Rise of an Economic, London Mac Millan Press, 1945, p. 42.

[3] Kosaka M., A History of Postwar Japan. Tokyo, 1972, p. 65.

[4] Jonson Chalmers. MITI and the Japanese Miracle: The Growth of Industrial Policy, 1925-1975, Stanford, Stanford University Press, 1982, p. 86.

աճի միջին տարեկան տեմպը 14.6% էր, ԱՄՆ–ում՝ ընդամենը 4.5, իսկ ամբողջ կապիտալիստական աշխարհում՝ 5.5%[1]: Դրա պատճառներից մեկը արտադրության միջոցների նկատմամբ պահանջարկի մեծացման հաշվին երկրի ներքին շուկայի ընդլայնումն էր, որը պայմանավորված էր Ճապոնիայում պատերազմի պատճառած վնասները վերացնելու և հիմնական կապիտալը արդյունաբերության մի շարք ճյուղերում նորացնելու հետ:

Աղյուսակ 2

ՀՆԱ–ի մեծությունը և ՀՆԱ-ն մեկ բնակչի հաշվով *(1960-2000 թթ.)* [2]

(դոլլար)

Տարեթվեր	***ՀՆԱ–ի մեծությունը*** *GDP (current US $)*	***ՀՆԱ–ն մեկ բնակչի հաշվով*** *GDP per capita (current US $)*
1960	44,307 մլրդ $	479 $
1965	90,95 մլրդ $	920 $
1970	212,609 մլրդ $	2 038$
1975	521,542 մլրդ $	4 659$
1980	1,105 տրլն $	9 466$
1985	1,399 տրլն $	11 580 $
1990	3,133 տրլն $	25 380 $
1995	5,449 տրլն $	43 441 $
2000	4,888 տրլն $	38 532$



Գծապատկեր 2. *ՀՆԱ–ի տարեկան աճը (%) և մեկ բնակչի հաշվով ՀՆԱ–ի տարեկան աճը 1960-2000 թթ.*[3], %

[1] Экономические проблемы современной Японии, МЭМО, N 8, 1969 г., стр. 92.

[2] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով համաշխարհային բանկի տվյալները https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=JP,

[3] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝հիմք ընդունելով https://countryeconomy.com/gdp/japan?fbclid=IwAR0PvlHIPV9ayFHzzGUySBHedCaJMfUYd3XhmIyleCCUajYgZPapeqKagoI

Հետպատերազմյան տարիներին ճապոնական տնտեսության հաջողությունները պայմանավորված էին նաև երկրում որակյալ աշխատուժի հսկայական բանակի առկայությամբ, աշխատավորների շահագործման բարձր մակարդակով, նրանց ցածր աշխատավարձով: 1951-1958 թթ. վերամշակող արդյունաբերության մեջ մեկ բանվորի աշխատանքի արտադրողականության տարեկան աճը 14% էր[1]: 1972 թ. Ճապոնիայի արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականության մակարդակը կազմում էր ԱՄՆ-ի 1/3–ը[2]: Ավելին՝ Ճապոնիայի «Ոսկե դարի» (1956–1973) ընթացքում մեկ աշխատողի հաշվով արտադրողականության տարեկան աճը միջինը 8% էր, ինչը 4 անգամ գերազանցում էր նույն ժամանակաշրջանում ԱՄՆ-ում գրանցված մակարդակը[3]:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում ճապոնական տնտեսության կառուցվածքային խոր տեղաշարժերը և տնտեսական առաջադիմության արագացումը բացատրվում են նաև պետության ակտիվ մասնակցությամբ: Ազգային եկամուտի վերաբաշխման, ֆինանսների և վարկի բնագավառում նրա ակտիվ գործունեության շնորհիվ ստեղծվել են երկրում վերարտադրության պրոցեսի համար առավելագույն բարենպաստ պայմաններ:

Ինչպես նշեցինք, «ճապոնական տնտեսական հրաշքը» տեղի է ունեցել բազմաթիվ գործոնների համատեղմամբ, որոնք, մեր դիտարկմամբ, կարելի է համակարգել էթնոմշակութային, ճապոնական մենեջմենթ և ֆինանսատնտեսական գործիքներ խմբերում: Եթե այս մոտեցումը ներկայացնենք բուրգի տեսքով, ապա այն կունենա հետևյալ հիերարխիկ պատկերը (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 3. *«Ճապոնական տնտեսական հրաշքը» ձևավորող հիմնական հենասյուները* [4]

---

[1] Պետրոսյան Լ.Պ., Ճապոնիայի տնտեսական զարգացումը, Երևան, 1976, էջ 79:

[2] Корсунский А., Промышленность Японии и США, МЭМО, N 1, 1975, стр. 85.

[3] Richard Kneller, Danny McGowan, Tomohiko Inui, Toshiyuki Matsuura, Globalisation, multinationals and productivity in Japan's lost decade, Journal of the Japanese and international Economies 26(2012), p. 110-128.

[4] Գծապատկերը կառուցված է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով կատարված հետազոտությունները:

Մի խումբ հեղինակներ «ճապոնական հրաշքը» տեսնում են մշակութային բացառիկ ժառանգության, ավանդապաշտության և հասարակության այնպիսի առանձնահատուկ որակների մեջ, ինչպիսիք են **հավաքականությունը և խմբայնությունը**: Այս մոտեցման դիրքերն ազդեցիկ դարձան հատկապես 1970-ական թթ. սկսած՝ Չիե Նականեի «Ճապոնական հասարակությունը» աշխատության[1] հրապարակմամբ: Անհրաժեշտ է նշել, որ առկա են ճապոնական էթնոմշակութային մի շարք առանձնահատկություններ, որոնք այս կամ այն կերպ ազդել են «տնտեսական հրաշքի» կայացման վրա: Սակայն մեր հետազոտության ընթացքում առանձնացրել ենք հավաքականությունը և խմբայնությունը, ինչպես նաև ճապոնական ավանդական ընտանիքը, որն իր ուրույն տեղն ունի *ինքնության անհատ–ընտանիք–ազգ* եռաշերտ միասնության մեջ:

Խմբայնության՝ որպես ճապոնական հասարակությանը բնորոշ առանձնահատկության շեշտադրմանը կարելի է հանդիպել ճապոնագիտական բազմաթիվ ուսումնասիրություններում: Ըստ Հիրոշի Հաձամայի՝ «խմբայնություն» բառը վերջին ժամանակներս սկսել են լայնորեն օգտագործել ճապոնական տնտեսական ֆենոմենը հասկանալու համար: Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Ռ. Օձակին համարում է, որ ճապոնական խմբայնությունն այն մոբիլիզացնող ուժն է, որը ճապոնացիներին ոչ միայն օգնեց արագ արդիականանալու, այլև ստեղծեց տնտեսական զարգացման կայուն և բարձր աճի հնարավորություններ: Նկատենք, որ խմբայնությունը մոբիլիզացման առումով բնորոշ է նաև հայ ժողովրդին, ինչը ապացուցվեց 2016 թ. ապրիլյան պատերազմի, ինչպես նաև թավշյա հեղափոխության ժամանակ. ընդամենը անհրաժեշտ է առաջնորդ կամ խմբի ղեկավար, որը հավատ կներշնչի հասարակությանը: Ճապոնական մշակույթին հատուկ չէ երկփեղկված մտածելակերպը, ինչի շնորհիվ երկրընտրանք չի առաջանում, թե ով է ավելի կարևոր՝ անհա՞տը, թե՞ խումբը: Ե՛վ առաջինի, և՛ երկրորդի բարեկեցությունը կազմում են մեկ ընդհանրություն, մեկ միասնություն: Խմբակենտրոնությունը մտածելակերպի ձև է, երբ անհատի գործունեության և վարքագծի վերջնական շահառուն ոչ թե անհատն ինքն է, այլ այն խումբը, որին պատկանելությունը տվյալ անհատը գիտակցում է: Նման մտածողության տիպիկ օրինակներ են Ճապոնիայում այնպիսի կարգախոսների տարածումը, ինչպիսիք են՝ «հանուն ընտանիքի», «հանուն հայրենիքի»[2]: Ցավոք, ի տարբերություն խմբայնության, հայ իրականության մեջ բացակայում է խմբակենտրոնությունը, որը պետք է սերմանել և ներարկել հայ ժողովրդի մեջ, մասնավորապես՝ երեխաներին դեռևս մանկահասակ տարիքից: Եվ այսօր, կարծես թե, Հայաստանում կարող ենք հանդիպել խմբայնությունը քարոզող կարգախոսների՝ «Հայաստանն իմ օջախն է, ժողովուրդը՝ իմ ընտանիքը»:

Ճապոնացիների էթնիկական ինքնության երկրորդ շերտը ***խմբային ինքնությունն է***, որով պայմանավորված է ճապոնական հասարակության հաճախակի բնորոշումը որպես «խմբային» հասարակության, ինչը կապված է

[1] Nakane Ch., Japanese Society, University of California Press, 1970.

[2] Նույն տեղում, էջ 78:

հենց *ճապոնական ավանդական ընտանիքի* հետ: Պատկերավոր ասած՝ ճապոնական հասարակությունը ավանդական ընտանիքի պրոյեկցիան է անսահմանության վրա[1]: Անհրաժեշտ է նշել, որ Արևմուտքի մշակութային ազդեցության և հետպատերազմյան շրջանում ԱՄՆ-ի նախաձեռնած տնտեսական լայնամասշտաբ բարեփոխումների հետևանքով ընտանիքն իր գործառույթներով և դրանց հավաքական ընկալմամբ ենթարկվեց որոշակի փոխակերպումների և մասնակիորեն փոխարինվեց մեկ այլ՝ հարակից սոցիալական օրգանիզմով՝ *ընկերությամբ (կոմպանիա),* և ընտանիքն իր շատ գործառույթներ պարզապես զիջեց հենց ընկերությանը[2]: Այսպիսով՝ Ճապոնիայի տնտեսության արդյունաբերականացմամբ և խոշոր ընկերությունների ի հայտ գալով ավանդական ընտանիքը ենթարկվեց որոշ գործառութային օրինաչափ փոխակերպումների, ինչը ոչ միայն չփոխեց ճապոնական հասարակության և էթնիկական ինքնության խմբային կողմնորոշումը, այլ հակառակը՝ ավելի ամրապնդեց այն: Ընկերությունը սկսեց ընկալվել որպես ընտանիք, նրա աշխատողները՝ որպես միևնույն ընտանիքի անդամներ, իսկ ընկերության ղեկավարը՝ որպես այդ ընտանիքի հայր: Ընկերության նոր աշխատողը նոր միջավայրում ընդունվում է ճիշտ այնպես, ինչպես ընտանիքում կընդունեին նոր զավակի ծնունդը, նոր որդեգրված երեխային կամ հարսին[3]: Այս գաղափարախոսությունը վկայում է ճապոնացիների նվիրվածությունը այն սոցիալական օրգանիզմին, որից նա իր կյանքի համարյա ամբողջ ընթացքում եկամուտներ է ստանում: Անհրաժեշտ է նշել, որ ավանդական ընտանիքի գաղափարախոսությունը բավական կիրառելի է նաև Հայաստանում. սա իր ուրույն տեղն ու դերն ունի հայկական էթնոմշակութային դիմագծի մեջ, սակայն արդեն ընկերությանը վերաբերել այնպես, ինչպես ընտանիքիդ, սա ամենևին բացակայում է հայ իրականությունից, ինչն էլ հանգեցնում է բազմաթիվ խնդիրների, մինչև անգամ տնտեսական մտածողության ձևավորման բացակայությանը:

Ինչպես ներկայացված է գծապատկեր 3-ում, բուրգի հիմքում են էթնոմշակութային գործոնները, որոնց հենքի վրա էլ ձևավորվում է աշխարհին հայտնի ճապոնական մենեջմենթը: Վերջինս ներկայացնելիս ուշադրությունը սևեռելու ենք հետևյալ առանձնահատկությունների և սկզբունքների վրա՝ **խմբին նվիրվածություն**, **ֆիրմայի կորպորատիվ ոգու արմատավորում և որոշումների կայացման գործընթաց**: Ճապոնական մենեջմենթի հիմնական առանձնահատկություններից մեկը *խմբին նվիրվածությունը* շեշտելն է, խմբային հոգեբանությունը: Մարդկանց ոչ մի հանրության մեջ թերևս այնպես բարձր չեն գնահատում խմբային մթնոլորտը, հոգեբանական կլիման խմբում, ինչպես Ճապոնիայում: Աշխատանքի արտադրողականության բարձրացումը կամ անկումը շաղկապվում է աշխատանքային խմբի համերաշխության աստիճանին և նրա «անսայթաք» գործունեությանը: Խմբին նվիրվածության գաղափարախո-

[1] Maraini F., Meeting with Japan. New York, Viking Press, 1960, էջ 365:
[2] Ֆարմանյան Ս., Ճապոնական հրաշքները և ճապոնացիները, Երևան, 2012 թ., էջ 85:
[3] Ֆարմանյան Ս., Ճապոնական հրաշքները և ճապոնացիները, Երևան, 2012 թ., էջ 86:

սությունը փոխադրվում է ցանկացած ճապոնական ընկերություն և կիրառվում ճապոնական մենեջմենթում, դառնում անձնակազմի աշխատանքային ջանքերի ուժեղագույն խթանիչը, ջանքեր, որոնց կարևորագույն նպատակն է ամրապնդել ֆիրմայի ներկա դիրքերը և պատրաստվել ապագայում նոր դիրքեր գրավելուն: Այսպիսով՝ ճապոնացիների խմբային աշխատանքային գործողությունները ստեղծվում են փոքր խմբերի ջանքերով: Այդ խմբերին անհրաժեշտ ուղղվածություն տալու համար ճապոնական ֆիրմայում արմատավորվում է բարոյական հատուկ ոգի՝ ***կորպորատիվ ոգի***:

Աշխատողների «ցմահ» վարձումը, աշխատողի վարձատրությունը և անձնակազմի առաջքաշումն ըստ ավագության, փոքր խմբի հոգեբանության արմատավորումը՝ այս ամենը ճապոնական մենեջմենթի բաղադրատարրերն են, և դրանք կապակցող կամ «ցեմենտող» ուժը ֆիրմայի կորպորատիվ ոգին է[1]: Դրա գլխավոր բաղադրիչը նվիրվածությունն է իդեալներին, ինչը դաստիարակվում է աշխատողին ֆիրմայի գործերին, նրա մթնոլորտին, խնդիրներին, առաքելությանը հաղորդակից դարձնելու համակարգի միջոցով: Ճապոնիայում այդ խնդիրը լուծվում է բազմազան մեթոդներով ու ձևերով՝ սկսած բանվորներին կարևորագույն խնդիրների լուծումներ վստահելուց մինչև կոլեկտիվով բազմազան մշակութային, սպորտային միջոցառումներին մասնակցելը: Կորպորատիվ ոգին, որն արտահայտվում է ֆիրմայի իդեալներին աշխատողների նվիրվածության մեջ, Ճապոնիայում թե՛ նպատակ է, թե՛ կառավարման միջոց: Ճապոնական մենեջմենթը ջանք չի խնայում այդ ոգին պատշաճ բարձրության վրա պահելու համար:

Գծապատկեր 3-ում բուրգի երկրորդ մակարդակի՝ ճապոնական մենեջմենթի կարևորագույն բաղադրամասերից է **որոշումների կայացման գործընթացը**: Որոշումներ ընդունելու ճապոնական համակարգը հիմնված է ազգային ավանդույթների վրա, արտացոլում է ճապոնացիների ազգահոգեբանական առանձնահատկությունները և կողմնորոշված է դեպի նրանց սոցիալական արժեքները[2]: Այդ է պատճառը, որ մեր ներկայացրած «ճապոնական հրաշքի» իրագործման գործոնները արտահայտող բուրգի հիմքում դրվել են էթնոմշակութային արժեքները, որոնց վրա էլ կառուցվել են մյուս բաժինները՝ ճապոնական մենեջմենթը և ֆինանսատնտեսական գործոնները: Այսպես՝ Ճապոնիայում որոշումներ կայացնելու էական առանձնահատկությունը ***համաձայնեցման*** սկզբունքն է: Ճապոնացիները նախընտրում են նախնական համաձայնեցումները, խորհրդակցությունները և ոչ ձևական բանակցությունները: Անհրաժեշտ է նշել, որ Ճապոնիայում որոշումներ ընդունելու գործընթացին բնորոշ է մի այնպիսի երևույթ, ինչպիսին «նեմավասին» է[3], որը նշանակում է «բախումների մեղմացում», այսինքն՝ տարաձայնությունների բացառում, հակասությունների

---

[1] Պրոնիկով Վ. Ա., Լադանով Ի. Դ., Ճապոնացիները: ազգահոգեբան. ակնարկներ / Ռուսերեն երկրորդ հրատ. թարգ. Կ. Կ. Այվազյանը, Ե., 1989, էջ 303:

[2] Поршнев Б. Ф., Социальная психология и история, М., 1979, стр. 68.

[3] Владимиров В. А., О национальном характере японцев.- “Азия и Африка сегодня”,. 1976, N 2.

թուլացում: Շահագրգիռ անձանց բազմաթիվ ժողովների և նրանց արձագանքը պահանջող խնդիրների հանգամանալի քննարկման շնորհիվ ստացվում է այնպես, որ ընդունված որոշումը բխում է խմբից, և այդ պատճառով պատասխանատվությունն ընկնում է ոչ թե մեկի վրա, այլ ամբողջ խմբի: Ահա հենց սա էլ ճապոնացիների էթնոմշակութային սկզբունքներից մեկն է՝ «խմբայնությունը», որը ներկայացրել ենք վերևում, ինչն էլ հիմք է դարձել ճապոնական մենեջմենթի՝ բուրգի երկրորդ մակարդակի ձևավորման համար:

Հարկ է փաստել, որ «ճապոնական տնտեսական հրաշքը» պայմանավորված է նաև մի շարք ***ֆինանսատնտեսական գործոններով***, որոնք գտնվում են մեր ներկայացրած բուրգի ամենավերևի մասում և արտահայտված են մի շարք կառուցվածքային տարրերով՝ ֆինանսական լծակներ, ներդրումային, հարկային և այլ քաղաքականություններ:

Ըստ «ճապոնական հրաշքը» հետազոտողներ, Բրուքինգյան ինստիտուտի ներկայացուցիչներ Է. Դենիսոնի և Ու. Չանգի[1] առավել հեղինակավոր ուսումնասիրություններից մեկի՝ 1950–1960-ական թթ. Ճապոնիայում արձանագրված գերբարձր տնտեսական աճի հիմնական գործոնների շարքը (դրանց նշանակության նվազման կարգով) պետք է դասել *ներդրումների աճը, նոր տեխնոլոգիաների կիրառումը, մասշտաբի էֆեկտը, մարդկային կապիտալը, ռեսուրսների վերաբաշխումը (գյուղատնտեսությունից՝ արտադրություն):*

Ֆինանսատնտեսական գործոններն առավել լավ պատկերացնելու համար ներկայացնենք «ճապոնական հրաշքի» իրագործմանը նպաստող «ֆինանսական բանաձև», որը կարող է արտահայտվել հետևյալ տրամաբանական շղթայով[2].

խնայողությունների և կուտակումների բարձր մակարդակ → մասշտաբային ներդրումներ առավել կապիտալատար ճյուղերում (պետության ընտրությամբ առավել հեռանկարային ճյուղեր) → մակրոտնտեսական կայունություն (ինֆլյացիոն ցածր տեմպ, բացակայություն (մինչև 1965 թ.)/ պետական բյուջեի դեֆիցիտի ցածր մակարդակ) → ազգային արժույթի ֆիքսված իջեցված կուրս՝ նպաստող ներմուծման փոխարինմանը և արտահանման զարգացմանը → տեխնոլոգիաների ներմուծման խրախուսման դեպքում օտարերկրյա կապիտալի սահմանափակում → արտահանմանը պետական օժանդակություն → կապիտալի հաշվեկշռի վերահսկողություն և դրա աստիճանական ազատականացում → տնտեսության լայնածավալ հարկային խրախուսում → բանկային համակարգի վերահսկողություն:

Վերը ներկայացված շղթայի շրջանակներում ներկայացնենք «ճապոնական հրաշքին» նպաստող տնտեսական քաղաքականությունների առանձնահատկությունները, այդ թվում՝ ներդրումային, հարկային, դրամավարկային:

Ներդրումների աճը համարվում է «ճապոնական հրաշքի» իրագործման կարևորագույն գործոններից մեկը. 1950-ական թթ. սկզբին մասնավոր

---

[1] Denison E. F., Chung W. K., How Japan's Economy Grew So Fast. Wash.: Brookings Institution, 1976.

[2] Финансовые стратегии модернизации экономики: мировая практика / под ред. Я. М. Миркина. М. : Магистр, 2014, стр. 63-64.

ներդրումները կազմում էին ՀՆԱ-ի 17.2%-ը, իսկ 1970 թթ. սկզբին դրանք աճեցին և հասան ՀՆԱ-ի 30.5%-ին: Այդ ժամանակաշրջանում խնայողություններն աճեցին ՀՆԱ-ի 16.5%-ից մինչև 31.9%[1]: Անհրաժեշտ է նշել, որ հատկապես 1950-ական թվականներին աճի հզոր գործոն դարձավ պետության կողմից *բնակչության խնայողությունների* ուղղումը դեպի տնտեսություն, որն իրականացվում էր այնպիսի ինստիտուտների միջոցով, ինչպիսիք են պետական փոստային խնայողական համակարգը և պետության բյուջեն՝ իր պետական բանկային ցանցով: 1950–1960-ական թթ. պետության կողմից հովանավորվող ներդրումային պայթյունն այնքան մեծ էր, որ հանգեցրեց արտադրական կարողությունների զգալի գերազանցմանը, որն էլ իր հերթին պատճառ հանդիսացավ 1970 թ. առաջին կեսում ներդրումների նվազմանը: Հենց խնայողությունների և կուտակումների ծայրահեղ բարձր նորման դարձավ Ճապոնիայում հետպատերազմյան արագ տնտեսական աճի աղբյուր: Երկիրը, ի տարբերություն արդիականացման միջով անցնող շատ այլ երկրների, օգտագործել է օտարերկրյա կապիտալի վրա թույլ հենումով ներքին աճի պահուստներ:

Բարեփոխումների ժամանակահատվածում ֆիսկալ քաղաքականության հիմնական գործիք էր համարվում **հարկային լծակների** կիրառումը: 1951 թվականից տնտեսական զարգացման հարկային խթանները դարձան Ճապոնիայի արդյունաբերական քաղաքականության հիմնական գործիքներից մեկը: Աճի առավել բարձր տեմպերի ժամանակահատվածը (1950-1960 թթ.) համընկավ նվազագույն հարկային բեռի ժամանակահատվածի հետ: 1951-1970 թթ., երբ իրական ՀՆԱ-ի միջին տարեկան աճը 9% էր, ընդհանուր հարկային բեռը (բացառությամբ սոցիալական հարկերի) 22.4%-ից նվազեց ազգային եկամուտի մինչև 18.9%, 1970-ականներին հարկումը բարձրացավ մինչև 22.8%՝ պայմանավորված ՀՆԱ-ի աճի տեմպերի մինչև 4,8% (1980 թ.)[2] նվազմամբ: Այդ ժամանակահատվածում ակտիվորեն կիրառվում էին պետության կողմից գերակա ճանաչված ճյուղերի համար արտոնյալ հարկման համակարգ, մասնավորապես[3].

- պատենտների, նոու-հաուների (55%) և հեղինակային իրավունքների արտահանման հարկման ենթակա եկամուտից հատուկ մասհանումներ, բացի ֆիլմերի ցուցադրություններից ռոյալթիի (20%), արտասահմանյան շինարարական նախագծերով պլանավորման և խորհրդատվության եկամուտներից (20%) ,
- տեղական հարկերի վճարումից ազատում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական մշակումներում (ԳՀՓԿՄ) ներդրումների իրականացման ժամանակ,
- արտադրական ռացիոնալիզացման շրջանակներում սահմանված ներդրումներով արագացված ամորտիզացում (ներառյալ՝ ԳՀՓԿՄ-ում բոլոր ներդրումներով արագացված ամորտիզացիան, 50%-ոց ամորտիզացիա կառավա-

[1] Henderson D. R., Japan and the Myth of MITI. www.econlib.org.
[2] Henderson D. R., Japan and the Myth of MITI (www.econlib.org).
[3] Johnson Ch. A., MITI and the Japanese Miracle, p. 218, 234–236.

ության կողմից հիմնադրված ճյուղերի համար նոր սարքավորման շահագործման առաջին տարում),

- ռազմավարական նշանակության սարքավորման ներմուծական մաքսային սակագների վերացում, սահմանված ճյուղերի համար հումքի ներմուծման ժամանակ վճարված մաքսային հարկերի փոխհատուցում,
- ներմուծվող տեխնոլոգիաներով ռոյալթիի չափերի նվազեցում:

Հետպատերազմյան շրջանում ճապոնական ձեռնարկություններում կապիտալի զգալի պակասը հանգեցրեց պետության կողմից 1950-ական թվականներին **տնտեսության վարկավորման** երկմակարդակ համակարգի ստեղծմանը, որոնք արտահայտվում էին մասնավոր քաղաքային և մասնագիտացված պետական բանկերով: Դրանց ֆինանսավորման հիմնական աղբյուր դարձան պետական փոստային խնայողական համակարգի միջոցները, որոնք տնօրինում էր ֆինանսների նախարարությունը: Ի սկզբանե օգտագործվում էին նաև հաշվի միջոցները, որի վրա կուտակվում էր օգնության շրջանակներում ԱՄՆ-ի կողմից մատակարարվող ապրանքների վաճառքից ստացված հասույթը:

Մեծածավալ վարկավորումը նպաստում էր արտադրության՝ պետության փաստացի վերահսկողության տակ գտնվելուն: Ճապոնիայի բանկը, խուսափելով չափազանց մեծ դրամական զանգվածի ընդլայնումից (դրամական էքսպանսիա) և հնարավոր ճգնաժամից, սկսեց հենվել MITI-ի (Ministry of International Trade and Industry) գնահատականների վրա՝ կապված վարկերի տրման հետ առանձին ճյուղերի կողմից պահանջվող կապիտալի դեպքում՝ և փորձում էր իր վարկային քաղաքականության մեջ չշեղվել աջակցության ենթակա ճյուղերի վերաբերյալ MITI-ի պատկերացումներից՝ դրամական խնդիրները չխորացնելու նպատակով: Պետական բանկերը ռազմավարական նշանակություն ունեցող ընկերություններին տրամադրում էին ցածր տոկոսով վարկեր:

Այսպիսով՝ պետական բանկերի ցանցերի միջոցով պետության կողմից տնտեսության ֆինանսական աջակցությունը լրացվում էր անուղղակի կերպով՝ քաղաքային բանկերի կողմից տնտեսության չափից ավել վարկավորման համակարգի միջոցով (overloaning), ինչը հանգեցրեց այն ընդունողների չափից ավելի փոխառմանը (overborrowing): Անցկացվում էր հեռանկարային ճյուղերում վարկերի կենտրոնացման քաղաքականություն: Ճապոնիայի բանկի կողմից կիրառվող վարկավորման ծավալների աճի սահմանափակումները վերացան միայն 1994 թ.: 1950–60-ականներին պետությունը վարում էր նաև վարկերի ռացիոնալացման քաղաքականություն:

Եզրակացություններ և առաջարկություններ

Եզրափակելով հետազոտությունը՝ կարող ենք փաստել, որ «ճապոնական հրաշքը» որոշակի երկրի պատմության տվյալ ժամանակահատվածում ու որոշակի աշխարհաքաղաքական միջավայրում գոյություն ունեցած տասնյակ գործոնների համադրման արգասիք է, որն իր էությամբ բացառիկ է և ենթակա չէ մեխանիկական ընդօրինակման: Ինչպես նշել էինք ներածությունում, սույն հոդվածի հիմնական նպատակն է բացահայտել Ճապոնիայի զարգացման՝

որպես հաջողված փորձի հիմքում ընկած փիլիսոփայությունը, որի շնորհիվ որոշ չափով հնարավոր կլինի համեմատության մեջ նախանշել Հայաստանի իրականության մեջ Ճապոնիայի փորձի կիրառելի տարրերը և զարգացման հանդեպ պետության և հասարակության կողմից ցուցաբերվող մոտեցման առանձնահատկությունները:

Ճապոնիայի հետպատերազմյան բացառիկ արդիականացումը պայմանավորող հիմնական գործոններից մեկը ճապոնացիների էթնիկական ինքնությունն է, մասնավորապես՝ խմբային գիտակցությունը կանխորոշեց հանրային և քաղաքական մի շարք գործընթացների անցնցում ընթացքը, ինչն էլ էական դեր խաղաց Ճապոնիայի տնտեսական առաջընթացի գործում: Ինչպես ներկայացված է գծապատակեր 2-ում, էթնոմշակութային գործոնների հենքի վրա կառուցված մյուս երկու գործոնների ամբողջականության շնորհիվ իրականություն դարձավ «ճապոնական հրաշքը»:

Եթե փորձենք առանձնացնել մի քանի խոշոր տնտեսական լծակներ, որոնք նպաստեցին «ճապոնական հրաշքին», նախ և առաջ դա ***էժան աշխատուժն էր:*** Ճապոնիան օգտագործեց էժան աշխատուժի առավելությունը, մինչև որ սեփական տնտեսության որակապես զարգանալու և աշխատուժի թանկանալու արդյունքում այդ փորձը նրանից վերցրին Հարավային Կորեան, Թայվանը, Սինգապուրը և Հոնկոնգը, ինչպես նաև տարածաշրջանի մի քանի այլ պետություններ: Հաջորդ կարևոր գործոնն այն էր որ Ճապոնիան ստացավ ***արտաքին օգնություն և ներդրումների*** որակյալ, երկարաժամկետ բնույթի այնպիսի մի համակցություն, որի ծավալն այսօրվա չափանիշներից ելնելով դժվար է անգամ պատկերացնել: Դա նույնն է, եթե Հայաստանում երեսուն տարի շարունակ ամեն տարի իրականացվի միջինը վեց-յոթ միլիարդ դոլարի համախառն ֆինանսական ներդրում՝ գումարած ևս մի քանի միլիարդ դոլարի հասնող նորագույն տեխնոլոգիաների ներհոսք: Սակայն նկատենք, որ նրանք երկար ժամանակ չէին կարողանում ԱՄՆ-ին այս ամենի դիմաց վարձահատույց լինել, ինչն իրենցից շատ ժամանակ և ջանքեր պահանջեց: Անհրաժեշտ է նշել, որ «տնտեսական հրաշքի» երկրների վերելքի ժամանակաշրջանը փակ ինֆորմացիոն համակարգերի դարաշրջան էր, երբ չկային համացանց և գլոբալացում, երբ նորագույն տեխնոլոգիաների հնացման ցիկլերը կազմում էին 10-15 տարի, այլ ոչ թե 2-3, ինչպես հիմա: Սա մեծ առավելություն էր տալիս այն ժամանակ իրականացվող տնտեսական ռեֆորմներին և ներդրումների արդարացվածությանը: Աշխարհը փոխվել է, փոխվել են խաղի կանոններն ու ներքին բաղադրիչները, աճում են բարդ տեխնոլոգիական բևեռացումը և դրա ստացման ֆինանսական և գիտական գինը: Ավելին, նախկին «տնտեսական հրաշքի» երկրներից շատերն այսօր կառուցվածքային խոր ճգնաժամ են ապրում, քանի որ տնտեսական աճի նախկինում հաջողված մոդելները դժվարությամբ են հարմարվում ներկա գլոբալացման ժամանակաշրջանին: Եվ եթե Հայաստանին հաջողվի այս գլոբալացվող և ռացիոնալ դարում բոլորովին այլ հիմքերով «տնտեսական հրաշք» իրականացնել, ապա նորագույն տնտեսական դարաշրջանում

մենք առաջինը կլինենք, ինչպես որ եղանք հեղափոխություն կատարած երկրների շարքում իրականացնելով «ոչ բռնի թավշյա հեղափոխություն» :

Վերոնշյալ եզրահանգումների հիման վրա կատարենք *կիրառական առաջարկություններ.*

Մենեջմենթի ոլորտ

1. Հետևել ճապոնական մենեջմենթի առանձնահատկություններին, մասնավորապես՝ *խմբին նվիրվածության շեշտադրմանը*, ինչն էլ հենց հանգեցնում է խմբային փոխգործողությունների, որի շնորհիվ էլ պետական կամ ազգային նպատակներին հասնելու համար ճապոնացիները զոհում են անձնական շահը հանուն խմբի, պետության կամ ազգի: Նման հոգեբանությունը շատ կարևոր է մեզ պես փոքր ու սահմանափակ ռեսուրսներով և ոչ բարենպաստ տարածաշրջանում գտնվող պետության համար:
2. Օգտագործել ***որոշումների կայացման գործընթացի համաձայնեցման սկզբունքը***: Երբ շահագրգիռ անձանց կողմից առաջադրած խնդիրների հանգամանալից քննարկման շնորհիվ ընդունված որոշումն արդեն բխում է խմբից, դրա համար պատասխանատվությունն ընկնում է ոչ թե մեկի վրա, այլ ամբողջ խմբի, իսկ այս դեպքում կայացված որոշումն առավել ընդունելի է դառնում, կատարված փոփոխությունները չեն կարող հանգեցնել ընդվզումների կամ սթրեսների:

Ֆինանսատնտեսական ոլորտ

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ճապոնական հրաշքի» կարևորագույն գործոններից մեկն էլ բնակչության խնայողությունների նպատակային օգտագործումն էր, առաջարկում ենք խթանել ՀՀ բնակչությանը՝ կատարելու խնայողություններ, բայց 21–րդ դարում ունենալով այլ դրսևորումներ, մասնավորապես՝ ազատ դրամական միջոցները ուղղել դեպի կապիտալի շուկաներ՝ ներդրումներ կատարելով, որի շնորհիվ Հայաստանում կակտիվանա բաժնեմասային ֆինանսավորման մշակույթը, ինչից կօգտվեն և՛ ձեռներեցը, և՛ ազատ դրամական միջոցի տերը, և՛ ի վերջո նաև պետությունը՝ տնտեսական ակտիվություն արձանագրելով: Այս ամենի արդյունքում ի վերջո ՀՀ տնտեսությունը զարգացում կարձանագրի նաև արժեթղթերի շուկայում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Պետրոսյան Լ. Պ., Ճապոնիայի տնտեսական զարգացումը, Եր., 1976, 102 էջ:
2. Պրոնիկով Վ. Ա.,. Լադանով Ի. Դ., Ճապոնացիները: ազգահոգեբան. ակնարկներ/ Ռուս. երկրորդ հրատ. թարգ. Կ. Կ. Այվազյանը, Եր., 1989, 399 էջ:
3. Ֆարմանյան Ս., Ճապոնական հրաշքները և ճապոնացիները, Եր., 2012, 226 էջ:
4. Владимиров В. А., О национальном характере японцев. “Азия и Африка сегодня”, 1976, N 2.

5. Корсунсний А., Промышленность Японии и США, МЭМО, N 1, 1975, стр. 85.
6. Поршнев Б. Ф., Социальная психология и история.-М., 1979, стр. 68.
7. Саркисов К. О., "Россия и Япония: Сто лет отношений", Москва, 2015, стр. 85.
8. Финансовые стратегии модернизации экономики: мировая практика / под ред. Я. М. Миркина. М.: Магистр, 2014, стр 63-64.
9. Экономические проблемы современной Японии, МЭМО, N 8, 1969, стр. 92.
10. Ayal E., Value Systems and Economic Development in Japan and Thailand, Journal of Social Issues, v. 19, N 1, 1963, p. 41.
11. Benedict R., The Chrysanthemum and the Sword. Boston: Houghhton Miffin, 1946, p. 32.
12. Brzezinski Z., The Fragile Blossom: Crisis and Change in Japan. New York: Harper and Row, 1972, pp. 24 -108.
13. Denison E. F., Chung W. K., How Japan's Economy Grew So Fast. Wash.: Brookings Institution, 1976.
14. Henderson D. R., Japan and the Myth of MITI.
15. Henderson D. R., Japan and the Myth of MITI, Institution, 1976. www.econlib.org
16. Jo M., Japanese Traditional Values and Industrialization, international social Science Review, v. 62, N 1, 1987, p. 7.
17. Johnson Ch. A., MITI and the Japanese Miracle, p. 218, 234–236.
18. Jonson Ch., MITI and Japanese Miracle, the Growth of Industrial Policy 1925-1975, Stanford, 1982, p. 128.
19. Jonson Chalmers. MITI and the Japanese Miracle: The Growth of Industrial Policy, 1925-1975, Stanford, Stanford University Press, 1982, p. 86.
20. Kanemori Y., Postwar Japan: Lessons for Asia. New York, Columbia University Press, 1988.
21. Kosaka M., A History of Postwar Japan. Tokyo, 1972, p. 65.
22. Kuwabara T., Japan and Western Civilization: Essays on Comparative Culture. Tokyo, University of Tokyo Press, 1986, p. 125.
23. Maraini F., Meeting with Japan. New York, Viking Press, 1960, էջ 365.
24. Nakane Ch., Japanese Society, University of California Press, 1970.
25. Richard Kneller, Danny McGowan, Tomohiko Inui, Toshiyuki Matsuura, Globalisation, multinationals and productivity in Japan's lost decade, Journal of the Japanese and international Economies 26(2012), p. 110-128.
26. Smith D., Japan since 1945: The Rise of an Economic, London Mac Millan Press, 1945, p. 42.
27. Sunny Mewati. How did Japan rebuild itself and become an advanced nation and a major economic power in the aftermath of the World War II?
28. «The Marshall Plan – «The Europeans did the job themselves». Moments in U.S. Diplomatic History. «Association for Diplomatic Studies and Training», https://adst.org/2015/05/the-marshall-plan-the-europeans-did-the-job-themselves/

29. https://countryeconomy.com/gdp/japan?fbclid=IwAR0PvlHIPV9ayFHzzGUySBHedCaJMfUYd3XhmIyleCCUajYgZPapeqKagoI
30. https://www.quora.com/How-did-Japan-rebuild-itself-and-become-an-advanced-nation-and-a-major-economic-power-in-the-aftermath-of-the-World-War-II
31. https://www.mofa.go.jp/territory/page1we_000006.html,
32. https://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL?locations=JP,
33. https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=JP,
34. https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.NE.ZS?locations=JP
35. https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?locations=JP-CN
36. https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=JP

References

1. Petrosyan L. P., Twaponiayi tntesakan zargacowmy', Er., 1976, 102 e'j:
2. Pronikov V. A.,. Ladanov I. D., Twaponacinery': azgahogeban. aknarkner/ R'ows. erkrord hrat. t'arg. K. K. Ayvazyany', Er., 1989, 399 e'j:
3. Farmanyan S., Twaponakan hrashqnery' & twaponacinery', Er., 2012, 226 e'j:
4. Vladimirov V. A., O nacional'nom haraktere japoncev. "Azija i Afrika sogodnja", 1976, N 2.
5. Korsunsnij A., Promyshlennost' Japonii i SShA, MJeMO, N 1, 1975, str. 85.
6. Porshnev B. F., Social'naja psihologija i istorija.-M., 1979, str. 68.
7. Sarkisov K. O., "Rossija i Japonija: Sto let otnoshenij", Moskva, 2015, str. 85.
8. Finansovye strategii modernizacii jekonomiki: mirovaja praktika / pod red. Ja. M. Mirkina. M.: Magistr, 2014, str 63-64.
9. Jekonomicheskie problemy sovremennoj Japonii, MJeMO, N 8, 1969, str. 92.Ayal E., Value Systems and Economic Development in Japan and Thailand, Journal of Social Issues, v. 19, N 1, 1963, p. 41.
10. Benedict R., The Chrysanthemum and the Sword. Boston: Houghhton Miffin, 1946, p. 32.
11. Brzezinski Z., The Fragile Blossom: Crisis and Change in Japan. New York: Harper and Row, 1972, pp. 24 -108.
12. Denison E. F., Chung W. K., How Japan's Economy Grew So Fast. Wash.: Brookings Institution, 1976.
13. Henderson D. R., Japan and the Myth of MITI.
14. Henderson D. R., Japan and the Myth of MITI, Institution, 1976. www.econlib.org
15. Jo M., Japanese Traditional Values and Industrialization, international social Science Review, v. 62, N 1, 1987, p. 7.
16. Johnson Ch. A., MITI and the Japanese Miracle, p. 218, 234–236.
17. Jonson Ch., MITI and Japanese Miracle, the Growth of Industrial Policy 1925-1975, Stanford, 1982, p. 128.
18. Jonson Chalmers. MITI and the Japanese Miracle: The Growth of Industrial Policy, 1925-1975, Stanford, Stanford University Press, 1982, p. 86.

19. Kanemori Y., Postwar Japan: Lessons for Asia. New York, Columbia University Press, 1988.
20. Kosaka M., A History of Postwar Japan. Tokyo, 1972, p. 65.
21. Kuwabara T., Japan and Western Civilization: Essays on Comparative Culture. Tokyo, University of Tokyo Press, 1986, p. 125.
22. Maraini F., Meeting with Japan. New York, Viking Press, 1960, էջ 365.
23. Nakane Ch., Japanese Society, University of California Press, 1970.
24. Richard Kneller, Danny McGowan, Tomohiko Inui, Toshiyuki Matsuura, Globalisation, multinationals and productivity in Japan's lost decade, Journal of the Japanese and international Economies 26(2012), p. 110-128.
25. Smith D., Japan since 1945: The Rise of an Economic, London Mac Millan Press, 1945, p. 42.
26. Sunny Mewati. How did Japan rebuild itself and become an advanced nation and a major economic power in the aftermath of the World War II?
27. «The Marshall Plan – «The Europeans did the job themselves». Moments in U.S. Diplomatic History. «Association for Diplomatic Studies and Training», https://adst.org/2015/05/the-marshall-plan-the-europeans-did-the-job-themselves/
28. https://countryeconomy.com/gdp/japan?fbclid=IwAR0PvlHIPV9ayFHzzGUySBHedCaJMfUYd3XhmIyleCCUajYgZPapeqKagoI
29. https://www.quora.com/How-did-Japan-rebuild-itself-and-become-an-advanced-nation-and-a-major-economic-power-in-the-aftermath-of-the-World-War-II
30. https://www.mofa.go.jp/territory/page1we_000006.html,
31. https://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL?locations=JP,
32. https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=JP,
33. https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.NE.ZS?locations=JP
34. https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?locations=JP-CN
35. https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=JP,

Սվետլանա Դալլաքյան

«ՃԱՊՈՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Համառոտագիր: Հոդվածում ներկայացվել են Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացմանը, տնտեսական զարգացմանը և «ճապոնական հրաշքին» նպաստող հիմնական գործոնները, ինչպես նաև բացահայտվել են Ճապոնիայում արձանագրված հեղափոխական փոփոխությունների պատճառահետևանքային կապերը: Հոդվածում «ճապոնական հրաշքը» դիտարկվել է որպես երեք կարևորագույն գործոնների ամբողջություն՝ էթնոմշակութային, ճապոնական մենեջմենթ, ֆինանսատնտեսական: Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում պարզ դարձավ, որ «ճապոնական հրաշքի» և ընդհանրապես ցանկացած երկրի ազգային տնտեսության առաջընթացի համար օբյեկտիվորեն անհրաժեշտ է որոշակի գործոնների համադրություն:

Բանալի բառեր. տնտեսության արդիականացում, տնտեսական հրաշք, կապիտուլյացիա, խմբայնություն, խնայողություններ, ներդրումներ, ճապոնական միլիտարիզմ, դրամավարկային քաղաքականություն

Светлана Даллакян

ФИЛОСОФИЯ «ЯПОНСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО ЧУДА»

Аннотация: В статье представлены ключевые факторы, способствующие послевоенной модернизации Японии, экономическому развитию и «японскому чуду», а также раскрыты причинно-следственные связи революционных изменений, зарегистрированных в Японии. В статье «японское чудо» рассмотрено в совокупности трех важнейших факторов: этнокультурный, японский менеджмент, финансово-экономический. В результате исследований и анализов стало ясным, что для «японского чуда» и вообще для прогресса национальной экономики любой страны объективно необходима комбинация нескольких факторов развития.

Ключевые слова: модернизация экономики, экономическое чудо, капитуляция, группировка, сбережения, инвестиции, японский милитаризм, денежно-кредитная политика

Svetlana Dallakyan

THE PHILOSOPHY OF THE "JAPANESE ECONOMIC MIRACLE"

Abstract: The article presents key factors contributing to post-war modernization of Japan, economic development and the "Japanese miracle", as well as discloses cause-and-effect relationship of revolutionary changes recorded in Japan. In the article the "Japanese miracle" has been considered in the aggregate of three most important factors: ethnocultural, Japanese management, financial and economic. As a result of studies and analysis it has become clear that for the "Japanese miracle" and progress of the national economy of any country in general, objectively a combination of certain factors is required.

Keywords: modernization of economy, economic miracle, capitulation, grouping, savings, investments, Japanese militarism, monetary policy

Քրիստինե Բաղդասարյան
Սոնա Մարգարյան

ՄԱԼԱՅԶԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» «ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՄՈԴԵԼԸ

Մալայզիան գտնվում է Հարավարևելյան Ասիայում: Երկրի տարածքը կազմում է 329.847 կմ², որը բաղկացած է երկու մասից՝ արևմտյան (Մալաքա թերակղզի) և արևելյան (Կալիմանտան կղզու հյուսիսային մասը)՝ բաժանված Հարավչինական ծովով: Արևմտյան մասը սահմանակից է Թաիլանդին, իսկ արևելյան մասը՝ Ինդոնեզիային և Բրունեյին: Բացի այդ, Մալայզիան նեղ ջրանցքով կապված է Սինգապուրի հետ: Երկիրը ծովային սահմաններ ունի նաև Վիետնամի և Ֆիլիպինների հետ: Արևմտյան մասին բաժին է ընկնում Մալայզիայի ընդհանուր տարածքի մոտ 39,7%-ը, իսկ ծովային սահմանը կազմում է 1931 կմ: Արևելյան մասը կազմում է երկրի ընդհանուր տարածքի 60.3%-ը և ունի 2607 կմ ծովային սահման: Մայրաքաղաքն է Կուալա Լումպուրը: Մալայզիան վարչականորեն բաժանված է 13 նահանգի՝ 9 սուլթանության և 4 նահանգապետության: Պաշտոնական լեզուն մալայերենն է, իսկ պետական կրոնը՝ իսլամը[1]:

Մալայզիան, որը նախկինում հայտնի էր որպես Մալայայի Ֆեդերացիա, Մեծ Բրիտանիայի գաղութատիրությունից անկախացել է 1957 թ.: Մալայայի Ֆեդերացիան ընդլայնվել է 1963 թ.՝ պաշտոնապես ճանաչվելով որպես Մալայզիա՝ իր կազմի մեջ ներառելով Սինգապուրը և բրիտանական նախկին երկու գաղութներ՝ Սաբահը և Բոռնեոն: Մալայզիան սահմանադրական միապետություն է, այսինքն՝ իշխանությունը պատկանում է վարչապետին:

2018 թ. Մալայզիայի բնակչությունը կազմել է 32.385 միլիոն մարդ՝ այդ ցուցանիշով զբաղեցնելով աշխարհում 44-րդ տեղը: Բնակչության 58%-ը կազմում են բումիպուտրաները՝ Մալայզիայի տեղաբնիկները, որոնց մեծ մասը մուսուլմաններ են, 24%-ը չինացիներ են, 8%-ը՝ հնդիկներ, իսկ մնացած 10%-ը՝ այլ ազգություններ:

Մալայզիայում 15 տարեկանից բարձր 21.321.500 մարդ է ապրում, ընդ որում՝ երկրի չափահաս բնակչության 94.71%-ը գրագետ է: Այս դեպքում չափահաս բնակչություն ասելով պետք է հասկանալ 15 տարեկանից բարձր բոլոր մարդկանց: Այդուհանդերձ, պետք է փաստել, որ շուրջ 1.190.449 մարդ անգրագետ է: Մասնավորապես՝ այստեղ չափահաս տղամարդկանց 96.18%-ը կամ 10.935.075 մարդ է գրագետ, իսկ 433.956 մարդ անգրագետ է: Չափահաս կանանց շրջանում գրագետները կազմում են 93.21% կամ 10.386.425 մարդ, իսկ անգրագետները կազմում են 756.493 մարդ: Գրագիտության մակարդակը երիտասարդ տղամարդկանց և կանանց համար համապատասխանաբար

[1] https://www.tpg.ua/ru/country/tab-country/?ct=93FA60A44CCD569311E31349C71B83AA

կազմում է 98.34% և 98.5%: Երիտասարդության շրջանում գրագիտության ընդհանուր մակարդակը կազմում է 98.42%: Երիտասարդներ խմբում ընդգրկված է 15-ից մինչև 24 տարեկանը ներառյալ բնակչությունը:

1960 թվականից ի վեր Մալայզիայի բնակչությունը աճում է տարեկան միջինը 7%-ով: Մուսուլմանները կազմում են երկրի ընդհանուր բնակչության գրեթե կեսից ավելին, և իսլամը պաշտոնապես ամրագրված է որպես Մալայզիայի միակ պետական կրոն: 1957 թվականին իսլամի «հաղթանակը» մալայացիների համար մեծ ձեռքբերում էր երկրի մյուս երկու խոշոր ազգությունների՝ չինացիների և հնդիկների հետ քաղաքականության փոխհամաձայնության ոլորտում: Դրա շնորհիվ մալայացիների իսլամական նախագիծը շարունակում է գերիշխել երկրի քաղաքական դաշտում:

Մալայզիացիների շրջանում աղքատության բարձր մակարդակը և 1969 թ. ռասայական ապստամբությունը Մալայզիայի կառավարությանը ստիպեցին 1970 թ. ձեռնարկել հրատապ քաղաքական գործողություններ: Իսլամը հռչակվեց պետական կրոն, իսկ մալայերենը՝ միակ պաշտոնական լեզու: Բայց սա իրականացված գլխավոր քայլը չէր: Սահմանադրորեն ընդունվեց միջհամայնքային փոխզիջման ծրագիր, ըստ որի՝ մտցվել է այլազգիների նկատմամբ մասնակի «դրական» խտրականության քաղաքականություն, փոխարենը բնիկները հարգում են նրանց բիզնես իրավունքները: Այս քայլը միտված էր երկրի հիմնական էթնիկական խմբերի միջև տնտեսական եկամուտի պակասուրդի կրճատմանը: Մալայզիայի կառավարության հիմնական նպատակն է տնտեսական աճը համատեղել ռասայական հավասարության հետ՝ քաղաքականապես կայուն մնալու և էթնիկ խմբերի միջև ներդաշնակ գոյակցությանը նպաստելու համար:

Մալայզիայի «տնտեսական հրաշքի» իրականացման գործում մեծ է նախկին վարչապետ Մահաթիր Մուհամմադի վաստակը, ով էապես նպաստեց Մալայզիայում հավասարակշռված բազմամշակութային հասարակության ձևավորմանը: Նախկին վարչապետի կարևոր ձեռքբերումը կայուն քաղաքական և խորհրդարանական համակարգի ստեղծումն էր, որտեղ բոլոր հիմնական էթնիկ խմբերը՝ մալայացիները, չինացիները և հնդիկները, կարողացան միավորվել կոալիցիաներում, ընդ որում՝ նման կոալիցիաներ ստեղծվեցին ոչ թե ընտրություններից հետո, այլ դրանցից առաջ: Ստեղծելով կոալիցիաներ՝ կուսակցությունները ընտրությունների ժամանակ ստանում են ավելի մեծ աջակցություն բոլոր էթնիկ խմբերի կողմից: Արդյունքում իշխանության եկող կուսակցությունը վայելում է երկրի բնակչության բացարձակ մեծամասնության աջակցությունը: Էթնիկ խմբերը համամասնորեն ստանում են իրենց տեղերը կառավարությունում: Ամենամեծ էթնիկ խումբը ստանում է առավելագույն քանակով պորտֆելներ: Ինչպես ցույց է տվել այս համակարգի փորձը, իշխանությունը կիսելու պատրաստակամությունը նվազեցնում է կոնֆլիկտային իրավիճակների հավանականությունը:

Մալայզիայի **տնտեսական վերելքի** ուղին շատ հետաքրքիր է և ուսանելիներից մեկն է աշխարհում: Մալայզիայի աննախադեպ տնտեսական առաջընթացի համար, որի շնորհիվ երկիրը վառելիքաէներգետիկ և գյուղատնտեսական

հումքի մատակարարից վերածվեց արագընթաց զարգացող արդյունաբերական պետության, հիմք է հանդիսացել Մահաթիր Մուհամմադի մշակած «**Մալայզիական պլանը**»: Այս պլանի հիմքում ընկած էր այսպես կոչված «**կորպորատիվ ազգայնականության**» գաղափարը, որի էությունը տնտեսության բարձր տեխնոլոգիական ոլորտներում կորպորացիաների ստեղծումն է: Նման կորպորացիաների համար այս փուլում առաջնայինը ոչ թե եկամուտն էր, այլ ամբողջ հասարակության շահի և բարգավաճման ուղղությամբ աշխատանքը: Պետությունը, իր հերթին, հանդես էր գալիս ոչ թե որպես ղեկավար, այլ որպես հավասար գործընկեր:

Մալայզիայի չորրորդ վարչապետ Մահաթիր Մուհամմադը պաշտոնավարել է 1981-2003 թթ.: Սա ոչ միայն երկրի, այլ նաև ամբողջ Ասիայի պատմության մեջ կառավարման ամենաերկար ժամկետն է: Մահաթիր Մուհամմադը առանցքային դերակատարում ունեցավ Մալայզիայի տնտեսական վերելքի գործում: Նրա կառավարման տարիներին Մալայզիան հումքի արդյունահանման և արտահանման վրա հիմնված տնտեսություն ունեցող երկրից վերածվեց առաջընթաց տեմպերով զարգացող պետության, որտեղ արդյունաբերության և ծառայությունների ոլորտի բաժինը ՀՆԱ-ում կազմում է 90%: Այսօր արդյունաբերական ապրանքների մասնաբաժինը կազմում է ընդհանուր արտահանման 85%-ը: Մալայզիայում շահագործվող ավտոմեքենաների 80%-ը տեղական արտադրության են:

Մահաթիր Մուհամմադի կառավարման տասը տարիների ընթացքում այս քաղաքականությունը ունեցավ տեսանելի արդյունքներ: Ստեղծվեցին նոր տիպի ազգային ընկերություններ ոչ միայն նավթային ոլորտում («Պետրոնաս»), այլև մեքենաշինական արդյունաբերության մեջ («Պրոտոն»), հեռուստատեսության ոլրտում («Astra» արբանյակային հեռարձակման ծառայություն) և այլն: Տասնամյակի ընթացքում (1988 թվականից մինչև 1997 թվականը) երկրում տնտեսական աճը միջին հաշվով կազմեց 10% (ինչը ամենադինամիկ ցուցանիշն էր Ասիայում), կենսամակարդակը աճեց շուրջ 20 անգամ: Փաստորեն աղքատությունը, որը շատ բնորոշ է զարգացող երկրներին, հաղթահարվեց[1]:

Մահաթիր Մուհամմադը առաջին հերթին սահմանազատեց կրոնն ու քաղաքականությունը, այնուհետև ձեռնամուխ եղավ երկրի զարգացմանը: Դրա շնորհիվ, ժամանակակից ձեռքբերումներին, տնտեսական աճին և բարձր կենսամակարդակին զուգահեռ, մալայզիական հասարակությանը հաջողվել է պահպանել իր կրոնական ու մշակութային ավանդույթները: Մահաթիր Մուհամմադը քննադատում էր «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը»՝ շեշտելով, որ զարգացող երկրների ժողովուրդներին անհրաժեշտ են, առաջին հերթին, ոչ թե հռչակագրային իրավունքներ, այլ տնտեսության իրական առաջընթաց: Ըստ Մահաթիր Մուհամմադի՝ հասարակության խոր շերտավորմամբ հարուստների կողմից աղքատների շահագործումն անխուսափելի է,

[1] https://sustainabledevelopment.un.org/content/documents/15881Malaysia.pdf

ինչը իր հերթին հանգեցնում է բախումների, անկայունության և նույնիսկ բռնության: Նման պայմաններում տնտեսական աճը կդանդաղի, ինչը թույլ չի տա արմատախիլ անել աղքատությունը և ապահովել ազգի զարգացումը:

Ելնելով իր երկրի փորձից՝ հենց Մահաթիր Մուհամմադն էր, որ առաջարկեց մուսուլմանական երկրների ինտեգրում և միասնական շուկայի ձևավորում՝ այսպես կոչված «**ոսկե դինարի**» հիման վրա, որն իրենից ներկայացնում է իրական արժեքային բովանդակություն ունեցող պայմանական արժույթ: 1997 թ. Ասիան ցնցած ֆինանսական ճգնաժամի ժամանակ Մահաթիր Մուհամմադը հրաժարվեց Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից առաջարկված օգնության փաթեթից՝ շեշտելով, որ իր երկիրը ինքնուրույն կհաղթահարի ճգնաժամը, ընդ որում՝ բավականաչափ արագ: Շատ շուտով ԱՄՀ-ն և Համաշխարհային բանկը հրապարակայնորեն հայտարարեցին, որ Մալազիայի վարչապետը իրավացի էր:

«Ասիական վագրերի», այդ թվում՝ նաև Մալայզիայի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ տնտեսության արդիականացումը իրականացվել է արևմտյան և ազգային զարգացման մոդելների համադրման միջոցով: Որպես Մալայզիայի արդիականացման նախաձեռնող՝ Մահաթիր Մուհամմադն իրականացրեց բնակչության մտածելակերպի, առևտրի նկատմամբ նրա վերաբերմունքի փոփոխություն, ինչպես նաև կրթության մակարդակի բարձրացմանն ուղղված բարեփոխումներ: Նա որպես թիրախ ընտրեց մի քանի հիմնական ուղղություն, և դրանց շուրջ սկսեցին պտտվել բոլոր մյուս բարեփոխումները: Հիմնական նպատակակետերն էին.

- բնակչության շրջանում աղքատության վերացում՝ անկախ ազգային պատկանելությունից և ռասայից,
- տնտեսական գործունեության որոշակի ոլորտներում ռասայական մենաշնորհի վերացում, քանի որ երկար ժամանակ առևտրի ոլորտի գերակշիռ մասը Մալայզիայի չինացիների ձեռքում էր, մինչդեռ մալայացիները պատմականորեն զբաղված էին գյուղատնտեսության ոլորտում,
- տնտեսական մշակույթի վերափոխում, որն ուղղված էր առևտրի և տեխնոլոգիաների բնագավառներում նոր հմտությունների ձեռքբերմանը,
- նոր մոտեցումների և արժեքների յուրացում:

Մահաթիր Մուհամմադի նոր տնտեսական քաղաքականությունը նախատեսում էր տնտեսության վերակազմավորում՝ ազգային հարստության առավել համաչափ բաշխվածության հասնելու համար: Այսպիսով՝ Մալայզիայի նոր տնտեսական քաղաքականության հիմքը կրթությունն ու մասնագիտական վերապատրաստումն էին:

Նոր տնտեսական քաղաքականությունը նպատակաուղղված էր երկրի տնտեսության՝ արտահանմանն ուղղված ոլորտների զարգացմանը: Դրա համար անհրաժեշտ էին բավականին մեծածավալ ներդրումներ: Միջոցները գտնվեցին հենց պետության ներսում, և այս խնդիրը լուծվեց. 1970-ականների կեսերին ներդրումների տոկոսադրույքն աճեց մինչև 18-19%: Կայուն աճ գրանցվեց գյուղատնտեսության ոլորտում: Սակայն ամբողջ տնտեսության զարգացումն ու առաջըն-

թացը ապահովելու համար ներքին ռեսուրսները բավարար չէին, և Մալայզիան սկսեց վարել օտարերկրյա ներդրումների ներգրավման քաղաքականություն: Օտարերկրյա ներդրողների համար մշակվեց **արտոնությունների հատուկ համակարգ**, ձևավորվեցին ազատ առևտրի գոտիներ:

Նոր տնտեսական քաղաքականության արդյունքները տպավորիչ են: Արդեն 1980-ականների կեսերից սկսած՝ աշխարհում ամբողջ կենցաղային էլեկտրատեխնիկայի ավելի քան քառորդ մասը արտադրվում է Մալայզիայում: Դա հիմնականում պայմանավորված է կոռուպցիայի համեմատաբար ցածր մակարդակով: Նույն ժամանակահատվածում երկրի տնտեսությունը համարվում էր ամենաակտիվ օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավողներից մեկն աշխարհում:

Որպես ասիական ժողովուրդների ավանդույթների ջատագով՝ Մահաթիր Մուհամմադը նշում էր, որ «ասիական արժեքների» մալայզիական տեսլականը հիմնված է մալայա-իսլամական մշակութային արժեքների վրա: Նրա կարծիքով՝ այդ արժեքները պետք է պաշտպանվեն արևմտյան մշակույթի և արժեքների կողմից կլանման վտանգից:

Մուհամմադը առաջնորդվում էր հետևյալ կարգախոսով. «Մալայացիները եվրոպացիների պես մարդիկ են, և ինչ կարող են անել նրանք, կարող ենք նաև մենք և նույնիսկ ավելի լավ»:

2003 թվականի հոկտեմբերին Մահաթիր Մուհամմադին վարչապետի պաշտոնում փոխարինեց Աբդուլլահ Ահմադ Բադավին, որը մինչ այդ երկար ժամանակ զբաղեցնում էր արտաքին գործերի նախարարի պաշտոնը, և նա գործնականում շարունակեց նախկին ղեկավարի կառավարման քաղաքականությունը: Ճիշտ է, երկրի քաղաքականությունը ԱՄՆ-ի նկատմամբ որոշակիորեն խստացվեց, այնուամենայնիվ տնտեսական առումով պետության արտաքին քաղաքականությունը մնաց նույնը: Բադավիի կառավարման տարիներին Մալայզիայի ներդրումային գրավչությունն ավելացավ: Ավելացավ նաև Չինաստանի հետ փոխադարձ առևտուրը:

Բադավին՝ որպես Մուհամմադի քաղաքականության հետևորդ, անկասկած հաջողության հասավ: Բադավիի կառավարման տարիներին գրանցվեցին ավելի մեծ տնտեսական հաջողություններ, սերտացան կապերը հիմնական ներդրողների հետ: Տնտեսության մեջ զգալի հաջողությունների հասնելով՝ անհրաժեշտ էր մտածել սոցիալական քաղաքականության մասին, այսինքն՝ սոցիալական գաղափարի մշակման մասին, որը «կմիավորեր» երկրի հասարակությունը նոր և միասնական գաղափարական հարթակում: Այդ պլատֆորմը դարձավ «իսլամական հադարի» («իսլամական զսպվածություն», «իսլամի վրա հիմնված արդիականացումը») հասկացությունը, որը վարչապետ Աբդուլլահ Ահմադ Բադավին փորձեց իրականացնել: Բադավին 2004 թ. Միավորված ազգերի կազմակերպությունում ունեցած ելույթի ժամանակ նշել է, որ «իսլամ հադարին» հանդիսանում է ամբողջական և համապարփակ հասկացություն: Իսլամական քաղաքակրթության փառահեղ ժառանգությունն իր բոլոր դրսևորումներով պետք է հանդես գա որպես մալայական ցեղի ոգեշնչման և նրա բարգավաճման աղբյուր»:

ՄԱԿ-ում Սինգապուրի մշտական ներկայացուցչի՝ հրապարակախոս, պրոֆեսոր Քիշոր Մահբուբանիի կարծիքով՝ ասիական շատ խոշոր պետությունների անկման պատճառը, առաջին հերթին, մտավոր գաղութացումն էր: Բայց Մահաթիր Մուհամմադը կարծում էր, որ ասիական շատ երկրներում սկսվել է մտավոր հետընթաց: Նրա կարծիքով՝ ասիական պետությունների վաղ հաջողությունները չեն ուղեկցվել մտավոր վերածննդով: Արդյունքում ասիացիները «բաց թողեցին» արդյունաբերական հեղափոխությունը: Այսօր հետխորհրդային Կենտրոնական Ասիայում ոչ այնքան բարենպաստ ժամանակներ են: Քանի դեռ ասիական քաղաքական գործիչները ձեռնամուխ չեն եղել իրական բարեփոխումների իրագործմանը, Կենտրոնական Ասիայի բոլոր պետությունները կշարունակեն հետ մնալ համաշխարհային բոլոր ստանդարտներից:

Մալայզիան առաջին զարգացող երկրներից մեկն էր, որը սահմանեց երկարաժամկետ ռազմավարություն՝ հաստատելով Vision 2020 հայեցակարգը:

Մալայզիայում հեղափոխությունը վերագրվում է արդյունաբերության ոլորտի զարգացման փուլերին, մասնավորապես՝ երկրորդ[1] և երրորդ[2] ընդհանուր արդյունաբերական պլանների (համապատասխանաբար 1995-2005 թթ. և 2006-2020 թթ.) մշակման ժամանակ մալայզիական տնտեսագետները կիրառել են ոչ միայն ազգային տնտեսությանը բնորոշ մոդելներ, այլև տեղայնացրել են ՄԱԿ-ի, Համաշխարհային բանկի և այլ միջազգային կազմակերպություններից կողմից գնահատված մոդելները, որոնք նախատեսված էին զարգացող տնտեսություն ունեցող երկրներում կիրառվելու համար: Հարկ ենք համարում ընդգծել, որ Մալայզիայի տնտեսական հրաշքը պայմանավորած է ոչ միայն տնտեսական գործիքների և մեխանիզմների մշակմամբ և կիրառմամբ, այլև նրանով, որ գաղափարական մոտեցումները վերցվել են իսլամական ուսմունքներից: Մասնավորապես՝ մարդու իրավունքների, օրենքի գերակայության և քաղաքացիական հասարակության նորմերի ճանաչմանը զուգահեռ հաշվի են առնվել նաև իսլամի ուսմունքները, որոնք համահունչ են մալայզիական ավանդույթներին և նորմերին[3]: Ըստ էության, Մալայզիայի երկարաժամկետ ռազմավարության նպատակը արդյունաբերության զարգացումն ու տնտեսական, ֆինանսական ենթակառուցվածքների բարելավումն է:

Ոչ պակաս կարևոր նշանակություն ունի գիտության և տեխնոլոգիաների ոլորտում նորարարությունների հետևողական քաղաքականությունը, որը սահմանված է կրթության ոլորտի զարգացման հնգամյա ծրագրում՝ հաշվի առնելով տնտեսության և հասարակության իրական հնարավորությունները: Միևնույն ժամանակ Մալայզիայում ռազմավարությունների և ծրագրերի մշակողները լավատեղյակ են տնտեսության փոխակերպման նոր հնարավորություններին,

---

[1] Second Industrial Master Plan (1996-2005). Kuala Lumpur, 1996. 13. Third Industrial Master Plan (2006-2020). Malaysia – Towards Global Competitiveness. Kuala Lumpur, 2006.

[2] Third Industrial Master Plan (2006-2020). Malaysia – Towards Global Competitiveness. Kuala Lumpur, 2006.

[3] Islam Hadhar, c. 23; 10, 25.08.09.

մասնավորապես՝ տնտեսության անցումը արդյունաբերականից դեպի տեղեկատվական տնտեսության կամ նորամուծական տնտեսության զարգացմանը: Այդ փոխակերպումը հաջողվում է միայն այն ժամանակ, երբ այս գործընթացում ներգրավված են լինում բոլոր ստեղծարար ուժերը՝ պետությունը, հանրային (հասարակական) և ոչ պետական (ոչ կառավարական) ոլորտները, ինչպես նաև սոցիալական բոլոր շերտերի ստեղծագործական մասը:

Մալայզիական տնտեսության արդյունաբերականացման ուղղությունը բխում է Նոր տնտեսական քաղաքականության (ՆՏՔ) նախկինում ձեռք բերված արդյունքներից: Դրա իրականացումը նախատեսում է ապահովել ներմուծման փոխարինման մոդելից անցում դեպի արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության: Այն ուղղված է նաև շրջաններում և նահանգներում սոցիալական և տնտեսական զարգացման ընդլայնմանը և ֆինանսական համահարթեցմանը:

Այդ է վկայում Մալայզիայում արտաքին առևտրաշրջանառության շարժը, որը 2009 թվականին բացասական նշանակությունից ստացել է դրական տեղաշարժ՝ - 21.9 տոկոսից դարձել է 12.12 տոկոս և շարունակաբար աճել է մինչև 2018 թվականը (**գծապատկեր** 1):

Գծապատկեր 1. *2008-2018 թթ. Մալայզիայի արտաքին առևտրաշրջանառությունը*[1]

Համաձայն **գծապատկեր** 1-ի՝ 2011 թվականին 2010 թվականի համեմատ 4 անգամ նվազել է ներմուծման հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ, ինչը շարունակվել է մինչև 2018 թվականը՝ կազնելով ՀՆԱ-ի 4.9 տոկոսը:

Երկրում սկսել է բարձրանալ համախառն զարգացման ինդեքսը, և 2005 թ. այն ամենաբարձրն է եղել խոշորացված համայնքներում՝ Կուալա Լումպուր, Փենանգ, Սելանգոր, Նեգերի Սեմբիլան և Մելաքա[2]: Ավելին, այս չորս վարչական միավորներում ստեղծվել է ՀՆԱ-ի գրեթե 2/3-րդը: Թերակղզու արևելյան շրջաններում՝ Քելանթանում, Թրենգանուում, Փահանգում, այդ ցուցանիշն ամենացածրն է եղել: Ստացվում է, որ Մալայզիայի կառավարությունը 1996-2005 թթ. առավել բարենպաստ ներդրումային միջավայր է ստեղծել երկրի կենտրոնական

[1] https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2018/09/24/world-economic-outlook-october-2018
[2] New Straight Times. Kuala Lumpur.

շրջանների համար, որի արդյունքում ներդրումներ/արդյունաբերական արտադրանք հարաբերակցությունը կազմել է միջինը 57.4%: Ավելին, ունենալով առավել զարգացած ֆինանսական ենթակառուցվածք՝ 2000-2005 թթ. օտարերկրյա ներդրումների մեծ մասը՝ 55.6%-ը սկսեց հոսել դեպի այս ոլորտ:

Գծապատկեր 2. *2008-2018 թթ. Մալայզիայի ընդհանուր ներդրումներն ու ազգային խնայողությունները (% ՀՆԱ-ի նկատմամբ)*[1]

Ըստ **գծապատկեր** 2-ի՝ ներդրումների ներհոսքի ավելացումը միջինը կազմել է ՀՆԱ-ի 24.15 տոկոսը, որը հոսել է դեպի Սարավակ քաղաք՝ նպաստելով վերամշակող արդյունաբերության զարգացմանը: Երկար ժամանակ ֆեդերացիայի տնտեսական զարգացումը հիմնվում էր օտարերկրյա ներդրումների ներհոսքի վրա, որը կախված էր համաշխարհային շուկայի պայմաններից: 2000-2005 թթ. արդեն շոշափելիորեն աշխուժացան համաշխարհային տնտեսության գլոբալիզացման գործընթացները, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) զարգացումը, կապիտալի միջսահմանային ընդլայնումը, միաձուլումները և բազմաթիվ ընկերությունների ձեռքբերումները[2]:

Ինչ վերաբերում է ազգային խնայողություններին, դրանք ամենաբարձրը եղել են 2018 թ.՝ ՀՆԱ-ի 38,6 տոկոսը, որը աստիճանաբար նվազել է՝ 2018 թ. հասնելով 25,71 տոկոսի (**գծապատկեր** 2):

Մալայզիայի սոցիալ-տնտեսական վերափոխումները ուղղորդված են ազգային տնտեսության գաղափարախոսության սկզբունքներով, կրոնական պահանջներով, ինչպես նաև պետություն-տնտեսություն-հասարակության գիտակցված շահերով: Ըստ էության, վերը գրվածների հիմքում առաջնայինը տնտեսության զարգացման ռազմավարական հայեցակարգն է, որտեղ սահմանվում են՝

[1] https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2018/09/24/world-economic-outlook-october-2018

[2] Third Industrial Master Plan (2006-2020). Malaysia – Towards Global Competitiveness. Kuala Lumpur, 2006.

1. պետության գեո-քաղաքական դիրքն ու մարտահրավերները, տարածաշրջաններում ոլորտների զարգացման գերակայությունները,
2. տնտեսական հայեցողական քաղաքականության իրականացումն ու ընտրված կուրսից շեղվելու բացառումը՝ անկախ քաղաքական հայացքների փոփոխությունից,
3. սոցիալական հրատապ խնդիրների առանձնացումը և կարճաժամկետում դրանց լուծման ձևաչափերի մշակումն ու իրագործումը:

Աղյուսակ 1

Մալայզիայի «տնտեսական հրաշքի» իրագործման մարմինն ու հանցավորության նվազման դրդապատճառները

Հանցավորության աստիճանի նվազում	**Ներքին գործերի նախարարություն**
Կոռուպցիայի դեմ պայքար	Վարչապետի դեպարտամենտ, որը պատասխանատու է օրենքի կիրարկման համար
Ուսուցման համակարգում սովորողների առաջադիմության բարելավում	Կրթության նախարար
Սոցիալապես անապահով ընտանիքների կենսամակարդակի բարելավում	Կանանց, ընտանիքի և հասարակական զարգացման նախարար
Գյուղատնտեսության հիմնական ենթակառուցվածքների բարելավում	Գյուղատնտեսության և տարածաշրջանային զարգացման նախարար
Հասարակական տրանսպորտի բարելավում	Տրանսպորտի նախարար

Մալայզիայի կառավարության առաջնային խնդիրների լուծումը, որը հետագայում բերեց «տնտեսական հրաշքի» առաջացմանը, պայմանավորված է եղել պետության կողմից իրականացվող կառուցողական բարեփոխումներով (**աղյուսակ** 1), որոնց արդյունքում էականորեն բարելավվել է մալայզիական ժողովրդի կյանքի որակն, ու լուծվել են հրատապ սոցիալական խնդիրներ, օրինակ՝ գործազրկության մակարդակի կրճատումը, ինչը 2018 թվականին կազմել է 3.33 տոկոս (**գծապատկեր** 3):



Գծապատկեր 3. *2008-2018 թթ. Մալայզիայի գործազրկության մակարդակը, %*

Մալայզիայի Հյուսիսային «տնտեսական միջանցքում» ներառված են Պերակի, Փենանգի, Քեդահի, Փերլիսի նահանգները: Հյուսիսային միջանցքի իրականացման մարմինը, որը պատասխանատու է տարածաշրջանի արդիականացման համար, ակտիվորեն ներգրավված է օտարերկրյա ներդրումների ներգրավման մեջ: Ըստ պլանի՝ Հյուսիսային տնտեսական միջանցքի զարգացման երկրորդ փուլը նախատեսված է 2013-2020 թվականների ժամանակահատվածի համար: Ընդ որում՝ զարգացման ուղղություններից են Փենանգ տարածաշրջանի բարձր տեխնոլոգիաների Կուլիմի պուրակը (Քեդայի նահանգ) և ներկայումս ստեղծված արդյունաբերական գոտին Կամունտինգի տարածաշրջանում (Պերակի նահանգ): Նշենք, որ 2008-2009 թվականներին Հյուսիսային միջանցքի կարգավորող մարմինը կարողացավ մոտ $ 500 միլիոն ներդրումներ ներգրավել Հյուսիսային տնտեսական միջանցքի զարգացման համար և ավելի քան 2 միլիարդ դոլար 2010 թվականին, իսկ 2011 թվականին՝ 3,3 միլիարդ դոլար: ԱՄՆ ներդրումներ ներգրավելու համար նախատեսված է նաև Իսկանդար-Մալայզիա միջանցքը: Տարածաշրջանում պետք է կառուցվի բիզնես կենտրոն՝ արագ և հարմարավետ գործառնություններ ապահովելու համար:

Նշենք, որ Իսկանդար-Մալայզիան մտադիր է դառնալ երկրի հարավային թերակղզու ամենազարգացած շրջանը, որտեղ կյանքը, ժամանցը, միջավայրը և բիզնեսը աննշանորեն խառնվում են աղմկոտ և պայծառ մետրոպոլիայում: Օրինակ՝ Sabah Development տնտեսական պլանում ընդգրկվում է Սաբահի ամբողջ նահանգը, ինչը հայտնի է իր մշակութային ժառանգությամբ, բնական ռեսուրսներով և մեծ ներուժ ունի ծառայությունների զարգացման առումով: Սաբահը ներդրողներին առաջարկում է հետևյալ հնարավորությունները՝ նավթ, գազ և էներգիա:

Նավթի և գազի պաշարները ներդրողներին հնարավորություն են տալիս ներդրումներ կատարել նավթաքիմիական և գազի արդյունաբերություններում: Մալայզիայի Նոր տնտեսական քաղաքականության առանցքային ոլորտներից են՝

1. **Գյուղատնտեսություն և բնական ռեսուրսներ**: Սաբահի բերրի գյուղատնտեսական հողը, ծովային պաշարներն ու անտառները հնարավորություն են տալիս զարգացնել անտառահատումների, փայտամշակման, սննդի և կենսատեխնոլոգիական արդյունաբերությունները: Սաբահին բաժին է ընկնում Մալայզիայի արմավենու յուղի արտադրության գրեթե 30% -ը:

2. **Մարդկային կապիտալ**: Կենսաբանական և մշակութային բազմազանությամբ (զբոսաշրջության զարգացման առումով) Սարավակի միջանցքը կապված է վերականգնվող էներգիայի աղբյուրների զարգացման հետ: Միջանցքի հիմքում ընկած են հիդրոէներգետիկ ռեսուրսները (28,000 մեգավատ), ածուխը (1,46 միլիարդ տոննա) և բնական գազը (ավելի քան մեկ տրիլիոն խորանարդ մետր):

Արևելյան ափի տնտեսական շրջանը զարգացման մեկ այլ միջանցք է, որը ծածկում է Քելանթանի, Թրենգանուի և Փահանգի նահանգները, ինչպես նաև Մերսինգի տարածաշրջանը: Այն միջազգային և տեղական խոշոր զբոսաշրջու-

թյան վայր է, առևտրի կենսունակ կենտրոն, ինչպես նաև ենթակառուցվածքների և նյութատեխնիկական կենտրոն: Մալայզիայի արտաքին առևտրի հիմնական գործընկերներն են՝ ԱՄՆ-ը (18.6%), Ճապոնիան (16,7%), Սինգապուրը (15%), ԵՄ երկրները (13,4%), Հարավային Կորեան և Հոնկոնգը, Թայվանը (յուրաքանչյուրը՝ 11.3%): Արտաքին առևտրի մինչև 3/4-ը իրականացվում է Սինգապուրի նավահանգստի միջոցով[1]:

Մալայզիան որդեգրել է արտաքին առևտրի ընդլայնման նպատակային քաղաքականություն՝ շեշտը դնելով արմավենու յուղի արտահանման վրա: Այն խթանելու համար Մալայզիայի կառավարությունը մաքսատուրքերից ազատել է 1 միլիոն տոննա նավթի արտահանումը, որը վաճառվում է արտաքին շուկաներում, և անտոկոս վարկեր սկսեց տրամադրել հավանական գնորդներին:

Մալայզիայում արտադրությունը ամենադինամիկ զարգացող ոլորտներից մեկն է, որը հայտնի է ինտեգրալային սխեմաների, ռադիոյի և հեռուստատեսության սարքավորումների, օդորակիչների արտադրություններով:

Երկրում նավթի ընդհանուր պաշարները գնահատվում են 3,63 միլիարդ բարել, որը նախատեսված է 15-20 տարվա շահագործման համար: Բնական գազի պաշարները՝ 1.6 տրիլիոն խորանարդ մետր, ապահովում են շահութաբերության բարձր մակարդակ 40-50 տարիների կտրվածքով[2]: Բնական հումքի արդյունահանումն իրականացնում է «Պետրոնաս» պետական ընկերությունը, որն ակտիվ է նաև երկրի սահմաններից դուրս՝ Իրանում, Ղազախստանում, Մյանմայում, Սուդանում, և շահագրգռված է համագործակցել Վիետնամի հետ:

Նշենք, որ Մալայզիայում գյուղատնտեսությունը կենտրոնացած է արդյունաբերական մշակաբույսերի արտադրության մեջ, մասնավորապես՝ արմավենու յուղի արտադրությամբ (շուրջ 11.8 միլիոն տոննա) Մալայզիան աշխարհում զբաղեցնում է առաջին, իսկ բնական ռետինի արտադրությամբ (շուրջ՝ 580 հազար տոննա)՝ երկրորդ տեղը:

Այսպիսով՝ Մալայզիան մի երկիր է, որն իր տարածաշրջանում 2020 թվականին հավակնում է դառնալ տեխնոլոգիապես զարգացած պետություն՝ շնորհիվ կառավարման բարձր մակարդակի և տնտեսական զարգացման առաջնահերթությունների:

Ըստ էության, ուսանելի է Մալայզիական տնտեսության արդյունաբերականացման Նոր տնտեսական քաղաքականության (ՆՏՔ) գործարկման մոդելը, որի իրականացումը նախատեսում է ապահովել ներմուծման փոխարինման մոդելից անցում դեպի արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության: Այն ուղղված է քաղաքային և գյուղական համայնքներում սոցիալական և տնտեսական զարգացման ընդլայնմանը և ֆինանսական համահարթեցմանը: Այդ փոխակերպումը հաջողվում է միայն այն ժամանակ, երբ այս գործընթացում ներգրավված են լինում բոլոր ստեղծարար ուժերը՝ պետությունը, հանրային և

[1] https://sustainabledevelopment.un.org/content/documents/15881Malaysia.pdf
[2] https://www.worldbank.org/en/country/malaysia/overview

ոչ պետական (ոչ կառավարական) ոլորտները, ինչպես նաև սոցիալական բոլոր շերտերի ստեղծագործական մասը:

Վերը գրվածների ամփոփման արդյունքում առաջարկվում է ՀՀ-ում իրականացնել տնտեսության զարգացման ռազմավարական հայեցակարգ՝ ըստ հետևյալ առաջնահերթությունների՝

1. սահմանել պետության գեո-քաղաքական դիրքն ու մարտահրավերները, տարածաշրջաններում ոլորտների զարգացման գերակայությունները,
2. իրականացնել տնտեսական հայեցողական քաղաքականություն և բացառել ընտրված կուրսից շեղման հնարավորությունը՝ անկախ քաղաքական հայացքների փոփոխությունից,
3. առանձնացնել սոցիալական հրատապ խնդիրները, մշակել դրանց՝ կարճ ժամկետներում լուծման ձևաչափերն ու իրագործել:

Օգտագործված գրականության ցանկ

1. https://www.tpg.ua/ru/country/tab-country/?ct=93FA60A44CCD569311E31349C71B83AA
2. Second Industrial Master Plan (1996-2005). Kuala Lumpur, 1996. 13. Third Industrial Master Plan (2006-2020). Malaysia – Towards Global Competitiveness. Kuala Lumpur, 2006.
3. Islam Hadhar, c. 23; 10, 25.08.09
4. New Straight Times. Kuala Lumpur.
5. Third Industrial Master Plan (2006-2020). Malaysia – Towards Global Competitiveness. Kuala Lumpur, 2006.
6. Structural policy country notes Malaysia, https://www.oecd.org/dev/asia-pacific/Malaysia.pdf
7. Malaysia. Sustainable Development Goals Voluntary National Review 2017 High-level Political Forum Published by the Economic Planning Unit , EPU 2017. All rights reserved. First published June 2017. Economic Planning Unit, Prime Minister's Department, Blocks B5 & B6, Federal Government Administrative Centre, 62502 Putrajaya, Malays, 82p. ISBN 999-9999-99-9
8. https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2018/09/24/world-economic-outlook-october-2018
9. https://sustainabledevelopment.un.org/content/documents/15881Malaysia.pdf
10. https://www.worldbank.org/en/country/malaysia/overview

References

1. https://www.tpg.ua/ru/country/tab-country/?ct=93FA60A44CCD569311E31349C71B83AA
2. Second Industrial Master Plan (1996-2005). Kuala Lumpur, 1996. 13. Third Industrial Master Plan (2006-2020). Malaysia – Towards Global Competitiveness. Kuala Lumpur, 2006.

3. Islam Hadhar, c. 23; 10, 25.08.09
4. New Straight Times. Kuala Lumpur.
5. Third Industrial Master Plan (2006-2020). Malaysia – Towards Global Competitiveness. Kuala Lumpur, 2006.
6. Structural policy country notes Malaysia, https://www.oecd.org/dev/asia-pacific/Malaysia.pdf
7. Malaysia. Sustainable Development Goals Voluntary National Review 2017 High-level Political Forum Published by the Economic Planning Unit , EPU 2017. All rights reserved. First published June 2017. Economic Planning Unit, Prime Minister's Department, Blocks B5 & B6, Federal Government Administrative Centre, 62502 Putrajaya, Malays, 82p. ISBN 999-9999-99-9
8. https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2018/09/24/world-economic-outlook-october-2018
9. https://sustainabledevelopment.un.org/content/documents/15881Malaysia.pdf
10. https://www.worldbank.org/en/country/malaysia/overview

Քրիստինե Բաղդասարյան
Սոնա Մարգարյան

ՄԱԼԱՅԶԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» «ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՄՈԴԵԼԸ

Համառոտագիր: Հոդվածում վերլուծվել են Մալայզիայի տնտեսական հեղափոխությունը և դրանով պայմանավորված սոցիալ-տնտեսական վերափոխումները: Մասնավորապես՝ առանձնացվել են պետության կողմից իրականացվող ռազմավարական կառավարման գործիքակազմն ու դրանով հաջողություն արձանագրած ոլորտները: Մալայզիայի տնտեսական հեղափոխության նախադրյալները պայամանավորված են տնտեսության զարգացման գերակայություններով, համեմատական առավելությունների բացահայտմամբ և կոնկրետ ոլորտների զարգացմամբ, որտեղ շեշտադրումը կատարվել է պետության կառավարման տարբեր հարթություններում հանցավորության աստիճանի նվազման վրա:

Բանալի բառեր. տնտեսական բարեփոխումներ, սոցիալ-տնտեսական զարգացում, գործազրկություն, ներդրումներ, արտադրություն, կառավարման մակարդակ, արտաքին առևտուր

Кристина Багдасарян
Сона Маргарян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» МАЛАЙЗИИ: МОДЕЛЬ «КОРПОРАТИВНОГО НАЦИОНАЛИЗМА»

Аннотация: В статье проанализированы экономическая революция Малайзии и обусловленные ею социально-экономические преобразования. В частности, выделены инструментарий стратегического управления, осуществляемого государством, и области, достигшие успеха с его помощью. Предпосылки экономической революции Малайзии обусловлены приоритетами экономического развития, выявлением сравнительных преимуществ и развитием конкретных областей, в которых особое значение придается снижению уровня преступности на различных уровнях государственного управления.

Ключевые слова: экономические реформы, социально-экономическое развитие, безработица, инвестиции, производство, уровень управления, внешняя торговля

Christina Baghdasaryan
Sona Margaryan

"THE ECONOMIC MIRACLE" OF MALAYSIA: MODEL OF "CORPORATE NATIONALISM"

Abstract: The article analyzes the economic revolution of Malaysia and social and economic transformations caused by it. In particular, the tools of strategic management carried out by the state and the areas that have achieved success by it are highlighted. The preconditions for the economic revolution of Malaysia are conditioned by the priorities of economic development, identification of comparative advantages and development of specific areas where the emphasis is made on reduction of crime rate at various levels of state management.

Keywords: economic reforms, social and economic development, unemployment, investments, production, management level, foreign trade

Տաթևիկ Փարսադանյան
Տաթևիկ Շահինյան

ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

«Տնտեսական հրաշքի» վառ օրինակ և դա հաջողությամբ իրականացրած երկրներից մեկն էլ Ինդոնեզիան է: 1950-2015 թվականների ընթացքում երկրի աճի տեմպը նշանակալիորեն բարձր էր, քան համաշխարհային միջին ցուցանիշը, իսկ մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքը մեծացել է մոտ 73 անգամ:

Ինդոնեզիայի Հանրապետությունում խաղաղ զարգացումը սկսվեց 1950 թ.՝ հակագաղութային զինված պայքարի ավարտից հետո: Անցած տասնամյակների ընթացքում կառավարությունների տնտեսական քաղաքականությունը փոխվել է՝ կախված նրանց ռազմավարական առաջնահերթություններից: Նախ՝ ստեղծվեց ազատական տնտեսություն (1950–1957 թթ.), հետո՝ նպատակադրված տնտեսություն (1957–1965 թթ.) և, վերջապես, տնտեսական ժողովրդավարություն (1966–1998 թթ.):

Ինդոնեզիան մահմեդական աշխարհի ամենամեծ երկիրն է, Հարավարևելյան Ասիայի խոշորագույն տնտեսություններից մեկը: Զարգացման տնտեսական ժողովրդավարության ժամանակահատվածը, որը կառավարել է գեներալ Սուխարտոն, այլ կերպ անվանել են «ասիական տնտեսական հրաշք»:

Տնտեսական ժողովրդավարության պատմության մեջ առանձնացվում են տնտեսական զարգացման հետևյալ կարևորագույն փուլերը.

- «Նոր կարգի» հաստատում,
- նավթային հեղաշրջում,
- ազատականացման բարեփոխումներ,
- «Նոր կարգի» զարգացում:

Վերոնշյալ ժամանակաշրջաններում բարեփոխումներ են իրականացվել մի շարք ոլորտներում՝ ներդրումներ, արտահանում և այլն: Դրանց բարելավմանը զուգընթաց երկիրը ապահովել է կայուն տնտեսական աճ, և մոտ 40 անգամ մեծացել է համախառն ներքին արդյունքը: Տնտեսության հաջող կայացման մեջ առանցքային դեր են խաղացել տնտեսական քաղաքականության մշակված հնգամյա ծրագրերը:

20-րդ դարի վաթսունականների կեսերին Ինդոնեզիան գտնվում էր ֆինանսատնտեսական խոր ճգնաժամի մեջ: 1950–1960 թթ. Ինդոնեզիան աշխարհի ամենաաղքատ երկրներից մեկն էր, որն ուներ բյուջեի հսկայական դեֆիցիտ և հիպերինֆլյացիա, որը երբեմն գերազանցում էր տարեկան 1500 %–ը: 1965 թ. սեպտեմբերի 30-ի հեղաշրջումը դրա տրամաբանական հետևանքն էր: Երկրում մասնավոր բիզնեսի գործունեությունը սահմանափակ էր, առաջնահերթությունը տրված էր պետական հատվածի զարգացմանը: Պետական հատվածում զանգվածային կոռուպցիան հանգեցրել էր տնտեսական ձախողումների և հիպերինֆ-

լյացիայի, որոնց պայմաններում հնարավոր չէր մասնավոր ձեռներեցության զարգացումը[1]: Նոր ձևավորված կառավարությունը կողմնորոշված էր զարգացման կապիտալիստական ուղուն, որի պայմաններում առկախված խնդիրները պետք է լուծվեին հիմնականում շուկայական մեթոդներով:

«Նոր կարգի» հաստատում

Կառավարության ուշադրության կենտրոնում էին գնաճի բարձր մակարդակը, արտադրության վերականգնումը, համախառն ներքին արդյունքի աճը:

«Նոր կարգի» հաստատման ժամանակահատվածը առանձնանում է երկրի համակարգի կայացմանն ու բարելավմանն ուղղված միջոցառումներով, որոնցից կարևորագույններն են.

1. արտաքին կապերի վերահաստատում. Ինդոնեզիան վերականգնեց իր անդամակցությունը Միացյալ ազգերի կազմակերպությանը (ՄԱԿ), Արժույթի միջազգային հիմնադրամին (ԱՄՀ) ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին, միացավ Ասիական զարգացման բանկին, իսկ հետագայում՝ նաև Միջազգային զարգացման կազմակերպությանը: Այդ քայլի միջոցով երկրի նկատմամբ վստահությունը բարձրացավ, և ներքաղաքական լարվածությունը թուլացավ:

2. 1965 թ. Տոկիոյում ստեղծվեց Ինդոնեզիայի միջկառավարական խումբը (ԻՄԽ): Տոկիոյի հանդիպումից հետո 1967 թ. ընդունվեց «Արտասահմանյան կապիտալի մասին» օրենքը: Նոր քաղաքականությունը կառուցվել է «բաց տնտեսություն» սկզբունքով, ինչը նշանակում էր օտարերկրյա կապիտալի ազատ մուտք ազգային տնտեսության տարբեր ճյուղեր՝ բացառությամբ նավահանգիստների, էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման, հեռահաղորդակցության, ավիացիոն արդյունաբերության, ջրամատակարարման, երկաթուղիների, ատոմային էներգետիկայի, զանգվածային լրատվական միջոցների:

3. Օրենսդրական դաշտի ստեղծում. մասնավոր ձեռնարկատիրության զարգացման և օտարերկրյա ներդրումներ ներգրավելու համար մշակվեց համապատասխան օրենսդրական հենք: Ընդունվեցին «Օտարերկրյա մասնակցությամբ ձեռնարկությունների ներդրումների մասին» (1967 թ.) և «Ազգային ձեռնարկություններում ներդրումների մասին» (1968 թ.) օրենքները:

4. Երկրի առաջին հավասարակշռված բյուջեի ընդունում. բյուջեի ընդունումը դարձել էր գնաճը զսպելու հիմնական լծակը, ինչը հնարավորություն էր տալիս հրաժարվել փողի նոր թողարկումից (էմիսիա, 1966-1968 թթ.):

5. Կրճատվեցին բնակչությանը և պետական ձեռնարկություններին տրվող սուբսիդիաները՝ հանգեցնելով բյուջեի միջոցների ավելի արդյունավետ օգտագործման:

6. Բարձրացվեցին բանկային վարկերի տոկոսադրույքները: Սահմանվեցին տարբեր տոկոսադրույքներ՝ կախված գործունեության ոլորտից (արդյունաբե-

[1] А. В. Попов, “Экономика Индонезии: современное состояние и тенденции развития”, М., 2019г., с. 11.

ության և սննդի արտադրության համար՝ ամսական մինչև 6%, արտահանման և տրանսպորտի համար՝ 7.5%, իսկ ներքին առևտրի համար՝ 9%): Ավելի վաղ պետական բանկերը վարկեր էին տրամադրում ինֆլյացիայից ցածր տոկոսադրույքով: Միևնույն ժամանակ բարձրացվեց բանկային ավանդների տոկոսադրույքը մինչև 5% ամսական, ինչպես նաև ավանդատուներն ազատվում էին տոկոսային հարկեր վճարելուց, իսկ եկամտի ծագման մասին տեղեկատվությունը գաղտնի էր:

Կառավարությունը տպավորիչ արդյունքների հասավ: Նրանք կարողացան իրականացնել «Տնտեսության կայունացման և սղաճի զսպման ծրագիր» (1967–1969 թթ.) և դրանով իսկ ապահովել համեմատաբար արագ ելք ծայրաստիճան գնաճից և կայունացնել երկրի դրամավարկային իրավիճակը: Կառավարությանը հաջողվեց բարձրացնել երկրի վարկանիշը և վստահություն ձեռք բերել միջազգային մակարդակներում, ինչը ճանապարհ բացեց հետագա ծրագրերի իրագործման համար:

Կանաչ լույս բացելով օտարերկրյա կապիտալին՝ Ինդոնեզիան ցանկանում էր լուծել իր կարճաժամկետ և երկարաժամկետ խնդիրները՝ կարճ ժամանակահատվածում վերականգնել տնտեսությունը, ապահովել դրա ինտենսիվ զարգացումը՝ ներգրավելով օտարերկրյա ներդրումներ, ժամանակակից տեխնոլոգիաներ, ինչը թույլ կտար երկրի տնտեսությունը բարձրացնել նոր մակարդակի:

1969 թվականից սկսած տնտեսական քաղաքականությունը մշակվում էր հնգամյա ծրագրերի տեսքով, որտեղ կարևորվում էին զարգացման առաջնահերթություն ունեցող ոլորտները: Ծրագրերը մշակում էր ոչ միայն կենտրոնական պլանավորման մարմինը, այլև մարզերում ստեղծված պլանավորման համապատասխան մարմինները և պլանավորման բյուրոն:

Տնտեսական քաղաքականության առաջին հնգամյա ծրագիրը (1969–1974 **թթ**.), ըստ էության, Ինդոնեզիայի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունն էր: Ծրագիրը նախատեսվում էին՝ տնտեսական աճի բարձր տեմպեր, արտաքին ֆինանսավորման աղբյուրներից կախվածության նվազեցում, արտադրողական ուժերի հավասարաչափ բաշխվածություն, ազգային տնտեսության տնտեսական կապերի և ինտեգրման գործընթացների ամրապնդում, սննդի հիմնական տեսակներով երկրի ինքնաբավություն, ազգային ձեռներեցության զարգացում և այլն:

Նոր ծրագրեր մշակելիս հաշվի է առնվել ժողովրդագրական կարգավորման անհրաժեշտությունը, առանց որի գործնականում անհնար էր լուծել դրված խնդիրները: 1970-ականների սկզբից ի վեր իրականացվում է ընտանիքի պլանավորման քաղաքականություն: 1968 թ. ստեղծվեց Ընտանեկան պլանավորման ազգային ինստիտուտ, որը հետագայում վերափոխեցին Ազգային համակարգող հանձնաժողովի: Ծրագիրն ի սկզբանե իրականացրել են առավել խիտ բնակեցված Ճավա և Բալի կղզիներում: Արդյունքները դրական էին, և այդ ծրագրերի իրականացումը ընդլայնեցին՝ ընդգրկելով այլ կղզիներ և նահանգներ: Բնակչությունը նվազեց, և 2005 թ. գրանցվեց 220 մլն մարդ:

Առաջին երկարաժամկետ ծրագրի իրականացման սկզբնական փուլում, մասնավորապես՝ երեք հնգամյա ծրագրերի ընթացքում առաջնահերթություն տրվեց գյուղատնտեսական ոլորտին և նրա մասնաճյուղերին, ենթակառուցվածքների արդիականացմանն ու ընդլայնմանը, ինչպես նաև հետագա զարգացման համար հիմքի ձևավորմանը:

Պարենային խնդիրը հիմնականում լուծել են բրինձ աճեցնելու համար նպաստավոր տարածքների ընդլայնմամբ. ըստ կառավարության սահմանման՝ «պարենային քաղաքականությունը – բրնձի քաղաքականությունն է»: 1966-1991 թթ. բերքատու տարածքների մակերեսները աճել են 250 %-ով, իսկ մեկ շնչի հաշվով բրինձի սպառումը աճել է 80%-ով[1]: 80-ականների երկրորդ կեսին Ինդոնեզիան հասավ ինքնաբավության:

Գյուղատնտեսական արտադրության խթանման նպատակով կառավարությունը ստեղծեց միջնորդ կազմակերպություններ: Կազմակերպությունների գործառույթները ներառում էին նպաստավոր պայմաններով վարկերի ու սուբսիդավորված գներով սածիլների և բարձրորակ սերմերի տրամադրումը: Վարկի մայր գումարն ու տոկոսադրույքները ենթակա էին վճարման բերքահավաքից հետո[2]:

Երկրում բարենպաստ ներդրումային միջավայր ստեղծելու նպատակով 1970 թ. ընդունեցին «Օտարերկրյա ուղղակի ներդրումների մասին» օրենքը, համաձայն որի՝ Ինդոնեզիայի կառավարությունը մի շարք արտոնություններ էր տալիս օտարերկրյա ներդրողներին, մասնավորապես՝ ազատելով բոլոր տեսակի քաղաքական ռիսկերից:

Այսպիսով՝ առաջին հնգամյա ծրագրի ընթացքում իրականացված թիրախային միջոցառումները տվեցին իրենց նախնական արդյունքները՝ ապահովելով արտադրողական ուժերի հավասարաչափ բաշխում և գյուղատնտեսական ոլորտի բարելավում: Կառավարության կողմից իրականացված միջոցառումների արդյունքում երկրի համախառն ներքին արդյունքը աճել է մոտ 3 անգամ:

Նավթային հեղաշրջում

Երկրորդ հնգամյա ծրագիրը (1974-1979 **թթ**.) **և երրորդ հնգամյա ծրագրի** (1979-1984 **թթ**.) մի մասը համընկան նավթային հեղաշրջման ժամանակահատվածի հետ: Ծրագրի առաջնահերթությունն էր զարգացնել տարածաշրջանային ենթակառուցվածքները՝ առավել բնակեցված Ճավա կղզուց դուրս:

Այս ժամանակահատվածում առաջնային խնդիրներից են տարածաշրջանային ենթակառուցվածքների կատարելագործումը և արտադրողական ուժերի հավասարաչափ բաշխվածությունը: Դրանց լուծման նպատակով էլ թեթևացրին Ճավա, Բալի, Մադուրա, Լոմբոկ և մասամբ Սումատրա կղզիներում գերբնակեցումը: Ճավայում, որը երկրի տարածքի 7% էր, բնակվում էր ընդհանուր բնակչության երեք քառորդը: Այնուամենայնիվ, ինչպես ցույց տվեցին 20-րդ և 21-րդ դարերում Արևելյան Ինդոնեզիայում միգրանտների և տեղի բնակչության միջև

[1] Indonesia Source Book. Jakarta, 1994, p. 72-74.

[2] Л. Ф. Пахомова, “Модели процветания (Сингапур, Малайзия, Таиланд, Индонезия)”, стр. 194.

բազմաթիվ բախումները, վերաբնակեցման քաղաքականությունը հաշվի չի առել բնակավայրերի բնիկ բնակչության շահերը:

70-ականներին նավթի համաշխարհային գների կտրուկ աճը թույլ տվեց Ինդոնեզիայի ղեկավարությանը կտրուկ մեծացնել պետության ծախսերը տնտեսության զարգացման և սոցիալական կարիքների բավարարման համար: Գյուղատնտեսության ոլորտում ոռոգման օբյեկտներում խոշոր ներդրումները, բույսերի նոր տեսակների օգտագործումը և հանքային պարարտանյութերի օգտագործման զգալի աճը, ինչպես նաև ցանքատարածությունների ընդլայնումը հնարավորություն տվեցին զգալիորեն ավելացնել բազմաթիվ մշակաբույսերի արտադրությունը և, ամենակարևորը, մինչև 1985 թ.՝ բրնձի ինքնաբավության հասնելը: Այսպիսով՝ եթե 1970-ին երկրում զտված բրնձի արտադրանքը կազմել է 19.3 միլիոն տոննա, իսկ դրա ներմուծումը՝ 771 հազար տոննա, որը 1979 թ. աճել է մինչև 2.6 միլիոն տոննա, ապա 1985 թ. արտադրությունը հասել է 39 միլիոն տոննայի, ինչը թույլ է տվել դադարեցնել ներմուծումը:

Օտարերկրյա ներդրումների ներգրավման գործընթացի ակտիվացմամբ պայմանավորված՝ սկսեց զարգանալ նաև ձեռնարկատիրական գործունեությունը: Ձևավորվեցին եռակողմ հարաբերություններ արտասահմանյան ընկերությունների, պետական և մասնավոր հատվածների միջև: 1974 թ. ստեղծվեց համակարգող խորհուրդ, որը հաստատեց տեղական և արտասահմանյան ձեռնարկատերերի դիմումները՝ ուղղված տարբեր ենթակառուցվածքների վերազինմանը: Հետզհետե ընդլայնվեց օտարերկրյա կապիտալի մուտքը տնտեսության տարբեր ճյուղեր և տնտեսական գործունեության ոլորտներ: Ի վերջո, հարկ է նշել, ներդրումները որոշիչ դեր ունեցան տնտեսական աճի ապահովման գործում

Այսպիսով՝ բյուջետային ծախսերը՝ ուղղված գյուղատնտեսության զարգացմանը, 1973-1974 թթ. 7.7% էր, իսկ 1978-1979 թթ. հասավ 14.6%–ի, հումքի արտահանման ծավալները ամբողջ արտահանման մեջ՝ 90%[1]-ի: Մեծապես ավելացել էր փայտանյութի և սուրճի արտահանումը: Այս ամենը երկրի՝ արտահանման խթանմանն ուղղված քաղաքականության հետևանք էր:

Ներքին քաղաքական իրավիճակի կայունացումից հետո 1977 - 1997 թթ. օտարերկրյա ներդրումների մեծ հոսք արձանագրվեց երկրում: Օտարերկրյա ներդրումների տարեկան աճը կազմել է 42%, ներքին ներդրումները 1967 - 1997 թթ. միջինը տարեկան 50% էր, ինչը կապված էր «Նոր կարգի» ռեժիմի ժամանակահատվածում ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծման հետ[2]:

Ազատականացման բարեփոխումներ

Երրորդ հնգամյա ծրագրի (1979-1984 **թթ**.) երեք տարիները համընկան

---

[1] Rosser A., The Politics of Economic Liberalisation in Indonesia: State, Market and Power. – Richmond: Curzon, 2002, p. 42.

[2] А. В. Попов, “Экономика Индонезии: современное состояние и тенденции развития”, М., 2019, стр. 29.

ազատականացման բարեփոխումների ժամանակահատվածի հետ: Ծրագրի առաջնահերթությունն էր արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերության զարգացումը:

Ծրագիրը նախատեսում էր խթանել արտահանումը՝ բազմազանեցնելով ոլորտները (բացի նավթից և գազից), ինչը 60%-ով կավելացներ արտահանման ծավալները: Ինդոնեզիան ազգային արտահանումն ավելացնելու հսկայական ներուժ ուներ: Այսպիսով՝ կառավարությունը փորձեց թուլացնել կախվածությունը նավթի համաշխարհային գների տատանումներից: Ընդլայնվեց արտահանվող արտադրանքի և նոր ապրանքատեսակների արտադրությունը: Ստեղծվեցին ներմուծված կիսաֆաբրիկատների և բաղադրիչների հիման վրա նոր ապրանքներ արտադրող ձեռնարկություններ:

80-ականների սկզբին նոր տնկարկային տնտեսությունների կողքին սկսեցին զարգանալ կենտրոնական ազգային տնկարկային տնտեսությունները: Կառավարության կողմից մշակված գործիքակազմի հիման վրա տեղաբնակներին և գյուղացի–վերաբնակեցվածներին տրամադրվեցին 3-ից 5 հա հողամասեր: Դրանց վրա սկսեցին աճեցնել որոշակի մշակաբույսեր, իսկ ստացված արտադրանքը հանձնում էին կենտրոնական տնկարկային տնտեսություններին՝ վերամշակման համար: Այս ամենի արդյունքում որոշակի կապ հաստատվեց գյուղացիական և խոշոր տնկարկային տնտեսությունների միջև, իսկ վերջիններս մուտքի հնարավորություն ունեին դեպի համաշխարհային շուկա:

Այսպիսով՝ 1980-ական թվականներին Ինդոնեզիան կարողացավ ազատվել նավթային կախվածությունից: Սրան մեծապես նպաստեցին գյուղատնտեսության զարգացումն ու երկրի վարած արդյունավետ տնտեսական քաղաքականությունը՝ ուղղված արտահանման ծավալների մեծացմանը:

«Նոր կարգի» զարգացում

Չորրորդ (1984-1989 **թթ**.) **և հինգերորդ** (1989-1994 **թթ**.) հնգամյա ծրագրերի տարիները համընկնում են «Նոր կարգի» զարգացման ժամանակաշրջանի հետ: Ծրագրի նպատակն էր արտահանման ծավալների ընդլայնում:

Ինդոնեզիայի արտահանման աճը, անկասկած, պայմանավորված էր զգալի ներդրումներով, որոնք կատարվել են օտարերկրյա և ազգային ներդրողների կողմից «Նոր կարգի» ռեժիմի օրոք: Այսպիսով՝ 1985-1996 թթ. «Արտասահմանյան ներդրումների մասին» օրենքի սահմաններում ներդրումներն էին 141.8 մլրդ դոլար, ըստ ազգային արժույթի՝ 429.3 տրիլիոն ռուփի[1]: Արտահանումը 1986-1997 թթ. աճել է 3.75 անգամ՝ 16 մլրդ դոլարից 60 մլրդ դոլար[2]:

Արտահանման ծավալները մեծացնելու նպատակով կառավարությունը կատարեց փոփոխություններ և կիրարկեց որոշակի արտոնություններ.

1. 1984–1986 թթ. պարզեցրին արտահանման և ներմուծման ընթացակարգերը, որոնց մեծ մասը մաքսայինից փոխանցեցին շվեյցարական “SGS” ընկե-

[1] Prof. Dr Boediono. Ekonomi Indonesia dalam Lintasan Sejarah. Jakarta, 2016, h.171.

[2] https://data.worldbank.org/indicator/NE.EXP.GNFS.CD?end=1997&locations=ID&start=1986

ությանը[1]: Վերջինս սկսեց վերահսկել արտաքին առևտրի գործառնությունները առանց Ինդոնեզիայի մաքսային մարմիններին բնորոշ կոռուպցիոն բաղադրիչի, ինչը, ի վերջո, դրական անդրադարձավ ապրանքների արտահանման գործընթացի վրա:

2. Ձեռնարկեցին լրացուցիչ միջոցներ արտահանումը խթանելու համար: Օրինակ՝ իրենց արտադրանքի առնվազն 85%-ը արտահանող ձեռնարկությունները ազատվում էին արտահանվող արտադրանքի թողարկման համար օգտագործված հումքի և բաղադրիչների ներմուծման հարկերից:

Այսպես կոչված «Նոր կարգի» ժամանակաշրջանում (1966–1998 թթ.) Ինդոնեզիայի Հանրապետության տնտեսության տարեկան միջին աճի տեմպը կազմեց 7.2%[2]: 90-ականների սկզբին Արևելյան Ասիայի շատ երկրներ, ներառյալ Ինդոնեզիան, սկսեցին սրընթաց զարգանալ: Այս ժամանակահատվածն անվանեցին «ասիական տնտեսական հրաշք», որի արդյունքն էին 1996 թ. տնտեսական ցուցանիշները: ՀՆԱ–ն այդ ժամանակաշրջանում աճել է 40 անգամ: Եթե 1968 թ. մեկ շնչի հաշվով եկամուտը կազմում էր 60 դոլար, ապա 80-ականների վերջում՝ գրեթե 500 դոլար, իսկ 1996 թ. հասել էր 1,136 հազար դոլարի[3]:

1997–1998 թթ. տեղի ունեցավ ֆինանսական, տնտեսական ճգնաժամ Հարավարևելյան Ասիայում, որը ուժգնացավ 1997 թ. կեսերին և 1990-ականների վերջերին լուրջ ցնցում ստեղծեց համաշխարհային շուկայում: Ճգնաժամի իրական պատճառը «ասիական վագրերի» աննախադեպ տնտեսական աճն էր, որը նպաստել էր այդ երկրներ կապիտալի զանգվածային ներհոսքին, պետական պարտքի աճին[4], տնտեսության գերտաքացման և բումի անշարժ գույքի շուկայում: 1997-1998 թթ. ասիական ճգնաժամն ավելի մեծ վնաս հասցրեց Ինդոնեզիայի տնտեսությանը, քան Արևելյան Ասիայի շատ այլ երկրների: «Ասիական վագրերի» տնտեսության համար հատկանշական էր ազգային արժույթի փոխարժեքի անկումը (այսպես՝ թաիլանդական բատը սկզբում 48%-ով ընկավ, իսկ 1997 թվականին գրեթե 100%-ով, իսկ ինդոնեզական ռուփին՝ 228%-ով[5]), ֆոնդային ինդեքսների անկումը, գնաճը, կորպորատիվ պարտքի մեծացումը, ընկերությունների սնանկացումը:

Մինչ 1997 թ. տնտեսական ճգնաժամը Ինդոնեզիան 20-րդ դարի հաջող տնտեսության զարգացման վառ օրինակ էր: Ասիական ֆինանսական ճգնաժամը ունեցավ այնպիսի քաղաքական հետևանքներ, ինչպիսին ինդոնեզական բռնապետ նախագահ Սուխարտոյի հրաժարականն էր: Չնայած տնտեսության անկմանը՝ նոր կառավարությունը սկսեց մշակել և գործարկել միջոցառումներ, որոնք իրենց դրական ազդեցությունը թողեցին տնտեսության վրա: Երկրի տնտեսու-

---

[1] https://www.sgs.co.id/en/our-company/about-sgs/sgs-in-brief/sgs-in-indonesia

[2] https://countryeconomy.com/gdp/indonesia?year=1997

[3] Growth and Inequality: The Case of Indonesia, 1960-1997, Table 5, p. 27.

[4] Public Debt and Its Determinants in Market Access Countries, Results from 15 Country Case Studies, March 2005, The World Bank , p. 50.

[5] Kaufman G. G., Krueger T. H., Hunter, W.C. (1999) The Asian Financial Crisis: Origins, Implications and Solutions. Springer

թյան զարգացմանը մեծապես նպաստեցին նախ և առաջ 2002 թ. հաստատված մակրոտնտեսական կայունացումը, այնուհետև՝ արտադրանքի արտահանմանն ուղղված քաղաքականության շարունակությունն ու զբոսաշրջության ոլորտում նոր ծառայությունների ներդրումը, բնակչության կրթության ֆինանսավորումը և սոցիալական ապահովությունը, հանքարդյունաբերության ոլորտում արգելքների կիրառումը:

Ինդոնեզիան զբոսաշրջային հսկայական ներուժ ունի: Ոլորտի զարգացումը աշխատանքով է ապահովում հսկայական թվով մարդկանց, այդ թվում՝ հյուրանոցների աշխատողների, զբոսաշրջիկների ուղեվարների, զբոսաշրջային ուղղվածություն ունեցող աշխատողների համար, ովքեր զբաղված են առևտրի, սննդի, սպա, տրանսպորտի և այլ ոլորտներում: Պետական քաղաքականությունն ուղղված է հնարավորինս շատ օտարերկրյա զբոսաշրջիկներ ներգրավելուն, որի նպատակով իրականացվել են բարեփոխումներ հետևյալ ուղղություններով.

- բաց սահմանի քաղաքականություն. չեղարկվել են Ինդոնեզիա զբոսաշրջային նպատակներով ժամանող մուտքի վիզաներն արդեն 169 երկրների քաղաքացիների համար, ինչը դրական է անդրադարձել զբոսաշրջիկների ներհոսքի վրա:
- Հարմարավետություն. Ինդոնեզիայում նոր զբոսաշրջային ուղղությունների գրավչությունն ու հասանելիությունը բարելավելու համար բացվում են միջազգային չվերթներ՝ օտարերկրյա զբոսաշրջիկների համար ավելի հասանելի դարձնելով այնպիսի տարածքներ, ինչպիսին է, օրինակ, Բելինգտուն կղզին:
- Հյուրանոցների բազմազանություն. հյուրանոցային ծառայությունները մատուցվում են բոլոր նախասիրությունների համար: Ինդոնեզիայում զբոսաշրջության հիմնական կենտրոններում՝ Բալիում և Ջոգյակարկայում, կառուցվել են առաջին կարգի հյուրանոցներ: Սակայն արևմտյան զբոսաշրջիկների մի մասը փորձում է հանգստանալ ժամանակակից քաղաքակրթությունից: Նման վայրերից է Արևելյան Նուսատենգարա նահանգի Ալոր կղզին, որտեղ գործում է նվազագույն հարմարություններով հյուրանոց: Հյուրանոցում տեղերը ամրագրված են մի քանի տարի առաջ:

Ինդոնեզիայում ներքին զբոսաշրջությունը նույնպես շատ զարգացած է: Ինդոնեզացիները, որոնք ընդհանուր առմամբ սիրում են տարբեր ուղևորություններ, ակտիվորեն ճանապարհորդում են Ինդոնեզիայի տարածքում: Վերջին տարիներին ներքին զբոսաշրջիկների թվաքանակը հավասարվել է երկրի բնակչությանը՝ 260 միլիոն մարդ:

Զարգացած և հզոր երկիրը չի կարող գոյություն ունենալ առանց կրթված և առողջ բնակչության: Այս առումով Ինդոնեզիայի կառավարության ուշադրության կենտրոնում են կրթությունը և առողջապահությունը: Աջակցությունը ցուցաբերվում է դպրոցական շրջանից սկսած մինչև բուհական շրջան:

1. Զգալի օգնություն է ցուցաբերվում աղքատ ընտանիքների երեխաների կրթությանը: 6–21 տարեկան անձանց կրթական ծրագրերի ծախսերը սուբսի-

դավորում են: Կրթություն ստանալու համար տրամադրվող տարեկան գումարների չափը կախված է ըստ հանրակրթական ուսուցման փուլերի (տարրական, միջնակարգ և միջնակարգ երկրորդ մակարդակ կամ ավագ դպրոց)[1]: Նման օգնություն ստացող ցածր եկամուտ ունեցող ընտանիքների ուսանողներին տրվում էին «խելացի Ինդոնեզիայի քարտեր» (Kartu Indonesia Pintar - KIP), որոնց փոխանցվում էին համապատասխան դրամական միջոցները:

2. Կրթության ոլորտում աղքատ ընտանիքների շնորհալի ուսանողներին բարձրագույն կրթության համար վճարվում էին սուբսիդիաներ՝ ամսական 400 հազար ռուփիի չափով, որոնք անմիջապես փոխանցվում էին բուհերի հաշվեհամարներին: «Աղքատ ընտանիքների հաջող ուսանողներին կրթելու ծախսեր» (Biaya Pendidikan Mahasiswa Miskin Berprestasi - BIDIKMISI)[2] կոչվող ծրագրում մասնակցում էին պետական բոլոր և որոշ մասնավոր համալսարաններ, որոնք, իհարկե, դժկամորեն էին միացել, քանի որ աղքատ ուսանողների համար փոխանցվող գումարները չափազանց փոքր էին: Ուսանողները ստանում էին նաև կրթաթոշակ, որոնք վճարվում էին չորս տարի: Այս ծրագրին տարեկան մասնակցում էին 80-90 հազար ուսանող[3]:

3. Ստեղծվեց առողջապահության ոլորտում սոցիալական երաշխիքների ապահովման հանձնաժողով (Badan Penyelenggara Jaminan Sosial-Kesehatan/BPJSK-BPDSK), որին հանձնարարված էր պետական բժշկական հիմնարկներին բժշկական օգնություն ցուցաբերելու համար միջոցներ տրամադրել: BPDSK բժշկական ծառայության ծրագրին մասնակցությունը պաշտոնապես պարտադիր էր, և ծրագրում ներգրավված էին թե՛ պետական հիմնարկների և թե՛ մասնավոր ձեռնարկությունների ներկայացուցիչները: Ծրագրի մասնակիցները ամսական վճարումներ էին կատարում:

4. Պետությունը ստանձնեց բոլոր աղքատ քաղաքացիների բուժօգնության հիմնահարցի լուծումը: Աղքատ քաղաքացիներին անվճար սպասարկման համար քարտեր էին տրամադրում՝ Kartu Indonesia Sehat Card կամ կարճ ձևով KIS (Kartu Indonesia Sehat), ինչը փաստորեն նշանակում էր BPDSK ծրագրին մասնակցելու հնարավորություն: Նախագահ Ջոկո Վիդոդոյի խոսքով՝ 2018 թ. 92.2 միլիոն քարտ է տրամադրվել[4]:

5. Ծայրահեղ աղքատ խավի համար ներդրվեց սննդի օժանդակման լրացուցիչ ծրագիր (Pemberian Makanan Tambahan - PMT), որը տրամադրվում էր հղի կանանց և մինչև 5 տարեկան երեխաների համար: Բացի այդ, Ինդոնեզիան իրականացնում էր օժանդակ ծրագիր նաև առանց խնամքի մնացած ծերերի

---

[1] https://www.kemdikbud.go.id

[2] https://lldikti8.ristekdikti.go.id/wp-content/uploads/2019/07/Permenristekdikti-6-2019-Bantuan-Biaya-Pendidikan-bagi-Mahasiswa-Miskin-Berprestasi.pdf

[3] http://www.satuharapan.com/read-detail/read/6400-mahasiswa-miskin-di-papua-butuh-beasiswa-bidikmisi

[4] http://presidenri.go.id/Laporan 4 Tahun Pemerintahan Joko Widodo – Jusuf Kalla. h.54.

համար՝ ASLUT (Asistensi Sosial Lanjut Usia Terlantar-ASLUT), համաձայն որի՝ 30 հազար տարեցներ ծառայություններ են ստանում:

2015 թ. արձանագրվեց հանքարդյունաբերության ոլորտում գործազրկության զանգվածային աճ, երբ 2014 թ. հրամանագրով արգելվեց չմշակված հանքաքարի արտահանումը Ինդոնեզիայից: Ինդոնեզիան, որը նախկինում հանդես էր գալիս որպես նիկելի հանքաքարի խոշորագույն արտահանող և բոքսիտի հիմնական արտադրող, արգելեց չմշակված մետաղների արտահանումը՝ նպատակ ունենալով ստիպել հանքարդյունաբերական ընկերություններին հանքային պաշարները մշակել երկրի ներսում՝ հետագայում արտահանումից ավելի շատ շահույթ ստանալու ակնկալիքով: Քանի որ երկրում այս ժամանակահատվածում հումքի նկատմամբ պահանջարկը խիստ սահմանափակ էր, հարյուրավոր ձեռնարկություններ, որոնք նախկինում կողմնորոշված էին հումքի արտահանմանը, ստիպված էին դադարեցնել աշխատանքը, ինչի արդյունքում ոլորտի աշխատողները դարձան գործազուրկ և մասամբ տեղափոխվեցին տնտեսության այլ ոլորտներ: Այս միջոցը հարկադրված էր և ուղղված էր չինական արդյունաբերության ազդեցության նվազեցմանը և սեփական արդյունաբերական ոլորտի խրախուսմանը: 2016 թ. նիկելի հանքաքար վերամշակող ներքին արդյունաբերության զարգացմանը զուգընթաց ներքին պահանջարկը կտրուկ աճել և բերել էր հանքարդյունաբերության մեջ զբաղվածության աճին, որի արդյունքում 2016–2017 թթ. գործազրկության մակարդակը նվազել էր մինչև 0.4%: Գործազրկության մակարդակը 2007–2014 թթ. ցուցաբերել է նվազման միտում, իսկ 2015 թ. աճել է 0.5%–ի չափով[1]: 2014 թ. արգելող հրամանագրի ընդունման հետևանք էր գործազրկության աճը: Հավելենք, որ գործազուրկները միայն հանքարդյունաբերության ոլորտի ներկայացուցիչներ էին: Նման որոշումը ունեցել է կարճաժամկետ և միջնաժամկետ ազդեցություններ: Իրական հատվածում կարճաժամկետ միջակայքում բարձրացել է գործազրկության մակարդակը, իսկ միջնաժամկետում՝ ավելացել են ներդրումները: Կարելի է եզրակացնել, որ չմշակված հումքի արտահանման արգելքը լրջորեն խթանել էր ներդրումները: Ներդրումների առյուծի բաժինն ընկել էր 2016-2017 թթ. վերամշակող արդյունաբերության ոլորտին (բացառությամբ նավթագազային ոլորտի)[2]:

2016-2017 թթ. Ինդոնեզիայում իրականացված օտարերկրյա ուղղակի ներդրումները կրկնակի գերազանցել են նախագծի տվյալներին: Դրանցից ակնհայտ է, որ վերջին տարիներին արտասահմանյան ամենամեծ ներդրումները բաժին են ընկնում վերամշակող արդյունաբերությանը, ինչը կապված է ինչպես տեղական էժան աշխատուժի, այնպես էլ Ինդոնեզիայի հսկայական ներքին շուկայի հետ: Անկասկած, չմշակված հումքի արտահանման արգելքը, որը մտցվել էր 2014 թ. սկզբին, լրջորեն խթանել էր այդ ներդրումները, և դա չինական մի շարք խոշոր ընկերություններին դրդել էր մեծ գումարներ ներդնել Սուլավեսիում նիկելի հանքաքարի վերամշակման գործարանների շինարարու-

[1] https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.NE.ZS?locations=ID

[2] www3.bkpm.go.id/en/statistic/foreign-direct-investment-fdi

թյան մեջ: Էկոնոմիկայի նախարար Չարլուլ Թանյունգը նշել էր, որ ըստ նախարարության տվյալների՝ կես տարվա ընթացքում մոտ 8 միլիարդ դոլար է ներդրվել Ինդոնեզիայում ալյումինի վերամշակման երեք գործարանների կառուցման համար, և 2 միլիարդ՝ ֆերոնիկելի վերամշակման համար[1]: Օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքը ապահովելու համար պահանջվել է ընդամենը մոտ կես տարի:

Արտաքին հատվածում հրամանագրի ազդեցությունը սկզբնական շրջանում հանգեցրեց ապրանքների և ծառայությունների արտահանման կտրուկ նվազման: Փաստացի արտահանումը 2014 թ. կազմել է 210.82 մլրդ դոլար, 2015 թ.՝ 182.158 մլրդ դոլար, իսկ 2016 թ.՝ 177.886 մլրդ դոլար, այսինքն՝ արտահանումը կրճատվել էր 32.934 մլրդ դոլարով[2]: Ներդրումների շնորհիվ կառուցված արտադրական հզորությունների կողմից հանքաքարի վերամշակման գործարկումից հետո 2017–2018 թթ. գրանցվեց արտահանման կտրուկ աճ՝ համապատասխանաբար 204.999 մլրդ դոլար և 218.499 մլրդ դոլար: Այսինքն՝ ձեռնարկած միջոցառումները դրական ազդեցություն ունեցան արտահանման խթանման վրա[3]:

Չնայած ճգնաժամի հետևանքներն աղետալի էին, այնուամենայնիվ կառավարությունը մի շարք միջոցառումներ ձեռնարկեց երկիրը այդ վիճակից դուրս բերելու համար, ինչն արտացոլվեց նաև 1 շնչի հաշվով ՀՆԱ–ի վրա: Այն 1998 թ. 460 դոլար էր, իսկ 2000 թ. գրեթե կրկնակի աճել էր՝ հասնելով 780 դոլարի[4]:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ժամանակակից Ինդոնեզիայի տնտեսության վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ անկախության տարիների ընթացքում երկիրն զգալի տնտեսական հաջողություններ է գրանցել:

«Նոր կարգի» հաստատման շրջափուլում կառավարության ուշադրության կենտրոնում էին երկրի միջազգային վարկանիշի բարձրացումը, միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության վերականգնումը և, այդ համատեքստում, սղաճի զսպմանն ուղղված քաղաքականության իրականացումը:

«Նոր կարգի» հաստատում

Երկրի վարկանիշի բարձրացում: Միջազգային նոր պայմանագրերի կնքում, որոնք միջազգային հարթակներում երկրի ձայնը լսելի կդարձնեն:

Մշակել նոր քաղաքականություն, որը թույլ կտա օտարերկրյա կապիտալի ազատ մուտք ազգային տնտեսության տարբեր ճյուղեր որոշակի վերապահումներով՝ էլեկտրաէներգիայի արտադրություն և բաշխում, հեռահաղորդակցություն, ջրամատակարարում, երկաթուղիներ, ատոմային էներգետիկա, զանգվածային լրատվական միջոցներ:

---

[1] https://polpred.com/?ns=1&ns_id=1158426

[2] https://data.worldbank.org/indicator/NE.EXP.GNFS.CD?locations=ID

[3] https://data.worldbank.org/indicator/NE.EXP.GNFS.CD?locations=ID

[4] https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=ID

Այս գործողություններին հաջորդում է ներդրումների ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Նավթային հեղաշրջման փուլում նավթի գների բարձրացման միջոցով գոյացած գումարները և արդեն ներգրավված ներդրումները ներարկվեցին ներքին շուկա՝ փորձելով զարգացնել ներքին արտադրությունը, որը հետագայում պետք է արտահանվեր: Այս ժամանակահատվածում առաջնային խնդիրներից էին տարածաշրջանային ենթակառուցվածքների կատարելագործումը և արտադրողական ուժերի հավասարաչափ բաշխվածությունը:

Նավթային հեղաշրջում

Մշակել վերաբնակեցման կոշտ ծրագիր, որի իրականացման արդյունքում տեղի կունենա արտադրողական ուժերի հավասարաչափ բաշխում և ծայրամասային շրջանների զարգացում, որը քաղաքական մեծ նշանակություն ունի երկրի միասնական պետության ամրապնդման գործում: Երևանում ապրում է Հայաստանի բնակչության մոտ ½-ը և այն գերբնակեցված է: Վերաբնակեցման քաղաքականությունը չպետք է հաշվի առնի բնակավայրերի բնիկ բնակչության շահերը:

Ազատականացման բարեփոխումների ժամանակահատվածում ուշադրության կենտրոնում են լինում արտադրության բազմազանացումը և կողմնորոշվածությունը դեպի արտահանում: Ստեղծվել են վերամշակող արդյունաբերության ժամանակակից շատ ճյուղեր, որոնք դարձան ազգային տնտեսության առաջատար հատվածը:

Ազատականացման բարեփոխումներ

Մշակել գյուղերի վերաբնակեցմանն ուղղված արդյունավետ ծրագիր, որի գործիքակազմի հիման վրա տեղաբնակներին և գյուղացի–վերաբնակեցվածներին տրամադրել գյուղատնտեսական նշանակության հողամասեր:

Ներդնել տնկարկային տնտեսությունների գործուն համակարգ, որոնք, ելք ունենալով դեպի մեծ շուկաներ, կպահպանեն կապը գյուղատնտեսական ապրանքների արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների հետ:

Մշակել արտահանումը խթանող ռազմավարական ծրագիր, որը կներառի արտահանմանն ուղղված ոլորտների բազմազանեցում: Բազմազանեցումը կատարել երեք հիմնական ուղղություններով. ընդլայնել արտահանվող արտադրանքի և նոր ապրանքատեսակների արտադրությունը, ներմուծված կիսաֆաբրիկատների և բաղադրիչների հիման վրա նոր ապրանքներ արտադրող ձեռնարկություններ ստեղծել:

Վերջին՝ «Նոր կարգի» զարգացման ընթացքում կառավարությունը արտահանման խթանմանն ուղղված միջոցառումներ է իրականացրել՝ արտոնությունների միջոցով:

«Նոր կարգի» զարգացում

Մշակել և ձեռնարկել արտահանման խթանմանն ուղղված միջոցառումների համալիր: Մասնավորապես՝ թողարկվող արտադրանքի առնվազն 85%-ը արտահանող ձեռնարկություններին ազատել արտահանվող արտադրանքի թողարկ-

ման համար օգտագործված հումքի և բաղադրիչների ներմուծման հարկերից:

Չնայած 1997 թ. տնտեսության անկմանը՝ նոր կառավարությունը սկսեց մշակել և գործարկել միջոցառումներ, որոնք իրենց դրական ազդեցությունը թողեցին տնտեսության վրա: Հանքարդյունաբերության ոլորտը մասնագիտացված էր հայրենական հանքային հարստության վերամշակման մեջ և գյուղատնտեսության ոլորտի նման ուներ արտահանման մեծ ներուժ: Դրա մասին է վկայում հանքարդյունաբերության ոլորտում չմշակված հանքաքարի արտահանման արգելքի ընդունումը, ինչը միջնաժամկետ հատվածում իր դրական ազդեցությունն է ունեցել ներդրումների ու արտահանման ավելացման, ինչպես նաև գործազրկության կրճատման գործում: Անմասն չեն մնացել նաև կրթության և զբոսաշրջության ոլորտները:

Հետճգնաժամային ժամանակաշրջան

Հայաստանի Հանրապետությունը հարուստ է պղնձի և մոլիբդենի պաշարներով: Հայտնի են Քաջարանի, Ագարակի և վերջերս շահագործման հանձնված Թեղուտի հանքավայրերը: Հայաստանը տիրապետում է մոլիբդենի համաշխարհային պաշարների մոտ 7%-ին: Մոլիբդենն ունի հալման շատ բարձր ջերմաստիճան, ինչի շնորհիվ այն օգտագործում են լեգիրացված (ամրություն, կռելիություն, կոռոզիադիմացկունություն, այլ հատկանիշներ ունեցող) պողպատներ ձուլելու համար, ինչպես նաև էլեկտրավակուումային սարքերի արտադրության մեջ, միջուկային ռեակտորների, հրթիռների և այլ թռչող սարքերի՝ բարձր ջերմաստիճաններում աշխատող մասեր պատրաստելու համար: Հայաստանից մոլիբդեն գնում են գլխավորապես Գերմանիան, Նիդեռլանդները և Ռուսաստանը: Մոլիբդենի արտահանման արգելքի դեպքում հնարավոր կլինի պողպատների ձուլման գործընթացը իրականացնել Հայաստանի տարածքում:

Կրթության որակ հասկացությունը սերտորեն առնչվում է կրթության մատչելիությանը, և չնայած սրանք երկու տարբեր հասկացություններ են, այնուամենայնիվ փոխլրացնում են միմյանց: Եթե կրթության որակը հնարավոր չէ առանց կրթության մատչելիության, ապա մատչելիությունը իմաստազրկվում է առանց համապատասխան կրթական որակի ապահովման: Որակյալ կրթությունը միտված է ապագային: Որակյալ կրթությունը գիտելիքաստեղծ գործունեության հիմքերից է, որը կարող է բերել գիտելիքահենք տնտեսության, ժողովրդավարական հասարակարգի զարգացման, կյանքի զարգացման նոր ուղիների ու ձևաչափերի ստեղծման ու զարգացման: Առաջարկվում է Ինդոնեզիայի հաջողված փորձը տեղայնացնել Հայաստանում: Սուբսիդավորման համար ընդգրկել աղքատ ընտանիքների 6-18 տարեկան անձանց կրթության ծախսերը: Տարեկան կրթություն ստանալու համար տրամադրվող գումարների չափը սահմանել ըստ հանրակրթական ուսուցման փուլերի (տարրական, միջնակարգ և ավագ դպրոցներ): Գումարների վճարման համար թողարկել «խելացի» քարտեր, որոնք հնարավոր կլինի օգտագործել հատուկ խանութներում (գրենական պիտույքներ, համապատասխան տարիքի համար նախատեսված հագուստի խանութներ և այլն):

Ինչպես Ինդոնեզիան, այնպես էլ Հայաստանն ունի զբոսաշրջային ներուժ:

Զբոսաշրջության ոլորտը Հայաստանի հեռանկարային ոլորտներից է: Ինդոնեզիայի զարգացման փորձը ուսումնասիրելով՝ Հայաստանը կարող է ընդօրինակել բաց սահմանի և հյուրանոցների բազմազանության դրույթները:

Ինդոնեզիայի որդեգրած քաղաքականության հաստատումը տնտեսական աճն է և զարգացող ժողովրդավարական հասարակության շրջանակներում քաղաքական կայունության ամրապնդումը:

Այսպիսով, կարծում ենք, Ինդոնեզիայի տնտեսական փորձի ուսումնասիրությունն ու բերված առաջարկությունները կարող են հանգեցնել Հայաստանի Հանրապետության տնտեսության որակական փոփոխությունների՝ ապահովելով տնտեսության թռիչքաձև զարգացումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. А. В. Попов, “Экономика Индонезии: современное состояние и тенденции развития”, М., 2019.
2. Л. Ф. Пахомова, “Модели процветания (Сингапур, Малайзия, Таиланд, Индонезия)”, стр. 194.
3. Growth and Inequality: The Case of Indonesia, 1960-1997, Table 5, p. 27.
4. Indonesia Source Book. Jakarta, 1994, p. 72-74.
5. Kaufman G. G., Krueger T. H., Hunter, W. C. (1999) The Asian Financial Crisis: Origins, Implications and Solutions. Springer.
6. Public Debt and Its Determinants in Market Access Countries, Results from 15 Country Case Studies, March 2005, The World Bank, p. 50.
7. Rosser A., The Politics of Economic Liberalisation in Indonesia: State, Market and Power. – Richmond: Curzon, 2002, p. 42.
8. Prof. Dr Boediono. Ekonomi Indonesia dalam Lintasan Sejarah. Jakarta, 2016, h.171.
9. http://presidenri.go.id/Laporan 4 Tahun Pemerintahan Joko Widodo – Jusuf Kalla. h.54.
10. http://www.satuharapan.com/read-detail/read/6400-mahasiswa-miskin-di-papua-butuh-beasiswa-bidikmisi
11. https://countryeconomy.com/gdp/indonesia?year=1997
12. https://data.worldbank.org/indicator/NE.EXP.GNFS.CD?end=1997&locations=ID&start=1986
13. https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=ID
14. https://lldikti8.ristekdikti.go.id/wp-content/uploads/2019/07/Permenristekdikti-6-2019-Bantuan-Biaya-Pendidikan-bagi-Mahasiswa-Miskin-Berprestasi.pdf
15. https://polpred.com/?ns=1&ns_id=1158426
16. https://www.kemdikbud.go.id
17. https://www.sgs.co.id/en/our-company/about-sgs/sgs-in-brief/sgs-in-indonesia
18. www3.bkpm.go.id/en/statistic/foreign-direct-investment-fdi

References
1. A. V. Popov, “Jekonomika Indonezii: sovremennoe sostojanie i tendencii razvitija”, M., 2019.
2. L. F. Pahomova, “Modeli procvetanija (Singapur, Malajzija, Tailand, Indonezija)”, str. 194.Growth and Inequality: The Case of Indonesia, 1960-1997, Table 5, p. 27.
3. Indonesia Source Book. Jakarta, 1994, p. 72-74.
4. Kaufman G. G., Krueger T. H., Hunter, W. C. (1999) The Asian Financial Crisis: Origins, Implications and Solutions. Springer.
5. Public Debt and Its Determinants in Market Access Countries, Results from 15 Country Case Studies, March 2005, The World Bank, p. 50.
6. Rosser A., The Politics of Economic Liberalisation in Indonesia: State, Market and Power. – Richmond: Curzon, 2002, p. 42.
7. Prof. Dr Boediono. Ekonomi Indonesia dalam Lintasan Sejarah. Jakarta, 2016, h.171.
8. http://presidenri.go.id/Laporan 4 Tahun Pemerintahan Joko Widodo – Jusuf Kalla. h.54.
9. http://www.satuharapan.com/read-detail/read/6400-mahasiswa-miskin-di-papua-butuh-beasiswa-bidikmisi
10. https://countryeconomy.com/gdp/indonesia?year=1997
11. https://data.worldbank.org/indicator/NE.EXP.GNFS.CD?end=1997&locations=ID&start=1986
12. https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=ID
13. https://lldikti8.ristekdikti.go.id/wp-content/uploads/2019/07/Permenristekdikti-6-2019-Bantuan-Biaya-Pendidikan-bagi-Mahasiswa-Miskin-Berprestasi.pdf
14. https://polpred.com/?ns=1&ns_id=1158426
15. https://www.kemdikbud.go.id
16. https://www.sgs.co.id/en/our-company/about-sgs/sgs-in-brief/sgs-in-indonesia
17. www3.bkpm.go.id/en/statistic/foreign-direct-investment-fdi

Տաթևիկ Փարսադանյան
Տաթևիկ Շահինյան

ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համառոտագիր: Տվյալ հոդվածի շրջանակներում ուսումնասիրվել է Ինդոնեզիայի Հանրապետության «տնտեսական հրաշքի» ժամանակաշրջանը: Ուսումնասիրվել են տնտեսական զարգացման հետևյալ կարևորագույն փուլերը. «Նոր կարգի» հաստատում, նավթային հեղաշրջում, ազատականացման բարեփոխումներ, «Նոր կարգի» զարգացում: Նկարագրվել են յուրաքանչյուր շրջափուլի գերակա ոլորտները, ներկայացվել են կատարված փոփոխությունները: Վեր-

լուծվել է կառավարության կողմից վարած քաղաքականությունը: Առանձնացվել են տնտեսության թռիչքաձև զարգացման համար գերակա ոլորտները և արվել են որոշակի առաջարկություններ:

Բանալի բառեր. *տնտեսական հրաշք, ֆինանսատնտեսական ճգնաժամ, «Նոր կարգի» ժամանակաշրջան, ներդրումներ, գյուղատնտեսական արտադրություն, արտահանում*

Татевик Парсаданян
Татевик Шагинян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» ИНДОНЕЗИИ

Аннотация: В данной статье был рассмотрен период «экономического чуда» Республики Индонезия. Изучены следующие важнейшие этапы экономического развития: установление «Нового порядка», нефтяная революция, реформы либерализации, развитие «Нового порядка». Описаны приоритетные области каждого цикла, были представлены внесенные изменения. Проанализирована политика правительства. Выделены приоритетные области быстрого развития экономики и представлены конкретные рекомендации.

Ключевые слова: экономическое чудо, финансово-экономический кризис, период “Нового порядка”, инвестиции, сельскохозяйственное производство, экспорт

Tatevik Parsadanyan
Tatevik Shahinyan

“THE ECONOMIC MIRACLE” OF INDONESIA

Abstract: This article has reviewed the period of the “economic miracle” of the Republic of Indonesia. The following most important stages of economic development have been studied: establishment of “New scheme”, oil revolution, liberalization reforms, development of “New scheme”. The priority areas of each cycle have been described and changes made have been presented. The government policy has been analyzed. The priority areas for rapid development of the economy have been emphasized and specific recommendations have been made.

Keywords: economic miracle, financial and economic crisis, period of “New scheme”, investments, agricultural production, export

Արմինե Զախարյան

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համաշխարհային տնտեսությունում Հարավային Կորեան հայտնի է որպես «ասիական տնտեսական վագր»: Լինելով ավտոմեքենաների և կենցաղային էլեկտրոնիկայի խոշորագույն արտադրողներից մեկը՝ երկիրը վերահսկում է համաշխարհային նավաշինության մոտ 1/3-ը:

Հարավային Կորեայի տարածքը 97.489 քառ. կմ է, որը գտնվում է Կորեական թերակղզում՝ Ասիայի հյուսիսարևելյան մասում: Մայրաքաղաքը Սեուլն է: Այն սահմանակից է Ճապոնիայի, Չինաստանի և Հյուսիսային Կորեայի հետ: 2018 թ. Կորեայի Հանրապետության բնակչությունը կազմել է 51.6 միլիոն մարդ: Բնակչության մեծ մասը կենտրոնացած է Սեուլում և նրա շրջակայքում, ինչպես նաև Բուսան, Ինչոն, Դեգու, Դաեջոն, Քվանջու և Ուլսան քաղաքներում[1]:

Կորեական պետականությունն իր պատմությունը սկսել է մ.թ.ա. IV-III դարերից: 20-րդ դարի առաջին կեսին Կորեան Ճապոնիայի գաղութն էր: 1948 թ.՝ Հարավային և Հյուսիսային Կորեաների բաժանման պահին, գործնականում ամբողջ արդյունաբերությունը և էներգետիկան կենտրոնացված են եղել հյուսիսում: 1960-ական թվականների սկզբին Հարավային Կորեայի տնտեսական վիճակը եղել է աղետալի: Երկիրը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի մակարդակով հետ էր մնում ոչ միայն Մեքսիկայից և Նիգերիայից, այլև Նոր Գվինեայից: Հարավային Կորեայում փաստացիորեն բացակայում էին բնական ռեսուրսները (բացառություն էին կազմում ցածր որակի ածխի ոչ մեծ պաշարները, որոնց արդյունահանումը վաղուց դադարեցված էր անշահավետության պատճառով): Գարնանը գյուղացիների զգալի մասը թերսնված էր լինում, էլեկտրականությունը նույնիսկ Սեուլում տրվում էր ոչ կանոնավոր, չկար ոչ մի բնակելի տուն, որը բարձր լիներ երեք հարկից:

Հարավային Կորեայի նոր իշխանությունների առջև դրված էր գրեթե անլուծելի խնդիր՝ «ստեղծել ամեն ինչ ոչնչից»: Եվ խնդիրն իսկապես լուծվել է: Մոտ երկու տասնամյակների ընթացքում Հարավային Կորեայի ՀՆԱ-ի տարեկան աճը կազմել է 9-10 տոկոս՝ առանձին տարիներին հասնելով շուրջ 12-14 տոկոսի և երբեք չնվազելով 5 տոկոսից: Երեք տասնամյակների ընթացքում Հարավային Կորեան զարգացող երկրից դարձել է զարգացած երկիր:

Հարավային Կորեան բավականին մեծ կախվածություն է ունեցել ամերիկյան վարկերից, պետական բյուջեի 50 տոկոսը կազմել է ամերիկյան օգնությունը, ընդ որում՝ պաշտպանությանն ուղղված հատկացումների 70 տոկոսը եղել է ԱՄՆ-ի օգնությունը: 1953–1962 թթ. ժամանակահատվածում երկրի ներմուծման 70 տոկոսը և կապիտալ ներդրումների 80 տոկոսը նույնպես ամերիկյան էին: Իրավիճակը բարդանում էր նաև նրանով, որ արդյունաբերական զարգացման

[1] Южная Корея, Население, https://knoema.ru/atlas/Южная Корея

առումով Հարավը զիջում էր Հյուսիսին և չուներ բանիմաց տեխնիկական մասնագետներ: Հարավային Կորեայում առկա միակ ռեսուրսը եղել է էժան աշխատուժը: Բնակչությունը բացարձակապես պահանջկոտ չէր և պատրաստ էր բարեխիղճ աշխատել չնչին վարձատրությամբ, քանի որ կորեացիների մեծամասնությունը չուներ ո՛չ կրթություն և ո՛չ էլ մասնագիտական պատրաստվածություն[1]:

Երկրի տարածքում բացակայում էին բնական ռեսուրսները, որոնց արտահանման միջոցով հնարավոր կլիներ ապահովել կայուն ֆինանսական հոսքեր, ինչպես դա անում էին արաբական երկրները նավթի վաճառքի միջոցով: Բացի այդ, երկրում տիրող աղքատությունը և բարդ քաղաքական իրավիճակը անհնարին էին դարձնում մեծածավալ արտասահմանյան ներդրումների իրականացումը:

Դիտարկվող ժամանակահատվածում Հարավային Կորեայի տնտեսական զարգացմանը նպաստել են հատկապես հետևյալ հանգամանքները[2].

- ծանր արդյունաբերության արագընթաց զարգացումը՝ գյուղատնտեսության վերակառուցման հաշվին,
- արտահանման խթանումը և նրա պետական կարգավորումը,
- տնտեսության պետական կոշտ կառավարումը,
- պետական պլանավորումը,
- բանկային համակարգի և տրանսպորտի ազգայնացումը,
- խոշոր արդյունաբերական խմբերի զարգացման պետական խթանումը, դրանց ստեղծումը ոչ թե մասնավորեցման ճանապարհով, այլ «զրոյից» նոր հիմնադրմամբ,
- ԱՄՆ-ի հետ բարեկամական հարաբերությունների հաստատումը՝ աշխարհաքաղաքական շահերի ընդհանրության հիման վրա:

Հարավային Կորեայում «շուկայի անտեսանելի ձեռքերը» կապված էին: Հաջողության հասնելու կախարդական բանաձևը շատ պարզ էր՝ **բռնապետություն + էժան աշխատուժ + օտարերկրյա կապիտալ = հարավկորեական հրաշք**: Ակնհայտ է, որ այլ զարգացող երկրների կողմից այս հրաշքի կրկնությունը քիչ հավանական է, քանի որ Ամերիկայի Միացյալ Նահանգները պատրաստ չէ մեծածավալ գումարներ հատկացնել յուրաքանչյուր բռնապետի:

Հարավային Կորեայում մետալուրգիայի և նավաշինության ճյուղերի զարգացմանը հետագայում հետևեցին առավել տեխնոլոգիատար ճյուղերը՝ մեքենաշինական արդյունաբերությունը, որի զարգացումը սկսվել է 1976 թ. հետո, և էլեկտրոնիկան՝ 1980-ական թվականներին: Շնորհիվ սեփական ծանր և քիմիական արդյունաբերության զարգացման՝ մի շարք ճյուղերում անցում է կատարվել միայն հավաքումից դեպի արտադրական գործընթացի ամբողջ շղթայի յուրացմանը, ինչը հնարավորություն է ընձեռել կրճատել հումքի և կոմպլեկտավորողների ներմուծումը, ինչպես նաև նվազեցնել առևտրային հաշվեկշռի պակասուրդը, որը 1970-ական թվականներին հասնում էր 1.1 մլրդ դոլարի: Նկատենք,

---

[1] Южная Корея – рецепт экономического чуда, https://nstarikov.ru/yuzhnaya-koreya-recept-yekonomicheskogo-ch-66683

[2] Экономическое чудо Южной Кореи, http://fedin.org/ekonomika/chudo-yuzhnoj-korei.html

որ ծանր արդյունաբերության ձեռնարկությունները մեծամասամբ ստեղծվել են որպես Հարավային Կորեայի ռազմարդյունաբերական համալիրի հիմք:

Անդրադառնալով հարավկորեական «տնտեսական հրաշքին»՝ կարևոր ենք համարում ներկայացնել նաև վերջինիս քաղաքական դրդապատճառները[1]: Ինչպես հայտնի է, 1961 թ. մայիսի 16-ին Հարավային Կորեայում տեղի է ունեցել ռազմական հեղաշրջում: Մի քանի հազար զինվոր իրենց հեղափոխական հրամանատարների հրամանով մտել են Սեուլ, գրավել փոստը, հեռագրատունը, ռադիոկայանները, հրատարակչությունները և իշխանության մարմինների շենքերը: Նրանք իրենց գործողությունները բացատրում էին նրանով, որ «եկել է իշխանությունը ժողովրդին փոխանցելու ժամանակը»՝ խոստանալով երկրում կարգուկանոն հաստատելուց հետո հեռանալ իշխանությունից և անցկացնել ժողովրդավարական ընտրություններ: Սակայն ռազմահեղափոխական կոմիտեն գլխավորած **Պակ Չոն Հին** (Park Chung-Hee) ամենևին էլ չէր պատրաստվում որևէ մեկին զիջել երկրի ղեկավարումը: Երկու տարի նա կառավարել է որպես ռազմական դիկտատոր, իսկ 1963 թ. առաջադրել է իր թեկնածությունը նախագահական ընտրություններում և հաղթել ոչ առանց ԱՄՆ-ի օգնության:

Հարավային Կորեայում Պակ Չոն Հիի իշխանության գալու պահին չկային ո՛չ ֆինանսներ, ո՛չ որակյալ կադրեր և ո՛չ էլ սարքավորումներ: Այդ պատճառով սկզբնական շրջանում շեշտը դրվել է թեթև արդյունաբերության զարգացման վրա, որի վերելքը չէր պահանջում ո՛չ խոշոր կապիտալ, ո՛չ բարձր տեխնոլոգիաներ, ո՛չ էլ կիրթ մասնագիտական կադրեր: Հարյուրհազարավոր գյուղաբնակներ տեղափոխվում էին քաղաքներ, որտեղ բազմաթիվ կարի արհեստանոցներում կարում էին հագուստ և կոշիկներ, պատրաստում էին կեղծամներ և խաղալիքներ, որոնք արտահանվում էին Արևմուտքի երկրներ: Աշխատանքի պայմանները շատ ծանր էին. ամսական տրվում էր մեկ հանգստյան օր, իսկ աշխատանքային օրվա տևողությունը 10 ժամից պակաս չէր:

Պակ Չոն Հին նոր տնտեսության կառուցման համար կիրառել է հետևյալ միջոցները.

- վարչակարգի հակառակորդների ձերբակալություններ և խոշտանգումներ,
- պատերազմ կոռուպցիային,
- ինդուստրիալիզացիա (գյուղաբնակներին հարկադրաբար տեղափոխում էին քաղաքներ՝ աշխատելու մասնավոր ձեռնարկություններում),
- հատկապես հարուստ բիզնեսմենների կալանավորում և բանկային հատվածի ազգայնացում, որի արդյունքում ապահովվել է վերահսկողությունը բոլոր ֆինանսական հոսքերի նկատմամբ:

Սակայն հարկ է նշել, որ Պակ Չոն Հին պատմականորեն հայտնի է ոչ թե որպես «արյունոտ բռնապետ», այլ որպես «հարավկորեական տնտեսական հրաշքի» հայր, ով կարողացել է Ասիայի աղքատագույն երկրներից մեկը դարձնել ինքնուրույն ու հզոր տնտեսությամբ կայուն պետություն: Այս հրաշքը հնարավոր

[1] Южная Корея – рецепт экономического чуда, https://nstarikov.ru/yuzhnaya-koreya-recept-yekonomicheskogo-ch-66683

է դարձել միայն շնորհիվ տնտեսության կոշտ կառավարման, պետության դերի ուժեղացման և կենտրոնացված պլանավորման: Հարավային Կորեային բարձրացրեց ոչ թե տնտեսական և քաղաքական լիբերալիզմը, այլ տնտեսական և քաղաքական լիբերալիզմի բացակայությունը:

Հատուկ պետք է ընդգծել նաև պլանավորման կարևորությունը: Երկրում ***տնտեսության զարգացման հնգամյակները*** գոյություն են ունեցել մինչև 1984 թվականը: Երեք հնգամյակների ընթացքում Հարավային Կորեան իրականացրել է մեծագույն տնտեսական թռիչք: Անհրաժեշտ է նկատել, որ համանման զարգացման պլաններն իրենց ժամանակին հանդիսացել են նաև ԽՍՀՄ-ում տնտեսական աճի ապահովման հիմքը: Առաջին հնգամյակները ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հարավային Կորեայում ունեցել են միևնույն նպատակը՝ արագ ինդուստրիալիզացիան, որի հիմքում դրված է եղել ջանքերի առավելագույն կենտրոնացումը՝ ուղղված, առաջին հերթին, ծանր արդյունաբերության ստեղծմանն ու զարգացմանը:

Այս տարիներին Հարավային Կորեայում իրականացվել է նաև գյուղատնտեսական ռեֆորմ: Հողերը բաժանվել են գյուղացիական ընտանիքներին՝ շեշտը դնելով փոքր և միջին ընտանեկան ձեռնարկությունների ստեղծման և հետագա զարգացման ապահովման վրա: Միջինում մեկ ընտանիքին բաժին ընկնող մշակվող հողերի մակերեսը կազմել է 1 հեկտար: Ընդ որում՝ երկրում աղետալիորեն քիչ էին գյուղատնտեսական գործունեության իրականացման համար պիտանի հողերը:

Հատկապես Պակ Չոն Հիի օրոք Հարավային Կորեայի կառավարությունն էր որոշում արտադրության տեսակները և ծավալները՝ սահմանելով ֆիքսված գներ: Կառավարությունը գյուղական բնակչությունից երաշխավորված բարձր գներով գնում էր սննդամթերքը, բյուջեի հաշվին փոխհատուցում առաջացած որոշակի ծախսերը և դրանով իսկ խթանում հարավկորեական արտադրողին՝ ըստ էության իրականացնելով պետական գնումների և պետական ֆինանսավորման էքսպանսիա: Վերջինս, կարծում ենք, ներմուծման փոխարինման բավականին լավ օրինակ է:

Հարավային Կորեայում կառավարության բոլոր ջանքերն ուղղված էին հայրենական արտադրողի պաշտպանությանն ու աջակցությանը: Խնդիր էր դրվել արտադրել բացարձակապես այն ամենը, ինչ որ սպառում էր հարավկորեական ժողովուրդը:

Հատուկ նշենք, որ Հարավային Կորեայում փոքր և միջին բիզնեսի հետ մեկտեղ պետությունը առավելագույնս աջակցել է (նույնիսկ արհեստականորեն ստեղծել է) նաև խոշոր հոլդինգներին: Նմանատիպ ձեռնարկություններին տրամադրելով պետական երաշխիքներ՝ կառավարությունն իրականացրել է ագրեսիվ քաղաքականություն արտաքին շուկաներում՝ գովազդելով իր արտադրողին միջազգային ցուցահանդեսներում:

Հարավային Կորեայի կառավարությունը վերահսկել է նաև արտաքին առևտուրը և ձեռնարկել է հովանավորչական միջոցներ հայրենական արտադրողի

պաշտպանության համար: Համաձայն տնտեսական զարգացման նոր հայեցակարգի՝ Հարավային Կորեան պետք է ստեղծեր դեպի արտահանումը կողմնորոշված արտադրություններ և դառնար յուրօրինակ հավաքման արտադրամաս այլ երկրների համար: Այդ նպատակով պետությունը բազմաթիվ կորպորացիաներից (չեբոլներից) առանձնացրել էր 10 առավել հեռանկարայինները և նրանց համար ապահովել արագընթաց զարգացման լավագույն պայմաններ, փոխարենն այդ խոշոր կորպորացիաները պետք է պետությանն աջակցեին տնտեսական վերափոխումների իրականացման գործում: Դրանք հետագայում հայտնի դարձած հարավկորեական բիզնեսի հսկաներն էին՝ «Samsung», «Hyundai», «Gold Star» (ապագա «LG Electronics») և այլն[1]: Մեքենաշինության, նավաշինության, էլեկտրոնիկայի և մի շարք այլ ոլորտներում գործող չեբոլների համար պետական փոխառությունների միջոցով իրականացվել է արտոնյալ և երկարաժամկետ վարկավորում, իսկ արտաքին առևտրում առաջացած բոլոր դրամարկղային տարբերությունները փոխհատուցվել են պետության կողմից: Վերջինիս արդյունքում չեբոլները դարձել են «հարավկորեական տնտեսական հրաշքի» հիմնական շարժիչ ուժը:

Հարավային Կորեայում սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնական նպատակն աշխատուժի էժանության պահպանումն էր՝ կապված հետևյալ նախապայմանների առկայության հետ.

- տնտեսության աճի գործընթացի սկզբում ազգաբնակչության ցածր կենսամակարդակը,
- ստացվող շահույթի համեմատությամբ աշխատավարձի ցածր մակարդակը,
- աշխատանքային շաբաթվա երկար տևողությունը,
- իշանությունների հակաբանվորական կոշտ քաղաքականությունը, երբ ցույցերը դաժան միջոցներով ճնշվել են ոստիկանության կողմից:

Միաժամանակ խրախուսվում էր խոշոր կապիտալի բարեգործական գործունեությունը:

Պակ Չոն Հիի կառավարությունը ձգտում էր պահպանել անփոփոխ աշխատավարձի մեծությունը, կենսաթոշակներ ընդհանրապես չէին վճարվում: Միայն վերջերս են Հարավային Կորեայում սոցիալական ստանդարտները ձեռք բերել դասական սոցիալական երանգավորում բարձր աշխատավարձի, պետության հաշվին ուսուցման, բժշկական սպասարկման և կենսաթոշակների տեսքով: Սոցիալ-աշխատանքային հարաբերությունների ժամանակակից համակարգը վերջնականապես ընդունվել է միայն 2004 թ.: 2004 թ. դեկտեմբերի 27-ին ուժի մեջ է մտել «Կենսաթոշակային ապահովման մասին» օրենքը, որով ներդրվել է կենսաթոշակային ապահովագրության կուտակային համակարգը:

[1] Южная Корея – рецепт экономического чуда, https://nstarikov.ru/yuzhnaya-koreya-recept-yekonomicheskogo-ch-66683

Պակ Չոն Հիի կառավարության արդյունավետ աշխատանքի շնորհիվ[1]՝

- համաշխարհային տնտեսության կտրվածքով Հարավային Կորեան դարձավ ազդեցիկ և հզոր տնտեսությամբ երկիր,
- նրա ՀՆԱ-ն աճեց շուրջ 179 անգամ՝ պլանային տնտեսության ձևավորման արդյունքում,
- երկրի զարգացմանը մեծապես նպաստեց արտահանումը,
- երկիրն ագրարայինից դարձավ արդյունաբերական,
- Հարավային Կորեան դարձել է բարձր տեխնոլոգիաների մատակարարների մեծ հնգյակի անդամ,
- երկիրն աշխարհում ամենամեծածավալ ներդրումներն է իրականացնում կրթության ոլորտում,
- կրթության որակով Հարավային Կորեան դարձավ աշխարհում 3-րդ երկիրը,
- «հարավկորեական տնտեսական հրաշքին» հասնելու նպատակով կորեացիներն աշխատել են տարեկան 350 օր,
- համաշխարհային տնտեսության կտրվածքով յուրաքանչյուր երրորդ նավը կառուցվել է Հարավային Կորեայում,
- երկիրն առաջատար է համարվում նաև ինտերնետ միացումների քանակությամբ և այլն:

Նշենք նաև, որ թեև 1997 թ. ասիական ճգնաժամից հետո Հարավային Կորեայի տնտեսության աճի տեմպերն այլևս այնքան տպավորիչ չեն, որքան Պակ Չոն Հիի կառավարման տարիներին, այնուամենայնիվ հարավկորեական հսկա չեբոլները շարունակում են իրենց լուրջ դերակատարումն ունենալ համաշխարհային տնտեսությունում:

Ներկայացնենք Հարավային Կորեայի զարգացումն ըստ տնտեսության առանձին ճյուղերի:

Ծանր արդյունաբերություն: Ներկայում Հարավային Կորեան մետալուրգիական արդյունաբերության զարգացման մակարդակով աշխարհում զբաղեցնում է 6-րդ տեղը, որին հատկապես նպաստեց 1973 թ. Պոհանգում առաջին մետալուրգիական գործարանի կառուցումը[2]: Երկրում մետաղների հիմնական արտադրողը POSCO ընկերությունն է, որը պողպատի արտադրության ծավալներով (տարեկան 26 միլիոն տոննա) գլխավորում է աշխարհում խոշորագույն պողպատ արտադրող ընկերությունների ցուցակը: Հարավային Կորեայում սև մետալուրգիայի հիմնական կենտրոններն են Պոհանգ և Գվանգյանգ ծովափնյա քաղաքները: Երկաթի հանքաքարն ու ածուխը մեծամասամբ ներմուծվում են: Երկրում գունավոր մետալուրգիայի մասշտաբներն ավելի համեստ են: Այնուամենայնիվ, Հարավային Կորեան իր սեփական արտադրությամբ լիովին բա-

---

[1] 14 графиков, объясняющих «Корейское экономическое чудо», https://businessviews.com.ua/ru/studies/id/14-grafikov-objasnjajuschih-korejskoe-ekonomicheskoe-chudo-1142/

[2] Промышленность и энергетика Республики Корея, http://www.gecont.ru/articles/common/korea.htm

վարարում է ցինկի և կապարի ներքին պահանջարկը, ինչպես նաև պղնձի պահանջարկի 2/3-ը:

Թեթև արդյունաբերություն: Հարավային Կորեայի թեթև արդյունաբերության արտադրանքի մոտ 2/3-ն արտահանվում է և երկրի արտահանման ընդհանուր ծավալում կազմում է մոտ 9.7%[1]: Թեթև արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալներով Հարավային Կորեան աշխարհում զբաղեցնում է 5-րդ տեղը (Չինաստանից, Իտալիայից, Գերմանիայից և ԱՄՆ-ից հետո), իսկ ըստ թեթև արդյունաբերության արտադրանքի արտադրության ծավալների՝ 7-րդ: Միաժամանակ երկիրը մեծածավալ ներդրումներ է իրականացնում Չինաստանի, ԱՄՆ-ի, Վիետնամի, Ֆիլիպինների, Ինդոնեզիայի, Գվատեմալայի, Հոնդուրասի, Բանգլադեշի և Շրի Լանկայի թեթև արդյունաբերության ոլորտում:

Ավտոմոբիլային արդյունաբերություն: Հարավային Կորեայում ավտոմոբիլային արդյունաբերությանը բաժին է ընկնում ընդհանուր ավելացված արժեքի 9,4% -ը, ընդհանուր արտահանման 8.3% -ը և զբաղվածության 7.4%-ը[2]: Ավտոմոբիլների արտադրությունը մեկնարկեց 1960-ականների սկզբին, երբ ընդունվեց առաջին հնգամյա տնտեսական ծրագիրը: Այդ ժամանակվանից ի վեր Հարավային Կորեայի ավտոմոբիլային արդյունաբերությունը դարձավ տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը՝ դրսևորելով աճի բարձր տեմպեր: Այժմ Հարավային Կորեան ավտոմեքենաների արտադրությամբ աշխարհում զբաղեցնում է 5-րդ տեղը (նրա բաժինը կազմում է համաշխարհային արտադրության 5,4%-ը): Երկրում գործում են հինգ խոշոր ավտոարտադրողներ՝ Hyundai Motor, Kia Motors, GM Daewoo Auto & Technology, SsangYong Motor Company և Renault Samsung Motors: Ներկայում յուրաքանչյուր արտադրողի մոդելային շարքը մշտապես ընդլայնվում է, իսկ ավտոմոբիլային արդյունաբերությունը հանդիսանում է երկրի տնտեսական կայունության ապահովման կարևորագույն գործոն:

Նավաշինություն: Հարավային Կորեայում նավաշինական արդյունաբերությունն իր մեջ է ներառում բոլոր տեսակի նավերի նախագծումը, նորոգումը և վերափոխումը[3]: Նավաշինությունը, լինելով երկրի կարևորագույն արդյունաբերական ուղղություններից մեկը և տնտեսության զարգացման կարևորագույն գործոնը, միաժամանակ խթանում է նաև հարակից ոլորտների՝ մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության և էլեկտրոնիկայի զարգացումը: Հարավային Կորեայում նավաշինությունն իր սկզբնական զարգացումն ապրեց սկսած 1970 թ.: 1973 թ. Hyundai Heavy Industries ընկերությունն ավարտեց իր առաջին նավի կառուցումը: 1978 թ. Daewoo Shipbuilding and Marine Engineering ընկերությունը

---

[1] Промышленность и энергетика Республики Корея, http://www.gecont.ru/articles/common/korea.htm

[2] Ведущие отрасли экономики Южной Кореи, https://vseokoree.com/vse-o-koree/ekonomika-korei/vedushhie-otrasli-ekonomiki-yuzhnoj-korei

[3] Ведущие отрасли экономики Южной Кореи, https://vseokoree.com/vse-o-koree/ekonomika-korei/vedushhie-otrasli-ekonomiki-yuzhnoj-korei

շահագործման հանձնեց նավերի կառուցման, վերանորոգման և պահպանման համար նախատեսված իր առաջին ինժեներական կառույցը: Այնուհետև 1979 թ. նույն աշխատանքն իրականացրեց նաև Samsung Heavy Industries ընկերությունը: Ներկայում այս երեք ընկերությունները Հարավային Կորեայի նավաշինության հսկաներն են, իսկ Hyundai Heavy Industries-ը՝ նաև համաշխարհային նավաշինության առաջատարը: 1980 թ. երկրի նավաշինությունն արդեն արձանագրեց բուռն աճ: Հարավային Կորեան նավերի արտադրությամբ աշխարհում զբաղեցրեց 2-րդ տեղը (նրա բաժինը կազմում է համաշխարհային արտադրության 59,3%-ը): Երկրում զգալիորեն աճել է բարդ և թանկ նավերի՝ մեծ տոննաժով բեռնարկղային նավերի և նավթատանկերների, ինչպես նաև գազ փոխադրող նավերի արտադրության տեսակարար կշիռը: Նպատակային մասնագիտացումը Հարավային Կորեային մոտեցրել է համաշխարհային մակարդակով թանկարժեք նավերի մենաշնորհային արտադրողի կարգավիճակին:

Էներգետիկա: Հարավային Կորեան օգտակար հանածոների առումով աղքատ երկիր է, և նրա էներգետիկ ռեսուրսները ներառում են քարածխի, ուրանի և ջրային ռեսուրսների փոքր պաշարներ[1]: Հետևաբար երկիրը ստիպված էր ներմուծել մեծ քանակությամբ նավթ, գազ և քարածուխ: Սակայն 1978 թ. Հարավային Կորեան գործարկեց իր առաջին միջուկային ռեակտորը, որից հետո երկրում միջուկային էներգետիկան սկսեց արագ զարգանալ: Ներկայում Հարավային Կորեան ունի 16 ատոմակայան: 2001 թվականից սկսած այդ էլեկտրակայաններն արտադրում են ամբողջ էլեկտրական էներգիայի շուրջ 39% -ը:

Էլեկտրոնիկա: Էլեկտրոնային արդյունաբերության պետական աջակցության շնորհիվ Հարավային Կորեան էլեկտրասարքերի արտադրությամբ զբաղեցնում է 1-ին տեղն աշխարհում[2]: Այս ոլորտը հիմնականում ներկայացնում են աշխարհահռչակ LG, Samsung և Daewoo Electronics ընկերությունները, որոնք արտադրում են սպառողական էլեկտրոնիկայի գրեթե ամբողջ տեսականին, որի մեծ մասն արտահանվում է: Հարավային Կորեան հեռահաղորդակցման սարքավորումների (հատկապես բջջային հեռախոսների) արտադրությամբ աշխարհում նույնպես առաջատար դիրքեր է զբաղեցնում: Երկրում բարձր տեխնոլոգիաների ոլորտի կարևորագույն ուղղություններից է կիսահաղորդչային արդյունաբերությունը:

Տուրիզմ: Հարավային Կորեայի մշակույթի միջազգային տարածման և խոշոր մարզական միջոցառումների կազմակերպման շնորհիվ լուրջ նախադրյալներ են ստեղծվում տուրիզմի զարգացման համար: Մասնավորապես՝ երկիրը հյուրընկալեց ֆուտբոլի աշխարհի գավաթը 2002 թ., Ասիայի խաղերը՝ 2014 թ., Ձմեռային օլիմպիական խաղերը՝ 2018 թ.: Եթե 1998-ին Հարավային Կորեան հյուրընկալել էր 4.28 միլիոն զբոսաշրջիկի, ապա 2018-ին՝ արդեն 14 միլիոն

---

[1] Промышленность и энергетика Республики Корея, http://www.gecont.ru/articles/common/korea.htm

[2] Ведущие отрасли экономики Южной Кореи, https://vseokoree.com/vse-o-koree/ekonomika-korei/vedushhie-otrasli-ekonomiki-yuzhnoj-korei

(աճը 2017-ին՝ 14,9%): Եթե նախկինում Հարավային Կորեայում զբոսաշրջության արդյունաբերությունը հիմնականում զարգանում էր *ներքին* (ազգային) զբոսաշրջիկների հաշվին, ապա ներկայում զգալիորեն աճում է նաև արտաքին զբոսաշրջիկների թվաքանակը:

Նկատենք նաև, որ Հարավային Կորեան հաջողությամբ կարողացավ դիմակայել նաև 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին[1]: Մասնավորապես՝ բյուջետային ծախսերի ավելացման, հարկերի կրճատման, սոցիալական աջակցության ծրագրերի իրագործման, նոր աշխատատեղերի ստեղծման և բանկային կապիտալի իրացվելիության ապահովման միջոցով երկրի կառավարությանը հաջողվեց կասեցնել ճգնաժամային իրավիճակների հետագա զարգացումը[2]: Ներկայացնենք 2007-2018 թթ. Հարավային Կորեայի տնտեսության զարգացման մակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշները՝ ՀՆԱ-ի աճը, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, գործազրկության մակարդակը և արտահանումը ստորև բերված գծապատկերներ 1,2,3 և 4-ի միջոցով:



Գծապատկեր 1. *Հարավային Կորեայի ՀՆԱ-ի աճը (2007-2018 թթ.)*[3]

Հարավային Կորեայի հիմնական տնտեսական ցուցանիշների ուսումնասիրությունն իրականացրել ենք սկսած նախաճգնաժամային 2007 թվականից, որպեսզի ներկայացնենք նաև երկրի դիմադրողականությունն արտաքին բացասական զարգացումների նկատմամբ: Ինչպես նկատում ենք, 2008-2009 թթ. ընթացքում Հարավային Կորեայում տեղի է ունեցել ՀՆԱ-ի կտրուկ անկում՝ 5.5 տոկոսային կետով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զարգացած երկրնե-

[1] Economic Bulletin vol. 32 No 2, 2010. The global economic crisis: How Korea countered it. Ministry of strategy and finance.

[2] Хан Сеонг-чин, Антикризисное регулирование в условиях догоняющей модернизации (на примере Республики Корея), научный журнал «Национальные интересы: приоритеты и безопасность», N12 (105), 2011г., с. 69-72.

[3] Южная Корея, https://knoema.ru/atlas/Южная Корея

ում ՀՆԱ-ի աճի նորմա է համարվում 1.5-5.0 միջակայքը, կարող ենք նշել, որ 2009 թ. գրանցված ցուցանիշը (0.3%) վկայում է տնտեսության վիճակի իրական վատթարացման մասին: Սակայն 2010 թ. Հարավային Կորեային հաջողվել է նույնիսկ գերազանցել նախաճգնաժամային տարվա ցուցանիշը՝ արձանագրելով ՀՆԱ-ի 6,8 տոկոսանոց աճ: Այնուհետև 2011-2012 թթ. կրկին նկատվում է ՀՆԱ-ի ցուցանիշի անկում: Հետագա տարիներին նկատում ենք ՀՆԱ-ի ցուցանիշի աննշան վերիվարումներ, սակայն հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ առկա է որոշակի կայունություն, և 2018 թ. 2.7% ցուցանիշը գտնվում է 1.5-5.0 միջակայքում, ինչը կարելի է համարել նորմալ:



Գծապատկեր 2. *Հարավային Կորեայի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն (2007-2018 թթ.)*[1]

Ի տարբերություն ՀՆԱ-ի աճի ցուցանիշի՝ Հարավային Կորեայում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2018-ին 2007-ի համեմատությամբ աճել է 9.234 ԱՄՆ դոլարով: Որոշակի նվազեցումներ են նկատվել 2008-2009 թթ., սակայն հետագա տարիներին իրավիճակը զգալիորեն բարելավվել է, ինչն էլ վկայում է երկրի բնակչության կենսամակարդակի որոշակի բարելավման մասին:

[1] Южная Корея, https://knoema.ru/atlas/Южная Корея



Գծապատկեր 3. *Հարավային Կորեայում գործազրկության մակարդակը (2007-2018 թթ.)*[1]

Ինչպես տեսնում ենք, Հարավային Կորեայում 2018 թ. նախաճգնաժամային 2007-ի համեմատությամբ գործազրկության մակարդակը բնութագրող ցուցանիշն աճել է աննշան՝ 0.5 տոկոսային կետով: Ինչպես գիտենք, գործազրկության ընդունելի ցուցանիշը կազմում է 10 տոկոս, և 3.8 %-ը նույնպես կարելի է համարել նորմալ, քանի որ վերջինս չի կարող հանգեցնել բնակչության կենսամակարդակի էական վատթարացման:



Գծապատկեր 4. *Հարավային Կորեայի արտահանումը (2007-2018 թթ.)*[2]

Գծապատկեր 4-ի տվյալները վկայում են, որ 2018-ին 2007-ի համեմատությամբ Հարավային Կորեայի արտահանումն ավելացել է 270.278.8 մլն ԱՄՆ դոլարով: Նվազագույն ցուցանիշն արձանագրվել է ճգնաժամային 2009 թ. (436.472.4 մլն ԱՄՆ դոլար), իսկ առավելագույնը՝ 2014 թ. (725.298.8 մլն ԱՄՆ

[1] Южная Корея, https://knoema.ru/atlas/Южная Корея
[2] Южная Корея, https://knoema.ru/atlas/Южная Корея

դոլար): Ընդհանուր առմամբ, Հարավային Կորեայի արտահանման ցուցանիշը երկարատև ժամանակահատվածում պահպանել է շարունակական կայուն աճի միտումը, ինչն էլ մեծապես նպաստում է երկրի տնտեսության տևական զարգացմանը:

Նկատենք նաև, որ Հարավային Կորեան 2018 թ. հինգերորդ անգամ անընդմեջ զբաղեցրեց 1-ին տեղը Bloomberg նորարարության համաթվում[1]: Այս համաթիվը երկրները գնահատում է 7 չափանիշներով՝ ներառյալ հետազոտությունների և մշակումների ծախսերը, ինչպես նաև բարձր տեխնոլոգիական ոլորտին պատկանող պետական ընկերությունների թիվը: 2018 թ. բիզնեսի վարման դյուրինությունը բնութագրող Համաշխարհային բանկի Doing Business-ի վարկանիշում Հարավային Կորեան զբաղեցնում է 5-րդ տեղը[2]: Վերջինս նպաստում է ներդրողների ակտիվության, արտադրության ու հեռահաղորդակցության բարձր մակարդակի, ինչպես նաև կայուն տնտեսական աճի ապահովմանը:

Փաստորեն Հարավային Կորեան 30 տարվա ընթացքում տնտեսության զարգացման այնպիսի ճանապարհ անցավ, ինչպիսին զարգացած երկրներն անցնում են 100 տարվա ընթացքում: Վերջինս հիմնականում պայմանավորված էր կորեական կառավարության կողմից մշակված տնտեսության զարգացման արտաքին ռազմավարությամբ, որակյալ աշխատուժի և տեխնոլոգիական նորարարությունների առկայությամբ:

Հաշվի առնելով Հարավային Կորեայի տնտեսության արագընթաց զարգացման ներկայացված փորձը, կարող ենք առաջարկել ՀՀ տնտեսական վիճակի բարելավման հետևյալ ուղիները.

- **ինժեներական կրթության ֆինանսավորման ծավալների ավելացման միջոցով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների թվաքանակի ավելացումը**: Անշուշտ, Հայաստանի Հանրապետության համար տնտեսական զարգացման ռազմավարության կարևորագույն ուղղություն պետք է դառնա բարձր տեխնոլոգիաների ոլորտի առաջանցիկ զարգացումը, ինչը ենթադրում է ինովացիոն գործունեության խթանում, կառավարման արդիական մեխանիզմների արմատավորում, ներդրումային գրավչության բարձրացում, արտահանմանն ուղղված արտադրությունների կազմակերպում և այլն: Դրա համար Հայաստանն ունի բոլոր հնարավորությունները, որոնք ձևավորվել են դեռևս կենտրոնացված կառավարման տարիներին: Հայաստանը ժողովրդատնտեսական մեծ համալիրում առաջատար դիրքեր էր գրավում տիեզերական հետազոտությունների, հաշվողական տեխնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, նավիգացիոն սարքավորումների, կիսահաղորդիչների և բարձր տեխնոլոգիաների արտադրության այլ ոլորտներում: Նկատենք, որ ինովացիոն գործունեության ակտիվացման համար Հայաստանում առկա են լավ հնարավորություններ, քանի

[1] Как Корея за 40 лет из отсталой аграрной страны стала технологическим лидером, https://www.vedomosti.ru/partner/articles/2019/02/14/793589-futuristicheskaya-volna

[2] Южная Корея, Рейтинг Ease of Doing Business, https://knoema.ru/atlas/Южная Корея

որ հանրապետությունը տարածաշրջանի երկրների նկատմամբ առանձնանում է մի շարք մրցակցային առավելություններով, որոնցից հիմնականներն են.

- միջազգային չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների իրականացման կարողությունները,
- տեխնիկական հմտություններով և լեզվի իմացությամբ բարձրակարգ մասնագետները,
- ժամանակակից մասնագիտացումներով բուհական հիմնարար ծրագրերը,
- մրցակցային բարձր մակարդակի աշխատուժը և ցածր գործառնական ծախսերը,
- պետության կողմից ներդրումային դաշտը բարելավելու պատրաստակամությունը,
- ուժեղ Սփյուռքի առկայությունը,
- մտավոր սեփականության պաշտպանության միջազգային չափանիշներին համապատասխանող իրավական դաշտը,
- ՏՏ ոլորտի կայուն և շարունակական զարգացումը և այլն:

Հարկ է նշել, որ ինովացիոն զարգացման առումով տարածաշրջանում Հայաստանին բնորոշ մրցակցային առավելություններից հատկապես պետք է կարևորել նշվածներից վերջինը, որը պայմանավորված է ոլորտում աշխատող բարձրակարգ մասնագետների առկայությամբ և ոլորտի ընկերությունների թվի և շրջանառության կտրուկ աճով: Վերջինս էլ ենթադրում է տարբեր ուղղություններով ինժեներական որակյալ կրթությամբ մասնագետների թվաքանակի ավելացում և ինովացիոն գործընթացներում դրանց ակտիվ ներգրավում:

- **Արտահանման կողմնորոշում ունեցող թեթև արդյունաբերության զարգացման խթանումը**: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեթև արդյունաբերության զարգացումը կարող է մեծապես նպաստել բնակչության զբաղվածության ապահովմանը, ակնհայտ է դառնում, որ Երևան քաղաքի *թաղային համայնքներում և* մարզերի նախկին արդյունաբերական կենտրոններ հանդիսացող քաղաքներում թեթև արդյունաբերական ձեռնարկությունների հիմնադրումը կամ վերագործարկումը կարող է մոտակա բնակավայրերի բազմաթիվ բնակիչների համար ապահովել անհրաժեշտ աշխատատեղեր: Այս նպատակի իրագործմանը էապես կարող է նպաստել նաև դիտարկվող ոլորտում փոքր և միջին բիզնեսի գործունեության ակտիվացումը, քանի որ վերջինս ունի որոշակի առավելություններ խոշոր բիզնեսի համեմատ: Եթե «հարավկորեական տնտեսական հրաշքին» ձգտող կորեական կառավարությունը ստիպված էր զրոյից ուսումնասիրել համաշխարհային շուկան, որպեսզի պարզի, թե արտահանման համար ինչ արտադրատեսակներ պետք է արտադրել թեթև արդյունաբերության ոլորտում, ապա Հայաստանի համար դա ավելի քան պարզ է, քանի որ ՍՍՀՄ տարածքում և նրա սահմաններից դուրս մեր երկրի թեթև արդյունաբերության արտադրանքները երկար ժամանակ վայելել են մեծ պահանջարկ, խոսքը վերաբերում է հատկապես հայկական կոշիկներին, գորգերին և տեքստիլ արտադրանքների բազմաթիվ տեսակներին, որոնք իրենց ճանա-

չելիությամբ և քանակությամբ մի քանի անգամ գերազանցում են հարավկորեական թեթև արդյունաբերության արտադրատեսակներին (կեղծամներ, խաղալիքներ, հագուստ և պայուսակներ): Նկատենք նաև, որ այս ոլորտի կարևոր առավելություններից է նաև այն հանգամանքը, որ արտադրության կազմակերպման սկզբնական շրջանում չեն պահանջվում մեծածավալ ներդրումներ, ինչը հատկապես կարևոր է ֆինանսական ռեսուրսների սակավության պայմաններում:

- **Ռազմարդյունաբերության ինովացիոն զարգացման խթանումը պետական պատվերի ապահովման միջոցով**: Ռազմարդյունաբերությունը, լինելով ցանկացած երկրի ռազմավարական կարևորագույն ուղղություններից մեկը, միաժամանակ պահանջված է և՛ պատերազմի (մարտունակության բարձրացման առումով), և՛ խաղաղության (աշխատատեղերի ապահովման առումով) պայմաններում: Հասկանալի է, որ այս ոլորտի զարգացումը պահանջում է զգալի ֆինանսական ծախսեր, սակայն եթե երկիրը հենվում է սեփական ինժեներական և գիտական կադրերի մտավոր ներուժի վրա, ապա նշված ծախսերը կարող են զգալիորեն կրճատվել՝ միջոցներ ազատելով լրացուցիչ հումքի և նյութերի ձեռքբերման համար: Հիմք ընդունելով Հարավային Կորեայի տնտեսության արագընթաց զարգացման փորձը՝ կարող ենք նշել, որ զարգացած ռազմարդյունաբերությամբ երկրները սկզբնական շրջանում ոլորտը զարգացրել են սեփական պատվերների հաշվին: Այնուհետև՝ համաշխարհային շուկայում իրենց ռազմարդյունաբերական արտադրանքների որոշակի ճանաչելիությունից հետո միայն ստացել են պատվերներ այլ երկրներից: Այս առումով Հայաստանի Հանրապետությունը նույնպես բացառություն չի կազմում, և դիտարկված մոտեցումները կարող են օգտակար լինել նաև մեր երկրի համար:
- **Զբաղվածության վիճակի բարելավման նպատակով ուսումնասիրել կոնկրետ մասնագիտությունների հանդեպ աշխատաշուկայում առկա պահանջարկը և դրան համապատասխան ավելացնել կամ պակասեցնել տվյալ մասնագիտությունների գծով ուսումնական հաստատություններում առկա ուսուցման տեղերը**: Նման մոտեցումը կիրառվել է միայն ՍՍՀՄ տարիներին, ՀՀ անկախացումից հետո այլևս նմանատիպ կարգավորումներ չեն եղել: Հարավային Կորեայում այս մոտեցումը նույնպես բավականին դրական արդյունքներ է ապահովել, և 2018 թ. տվյալներով երկրում գործազրկության մակարդակը կազմել է ընդամենը 3.8 տոկոս: Հասկանալի է, որ նման մոտեցման կիրառումը մեծապես կարող է նպաստել ինչպես ՀՀ տնտեսության ճյուղերի, այնպես էլ մարզերի համաչափ զարգացմանը, ինչն էլ իր դրական ազդեցությունը կունենա բնակչության կենսամակարդակի վրա:
- **Պետության և խոշոր բիզնեսի միջև արդյունավետ համագործակցության հաստատումը և դրանց ակտիվ ներգրավումը տնտեսական հիմնախնդիրների լուծման գործընթացում**: Պետական կառավարման մարմինների և խոշոր հեռանկարային ընկերությունների միջև արդյունավետ գործընկերային հարաբերությունների հաստատումը կարող է խթանել այդ ընկերությունների

ինովացիոն, ներդրումային և բարեգործական ակտիվությունը: Վերջինս կնպաստի ինչպես այդ ընկերությունների դինամիկ զարգացմանը, այնպես էլ նոր աշխատատեղերի ստեղծմանը, պետական բյուջեի եկամուտների ավելացմանը և բազմաթիվ սոցիալական հիմնախնդիրների հաղթահարմանը:

Ամփոփելով՝ անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում Հարավային Կորեայի տնտեսության արագընթաց զարգացման առաջատար փորձի կիրառումը կնպաստի բնակչության կենսամակարդակի բարելավմանը, ինովացիոն արտադրության ծավալների ընդլայնմանը, հարկային եկամուտների ծավալների ավելացմանը, տնտեսության ճյուղերի և մարզերի համաչափ զարգացմանը, աշխատաշուկայի արդյունավետ գործունեությանը, արտահանման ծավալների ավելացմանը, տնտեսության երկարատև կայուն զարգացմանը և տարածաշրջանային համագործակցության ակտիվացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ведущие отрасли экономики Южной Кореи, https://vseokoree.com/vse-o-koree/ekonomika-korei/vedushhie-otrasli-ekonomiki-yuzhnoj-korei
2. Как Корея за 40 лет из отсталой аграрной страны стала технологическим лидером, https://www.vedomosti.ru/partner/articles/2019/02/14/793589-futuristicheskaya-volna
3. Промышленность и энергетика Республики Корея, http://www.gecont.ru/articles/common/korea.htm
4. Хан Сеонг Чин, Антикризисное регулирование в условиях догоняющей модернизации (на примере Республики Корея), научный журнал «Национальные интересы: приоритеты и безопасность», 2011, N 12 (105), 2011, с. 69-72.
5. Экономическое чудо Южной Кореи, http://fedin.org/ekonomika/chudo-yuzhnoj-korei.html
6. Южная Корея, Население, https://knoema.ru/atlas/Южная Корея
7. Южная Корея, Рейтинг Ease of Doing Business, https://knoema.ru/atlas/Южная Корея
8. Южная Корея – рецепт экономического чуда, https://nstarikov.ru/yuzhnaya-koreya-recept-yekonomicheskogo-ch-66683
9. Южная Корея, https://knoema.ru/atlas/Южная Корея
10. 14 графиков, объясняющих «Корейское экономическое чудо», https://businessviews.com.ua/ru/studies/id/14-grafikov-objasnjajuschih-korejskoe-ekonomicheskoe-chudo-1142/
11. Economic Bulletin, vol. 32, No 2, 2010. The global economic crisis: How Korea countered it. Ministry of strategy and finance.

References
1. Vedushhie otrasli jekonomiki Juzhnoj Korei, https://vseokoree.com/vse-o-koree/ekonomika-korei/vedushhie-otrasli-ekonomiki-yuzhnoj-korei
2. Kak Koreja za 40 let iz otstaloj agrarnoj strany stala tehnologicheskim liderom, https://www.vedomosti.ru/partner/articles/2019/02/14/793589-futuristicheskaya-volna
3. Promyshlennost' i jenergetika Respubliki Koreja, http://www.gecont.ru/articles/common/korea.htm
4. Han Seong Chin, Antikrizisnoe regulirovanie v uslovijah dogonjajushhej modernizacii (na primere Respubliki Koreja), nauchnyj zhurnal «Nacional'nye interesy: prioritety i bezopasnost'», 2011, N 12 (105), 2011, s. 69-72.
5. Jekonomicheskoe chudo Juzhnoj Korei, http://fedin.org/ekonomika/chudo-yuzhnoj-korei.html
6. Juzhnaja Koreja, Naselenie, https://knoema.ru/atlas/Juzhnaja Koreja
7. Juzhnaja Koreja, Rejting Ease of Doing Business, https://knoema.ru/atlas/Juzhnaja Koreja
8. Juzhnaja Koreja – recept jekonomicheskogo chuda, https://nstarikov.ru/yuzhnaya-koreya-recept-yekonomicheskogo-ch-66683
9. Juzhnaja Koreja, https://knoema.ru/atlas/Juzhnaja Koreja
10. 14 grafikov, ob"jasnjajushhih «Korejskoe jekonomicheskoe chudo», https://businessviews.com.ua/ru/studies/id/14-grafikov-objasnjajuschih-korejskoe-ekonomicheskoe-chudo-1142/
11. Economic Bulletin, vol. 32, No 2, 2010. The global economic crisis: How Korea countered it. Ministry of strategy and finance.

Արմինե Զախարյան

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համառոտագիր: Հոդվածը նվիրված է Հարավային Կորեայի տնտեսության արագընթաց զարգացման փորձի ուսումնասիրությանը: Հարավային Կորեան 30 տարվա ընթացքում տնտեսության զարգացման այնպիսի ճանապարհ անցավ, ինչպիսին զարգացած երկրներն անցնում են 100 տարվա ընթացքում: Վերջինս հիմնականում պայմանավորված էր կորեական կառավարության կողմից մշակված տնտեսության զարգացման արտաքին ռազմավարությամբ, որակյալ աշխատուժի և տեխնոլոգիական նորարարությունների առկայությամբ: Հոդվածում Հարավային Կորեայի տնտեսական փորձի հիման վրա առաջարկվել են ՀՀ տնտեսության համաչափ և կայուն զարգացման ապահովման որոշակի ուղիներ:

Բանալի բառեր. պետական կառավարում, տնտեսություն, զարգացում, պետական աջակցություն, ներդրումներ, խթանում, ֆինանսավորում, արդյունավետություն

Армине Захарян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» ЮЖНОЙ КОРЕИ

Аннотация: Статья посвящена изучению опыта стремительного развития экономики Южной Кореи. За 30 лет Южная Корея прошла путь, который развитые страны преодолевали в течение 100 лет. Это в основном было обусловлено внешней стратегией развития экономики, разработанной правительством Кореи, наличием качественной рабочей силы и технологических инноваций. В статье на основании экономического опыта Южной Кореи предложены определенные механизмы обеспечения сбалансированного и устойчивого развития экономики РА.

Ключевые слова: государственное управление, экономика, развитие, государственная поддержка, инвестиции, стимулирование, финансирование, эффективность

Armine Zakharyan

"THE ECONOMIC MIRACLE" OF THE SOUTH KOREA

Abstract: The article is devoted to the study of the experience of rapid development of the economy of the South Korea. In 30 years the South Korea covered the way that the developed countries overcame in 100 years. This is mainly conditioned by the external strategy of economy development of the government of Korea, the availability of high-quality workforce and technological innovation. In the article, based on the economic experience of the South Korea, certain mechanisms ensuring balanced and sustainable development of the economy of the RA have been proposed.

Keywords: state management, economy, development, government support, investments, stimulation, financing, efficiency

Գրիգոր Մանուկյան

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

Տնտեսական բարեփոխումների առումով Հնդկաստանը նույնպես մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Հնդկաստանի տնտեսական բարեփոխումները ձեռնարկել է Ռ. Գանդիի կառավարությունը: Շնորհիվ Հնդկաստանում իրականացված տնտեսական բարեփոխումների՝ տնտեսությունը կայունորեն աճում է ավելի քան 40 տարի: 2008-2018 թթ. երկրի ՀՆԱ-ն աճել է 2.2 անգամ: 2018 թ. ՀՆԱ-ն կազմել է 2.719 տրիլիոն դոլար[1]: Իրական ՀՆԱ-ի տարեկան միջին աճի տեմպը 2000–2017 թվականներին կազմել է 7,1%[2]: Այնուամենայնիվ, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն մնում է համեմատաբար ցածր՝ 6,5 հազ. դոլար: Ըստ ԱՄՀ գնահատականի՝ 2017 թվականին Հնդկաստանի բնակչությունը կազմել է 1,32 միլիարդ մարդ (աշխարհի բնակչության 17.3%-ը): Վերջին տասնամյակում բնակչությունն աճել է 15%-ով[3]:

Հնդկաստանի տնտեսությունը ՀՆԱ-ի առումով աշխարհում առաջատարներից մեկն է, ըստ ԱՄՀ-ի՝ 2009-ից ի վեր Հնդկաստանը ՀՆԱ-ով երրորդն է աշխարհում: Երկրի ներդրումը համաշխարհային ՀՆԱ-ում 2017 թվականին հասել է 7,4%-ի[4]:

Երկրի ՀՆԱ-ի կառուցվածքում ծառայությունների տեսակարար կշիռը կազմում է 54.2%, արդյունաբերությանը՝ 31%, և գյուղատնտեսությանը՝ 14.8%[5]: ՀՆԱ-ի փոքր մասնաբաժին է գյուղատնտեսությունը, այնուամենայնիվ այն շարունակում է մնալ տնտեսության կարևոր ոլորտ և աշխատատեղեր է ապահովում երկրի բնակչության ավելի քան 50% -ի համար:

Երկրի տնտեսության ծառայությունների ոլորտում ֆինանսական, անշարժ գույքի և բիզնեսի ծառայությունների բաժինը կազմում է 21.7%, մինչդեռ առևտուր, սնունդ և կացարան, տրանսպորտ և կապ ոլորտները՝ 19,2%: Այսօր Հնդկաստանը տեղեկատվական լուծումներ տրամադրելու համաշխարհային առաջատարներից է:

2017 թվականին Հնդկաստանին բաժին է ընկել համաշխարհային արտահանման 1,2%-ը և ներմուծման 1,9%-ը: Հնդկաստանի արտահանման հիմքում

---

[1] https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=IN

[2] Индия: особенности экономического роста и энергетика, Бюллетень о текущих тенденциях мировой экономики, выпуск № 33, июнь 2018, с. 3.

[3] Индия: особенности экономического роста и энергетика, Бюллетень о текущих тенденциях мировой экономики, выпуск № 33, июнь 2018, с. 7.

[4] Подробнее см.: Бюллетень о текущих тенденциях мировой экономики № 28, январь 2018 г. http://ac.gov.ru/files/publication/a/15761.pdf

[5] Обзор состояния экономики и основных направлений внешнеэкономической деятельности Индии в 2017/18 финансовом году, с. 3.

ընկած են մշակված ադամանդներն ու պատրաստի զարդերը (15.8%), նավթամթերքը (11,7%), տեքստիլ արտադրանքը (8,9%), գյուղատնտեսական արտադրանքը (8.2%), տրանսպորտային սարքավորումները (5,4%), ինժեներական ապրանքները (5.1%), գունավոր մետաղները (3.2%): Հնդկական ներմուծման առաջատար ապրանքներն են՝ հում նավթ և նավթամթերք (26.8%), թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ (14%), էլեկտրոնիկա (10%), մեքենաներ և սարքավորումներ (8,4%), գյուղմթերք (7,8%), քիմիական արդյունաբերության արտադրանք (5.3%)[1]:

Գնաճի արժեքը 2015-2018 թվականներին մնաց ցածր մակարդակի վրա (2.28 - 4.11%) նախորդ ժամանակահատվածների համեմատ[2]:

Հնդկաստանում վերջին տարիներին խնայողության մակարդակը անկում է ապրում (2017 թ.՝ 31,7%): Սկսած 2008 թվականից՝ արագորեն կրճատվում են կուտակման չափերը, բնակչությունը գնալով ավելի է գերադասում շուկայի գործիքները (բաժնետոմսեր, պարտատոմսեր, ապահովագրական և կենսաթոշակային ֆոնդեր), այլ ոչ թե արժութային և բանկային ավանդները:

Ըստ ԱՄՀ գնահատականի՝ Հնդկաստանի տնտեսությունը մինչև 2023 թվականը ընկած ժամանակահատվածում միջին հաշվով կաճի տարեկան 8.0%-ով և կունենա համաշխարհային ՀՆԱ-ի 9,4%-ը: Հնդկաստանում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կաճի և ներկայիս 6.5 հազ. դոլարից կդառնա 9,6 հազ. դոլար: ԱՄՀ-ը ՀՆԱ-ի բարձր աճը կապում է անձնական սպառման ընդլայնման հետ: Հարկային համակարգի և հարկային վարչարարության պարզեցման նպատակով սահմանվել է ապրանքների և ծառայությունների միասնական հարկ[3]:

Հնդկաստանի երկարաժամկետ մարտահրավերներից են համատարած աղքատությունը, սոցիալական անբավարար ենթակառուցվածքները, որակյալ միջնակարգ և բարձրագույն կրթության ոչ բավարար մակարդակը, ինչպես նաև գյուղական բնակչության արտագաղթը դեպի քաղաքներ:

Վերջին երկու տասնամյակում ձեռնարկված տնտեսական լայնածավալ բարեփոխումներն ունեցան հեռահար հետևանքներ: Մեծ և անընդհատ աճող շուկան, զարգացող ենթակառուցվածքները, ճկուն կարգավորման միջավայրը, արտոնությունները, տնտեսական գրավիչ հեռանկարը Հնդկաստանը դարձրել են ներդրումների համար մրցակցային երկիր:

Հնդկաստանի տնտեսական պատմության մեջ առանձնանում են երկու մակրոփուլեր՝ զարգացում ըստ ներմուծման փոխարինման մոդելի (մինչև 1990-ականների սկզբը) և տնտեսության ազատականացում[4]:

---

[1] Обзор состояния экономики и основных направлений внешнеэкономической деятельности Индии в 2017/18 финансовом году, с. 5.

[2] https://data.worldbank.org/indicator/NY.GDP.DEFL.KD.ZG?locations=IN

[3] Индия: особенности экономического роста и энергетика, Бюллетень о текущих тенденциях мировой экономики, выпуск № 33, июнь 2018, с.15.

[4] Маляров О., Роль государства в переходной экономике: опыт Индии // Экономическая наука современной России // Экономика зарубежных стран // N 2, 2000, 16 с., էլեկտրոնային հղում՝ // file:///C:/Users/Razmik/Desktop/hndkastan/08.11/elibrary_9567726_35965859.pdf с. 131.

Առաջին փուլում տնտեսությունում պետության դերի ամրապնդումը հիմք է դարձել արդյունաբերական և գիտատեխնիկական բազայի ստեղծմանը, տնտեսության ընդհանուր արդիականացմանը և դրա մրցունակության բարձրացմանը: Նախնական բարեփոխումների ռազմավարությունը հետապնդում էր ներմուծումը փոխարինող արդյունաբերության ստեղծման նպատակ[1]:

Ներմուծման փոխարինման քաղաքականության առանձնահատկություններից էր ներքին շուկայի սակագնային պաշտպանության կարճ ժամանակահատվածից անցում դեպի արտահանման արդյունաբերականացում՝ օգտագործելով համաշխարհային առևտրի բարենպաստ միտումները: Պետությունն ամրապնդեց իր ազդեցությունը տնտեսությունում երկու հիմնական ձևով՝ որպես ընդհանուր տնտեսական նշանակության ոլորտներում ակտիվների սեփականատեր և վարելով ինստիտուցիոնալ քաղաքականություն: Ի տարբերություն Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության՝ Հնդկաստանը և Չինաստանը չգնացին ընդհանուր հանրային հատվածի համակարգի ապամոնտաժման և ավելի շատ կենտրոնացած էին ձեռնարկությունները շուկայական միջավայր բերելու արդյունավետության և մրցունակության ապահովման վրա: Պետությունը պահպանել է իր կարևոր աջակցությունն արտահանման մեծ ներուժ ունեցող արդյունաբերության զարգացմանը և էկոլոգիական անվտանգությանը:

Ներմուծման փոխարինման հիմնական փուլի ավարտով դյուրացվեց Հնդկաստանի անցումը արտահանմանն ուղղված զարգացման մոդելին, և հնարավորություն ընձեռվեց գլոբալիզացիայի մարտահրավերներին արձագանքել ամուր դիրքերից՝ ընդլայնելով ազատ մրցակցությունը և խոշոր մասնավոր ձեռներեցությունը: 1991 թվականի տնտեսական հեղափոխությունից հետո Հնդկաստանը դարձավ աշխարհի ամենաարագ զարգացող խոշոր տնտեսություններից մեկը: Հարկ է նշել, որ շահութաբեր պետական ձեռնարկությունները, որպես կանոն, չմասնավորեցվեցին, և շահույթ չհետապնդող ձեռնարկությունների մասով իրականացվեցին բարելավման միջոցառումներ: Հանրային հատվածի բարեփոխումներից էր հանրային բնույթի պահպանման ապահովումը, ըստ որի՝ պետության բաժնեմասը չնվազեց 51%-ից: Ընտրված ռազմավարությունն ապահովեց ներդրումների մշտական աճ տնտեսության բոլոր ոլորտներում, տնտեսական աճի բարձր տեմպեր և դրա արդիականացում, հնարավորություն տվեց խուսափել 1998 և 2009 թվականների ճգնաժամերից[2]: Միաժամանակ այն պայմանավորված է դրսից «տաք փողեր» ներգրավելու զգուշավոր քաղաքականությամբ:

Կայուն տնտեսական աճ ապահովելու համար Հնդկաստանն ավելի վաղ էր հասկացել գիտության և տեխնոլոգիայի զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման կարևորությունը: Այն առաջինն է ստեղծել գիտական հետազոտությունների և բնապահպանական նախարարություն: Հնդկաստանում գիտության և տեխնոլոգիաների զարգացման ընդհանուր ուղղություններն ընդգրկել են բնակչության հիմնական կարիքները բավարարող տեխնոլոգիա-

[1] http://lawinrussia.ru/content/opyt-ekonomicheskoy-reformy-v-indii-0
[2] http://lawinrussia.ru/content/opyt-ekonomicheskoy-reformy-v-indii-0

ների զարգացումը, սոցիալական և տնտեսական ծրագրերի սերտ ինտեգրումը գիտության և տեխնոլոգիաների հետ, գիտելիքահենք արտահանման կառուցվածքի փոփոխության խթանումը, մտավոր սեփականության իրավունքի համակարգի կատարելագործումը, հասարակության բոլոր ոլորտներում գիտության տարածման խթանումը, երիտասարդության համար գիտական ոլորտում աշխատելու հնարավորությունների ընդլայնումը:

Այս ուղղությամբ բարեփոխումները հայտնի են «Դելիի համաձայնություն» անվանումով, որի հիմքն են ազատականացումը, սեփականաշնորհումը և գլոբալացումը: Այն ներառում է հետևյալ առանձնահատկությունները[1].

1) արագ կողմնորոշվածությամբ, բայց հավասարակշռված զարգացում՝ ներառյալ ներքին և արտաքին տնտեսական ազատականացման ներդաշնակ իրականացումը:

2) Սոցիալական լարվածության վերացման իրական խնդիրներ, որոնց թվում հատկապես կարևորվում է բնակչության կրթական մակարդակի բարելավումը (անկախության սկզբնական տարիներին կրթության ոլորտի ծախսերը կազմում էին ՀՆԱ-ի 0,6%, հետագայում՝ ՀՆԱ-ի 3%-ը), աղքատության նվազեցումը, որոնք խթանեցին մարդկային ներուժի զարգացումը և նպաստեցին աշխատանքային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը:

3) Նորարարության զարգացում և ֆինանսավորում: Ներկայումս գիտակրթական արդյունքը մոտենում է ՀՆԱ-ի 1%-ին:

4) Պետության առանձնահատուկ դերը տնտեսությունում: Կառավարության ձեռքում են երկրում մակրոտնտեսական իրավիճակի վրա ազդելու համար նշանակալի տնտեսական գործիքները: Օրինակ՝ նահանգը հանդես է գալիս որպես հիմնական ներդրող ֆոնդերում (ընդհանուր ներդրման մոտ 1/3-ը):

5) Հնդկաստանի ակտիվ ներառումը համաշխարհային տնտեսության մեջ: Վերջին երկու տասնամյակում ակնհայտ դարձավ Հնդկաստանի դիրքը կապիտալի միջազգային շարժի մեջ:

Հնդկաստանի տնտեսության պետական և մասնավոր հատվածների դերն ու տեղը որոշվում են յուրաքանչյուր փուլում՝ հիմնվելով սոցիալ-տնտեսական զարգացման ձեռք բերված մակարդակի և ռազմավարական նպատակների վրա:

Մասնավոր հատվածի և դրա սոցիալ-տնտեսական կառուցվածքի վրա պետության ազդեցության հիմնական ուղղություններն են[2].

- օժանդակել մասնավորի զարգացմանը որպես ամբողջություն՝ ա) ապահովելով անհրաժեշտ ենթակառուցվածքներ, արտադրության և ֆինանսական ռեսուրսներ, բ) նպաստելով դրա արտադրության ծախսերի իջեցմանը և արտադրողականության ավելացմանը,

---

[1] Галищева Н., “Делийский консенсус” – индийская модель либерализации экономики // Мировая экономика: проблемы восстановления // Азия и Африка сегодня, № 3, 2014, 8 с., էլեկտրոնային հղում՝ // file:///C:/Users/Razmik/Desktop/hndkastan/08.11/+.pdf, с. 6.

[2] http://lawinrussia.ru/content/opyt-ekonomicheskoy-reformy-v-indii-0

- օտարերկրյա կապիտալն ուղղել ազգային կապիտալի զարգացման կարիքներին,
- խոշոր կապիտալի կառուցվածքի արդիականացում՝ ապահովելով դրանց արտահոսքը դեպի կապիտալատար և տեխնոլոգիական բարդ արդյունաբերություն,
- խթանել փոքր արդյունաբերության աճը, արդիականացումը և ինտեգրումը,
- արհեստագործական արդյունաբերությանը որպես զբաղվածության պահուստի աջակցելը:

Հնդկաստանի տնտեսական առաջընթացին նպաստել են.

1. հնդկական այլընտրանքային մոդելի ձևավորումը, որը կարելի է բնութագրել հետևյալ կերպ. ներքին ռեսուրսների հաշվին աճ, ներքին շուկա՝ համատեղելով «մեծ» և «փոքր» տնտեսությունները: Ստեղծված խառը տնտեսության մոդելը հիմնված է երկու ուղղությունների վրա: Առաջինը «արտաքին աճի» ուղղությունն է՝ խոշոր և միջին արդյունաբերության զարգացմամբ մի շարք ոլորտներում համախառն տնտեսական ցուցանիշների ապահովում: Երկրորդ ուղղությունը «ներքին աճն» է՝ միկրոարտադրության մեջ մեծ թվով աղքատ մարդկանց ընդգրկելով ընդլայնել ներքին շուկան, որը կարելի է անվանել «փոքր տնտեսություն»: Հնդկաստանի եզակիությունն այն է, որ փոքր, միջին և խոշոր բիզնեսը փոխկապակցված են և լրացնում են միմյանց: Փոքր տնտեսության զարգացման շնորհիվ խոշոր բիզնեսն ավելի արագ է աճում[1]:

2. Սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության մշակման և միջոցների նպատակային օգտագործման ապահովման բանալին տնտեսության վրա պետության ազդեցության պլանավորումն է: Այն նախադրյալ է տնտեսության արդիականացման և դրա իրականացման միջոցով՝ իր կառուցվածքում խորքային տեղաշարժերի համար: Դրա առանձնահատկություններն են[2].

2.1. սոցիալ-տնտեսական կառուցվածքի փուլային ինտեգրացման համակարգային արդիականացման ռազմավարություն: Զարգացման յուրաքանչյուր փուլի համար պլանավորումը որոշում է շուկայի և պետական կարգավորման, պետական և մասնավոր հատվածների, ազգային և արտաքին կապիտալի, խոշոր և փոքր արտադրության դերը: Պլանավորումը որոշում է տնտեսության հիմնական ճյուղերի զարգացման փոփոխականներն ու տեմպը, բնակչության սոցիալական պայմանները:

2.2. Պլանավորումը համատեղում է երկարաժամկետ (20-25 տարի) կանխատեսման և զարգացման ռազմավարություն, միջնաժամկետ (հնգամյա) և տարեկան պլանավորում: Հիմնական դերը խաղում են հնգամյա ծրագրերը: Դրանք մանրամասն դիտարկում են տնտեսության տարբեր ոլորտների զարգացման ծրագրերը, խնդիրները, զարգացման դժվարությունները, դրանց լուծ-

---

[1] https://globalaffairs.ru/global-processes/Indiya-nachat-s-maloi-19366

[2] Маляров О. В., Государственное регулирование в переходной экономике: опыт Индии // Россия и мир в XXI веке // 12 с., էլեկտրոնային հղում՝ file:///C:/Users/Razmik/Desktop/hndkastan/08.11/elibrary_16401222_24545571+.pdf, с. 121-122

ման և հաղթահարման եղանակները: Հնգամյա պլանավորումը ներդրումների և գործունեության ծրագիր է, որը պետք է նպաստի երկրի տնտեսության զարգացմանը: Տարեկան պլանի մշակումն իր մեջ ներառում է ռեսուրսների բաշխում նահանգների, ճյուղային ոլորտների միջև:

2.3. Համատեղում է պետական հատվածի քաղաքականության պլանավորումը մասնավոր հատվածի պլանավորման հետ: Պլանավորվում են կապիտալ ներդրումները ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածների համար: Մասնավոր հատվածում անհրաժեշտության դեպքում, ազգային տեսանկյունից որոշակի նպատակների հասնելու համար, կառավարությունն օգտագործում է քաղաքական լծակներ և խթաններ:

2.4. Հաշվի է առնում նահանգային զարգացման ծրագրերը, որոնք պետք է բխեն ազգային պլանից:

2.5. Հնդկական պլանավորումն ունի ինստիտուցիոնալ բնույթ: Պլանավորման հիմնական մարմինը Հնդկաստանի պլանավորման հանձնաժողովն է: Նախ՝ այն տարբեր նախարարությունների և գերատեսչությունների գործունեության համակարգումն է: Երկրորդ՝ պլանավորման հանձնաժողովը համակարգում է կենտրոնական պլանը և պետական ծրագրերը:

2.6. Հենվում է վիճակագրական լայն բազայի վրա: Ամբողջ Հնդկաստանի լայնածավալ վիճակագրությունն ընդգրկում է բնակչության, տնտեսական, գյուղատնտեսական, արդյունաբերական և այլ հաշվառման տվյալները:

2.7. Հնդիկ գիտական և փորձագիտական հանրության ներգրավումն է որոշումների կայացման գործընթացում, հիմնվելով գիտության, փորձագետների հետ սերտ կապի վրա՝ ստեղծում են հատուկ փորձագիտական հանձնաժողովներ, որոնք կազմում և հրապարակում են զեկույցներ, իրականացնում խնդիրների վերլուծություն, կատարում եզրակացություններ և խնդիրների լուծման առաջարկություններ:

2.8. Հնդկական հասարակությանը կենտրոնացնելու սոցիալ-տնտեսական գործընթացի զարգացման համար:

Այսպիսով՝ հնդկական փորձի հիմնական դերը սոցիալ-տնտեսական պլանավորումը և դրա իրականացումն է փորձագիտական մարմնի կողմից, բայց պետության ղեկավարի գլխավորությամբ:

3. Աշխարհում ամենամեծ համագործակցային տնտեսության ձևավորումը: Հնդկաստանի յուրաքանչյուր հինգերորդ քաղաքացի կոոպերատիվի անդամ է: Կոոպերատիվների մեծ մասը տեղակայված է գյուղական վայրերում և ինչ-որ կերպ կապված է գյուղի հետ, սակայն միայն կեսն է զբաղվում գյուղատնտեսությամբ, մնացածը արտադրում են այլ տեսակի ապրանքներ[1]:

4. Առավելագույն զբաղվածության ապահովում փոքր արդյունաբերությամբ: Փոքր արտադրողներն ունեն բացարձակ առավելություն պետական գնումների և առավել բարենպաստ ֆինանսավորման համակարգում: 2014-ի մայիսին

[1] https://globalaffairs.ru/global-processes/Indiya-nachat-s-maloi-19366

Հնդկաստանում իշխանության եկած Նարենդրա Մոդիի կառավարությունը կարևորեց զարգացման քաղաքականությունը ներքին շուկայի և սոցիալական համախմբման հաշվին: Ըստ նրա՝ հասարակության տնտեսական ռեսուրսները պետք է օգտագործվեն աղքատների բարեկեցության համար, տեղական արտադրության աճն անհրաժեշտ է առավելագույնի հասցնել՝ փոքր արդյունաբերության զարգացմամբ գործարկելով համապետական Do It In India նախագիծը[1]: Հնդկաստանին հետևելով՝ Չինաստանը վերջին տարիներին ակտիվորեն վերականգնում է տնտեսությունը հենց ներքին սպառման աճի ուղղությամբ:

Հնդկական արդյունաբերության առանձնահատկությունը փոքր մասշտաբի արտադրության զգալի մասն է: Փոքրածավալ արտադրությունն ավանդական է և ժամանակակից: Ավանդականը հիմնականում զարգացած է գյուղերում: «Փոքր բիզնեսի» զարգացման նպատակը ոչ թե «միջին խավի» ընդլայնումն է, այլ զբաղվածությունն ավելացնելու միջոցով աղքատության մեղմացումը:

Փոքր և միջին ձեռնարկությունները կարևոր դեր են խաղում Հնդկաստանի տնտեսության մեջ: Դրանց մասնաբաժինը երկրի ՀՆԱ-ում կազմում է 28,77%: ՓՄՁ-ների կողմից արտադրված ապրանքներն ու ծառայությունները կազմում են երկրի ընդհանուր արտահանման 40%-ը: Երկրում աշխատող ՓՄՁ-ների ընդհանուր թիվը 63.4 միլիոն է, ընդ որում՝ ձեռնարկությունների 51%-ը գտնվում է գյուղական վայրերում, իսկ մնացածը՝ քաղաքներում: Փոքր և միջին ձեռնարկություններում մեծ մասը միկրո ձեռնարկություններ են՝ 89,5%, 11,2%-ը՝ փոքր, 3,9%-ը՝ միջին ձեռնարկություններ[2]:

ՓՄՁ զարգացմանը նպաստում է պետության կողմից սերտիֆիկացման հետ կապված ծախսերի 75 %-ի կատարումը: Կառավարության կողմից իրականացվող միջոցառումներն ուղղված են ՓՄՁ-ների ներգրավմանը պետական գնումներին, մասնավորապես՝ պետական գնումների 20%-ի ապահովումը ՓՄՁ-ների միջոցով: ՓՄՁ-ների մրցունակությունը բարձրացնելու համար Ազգային փոքր բիզնեսի կորպորացիան (National Small Industries Corporation) ստեղծել է միատարր ապրանքներ արտադրող փոքր ձեռնարկությունների ասոցիացիաներ՝ խոշոր պատվեր ապահովելու համար: Կորպորացիան փոքր ձեռնարկությունների անունից հայտ է ներկայացնում մրցույթին մասնակցելու համար, այնուհետև պատվերը բաշխում մասնակիցների միջև՝ իրենց արտադրական հնարավորություններին համապատասխան[3]:

5. Հնդկաստանի բազմազան տնտեսությունը, որն ընդգրկում է ավանդական և ժամանակակից գյուղատնտեսությունը, արհեստները, ժամանակակից արդյունաբերության լայն տեսականի և ծառայությունների բազմաթիվ տեսակներ:

2005-ին Հնդկաստանն ընդունեց Գյուղի զբաղվածության երաշխիքների

---

[1] https://globalaffairs.ru/global-processes/Indiya-nachat-s-maloi-19366

[2] Обзор состояния экономики и основных направлений внешнеэкономической деятельности Индии в 2017/18 финансовом году, с. 51.

[3] Обзор состояния экономики и основных направлений внешнеэкономической деятельности Индии в 2017/18 финансовом году, с. 53.

մասին օրենքը: Այն ուժի մեջ է մտել 2009 թ.: Համաձայն նրա՝ գյուղի բոլոր բնակիչները կարող են ստանալ 100 օր վճարովի ֆիզիկական աշխատանք, վճարումը կլինի նվազագույն (օրական 1-2 ԱՄՆ դոլար): Այդ դեպքում չեն լինում ներդրումներ շարունակական կրթության ոլորտում այն մարդկանց համար, որոնք այս ծրագրերից պետք է օգտվեն:

Գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումներից են գյուղատնտեսական նշանակության հողերի համախմբմամբ կոոպերատիվ ֆերմերային տնտեսությունների ստեղծումը՝ երաշխավորելով վաճառքի շուկան, «աջակցող» պետական գնումների ձևավորումը: Հնդկաստանը, զարգացող այլ երկրների հետ միասին, պարտավորվել է ամբողջովին հրաժարվել գյուղատնտեսական արտադրանքի արտահանման սուբսիդիաներից, իսկ մինչև 2023-ի վերջը՝ վերացնել արտահանման համար գյուղատնտեսական ոլորտի ենթակառուցվածքների զարգացման սուբսիդիաները:

Տեքստիլ արտադրությունը՝ գյուղատնտեսությունից հետո Հնդկաստանում զբաղվածության երկրորդ ամենամեծ աղբյուրը, կազմում է ընդհանուր արտադրանքի 20%-ը[1]: Մի շարք ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով իրականացվում է տեքստիլ արդյունաբերությանը աջակցելու քաղաքականություն՝ ներառյալ

- տեխնիկական վերազինման ֆինանսավորման ծրագիր (Technology Upgradation Fund Scheme, TUFS), որը արտադրողներին ցուցաբերում է ֆինանսական աջակցություն պետական փոխհատուցումների և սուբսիդիաների միջոցով արտադրությունն արդիականացնելու համար:

- Տեքստիլ տեխնոլոգիական արդյունաբերական պարկերի ստեղծման ծրագիր («Ինտեգրացված տեքստիլ պարկերի սխեմա», Scheme for Integrated Textile Parks (SITP), որտեղ կառավարության դերը դրանց ստեղծման գործընթացում իրականացվող բոլոր կազմակերպչական և իրավական միջոցառումներն են: Ծրագիրը խթանում է նորարարությունը պետական-մասնավոր գործընկերության մեխանիզմների միջոցով՝ ներառյալ

- ծրագրերի ֆինանսավորումը ծրագրի նախաձեռնողի հետ հավասար հիմունքներով,

- վենչուրային կապիտալի ֆոնդերի հետ համատեղ ծրագրերի ֆինանսավորումը,

- ընտրված տարածքներում նորարարական կենտրոնների ստեղծումը՝ երկարաժամկետ ծրագրերի իրականացման համար,

- միջազգային ընկերությունների ներգրավվածությունը:

6. Հնդկական արտահանողներին աջակցությունը: Դա, մասնավորապես, ներառում է Հնդկաստանից ապրանքների արտահանումների համակարգը (Merchandise Exports from India Scheme, MEIS) և Հնդկաստանից ծառայությունների արտահանման համակարգը (Exports from India Scheme, SEIS), հատուկ

[1] http://www.ereport.ru/articles/weconomy/india.htm

տնտեսական գոտիների (SEZ) և արտահանմանն ուղղված ձեռնարկությունների (EOP) զարգացման տարբեր ծրագրերը: MEIS և SEIS ծրագրերի հիմնական նպատակն է աջակցել հնդկական ապրանքների և ծառայությունների արտահանմանը դեպի արտաքին շուկաներ: Ծրագրի շրջանակներում սահմանվում է այն ապրանքների և ծառայությունների ցանկը, որոնք աջակցվում են որոշակի երկրների շուկաներ արտահանելիս: Աջակցության ամենացածր մակարդակը ներառում է Հնդկաստանի հետ հաստատված կապեր ունեցող երկրների արտահանումը (ԵՄ, ԱՄՆ, Կանադա), երկրորդ խումբում ներառվում է նոր և զարգացող շուկաներ ունեցող երկրների արտահանումը (Աֆրիկա, Լատինական Ամերիկա, ԱՊՀ, Ճապոնիա, Չինաստան, Կորեայի Հանրապետություն) և երրորդ խմբում ընդգրկվում են այլ երկրներ[1]:

MEIS ծրագրով պետության աջակցությունը կապված է հատուկ ապրանքների հետ: Փոխհատուցման ամենաբարձր առաջնահերթությունն ու առավելագույն տոկոսը գյուղատնտեսական և էկոլոգիական ապրանքներն են, բարձր հավելյալ արժեք ունեցող պատրաստի արտադրանքները, հիմնական արդյունաբերական արտադրանքը և բարձր տեխնոլոգիական արտադրանքը:

SEIS ծրագիրը կիրառվում է Հնդկաստանում գործող ծառայություններ մատուցող ընկերություններում, այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ իրավաբանական, ինժեներական, հաշվապահական, գովազդային, խորհրդատվական, վերլուծական, ճանապարհորդական, փոխադրումներ, պահեստավորում:

MEIS և SEIS ծրագրերի հիմնական գործիքը արտահանողներին հատուկ սերտիֆիկատների կամ վկայագրերի (Duty Credit Scripts) տրամադրումն է: Վկայագրի դրամական համարժեքությունը հաշվարկվում է արտահանվող ապրանքների արժեքի հիման վրա FOB պայմաններով և տատանվում է արտահանման արժեքի 2%-ից մինչև 5%՝ կախված մատակարարվող ապրանքներից և շուկայից: Վկայագրերը գրանցված չեն և կարող են փոխանցվել (վաճառվել) հնդկական այլ առևտրային կազմակերպությունների: Duty Credit Scripts-ը կարող էր օգտագործվել ներմուծման մաքսատուրքեր վճարելու, ներքին շուկայում ձեռք բերված ապրանքների ակցիզային հարկերի վճարման համար:

Հատուկ ծրագրեր են մշակվել ոսկերչական արդյունաբերության, ինչպես նաև «արտահանման» տների («экспортные» дома) համար: Նոր քաղաքականությունը մշակել է «արտահանման» տների վարկանիշային մեխանիզմ՝ կախված արտահանման ծավալներից (բաժանված է հինգ դասի), որպեսզի վերջիններս լրացուցիչ տեխնիկական և փոքր ֆինանսական առավելություններ ապահովեն արտահանման գործողություններն իրականացնելիս: Օրինակ՝ ամենամեծ «արտահանման» տները, որոնց տարեկան արտահանման ծավալը կազմում է ավելի քան 100 միլիոն դոլար, կարող են ինքնուրույն սերտիֆիկացնել իրենց արտադրանքը, ինչը հատկապես կարևոր է Հնդկաստանի հետ արտոնյալ առևտրային ռեժիմ ունեցող երկրների հետ բիզնես վարելիս:

---

[1] Обзор состояния экономики и основных направлений внешнеэкономической деятельности Индии в 2017/18 финансовом году, с. 40.

Արտահանման խթանման կապիտալ ապրանքների մեխանիզմ (Export Promotion Capital Goods Scheme, EPCGS) ծրագիրը արտահանողներին թույլ է տալիս ներմուծել արտահանման արտադրանքներ արտադրելու համար անհրաժեշտ ապրանքներ և պատկանում է «արտադրության միջոցների» խմբին նվազեցված կամ զրոյական մաքսատուրքով:

2015 թվականից ի վեր գործում է տոկոսների հավասարեցման մեխանիզմ փոքր և միջին ձեռնարկությունների համար, ինչը 3% փոխհատուցում է նախատեսում որոշակի ապրանքներ արտահանողների համար:

Հնդկական արտահանմանն օժանդակելու գործում կարևոր դեր է խաղում «Հնդկաստանի արտահանման վարկի երաշխիքային կորպորացիան» (Export Credit Guarantee Corporation of India Ltd., ECGC), որը հնդիկ արտահանողներին ապահովում է տարբեր տեսակի ապահովագրական ծածկույթ՝ չստացված արտահանման հասույթից, մի շարք առևտրային կամ քաղաքական նկատառումներից, ինչպես նաև երաշխիքներ տալիս այն բանկին և այլ ֆինանսական հաստատությունների, որոնք արտահանողներին վարկեր են տրամադրում բարենպաստ պայմաններով:

Կարևոր դեր ունի Հնդկաստանի արտահանման-ներմուծման բանկը (Export-Import Bank of India), որը պետական բանկ է, գործելով բանկային և ֆինանսական ծառայությունների շուկայում՝ նախապատվություն է տալիս փոքր և միջին բիզնեսի արտահանման վարկավորմանը:

Հնդկաստանի կառավարությունը մշակում և իրականացնում է հատուկ գործիքներ, որոնք նախատեսված են Հնդկաստանի գրավչությունը բարձրացնելու համար: Այդ գործիքներից են հատուկ տնտեսական գոտիները (SEZ): Դրանցում գտնվող ձեռնարկություններին թույլատրվում է արտադրական գործունեության համար սարքավորումների և հումքի անխափան ներմուծում: Միակ պահանջը դրանց արտադրանքի 100% արտահանումն է: Առանձին դեպքերում թույլատրվում է արտադրանքի մի մասը վաճառել ներքին շուկայում, սակայն միայն բոլոր մաքսային և լրացուցիչ տուրքերի վճարման պահից սկսած՝ առանց որևէ արտոնության տրամադրման:

Հատուկ տնտեսական գոտիներում փոքր ձեռնարկություններ ստեղծելիս համապատասխան լիցենզիա, ներմուծման արտոնագիր չի պահանջվում, արտահանման հասույթի վերադարձման ժամկետը սահմանված է մինչև 365 օր, թույլատրվում է արտահանման հասույթի մինչև 100%-ը պահել արտարժույթի հաշիվներում, իսկ տարեկան մինչև 500 միլիոն դոլար արտաքին առևտրային փոխառությունները՝ առանց մարման ժամկետի սահմանափակումների:

7. Կախված տնտեսության ոլորտից՝ երկրի կառավարությունը սահմանում է օտարերկրյա ներդրումների ընդունման պայմանները (ավտոմատ ռեժիմ կամ համապատասխան պետական մարմինների կողմից հաստատման գործընթացն անցնելու անհրաժեշտություն): «Ավտոմատ հաստատման» ռեժիմով ներդրումներ կատարելու համար ներդրողի և Հնդկաստանի պետական մարմինների միջև որևէ համաձայնագիր չի պահանջվում: «Ավտոմատ հաստատման» ռեժի-

մում չընդգրկված տարածքներում պահանջվում է Հնդկաստանի կառավարության հատուկ որոշում[1]:

Ավանդաբար Հնդկաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումներն իրականացվում են համատեղ ձեռնարկությունների կազմակերպման ձևով: Հնդկաստանի ազգային կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում հնարավորությունների և սպառնալիքների հարաբերակցությանը՝ արտաքին ներդրումների գործոնի պատճառով: Ռազմավարական նշանակության մի շարք ոլորտներում, եթե թույլատրվում է, հազվադեպ է պատահում, երբ օտարերկրյա կապիտալի մասնակցության մասնաբաժինը հասնում է 25%-ի: Արտասահմանյան ուղղակի ներդրումներ չեն թույլատրվում մանրածախ, վիճակախաղեր, խաղադրույքներ, բնակարանային և անշարժ գույքի գործարքներում:

8. Առևտրային բանկերի ֆինանսական հոսքերի ակտիվորեն կարգավորումը: Նախ՝ իրացվելիության առումով բանկերը ներդնում են միջոցների որոշակի մասը ցածր եկամտաբեր պետական պարտատոմսերում, և երկրորդ՝ սահմանվում է բանկային վարկերի մասնաբաժինը, որը պետք է ուղղվի տնտեսության որոշակի «առաջնահերթ» ոլորտների ֆինանսավորմանը:

9. Գիտական և տեխնոլոգիական ներուժի աճ և արագ զարգացող ծառայությունների ոլորտը (ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաները, ֆինանսական և բանկային):

10. Ազգային տնտեսության արագ ինտեգրում միջազգային համագործակցություններում, մասնավորապես՝ արտաքին աշխարհի հետ լինելով բաց՝ միաժամանակ պահպանում է ռազմավարական և հատկապես խոստումնալից ազգային շահերը: Համագործակցություն BRICS ասոցիացիայի շրջանակներում (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան, Հարավային Աֆրիկա), որը դարձել է 21-րդ դարում միջազգային կյանքի նոր երևույթներից մեկը: Երկիրը մասնակցում է նաև այլ ասոցիացիաների. Հնդկաստանի եռակողմ համագործակցությունը Ռուսաստանի և Չինաստանի հետ (RIC), IBSA ֆորում (Հնդկաստան, Բրազիլիա, Հարավային Աֆրիկա), BASIC (Բրազիլիա, Հնդկաստան, Հարավային Աֆրիկա, Չինաստան).

11. Տնտեսությունում պետական կարգավորման և շուկայի սկզբունքների օպտիմալ համադրությունը, համակարգվածությունը և կառավարության աջակցությունը: Նպատակային պետական քաղաքականության մշակման գործընթացում վճռորոշ դեր է խաղում երկարաժամկետ ռազմավարության առկայությունը, որը համապարփակ սահմանում է կոնկրետ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հատուկ նպատակներ և ուղեցույցներ: Պահպանվել են առաջնահերթ աճը, պլանավորումը և պետական-մասնավոր հատվածի փոխգործակցությունը:

12. Տնտեսական աճի համատեղումն է տնտեսական արդյունավետության հետ: Այս հիմքի վրա ակնկալվում է բարելավել բնակչության զանգվածային

[1] http://www.dipp.gov.in

շերտերի նյութական պայմանները:

13.Կրթության նկատմամբ հարգանքը՝ որպես հնդկական քաղաքակրթության ավանդույթ, հսկայական ներքին շուկա, էժան աշխատուժ: Ներքին շուկայի աճող պահանջարկի ապահովման մեջ հնդկական արտադրողները զբաղեցնում էին գերակշռող դիրք: Սեփական բնակչությունն ունի զգալի աշխատուժ, ցածր աշխատունակ տարիքի բնակչությամբ պայմանավորված՝ երիտասարդության բարձր չափաբաժին:

14.Անգլերենի՝ որպես պաշտոնական լեզվի պահպանման ռազմավարական քաղաքականությունը, աշխատունակ բնակչության մեծ մասի անգլերեն լեզվի տիրապետումը զարգացող այլ երկրների համեմատությամբ, արտագաղթողների հետ Հնդկաստանի կառավարության կապերը: Մասնագիտական շփումներով, հատկապես գիտական և նորարարական ոլորտներում, մտքի փոխանակմամբ հնդկական սփյուռքը հետզհետե սկսում է ներդրումներ կատարել ազգային ձեռնարկություններում:

15.Նահանգների զարգացումը ներսից: Ներկայումս դժվար է լուծել տեղական խնդիրները եկամտի վերաբաշխման միջոցով: Անհրաժեշտ է ապահովել այդ տարածքների ներքին աճ:

16. Հնդկական մոդելը հիմնված է երրորդ («ծառայության») ոլորտի ակտիվ զարգացման վրա, մինչդեռ չինականը դեռ կողմնորոշված է դեպի հիմնականում իրականացվող լայնածավալ արդյունաբերությունը: Հնդկական մոդելը ավելի, քան չինականը ապավինում է ներքին ռեսուրսներին:

17.Հասարակական-քաղաքական ընդհանուր իրավիճակի կայունությունը:

Այսպիսով՝ տնտեսական բարեփոխումները Հնդկաստանը դարձրին կենսունակ, բարենպաստ ազդեցություն ունեցան ազգային արդյունաբերության, գյուղատնտեսության արդիականացման, ծառայությունների ոլորտի արագացված զարգացման, սոցիալական խնդրի աստիճանական լուծման և երկրի՝ համաշխարհային տնտեսությանը առաջադեմ ինտեգրման համար:

Կարծում եմ՝ Հնդկաստանում իրականացված տնտեսական բարեփոխումների մի մասը կարող է կիրարկվել ՀՀ տնտեսությունում:

Կիրառական եզրակացություններ և առաջարկություններ

1. Երկրում սեփական արդյունաբերական և տեխնիկական բազայի ստեղծումից հետո անցնել արտահանմանն ուղղված զարգացման մոդելի: Տնտեսական մոդելը պետք է հիմնված լինի երկու ուղղությունների վրա՝ «արտաքին աճ», որն ապահովվում է խոշոր և միջին արդյունաբերության զարգացմամբ, և «ներքին աճ», որի հիմքում ընկած է «փոքր տնտեսությունը»: Խոշոր և միջին բիզնեսը պետք է փոխկապակցված լինեն և լրացնեն միմյանց, քանի որ փոքր տնտեսության զարգացման շնորհիվ խոշոր բիզնեսն ավելի արագ է աճում:

2. Կայուն զարգացում երեք հարթություններում՝ տնտեսական, բնապահպանական և սոցիալական՝ հաշվի առնելով երեք խնդիր՝ տնտեսական արդյունավետություն, բնապահպանական անվտանգություն և սոցիալական ապահո-

վություն: Էական ներդրում կայուն զարգացման խնդրի լուծման գործում՝ հիմք ընդունելով տնտեսական աճը, ազգային կրթական համակարգերի զարգացումը, առողջապահությունը, սոցիալական զարգացումը: Գիտության և տեխնոլոգիաների զարգացման ընդհանուր ուղղություններ ընդգրկել բնակչության հիմնական կարիքները բավարարող տեխնոլոգիաների զարգացումը, սոցիալական և տնտեսական զարգացման ծրագրերի սերտ ինտեգրում գիտության և տեխնոլոգիաների հետ, գիտելիքահենք արտահանման կառուցվածքի փոփոխության խթանում, հասարակության բոլոր ոլորտներում գիտության տարածման խթանում, երիտասարդության համար գիտական ոլորտում աշխատելու հնարավորությունների ընդլայնում:

3. Սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության մշակման և միջոցների նպատակային օգտագործման ապահովման գործում կարևորել պետության ազդեցության պլանավորումը: Զարգացման յուրաքանչյուր փուլի համար պլանավորումը պետք է որոշի շուկայի և պետական կարգավորման, պետական և մասնավոր հատվածների, ազգային և արտաքին կապիտալի, խոշոր և փոքր արտադրության դերը: Անհրաժեշտ է համատեղել պետական հատվածի քաղաքականության պլանավորումը մասնավոր հատվածի պլանավորման հետ, հաշվի առնել մարզային ծրագրերը, որոնք պետք է բխեն ազգային ծրագրից, ձևավորել վիճակագրական լայն բազա, ներգրավել գիտական և փորձագիտական հանրությանը որոշումների կայացման ընթացքում, կենտրոնացնել հասարակությանը սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացին:

4. Տնտեսության պետական և մասնավոր հատվածների դերն ու տեղը պետք է որոշվի յուրաքանչյուր փուլում՝ հիմնվելով սոցիալ-տնտեսական զարգացման ձեռք բերված մակարդակի և ռազմավարական նպատակների վրա: Մասնավորապես՝ խոշոր կապիտալի կառուցվածքի արդիականացում՝ ապահովելով դրա արտահոսքը դեպի կապիտալատար և տեխնոլոգիական բարդ արդյունաբերություն, որպես հիմնական ներդրող (ընդհանուր ներդրման մոտ 1/3-ը) պետք է հանդես գա պետությունը: Ընտրված ռազմավարությունն ապահովում է ներդրումների մշտական աճ տնտեսության բոլոր ոլորտներում: Սա իր հերթին կապահովի տնտեսական աճի բարձր տեմպեր և դրա արդիականացումը ճգնաժամերի պայմաններում:

5. Առավելագույն զբաղվածության ապահովում փոքր արդյունաբերությամբ: Փոքրածավալ արտադրությունը պետք է լինի ավանդական և ժամանակակից: ՓՄՁ զարգացմանը պետք է նպաստեն հավատարմագրմանն առնչվող ծախսերի 75%-ի կատարումը պետության կողմից, պետական գնումների որոշակի տոկոսի ապահովումը ՓՄՁ-ների համար՝ փոքր ձեռնարկությունների կորպորացիայի միջոցով ապահովելով խոշոր պատվերների կատարումը: Ազգային Փոքր բիզնեսի կորպորացիան (National Small Industries Corporation) փոքր ձեռնարկությունների անունից հայտ է ներկայացնում մրցույթին մասնակցելու համար: Այնուհետև պատվերը բաշխվում է մասնակիցների միջև՝ իրենց արտադրական հնարավորություններին համապատասխան:

6. Տեքստիլ արդյունաբերությանն աջակցելու քաղաքականությունը պետք է ներառի տեխնիկական վերազինման ֆինանսավորում, որը արտադրողներին ֆինանսական աջակցություն է տալիս պետական փոխհատուցումների և սուբսիդիաների միջոցով արտադրությունն արդիականացնելու համար, ինչպես նաև տեքստիլ տեխնոլոգիական արդյունաբերական պարկերի ստեղծման ծրագրով կառավարությունը պետք է իրականացնի կազմակերպական և իրավական բոլոր միջոցառումները: Ծրագիրը խթանում է նորարարությունը պետական-մասնավոր գործընկերության մեխանիզմների միջոցով:

7. Աջակցություն արտահանողներին, մասնավորապես՝

- սահմանել այն ապրանքների և ծառայությունների ցանկը, որոնք աջակցություն են ստանում որոշակի երկրների շուկաներ արտահանվելիս: Աջակցության ամենացածր մակարդակը ներառում է տվյալ երկրի հետ հաստատված կապեր ունեցող երկրներ արտահանումը, երկրորդ խումբը ներառում է նոր և զարգացող շուկաներ ունեցող երկրներ արտահանումը և երրորդ խմբում ընդգրկվում են այլ երկրներ:
- Պետության աջակցությունը պետք է վերաբերի հատուկ ապրանքների. փոխհատուցման ամենաբարձր առաջնահերթությունն ու առավելագույն տոկոսը տալ գյուղատնտեսական և էկոլոգիական, բարձր հավելյալ արժեք ունեցող, հիմնական արդյունաբերական և բարձր տեխնոլոգիական արտադրանքներին: Այս ծրագրերի հիմնական գործիքը կարող է լինեն հատուկ սերտիֆիկատների կամ վկայագրերի (Duty Credit Scrips) տրամադրումն արտահանողներին: Վկայագրի դրամական համարժեքությունը հաշվարկվում է արտահանվող ապրանքների արժեքի հիման վրա FOB պայմաններով և տատանվում է արտահանման արժեքի 2%-ից մինչև 5%՝ կախված մատակարարվող ապրանքներից և շուկայից: Վկայագրերը կարող են փոխանցվել (վաճառվել) այլ առևտրային կազմակերպություններին: Duty Credit Scripts-ը կարող է օգտագործվել ներմուծման մաքսատուրքեր վճարելու, ներքին շուկայում ձեռք բերված ապրանքների ակցիզային հարկերի վճարման համար:
- Հատուկ ծրագրեր մշակել ոսկերչական արդյունաբերության, ինչպես նաև «արտահանման» տների («экспортные» дома) համար: «Արտահանման» տների վարկանիշային մեխանիզմով, կախված արտահանման ծավալներից, տրամադրել տեխնիկական և ֆինանսական փոքր առավելություններ արտահանման գործողություններն իրականացնելիս: Օրինակ՝ ամենամեծ «արտահանման» տները, որոնց տարեկան արտահանման ծավալը ավելի քան 100 միլիոն դոլար է, կարող են ինքնուրույն սերտիֆիկացնել իրենց արտադրանքը:
- Արտահանմանն օժանդակելու գործում կարևորել «Արտահանման վարկի երաշխիքներ տրամադրող կորպորացիաները», որոնք արտահանողներին տրամադրում են տարբեր տեսակի ապահովագրական ծածկույթ՝ չստացված արտահանման հասույթից, մի շարք առևտրային կամ քաղաքական նկատառումներից, ինչպես նաև երաշխիքներ տալիս այն բանկին և այլ ֆինանսական

հաստատությունների, որոնք արտահանողներին վարկեր են տրամադրում բարենպաստ պայմաններով:

• Հատուկ տնտեսական գոտիներում փոքր ձեռնարկությունների տարեկան մինչև 500 միլիոն դոլարի արտաքին առևտրային փոխառությունները թույլատրել մարելու առանց ժամկետի սահմանափակումների:

8. Օտարերկրյա ուղղակի ներդրումները նպատակահարմար է իրականացնել համատեղ ձեռնարկությունների ձևավորմամբ: Ռազմավարական նշանակության մի շարք ոլորտներում օտարերկրյա կապիտալի մասնակցության մասնաբաժինը չպետք է գերազանցի 25%-ը: Օտարերկրյա կապիտալ ուղղակի ներդրումներ չթույլատրել որոշ ոլորտներում, մասնավորապես՝ մանրածախ առևտրում և վիճակախաղերում:

9. Պետությունը իր մասնակցությունը պետք է ունենա առևտրային բանկերի ֆինանսական հոսքերի կարգավորման գործում, մասնավորապես՝ պետք է սահմանել բանկերի վարկերի մասնաբաժին, որը պետք է ուղղվի տնտեսության «առաջնահերթ» որոշ ոլորտների ֆինանսավորմանը:

10. Ներկայումս դժվար է լուծել տեղական խնդիրները եկամտի վերաբաշխման միջոցով: Անհրաժեշտ է ապահովել մարզերում ներքին աճ: Այս ուղղությամբ կարևոր է ձևավորել համագործակցային տնտեսությունը: Նման տնտեսության մեծ մասը անհրաժեշտ է ձևավորել գյուղական վայրերում և օժանդակել դրանց՝ ընդհուպ գյուղատնտեսական արտադրանքի իրացումը:

Կարծում եմ՝ տնտեսական բարեփոխումների հնդկական փորձը կարող է օգտակար լինել Հայաստանի տնտեսությանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Индия: особенности экономического роста и энергетика, Бюллетень о текущих тенденциях мировой экономики, выпуск № 33, июнь 2018, 20 с.
2. Галищева Н., “Делийский консенсус” – индийская модель либерализации экономики // Мировая экономика: проблемы восстановления // Азия и Африка сегодня, № 3 2014, 8 с., էլեկտրոնային հղում՝ // file:///C:/Users/Razmik/Desktop/hndkastan/08.11/+.pdf.
3. Маляров О., Государственное регулирование в переходной экономике: опыт Индии // Россия и мир в XXI веке // 133 с., էլեկտրոնային հղում՝ file:///C:/Users/Razmik/Desktop/hndkastan/08.11/elibrary_16401222_24545571+.pdf.
4. Маляров О., Роль государства в переходной экономике: опыт Индии // Экономическая наука современной России // Экономика зарубежных стран // N 2, 2000г., 16 с., էլեկտրոնային հղում՝ // file:///C:/Users/Razmik/Desktop/hndkastan/08.11/elibrary_9567726_35965859.pdf.
5. Обзор состояния экономики и основных направлений внешнеэкономической деятельности Индии в 2017/18 финансовом году, 65 с.
6. INDIA: SYSTEMATIC COUNTRY DIAGNOSTIC, Realizing the promise of prosperity, WORLD BANK GROUP, REPORTNO:126284-IN, P.119.

7. INTERNATIONAL MONETARY FUND, WORLD ECONOMIC OUTLOOK, Growth Slowdown, Precarious Recovery, 2019, p. 216.
8. KPMG India Economic Survey 2018-19, Key highights, Flash News, 04 July 2019, p. 19.
9. OECD Economic Surveys India Executive Summary, December 2019, p.8.
10. http://lawinrussia.ru/content/opyt-ekonomicheskoy-reformy-v-indii-0
11. http://www.ereport.ru/articles/weconomy/india.htm
12. https://onlinelibrary.wiley.com/doi/full/10.1111/aepr.12239
13. https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=IN
14. https://globalaffairs.ru/global-processes/Indiya-nachat-s-maloi-19366
15. http://www.dipp.gov.in

References

1. Indija: osobennosti jekonomicheskogo rosta i jenergetika, Bjulleten' o tekushhih tendencijah mirovoj jekonomiki, vypusk # 33, ijun' 2018, 20 s.
2. Galishheva N., "Delijskij konsensus" – indijskaja model' liberalizacii jekonomiki // Mirovaja jekonomika: problemy vosstanovlenija // Azija i Afrika segodnja, # 3 2014, 8 s., // file:///C:/Users/Razmik/Desktop/hndkastan/08.11/+.pdf.
3. Maljarov O., Gosudarstvennoe regulirovanie v perehodnoj jekonomike: opyt Indii // Rossija i mir v XXI veke // 133 s., էլեկտրոնային հղում՝ file:///C:/Users/Razmik/Desktop/hndkastan/08.11/elibrary_16401222_24545571+.pdf.
4. Maljarov O., Rol' gosudarstva v perehodnoj jekonomike: opyt Indii // Jekonomicheskaja nauka sovremennoj Rossii // Jekonomika zarubezhnyh stran // N 2, 2000g., 16 s., էլեկտրոնային հղում՝ // file:///C:/Users/Razmik/Desktop/hndkastan/08.11/elibrary_9567726_35965859.pdf
5. Obzor sostojanija jekonomiki i osnovnyh napravlenij vneshnejekonomicheskoj dejatel'nosti Indii v 2017/18 finansovom godu, 65 s.INDIA: SYSTEMATIC COUNTRY DIAGNOSTIC, Realizing the promise of prosperity, WORLD BANK GROUP, REPORTNO:126284-IN, P.119.
6. INTERNATIONAL MONETARY FUND, WORLD ECONOMIC OUTLOOK, Growth Slowdown, Precarious Recovery, 2019, p. 216.
7. KPMG India Economic Survey 2018-19, Key highights, Flash News, 04 July 2019, p. 19.
8. OECD Economic Surveys India Executive Summary, December 2019, p.8.
9. http://lawinrussia.ru/content/opyt-ekonomicheskoy-reformy-v-indii-0
10. http://www.ereport.ru/articles/weconomy/india.htm
11. https://onlinelibrary.wiley.com/doi/full/10.1111/aepr.12239
12. https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=IN
13. https://globalaffairs.ru/global-processes/Indiya-nachat-s-maloi-19366
14. http://www.dipp.gov.in

Գրիգոր Մանուկյան

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

Ամփոփագիր: Վերջին երկու տասնամյակում ձեռնարկված տնտեսական լայնածավալ բարեփոխումները Հնդկաստանը դարձրել են կենսունակ, ներդրումների համար մրցակցային, ինպես նաև համաշխարհային տնտեսությանն առաջադեմ ինտեգրման երկիր: Հնդկաստանում իրականացվող տնտեսական բարեփոխումների մի մասը կարող է տեղայնացվել ՀՀ տնտեսությունում: Կարծում ենք՝ այն կնպաստի Հայաստանի Հանրապետության տնտեսության արդիականացմանը և դիվերսիֆիկացմանը, տարածքային անհավասարակշռության արդի խնդիրների մեղմացմանը, մարդկային կապիտալի որակի բարձրացմանը, ՓՄՁ ակտիվացմանը, էկո-ստանդարտների ակտիվ իրականացմանը:

Բանալի բառեր. տնտեսական բարեփոխում, դիվերսիֆիկացում, մարդկային կապիտալ, տնտեսական մոդել, արտահանման վարկ, «արտահանման» տներ

Григор Манукян

КОНТУРЫ ЭКОНОМИЧЕСКОЙ РЕФОРМ ИНДИИ

Аннотация: Масштабные экономические реформы, проведенные в последние два десятилетия, сделали Индию жизнеспособной страной, страной конкурентоспособной для инвестиций, а также страной с развитой интеграцией в мировую экономику. Некоторые из экономических реформ, проводимых в Индии, могут быть применены в экономике Республики Армения. Мы считаем, что это поспособствует модернизации и диверсификации экономики Республики Армения, смягчению актуальных проблем территориального дисбаланса, повышению качества человеческого капитала, активации малого и среднего бизнеса, активному внедрению экологических стандартов.

Ключевые слова: экономическая реформа, диверсификация, человеческий капитал, экономическая модель, экспортный кредит, «экспортные» дома

Grigor Manukyan

OUTLINES OF ECONOMIC REFORMS OF INDIA

Abstract: The large-scale economic reforms undertaken in the last two decades turned India to a viable country, country competitive for investment, and a country with the progressive integration into the global economy. Some of the economic reforms carried out in India can be applied in in the economy of the Republic of Armenia. We believe that this will contribute to modernization and diversification of the economy of the Republic of Armenia, mitigation of challenging issues of territorial imbalance, improvement of quality of human capital, activation of SME, active implementation of eco standards.

Keywords: economic reform, diversification, human capital, economic model, export credit, "export" houses

3. ԱՅԼ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՐԿՐՆԵՐ

Մերի Մանուչարյան
Մերի Մուրադյան

ԻՍՐԱՅԵԼԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» ՀԵՏԱԳԻԾԸ

Ներածություն

- Բնակչության թիվը՝ 8.883.800 մարդ (2018)[1]
- Տարածքը՝ 22.070 հազ. քկմ (2018)[1]
- Պետական կառավարման ձևը՝ խորհրդարանական հանրապետություն[2]
- Բնակչության խտությունը՝ 411 մարդ/քկմ (2018)[1]
- Բնակչության բնական աճի տեմպը՝ 1,9 (2018)[1]
- Բնակչության էթնիկ կառուցվածքը՝ 74.2 %՝ հրեաներ, 20.9 %՝ արաբներ, 4.9 %՝ այլ[2]
- Բնակչության կրոնական կառուցվածքը՝ 74.2%՝ հուդայիզմ, 17.8%՝ իսլամ, 2%՝ քրիստոնեություն, 1.6%՝ դրուզներ, 4.4%՝ այլ[2]

- ՀՆԱ մեծությունը (անվանական)՝370.588 մլրդ ԱՄՆ դոլար[1]
- ՀՆԱ-ն մեկ բնակչի հաշվով՝ 41.715.0 ԱՄՆ դոլար[1]
- Եկամուտների բևեռվածության գործակիցը (Ջինիի գործակից)՝ 42.8
- Դիրքը «Մարդկային զարգացման ինդեքսում»՝ 22 (2018, ինդեքսի արժեքը՝ 0.906)[2]
- Դիրքը «Գործարարությամբ զբաղվելու ինդեքսում»՝ 49 (2019, ինդեքսի արժեքը՝ 73.23)[3]
- Դիրքը «Կյանքի որակի ինդեքսում»՝ 9 (2019)[4]
- Դիրքը «Գլոբալ նորարարական ինդեքսում»՝ 10 (2019)[5]
- Դիրքը «Գլոբալ մրցունակության ինդեքսում»՝ 20 (2019)[6]
- Տնտեսական աճի միջին տեմպը վերջին 5 տարիներին՝ 2014՝ 3.8%, 2015՝ 2.3%, 2016՝ 3.98%, 2017՝ 3.53%, 2018՝ 3.45%[1]

---

[1] https://data.worldbank.org/
[2] https://en.wikipedia.org/wiki/Israel
[3] https://www.doingbusiness.org/
[4] https://cms-internationsgmbh.netdna-ssl.com/
[5] https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2019.pdf
[6] http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf

- Գնաճի միջին տեմպը վերջին 5 տարիներին՝2014՝ 0.5%, 2015՝ -0.63%, 2016՝ -0.54%, 2017՝ 0.24%, 2018՝ 0.8%[1]
- Աղքատության մակարդակը՝ 21% (2016)[1]
- Գործազրկության մակարդակը՝ 2014՝ 5.9%, 2015՝ 5.3%, 2016՝ 4.8%, 2017՝ 4.2%, 2018՝ 3.95%, 2019՝ 3.93%[2]
- Հարկային բեռը (հարկեր/ՀՆԱ)՝ 2014՝ 23.2, 2015՝ 23.34, 2016՝23.26, 2017՝ 24.6, 2018՝ 23.07[2]
- Ուրբանիզացիայի մակարդակը՝ 92.34% (2017)[3]

«Մենք երազում էինք մեր հողի մասին, բայց հողը, որ ստացանք, երազանք չէր: Դա մի փոքրիկ կտոր էր: Դրա վրա երկու լիճ կար, մեկը՝ մահացած, մյուսը՝ մահացող: Ջուր ընդհանրապես չկար, բնական պաշարներ չկային: Մենք միայնակ էինք, չկար կրոնի եղբայր, լեզվի քույր, պատմության հարևան, և այդ ամենը Հոլոքոստից հետո էր: Մենք գնացինք այնտեղ ու չգիտեինք, թե ինչ անենք, և մենք մտածեցինք՝ բնության մեծագույն հարստությունը մարդն է, մարդն է հարստացրել հողը, ոչ թե հակառակը: Մենք բոլորս դարձանք գիտնականներ: Իսրայելի յուրաքանչյուր գյուղացի սկսեց սովորել, թե ինչպես կարելի է գյուղատնտեսություն հիմնել առանց հողի ու ջրի: Մենք հիմնեցինք բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված առաջին գյուղատնտեսությունը: Հիշենք՝ ապագայի համար կարևոր չէ, թե ինչ ենք գտնում, այլ այն, թե ինչ ենք արտադրում:

Մենք մարդիկ ու զինամթերք չունեինք, երբեք չէինք կռվել, ընդամենը 450 հազար մարդ ունեինք, որոնց մեջ զինվորականներ չկային: Երբ ստեղծվեց Իսրայել պետությունը, պատերազմ էր: Ի՞նչ կարող էինք անել մենք. երկու բան միայն: Առաջինը՝ մարդիկ պետք է խիզախ դառնային, պետք է հասկանայինք, որ այլընտրանք չունենք, միայն պետք է հաղթել, եթե մեկ անգամ պարտվենք՝ վերջ: Երկրորդը՝ քանի որ մենք զենք չունեինք, մենք սկսեցինք այն արտադրել: Սկսեցինք զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը՝ ծառայեցնելով այն բանակին, քանի որ մենակ էինք թշնամական միջավայրում»[4]: Այս խոսքերի հեղինակը Իսրայելի նախկին նախագահ Շիմոն Պերեսն է:

Իսրայելի հայրենադարձության և ինտեգրման նախկին նախարար Սոֆա Լանդվարի խոսքերով՝ «Հրեաները տարբեր են: Նրանք եկել էին ամբողջ աշխարհից: Բայց մեր խելացի գլուխները թույլ տվեցին այստեղ՝ ավազի մեջ, անապատում, կառուցել ծաղկուն այգի: Նրանք հիանալի տնտեսագետներ են, նրանք հիանալի գործարարներ են, նրանք հիանալի բժիշկներ են: Ի վերջո, մեր բժշկությունը լավագույններից մեկն է աշխարհում, Մենք հայրենասեր ենք, մենք սիրում ենք մեր Իսրայելը, և հավանաբար սա է մեր ֆենոմենը»[5]:

Սույն հոդվածը ուրվագծում է Իսրայելի «տնտեսական հրաշքի հետագիծը»:

---

[1] https://en.wikipedia.org/wiki/Standard_of_living_in_Israel
[2] https://data.worldbank.org/
[3] https://www.statista.com/statistics/455846/urbanization-in-israel/
[4] http://henaran.am/140902.html, 92-ամյա նախկին նախագահի խոսքերը ցնցել են ողջ աշխարհը:
[5] https://mnews.world/ru/video/fenomen-izrailya-v-chem-sekret-uspeha-evrejskogo-gosudarstva/

Հիմնական վերլուծություն

Իսրայելի Պետությունը ստեղծվել է 1948 թվականի մայիսի 14-ին՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1947 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ, ըստ որի՝ Մեծ Բրիտանիայի ենթամանդատային Պաղեստինը հռչակվում էր անկախ, և նրա տարածքում ստեղծվում էին երկու ինքնուրույն՝ արաբական և հրեական պետություններ: Հրեական պետությանը՝ Իսրայելին, հատկացվում էր 14 հազ. քառ. կմ (Պաղեստինի տարածքի 56%-ը) տարածություն՝ խառը բնակչությամբ: Երուսաղեմը հանձնվում էր ՄԱԿ-ի կառավարմանը: 1948 թվականի մայիսին Իսրայելում ստեղծվեց ժամանակավոր կառավարություն, որը կազմված էր բացառապես սիոնիստական կուսակցությունների ներկայացուցիչներից: Կառավարության առաջին իսկ՝ «Անկախության դեկլարացիայով» սիոնիզմը հռչակվեց Իսրայելի պաշտոնական գաղափարախոսություն և քաղաքականություն[1]:

Իսրայելի խնդիրն էր կենտրոնացված կառավարման միջոցով ստեղծել կենսունակ, ինքնավար տնտեսություն: Երկրի տնտեսական ոլորտի գործիք հանդիսացավ Histadrut-ը (Իսրայելի աշխատավորների ընդհանուր ֆեդերացիա), որը կազմավորվել էր 1920 թ. ֆորմալ կերպով և առնչվում էր հարցերի լայն շրջանակի՝ ներդրումային գործունեությունից մինչև անվտանգության համակարգի կազմակերպում: Այս կազմակերպության հովանու ներքո ստեղծվել են Պաղեստինի խոշորագույն բանկերից մեկը («Bank Apoalim» - «Աշխատանքային բանկ») և «Hevrat xa-Ovdim» (Աշխատավորների միություն) խոշոր արդյունաբերական և գյուղատնտեսական նախագծերի ֆինանսավորման և կառավարման ֆոնդը[2]:

Անկախության սկզբնական տարիներին տնտեսության վիճակի վրա ազդեցին հետևյալ գործոնները.

- պետբյուջեի հսկայական մասնաբաժնի բաշխումը պաշտպանական կարիքների համար (օրինակ՝ 1952 թ.՝ 37%),
- արտաքին աղբյուրներից ֆինանսավորման կախվածությունը,
- արտարժույթի դեֆիցիտը և արտաքին պարտքի ավելացումը,
- բյուջեի դեֆիցիտը և ինֆլյացիան,
- երկրի աշխատուժի 10%-ից ավելի գործազրկությունը,
- ծառայությունների ոլորտում աշխատողների մեծ բաժինը ավելի քան 50%,
- բիզնեսի ոլորտի կախվածությունը կառավարության վարչական և քաղաքական որոշումներից[3]:

Որպես հիմնական հակաճգնաժամային միջոց 1949 թվականի մայիս-հունիս ամիսներին ծառայեց, այսպես կոչված, «Ասկետիզմի ռեժիմը», որն իրենից

---

[1] https://hy.wikipedia.org/wiki/%D4%BB%D5%BD%D6%80%D5%A1%D5%B5%D5%A5%D5%AC

[2] http://countrystudies.us/israel/16.htm

[3] Гилади Д., Становление финансово-экономической системы // рук. Б. Нойбергер, научн. ред. И. Бен-Ами. Общество, экономика и культура Израиля. Первое десятилетие : сборник. – Открытый университет Израиля, 2003, т. 3, с. 10-118. – ISBN 965-06-0653-X.

ներկայացնում էր հիմնական պարենային արտադրանքների քարտերի բաշխում: Ըստ կառավարության հաշվարկների՝ ենթադրվում էր, որ այդ քարտերը պետք է օգնեին պետբյուջեի ծախսերը նվազեցնել մոտ 20%-ով: 1950-ականների սկզբին ստեղծվեցին նաև հագուստի և մի շարք այլ անհրաժեշտ ապրանքների քարտեր: Սակայն քարտային համակարգը իրեն չարդարացրեց: Պետական վերահսկողությունը ազդում էր տնտեսական գործունեության բոլոր ոլորտների վրա: Սննդի մատակարարման հետ կապված դժվարությունները սկսեցին զգալ 1949 թ. վերջին, «սև շուկայի» դեմ պայքարի վարչական միջոցները նույնպես արդյունք չտվեցին, և արդեն 1952 թվականին քարտային համակարգը չեղարկվեց[1]:

Իսրայելի՝ որպես պետության կայացման գործում իր ներդրումն ունեցավ ԱՄՆ-ը: Իսրայելը օգնության համար դիմեց Միացյալ Նահանգներին և ստացավ զգալի գումարներ ինչպես վարկերի՝ «Անկախության վարկի», այնպես էլ դրամաշնորհների տեսքով: Դրա դիմաց Իսրայելի կառավարությունը ստիպված եղավ որոշ քաղաքական որոշումներ կայացնել՝ ելնելով Վաշինգտոնի դիրքորոշումներից:

1951 թ. քաղաքական գործիչ Բեն Գուրիոնի նախաձեռնությամբ սկսվեցին գաղտնի բանակցություններ եվրոպական հրեականությանը պատճառված վնասի փոխհատուցման վճարման համար Արևմտյան Գերմանիայի և արևմտյան այն երկրների հետ, որոնք Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գրավել էին Իսրայելի տարածքի որոշ մասը:

1952-53 թվականներին Իսրայելում սկսվում է տնտեսական նոր քաղաքականության փուլը: 1952 թվականի փետրվարին ֆինանսների նախարար Էլիզեր Կապլանը, ելույթ ունենալով Քնեսեթի նստաշրջանում, հայտարարեց նոր տնտեսական քաղաքականության մեկնարկի մասին: Նոր քաղաքականությունը ներառում էր մի շարք միջոցառումներ, որոնցից հիմնականներն էին՝

- դրամական միջոցների թողարկման դադարեցումը՝ պետական բյուջեի ծախսերը հոգալու համար,
- բաշխիչ համակարգի վերացումը և գնագոյացման պետական կարգավորման էական կրճատումը,
- ազգային արժույթի՝ լիրայի արժեզրկումը,
- քաղաքացիների կողմից պարտադիր վարկի ձեռքբերումը՝ կանխիկ և բանկային ավանդների 10% -ի չափով[2]:

1952 թվականի սեպտեմբերի 10-ին՝ վեց ամիս տևած բանակցություններից հետո, Լյուքսեմբուրգում ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի՝ Գերմանիան պարտավորվում էր Իսրայելին Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կրած վնասների (հարկադիր աշխատանքի, կորցրած գույքի, ինչպես նաև

[1] «Создание государства и первые годы». Сборник, сост, д-р Абигаль Орен, Хая Регев. Тель-Авивский университет, 1995.

[2] «Экономика Израиля: развитие, характеристики. политика». Сборник сост. д-р Дан Гилади.

500 հազար փախստականների) համար որպես փոխհատուցում վճարել 3,5 միլիարդ մարկ: Ըստ արձանագրության՝ Արևմտյան Գերմանիան խոստացել էր վճարել փոխհատուցման ամբողջ գումարի 2/3-ը 1953-1965 թվականների միջև ընկած ժամանակահատվածում, մյուս մասը պետք է վճարեր Արևելյան Գերմանիան, սակայն վերջին գումարը վճարվեց միայն 1991 թվականին՝ Գերմանիայի վերամիավորումից հետո: Համաձայնագիրը գերմանական կողմից ստորագրվել է կանցլեր Կոնրադ Ադենաուերի կողմից, իսրայելական կողմից՝ արտաքին գործերի նախարար Մոշե Շարեթի: Այս համաձայնագիրը շատ կարևոր դեր խաղաց Իսրայելի տնտեսության կայացման գործում: Այդ տարիներին վերադարձված գումարը կազմում էր երկրի բյուջեի մոտ 55%-ը, որը ներդրվեց տարբեր ենթակառուցվածքների զարգացման գործում[1]:

1954-1964 թթ. ընկած ժամանակահատվածը բնութագրվում է արագ և կայուն տնտեսական աճով, ՀՆԱ-ի միջին տարեկան աճը մնացել էր 10% մակարդակի վրա (այդ տարիներին բարձր աճի տեմպեր ցույց տվեց միայն Ճապոնիայի տնտեսությունը)՝ ցածր գնաճի (մոտ 5%) և գործազրկության (50-ականների վերջում երկիրը ապահովեց լրիվ զբաղվածություն) պայմաններում: Այդ տարիները բնութագրվում էին ոչ միայն բարձր էքստենսիվ ցուցանիշներով, այլ նաև տնտեսության արդիականացմամբ և արտասահմանից նշանակալի ներդրումների ներգրավմամբ, իսկ հիմնական խնդիրը տնտեսագետները համարում էին սպառման ահռելի աճը: 1954 թ. օգոստոսի 24-ին ընդունվեց «Իսրայելի բանկի մասին» օրենքը, որը դեկտեմբերի 1-ից սկսեց կատարել կենտրոնական բանկի գործառույթները:

1965 թվականից սկսած՝ երկրի տնտեսական աճի տեմպերը դանդաղեցին, ինչը կապված էր մի շարք համապետական խոշոր նախագծերի ավարտի հետ, որը հանգեցրեց պետական հատվածի տնտեսական գործունեության կտրուկ անկման և աշխատատեղերի քանակի նվազման: Օբյեկտիվ գործոններից բացի, տնտեսական աճի դանդաղեցմանը նպաստեց պետության տնտեսական քաղաքականությունը. վախենալով, որ եկամտի ավելի արագ աճը և, որպես հետևանք, պահանջարկի մեծացումը կարող են հանգեցնել առևտրային հաշվեկշռի վատթարացման և գնաճի թռիչքի, կառավարությունը որոշեց բարձրացնել վարկերի տոկոսադրույքները և նվազեցնել պետական ներդրումները: Արդեն 1966 թ. պարզ դարձավ, որ տնտեսությունը խորը ճգնաժամի մեջ է. գործազուրկների թիվը կրկնապատկվեց՝ հասնելով աշխատունակ բնակչության 10%-ին, արդյունաբերական արտադրությունը կտրուկ անկում ապրեց, և նվազեց ներգաղթը: Տնտեսական ճգնաժամը է՛լ ավելի խորացավ՝ կապված երկրի քաղաքական իրավիճակի սրման հետ:

---

[1] «Создание государства и первые годы. Германские репарации». Сборник сост. д-р Абигаль Орен, Хая Регев. Тель-Авивский университет, 1995.

Վեցօրյա պատերազմի և Ահեղ դատաստանի օրվա պատերազմի միջև ընկած ժամանակահատվածում՝ 1967-1972 թթ., տնտեսությունը ցույց տվեց խառն արդյունքներ, ինչը բացի իր բացասական հետևանքներից՝ ունեցավ նաև դրական կողմեր. ավելացավ օտարերկրյա ներդրումների հոսքը, երկրում սկսեցին զարգանալ մետալուրգիական և մետաղամշակման ոլորտները: Ռազմական գերատեսչության պատվերով, տարածքի ընդարձակման հետ կապված, ճանապարհային և շինարարական աշխատանքները նորից սկսեցին աճել: Արդյունքում կտրուկ կրճատվեց գործազրկությունը, վերսկսվեց հայրենադարձությունը: Ներգաղթյալների նոր ալիքի մեծ մասը ժամանում էր Արևմուտքի զարգացած երկրներից և ՍՍՀՄ-ից՝ ունենալով լավ կրթություն և աշխատանքային որակավորում, ինչը նպաստեց տնտեսական աճին:

Այնուամենայնիվ, մնում էր չլուծված գլխավորը՝ առևտրային հաշվեկշռի մեծ դեֆիցիտը, որը 1966-1970 թվականներին կրկնապատկվեց, ավելացավ նաև պետական բյուջեի դեֆիցիտը՝ պայմանավորված սոցիալական կարիքների և պաշտպանության ծախսերի աճով, իրական եկամուտների աճը գերազանցում էր տնտեսությունում աշխատանքի արտադրողականության աճին: Արդյունքում գնաճը 1972-ին հասավ 14%-ի[1]:

1973-77 թվականներին երկրի տնտեսությունը կրկին գտնվում էր անկման շրջանում՝ կապված նավթային ճգնաժամի հետ: 1973 թ. գնաճը կազմում էր 20%, իսկ արդեն 1977 թ.՝ 44%: Այս տարիներին ՀԱԱ-ի աճը կազմում էր 3-4%, ինչը մոտավորապես հավասար էր բնակչության աճին: Կապիտալ ներդրումների և շինարարության ծավալները նվազեցին՝ առաջին անգամ ցույց տալով բացասական հավելաճ: 1974 թ. առևտրային հաշվեկշիռը բարելավելու համար փողը արժեզրկվեց՝ 4,2-ից 6 լիրա մեկ ԱՄՆ դոլարի դիմաց: 1975 թվականից հայտարարվեց «սողացող արժեզրկման» քաղաքականության մասին: Առաջացած տնտեսական և սոցիալական խնդիրները հիմք հանդիսացան ընտրություններում իշխող կառավարության պարտության համար:

Նոր կառավարությունը ղեկավարում էր Մենահեմ Բեգինը: Սիմա Էրլիխը նշանակվեց ֆինանսների նախարար: Նա նախաձեռնեց լայնամասշտաբ բարեփոխումներ, որ կոչվեցին «տնտեսական հեղաշրջում»: Բարեփոխումների նպատակը կառավարության վերահսկողության նվազեցումն ու շուկայական տնտեսություն ստեղծելն էր:

Այդ տարիներին հայտնի լիբերալ տնտեսագետ Միլթոն Ֆրիդմանը նշել է, որ Իսրայելն ունի եզակի և ծայրաստիճան վտանգավոր տնտեսական իրավիճակ, երբ ընդհանուր պետական ծախսերը գրեթե հավասար են համախառն ազգային արդյունքին: Ֆրիդմանը կառավարությանը կոչ է արել կրճատել ծախսերը և նվազեցնել վերահսկողությունը տնտեսության բոլոր ոլորտներում: Նա

[1] «Экономика Израиля: развитие, характеристики, политика», гл. «Второй кризис». Сборник сост. д-р Дан Гилади.

նաև նախազգուշացրեց Իսրայելին հիպերինֆլյացիայի վտանգների մասին: Նրա բոլոր առաջարկություններից միայն մեկն իրականացվեց՝ արտարժույթի գործառնությունների նկատմամբ վերահսկողության վերացումը և փոխանակման շուկային ազատության տրամադրումը: Հանվեցին արտարժույթով գործարքների գրեթե բոլոր սահմանափակումները և լիրայի ֆիքսված փոխարժեքը, այսուհետև դա որոշվում էր առաջարկի և պահանջարկի հաշվեկշռով[1]:

Սակայն քաղաքական պատճառներով Էրլիխը չկարողացավ սահմանափակել բյուջեի ծախսերը, ինչը նախատեսված էր բարեփոխումների ծրագրով, և դրա արդյունքը գնաճի լրացուցիչ աճն էր: Լիրայի նկատմամբ վստահությունը կորել էր, և հաշվարկների մեծ մասը կապված էր դոլարի հետ: 1980 թ. գնաճը զսպելու և ազգային արժույթի նկատմամբ վստահությունը վերականգնելու նպատակով իրականացվեց դրամական բարեփոխում: Ազգային արժույթի՝ լիրայի փոխարեն թողարկվեց իսրայելական շեքելը, փոխանակումը կատարվեց 1 շեքելը 10 լիրայի դիմաց փոխարժեքով:

1979 թ. առաջին անգամ գնաճը սկսեց արտահայտվել եռանիշ թվով՝ հասնելով 111%-ի, Էրլիխը ստիպված եղավ հրաժարական տալ, և նրա տեղում նշանակվեց Իգալ Հորովիցը՝ փորձելով վարել բյուջեի խստացված խնայողությունների քաղաքականություն՝ գնաճը զսպելու համար: Նրա գործողությունները չարժանացան կառավարության աջակցությանը, և նա 1981 թ. հրաժարական տվեց: Հորովիցին փոխարինեց Յորամ Արիդորը, որի քաղաքականությունն իր նախորդի հակառակն էր. ներկրվող ապրանքների հարկերը նվազեցվեցին, ավելացվեցին սոցիալական ծախսերը: Արդյունքները աղետալի էին: Փողի արժեզրկումը անցավ հիպերինֆլյացիայի փուլ՝ 1984-ին հասնելով 450%-ի, իսկ 1985-ի առաջին կեսին՝ 500%-ի:

1984 թ. սեպտեմբերին կառավարության ղեկավար դարձավ Շիմոն Պերեսը, ֆինանսների նախարար նշանակվեց Իցխակ Մոդային: 1985 թվականի ամռանն ընդունվեց և գործարկվեց տնտեսական կայունացման ծրագիր: Ծրագիրը հետապնդում էր երկու հիմնական նպատակ՝ բյուջեի դեֆիցիտի կրճատում և գնաճի դեմ պայքար: Ծրագրի հիմնական կետերն էին.

- բյուջեի ծախսերի արմատական նվազեցում, առաջին հերթին՝ բոլոր տեսակի սուբսիդիաների,
- ներքին պահանջարկը նվազեցնելու, իսրայելական արտադրանքի արտահանման մրցունակության բարձրացման և գործազրկության կրճատման նպատակով տնտեսությունում իրական աշխատավարձերի կրճատում,
- շեքելի էական արժեզրկում դոլարի նկատմամբ և կայուն փոխարժեքի մակարդակի հնարավորինս երկար պահպանում,
- սահմանափակ ժամանակով գների սառեցում:

---

[1] Фридман М., Правительства против свободного рынка // Время и мы : журнал. Нью-Йорк-Иерусалим-Париж, 1985, № 86, с. 126–130.

Բարեփոխումը նպաստեց գնաճի դադարեցմանը, ինչպես նաև ձեռք բերվեց փոխադարձ համաձայնություն գործարար միջավայրի և արհմիությունների միջև: Կառավարությունը ցանկանում էր պետական ծառայողների մի մասին հեռացնել աշխատանքից, սակայն արհմիությունները, իրենց հերթին, համաձայնեցին պետական հատվածի աշխատավարձերը զգալիորեն կրճատել և պահպանել բոլորի աշխատատեղերը: 1985 թ. վերջին պարզ դարձավ, որ ծրագիրը մեծամասամբ հասել է իր նպատակներին. տարեկան գնաճի մակարդակը նվազեց մինչև 20%, բյուջեի դեֆիցիտը զգալիորեն կրճատվեց: Այս ամենին նպաստեցին նաև արտաքին գործոնները՝ նավթի համաշխարհային գների էական անկումը և ԱՄՆ-ից 1,5 միլիարդ դոլար դրամաշնորհի ստացումը:

1986-ին ներդրվեց նոր դրամական միավոր՝ իսրայելական նոր շեքելը: Փոխանակումն իրականացվել է 1000:1-ի փոխարժեքով: Չնայած մի շարք ցուցանիշների զգալի բարելավմանը՝ ռազմավարական նպատակը չլուծվեց. տնտեսական աճը մնաց 1965-1967 թվականների ճգնաժամի մակարդակին[1]:

1990-ական թվականների սկզբին կտրուկ աճեց Իսրայել ներգաղթողների թիվը, հիմնականում՝ ՍՍՀՄ նախկին հանրապետություններից: Ընդհանուր առմամբ 1990-1996 թվականներին Իսրայել ժամանեցին ավելի քան 600 հազար մարդ: Կարճաժամկետ հեռանկարում ներգաղթի ալիքը առաջացրել էր բյուջետային ծախսերի կտրուկ աճ՝ նախնական փուլում նրանց ընդունման, տեղավորման և պաշտպանության համար: Այնուամենայնիվ, 90-ականների կեսերին ակնհայտ դարձավ, որ այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշխատաշուկայում մեծ թվով հմուտ աշխատողների հայտնվելը և ներքին պահանջարկի կտրուկ աճը, ունեցել են դրական ազդեցություն: Այս ժամանակահատվածում ՀՆԱ-ի աճը կազմեց 42%: Գնաճը շարունակեց անկում ապրել՝ մինչև 1996 թվականը հասնելով 9%-ի: Տարածաշրջանում իրավիճակի ժամանակավոր բարելավումը, որը կապված էր 1993 թվականին Նորվեգիայի հետ պայմանագրերի ստորագրման և 1994 թվականին Հորդանանի հետ կնքված խաղաղության պայմանագրի հետ, հանգեցրեց երկրի տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումների կտրուկ աճին[2]:

Սկսած 90-ականների կեսերից՝ իսրայելական տնտեսությունը ենթարկվել է էական կառուցվածքային փոփոխությունների՝ կապված բարձր տեխնոլոգիաների ներդրման և արդյունաբերության վերակենդանացման հետ: 1995 թվականից ի վեր արտադրության ծավալը «ավանդական» ոլորտներում էական փոփոխություններ չգրանցեց, իսկ բարձր տեխնոլոգիաների ոլորտում աճեց մոտ 72% -ով[3]:

---

[1] «Экономика Израиля: развитие, характеристики, политика». Гл. «Шоковая терапия-стабилизация и успех». Сборник сост. д-р Дан Гилади.

[2] Обзор экономики 1950–1998, Центральное статистическое бюро Израиля.

[3] Обзор Израиль-горизонты, население, экономика.

2000-ական թվականներից սկսած՝ երկրի տնտեսությունը սկսեց վերակենդանանալ՝ ապահովելով տարեկան 4% աճ՝ շնորհիվ կառավարության կողմից իրականացվող ֆիսկալ քաղաքականության և կառուցվածքային բարեփոխումների, որոնք ուղղված էին մրցակցության և ազատ շուկայի զարգացմանը: 2005 թվականից զբոսաշրջության ոլորտի վերականգնումը, օտարերկրյա ուղղակի ներդրումների ավելացումը, արտահանման ծավալների աճը ՀՆԱ-ի տարեկան աճը դարձրին 4,7%: Համաձայն վիճակագրության կենտրոնական բյուրոյի տվյալների՝ արդեն 2011-ի նոյեմբերին Իսրայելում գործազրկության մակարդակը կազմել է 5,4%[1]:

Այսօր Իսրայելը մի պետություն է, որը չունի սահմանադրություն. այն փոխարինվում է մի շարք օրենսդրական ակտերով: Պետության ղեկավարը նախագահն է, որի լիազորությունները սահմանափակված են: Ողջ իշխանությունն իրականացնում է կառավարությունը՝ վարչապետի գլխավորությամբ: Բարձրագույն օրենսդրական մարմինը միապալատ խորհրդարանն է (Քնեսեթ): Ընտրական իրավունքից օգտվում են 18 տարեկան դարձած քաղաքացիները: Դատական համակարգը կազմում են աշխարհիկ և հոգևոր դատարաններն ու Գերագույն դատարանը:

Իսրայելը ռազմականացված տնտեսությամբ ագրարային-արդյունաբերական երկիր է: Արդյունաբերությանը բնորոշ են տնայնագործական և արհեստագործական տիպի մանր ձեռնարկությունները: Միաժամանակ տեղի է ունենում արտադրության համակենտրոնացում: Ձեռնարկությունների մեծ մասը պատկանում է մասնավոր կապիտալին: 1967 թվականից արագ տեմպերով զարգանում է էլեկտրատեխնիկական, քիմիական, մեքենաշինական, ավիացիոն, կարի, ռետինի արդյունաբերությունը: Արդյունաբերությունն ու էներգետիկան զգալի չափով հիմնված են ներմուծվող հումքի վրա: Արդյունաբերական ձեռնարկությունների մոտ 60%-ը կենտրոնացած է Թել Ավիվում և Հայֆայում: 1974 թվականին արտադրվել է 9.156 միլիոն կվտ-ժ էլեկտրաէներգիա: Լեռնահանքային արդյունաբերությունը թույլ է զարգացած: Արդյունահանում են կալիումական և կերակրի աղ, բրոմ, քվարցային ավազներ, կավեր, ֆոսֆորիտներ, տորֆ, նավթ, երկաթի և պղնձի հանքանյութ և այլն: Թել Ավիվի և Դիմոնի մոտ գործում է 2 ատոմային ռեակտոր:

Իսրայելը, լինելով տարածքով փոքր և աշխարհագրական դիրքով ոչ բարենպաստ երկիր, կարողացել է հասնել էական զարգացման տարբեր ոլորտներում, ներառյալ գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսական մշակովի հողատարածությունների մեծ մասը սիոնիստական գաղութարարների և պետության սեփականությունն է: Հողօգտագործման հիմնական ձևը խմբակային վար-

[1] Уровень безработицы в Израиле в ноябре 2011 – 5,4 %. Архивная копия от 20 ноября 2012 на WaybackMachine

ձակալությունն է, կան նաև ֆերմերային տնտեսություններ: Հողային ֆոնդի (ներառյալ նաև զավթած շրջանները) միայն 21,2%-ն է մշակվում (1970-1971):

Իսրայելի գյուղատնտեսության առանձնակի կարևորություն ունեցող և զարգացման տեսանկյունից գերակայող ոլորտներն են ցիտրուսայինների, մրգերի, բամբակի, տավարի և թռչնամսի, կաթնամսային ուղղվածության արտադրությունը: Մշակում են նաև, ցորեն, գարի, սորգո, եգիպտացորեն, շաքարի ճակնդեղ, գետնընկույզ, վուշ, ծխախոտ, բանջարեղեն, կարտոֆիլ: Զբաղվում են նաև անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ և ձկնորսությամբ:

Իսրայելի գյուղատնտեսությունը համարվում է երկրի ազգային տնտեսության գերզարգացած ոլորտներից մեկը: Իսրայելը թարմ մթերքների, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնոլոգիաների համաշխարհային շուկայի առաջատար արտահանողներից է՝ չնայած այն հանգամանքին, որ Իսրայելի աշխարհագրական դիրքը գյուղատնտեսության վարման առումով հեռու է օպտիմալ համարվելուց: Երկրի տարածքի 1/2-ը անապատներ են, իսկ կլիման և ջրի պակասը, մեղմ ասած, չեն նպաստում գյուղատնտեսության զարգացմանը: Հողերի միայն մոտ 20%-ն է պիտանի գյուղատնտեսության վարման համար: Երկրում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքները կազմում են ՀՆԱ-ի 2,5%-ը և արտահանման կառուցվածքի 3,6%-ը: Երկրի աշխատուժի 3,7%-ը զբաղված է գյուղատնտեսությունում, ընդ որում՝ Իսրայելը 95%-ով բավարարում է սեփական պահանջմունքները՝ արտահանելով միայն հացահատիկ, յուղային մշակաբույսեր, միս, սուրճ, կակաո և շաքար: Երկրի գյուղատնտեսական ձեռնարկությունների մեծ մասը կառուցվել է դեռևս վաղ ժամանակներում՝ կոլեկտիվ սկզբունքների հիման վրա: Իսրայելը համաշխարհային առաջատարն է գյուղատնտեսական հետազոտությունների և տեխնոլոգիաների ոլորտում, ինչը մեծապես նպաստում է երկրի գյուղատնտեսական մշակաբույսերի քանակական ու որակական բարելավմանը: Երկրում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքների ավելցուկի խնդիրը գրեթե արմատախիլ է արվել, քանի որ տնտեսություններն ունեն պետության կողմից սահմանված արտադրության և ջրօգտագործման ծավալային սահմանափակումներ, այն է՝ քվոտաներ յուրաքանչյուր մշակաբույսի համար, ինչն իրապես օգնում է կայունացնել գյուղատնտեսական արտադրանքների գները: Գոյություն ունեն սահմանափակումներ կաթի, հավկիթի և կարտոֆիլի արտադրության հետ կապված:

Իսրայելի կառավարությունը խրախուսում է նաև գյուղատնտեսական արտադրության ծախսերի կրճատումը՝ խրախուսելով հատուկ տիպի գյուղատնտեսությամբ զբաղվելը և գյուղատնտեսական այնպիսի մշակաբույսերի արտադրությունների դադարեցումը, որոնք իրացման առումով չունեն բավարար շահույթ ապահովող շուկաներ: Իսրայելի գյուղատնտեսության նախարարությունը համակարգում է երկրի գյուղատնտեսությունը, այդ թվում՝ գյուղատնտեսության պլանավորումը, հետազոտությունները և մարքեթինգը:

Փոքր տարածք և սահմանափակ բնական ու ֆինանսական ռեսուրսներ ունեցող Իսրայելը, որը նաև շարունակական ռազմական հակամարտության մեջ է իր հարևանների մի մասի հետ, ստիպված է անընդհատ որոնել ոչ ստանդարտ՝ ստեղծագործական լուծումներ երկրի առաջընթացի ապահովման համար: Խոսքը հատկապես գիտության, մասնավորապես՝ բարձր տեխնոլոգիաների բնագավառում գրանցվող հաջողությունների մասին է: Ընդ որում՝ դրանք տեղ են գտնում ռազմական արդյունաբերությունից և համալսարանական ու այլ հետազոտական կենտրոններից դուրս: Այս առումով բնութագրական է, որ Իսրայելն աշխարհում ԱՄՆ-ից հետո գրավում է երկրորդ տեղը բարձր տեխնոլոգիաների բնագավառում ինովացիոն և շուկայական ուղղվածություն ունեցող ապրանք արտադրող նոր ընկերությունների ստեղծման ոլորտում[1]:

Վերջերս Start-up Nation Center-ը (իսրայելական նորարարությունների նախագիծ) 2018 թ. իսրայելական տեխնոլոգիական ստարտափերի և ոլորտում գլխավոր ներդրումների մասին զեկույց հրապարակեց:

Իսրայելական բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններն ավելի հանրաճանաչ են, քան ամերիկյան ընկերությունները. եթե առաջին չորս տարիներին ներդրումներն այստեղ աճել են 140 %-ով, ապա ԱՄՆ-ի տեխնոլոգիական ստարտափերում՝ ընդամենը 64%-ով: 2018-ին ներդրումները շարունակեցին աճել՝ այս անգամ նախորդ տարվա համեմատ 17%-ով: Ներդրումների քանակը հասել է 6 միլիարդ դոլարի: Ներդրումային փուլի միջին չափը 4 միլիոն դոլար է, ինչը 33 %-ով ավել է, քան 2017-ին: Առավել շատ առանձնացել էր Landa Digital Printing ընկերությունը, որը ծախսել էր 300 միլիոն դոլար: Նա մշակել է նանոգրաֆիական տեխնոլոգիա, որի միջոցով ցանկանում է հեղաշրջում կատարել տպագրության և փաթեթավորման շուկայում:

Իսկ ովքե՞ր են ներդրումներ կատարում իսրայելական ստարտափերի մեջ:

430 ներդրողներ անընդհատ գտնվում են Իսրայելում և ներդրումներ են կատարում տեղական ստարտափերի մեջ. նրանց 23%-ը իսրայելացիներ չեն: Ամենից շատ վաղ փուլում, բացառությամբ իսրայելացիների, ներդրումներ են կատարում ամերիկացի ներդրողները: Իսկ հետագա փուլերում նրանց հաջորդում են Մեծ Բրիտանիան, Գերմանիան և Չինաստանը: Հետագա փուլերում այդ երկրներին ավելանում են ճապոնացի ներդրողները (իսկ ահա գերմանացի ներդրողները այլևս այդքան էլ նկատելի չեն): Այդ փուլերում առավել ակտիվ մասնակիցներ են վենչուրային հիմնադրամներն ու հրեշտակները: 2018-ին իսրայելական ընկերություններում ներդրումներ կատարեցին ընդհանուր առումով 1500 ներդրողներ: Հետաքրքրաշարժ վիճակագրության տվյալները վերջին հինգ տարիների ներդրողների տեսակների վերաբերյալ[2].

---

[1] Саймон Грайвер, Грани израильской экономики. http://www.posolstvo.narod.ru/lib/ hitech.html

[2] https://vc.ru/finance/62274-v-2018-godu-v-izrailskie-startapy-vlozhili-6-mlrd-vse-chto-nuzhno-znat-ob-etoy ekosisteme



Գծապատկեր 1. *Մասնակցությունը ըստ գործարքների քանակի՝ ներդրողի տեսակի*

Ինչ վերաբերում է ձեռքբերումներին, ամերիկյան ընկերություններն ամենաակտիվն են իսրայելական ստարտափերի ձեռքբերման հարցում. նրանք 2018 թվականին կատարել են բոլոր գործարքների կեսը: Ամենամեծ գնումը կատարել է Salesforce ընկերությունը, որը 850 միլիոն դոլարով գնեց արհեստական բանականության և գովազդի ոլորտում ստարտափը: Ի դեպ, 2019 թվականին արդեն կա խոշորագույն միավորման հստակ հավակնորդ. այս տարվա մարտին Nvidia կորպորացիան 6,9 միլիարդ դոլարով «կլանել» է իսրայելական Mellanox ընկերությունը:

Ի՞նչ են մշակում (ստեղծում) ստարտափերը՝ ֆինանսական տեխնոլոգիաներ, տրանսպորտային և այլ տեխնոլոգիաներ:

Իսրայելացիները կենտրոնացած են բիզնեսի համար ապրանքների վրա, որը զարմանալի չէ՝ հաշվի առնելով տեղական փոքր շուկան: Ավելի քան 6.600

ակտիվ տեխնոլոգիական ընկերությունների 80%-ը առաջարկում է B2B ապրանքներ: Ստարտափերը նախընտրում են փոքր քանակությամբ օտարերկրյա ընկերություններին վաճառել տեխնոլոգիաներ, քան փորձել իրենց տեղը գրավել երկրի ներսում կամ նվաճել արտերկրի օգտատերերին:

2018 թ. ներդրված գումարների քանակով գլխավոր 5 ոլորտները.

1. կիբերանվտանգություն՝ 1,19 միլիարդ դոլար: Հետաքրքրական է, որ այս ոլորտում ընկերությունները զբաղեցնում են ամբողջ էկոհամակարգի ընդամենը 7%-ը, բայց հավաքում են առավելագույն գումարներ,
2. առողջապահություն՝ 900 միլիոն դոլար, նախորդ տարվա համեմատ պակասել է: Թվային բժշկության ոլորտում ներդրումները շարունակել են աճել, սակայն դեղագործական և բժշկական սարքավորումների սահմանաչափը անկում է ապրել,
3. ֆինանսական ծառայություններ՝ 832 միլիոն դոլար. այս ոլորտը գրանցել է ռեկորդային աճ՝ գրեթե երկու անգամ ավելի, քան նախորդ տարի,
4. տրանսպորտ՝ 753 միլիոն դոլար, որը 2017-ի արդյունքից կրկնակի ավելի է: Բոլորից առաջ Gett-ն է՝ 80 միլիոն դոլար արժողությամբ,
5. գյուղատնտեսություն և սնունդ (ագրոտեխնոլոգիա և սննդի տեխնոլոգիա)՝ 196 միլիոն դոլար: Գյուղատնտեսական տեխնոլոգիաների մեջ ներդրողների շրջանում ամենատարածվածը «խելացի գյուղացիական տնտեսության» և ագրոբիոտեխնոլոգիայի տեխնոլոգիաներն էին: Իսկ սննդի տեխնոլոգիաներում նրանց հետաքրքրում էին ստարտափերը մատակարարման, լոգիստիկայի և փաթեթավորման ոլորտում:

Ի՞նչ տեխնոլոգիաներ են զարգացնում իսրայելցիները:

Բոլոր ոլորտներում առաջատար տեխնոլոգիան դարձել է արհեստական բանականությունը, որը օգտագործվում է բոլոր նորարարական ստարտափերի 17%-ի կողմից: Իսրայելական մշակողների շրջանում այլ հանրաճանաչ տեխնոլոգիաներն են իրերի համացանցը և բլոքչեյնը: Հենց արհեստական բանականությունն է ընկած Datorama ընկերության տեխնոլոգիայի հիմքում, որը գնել է Salesforce-ը: Տեղական էկոհամակարգի մեջ են մտնում նաև համաշխարհային ընկերություններ՝ Intel-ը և Nvidia-ն, որոնք որոշել են Իսրայելում արհեստական բանականության ոլորտում բացել իրենց հետազոտական կենտրոնները: Երկրում առկա 320 միջազգային ընկերություններից 300-ը Իսրայելում ծրագրեր են մշակում: Google-ն արդեն թողարկել է իր արտադրանքը՝ Google Duplex ծրագիրը, որը մշակվել է Իսրայելի զարգացման կենտրոնում. այն ձայնային օգնականին թույլ է տալիս պատվերներ կատարել հեռախոսով: Եզրափակելով այս ամենը՝ աղյուսակի միջոցով ներկայացնենք ներդրումների վիճակը ըստ ոլորտների և տեխնոլոգիայի:

Աղյուսակ 1

***Ակնառու ուղղահայաց տեխնոլոգիաների համադրությունների ընդհանուր ֆինանսավորումը** 2018 **թ.** (**մլն դոլար**)*

Ուղղահայց/ տեխնոլոգիա	Արհեստա-կան բանա-կանություն	Իրերի համա-ցանց (IoT) և սենսորներ	Տեղադրու-թյան վրա հիմնված	Ռոբոտա-շինություն	Լոգիստիկա և մատակարար-ման ցանց	Տեսա-նյութ (Video)	Բլոք-չեյն	Վիրտուալ իրա-կանություն և համալրված իրականություն (VR&AR)
Գովազդ	107					20		6
Գյուղատնտե-սություն և սնունդ	44	19		21	22			
Հավելված(App) և ծրագրային ապա-հովման մշակում	31		4					
Կիբերանվտան-գություն	357	238		6	5		44	
Պաշտպանություն և անվտանգություն	87	104	32		10	15		
Էլեկտրոնային առևտուր	210	2	51	20	20		4	6
Ձեռնարկություն-ների լուծարումներ	543	105	15	33	30	2	9	1
Ֆինանսական ծառայություններ	386	70	14				44	
Առողջապահություն	500	131	8	10				21
Արտադրություն	165	238	18	82	30			
Մանրածախ առևտուր	149	19	16		2		3	1
Խելացի քաղաքներ	195	80	169	20	20	16		1
Խելացի տներ	74	55	8	23				32
Խելացի շարժունակություն	214	24	145			1		
Սոցիալական լրատվամիջոց	392	15	142			1	2	3
Սպորտային տեխնոլոգիա	31	5				33		3
Հեռահաղորդակ-ցություն	81	72	2	10		46		3

Եզրակացություններ

Իսրայելը մի երկիր է, որի վերաբերյալ բազում հարցեր են ծագում: Այս պետությունը հակասություն է: Դատենք ինքներս. այն տարածքը, որի վրա ստեղծվեց անկախ Իսրայելը, անապատ էր, արևից այրված իսկական անապատ: Թվում էր, թե տարածաշրջանում ամեն ինչ դեմ էր այս երկրի գոյությանը, նույնիսկ բնությունը: Բայց աշխարհի քարտեզի վրա 71 տարի անց մենք տեսնում ենք բարեկեցիկ պետություն, որտեղ բնակչության կենսամակարդակը գերազանցում է շատ խաղաղ երկրների կենսամակարդակին: Իսրայելի անկախության հռչակումից ի վեր սկսվեց լայնածավալ պատերազմ հրեա ժողովրդի և արաբների միջև: Ժամանակ առ ժամանակ այն դադարում է, որից հետո գնալով ավելի մեծ թափ է ստանում: Մեկ այլ պարադոքս է նաև այն, որ մշտական պատերազմի վիճակում գտնվող Իսրայելի քաղաքացիական բնակչությունն իրեն մեծամասամբ ապահով է զգում:

Standard & Poor's միջազգային վարկանիշային գործակալությունը հրապարակել է կանխատեսում, որում նշվում է, որ մինչև 2021 թվականը Իսրայելի տնտեսությունը կաճի միջինը տարեկան ավելի քան 3%-ով: Որպես այս աճի հիմնական գործոններ տնտեսագետները նշում են անձնական սպառումը, համաշխարհային կորպորացիաների կողմից ներդրումներ կատարելը և ծառայությունների արտահանման աճը:

Իսկ ինչո՞վ է ընդհանրապես ապրում Իսրայելը:

1. Երկիրը բաժանված է տնտեսական գոտիների: Թել Ավիվը արդյունաբերության, առևտրի և ֆինանսների կենտրոն է: Հայֆան Իսրայելի գլխավոր նավահանգիստն է: Այստեղ կենտրոնացած է ծանր արդյունաբերությունը, զբաղվում են նավարկությամբ և ձկնորսությամբ: Երուսաղեմը կենտրոն է զբոսաշրջիկների և ուխտավորների համար ամբողջ աշխարհից, իսկ երկրի հարավում և արևմուտքում զարգանում է գյուղատնտեսությունը: Անցած մի քանի տասնամյակների ընթացքում կարելի է դիտարկել, թե ինչպես է Իսրայելը հասնում աշխարհի ամենաբարձր մակարդակներից մեկին՝ բժշկական էլեկտրոնիկայի, գյուղատնտեսական տեխնոլոգիաների, բարձր տեխնոլոգիաների և ադամանդագործության ոլորտներում: Այս երկրում մշակվում է ցանկացած չափի և ձևի ադամանդների 40%-ը: Գիտական հետազոտության և զարգացման ոլորտում Իսրայելը գտնվում է աշխարհի երկրների լավագույն տասնյակում: Այս ոլորտի արտադրանքի շուրջ 80%-ը արտահանվում է:
2. Հարկերը Իսրայելի գանձարանի եկամտի մեծ մասն են: Եվ դրանք այստեղ բավականին բարձր են: Եկամուտների ավելացումով ավելանում է եկամտահարկի տոկոսը, և այստեղ այն գանձվում է 16 տարեկանից սկսած՝ այն ամենից, ինչ անձը վաստակել, արտադրել կամ ստացել է պետության տարածքում: Հատկանշական է, որ իսրայելացիները գերադասում են այս հարցում չկատակել պետության հետ, քանի որ Իսրայելում հարկերից խուսափելու համար պատիժը չափազանց մեծ է: Օրինակ՝ հարկային հաշվետվությունը խախտելու համար այնտեղ կստանաք տուգանք՝ 1 միլիոն շեքել: Եվ եթե պարզվի, որ անձը մի քանի տարի հարկեր չի վճարել, ապա միանգամայն հնարավոր է, որ նա հայտնվի ճաղերի հետևում:
3. Եթե քննենք այս երկրի բնակչության կազմը, կարող ենք հասկանալ նրա զարգացման ֆենոմեններից մեկը. դա հայրենադարձներն են: 1990-ականներին՝ այսպես կոչված երկաթյա վարագույրի անկումից հետո, ավելի քան մեկ միլիոն մարդ Խորհրդային Միությունից եկավ Սուրբ երկիր: Նրանք որակավորված գիտնականներ, ճարտարագետներ, տեխնիկներ և բժիշկներ էին, որոնք Իսրայելի արդյունաբերությունը բարձրացրին այսօրվա մակարդակին:
4. Արժի առանձնացնել նաև Իսրայելի բժշկությունը: Ամեն տարի կառավարությունը ՀՆԱ-ի ընդհանուր մասնաբաժնի ավելի քան 8%-ը հատկացնում է առողջապահության ոլորտին: Այստեղ նույնպես իսրայելացիները գործեցին

ծայրաստիճան զգուշորեն: Դատենք ինքներս. այս երկիրը զուրկ է բնական ռեսուրսներից՝ ի տարբերություն տարածաշրջանի իր ամենամոտ հարևանների, նրանք ապրում են պատերազմական իրավիճակում, հետևաբար պետության համար կարևոր էր յուրաքանչյուր քաղաքացու կյանքը: Ահա թե ինչու նրանք, հանգամանքներից ստիպված, ձեռնամուխ եղան բժշկության ոլորտի զարգացմանը: Սա հաստատված տեսություն չէ, բայց շատ տրամաբանական է: Ամբողջ աշխարհից մարդիկ Իսրայել են գալիս այնպիսի հիվանդություններով, ինչպիսիք են՝ անպտղությունը, բարդ կոտրվածքները և վնասվածքները, սրտանոթային համակարգի, մաշկի հիվանդությունները, լեյկոզը, ասթման և, իհարկե, ուռուցքները: Անգամ կա առանձին ոլորտ, որը զբաղվում է դրանով՝ բժշկական տուրիզմ: Տարօրինակ է թվում, բայց այս երկրի համար դա ամենօրյա կյանքն է, որը հսկայական գումարներ է բերում պետական բյուջե, քանի որ Իսրայելում բուժումը շատ թանկ է, և ոչ բոլորն են կարող դա թույլ տալ իրենց:

5. Իսրայելի ուժեղ կողմերից մեկը նրա բանակն է: Ցախալը կամ Իսրայելի պաշտպանական ուժերը համարվում են աշխարհում ուժեղագույններից մեկը: Այստեղ բոլորը զորակոչվում են զինվորական ծառայության: Կարծում ենք, լսել եք, որ նույնիսկ կանայք են ծառայում Իսրայելում: Ծառայում են նաև երկքաղաքացիություն ունեցողները, և եթե մտածում եք վերադարձողների մասին, ապա այս երկրում մի քանի անձնագրերով ոչ ոքի չեք զարմացնի: Երբ մարդը դառնում է 18 տարեկան, նա գնում է բանակ: Տղամարդիկ՝ երեք տարի, իսկ կանայք՝ երկու: Եվ ամենահետաքրքիրն այն է, որ նրանք կամավոր են գնում այնտեղ: Բանակից խուսափելու գաղափարը այստեղ պարզապես գոյություն չունի: Իրենք՝ իսրայելացիներն ասում են. «Մեր բանակը շքերթների համար չէ, այլ պատերազմի»: Այդ իսկ պատճառով նրանք ժամանակ չեն ծախսում մարտական պատրաստության վրա: Եվ շարահրապարակում ժամերով քայլելու փոխարեն՝ զինվորները սովորում են զենքի տիրապետման տեխնիկան: Իսրայելական բանակում ծառայության մեկ այլ առավելություն էլ այն է, որ բանակ զորակոչված զինծառայողները ամեն ամիս ստանում են աշխատավարձ: Զորակոչիկներն իրենք են որոշում, թե որ զորամասում են ծառայելու: Նրանք ունեն կանոնավոր հանգստյան օրեր, որոնց ընթացքում տուն են գնում: Ի տարբերություն ԱՊՀ երկրների՝ իսրայելական բանակում դուք չեք գտնի 50 տարեկանից բարձր գեներալի: Սպայական կազմը անընդհատ թարմացվում է: Յուրաքանչյուր հինգ տարին մեկ սպայի հետ նոր պայմանագիր է ստորագրվում: Այս ձևով երիտասարդներին շահագրգռում են՝ շարունակելու զինվորական ծառայությունը:
6. Իսրայելի՝ կառավարական կազմակերպությունների մակարդակով միջազգային գիտական կապերի զարգացման պատասխանատվությունը դրված է Գիտական հետազոտությունների և զարգացման ազգային խորհրդի, ինչպես նաև արտաքին գործերի նախարարության մշակութային և գիտական

կապերի բաժնի վրա: Դեռևս 1972 թ. նշյալ Ազգային խորհուրդն առաջ քաշեց «Իսրակոն» ծրագիրը՝ ուղղված բնական և հասարակական գիտությունների և տեխնոլոգիաների բնագավառներում իսրայելական և արտասահմանյան առաջատար մասնագետների միջև գիտական տեղեկատվության կանոնավոր փոխանակման և քննարկումներին նպաստելու խնդրով իսրայելական գիտահետազոտական կոնֆերանսների կազմակերպման օժանդակությանը: Իսրայելական գիտությունների ակադեմիան ներկայացնում է Իսրայելը Գիտական միությունների միջազգային խորհրդում, Եվրոպական գիտական հիմնադրամում, անմիջական կապեր է պահպանում արտասահմանյան ազգային գիտական կազմակերպությունների հետ, մասնակցում է արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին և օժանդակում նման կոնֆերանսների հրավիրմանը Իսրայելում: Արտաքին գործերի նախարարության միջազգային կոոպերացիայի բաժինը զբաղվում է նաև Իսրայելի գյուղատնտեսության, բժշկության, առողջապահության, կրթության ոլորտի ձեռքբերումներով հետաքրքրված զարգացող երկրների մասնագետների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպման հարցերով:

Թեպետ Իսրայելի տարածքի կեսից ավելին զբաղեցված է անապատով, այնուամենայնիվ՝

- Իսրայելը կարողանում է ապահովել իր երկրի պարենային պահանջարկի 95%-ը:
- Իսրայելն առաջինն է եղել կաթիլային ոռոգման համակարգերի զարգացման և ներդրման առումով: Ներկայում Իսրայելը, որի տարածքի մեծ մասը կիսաանապատ է, արդյունավետ ոռոգման համակարգերի միջոցով ոչ միայն բավարարում է գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ սեփական պահանջարկը, այլև աշխարհում ցիտրուսայինների, բանջարեղենի և բոստանային մշակաբույսերի արտահանման շուկաներում առաջատարներից մեկն է:
- Իսրայելում կյանքի մակարդակը ամենաբարձրն է Մերձավոր Արևելքում: Այդ երկրում յուրաքանչյուր բնակչին հասանելիք ՀՆԱ-ն ավելի բարձր է, քան Մեծ Բրիտանիայում:

Իսրայելում ամեն ինչ օգտագործվում է խնայողաբար: Այստեղ քաղցրահամ լճին վերաբերվում են առանձնահատուկ կերպով: Եթե լճի մակերեսն իջնում է, ապա այդ օրը ԶԼՄ- ները դա հայտարարում են ամբողջ երկրով մեկ, և բոլորը փակ են պահում ծորակները՝ ջուր խնայելու համար: Այստեղ հաշվված է հողի ամեն մի կտորը, ջրի ամեն կաթիլ նախատեսված է բույսերի համար և անիմաստ չի ծախսվում, փորձ է արվում ամեն կերպ օգտագործել արևային էներգիան: Իսրայելացիները կարողացել են այդ անապատում երեք անգամ բանջարեղենի ցանքս կատարել, և դա այն դեպքում, երբ ամեն մի թփի համար ջրի կաթիլը հաշվված է: Այստեղ կովերն անգամ ավելի շատ կաթ են տալիս, քան եվրոպականները:

Իսրայելի գյուղատնտեսության ոլորտի հաջողության գաղտնիքն այն է, որ խորհրդատվական ծառայությունները, գյուղատնտեսության նախարարությունը, հետազոտական կենտրոնները և գյուղատնտեսական ապրանք արտադրողները համատեղ են աշխատում:

Խորհրդատվական ծառայության աշխատակիցները պարզապես չեն գնում գյուղեր և գյուղատնտեսական ապրանք արտադրողներին խորհրդատվություն տրամադրում: Նրանք մասնակցում են հետազոտական նախագծերին: Խորհրդատվական ծառայության աշխատակիցները ֆերմերների հետ միասին իրականացնում են փոքր հետազոտական ծրագրեր, որտեղից ստացված գիտելիքը հետագայում կիրառում են ավելի մեծ նախագծերում, ուստի զարգացմանն ուղղված ցանկացած գործունեության մեջ մասնակիցների միջև տեղեկատվության հոսքը շարունակական բնույթ է կրում:

Այսպիսով՝ այս ամբողջ շղթայում սերտորեն փոխկապակցված են դառնում գյուղատնտեսության նախարարության աշխատակիցները, հետազոտողները, խորհրդատվական ծառայություն մատուցողները և ֆերմերները: Լինում են նաև դեպքեր, երբ ֆերմերները մեկնում են արտասահման՝ ականատես լինելով հետաքրքիր նորարարությունների, և վերադառնալուն պես դրա մասին հայտնում են խորհրդատվական ծառայությանը: Այնուհետև նրանք միասին սկսում են մտածել, թե ինչպես կարելի է օրինական դաշտում կյանքի կոչել այդ գաղափարը: Ցուցադրական ֆերմայում գաղափարը ներմուծելուց հետո այն ամբողջությամբ իրականացնելու և հետագայում ամբողջ երկրով մեկ ֆերմերներին ներկայացնելու համար պահանջվում է 4-6, երբեմն նույնիսկ 10-12 տարի, ուստի տեղեկատվության հոսքը և գործընթացին բոլոր անդամների մասնակցությունը հսկա դեր են խաղում հաջողության հասնելու գործում:

Երկրում որդեգրված սկզբունքի համաձայն՝ հաջողության հասնելու առաջին նախապայմանը մարդկային ռեսուրսն է: Հողատարածքներն ու ջրային ռեսուրսները ոչինչ չարժեն, եթե չկան դրանց վրա ճիշտ աշխատող մարդիկ: Շատ կարևոր է աշխատել մի համակարգում, որն ապահովում է խորքային գիտելիքներ: Այս դեպքում գյուղատնտեսական արտադրության մեջ ներգրավված բոլոր տնտեսությունները, բոլոր պաշտոնյաները, հետազոտողները, խորհրդատվական համակարգում աշխատող անձինք գտնվում են սովորելու շարունակական գործընթացում, ինչի շնորհիվ ոլորտն անընդմեջ զարգանում է:

Իսրայելում ձևավորվել է ուժեղ տնտեսություն, որը կարելի է համեմատել այնպիսի երկրների տնտեսությունների հետ, ինչպիսին է Շվեդիան կամ Նիդեռլանդները: Տնտեսական առումով սա Մերձավոր Արևելքը չէ: Ըստ Bloomberg-ի՝ նորարարական տնտեսություններ ունեցող երկրների ցուցակում Իսրայելն առաջին տասնյակում է: Այնուամենայնիվ Իսրայելում, ի տարբերություն եվրոպական երկրների, սոցիալական անհավասարության մակարդակը շատ ավելի բարձր է:

Իսրայելը մոտ է լրիվ զբաղվածությանը: Բայց սա արդյունք է ցածր մասնագիտական որակավորում ունեցող, ցածր վարձատրվող աշխատուժի զանգվածի

առկայության, որը պարադոքսալ կերպով զուգորդվում է արտոնյալ ոլորտներում տեխնոլոգիայի զարգացման բարձր մակարդակի հետ: Պարզապես շատ իսրայելացի աշխատողներ համաձայն են ցանկացած աշխատանքի: Ավելին, ինչպես բոլոր զարգացած երկրներում, տնտեսության որոշակի հատվածը աշխատանքային միգրանտների աշխատանքի շահագործումն է:

Նշենք, որ իսրայելական տնտեսության դինամիկ զարգացման ևս մեկ հիմնական գործոն էր 20-րդ դարի վերջին տասնամյակում նախկին ՍՍՀՄ-ից երկիր մուտք գործած բարձր հմտություններ ունեցող ներգաղթյալների մեծ ներհոսքը: 1989-ից 2001 թվականների ընթացքում երկիրը համալրվեց հետխորհրդային տարածքից ավելի քան մեկ միլիոն նոր քաղաքացիներով, որոնցից շատերը բարձրակարգ գիտնականներ և ճարտարագետներ էին: Եվ ամենակարևորը՝ հրեա ժողովուրդը մի ընդհանուր բան ունի, ինչը նրանց օգնել է գոյատևել նույնիսկ ամենաբարդ ժամանակներում. դա նրանց միասնականությունն է:

Կատարված ուսումնասիրությունները հիմք են հանդիսանում եզրակացնելու, որ Իսրայելն ու Հայաստանն, ունեն մի շարք ընդհանրություններ, և եթե Իսրայելն այսպիսի կարճ ժամանակահատվածում կարողացել է հասնել նման հաջողությունների, ապա Հայաստանը՝ Իսրայելի տնտեսական որոշ մոտեցումներ կիրառելով, նույնպես կարող է հասնել տնտեսական հրաշքի:

Օգտագործված գրականության ցանկ

1. Гилади Д., Становление финансово-экономической системы // рук. Б. Нойбергер, научн. ред. И. Бен-Ами. Общество, экономика и культура Израиля. Первое десятилетие: Сборник. – Открытый университет Израиля, 2003, т. 3, с. 10-118. – ISBN 965-06-0653-X.
2. Обзор экономики 1950–1998, Центральное статистическое бюро Израиля.
3. Саймон Грайвер. Грани израильской экономики. http://www.posolstvo.narod.ru/lib/ hitech.html
4. «Создание государства и первые годы». Сборник сост. д-р Абигаль Орен, Хая Регев. Тель-Авивский университет, 1995.
5. «Создание государства и первые годы. Германские репарации». Сборник сост. д-р Абигаль Орен, Хая Регев. Тель-Авивский университет 1995.
6. Уровень безработицы в Израиле в ноябре 2011 – 5,4 %. Архивная копия от 20 ноября 2012 на WaybackMachine
7. Федорченко А. В., Экономика Израиля, Москва, 2004, 160 с.
8. Фридман М., Правительства против свободного рынка // Время и мы: журнал. Нью-Йорк-Иерусалим-Париж, 1985, № 86, с. 126–130.
9. «Экономика Израиля: развитие, характеристики, политика». Сборник сост. д-р Дан Гилади.
10. «Экономика Израиля: развитие. характеристики. политика», гл. «Второй кризис» Сборник. сост. д-р Дан Гилади.
11. «Экономика Израиля: развитие, характеристики, политика», гл. Шоковая

терапия-стабилизация и успех». Сборник сост. д-р Дан Гилади.
12. Start-up Nation: The Story of Israel's Economic Miracle, Dan Senor, Saul Singer, Grand Central Publishing, 2009, 320 p.
13. http://henaran.am/140902.html, 92-ամյա նախկին նախագահի խոսքերը ցնցել են ողջ աշխարհը:
14. https://hy.wikipedia.org/wiki/Իսրայել
15. https://data.worldbank.org/
16. https://en.wikipedia.org/wiki/Israel
17. https://mnews.world/ru/video/fenomen-izrailya-v-chem-sekret-uspeha-evrejskogo-gosudarstva/
18. https://www.doingbusiness.org/
19. https://cms-internationsgmbh.netdna-ssl.com/
20. https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2019.pdf
21. http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf
22. https://en.wikipedia.org/wiki/Standard_of_living_in_Israel
23. https://tradingeconomics.com/israel/government-debt-to-gdp
24. https://www.statista.com/statistics/455846/urbanization-in-israel/
25. https://vc.ru/finance/62274-v-2018-godu-v-izrailskie-startapy-vlozhili-6-mlrd-vse-chto-nuzhno-znat-ob-etoy ekosisteme
26. http://countrystudies.us/israel/16.htm

References

1. Giladi D., Stanovlenie finansovo-jekonomicheskoj sistemy // ruk. B. Nojber-ger, nauchn. red. I. Ben-Ami. Obshhestvo, jekonomika i kul'tura Izrailja. Pervoe desjatiletie: Sbornik. – Otkrytyj universitet Izrailja, 2003, t. 3, s. 10-118. – ISBN 965-06-0653-X.
2. Obzor jekonomiki 1950–1998, Central'noe statisticheskoe bjuro Izrailja.
3. Sajmon Grajver. Grani izrail'skoj jekonomiki. http://www.posolstvo.narod.ru/lib/hitech.html
4. «Sozdanie gosudarstva i pervye gody». Sbornik sost. d-r Abigal' Oren, Haja Regev. Tel'-Avivskij universitet, 1995.
5. «Sozdanie gosudarstva i pervye gody. Germanskie reparacii». Sbornik sost. d-r Abigal' Oren, Haja Regev. Tel'-Avivskij universitet 1995.
6. Uroven' bezraboticy v Izraile v nojabre 2011 – 5,4 %. Arhivnaja kopija ot 20 nojabrja 2012 na WaybackMachine
7. Fedorchenko A. V., Jekonomika Izrailja, Moskva, 2004, 160 s.
8. Fridman M., Pravitel'stva protiv svobodnogo rynka // Vremja i my: zhurnal. N'ju-Jork-Ierusalim-Parizh, 1985, # 86, s. 126–130.
9. «Jekonomika Izrailja: razvitie, harakteristiki, politika». Sbornik sost. d-r Dan Giladi.
10. «Jekonomika Izrailja: razvitie. harakteristiki. politika», gl. «Vtoroj krizis» Sbornik. sost. d-r Dan Giladi.

11. «Jekonomika Izrailja: razvitie, harakteristiki, politika», gl. Shokovaja terapija-stabilizacija i uspeh». Sbornik sost. d-r Dan Giladi.Start-up Nation: The Story of Israel's Economic Miracle, Dan Senor, Saul Singer, Grand Central Publishing, 2009, 320 p.
12. http://henaran.am/140902.html, 92-amya naxkin naxagahi xosqery' cncel en oghj ashxarhy':
13. https://hy.wikipedia.org/wiki/Israyel
14. https://data.worldbank.org/
15. https://en.wikipedia.org/wiki/Israel
16. https://mnews.world/ru/video/fenomen-izrailya-v-chem-sekret-uspeha-evrejskogo-gosudarstva/
17. https://www.doingbusiness.org/
18. https://cms-internationsgmbh.netdna-ssl.com/
19. https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2019.pdf
20. http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf
21. https://en.wikipedia.org/wiki/Standard_of_living_in_Israel
22. https://tradingeconomics.com/israel/government-debt-to-gdp
23. https://www.statista.com/statistics/455846/urbanization-in-israel/
24. https://vc.ru/finance/62274-v-2018-godu-v-izrailskie-startapy-vlozhili-6-mlrd-vse-chto-nuzhno-znat-ob-etoy ekosisteme
25. http://countrystudies.us/israel/16.htm

Մերի Մանուչարյան
Մերի Մուրադյան

ԻՍՐԱՅԵԼԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԻ» ՀԵՏԱԳԻԾԸ

Համառոտագիր: Հոդվածում ներկայացվել է Իսրայելի Պետության ստեղծման պատմությունը, առանձնահատկությունները, հիմնական տնտեսական ցուցանիշները: Հոդվածի նպատակն է վերլուծել Իսրայելի տնտեսական վիճակը պետության ստեղծման օրվանից՝ 1948 թվականի մայիսի 14-ից մինչև այժմ: Իսրայելը, լինելով տարածքով փոքր և աշխարհագրական դիրքով ոչ բարենպաստ երկիր, կարողացել է հասնել էական զարգացման տարբեր ոլորտներում, հատկապես բարձր տեխնոլոգիաների ոլորտում, որոնք կազմում են Իսրայելի ՀՆԱ-ի 11%-ը և ընդհանուր արտահանման ավելի քան 50%-ը: Հոդվածում գծապատկերի տեսքով ներկայացվել են նաև վերջին հինգ տարիների ներդրողները, ինչպես նաև 2018 թ. ֆինանսավորումը:

Բանալի բառեր. բարձր տեխնոլոգիաներ, ՀՆԱ, տնտեսական աճ, ստարտափ, հայրենադարձություն, գյուղատնտեսություն, գործազրկություն, գնաճ, նորարարություն

Мери Манучарян
Мери Мурадян

ТРАЕКТОРИЯ «ЭКОНОМИЧЕСКОГО ЧУДА» ИЗРАИЛЯ

Аннотация: В статье представлены история создания, особенности и основные экономические показатели Израиля. Целью данной статьи является анализ экономического состояния Израиля со дня его создания, с 14 мая 1948 года до наших дней. Израиль, будучи страной с небольшой территорией и находящейся в неблагоприятном географическом расположении, смог добиться значительного развития в различных областях, особенно в области высоких технологий, на которые приходится 11% ВВП и более 50% общего экспорта Израиля. В статье в виде графика также представлены инвесторы за последние пяти лет и финансирование за 2018 год.

Ключевые слова: высокие технологии, ВВП, экономический рост, стартап, репатриация, сельское хозяйство, безработица, инфляция, инновации

Mery Manucharyan
Mery Muradyan

TRAJECTORY OF THE "ECONOMIC MIRACLE" OF ISRAEL

Abstract: The article presents the history of the creation, peculiarities and main economic indicators of Israel. The purpose of this article is to analyze the economic status of Israel from the day of its creation on 14 May 1948 to nowadays. Israel, being a small and geographically unfavorable located country, managed to achieve significant development in a variety of areas, particularly in the area of high technology, which accounts for 11% of GDP and more than 50% of total exports of Israel. In the article, in the form of a diagram are also presented the investors of the last five years and financing for 2018.

Keywords: high technologies, GDP, economic growth, start-ups, repatriation, agriculture, unemployment, inflation, innovation

Եվգենյա Հակոբյան
Լիանա Ազատյան

ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Ներածություն

Ամեն մի երկիր բարեփոխումները սկսում է տարբեր մակարդակից, ունի տարբեր ավանդույթներ և խոչընդոտող հանգամանքներ: Ցանկացած երկրում բարեփոխումների իրականացման ժամանակ հաշվի են առնվում նաև տվյալ երկրի առանձնահատկությունները, ինչու չէ, նաև ազգային մտածելակերպը: Սակայն այդ տարբերությունները չեն փոխում դրանց իրականացմանն ուղղված քաղաքականության բուն էությունը, այլ ուղղակի թելադրում են քաղաքականության վարման մեթոդները: Ամբողջ աշխարհում մարդկանց ցանկությունները գրեթե նույնն են: Նրանք ուզում են ապրել այնպիսի երկրում, որտեղ պաշտպանված կլինեն, աշխատանք կունենան, կհարգվի իրենց մասնավոր սեփականությունը և այլն:

Նոր Զելանդիան կղզի-պետություն է Խաղաղ օվկիանոսի հարավ-արևմուտքում: Աշխարհագրորեն երկիրը զբաղեցնում է երկու հիմնական հողատարածք՝ Հյուսիսային կղզին և Հարավային կղզին, և մոտ 600 փոքր կղզիներ: Նոր Զելանդիայի մայրաքաղաքը Վելինգտոնն է, սակայն ամենաբնակեցված քաղաքն Օքլենդն է:

Նոր Զելանդիայի 4.5 մլն[1] բնակչության մեծամասնությունը եվրոպական ծագում ունի, բնիկ մաորիներն ամենամեծ փոքրամասնությունն են, որոնց հաջորդում են ասիացիները և Խաղաղ օվկիանոսի կղզեբնակները: Նոր Զելանդիայի մշակույթը հիմնականում ձևավորել են մաորի և վաղ շրջանի բրիտանացի տեղաբնակները: Պաշտոնական լեզուն անգլերենն է:

Պետության ղեկավարը Նոր Զելանդիայի միապետն է (1952 թվականի փետրվարի 6-ից՝ Եղիսաբեթ II թագուհին): Միապետի կարգավիճակը սահմանված է «Թագավորում է, բայց չի կառավարում» սահմանադրական սկզբունքով, և միապետը չունի նշանակալի քաղաքական ազդեցություն՝ պահպանելով հանդիսավոր ու խորհրդանշական դերը: Այնուամենայիվ, մի շարք գործառույթներ օրենսդրությամբ վերապահված են միապետին, ինչպես, օրինակ, երկրի խորհրդարանի հրավիրման կամ ցրելու մասին լիազորությունը: Նոր Զելանդիան զարգացած երկիր է՝ շուկայական տնտեսական համակարգով, որի հիմքը կազմում են գյուղատնտեսությունը, մշակող ու սննդի արդյունաբերությունը և զբոսաշրջությունը: Երկրի տնտեսությունն ունի արտահանման ուղղվածություն: Հիմնական առևտրային գործընկերներն են Ավստրալիան, ԱՄՆ-ն, Ճապոնիան, Չինաստանը:

Նոր Զելանդիան ընդգրկված է աշխարհի ամենազարգացած երկրների շարքում, մշտապես զբաղեցնում է առաջատար հորիզոնականներ կյանքի որակի

[1] https://data.oecd.org/new-zealand.htm

և տնտեսական ու սոցիալական զարգացման համաշխարհային վարկանշային աղյուսակներում:

Նոր Զելանդիայի տնտեսությունը 1980 թվականից սկսել է վերելք ապրել (գծապատկեր 1): Այդ մասին են վկայում գծապատկերում ներկայացված ցուցանիշները, որոնցից պարզ երևում է, որ մեկ շնչին ընկող ՀՆԱ–ն 1980 թվականին 1975–ի համեմատ աճել է 3.296 դոլարով: Իսկ հաջորդող տարիների ընթացքում այս ցուցանիշի աճը ավելի նկատելի էր, մասնավորապես՝ 2005 թվականին 2000 թվականի համեմատ 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ–ն աճել է 14.110 դոլարով: Իսկ հաջորդ տարիներին այս ցուցանիշի գծով աճը կրում էր կանոնավոր բնույթ:



Գծապատկեր 1. *1975-2018 թթ. Նոր Զելանդիայում 1 շնչին ընկող ՀՆԱ-ն և ցուցանիշ*[1]

Հիմնական վերլուծություն

1984 թվականին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրների մեջ Նոր Զելանդիան համարվում էր «վատ տնտեսությամբ» երկիր[2]: Մինչև 1984 թվականը ինչպես արտադրության աճի մակարդակը, այնպես էլ արտահանման ծավալները այստեղ ամենացածրն էին: Դրան զուգահեռ գրանցվել էին ինչպես պետական, այնպես էլ արտաքին պարտքի, բյուջեի դեֆիցիտի ամենաբարձր ցուցանիշները: Մինչ այդ Նոր Զելանդիան Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրների մեջ կենսամակարդակի ցուցանիշով զբաղեցնում էր 5-րդ

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից Համաշխարհային բանկի տվյալների հիման վրա, https://data.worldbank.org/

[2] Bryce Wilkinson, New Zeeland's Fiscal reforms 1984-1996, November, 2017.

տեղը, սակայն 1984 թվականին արդեն հայտնվել էր 25–րդ տեղում[1]: Այդ նույն ժամանակահատվածում բավականին աճել էր գործազրկության մակարդակը՝ 7.2 տոկոս[2]: Դրա հիմնական պատճառները կրում էին մակրոտնտեսական բնույթ:

Միջազգային մակարդակով Նոր Զելանդիայի մրցունակությունը սահմանափակվում էր քիչ քանակությամբ արտադրանքով, որի գերակշիռ մասը արտահանման մեծածախ ապրանքներն էին: Այդ ժամանակ Նոր Զելանդիայում տնտեսության խեղաթյուրման հիմնական պատճառը պետական անարդյունավետ միջամտական քաղաքականությունն էր. Պետությունն էր որոշում տարբեր մասնագիտություններով աշխատավարձի վճարման և աշխատանքի պայմանները: Պետությունն էր որոշում ամբողջ երկրում տվյալ մասնագիտությամբ աշխատողների նվազագույն աշխատավարձը: Այդ հարաբերությունների շրջանակներում գործատուները և աշխատողները չէին կարողանում կարգավորել աշխատանքային փոխհարաբերությունները, որոնք դուրս էին պետական սահմանափակումներից: Այդ տարիներին Նոր Զելանդիայի տնտեսությունը բավականին մեկուսացած էր: Շատ բարձր դրույքաչափերին զուգահեռ ներդրվել էր արդյունաբերական ապրանքների ներմուծման լիցենզավորված համակարգ, որը նպատակ ուներ ստեղծել Նոր Զելանդիայի մեկուսացված և պաշտպանված արդյունաբերական ոլորտ: Նման քաղաքականությունը երաշխավորված ներքին շուկայի պայմաններում Նոր Զելանդիայի արտադրողներին ուղղորդում էր կենտրոնանալ ներքին շուկայի վրա և խուսափել ռիսկերից: Իսկ այն արտադրողները, որոնք փորձում էին դուրս գալ արտաքին շուկա, բախվում էին ներքին բավականին բարձր ծախսերի՝ պայմանավորված արտահանման բարձր սակագներով և ազգային տնտեսության՝ պետական կոշտ կարգավորման խոչընդոտներով: Հետպատերազմյան տարիներին սահմանափակվել էին նաև հետազոտական աշխատանքների ծավալները, վատ վիճակում էին հիմնական ֆոնդերը, ինչպես նաև ոչ ճկուն էին գործատու–աշխատող հարաբերությունները[3]:

Այդ տարիներին Նոր Զելանդիան միջնակարգ կրթությունում ներդրումների մակարդակով բավականին հետ էր մնում՝ երիտասարդների շրջանում ձևավորելով այն մտածելակերպը, որ մասնագիտության ստացումը չի երաշխավորում հետագայում բարձր վարձատրություն: Ավելի շատ էին որակավորում չպահանջող աշխատատեղերը: Բարձր եկամուտների հարկման աճող դրույքաչափերը, ինչպես նաև ընդհանուր հարկային բեռը, որի ծանրությունն ընկնում էր ուղղակի, այլ ոչ թե անուղղակի հարկերի վրա, է՛լ ավելի բացասաբար էին ազդում կրթությունում ներդրումների խթանման վրա: Այդ նույն ժամանակահատվածում կառավարությունը հաճախ բախվում էր բյուջետային դեֆիցիտի խնդրին, որն արդեն կազմում էր ՀՆԱ–ի շուրջ 9 տոկոսը[4]: Գանձվող հարկերը չէին ծածկում պետական ծախսերը, ինչն էլ, բնականաբար, անդրադառնում էր բյուջեի կա-

[1] http://www.oecdbetterlifeindex.org/ru/countries/new-zealand-ru/

[2] https://knoema.com/atlas/New-Zealand/Unemployment-rate

[3] Bryce Wilkinson, New Zeeland's Fiscal reforms 1984-1996, November, 2017, p.4.

[4] The 1984 budget, Reserve Bank of New Zeeland, Vol. 47, No. 11, December, 1984, p. 597.

տարման վրա: Կապված աճող ինֆլյացիայի հետ՝ կառավարությունը հանդես եկավ աշխատավարձերի և գների ընդհանուր սառեցման մասին հայտարարությամբ: 1984 թվականին կայացած արտահերթ ընտրությունները ամբողջովին դատարկեցին Նոր Զելանդիայի արտարժույթի պահուստները: Այդ ժամանակ ընտրություններում հաղթած ընդդիմադիր լեյբորիստական կուսակցությունը ժառանգեց արժութային ճգնաժամ և անարդյունավետ աշխատող տնտեսական համակարգ:

Տեղի ունեցող զարգացումները նպաստեցին հեղափոխության գործընթացի: Երկրում կատարվող տնտեսական բարեփոխումները սկիզբ առան 1984 թվականին, ընդգրկեցին գյուղատնտեսության ոլորտը, ֆինանսական հատվածը, պետական կառուցվածքը, և գրեթե տասը տարիների ընթացքում երկրի տնտեսությունը ձևափոխվեց:

Բարեփոխումներն իրականացվեցին երկու կառավարությունների օրոք. 1984 թվականին ընտրություններում հաղթանակած ընդդիմադիր Լեյբորիստական կուսակցությունը երեք տարի հետո նորից վերընտրվեց, իսկ 1990 թվականին ընտրություններում հաղթեց Ազգային կուսակցությունը (Նոր Զելանդիայի «կոնսերվատիվ» կուսակցություն): Չնայած դրանց տարբեր քաղաքական գաղափարախոսություններին՝ հաջողության գաղտնիքը կայանում էր նրանում, որ նրանց տնտեսական ծրագրերը գրեթե չէին տարբերվում միմյանցից[1]:

1984 թվականին Նոր Զելանդիայում իրականացվեց բարեփոխումների գործընթաց, որի հեղափոխական շարժիչ ուժերը ներառում էին՝

- հարկային քաղաքականության՝ որպես կարճաժամկետ խնդիրների լուծման միջոցից հրաժարում և միջնաժամկետ հարկային ռազմավարության ընդունում, որը նպատակաուղղված էր կառավարական ծախսերի վերահսկողությանն ու դեֆիցիտի վերացմանը,
- դրամավարկային քաղաքականության շեշտադրում գների կայունության հաստատմանն ու պահպանմանը,
- պետական հատվածում բյուրոկրատական ռեժիմից հրաժարում հօգուտ ժամանակակից մոտեցման, որը ենթադրում էր կառավարման որակի բարձրացում:

Բարեփոխումների հիմքում ընկած էր այն մոտեցումը, որ Նոր Զելանդիայի ռեսուրսներն օգտագործվում էին ոչ արդյունավետ, և միջազգային մրցակցությունում շուկայական մեխանիզմների գործարկման ճանապարհով կարելի էր ապահովել տնտեսական զարգացում: Այսպիսով՝ ազատ շուկան դիտարկվում էր որպես միջնաժամկետում տնտեսական աճի շարժիչ ուժ: Բացի այդ, մակրոտնտեսական քաղաքականությունում երկարաժամկետ նպատակների բացակայությունը զգալի վնաս էր հասցնում տնտեսությանը: Անհրաժեշտ էր դրամավարկային և հարկային քաղաքականությունները կանոնակարգել այնպես, որ վերջիններս համապատասխանեին տնտեսական կայուն աճի միջնաժամկետ նպատակներին:

---

[1] Стефанчук Л. Г., История Новой Зеландии, XX век, 2015, стр. 42-46.

Ընդհանուր առմամբ, Նոր Զելանդիայում տնտեսության ազատականացման գործընթացի առաջին երեք տարին՝ 1984-1987 թթ[1]., բնութագրվեց բարեփոխումների՝ արագ տեմպերով իրականացված հաջողված արդյունքներով: Կառավարությունը դադարեցրեց բանկային տոկոսադրույքների, փոխարժեքի նկատմամբ վերահսկողությունը, որդեգրվեց նորզելանդական դոլարի լողացող կուրսի քաղաքականությունը, ինչը բացատրվում էր նրանով, որ վերջինս կառավարությանը թույլ էր տալիս ավելի արդյունավետ վերահսկել դրամական զանգվածը և նպաստում էր ռեսուրսների բաշխման արդյունավետության բարձրացմանը:

Անհրաժեշտ ենք համարում առանձնացնել կառավարության կողմից իրականացված բարեփոխումների հիմնական ուղղությունները՝

1. հարկային բարեփոխումներ,
2. դրամավարկային քաղաքականություն,
3. գյուղատնտեսության ոլորտ,
4. հակակոռուպցիոն քաղաքականություն:

Հարկային բարեփոխումներ

Բավականին հաջող են ընթացել հարկային բարեփոխումները: 1984 թվականին ժառանգած հարկային կառուցվածքը առավել շատ կենտրոնացած էր ուղղակի, այլ ոչ թե անուղղակի հարկերի վրա: Նոր կառավարությունը ներդրեց ավելացված արժեքի հարկի համահարթեցված դրույքաչափ գրեթե բոլոր ապրանքների և ծառայությունների համար: Ապրանքների և ծառայությունների հարկը (GST) փոխարինեց տարբեր ապրանքների վաճառքի համար տարբեր դրույքաչափերով գոյություն ունեցող հարկին, իսկ եկամտահարկի սահմանային դրույքաչափերը զգալիորեն նվազեցին: GST հարկի ներդրումն ապացուցեց, որ այն կարող է հանդիսանալ հարկային բարեփոխումների մոդել: Հարկման բազայի ընդլայնման և հարկային օրենսգրքում բացերի նվազեցման նպատակով կատարվեցին նաև այլ հարկային բարեփոխումներ:

Կառավարությունն ընդունեց հարկային պատասխանատվության մասին օրենքը, որում զետեղված էին հարկային հաշվետվությունների ներկայացման լայն և խիստ չափանիշներ: Նոր Զելանդիան աշխարհում առաջին երկիրն էր, որտեղ կառավարությունը մշակում էր եկամուտների և ծախսերի վրա հիմնված ամբողջական հաշվեկշռային և գործառնական հաշվետվություններ: Օրենքը պարտադրում էր, որ կառավարությունը համապետական ընտրություններից առաջ հրապարակեր տնտեսական և հարկային ամբողջական ցուցանիշները՝ նպատակ հետապնդելով կանխարգելելու անպատասխանատու հարկային քաղաքականության վարումը: Հետագայում օրենքում կատարվեցին լրացումներ, ըստ որոնց՝ պետությունը պարտավոր էր վարել հարկային քաղաքականություն «հարկային պատասխանատու կառավարման» մի շարք մոտեցումներին համա-

[1] Lewis Evans, Arthur Grimes, Bryce Wilkinson and David Teece, Economic Reform in New Zealand 1984-95: The Pursuit of Efficiency, Journal of Economic Literature, Vol. 34, No. 4 (Dec., 1996), pp. 1856-1902.

պատասխան: Օրենքը պարտադրում էր կառավարությանը հրապարակավ բացատրել այս կամ այն սկզբունքից շեղման ցանկացած դրսևորում՝ նպատակ ունենալով թափանցիկ դարձնել այս ոլորտում կառավարության քաղաքականությունը: Այս ամենի արդյունքում էլ այժմ Նոր Զելանդիան աշխարհում ունի ամենաամբողջական և բաց հարկային պետական հաշվետվողականությունը:

Այսպիսով՝ հարկային պատասխանատվության մասին օրենքը դարձավ Նոր Զելանդիայի կառավարության վրա կարգապահական ազդեցության հզոր գործիք: Այն ավարտին հասցրեց բարեփոխումների շրջանակը, որոնք տասնամյակներ շարունակ փոփոխում էին Նոր Զելանդիայի պետական հատվածի իրավական հիմքերը:

Ավելի մեծ դժվարություն էր ժառանգած հարկային դեֆիցիտի հարցի կարգավորումը: Կառավարության կողմից ձեռնարկված նախնական քայլերը, որոնք ուղղված էին արդյունաբերությանն ու գյուղատնտեսության ոլորտին օգնությունների ծավալների կրճատմանը, հանգեցրին զգալի տնտեսման: Հարկային բնույթի այլ տնտեսում ավելի բարդ էր իրականացնել: Այդուամենայնիվ, չնայած վերոնշյալ բարեփուխումներին՝ հեղափոխության առաջին տարիներին (1984-1987 թթ.) դեֆիցիտը դեռևս շարունակվում էր մնալ բարձր մակարդակի վրա. 1984 թվականին այն կազմում էր ՀՆԱ–ի 9 տոկոսը, իսկ 1985 թվականին՝ 7.2 տոկոսը[1]:

Աշխատավարձերի կտրուկ բարձրացումը GST միաժամանակյա ներդրման հետ մեկտեղ հանգեցրեց սղաճի բարձր տեմպերի: Հակասղաճային միջոցառումներն ուղեկցվեցին համեմատաբար ազատ հարկային և զսպող դրամավարկային քաղաքականությամբ: Արժույթի իրական գործակցի բարձրացմանը նպաստեց ներմուծման պրոտեկցիոնիստական տուրքերի նվազման դանդաղ տեմպը: Միևնույն ժամանակաշրջանում նվազման նման դանդաղ տեմպեր արձանագրվեցին նաև արտահանմանն ուղղված սուբսիդիաների ծավալներում:

Կառավարությանը հաջող գործունեություն իրականացնելու համար նախ անհրաժեշտ էր ձեռք բերել վստահություն այն բանի հանդեպ, թե նա արդյո՞ք հավատարիմ է սկզբունքների կայուն շարքին, արդյո՞ք վարում է այնպիսի քաղաքականություն, որի ուղղությունը չի հակասում այդ սկզբունքներին, արդյո՞ք քաղաքականությունն իրականացվելու է այնպես, որ պահպանվեն և ամրապնդվեն շուկայական տնտեսության ավանդույթները, կարո՞ղ են արդյոք մասնավոր հատվածի դերակատարները որոշումներ կայացնել և համոզվել, որ կառավարությունը գործում է կանխատեսելիորեն գործածված պայմաններում և այլն. «Հարկային պատասխանատվության մասին» օրենքը մեծացրեց վստահությունը կառավարության նկատմամբ:

Դրամավարկային քաղաքականություն

1989 թվականին Նոր Զելանդիայի կառավարությունը խորհրդարանի միջոցով ընդունեց Պահուստային բանկի (ներկայիս Կենտրոնական բանկի) մասին

[1] The 1984 budget, Reserve Bank of New Zeeland, Vol. 47, No. 11, December, 1984, p. 597.

օրենքը, որը փոխեց դրամավարկային քաղաքականություն իրականացնող ինստիտուտների բնույթը: Այս օրենքի ընդունումը միտված էր կարճաժամկետ նպատակների հասնելուն ուղղված դրամավարկային քաղաքականության կիրառման հնարավորությունների կրճատմանը: Օրենքում նշվում էր, որ միջնաժամկետում ինֆլյացիան հանդիսանալու է միակ տնտեսական փոփոխությունը, որը կարելի էր վերահսկել դրամավարկային քաղաքականության միջոցով: Համապատասխանաբար, գների կայունությունը դիտվում էր որպես Պահուստային բանկի առաջնահերթություն: Իր դրամավարկային քաղաքականության հանդեպ վստահության ամրապնդման նպատակով կառավարությունը հայտարարեց, որ 1992 թվականին ինֆլյացիայի մակարդակը կհասնի 0-2 տոկոսի[1]: Միաժամանակ բանկը խորհրդարանի առջև հաշվետու էր դրված նպատակին հասնելու մասով կատարված աշխատանքի համար: Այսպիսով՝ այս օրենքը իրենից ներկայացնում էր հզոր մեխանիզմ, որն ամրապնդում էր դրամավարկային քաղաքականության հանդեպ եղած վստահությունը:

Դրամավարկային քաղաքականությունն ուղղվեց գների կայունությանը, իսկ հարկային քաղաքականությունը՝ պարտքի կրճատմանն ու հավասարակշռված բյուջեների կատարմանը: Բարեփոխումները նպաստեցին հարստության ստեղծման գործում շուկայական ուժերի դերի կտրուկ բարձրացմանը և միաժամանակ առողջ մակրոտնտեսական հիմք դրեցին այն բանին, որ դրամավարկային և հարկային ցավալի կարգավորումները սկսեցին չնվազեցնել նոր միկրոտնտեսական կլիմայի առավելությունները: Հարկային պատասխանատվության մասին օրենքը ներառում էր պրոտեկցիոնիզմի մակարդակի նվազեցման միջոցով «բաց տնտեսության» քաղաքականության վարում, բարեփոխումների արդյունքում ինչպես ապրանքների, այնպես էլ արտադրական գործոնների շուկաներում ներքին կարգավորումը բացառվեց, աշխատաշուկան ազատականացավ, պետական կառավարման ոլորտում լայնամասշտաբ բարեփոխումներ իրականացվեցին, դրամավարկային և հարկային քաղաքականությունների նպատակաուղղվածությունները վերափոխվեցին:

Լեյբորիստական կառավարության իշխանավարման երկրորդ շրջանում՝ (1990-1993 թթ.), ընդհանուր առմամբ, բարեփոխումների տեմպը դանդաղեց, շարունակվեց «ներմուծումը փոխարինող» քաղաքականության գիծը, իսկ աշխատանքի շուկայում նկատվեց գործազրկության կտրուկ աճ. 1988 թվականին գործազրկությունը կազմում էր 5.8 տոկոս, իսկ 1991 թ. այն աճեց՝ հասնելով մինչև 10.6 տոկոսի[2]:

Իսկ բարեփոխումների վերջին փուլը (1993-1996 թթ.) իրականացվեց Ազգային կուսակցության կողմից: Այն ամփոփեց բարեփոխումների մեջ եղած անհավասարակշռությունը, և Նոր Զելանդիան թևակոխեց կայուն տնտեսական աճի փուլ: Հատկանշական է, որ բարեփոխումների ամենակարևոր նախաձեռնու-

---

[1] Рут Ричардсон, экс-министр финансов Новой Зеландии, доклад, За экономическую свободу: Чему мы научились. Опыт Новой Зеландии, Москва, 2004.

[2] https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS?locations=NZ

թյուններից էր նաև զբաղվածության մասին օրենքի ընդունումը (1991 թվականին), համաձայն որի՝ երկրում վերացվեց ըստ մասնագիտության որոշվող նվազագույն աշխատավարձի հնացած համակարգը: Այս բարեփոխման արդյունքում Նոր Զելանդիան, որը մինչ այդ համարվում էր ոչ ճկուն աշխատաշուկա ունեցող երկրներից մեկը, ՏՀԶԿ երկրների մեջ դարձավ ամենաազատ և առաձգական աշխատաշուկա ունեցող երկիրը: Կառավարությունն արմատական բարեփոխումներ սկսեց նաև պետական ծախսերի կրճատման ուղղությամբ: Սոցիալական նպաստները կրճատվեցին, որոշ դեպքերում չեղարկվեցին և սկսեցին կրել ավելի նպատակային բնույթ:

Գյուղատնտեսության ոլորտ

1984 թվականից ի վեր գյուղատնտեսության սուբսիդավորման ծրագիրը, որպես տնտեսության ընդհանուր համակարգային բարեփոխման բաղադրիչներից մեկը, չեղարկվեց: Նոր Զելանդիան ՏՀԶԿ-ի այն եզակի երկրներից մեկն էր, որը հրաժարվեց գյուղատնտեսական արտադրողների սուբսիդավորումներից, վարչական գների կարգավորումից և ձեռնարկեց եզակի գյուղատնտեսական բարեփոխում, որի նպատակն էր ստեղծել ազատ շուկայի մեխանիզմներ[1]: Մասնավորապես՝ հողօգտագործողներին պետական օգնության կրճատումը տեղի ունեցավ նույն արագությամբ և ինտենսիվությամբ, ինչ մյուս ոլորտների համար: Նման մոտեցումը ուղղակի նախազգուշացում էր գյուղատնտեսական լոբբիստներին առ այն, որ նպատակն է վերացնել սուբսիդիաները արտադրության տարբեր գործոնների ձեռքբերման համար, ինչը փաստացի խտրականություն է առաջացնում տնտեսության այլ ոլորտների և առանձին տնտեսական դերակատարների նկատմամբ:

Չեղյալ համարվեց գյուղացիներին արտոնյալ վարկերի տրամադրումը Rural Bank-ի միջոցով: Մինչև 1984 թվականը գյուղատնտեսական վարկերի մեծ մասը հատկացվում էր 4 լիազոր բանկերի միջոցով: Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական վարկերի տոկոսադրույքները համապատասխանեցվեցին շուկայականին: 1986-87 թվականներին վերացվեց գյուղատնտեսությանը ֆինանսավորելու պետական վարկերի հաշիվը: Նոր փոխառությունն իրականացվեց շուկայի սկզբունքներով: Վերացվեցին պարարտանյութերի առաքման բոլոր տրանսպորտային, ինչպես նաև չեղարկվեցին պարարտանյութերի գնային բոլոր սուբսիդիաները[2]:

1984 թվականից ի վեր ֆերմերները ստիպված էին ուղղակիորեն մշակել իրենց մարտավարությունն ու վարքի ռազմավարությունը շուկայական պայմաններում՝ առանց վարչական ապահովագրության[3]: Նախկինում պետական

---

[1] http://liberty-belarus.info/uroki-mirovoj-ekonomiki/aziya/item/475-reforma-selskogo-khozyajstva-v-novoj-zelandii

[2] Նույն տեղում:

[3] Э. Холдейн, Сельское хозяйство Новой Зеландии: аграрный феномен и особые права фермеров, 04.10.2017.

գործակալությունները, ինչպիսիք են Կաթնամթերքի խորհուրդը (միս և այլն), կլանում էին ռիսկերի զգալի մասը, ուստի ֆերմերները սովորել էին, թե ինչպես աշխատեն շուկայական ռիսկերի համակարգում: Անհրաժեշտ էր վերանայել նրանց պահվածքը՝ ֆինանսական և եղանակային ռիսկերի հետ կապված, ստեղծել ռիսկերի կառավարման նոր համակարգ[1]:

Նոր Զելանդիայի գյուղատնտեսական բարեփոխումների փորձը օգնում է մեզ պատասխանել հարցին. «Կա՞ օժանդակ գյուղատնտեսության այլընտրանք, եթե այո, ապա ինչպե՞ս իրականացնել այն»: Նոր Զելանդիան ցույց տվեց, թե ինչպես կարելի է կարգավորել գյուղատնտեսությունը՝ որպես համակարգային ընդհանուր բարեփոխումների մաս: Կարճաժամկետ կտրվածքով, գյուղատնտեսական արտադրական սուբյեկտների համար հարմարվողականության խնդիրների առկայության պայմաններում, բարեփոխումը ցույց տվեց, որ գյուղատնտեսական ոլորտը արագորեն հարմարվում է նոր ռեժիմին (առանց սուբսիդիաների, ազատ գնագոյացման) և պահպանում շահութաբերության բավականին բարձր մակարդակ: Բարեփոխումների արդյունքում բարելավվեց գյուղատնտեսության ոլորտում արտադրողականությունը, և կայուն տնտեսական աճ գրանցվեց ամբողջ տնտեսության մեջ, ցույց տրվեց, որ գյուղատնտեսական շուկաները ինքնակարգավորվում են, և որ ֆերմերները միակը չեն, ովքեր կրում են բարեփոխումների ծախսերը[2]: Հողային շուկան հարմարվում է սպասվող եկամուտին, և այդ ակնկալիքների հիման վրա ձևավորվում է հողի գինը:

Ֆերմերների բարեկեցության մակարդակը (չափվում է իրենց եկամուտներով) զգալիորեն ընկավ բարեփոխումների սկսվելուց հետո, բայց 7 տարվա ընթացքում անհրաժեշտ հարմարեցում տեղի ունեցավ ձեռնարկության ձևի, արտադրության եղանակի, ֆինանսավորման և արտադրված մշակաբույսերի ճիշտ ընտրության արդյունքում: Կատարված բոլոր բարեփոխումները տվեցին իրենց արդյունքները, որոնք նկատելի են նաև այսօր: Երկրի գրեթե բոլոր գյուղերն ունեն անասնաբուժական ծառայություններ, ինչը սահմանվում է օրենսդրական մակարդակում: Կղզում մտցվել է խիստ սահմանային հսկողություն, որի արդյունքում կովերի հիվանդությունների բռնկումներ չեն գրանցվել: Երկրում գործում են կենդանիների վաճառքի բազմաթիվ մասնագիտացված կենտրոններ, որոնցից շատերը բրոքերների մասնակցությամբ ամեն շաբաթ իրականացնում են ոչխարների և խոշոր եղջերավոր անասունների վաճառք, ինչը օգնում է պահպանել շուկայի ճկունությունը ամբողջ տարվա ընթացքում: Կենդանիներ տեղափոխումը, որով զբաղվում են անկախ ձեռնարկությունները, ցանկացած պահի ֆերմերներին հասանելի է՝ տրանսպորտային ընկերությունների միջև բարձր մրցակցության շնորհիվ: Այս բոլոր հատկանիշները թույլ տվեցին Նոր Զելանդիայի գյուղատնտեսությանը հասնել զարգացման բարձր մակար-

---

[1] Ярослав Романчук, Реформа сельского хозяйства в Новой Зеландии, научно-исслвдовательский центр Мизеса, 05 апреля 2006.

[2] http://liberty-belarus.info/uroki-mirovoj-ekonomiki/aziya/item/475-reforma-selskogo-khozyajstva-v-novoj-zelandii

դակի: Կատարվող բարեփոխումների արդյունքում երկրում ձևավորվեց գյուղատնտեսական հատուկ մեխանիզմ, որը շատ առումներով զգալիորեն տարբերվում է զարգացած մյուս երկրներում ընդունված համակարգերից և որոշում է այս պետության ագրոարդյունաբերական համալիրի հաջող հաստատումը:

Հատկանշական է այն փաստը, որ Նոր Զելանդիայում սկսեց կիրառվել բնական աղետների հետևանքով ֆինանսական կորուստ կրած գյուղացիական տնտեսություններին աջակցելու մեխանիզմ: Գյուղատնտեսությանը տրամադրվող օգնությունը սկսեց կրել այլ բնույթ: Պետությունը սկսեց աջակցություն տրամադրել գյուղատնտեսության ոլորտում գիտական հետազոտությունների անցկացմանը, ենթակառուցվածքների կատարելագործմանը և տնտեսությունների զարգացմանը: Չնայած թվարկված բոլոր առավելություններին՝ Նոր Զելանդիայի ագրարային ոլորտն ունի նաև իր թույլ կողմերը: Դրանցից մեկը վաճառքների շուկաներից զգալի հեռավորությունն է, որն իր ազդեցությունն է ունենում ապրանքների ինքնարժեքի վրա: Այսօր, ընդհանուր առմամբ, ներդրումների պակաս կա արտաքին շուկաներում Նոր Զելանդիայի արտադրության մասնաճյուղերի ստեղծման համար: Սակայն որակյալ արտադրանքի հանդեպ պահանջարկը միշտ էլ կա:

Մեր հանրապետության ներկայիս կառավարության ծրագրում առաջնահերթությունների մեջ նշված է, որ կառավարության գյուղատնտեսական քաղաքականության առանցքը լինելու է գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը, արդի տեխնոլոգիաների ներմուծումը և կիրառումը, արտահանման ծավալների ավելացումը, գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված բոլոր սուբյեկտների՝ փոքր տնային տնտեսությունների, գյուղացիական կոոպերատիվների, վերամշակողների և արտահանողների եկամտաբերության բարձրացումը[1]: Հարկ է նշել, որ մեր երկրում տրամադրվող գյուղատնտեսական վարկերը մասամբ օգտագործվում են ոչ նպատակային, և չկա պատշաճ վերահսկողություն այդ միջոցների օգտագործման նկատմամբ, որի հետևանքով խախտվում է դրանց նպատակային օգտագործումը: Ուստի, կարծում ենք, այստեղ ևս տեղին է Նոր Զելանդիայի փորձից օրինակ վերցնելը, ըստ որի՝ իրականացնել գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող սուբսիդիաների բնույթի փոփոխություն, մասնավորապես՝

- նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ նոր գաղափարների ֆինանսավորում,
- գյուղատնտեսության ոլորտի գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորում, որոնց կատարման արդյունքում վերահսկելի կլինի դրանց ուղղված դրամական միջոցների նպատակային օգտագործումը, և արդյունքները ավելի տեսանելի կլինեն,
- ենթակառուցվածքների կատարելագործմանն ուղղված միջոցառումների իրականացման ֆինանսավորում, մասնավորապես՝ ֆինանսական աջակ-

[1] ՀՀ կառավարության ծրագիր, 8 փետրվարի 2019 թ., N 65 – Ա:

ցություն ցուցաբերել սպանդանոցների կառուցմանը և կենդանիների տեղափոխում իրականացնող ձեռնարկություններին,

- տնտեսության զարգացմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորում,
- անասնաբուժական ծառայություններ մատուցող կազմակերպություններին ֆինանսական աջակցություն տրամադրել, որպեսզի բոլոր գյուղական համայնքներում մատուցվի նման ծառայություն, ինչը զգալիորեն կնվազեցնի կենդանիների հիվանդությունների բռնկումները և մասսայական անկումները:

Հաջորդ կարևոր ձեռքբերումը, որին հասավ Նոր Զելանդիան, այն էր, որ այստեղ ամենադյուրին պայմանները ստեղծվեցին նոր բիզնես սկսելու համար: Որպես արդյունք, Համաշխարհային բանկի «Բիզնես 2019» հաշվետվությունում առավել կարգավորվող տնտեսությամբ երկրների ցանկում Նոր Զելանդիան զբաղեցրել է առաջին տեղը[1]: Այստեղ փոքր ձեռնարկություն գրանցելը տևում է ընդամենը 15 րոպե. ի դեպ, այն արվում է էլեկտրոնային եղանակով, համացանցի միջոցով, այնուհետև գրանցվում է նաև հարկային ծառայությունում, ինչը նույնպես կարելի է իրականացնել հեռախոսի կամ համացանցի միջոցով: Նշենք, որ Հայաստանում ևս վերջին տարիներին բավական ակտիվորեն կատարվում է անցում «մեկ պատուհան» սկզբունքին: Կառավարությունը պետք է հետևողական լինի արհեստական բարդությունների և խոչընդոտների բացառման շարունակականությունն ապահովելու հարցում:

Հակակոռուպցիոն քաղաքականություն

Աշխարհում չկա կոռուպցիայի զրոյական մակարդակով պետություն: Սակայն կան երկրներ, որտեղ կոռուպցիան գտնվում է ցածր մակարդակի վրա: Այդպիսիներից է Նոր Զելանդիան: Ամեն տարի գերմանական հակակոռուպցիոն հետազոտական կենտրոնը՝ Transparency Internationalը, հրապարակում է կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ): Վերջինիս տվյալները հիմնված են աշխարհի 180 երկրներում և տարածքներում անցկացված 13 ուսումնասիրությունների և փորձագիտական գնահատումների վրա, որոնք չափում են հանրային ոլորտում կոռուպցիան՝ տալով յուրաքանչյուր երկրին ԿԸՀ արժեք 0-ից (բացարձակապես կոռումպացված) մինչև 100 (բացարձակապես մաքուր) սանդղակի վրա[2]: Հատկանշական է այն փաստը, որ Դանիան և Նոր Զելանդիան հանդիսանում են աշխարհում ամենաքիչ կոռումպացված երկրները, որոնց ԿԸՀ համապատասխանաբար կազմում է 88 և 87 միավոր՝ առաջ անցնելով այնպիսի երկրներից, ինչպիսիք են Ֆինլանդիան, Սինգապուրը, Շվեդիան, Շվեյցարիան: Հայաստանի Հանրապետությունը 2019 թվականին բավականին բարելավել է իր դիրքերը՝ 2018 թվականի 105-րդ տեղից՝ ԿԸՀ 35 միավորով, հասնելով 77-րդ տեղին՝ ԿԸՀ 42 միավորով[3]:

---

[1] https://tradingeconomics.com/new-zealand/ease-of-doing-business

[2] https://transparency.am/hy/cpi/2019

[3] https://transparency.am/storage/CPI2019_table_am.pdf?v=2

Transparency International-ն օգտագործում է համաշխարհային բանկի, համաշխարհային տնտեսական ֆորումի և այլ միջազգային կազմակերպությունների տվյալները: Հետազոտության վերջնական արդյունքների ներկայացման չափանիշների շարքում են լրատվամիջոցների ազատությունը, տեղեկատվության հասանելիությունը, մարդու իրավունքների պաշտպանվածությունը և կոռուպցիայի բացակայությունը: Այսօր Նոր Զելանդիայում գործում են մի շարք հաստատություններ, որոնք կենտրոնացած են կոռուպցիայի դեմ պայքարի տարբեր տարրերի վրա, սակայն հակակոռուպցիոն գործունեության պատասխանատու են համարվում երկու հիմնական մարմիններ՝ Նոր Զելանդիայի ոստիկանությունը և լուրջ խարդախությունների դեմ պայքարող կազմակերպությունը՝ SFO (The Serious Fraud Office): Վերջինս հիմնականում մասնագիտացված է ինչպես խոշոր, այնպես էլ «բարդ» խարդախությունների վրա, որոնք իրենցից կարող են ներկայացնել մի շարք խարդախություններ պարունակող շղթա, զգալի վնաս են պատճառում և կարող են ազդել Նոր Զելանդիայի հեղինակության վրա: SFO տնօրենի լիազորությունների շրջանակն ավելի մեծ է ոստիկանության լիազորություններից: SFO-ն կիրառում է կորպորատիվ միջավայրում ակտիվ մոնիթորինգի, հետաքննության և հետապնդման միջոցառումների համալիր, որոնք ապահովում են ներդրողների և հասարակության վստահությունն առ այն, որ խարդախության դեպքերը աննկատ և անպատիժ չեն մնում: Փաստենք, որ Նոր Զելանդիայի համար երկրի հեղինակությունն ու վարկանիշը վեր է ամեն ինչից:

Նոր Զելանդիայում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ մեթոդ է «Կոռուպցիայի դեմ պայքարի դասընթացների» կազմակերպումն ու անցկացումը: Այն մշակվել է տվյալ ոլորտում առաջատար մասնագետների կողմից և կազմակերպություններին հնարավորություն է տալիս պատրաստել իրենց անձնակազմին: Դասընթացը սկսվում է կոռուպցիոն դեպքերի ընդհանուր ներկայացմամբ և քննարկմամբ, այնուհետև անցում է կատարվում գործնական սցենարների խորը ուսումնասիրությանը, որը պահանջում է մասնակիցներից առաջարկել իրավիճակային որոշումներ: Դասընթացն առանձնանում է էթիկական բիզնես պրակտիկայի փորձագետների հստակ և գործնական խորհուրդներով: Այս ամենի հետ մեկտեղ Նոր Զելանդիայի Transparency International գրասենյակի և SFO կողմից համակողմանի դասընթացներ են իրականացվում՝ բիզնեսում կոռուպցիան կանխելու և այս ոլորտում օրենսդրությունը ուսումնասիրելու համար: Նոր Զելանդիայի արդարադատության նախարարությունը «Ասա ոչ կաշառակերությանն ու կոռուպցիային» ծրագրի շրջանակներում պարզաբանում է, թե ինչ կարող է անել յուրաքանչյուր անձ այդ երևույթի դեմ պայքարում: Քաղաքացիների համար Նոր Զելանդիայի ոստիկանության և SFO կայքերում էլեկտրոնային եղանակով բողոքի ձևակերպման հնարավորություն է ընձեռված, որի ժամանակ ապահովվում է քաղաքացիների անձի գաղտնիությունը: Transparency International-ի կողմից անցկացվող հարցման ընթացքում, որին մասնակցել է Նոր Զելանդիայի մոտ 1000 բնակիչ, արձանագրվել է, որ հարցվածների ընդամենը 3 տոկոսն է բախվել կաշառքի փաստերի հետ:

Նրանցից 35 տոկոսը նշել է, որ դա ծառայության ստացման միակ մեթոդն է եղել, 29 տոկոսը՝ ավելի մատչելի ծառայություն ստանալու համար, 21 տոկոսը՝ գործընթացի արագացման, իսկ 15 տոկոսը՝ կաշառք տվել է որպես նվեր կամ շնորհակալություն[1]: Նոր Զելանդիայում կոռուպցիան զսպող գործոններից է նաև պետական կառավարման մարմինների թափանցիկ գործունեությունը, հասարակության լայն խավերի ներգրավվածությունը կառավարության որոշումների ընդունման գործընթացներին, ինչպես նաև ԶԼՄ–ների ազատությունը: Այստեղ կարևորվում է կադրային արդյունավետ քաղաքականության վարումը: Պետական համակարգն ունի բարձր վարկանիշ և գտնվում է հասարակության մշտական վերահսկողության ներքո: Հասարակական ճնշումների տակ նորզելանդական պաշտոնյաները վերադարձրել են յուրացված դրամական միջոցները պետական գանձապետական, որը լուսաբանվել է նաև մամուլում: Բացի այդ, տեղական թերթերից մեկը՝ New Zealand Heraldը[2], մեկ բրոշյուրում հավաքում է անբարեխիղճ պաշտոնյաների տվյալները: Տվյալ դեպքում հասարակությունը սկզբունքորեն շահագրգռված է վարքագծի արդյունավետ էթիկայի ստեղծմամբ:

Նոր Զելանդիայում հակակոռուպցիոն քաղաքականության հիմք հանդիսացող միջոցները խթանում են դրված նպատակին հասնելուն համախմբված մոտեցման շնորհիվ, որը ենթադրում է խնդրի լուծման մեջ տարբեր սոցիալական ինստիտուտների ներգրավումը և քրեական պատասխանատվության խստացման, ինչպես նաև գործունեության թափանցիկության ապահովումից մինչև հատուկ մասնագիտացված մարմինների ստեղծումն ու ինտերնետ տեխնոլոգիաների կիրառումը:

Հայտնի է, որ կեղծ լուրերն այսօր խնդիր են բոլոր երկրների կառավարությունների համար: Այդուհանդերձ, Հայաստանում այս խնդիրը սրվել է՝ պայմանավորված քաղաքական վերջին իրադարձություններով:

Նշենք, որ 2019 թվականին լրատվամիջոցների դեմ դատական հայցերի աննախադեպ աճ է արձանագրվել, ավելին՝ մամուլի դեմ 2019 թվականին դատարաններ ներկայացված դատական հայցերը գերազանցել են նախորդ մի քանի տարիների ցուցանիշները միասին վերցված: Որպես արդյունք՝ հաճախ առանց այդ էլ հագեցած լրահոսը խեղաթյուրվում է զրպարտություններով: Վերոնշյալ պայմաններում բացահայտված կոռուպցիոն դեպքերը բազմիցս «կորչում» են օրվա հագեցած և, ըստ էության, չկանոնակարգվող լրահոսում:

Հաշվի առնելով Նոր Զելանդիայի փորձը՝ առաջարկում ենք ստեղծել էլեկտրոնային հարթակ, որտեղ կներկայացվեն ամբողջական տվյալներ մեր երկրում կոռուպցիոն գործընթացների մեջ ներքաշված պաշտոնյաների, պետական գործիչների մասին: Նշենք, որ այս տեղեկատվությունը կարող է զետեղվել նաև օրենսդիր և գործադիր մարմինների կայքերում: Այս պարագայում

[1] 3% of kiwi's report paying a bribe in global survey (9 July 2013 by Transparency Int. New Zealand), http://www.transparency.org.

[2] https://www.nzherald.co.nz/

տեղեկատվությունը պահպանվում է, լինում է համակարգված և հավաստի: Կարծում ենք, որ սա ևս կարող է հանդիսանալ կոռուպցիան զսպող գործոն:

Ուսումնասիրելով Նոր Զելանդիայի վարած հակակոռուպցիոն քաղաքականությունը՝ կարծում ենք, որ դրանից կարելի է վերցնել որոշ բաղադրիչներ և դրանք տեղայնացնել մեր հանրապետությունում: Այսպես՝ Նոր Զելանդիայի հասարակության համար անընդունելի է այն փաստը, որ ՀՆԱի զգալի մասը կարող է բաշխվել բնակչության նեղ շրջանակներում: Ահա թե ինչու Նոր Զելանդիայում ազգային գաղափար է դարձել «կյանքն առանց կոռուպցիայի» կարգախոսը: Կարծում ենք, որ սա առաջին հերթին կիրթ և տեղեկացված հասարակության արդյունք է, որտեղ բնակչության շրջանում իրազեկվածության մակարդակը բավական բարձր է (ֆինանսական գրագիտություն, իրավագիտակցություն և այլն): Հիմք ընդունելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ ՀՀ–ում միջնաժամկետում կամ երկարաժամկետում չկա ավելի արդյունավետ մոտեցում, քան հասարակության լայն շերտերի՝ հակակոռուպցիոն իրավագիտակցության մակարդակի բարձրացումը: Նշենք, որ այս պահին Հայաստանում պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացվում են տարբեր դասընթացներ, թրեյնինգներ, որոնք ուղղված են կոռուպցիան նվազեցնելուն, սակայն դրանք վճարովի են, իսկ մեր հասարակության մեջ վճարունակ խավը տոկոսային առումով այդքան էլ մեծ չէ: Ուստի, կարծում ենք, դա կարող է իրականացվել բուհերում դասընթացների կամ ընտրովի դասավանդվող առարկաների շարքում կոռուպցիայի, դրա կանխարգելման մասին դասընթացների կազմակերպման միջոցով: Դասընթացը կարող է բովանդակել կոռուպցիայի էությունը, ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերը, ինչպես նաև կոռուպցիոն դրսևորումների ի հայտ գալու ժամանակ պատասխանատվության մեթոդները և այլն:

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ Նոր Զելանդիայի հաջողության գրավականը բաց և հաշվետու քաղաքականության վարումն է, և մեր երկրի համար էլ, վստահ ենք, դա կլինի ուսանելի և օգտակար: Ուստի առանձնացնենք այն հիմնական առաջարկները, որոնք կիրառելի կարող են լինել նաև մեր հանրապետության համար.

- հետևել Նոր Զելանդիայի օրինակին, ըստ որի՝ փոփոխել մեր երկրում գյուղատնտեսության սուբսիդավորման համակարգի բնույթը, մասնավորապես՝ ֆինանսավորել նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ նոր գաղափարները, գյուղատնտեսության ոլորտի գիտահետազոտական աշխատանքները, ենթակառուցվածքների կատարելագործմանն ուղղված միջոցառումները, սպանդանոցների կառուցումը, ինչպես նաև անասնաբուժական կետերի ավելացումը, որն էլ զգալիորեն կնվազեցնի կենդանիների հիվանդությունների բռնկումները և մասսայական անկումները:
- Հիմք ընդունելով Նոր Զելանդիայում իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականությունը՝ բարձրացնել մեր երկրում հասարակության լայն շերտերի իրավագիտակցության մակարդակը բուհերում դասընթացների կամ

դասավանդվող ընտրովի առարկաների շարքում կոռուպցիայի, դրա կանխարգելման մասին դասընթացների կազմակերպման միջոցով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Bryce Wilkinson, New Zeeland's Fiscal reforms 1984-1996, November, 2017.
2. The 1984 budget, Reserve Bank of New Zeeland, Vol. 47, No. 11, December, 1984, p. 597.
3. Стефанчук Л. Г., История Новой Зеландии, XX век, 2015, стр. 42-46.
4. Lewis Evans, Arthur Grimes, Bryce Wilkinson and David Teece, Economic Reform in New Zealand 1984-95: The Pursuit of Efficiency, Journal of Economic Literature, Vol. 34, No. 4 (Dec., 1996), pp. 1856-1902.
5. Рут Ричардсон, экс-министр финансов Новой Зеландии, доклад, За экономическую свободу: Чему мы научились. Опыт Новой Зеландии, Москва, 2004.
6. Ярослав Романчук, Реформа сельского хозяйства в Новой Зеландии, научно-исслвдовательский центр Мизеса, 05 апреля 2006.
7. Э. Холдейн, Сельское хозяйство Новой Зеландии: аграрный феномен и особые права фермеров, 04.10.2017.
8. ՀՀ կառավարության ծրագիր, 8 փետրվարի 2019 թ., N 65 – Ա:
9. https://data.oecd.org/new-zealand.htm
10. https://data.worldbank.org
11. http://www.oecdbetterlifeindex.org
12. https://knoema.com
13. https://www.nzherald.co.nz/
14. https://transparency.am
15. https://tradingeconomics.com
16. http://liberty-belarus.info

References

1. Bryce Wilkinson, New Zeeland's Fiscal reforms 1984-1996, November, 2017.
2. The 1984 budget, Reserve Bank of New Zeeland, Vol. 47, No. 11, December, 1984, p. 597.
3. Stefanchuk L. G., Istorija Novoj Zelandii, HH vek, 2015, str. 42-46.
4. Lewis Evans, Arthur Grimes, Bryce Wilkinson and David Teece, Economic Reform in New Zealand 1984-95: The Pursuit of Efficiency, Journal of Economic Literature, Vol. 34, No. 4 (Dec., 1996), pp. 1856-1902.
5. Rut Richardson, jeks-ministr finansov Novoj Zelandii, doklad, Za jekonomicheskuju svobodu: Chemu my nauchilis'. Opyt Novoj Zelandii, Moskva, 2004.
6. Jaroslav Romanchuk, Reforma sel'skogo hozjajstva v Novoj Zelandii, nauchno-isslvdovatel'skij centr Mizesa, 05 aprelja 2006.
7. Je. Holdejn, Sel'skoe hozjajstvo Novoj Zelandii: agrarnyj fenomen i osobye prava fermerov, 04.10.2017.

8. HH kar'avarowt'yan c'ragir, 8 p'etrvari 2019 t'., N 65 – A:
17. https://data.oecd.org/new-zealand.htm
18. https://data.worldbank.org
19. http://www.oecdbetterlifeindex.org
20. https://knoema.com
21. https://www.nzherald.co.nz/
22. https://transparency.am
23. https://tradingeconomics.com
24. http://liberty-belarus.info

Եվգենյա Հակոբյան
Լիանա Ազատյան

ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համառոտագիր: Շատ երկրներում գրանցած հաջողություններն արդյունք են կատարված լայնածավալ աշխատանքների, ընդհուպ մինչև տնտեսության արմատական վերափոխումը: Ամեն մի երկիր բարեփոխումները սկսում է տարբեր մակարդակից: Հոդվածում բացահայտվել և վերլուծվել են Նոր Զելանդիայի տնտեսական վերելքի բաղադրիչները: Ներկայացվել են Նոր Զելանդիայում տնտեսական հեղափոխությանը նպաստող գործոնները, ինչպես նաև հեղափոխության շարժիչ ուժերը: Վերլուծվել է երկրում այդ ժամանակահատվածում տիրող իրավիճակը: Անդրադարձ է կատարվել առանձին ոլորտներում կատարված բարեփոխումներին և արձանագրած հաջողություններին: Զուգահեռներ են անցկացվել Հայաստանի Հանրապետության տնտեսության հետ, և տրվել են գործնական առաջարկներ՝ հիմնված Նոր Զելանդիայի փորձի վրա:

Բանալի բառեր. տնտեսական բարեփոխումներ, գյուղատնտեսություն, սուբսիդիա, կատարելագործում, հարկային քաղաքականություն, հակակոռուպցիոն քաղաքականություն

Евгения Акопян
Лиана Азатян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» НОВОЙ ЗЕЛАНДИИ

Аннотация: Успехи многих стран являются результатом огромной работы, вплоть до радикальной трансформации экономики. Реформы в каждой стране начинаются с разных уровней. В статье выявлены и проанализированы компоненты экономического роста в Новой Зеландии. Представлены факторы, спо-

собствующие экономической революции в Новой Зеландии, а также движущие силы революции. Проанализирована ситуация, царившая в стране в данном периоде. Отражены реформы, проведенные в отдельных областях, и достигнутые успехи. Проведены параллели с экономикой Республики Армения и сделаны практические предложения на основе опыта Новой Зеландии.

Ключевые слова: экономические реформы, сельское хозяйство, субсидия, усовершенствование, налоговая политика, антикоррупционная политика

Yevgenya Hakobyan
Liana Azatyan

"THE ECONOMIC MIRACLE" OF NEW ZEALAND

Abstract: Success of many countries is the result of large-scale work, up to a radical transformation of the economy. Reforms in each country start at different levels. In the article the components of economic growth in New Zealand are identified and analyzed. The factors contributing to the economic revolution in New Zealand and driving forces of the revolution are presented. The situation in the country during that period is analyzed. Reforms undertaken in certain areas and the success achieved are reflected. Parallels are drawn with the economy of the Republic of Armenia and practical recommendations are made based on the experience of New Zealand.

Keywords: economic reforms, agriculture, subsidy, improvement, tax policy, anti-corruption policy

Վահագն Խաչատուրյան
Արամ Խաչատուրյան

ՎՐԱՍՏԱՆԻ «ՎԱՐԴԵՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ԴԱՍԵՐԸ ԵՎ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Ներածություն

Վրաստանը ինքնիշխան պետություն է Հարավկովկասյան տարածաշրջանում և միջանկյալ դիրք է զբաղեցնում Արևելյան Եվրոպայի և Հարավարևմտյան Ասիայի միջև: Գտնվում է Առաջավոր Ասիայում՝ Մեծ Կովկասի լեռնային համակարգի արևմտյան և կենտրոնական հատվածներում: Արևմուտքում Վրաստանի ափերը ողողում են Սև ծովի ջրերը, հյուսիսում սահմանակցում է Ռուսաստանի Դաշնությանը, հարավ-արևմուտքում՝ Թուրքիային, հարավում՝ Հայաստանին, հարավ-արևելքում՝ Ադրբեջանին: Մայրաքաղաքը Թբիլիսին է, որը նաև երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոնն է: Զբաղեցնում է 69.700 քառ. կմ տարածք, իսկ բնակչությունը, ըստ 2019 թվականի մարդահամարի տվյալների, կազմում է 3.723.500 մարդ: Բնակչության ճնշող մեծամասնությունը վրացիներ են, գլխավոր ազգային փոքրամասնություններն են ադրբեջանցիներն ու հայերը: Վրաստանը խորհրդարանական կառավարման համակարգով սահմանադրական, բազմակուսակցական հանրապետություն է[1]:

ՀՆԱ	17.600 **մլն ԱՄՆ դոլար**
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ	4.717 **ԱՄՆ դոլար**
Դիրքը՝	
Doing Business	6
Կոռուպցիայի ընկալման համաթիվ	41
Տնտեսական ազատության համաթիվ՝ ըստ Հերիթեյջ հիմնադրամի	16[2]

1985 թ. ապրիլին գորբաչովյան վերակառուցմամբ հռչակված քաղաքական նոր ուղեգիծը թեև սկիզբ դրեց Խորհրդային Միության մեջ հասարակական, քաղաքական, տնտեսական փոփոխությունների, սակայն հետագայում բարեփոխումների տեղապտույտի, ազգամիջյան բախումների, տնտեսական ճգնաժամի, հանրապետությունների՝ անկախության ձգտումների արդյունքում ԽՍՀՄ-ում ծայր առած քաղաքական շարժումները, ԽՍՀՄ-ը վերափոխելու անհեռանկա-

[1] https://www.wikiwand.com/hy/Վրաստան
[2] https://en.wikipedia.org/wiki/Georgia_(country)#International_rankings

ռայնությունը մի շարք հանրապետություններում հանգեցրին հեղափոխությունների, որոնց հետևանքով Խորհրդային Միությունը փլուզվեց:

Հետխորհրդային ժամանակաշրջանում սկիզբ առած համակարգային փոփոխությունները, անցումային ժողովրդավարության բարդ ընթացքը, իշխանություն-ընդդիմություն դիմակայությունը, ռազմական բախումները, հին և նոր քաղաքական էլիտայի անկարողությունը և նրա վերասերումը նախկին խորհրդային մի շարք հանրապետությունների կանգնեցրին քաղաքական արմատական նոր փոփոխությունների իրականացման անխուսափելիության առջև: Այսօրինակ իրավիճակը դիտարժան է նաև Հարավային Կովկասի մյուս հանրապետություններում:

ԽՍՀՄ փլուզումից 13 տարի անց Վրաստանում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունն» առաջ բերեց նոր քաղաքական իրավիճակ թե՛ երկրում, թե՛ տարածաշրջանում: Տեղի ունեցածը էապես ազդեց թե՛ ներհասարակական-ներքաղաքական և թե՛ աշխարհաքաղաքական զարգացումների վրա՝ մեծապես պայմանավորելով այդ զարգացումների ուղղությունը:

«Վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանը հնարավորություն ստացավ դուրս գալու արատավոր շրջանից: Վրաստանի նոր իշխանությունը Միխեիլ Սաակաշվիլու գլխավորությամբ, ունենալով երկրի ազգաբնակչության հսկայական աջակցությունը, կարճ ժամանակում կարողացավ բոլոր ոլորտներում փոխել իրավիճակը: Նոր կառավարության առաջնահերթությունը կոռուպցիայի դեմ պայքարն էր, այսպես կոչված սոցիալական շուկայական տնտեսության մերժումը և անցումն ավելի դասական ազատական մոդելի: Բիզնեսի համար բարենպաստ պայմանների ստեղծումը, տնտեսության միջամտության և կարգավորման դադարեցման արդյունքում կառավարության ավելի արդյունավետ աշխատանքը, լայն տարածում ստացած կոռուպցիայի հաղթահարումը և ավելի ուժեղ ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծման համար հետևողական բազային բարեփոխումները Վրաստանի զարգացման նոր սցենարի մաս էին կազմում:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել 2000-ականների սկզբին Վրաստանի տնտեսության տարբեր ոլորտներում իրականացված բարեփոխումները և գնահատել կատարված աշխատանքը:

Գրականության ակնարկ

Վրացական «վարդերի հեղափոխությունը» մինչ օրս շարունակում է հետաքրքրության առարկա լինել հասարակության տարբեր խավերի համար: Դրանով են պայմանավորված հեղափոխությանը վերաբերող բազմաբովանդակ տարբեր նյութերի առկայությունը տպագիր ձևաչափով և էլեկտրոնային տարբերակներով: Հրապարակում եղած նյութերի գերակշռող մասը վերաբերում է բուն հեղափոխությանը՝ պատմական ակնարկի, քաղաքական վերլուծությունների, հիշողությունների ձևաչափով: Այն տարիների իրադարձությունները առավել ամբողջական է ներկայացված Լարիսա Բուրակովայի «Ինչու Վրաս-

տանում ստացվեց» գրքում[1], որը լույս է տեսել 2011 թ.: Հեղինակը փաստորեն ամփոփել է 2004-2011 թթ. իրադարձությունները, որոնց ականատեսն է եղել: Գրքի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ այնտեղ ներկայացվածն արդյունք է այդ ժամանակվա բարեփոխումներն իրականացրած մարդկանց հետ անմիջական շփումների, շատ դեպքերում՝ պարզապես որպես տեղի ունեցածի նկարագրություն:

Կան նաև հեղինակներ, ովքեր, դրական արտահայտվելով 2003 թ. հեղափոխության մասին, ավելի քննադատական վերաբերմունք են դրսևորում հեղափոխությունից հետո տեղի ունեցած հատկապես քաղաքական իրադարձությունների նկատմամբ՝ գտնելով, թե որոշ ժամանակից հետ Սաակաշվիլին և իր թիմն աստիճանաբար սկսեցին դրսևորել ավելի ավտորիտար աշխատաոճ[2]:

Հետազոտության տեսամեթոդական հիմքերը

Աշխատանքի համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել Վրաստանի «վարդերի հեղափոխության» վերաբերյալ շրջանառության մեջ եղած հրապարակումները, հետազոտությունները, աշխատությունները, ինչպես նաև հեղափոխության մասնակիցների հուշերը, տարբեր վերլուծական կենտրոնների ուսումնասիրությունները: Կիրառվել են վիճակագրական, համեմատական, խմբավորումների և վերլուծության ու ամփոփումների մեթոդները:

Ներքաղաքական գործընթացները հետխորհրդային Վրաստանում. ռազմական խռովություններից դեպի «վարդերի հեղափոխություն»

Հետխորհրդային Վրաստանի ներքաղաքական գործընթացները բարդ բնույթ ունեին: 1990 թ. հոկտեմբերի 28-ին երկրում անցկացվեցին առաջին բազմակուսակցական խորհրդարանական ընտրությունները, ուր հաղթանակ տարավ «Ազատ Վրաստան-Կլոր սեղան» ազգային կուսակցությունը՝ Զվիադ Գամսախուրդիայի գլխավորությամբ, որն էլ դարձավ Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահ: 1991 թ. ապրիլի 9-ին ԳԽ-ն ընդունեց «Վրաստանի անկախ պետականության վերականգնման մասին» փաստաթուղթը: 1991 թ. մայիսի 26-ի ընտրություններում նախագահ ընտրվեց Զ. Գամսախուրդիան: Հետխորհրդային շրջանի Վրաստանի քաղաքական զարգացումների առաջին փուլում ռազմական խռովություններն ու հեղաշրջումները երկրի ներքաղաքական զարգացումների անբաժան մասն են կազմել:

Անցումային փուլը Վրաստանի համար բավականին բարդ էր: Տնտեսական կապերի խզումը ավելի էր խորացել երկրում տիրող քաղաքական անկայունության և քաղաքացիական պատերազմի պայմաններում: Մեկ տարվա ընթացքում արտադրությունը կրճատվել էր գրեթե 6 անգամ, իսկ արտադրական և տրանս-

---

[1] Տե՛ս Буракова Лариса. Почему у Грузии получилось. М: ООО «Юнайтед пресс», 2011, 271 стр.

[2] Տե՛ս Токарев А., Реформы Михаила Саакашвили: территория и госуправление. что получилось у Грузии? https://cyberleninka.ru/article/n/reformy-mihaila-saakashvili-territoriya-i-gosupravlenie-chto-poluchilos-u-gruzii/viewer

պորտային ենթակառուցվածքները գրեթե ոչնչացված էին: Գնաճը կազմում էր 9000%, գործազրկությունը կազմում էր ավելի քան 20%, բնակչության եկամուտները խիստ նվազել էին, ազգային արժույթը՝ հիպերարժեզրկվել. Արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը կորցրել էին իրենց կենսունակությունը:

Ինչպես և բոլոր հետխորհրդային երկրներում, Վրաստանում ևս կառուցվածքային բարեփոխումների սկիզբը դրվել է անկախացումից անմիջապես հետո: Այդ ժամանակաշրջանը կարելի է բաժանել երկու մասի՝ մինչև 1993-2003 թթ. և 2003 թվականից կամ «վարդերի հեղափոխությունից» հետո:

Սոցիալական ծանր իրավիճակը, ազգաբնակչության ցածր կենսամակարդակը (պետծառայողների միջին աշխատավարձը կազմում էր 30 լարի՝ մոտ 15 ԱՄՆ դոլար, կենսաթոշակն ավելի ցածր էր), մարդու իրավունքների խախտումները, կոռուպցիայի բարձր մակարդակը լի էին անկանխատեսելի զարգացումներով: Երկրում իրավիճակը բարդացավ, երբ քաղաքական ընդդիմությունը Մ. Սաակաշվիլու, Զ. Ժվանիայի և Ն. Բուրջանաձեի գլխավորությամբ հրաժարվեց ընդունել 2003 թ. նոյեմբերի 2-ի խորհրդարանի ընտրությունների արդյունքները: Երկրում առաջացավ քաղաքական ճգնաժամ: «Վարդերի հեղափոխության» արդյունքում հաղթահարվեց այդ ճգնաժամը, և 2004 թ. հունվարի 4-ին Վրաստանում անցկացված նախագահական ընտրությունների արդյունքում քվեների 96 տոկոսով Վրաստանի նախագահ ընտրվեց Միխեիլ Սաակաշվիլին: Իսկ հաջորդ տարվա մարտին կայացած խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարավ Սաակաշվիլու, Ժվանիայի և Բուրջանաձեի գլխավորած դաշինքը:

«Վարդերի հեղափոխությունից» երեք ամիս անց ելույթ ունենալով ԱՄՆ Ջոնս Հոպկինսի համալսարանում՝ Մ. Սաակաշվիլին անդրադարձավ «վարդերի հեղափոխության երեք կարևոր դասերին», որոնցից առաջինը «քաղաքական ժառանգականության անցման ճանապարհի» հաղթահարումն էր: Երկրորդ դասը, ըստ Սաակաշվիլու, այն է, որ «վրացիները, լինելով եվրոպական ազգերի ընտանիքի անդամ, թե՛ աշխարհագրորեն և թե՛ ազգային ինքնագիտակցության առումով» միավորվեցին ազատական ու ժողովրդավարական սկզբունքների պաշտպանության շուրջ: «Վարդերի հեղափոխությունը» համարելով ազատության և ժողովրդավարական պետության մեջ ապրելու, իրենց ղեկավարներին ընտրելու և իրենց ճակատագիրը որոշելու Վրաստանի քաղաքացիների իրավունքի հաղթանակը՝ Սաակաշվիլին ընդգծեց. «Ես ժողովրդավարության նախագահն եմ»: Երրորդ դասի հիմքում ընկած են Վրաստանի և ԱՄՆ-ի միջև «առանձնահատուկ հարաբերությունները». «Վրացիներն ամերիկացիների հետ կիսում են նույն համոզմունքները, նույն արժեքները, նույն ձգտումները»:

Վրաստանի նախագահն անդրադարձավ երկրում քաղաքական և տնտեսական փոփոխությունների իրականացմանը. «Մենք պետք է առաջ ընթանանք: Մենք հնարավորություն ունենք ողջ տարածաշրջանում դրական փոփոխությունների սկիզբը դնել: Եթե այս հեղափոխությունը Վրաստանը հաջողությամբ ավարտին հասցնի, ապա այն հաջողության կհասնի ողջ տարածաշրջանում»:

«Վարդերի հեղափոխությունից» հետո նոր իշխանությունները Սաակաշվիլու գլխավորությամբ ձեռնամուխ եղան ներպետական կյանքում արմատական փոփոխությունների իրականացմանը, որոնցից առանցքայինը երկրում առկա լայնածավալ կոռուպցիայի հաղթահարումն էր: Սաակաշվիլին իրականացրեց կանխարգելիչ և պատժիչ միջոցառումներ: Հակակոռուպցիոն պայքարն ընթանում էր «**Զրո հանդուրժողականություն կոռուպցիայի հանդեպ**» կարգախոսի ներքո: Ամենակոռումպացված ոլորտը համարվող ճանապարհային ոստիկանությունը լուծարվեց, ստեղծվեց պարեկային ծառայություն: Ոստիկանական համակարգից հեռացվեցին 30 հազարից ավելի աշխատակիցներ: Այս գործողությունների արդյունքներով էր պայմանավորված հանրային տրամադրությունների փոփոխությունը ոստիկանության հանդեպ: Այսպես՝ 2016 թ. տվյալներով Վրաստանում ոստիկանությանը վստահում էր բնակչության 87 տոկոսը. սա Արևելյան Եվրոպայում ամենաբարձր ցուցանիշն էր:

Հետհեղափոխական Վրաստանում ընդունվեցին այնպիսի օրենքներ, որոնք հեշտացրին կոռումպացված պաշտոնյաների կալանավորումը և նրանց գույքի պետականացումն այն դեպքում, եթե նրանք չկարողանան ապացուցել այդ ունեցվածքի ծագման օրինական աղբյուրները: Ձերբակալվեցին մեծ թվով նախկին բարձրաստիճան պաշտոնյաներ, քրեական հեղինակություններ: Վրաստանը կարողացավ կտրել պետության և կազմակերպված հանցագործության՝ Է. Շևարդնաձեի կառավարման տարիներին է՛լ ավելի ամրացած կապը: Պետական և կազմակերպված հանցագործության առումով, ըստ Հանրային կարծիքի ուսումնասիրության միջազգային բյուրոյի 2011 թ. հաշվետվության, Վրաստանի ցուցանիշներն ամենացածրն էին ողջ Եվրոպայում:

Ըստ Transparency International միջազգային հակակառուպցիոն կազմակերպության կոռուպցիայի ընկալման համաթվի՝ եթե 2002 թ. Վրաստանը զբաղեցնում էր 89-րդ տեղն աշխարհում, 2004 թ.՝ 134-րդը, ապա 2009 թ.՝ 67-րդը, իսկ 2012 թ.՝ արդեն 51-րդը:

Սկսեցին արագորեն բարեփոխվել օրենքները, տեղեկատվական տեխնոլոգիաները գործադրելով՝ պետական կառավարման ապարատը դարձավ բաց և թափանցիկ: Վերացան վերահսկողական մի շարք կառույցներ: Կրճատվեց նախարարությունների և պետծառայողների թիվը, մնացյալ պետծառայողների աշխատավարձերն աճեցին 15 անգամ:

Լուրջ փոփոխությյուններ կատարվեցին արտաքին քաղաքականության ոլորտում. Վրաստանը որդեգրեց հստակ եվրոպական ուղղություն՝ նախատեսելով ԵՄ անդամակցության հեռանկարը: Անվտանգության ոլորտում հիմնական առանցքը դարձավ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների խորացումը՝ անդամակցության հեռանկարով:

Վրաստանը դադարեցրեց անդամակցությունն ԱՊՀ-ին: Տնտեսության մեջ Սաակաշվիլուն հաջողվեց հասնել լուրջ քայլերի. հարկային ոստիկանության ստեղծմամբ կտրուկ կրճատվեց ստվերային տնտեսությունը: Վրաստանի տնտեսությունն այդ տարիներին ինֆլյացիայի նվազագույն մակարդակն ուներ:

Արձանագրվեց տնտեսական աճ: Աղքատությունը 1998-2003 թթ. 28.4 տոկոսից նվազեց 2004-2009 թթ. մինչև 24.5 տոկոսի: Գործարարության բարելավման առումով Վրաստանը հասավ այնպիսի արդյունքների, որ մուտք գործեց տնտեսապես արագ զարգացող երկրների շարք:

Չնայած այս և այլ արմատական բարեփոխումներին՝ հեղափոխությունից մի քանի տարի անց Սաակաշվիլու կառավարման հանդեպ ավելացան իշխանության գերկենտրոնացման և իշխանությունների տարանջատման սկզբունքի անտեսման մեղադրանքները:

2012 թ. հոկտեմբերին խորհրդարանական ընտրություններում Սաակաշվիլու ղեկավարած «Միացյալ ազգային շարժումը» պարտություն կրեց: Սաակաշվիլին հայտարարեց, որ դառնում են ընդդիմություն: Պարտության պատճառը համարվում էին վրացական բանտերում իրականացվող աղմկահարույց խոշտանգումների մի քանի դեպքերը, որոնք հանրայնացվեցին ընտրությունների նախօրեին:

2013 թ. ավարտվեց նախագահի պաշտոնում Սաակաշվիլու լիազորությունների ժամկետը:

«Վարդերի հեղափոխության» դերը շատ մեծ է Վրաստանի ժողովրդավարացման և արդիականացման, կոռուպցիայի հաղթահարման, արտաքին քաղաքականության հայեցակարգային փոփոխությունների առումով: Վրացական «թավշյա հեղափոխության» և հետագա արմատական բարեփոխումների մեջ առանցքային է հենց Միխեիլ Սաակաշվիլու դերը՝ Վրաստանում ժողովրդավարական հաստատությունների կայացման, արդյունավետ կառավարման, արևմտյան արժեհամակարգի և սկզբունքների ներդրման ու այլ կարևոր առումներով:

«Վարդերի հեղափոխությունը» Վրաստանը դուրս բերեց առաջընթացի և զարգացման ճանապարհ:

Մեր համոզմամբ՝ Վրաստանի փորձը շատ ուսանելի է բոլոր այն երկրների համար, որոնք զարգանալու մեծ ձգտում ունեն և իրենց առջև դրել են խնդիր՝ դուրս գալու ծանր սոցիալ-տնտեսական վիճակից, և ընտրել են հարատև զարգացման ճանապարհը:

Վրաստանի դեպքում կա ևս մեկ առանձնահատկություն, բացի վերը նշվածներից: Վիճակը մինչև «վարդերի հեղափոխությունը» այնքան անհուսալի էր, որ այդ ժամանակների ոչ մի քաղաքական գործիչ, քաղաքագետ, փորձագետ, միգուցե բացի Սաակաշվիլիից և իր թիմի որոշ անդամներից, չէր կարող կանխատեսել այն, ինչ տեղի ունեցավ 2003 թ. նոյեմբերին: Ընդհակառակը, Վրաստանի վերաբերյալ հոռետեսությունը գերիշխող էր, որը միանգամայն ընդունելի և հասկանալի էր: Այդ ժամանակվա իրավիճակը կարճ կարելի է ձևակերպել՝ անիշխանություն, անարխիա, հեռանկար չունեցող:

Ահա այդ իրավիճակում «վարդերի հեղափոխության» արդյունքում իշխանության եկան երիտասարդ, նոր սերնդի քաղաքական գործիչներ, որոնք շատ կարճ ժամանակում իրականացրին հրաշք, սեփական երկիրը «մթությունից» և հուսահատությունից հանելով՝ առաջնորդեցին դեպի ազատություն, ժողովրդա-

վարություն՝ վերադարձնելով երկրի քաղաքացիներին արժանապատիվ ապրելու իրավունքը: Ներկայացնենք այն ճանապարհը, որ անցավ Վրաստանը թավշյա հեղափոխությունից հետո: Կրկնենք, որ այն, ունենալով իր բարդություններն ու ծուղակները, իհարկե, նաև յուրահատուկ է և ուսանելի:

Բարեփոխումների ճանապարհը

Փոքրիկ Վրաստանում մեկ օրում աշխատանքից հեռացնել 13 հազար մարդու՝ մեծ մարտահրավեր էր ձայների 97 տոկոսով ընտրված նախագահի համար: Սաակաշվիլիի նախագահության առաջին տարիներին լրատվական թողարկումները սկսվում էին նախկին կառավարության կոռումպացված պաշտոնյաների, նախկին իշխանությունների հետ կապ ունեցող գործարարների կամ քրեական հեղինակությունների հերթական ձերբակալությունների մասին լուրերով: 2004 թ. ամռանը միաժամանակ աշխատանքից հեռացվեցին ՃՈ բոլոր աշխատակիցները: Նրանց փոխարեն ստեղծվեց փոքրաթիվ, բայց բարձր վարձատրվող պարեկային ոստիկանություն, որը կաշառք չէր վերցնում և, ըստ էության, պայքարում էր խախտումների և հանցավորության դեմ:

Համալսարաններից հեռացվեցին մեծ թվով ծեր դասախոսներ, իսկ շնորհիվ ազգային քննությունների ներդրման՝ գործնականում հաջողվեց բուհերի ընդունելությունից ամբողջությամբ արմատախիլ անել կոռուպցիան:

2004 թ. էկոնոմիկայի նախարարությունը գլխավորեց հայտնի ձեռնարկատեր Կախա Բենդուկիձեն, որը դարձավ Վրաստանի տնտեսական բարեփոխումների հեղինակը: Մասնավորապես՝ նրա խորհրդատվությամբ կտրուկ նվազեցին հարկերը, մի շարք կարգավորող մարմիններ, որոնք նախկինում կոռուպցիայի աղբյուր էին, պարզապես լուծարվեցին: Արդյունքում պետբյուջեի փաստացի եկամուտները 2003-2012 թթ. ավելացան 10 անգամ: Գրեթե նույնչափ ավելացան կենսաթոշակները՝ 2003 թ. 14 լարիից (այդ Ժամանակվա փոխարժեքով՝ 7 դոլար) 2012 թ. հասնելով 150-ի (մոտ 90 դոլար): Այդ շրջանում Վրաստանում բացվեց Արդարադատության պալատը՝ քաղաքացիների սպասարկման հատուկ հաստատություն, որտեղ հնարավոր է արագ ստանալ անձնագիր և այլ փաստաթղթեր, գրանցել անշարժ գույք կամ բիզնես:

«Սկսած 2003 թվականից՝ Վրաստանը բացառիկ հաջողություններ է ցուցաբերում պետական ծառայությունների ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարում... Վրաստանն իր օրինակով ցույց տվեց, որ կոշտ քաղաքական կամքի առկայության և երկրի ղեկավարության համաձայնեցված գործողությունների պարագայում հաջողության կարելի է հասնել բավականին կարճ ժամանակահատվածում»,- ասվում է Համաշխարհային բանկի՝ «Կոռուպցիայի դեմ պայքարը պետական ծառայությունների ոլորտում. Վրաստանում բարեփոխումների ժամանակագրությունը» հետազոտության մեջ:

Սակայն պետք չէ կարծել, որ ամեն ինչ հարթ է անցել: Սկզբում բարեփոխումները շատ դժվար էին, և իշխանությունը ստիպված էր դիմել կոպիտ և ծայրահեղ միջոցների, որպեսզի վերացնի կոռուպցիան և բյուրոկրատիայի

դիմադրությունը: Ռեֆորմների երկրորդ ալիքը ոչ պակաս դժվար էր. այն, ինչի հասել էին, հարկավոր էր ինստիտուտավորել, որպեսզի թեթևացնեին հետագա զարգացումը: Զարմանալի չէ, որ իշխանության ագրեսիվ որոշումներն աստիճանաբար պակասեցրին հանրային աջակցությունը և մեծացրին չբավարարված ընտրողների թիվը: Սակայն կառավարությունը, չդանդաղեցնելով տեմպերը, շարունակեց նախատեսված միջոցառումները: Իսկ վերջիններս նախատեսում էին արմատական փոփոխություններ ամենուր: Ի՞նչ էր իրենից ներկայացնում բարեփոխումների փաթեթը: Թվարկենք դրանք:

Ամենից աչքի ընկնողը և հասարակության մեջ լայն տարածում և հավանության ստացածը սովետական պետական ավտոտեսչության լուծարումն էր: 2005 թ. վրացական ճանապարհային ոստիկանությունը ամբողջությամբ՝ 30.000 աշխատակիցներով, ազատ արձակվեց: Ինչ-որ ժամանակ Վրաստանը զրկվեց այդ ծառայությունից, բայց երթևեկությունն այդ ժամանակ անկանոն չդարձավ, որը ապացուցեց որոշման ճշմարիտ լինելը: Հետագայում հներին փոխարինելու եկան երիտասարդ, մոտիվացված ոստիկաններ, որոնց աշխատավարձը մեծացավ 15-40 անգամ:

Ամեն տարի՝ սկսած 2004 թվականից, Վրաստանը կրճատում էր հարկերի քանակը, իջեցնում դրույքաչափերը կամ պարզեցնում հարկային օրենսդրությունը: Հարկերի քանակը 2004 թ. 21-ից իջավ 7-ի՝ 2005 թ. և 6–ի՝ 2007 թ.: 2004 թ. անհատական եկամտային հարկը կազմում էր 20%, սոցիալական հարկը՝ 33%: 2008 թ. դրանք միավորվեցին, և միասնական եկամտային հարկը 25% էր:

Հաջորդ քայլը, որի իրականացմանը ձեռնամուխ եղավ իշխանությունը, մասշտաբային մասնավորեցումն էր: «**Մենք կվաճառենք ամեն ինչ**, **բացի խղճից**» արտահայտությունը, որ միանգամից դարձավ թևավոր, պատկանում էր վրացական «տնտեսական հրաշքի» հեղինակ Կախա Բենդուկիձեին:

Վրաստանում հինգ տարվա ընթացքում նախաձեռնվեց ավելի քան 70 բարեփոխում: Ըստ Doing Business-ի վարկանիշի հեղինակ Սիմեոն Դյանկովի՝ Վրաստանից բացի ոչ մի այլ երկրի չի հաջողվել վերջին հիսուն տարվա ընթացքում իրականացնել այդպիսի մասշտաբային, խորքային, արագ բարեփոխումներ տարբեր բնագավառներում[1]: Ըստ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID)՝ նման բան եղել է Սինգապուրում 1960-ականներին, Հարավային Կորեայում՝ 1970-ականներին, Իռլանդիայում՝ 1980-ականներին, Էստոնիայում՝ 1990-ականներին, Սլովակիայում՝ 1998-2002 թվականներին:

Մեծ առումով վրացական բարեփոխումների դասերը կարելի բաժանել երեք մեծ խմբերի:

Առաջին դաս՝ ապաբյուրոկրատացում: Հեղափոխությունից հետո բոլորը հասկացել էին, որ կառավարման համակարգի և դրա հետ մեկտեղ նոր ապարատի ստեղծման անհրաժեշտությունը ժամանակի պահանջ է, և որ առանց դրա բարեփոխումների հաջողությունը մեծ հարցականի տակ է: Խնդրի լուծման

[1] USAID. Key Results Achived by the USAID-Goverment of Georgia Business Climate Reforms Partenership.Tbilisi, 2009.P.4.

բանալին պետական ապարատի արմատական կրճատման մեջ էր: Այդ խնդիրը լուծելու արդյունքում էկոնոմիկայի նախարարության աշխատողների թիվը կրճատվեց երեք անգամ, վարչություններինը՝ երկու անգամ, գյուղատնտեսության նախարարությունում 4370 աշխատողից մնացին 600-ը: Թբիլիսիի քաղաքապետարանում 2500-ի փոխարեն մնացին 800-ը, ֆինանսների նախարարությունում 2004-2005 թթ. անձնակազմը 5342-ից կրճատվելու արդյունքում դարձավ 3673: Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների նախարարությունում 5000-ի փոխարեն մնացին 1700-ը:

Պետական ապարատի բարեփոխումների մասին խոսելիս առնձնահատուկ, որպես ամենահաջողված օրինակ, պետք է անպատճառ նշել ներքին գործերի նախարարության արմատական փոփոխությունը: Հաջողության գրավականներից մեկը բարեփոխությունների արագությունն էր, չնայած միջազգային տարբեր կառույցներ (օրինակ՝ եվրոպական բարի կամեցողները) հորդորում էին շարժվել դանդաղ արագությամբ: Մեկ օրում ՆԳՆ-ում աշխատանքից ազատվեցին 15.000 աշխատակիցներ: Դրա հետ մեկտեղ ոստիկանների աշխատավարձը 20 դոլարից բարձրացավ տասն անգամ:

Մի միջանկյալ դիտարկում. բարեփոխումների հաջողությունը պայմանավորված էր նրանով, որ կաշառակերության կազմակերպված համակարգը վերացավ, և նրա գոյության համար այլևս հիմքեր չկային:

Ոստիկանական համակարգի փոփոխությունները բերեցին նրան, որ ազգաբնակչության մեջ ոստիկանների նկատմամբ վստահությունը 2010 թ. հասավ 84%-ի, երբ 2003 թ. այն ընդամենը 5% էր:

Նոր իշխանությունները կարգ ու կանոն հաստատելու, հասարակությանը հանցագործ աշխարհին բնորոշ սովորություններից հեռու պահելու նպատակով նախադեպը չունեցող քայլ արեցին. ազգային ժողովը ընդունեց օրենք կազմակերպված հանցագործության և ռեկետի մասին, որով սահմանվեցին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «օրենքով գող», «գողական աշխարհ»:

Երկրորդ դաս՝ մասնավորեցում:

Երրորդ դաս՝ ազատականցում:

Կարևոր և հետաքրքիր է նաև իրականացվող բարեփոխումների նպատակները ձևակերպելը: Ներկայացնենք միջոցառումների այն ցանկը, որոնք պետք է ապահովեին այդ նպատակների իրականացումը:

Հակակոռուպցիոն միջոցառումներ

- Համակարգային հակակոռուպցիոն միջոցառումները բոլոր իրականացվող բարեփոխումների անբաժանելի մասն են:
- Դրանք իրականացվել են Երկու հիմնական ձևով՝
  ա/ պատժիչ,
  բ/ կանխարգելիչ:

Բարեփոխումների արդյունքը կոռուպցիայի էական կրճատումն էր: Ըստ Միջազգային ֆինանսական կորպորացիայի տվյալների՝ Վրաստանի բնակչու-

թյան միայն 2 %-ն է կաշառք տվել կամ ինչ-որ մեկից լսել կաշառք տալու կամ ստանալու մասին:

Իրավապահ ոլորտ

- Ներքին գործերի և պետական անվտանգության նախարարության միավորում,
- ֆունկցիոնալ զուգահեռության վերացում և բյուջեի ծախսերի ռացիոնալացում,
- ինտենսիվ բարեփոխումների և օպտիմիզացման գործընթաց,
- նյութատեխնիկական բազայի բարելավում.
  - ա/ նոր մեքենաների և գույքի ձեռքբերում,
  - բ/ ներքին գործերի նախարարության շենքի, ոստիկանության նոր բաժինների վերակառուցում, նորոգում և կառուցում,
- աշխատավարձի բարձրացում,
- ոստիկանության պետական ավտոտեսչության լուծարում,
- ամերիկյան ոստիկանական պարեկային համակարգի ներդրում՝ մարզային ոստիկանության գործառույթներով օժտված,
- քրեական ոստիկանության բարեփոխում, դետեկտիվների և տեսուչների ծառայությունների ստեղծում,
- քաղաքացիական արտակարգ իրավիճակների ծառայության արդիականացում (ներառյալ հրշեջ ծառայությունը),
- 022 շուրջօրյա հեռախոսային կենտրոնի ստեղծում,
- ծառայությունների գործակալության ստեղծում և «Մեկ պատուհան» սկզբունքի իրականացում,
- իրավապահ մարմինների տեղեկատվական միասնական տվյալների բազայի ստեղծում,
- ոստիկանական ակադեմիայի ստեղծում՝ նոր և գործող իրավապահների համար շարունակական դասընթացների կազմակերպման նպատակով:

Քրեական օրենսդրություն

- 2004 թ. հունիսի 24-ին «Կազմակերպված հանցավորության և ռեկետի մասին» օրենքի ընդունում, որը նախատեսում էր «օրենքով գողերի» ինստիտուտի խարխլում, «գողերի» մտածելակերպի պատժելիություն՝ որպես այդպիսին: Արդյունքում՝ ազատության մեջ «օրենքով գողեր» չպետք է լինեին,
- 2005 թվականի մայիսից սկսած, համաձայն նոր քրեական դատավարության օրենսգրքի, հանցագործության կատարման փաստի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն նախաքննություն նախաձեռնելու հիմք է,
- մարդու իրավունքների ոտնահարման փաստերը նվազեցնելու համար նախաքննության նկատմամբ գլխավոր դատախազության վերահսկողության մեծացում,
- նախաքննության ժամանակի կրճատում՝ 9-ից 4 ամիս,
- կալանավորման կրճատում՝ 24-ից 12 ամիս,

- մեղադրյալին իրավունք է տրվում 2 անձի որպես վկա հրավիրել ցանկացած քննության, կազմակերպել իր քննությունը,
- ընթացակարգային գործարքների ինստիտուտի ներդրում:

Պետական համակարգ

- Նախարարությունների թվի կրճատում 18-ից մինչև 13: Մի քանի նախարարությունների և պետական գերատեսչությունների, այդ թվում՝ գների կարգավորման պետական տեսչության, հակամենաշնորհային ծառայության վերացում,
- «անկախ» գերատեսչությունների վերացում և դրանց ենթարկում նախարարություններին,
- հանրային ծառայությունների թվի կրճատում 52-ից 34-ի,
- նախարարությունների անձնակազմի նվազեցում 35%-ով և պետական հատվածի աշխատողների թվի կրճատում 50%-ով,
- ֆունկցիաների օպտիմալացում, կրկնօրինակման վերացում,
- քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի բարձրացում 15 անգամ,
- երիտասարդ մասնագետների զանգվածային ներգրավում պետական ապարատում,
- նախարարությունների անցում միջնաժամկետ պլանավորման,
- «Տնտեսական ազատության» ակտի ընդունում (ուժի մեջ է մտել 2013 թվականի դեկտեմբերի 31-ից), որը սահմանում է.

ա/ քաղաքացիների մասնակցությունը պետական հարկերի սահմանմանը,

բ/ հարկերի նոր տեսակների ներդրումը (ի լրումն հաստատված հինգի՝ եկամտահարկ, շահութահարկ, ԱԱՀ, մաքսատուրքեր, ակցիզային հարկեր՝ բացառությամբ գույքահարկի, որի դրույքաչափը որոշվում է հարկային օրենսգրքով) կամ գործող հարկերի վերին սահմանի բարձրացումը հնարավոր է միայն հանրաքվեի միջոցով,

գ/ մակրոտնտեսական ցուցանիշների սահմանները.

- համախմբված բյուջետային ծախսերը չպետք է գերազանցեն ՀՆԱ-ի 30% -ը,
- համախմբված բյուջեի պակասուրդը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3% -ը,
- պետական պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 60% -ը,

դ/ բյուջեի համընդհանրության սկզբունքը.

- օրենսդրությունը չի կարող կապել կառավարության որոշակի եկամուտները որևէ կոնկրետ բյուջեի ծախսերի ֆինանսավորման հետ,
- կապիտալի տեղաշարժի ազատության սկզբունքը:

Դատական համակարգ

- Արդարադատության բարձրագույն խորհրդի ստեղծում,
- առաջին ատյանի դատարանի՝ երկրորդից հստակ տարանջատում,
- դատավորների համար հստակ ընթացակարգերի սահմանում,
- իրավական համակարգի ազատականացում,
- գույքի նկատմամբ իրավունքների պաշտպանության ամրապնդում,

- դատավորների աշխատավարձի և թոշակների բարձրացում:

Քրեակատարողական համակարգ

- Ժամանակակից քրեակատարողական հիմնարկների կառուցում,
- բանտերում բանտարկության պայմանների բարելավում և մոտեցում համաշխարհային չափանիշներին,
- կազմակերպված հանցավորության ղեկավարների առանձնացում այլ բանտարկյալներից. նրանք այլևս չեն ստանա հատուկ և չարտոնված արտոնություններ:

Հարկային բարեփոխումներ

- Հարկերի քանակի իջեցում 2003-ի 26-ից 6-ի 2008-ին,
- ԱԱՀ-ի դրույքաչափի իջեցում 20%-ից մինչև 18%,
- պրոգրեսիվ 12-20% տոկոսադրույքով եկամտահարկի փոխարինում 12% հարթ տոկոսադրույքով,
- շահութահարկի դրույքի իջեցում 20%-ից 15%-ի,
- եկամտի և սոցիալական հարկերի համատեղում, ընդհանուր միասնական տոկոսադրույքի նվազեցում մինչև 20%-ով՝ հարթ դրույքաչափով,
- ակցիզային հարկերի և գույքահարկի իջեցում,
- հարկային համաներում եկամուտի համար մինչև 2004 թվականը,
- կապիտալ ծախսերի մաշվածության հնարավորություն,
- ԱԱՀ-ի վերադարձ,
- ֆինանսների նախարարությանն առընթեր հարկային խորհրդի ստեղծում՝ հարկային վեճերը մինչև դատական նիստը լուծելու համար,
- հարկային հայտարարագրերը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորություն:

Մաքսային բարեփոխումներ

Հարկային տեսչության և մաքսային ծառայության միավորում,

- մաքսային պարտավորությունների լուծարում 2006 թվականի սեպտեմբերի 1-ից,
- ներմուծման/արտահանման քանակական սահմանափակումների վերացում,
- մաքսային սակագների կտրուկ իջեցում.

ա/ 0% ներմուծվող ապրանքների 90%-ի համար,

բ/ 12% և 5% միայն գյուղատնտեսական արտադրանքի և շինանյութերի որոշակի տեսակների համար,

- ոչ սակագնային արգելքների վերացում. Վրաստանում ԵՄ, ՏՀԶԿ / OECD և ԱՊՀ տեխնիկական ստանդարտները հավասարվեցին ազգային տեխնիկական պահանջներին,
- մաքսային պահեստի հատուկ ռեժիմի ներդրում. միակ վճարումը պահեստի քառակուսի մետրի համար վճարն է:

Բարեփոխումների ամբողջ իմաստը, նպատակը տնտեսության, կառավարման, առանձին ճյուղերի ազատականացումն էր: Դրան էր ուղղված իշխա-

նության բոլոր թևերի գործունեությունը: Դա էր պատճառը, որ միաժամանակ տնտեսության բոլոր բնագավառներում և ճյուղերում սկսվեցին այնպիսի քայլեր կատարվել, որոնք նպատակ ունեին՝

- ազատականացնել
- ներքին տնտեսական կյանքը,
- արտաքին տնտեսական գործունեությունը,
- մասնավորեցման լայնամասշտաբ գործունեություն սկսել,
- բարեփոխել
- բիզնես սկսելու լիցենզիայի և թույլտվությունների տրամադրման գործընթացները,
- գազի մատակարարման և էլեկտրաէներգետիկայի համակարգերը,
- կրթությունը և առողջապահությունը,
- սոցիալական ապահովության համակարգը,
- բանակը և զինվորական ծառայության համակարգը:

Տնտեսական ցուցանիշները հետհեղափոխական Վրաստանում

Ստացված արդյունքները գնահատելու համար համեմատենք տարբեր ժամանակների տնտեսական ցուցանիշներ: Նախ՝ ներկայացնենք Վրաստանի երեք ղեկավարների կառավարման ժամանակաշրջանների ՀՆԱ-ի աճի պատկերը (տե՛ս աղյուսակ 1): Երկրորդ՝ բավականին հետաքրքիր է անդրադառնալ կառավարման արդյունավետությանը, քանի որ դա հնարավորություն է տալիս համեմատությունների միջոցով գնահատել երկրի վիճակը տարբեր տարիների կտրվածքով, ինչպես նաև տարբեր երկրների հետ համեմատության առումով: Այս հարցում շատ կիրառելի է Համաշխարհային բանկի հրապարակումը Համաշխարհային կառավարման ինտեգրալային համաթվի վերաբերյալ՝ (տե՛ս գծապատկեր 1 և աղյուսակ 2):

Ինտեգրալային համաթիվը հանրային կառավարման համաթվի բաղկացուցիչների փաստացի արժեքների հանրագումարի հարաբերությունն է դրանց առավելագույն մեծությանը (տվյալ դեպքում՝ 6x100)՝ արտահայտված տոկոսով: Ներկայացված տվյալների համաձայն՝ Վրաստանը, բացի Բալթյան երկրներից, առաջատարն է կառավարման արդյունավետություն առումով: Հաշվարկի համար օգտագործվում են վեց ցուցանիշներ, որոնցից յուրաքանչյուրն էլ ունի իր կարևորությունը, սակայն, ըստ մեզ, առավել կարևորը, որը նպաստում է կառավարման արդյունավետության բարձրացմանը, կոռուպցիայի մակարդակն է (տե՛ս աղյուսակ 3):

Այսպես՝ 1996 թ. կոռուպցիայի դեմ պայքարի ցուցանիշը ամենացածրն է եղել Վրաստանում (1.08%), իսկ ամենաբարձրը՝ Էստոնիայում (69.89%), Հայաստանի Հանրապետությունը այդ ցուցանիշով 1996 թ. զբաղեցրել է 6-րդ տեղը՝ հետ մնալով Էստոնիայից (69.89%), Լիտվայից (68.28%), Լատվիայից (50.01%), Բելառուսից: Վրաստանի ցուցանիշները տպավորիչ են. քսան տարվա ընթացքում կոռուպցիայի ցուցանիշը բարելավվել է մոտ 80%-ով, իսկ, օրինակ, մեր երկրում այն նվազել է 3%-ով:

Աղյուսակ 1

Վրաստանի տնտեսության դինամիկան ըստ երկրի ղեկավարների կառավարման ժամանակաշրջանի*, 1995-2018 թթ.*[1]

	Ժամանակաշրջան	ՀՆԱ կուտակային աճ	ՀՆԱ միջին տարեկան աճ
Էդուարդ Շևարդնաձե	1995-2003	67.2	5.9
Միխեիլ Սաակաշվիլի	2004-2012	70.3	6.1
Բիձինա Իվանիշվիլի	2013-2018	26.3	4.0



Գծապատկեր 1. *Համաշխարհային կառավարման ինտեգրալային համաթիվը նախկին Խորհրդային Միության երկրներում 1996-2016 թթ.*[2]

[1] Կազմվել է մեր կողմից ըստ Geostat.ge կայքի տվյալների:

[2] Կազմվել և հաշվարկվել է հեղինակի կողմից՝ Worldwide Governance Indicators, http://info.worldbank.org/governance/wgi/#home տվյալների բազայի հիման վրա:

Աղյուսակ 2

Նախկին Խորհրդային Միության երկրներում համաթիվը 1996-2016 թթ.՝ նվազման կարգով (տոկոսային գնահատմամբ՝ 0-ից 100)[1]

Երկրները	Ինտեգրալային համաթիվը, %-ով		
	1996 թ.	2006 թ.	2016 թ.
Էստոնիա	73.78	85.23	87.42
Լիտվա	72.25	72.15	79.07
Լատվիա	65.00	73.23	76.48
Վրաստան	21.90	44.20	59.90
Հայաստան	37.90	37.90	42.80
Մոլդովա	48.56	35.11	36.42
Ուկրաինա	29.44	35.57	35.00
Ղազախստան	20.28	24.71	30.56
Ադրբեջան	12.80	19.50	26.20
Ռուսաստան	28.60	23.36	25.29
Ղրղզստան	29.40	17.46	24.70
Բելառուս	28.20	10.95	23.80
Ուզբեկստան	7.57	6.72	10.21
Տաջիկստան	4.34	12.44	9.89
Թուրքմենստան	9.13	1.77	4.01

Աղյուսակ 3

Կոռուպցիայի դեմ պայքարի ցուցանիշները նախկին ԽՍՀՄ երկրներում[2]

Երկրները	1996	2006	2008	2016	Փոփոխությունը, տոկոսային կետ	
					2006 թ. 1996 թ. նկատմամբ	2016 թ. 2008 թ. նկատմամբ
Հայաստան	38.17	29.76	27.67	32.69	-8.41	5.02
Ադրբեջան	2.69	12.68	11.17	17.79	9.99	6.62
Վրաստան	1.08	58.54	54.37	73.56	57.46	19.19
Լատվիա	50.01	68.78	63.59	67.31	18.77	3.72
Լիտվա	68.28	60.49	61.65	73.08	-7.79	11.43
Էստոնիա	69.89	81.95	81.07	84.62	12.06	3.55
Բելառուս	42.47	31.71	32.04	47.60	-10.76	15.56
Ուկրաինա	13.44	24.88	19.90	19.71	11.44	-0.19
Մոլդովա	39.78	31.22	31.55	14.42	-8.56	-17.13
Ռուսաստան	15.05	19.51	12.14	18.75	4.46	6.61
Ղազախստան	12.37	17.56	16.02	20.67	5.19	4.65
Ղրղզստան	17.20	5.85	6.31	12.02	-11.35	5.71
Ուզբեկստան	12.90	17.07	14.08	10.10	4.17	-3.98
Տաջիկստան	5.91	16.10	6.25	12.50	10.19	6.25
Թուրքմենստան	15.59	1.95	2.43	4.33	-13.64	1.90
Միջինը	26.99	31.87	29.35	33.94	4.88	4.59

[1] Կազմվել և հաշվարկվել է հեղինակի կողմից՝ Worldwide Governance Indicators, http://info.worldbank.org/governance/wgi/#home տվյալների բազայի հիման վրա:

[2] Կազմվել և հաշվարկվել է՝ Worldwide Governance Indicators, http://info.worldbank.org/governance/wgi/#home տվյալների բազայի հիման վրա:

Մեկ փաստ ևս. Համաշխարհային բանկի «Բիզնեսի վարում» զեկույցի համաձայն՝ 2004-2007 թվականներին Վրաստանը դարձել է ամենաշատ բարեփոխումներն անցկացրած երկիրն աշխարհում: Մասնավորապես՝ Վրաստանը բիզնես վարելու դյուրինության ցուցանիշով վարկանիշային աղյուսակում 137-րդ տեղից բարձրացել է մինչև 11-րդ հորիզոնական՝ գերազանցելով Գերմանիային ու Ֆրանսիային:

Խոսելով Վրաստանի տնտեսական հեղափոխական քայլերի մասին՝ չենք կարող չնշել, որ տնտեսական բարեփոխումների հաջողությունը պայմանավորված էր նաև այդ բարեփոխումների հեղինակ Կախա Բենդուկիձեով, որը Սաակաշվիլու հետ շատ կարճ հանդիպումից հետո (այդ հանդիպումը, ըստ 2000-2005 թվականներին Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինի խորհրդական Անդրեյ Իլարիոնովի, տևել է մեկ ժամ), տվել է իր համաձայնությունը տեղափոխվել Վրաստան՝ փոխվարչապետի լիազորություններով, և գլխավորել բարեփոխումների իրականացումը[1]: Բենդուկիձեին անվանում են նաև «վրացական տնտեսական հրաշքի հայր»:

Շատ հետաքրքիր են հենց նրա որոշ դիտարկումներ, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց կարևորությունը: Խոսքը վերաբերում է հատկապես այսպես կոչված անցումային շրջանի զարգացող երկրներին, որոնց թվին է դասվում նաև Հայաստանը: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

«...Ցանկացած գործի համար անհրաժեշտ է փող, իսկ որպեսզի շատ գործեր կատարես, հարկավոր է շատ փող: Հարց է ծագում՝ ո՞րն է ավելի լավ՝ մե՞ծ բյուջեն, թե՞ փոքրը:

Այս հարցը առաջանում է, երբ քննարկվում է հարկային օրենսգիրքը: Իսկ նշված հարցադրումը կարո՞ղ է վեճի առարկա լինել. իհարկե ո՛չ, մեծ բյուջեն փոքրից լավ է: Պարզվում է, սակայն, որ իրականում հարցի պատասխանը միանշանակ չէ: Մեծ բյուջե ունենալու երկու ճանապարհ կա. կարելի է մեծ հարկեր սահմանել, կարելի է նաև ամեն տարի պարտքով մեծ գումարներ վերցնել: Առաջինը, ըստ Բենդուկիձեի ձևակերպման, նշանակում է սեփական ոտքերը ջարդել, երկրորդը՝ կախվել: Այսինքն՝ առաջին դեպքում զարգացումը կլինի շատ դանդաղ տեմպերով, երկրորդի դեպքում շարժումը արագ կլինի, սակայն կբերի ֆինանսական աղետի: Իմիջիայլոց, կարելի է և համատեղել. սահմանել բարձր հարկեր և մեծ վարկեր վերցնել: Այս առումով Հունաստանի օրինակը շատ ուսուցանելի կարող է լինել, վատ առումով, իհարկե»[2]:

Վրաստանը գնաց յուրահատուկ ճանապարհով: Առաջինը և ամենակարևորը, որ իրականացվեց, խնդիր դրվեց հնարավորինս փոքրացնել պետության միջամտությունը, մասնակցությունը տնտեսական կյանքին: Այս որոշման հիմքում մի քանի երկրների փորձն էր, որն ուսումնասիրվել էր ամերիկացի տնտեսա-

---

[1] Տե՛ս Անդրեյ Իլարիոնով. վրացական տնտեսական բարեփոխումների հրաշքը տեղի ունեցավ Կախա Բենդուկիձեի շնորհիվ, javakhq.info , 14.11.2014

[2] Каха Бендукидзе, Михаил Саакашвили, Великое возрождение: Грузия http://old.inliberty.ru/library/667-Velikoe-vozrozhdenie-Gruziya

գետների կողմից 1960-1990 թվականների համար. ոսումնասիրման առարկան բյուջեի և տնտեսական աճի կախվածությունն էր: Պարզվել էր, որ որքան մեծ են կառավարական ծախսերի բաժինը ՀՆԱ-ում (այսինքն՝ որքան մեծ է բյուջեն), այնքան փոքր են տնտեսական աճի տեմպերը: Նշված ժամանակաշրջանի ամբողջ ընթացքում կայուն զարգացում էին ապրել Հոնկոնգը, Սինգապուրը, Թայվանը, Հարավային Կորեան և Մալայզիան: Այս հինգ երկրների տնտեսական աճի միջին տեմպը եղել էր 5 տոկոս, իսկ ՀՆԱ-ում բյուջեի տեսակարար կշիռը կազմել էր 25 տոկոս:

Վրաստանում իրականացված փոփոխությունների արդյունքում, օրինակ, հարկահավաքության արդյունավետությունը զգալիորեն բարձրացավ: Եթե 2000 թ. հարկային մուտքերը կազմում էին ՀՆԱ-ի 14.7%-ը, ապա 2007 թ. այդ ցուցանիշը կազմում էր արդեն 25.8%[1], իսկ 2012 թ.՝ 24.0%[2]:

Վերը նշված խնդրի իրականացման առաջին քայլերից մեկը եղավ եկամտային հարկի դրույքաչափի իջեցումը մինչև 20 տոկոս, դրանից հետո նույն տրամաբանությամբ ոչ միայն իջեցվեցին հարկային դրույքաչափերը, այլև կրճատվեց հարկերի քանակը: Սրան զուգահեռ կրճատվեցին գործող, պետության կողմից սահմանված, տնտեսական կյանքը կարգավորող բազմաթիվ նորմատիվներ, որն էլ կարճ ժամանակում տվեց իր արդյունքները. Վրաստանը ոչ միայն դուրս եկավ քաղաքական ճգնաժամից, այլև հաջողությամբ հաղթահարելով անցյալի ժառանգության ծանր հետևանքները՝ կոռուպցիան, ահռելի չափերի հասնող բյուրոկրատական ապարատի գոյությունը, մենաշնորհների առկայությունը, հարկային ծանր բեռը, փախստականների՝ երկար տարիներ անլուծելի համարվող խնդիրները, համարձակ և կանխատեսելի գործողություններով երկիրը հանեց տնտեսական անհուսալի վիճակից, վերականգնվեց և հաջողությամբ առաջ շարժվեց՝ մոռացության մատնելով անցյալի տխուր հուշերը, հատկապես քայքայված, առանց հեռանկարի մնացած տնտեսության մասին;

Ամփոփում

Այն, ինչ տեղի ունեցավ Վրաստանում, «վարդերի հեղափոխության» արդյունքում իշխանություն եկած քաղաքական ուժի նպատակամղված, հետևողական, համարձակ, շատ դեպքերում ցավոտ և ոչ հաճելի այն քայլերի արդյունքն էր, որոնք ունեին կոնկրետ նպատակներ, թիրախներ: Իրականացվող բարեփոխումներն իսկապես հեղափոխական էին և ուղղված էին հասարակության բոլոր խավերին: Արդյունքում Վրաստանն ընդամենը 3-5 տարիների ընթացքում փաստացի չկայացած, հեռանկար չունեցող, կոռումպացված երկրից վերածվեց ազատ, կոռուպցիայից ձերբազատված, շատ կողմերով շատ երկրների և մարդկանց համար գրավիչ երկրի:

Բարեփոխումները պետք չէ հետաձգել: Պետք չէ մտածել, որ քաղաքական ուժերի այլ հարաբերակցության կամ տնտեսության մեկ այլ իրավիճակի պայ-

---

[1] Ministry for foreign affairs of finland.Aid for trade Needs Assesment//Georgia.Trade and Human development.April 2011,page 14.

[2] Աղբյուրը՝ https://regnum.ru/news/fd-abroad/georgia/1687579.html

մաններում դրանք ավելի հաջող կլինեն: Բացի այդ, բարեփոխումները պետք է լինեն բավականաչափ արմատական: Վերջապես, բարեփոխումները չեն կարող իրականացվել ըստ որոշ կոշտ ալգորիթմի: Սա միշտ էլ ստեղծագործ գործընթաց է, և այն սկսելու համար հարկավոր է միայն քաղաքական կամք:

Այսօր, իհարկե, հեղափոխություն իրականացնողները իշխանության չեն, սակայն նրանք իրականություն դարձրին ժողովրդավարական երկրներին հատուկ ամենակարևոր միսիան. իրենցից հետո երկրում իշխանափոխությունը տեղի ունեցավ առանց ուժային միջամտության, ազատ, ժողովրդավարական ընտրությունների միջոցով, որն էլ լավագույն գրավականն է երկրի ապագա հաջողությունների հասնելու համար[1]:

Օգտագործված գրականության ցանկ

1. Антикоррупционные реформы в Грузии - OECD.org, http://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Georgia-Round-4-Monitoring-Report-RUS.pdf
2. Бендукидзе Каха , Саакашвили Михаил, Великое возрождение: Грузия ...ttp://old.inliberty.ru/library/667-Velikoe-vozrozhdenie-Gruziya
3. Буракова Л., Почему у Грузии снова получилось? https://republic.ru/posts/26156
4. Буракова Лариса. Почему у Грузии получилось. М: ООО «Юнайтед пресс», 2011, 271 стр.
5. Назаров В., Уроки либеральных реформ в Грузии https://www.forbes.ru/ekonomika-column/vlast/67978-uroki-liberalnyh-reform-v-gruzii
6. Налоговая реформа Грузии: чему поучиться Украине https://voxukraine.org/ru/nalogovaya-reforma-gruzii-chemu-poichitsia-ukraine-ru/.
7. Токарев А., Реформы Михаила Саакашвили: территория и госуправление. что получилось у Грузии? https://cyberleninka.ru/article/n/reformy-mihaila-saakashvili-territoriya-i-gosupravlenie-chto-poluchilos-u-gruzii/viewer
8. Томас де Ваал, Выбор Грузии: какой курс избрать в период неопределенности? /; пер. с англ. М. Коробочкина, Моск., Центр Карнеги. – М., 2011, 67 с.
9. Филиппова Петра, «Как разрушить мафиозное государство. Опыт Грузии» https://kafkassam.com/как-разрушить-мафиозное-государств.html.
10. Lawson Robert E. and Larisa Burakova. 2014. Georgia's Rose Revolution: How One Country Beat the Odds, Transformed Its Economy, and Provided a Model for Reformers Everywhere. Guatemala City: Universidad Francisco Marroquin.
11. Worldwide Governance Indicators, http://info.worldbank.org/governance/wgi/#home

[1] Տե՛ս Буракова Л., Почему у Грузии снова получилось? https://republic.ru/posts/26156

References
1. Antikorrupcionnye reformy v Gruzii - OECD.org, http://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Georgia-Round-4-Monitoring-Report-RUS.pdf
2. Bendukidze Kaha, Saakashvili Mihail, Velikoe vozrozhdenie: Gruzija http://old.inliberty.ru/library/667-Velikoe-vozrozhdenie-Gruziya
3. Burakova L., Pochemu u Gruzii snova poluchilos'? https://republic.ru/posts/26156
4. Burakova Larisa. Pochemu u Gruzii poluchilos'. M: OOO «Junajted press», 2011, 271 str.
5. Nazarov V., Uroki liberal'nyh reform v Gruzii https://www.forbes.ru/ekonomika-column/vlast/67978-uroki-liberalnyh-reform-v-gruzii
6. Nalogovaja reforma Gruzii: chemu pouchit'sja Ukraine https://voxukraine.org/ru/nalogovaya-reforma-gruzii-chemu-poichitsia-ukraine-ru/.
7. Tokarev A., Reformy Mihaila Saakashvili: territorija i gosupravlenie. chto poluchilos' u Gruzii? https://cyberleninka.ru/article/n/reformy-mihaila-saakashvili-territoriya-i-gosupravlenie-chto-poluchilos-u-gruzii/viewer
8. Tomas de Vaal, Vybor Gruzii: kakoj kurs izbrat' v period neopredelennosti? /; per. s angl. M. Korobochkina, Mosk., Centr Karnegi. – M., 2011, 67 s.
9. Filippova Petra, «Kak razrushit' mafioznoe gosudarstvo. Opyt Gruzii» https://kafkassam.com/kak-razrushit'-mafioznoe-gosudarstv.html.
10. Lawson Robert E. and Larisa Burakova. 2014. Georgia's Rose Revolution: How One Country Beat the Odds, Transformed Its Economy, and Provided a Model for Reformers Everywhere. Guatemala City: Universidad Francisco Marroquin.
11. Worldwide Governance Indicators, http://info.worldbank.org/governance/wgi/#home

Վահագն Խաչատուրյան
Արամ Խաչատուրյան

ՎՐԱՍՏԱՆԻ «ՎԱՐԴԵՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ԴԱՍԵՐԸ ԵՎ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համառոտագիր: Վրաստանը տնտեսապես ԽՍՀՄ-ի ամենազարգացած հանրապետություններից մեկն էր: Բայց Խորհրդային Միության փլուզումից հետո, որն ուղեկցվեց տնտեսական կապերի և ավանդական շուկաների կորստով, երկրի զբոսաշրջության, արդյունաբերության և գյուղատնտեսության բավականին ուժեղ դիրքերը մեծապես թուլացան: Երկրի տնտեսությունը վերականգնելու համար անհրաժեշտ էին բարեփոխումներ, մասնավորապես՝ անհրաժեշտ էր անցում կատարել կառավարման կենտրոնացված պլանային ինստիտուտներից շուկայականի:

Սակայն 90-ականներին և նոր դարաշրջանի առաջին տարիներին Վրաստանի կառավարությունն այդպես էլ ի վիճակի չեղավ բարեփոխումներ կատա-

ել: Կոռուպցիայի բարձր մակարդակը, ազգային ռեսուրսների անարդյունավետ օգտագործումը ձախողման հիմնական պատճառներն էին:

Բանալի բառեր. հեղափոխություն, կոռուպցիա, ժողովրդավարություն, հարկեր, ոստիկանություն, պետական ապարատ, բյուրոկրատիա, ազատականություն

Ваагн Хачатурян
Арам Хачатурян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» ГРУЗИИ И УРОКИ «РЕВОЛЮЦИИ РОЗ»

Аннотация: Грузия в экономическом отношении была одной из наиболее развитых республик СССР. Но после распада Советского Союза, сопровождавшегося утратой экономических связей и традиционных рынков, довольно сильные позиции страны в области туризма, промышленности и сельского хозяйства в значительной степени ослабли. Для восстановления экономики страны требовались реформы, в частности, был необходим переход от централизованных институтов управления к рыночным.

Однако в 90-ые и в первые годы нового века правительству Грузии так и не удалось провести реформы. Высокий уровень коррупции, неэффективное использование национальных ресурсов были главными причинами провала.

Ключевые слова: революция, коррупция, демократия, налоги, полиция, государственный аппарат, бюрократия, либерализм

Vahagn Khachaturyan
Aram Khachaturyan

"THE ECONOMIC MIRACLE" OF GEORGIA AND THE LESSONS OF "ROSE REVOLUTION"

Abstract: Georgia was economically one of the most developed republics of the USSR. However, after the collapse of the Soviet Union, accompanied by the loss of economic ties and traditional markets, rather strong positions of the country in tourism, industry and agriculture were significantly weakened. For recovery of the country's economy reforms were necessary, in particular, transition from centralized management institutions to market ones was required.

However, in 90s and in the first of the new century the government of Georgia was not successful in implementing reforms. High level of corruption, inefficient use of national resources were the main reasons for failure.

Keywords: revolution, corruption, democracy, taxes, police, state apparatus, bureaucracy, liberalism

Շողեր Պողոսյան
Անուշ Սարգսյան

ՉԻԼԻԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Ընդհանուր տեղեկատվություն[1]

Բնակչություն՝	18 մլն
Տարածք՝	756.102 կմ²
Մայրաքաղաք՝	Սանտյագո (5,2 մլն)
Պետական միջին աշխատավարձ՝	1021 ԱՄՆ դոլար
Գործազրկության մակարդակ՝	6.7%
Գնաճ՝	2.6%
Կյանքի միջին տևողություն՝	80 տարի
Բնակչության միջին տարիքը՝	33,7 տարի
Կենսաթոշակային տարիքը՝	65/60 տարեկան
Միջին կենսաթոշակի չափը՝	250 ԱՄՆ դոլար
Եկամտահարկ՝	5-ից 40%
ՀՆԱ՝	247 միլիարդ ԱՄՆ դոլար

Ներածություն

Չիլին Լատինական Ամերիկայի ամենաարագ զարգացող տնտեսություններից է և տասնամյակներ շարունակ համարվել է տարածաշրջանի տնտեսական օազիս, իսկ Համաշխարհային բանկի կողմից բազմիցս անվանվել է տարածաշրջանի ամենակայուն տնտեսությունը: Չիլիի տնտեսական հեղափոխության կամ այսպես կոչված հրաշքի վերաբերյալ կարծիքները տարբեր են և հաճախ խիստ իրարամերժ: Ըստ որոշ հետազոտողների՝ երկրում որևէ տնտեսական հրաշք չի եղել, քանի որ Պինոչետի իշխանության գալուն հաջորդող տարիներին նախորդող տարիների համեմատությամբ աղքատության նվազեցում չի գրանցվել: «Չիլիի հրաշք» անվանումը տրվել է ամերիկացի տնտեսագետ, Նոբելյան մրցանակակիր Միլթոն Ֆրիդմանի կողմից: Վերջինիս՝ ազատ շուկայական տնտեսության փիլիսոփայությամբ տպավորված՝ Չիկագոյի տղաները (չիլիացի ուսանողներ, որոնք մեկնել էին ԱՄՆ Չիկագոյի համալսարան, որտեղ ուսումնասիրում էին մոնետարիզմը, որը ենթադրում էր, որ պետությունը պետք է հնարավորինս չմիջամտի շուկայի կարգավորմանը՝ բացառությամբ փողի առաջարկի կառավարմանը) կյանքի կոչեցին Ֆրիդմանի տեսության դրույթները Չիլիում:

Մինչև 1973 թ. Չիլին երկար տարիներ եղել է ժողովրդավարական պետություն: 1960-ականներին Չիլիի արտահանման գերակշիռ մասը կազմում էր պղինձը (կեսից ավելին), ինչը ահռելի կախվածության մեջ էր դնում տնտեսությունը պղնձի համաշխարհային գների տատանումներից: Պղնձի արդյունահանում իրա-

[1] https://visasam.ru/countries/chili

կանացնող ձեռնարկությունների զգալի մասը օտարերկրյա կապիտալով էին, ինչի արդյունքում նրանց եկամուտների գերակշիռ մասն արտահոսում էր երկրից դուրս: Պղնձարդյունաբերությունն այստեղ սկիզբ է առել հենց ԱՄՆ-ից ներկրված տեխնոլոգիաների և ֆինանսական միջոցների շնորհիվ: Արդյունաբերության 1/6-ը գտնվում էր օտարերկրյա (գլխավորապես ԱՄՆ-ի) կապիտալի հսկողության ներքո: 1960-ականների Չիլիին բնորոշ էին մենաշնորհները տնտեսության բոլոր հատվածներում (248 ձեռնարկություններ վերահսկում էին տնտեսության բոլոր հատվածները, որոնց 17%-ին պատկանում էր ընդհանուր ակտիվների 78%-ը, ֆերմաների 2%-ին պատկանում էր հողատարածքների 55%-ը, ԱՄՆ երեք ձեռնարկություններ վերահսկում էին պղնձի արտադրությունը, նմանատիպ իրավիճակ էր նաև առևտրի, ֆինանսական և մյուս հատվածներում): Նմանատիպ մոնոպոլացումը պետության ուղղորդված քաղաքականության արդյունք էր՝ ներառելով տարատեսակ հարկային, մաքսային, վարկային բնույթի արտոնությունների տրամադրումը: Օտարերկրյա ձեռնարկությունների՝ մեծ ծավալով ներկայությունը նպաստում էր երկրի տեխնոլոգիական կախվածությանը: Բնակչության ամենաաղքատ 10%-ին բաժին էր ընկնում համախառն եկամուտի 1,5%, իսկ ամենահարուստ 10%-ին՝ 40,2%-ը[1]: 1970-ականների սկզբին բնորոշ էին անդադար գործադուլները, սպառողական ապրանքների դեֆիցիտը, ինֆլյացիայի խիստ բարձր մակարդակը՝ մինչև 600%: 1970 թ. երկրում նախագահ էր ընտրվել Սալվադոր Ալիենդեն, որն էլ ձեռնամուխ եղավ պղնձի հանքերի, ինչպես նաև օտարերկրացիներին պատկանող այլ սեփականության ազգայնացմանը՝ բնականաբար առաջացնելով օտարերկրյա ներդրողների դժգոհությունը: ԱՄՆ կողմից Չիլիի նկատմամբ մի շարք տնտեսական պատժամիջոցների, ինչպես նաև պղնձի համաշխարհային գների անկման հետևանքով է՛լ ավելի վատթարացավ Չիլիի տնտեսության վիճակը:

1973 թ. իշխանության եկած Պինոչետը մասնավորեցրեց Ալիենդեի կողմից ազգայնացված ձեռնարկությունները: 1975-ից սկսած Չիլիի տնտեսության կառավարումն անցավ Չիկագոյի տղաների լիակատար հսկողության տակ: Մի շարք ոլորտներում անցում կատարվեց նեոլիբերալիզմին, որը ենթադրում էր արտաքին առևտրի ազատականացում, նախկինում ազգայնացված ձեռնարկությունների մասնավորեցում, ազատ շուկայական գներ և պետության սահմանափակ միջամտություն:

Պինոչետի օրոք Չիլին ձեռք բերեց միջազգային հանրության կողմից ճանաչում, ինչը մեծացրեց երկրի ներդրումային գրավչությունը: Չիլիի տնտեսության համար ներկայացված էր շոկային թերապիայի նախագիծ, որը ենթադրում էր արտաքին առևտրի ամբողջական ազատականացում, փողի զանգվածի և պետական ծախսերի կտրուկ կրճատում և շուկայի կարգավորման բացառում: Շոկային թերապիայի կողմնակից էին նաև Համաշխարհային բանկն ու Արժույթի միջազգային հիմնադրամը՝ այն որպես փոխառությունների տրամադրման

[1] Larrain F., Meller P.. The Socialis t-Populis t Chilean Experience, 1970-1973, The macroeconomics of populism in Latin America, Chicago: Univercity Of Chicago press, 1991 (175-222)

անհրաժեշտ նախապայման դնելով[1]: Չիլին կարծես լաբորատոր փորձարկումների օբյեկտ դարձավ. որևէ այլ երկիր չէր համաձայնել շոկային թերապիայի իրականացմանը այդչափ կտրուկ և ընդգրկուն կերպով: Սկզբում ձեռնարկված քայլերը բերեցին տնտեսական ծանր վիճակի՝ ինֆլյացիա, գործազրկություն, դեֆիցիտ, սակայն 1982 թ. Չիլին աստիճանաբար սկսեց վերականգնվել: Եվ արդեն 1984 թ. երկրում սկսեց գրանցվել տնտեսական կայուն աճ: 1985-1997 թթ. ընդունված է անվանել Չիլիի «ոսկե ժամանակաշրջան», երբ ՀՆԱ-ի տարեկան աճը միջինը կազմում էր 7.1%[2]:

Կիրթ հարկաբյուջետային քաղաքականությունը և պահուստները պաշտպանում են Չիլիին Չինաստանի տնտեսության զարգացման տեմպերի հնարավոր անկումից: Բայց Լատինական Ամերիկայի մնացած մասը շատ կախված է ՉԺՀ-ից: Inter-American Development Bank-ի գնահատականների համաձայն՝ Չինաստանի ՀՆԱ-ի աճի տեմպի 1% անկումը (IADB մոդելում համապատասխանում է արդյունաբերական մետաղների գների 10% նվազմանը) կհանգեցնի Արգենտինայում ՀՆԱ-ի 1,6% անկմանը, Վենեսուելայում՝ 1,4%, Պերուում՝ 0,5%, Կոլումբիայում՝ 0,4% և Չիլիում՝ ՀՆԱ-ի ընդամենը 0,1% անկմանը[3]:

Երկիրը գործնականում քանդել է բաշխիչ կենսաթոշակային համակարգը, կրթությունն ու առողջապահությունը մասնավորեցվել են[4]:

Կենսաթոշակային համակարգ

Առաջին անգամ մասնավոր կենսաթոշակային համակարգ Չիլիում ներդրվել է 1981 թ.՝ Աուգուստո Պինոչետի կառավարման տարիներին, այն բանից հետո, երբ երկրի գործող պետական կենսաթոշակային համակարգը հայտնվեց ճգնաժամում. այն ավելի շատ կենսաթոշակներ էր վճարում, քան մուծումներն էին: Քանի որ բարեփոխումն իրականացվեց ռազմական դիկտատուրայի պայմաններում, միջազգային հանրության ուշադրությունը դրա նկատմամբ զգալի չէր: Սակայն 1989 թ.՝ Չիլիում ժողովրդավարության ինստիտուտների հաստատումից հետո, իրավիճակը փոխվեց: Դրան նպաստեցին նաև ֆոնդային շուկայի աճը, խնայողությունների բարձր մակարդակը: Մի շարք տնտեսագետներ Չիլիի հաջողությունները կապում էին կենսաթոշակային համակարգի մասնավորեցման հետ[5]:

Չիլիի պետական կենսաթոշակային համակարգը ներառում է առնվազն երեք տեսակի ծրագիր: Նախ՝ հին համակարգում մնացած անդամների համար

---

[1] Kangas S., The Chicago boys and the Chilean 'economic miracle', 2004.

[2] Gregorio J., Economic Growth in Chile: Evidence, Sources and prospects, Banco Central de Chile, November, 2004.

[3] Как в Латинской Америке удалось построить европейскую экономику, журнал "Коммерсантъ Деньги" №27 , 14.07.2014, стр. 41.

[4] От стабильности до бунта за две недели: в чем причина событий в Чили, https://thebell.io/ot-stabilnosti-do-bunta-za-dve-nedeli-v-chem-prichina-sobytij-v-chili/

[5] Brooks, S.M., "Social Protection and Economic Integration: The Politics of Pension Reform in an Era of Capital Mobility", 35 Comparative Political Studies 491(2002), p. 497.

նախատեսվող կենսաթոշակային ծրագրեր, որոնք կառավարվում են Սոցիալական ապահովության ստանդարտացման ինստիտուտի կողմից (ներկայումս լուծարվել է): Երկրորդ՝ պետությունը խոստանում է նվազագույն տարիքային կենսաթոշակի վճարում մասնավոր կենսաթոշակային համակարգի բոլոր այն մասնակիցներին, ովքեր կենսաթոշակի անցնելու պահի դրությամբ իրենց անհատական հաշիվներում չեն կուտակել բավարար միջոցներ՝ նվազագույն կենսաթոշակին հավասար կամ դրանից բարձր կենսաթոշակ ստանալու համար, և ովքեր համապատասխանում են օրենքով նախատեսվող որոշակի պահանջներին: Տվյալ պահանջներից է առնվազն 20 տարվա ապահովագրական ստաժի առկայությունը: Երրորդ՝ սոցիալական (կամ կարիքավորության վրա հիմնվող) կենսաթոշակային ծրագիրը կենսաթոշակներ է վճարում 65 տարեկանից բարձր անձանց և հաշմանդամներին, եթե նրանց եկամուտը նվազագույն կենսաթոշակի 50 տոկոսից ցածր է:

Չիլիի օրինակը ցույց է տալիս, որ պետությունը կենսաթոշակային խնայողությունների ներդրման միջոցով կարող է ոչ միայն լուծել սեփական տնտեսության խնդիրները, այլև դառնալ ներդրումների դոնոր[1]:

Ըստ Չիլիի համալսարանի միկրոտվյալների կենտրոնի վերլուծության՝ 2017-ի օգոստոսից մինչև 2019-ի օգոստոսը միջին հաշվով բնակչության 10%-ը վաստակել է 7,8 անգամ ավելի, քան մնացած 90%-ը: Որոշ փորձագետներ ներկայումս Չիլիում ընթացող անկարգությունները անվանում են միջին խավի բողոքի ցույց, որը շատ հիմնական կարիքները մասնավոր հատված տեղափոխելու արդյունքում կա՛մ զրկված է որակյալ կրթություն և բժշկական օգնություն ստանալու հնարավորությունից, կա՛մ էլ ստիպված է դրա համար բարձր գին վճարել: Այսպիսով՝ գնահատվում է, որ Չիլիի միջին ընտանիքը կարող է ծախսել իր եկամուտի մոտ 10%-ը կենսաթոշակների համար, իսկ մոտ 40%-ը՝ իր երեխաների ուսման և վերապատրաստման վճարների համար: Արդյունքում դա հանգեցրեց չիլիական տնային տնտեսությունների պարտքային բեռի ավելացմանը: Ըստ Չիլիի Կենտրոնական բանկի՝ շատ ընտանիքներ իրենց եկամուտի ավելի քան 70%-ը ծախսում են պարտքերը մարելու վրա[2]:

Երկրում աշխատանքի արտադրողականությունը շարունակում է մնալ ՏՀԶԿ միջինից գրեթե երկու անգամ ցածր, իսկ եկամուտի բացը երկրի ամենաաղքատների և ամենահարուստ չիլիացիների 10%-ի միջև աշխարհում խոշորագույններից մեկն է: Ջինիի գործակիցը 2017 թ. դրությամբ ՀՀ-ում կազմել է 0.33, իսկ Չիլիում 0.46[3]:

---

[1] Чили – евростандарты, http://chile.polpred.com/upload/pdf/Chili.pdf

[2] Чилийцы отвергают модель, которую в России считали идеальной, http://www.ng.ru/economics/2019-10-28/4_7713_chili.html

[3] Страны 20: Коэффициент Джини, https://www.economicdata.ru/economics.php?menu=demographic&data_type=demography&data_ticker=GINI

Մարդիկ անհանգստացած են ոչ միայն եկամուտի անհավասարությունից, այլև ծերության պահուստի (կուտակումների) անկարողությունից: Չիլիացիները գոհ չեն երկրի ներկայիս կենսաթոշակային համակարգից, որն ամբողջովին կախված է մասնավոր կենսաթոշակային ֆոնդերից: Օրինակ՝ 2016 թվականից ի վեր ամբողջ երկրում բողոքի ցույցեր են սկսվել մասնավոր կենսաթոշակային համակարգի դեմ: Կենսաթոշակային խնայողությունները կուտակվում են մի քանի մասնավոր ֆոնդերում, որոնք կառավարում են 200 միլիարդ դոլարից ավելի գումար, ինչը Չիլիի ընդհանուր ՀՆԱ-ի երկու երրորդն է: Այնուամենայնիվ, կենսաթոշակային վճարները, ի վերջո, չեն բավարարում չիլիացիների սպասումներին[1]: Մարդկանց խոստացել էին, որ իրենք կենսաթոշակի անցնելուց պետք է ստանան աշխատավարձի 70%-ը, եթե նրանք 37 տարվա ընթացքում իրենց եկամուտների 10%-ը հատկացնեն կենսաթոշակին: Արդյունքում, ՏՀԶԿ տվյալներով, միջինում սովորական չիլիացին կարող է հավակնել կենսաթոշակի՝ աշխատավարձի 40%-ից պակաս, և դա այն դեպքում, երբ միջին աշխատավարձը թույլ է տալիս բավարարել միայն անհրաժեշտ մինիմումը: Բացի այդ, չիլիացիների մոտ մեկ երրորդը աշխատում է միայն ոչ ֆորմալ ոլորտում: Երկրների մեծ մասում կենսաթոշակային խնայողությունների և կենսաթոշակային նպաստների բեռը բաժանված է աշխատողների, պետության և գործատուների միջև: Բայց Չիլիում կենսաթոշակի մասին պետք է հոգ տանի միայն աշխատողը:

Այս ամենը նշանակում է, որ չիլիացիները չեն կարող սպասել համապատասխան կենսաթոշակների, իսկ մեծամասնության կենսամակարդակը կվատանա: Ի վերջո, բողոքի ցույցերի հիմնական պատճառը հենց անհավասարության և հեռանկարի բացակայության զգացումն էր: Նույնիսկ Սանտյագոյում 2019 թ. ուղեվարձի համեստ բարձրացումը (4%), որը մեծապես կախված է հասարակական տրանսպորտից, իրականում շատ զգայուն է, առավել ևս, որ ուղեվարձը մեկ տարում երկրորդ անգամ բարձրացավ, և դրանից անմիջապես առաջ էլեկտրաէներգիայի սակագինը բարձրացավ 10%-ով:

ՀՀ կուտակային կենսաթոշակային համակարգը Չիլիի համեմատ բավականին նոր է և իր պայմանական մեկնարկը սկսեց 2008 թ, իսկ պարտադիր կուտակային բաղադրիչը ուժի մեջ մտավ 2014 թ հունվարին[2]: Ներկայումս պարտադիր կուտակային կենսաթոշակ վճարում են 1974 թ. հունվարի 1-ից հետո ծնվածները 2.5%-ի չափով՝ նախկին 5%-ի փոխարեն, պետությունը վճարում է 7.5%՝ նախկին 5%-ի փոխարեն[3], և երկրում գործում են երկու մասնավոր կենսաթոշակային ֆոնդեր՝ Amundi-ACBA Asset Management և C-QUADRAT Ampega Asset Management Armenia: Ի տարբերություն ՀՀ-ի (շահառուն անվճար հիմունքով ֆոնդը փոփոխել կարող է տարեկան մեկ անգամ)՝ Չիլիում տարեկան երկու

[1] Чилийцы отвергают модель, которую в России считали идеальной. Реформы "чикагских мальчиков" привели страну к нестабильности , http://www.ng.ru/economics/2019-10-28/4_7713_chili.html

[2] http://www.irtek.am/views/act.aspx?tid=156203

[3] Գործք, տեղեկատվական ամսագիր, N 103, 2018 (07), էջ 7, www.gortsq.am

անգամ շահառուն անվճար կարող է իր խնայողությունները մի ֆոնդից տեղափոխել մյուսը, միևնույն ժամանակ բաշխել ներդրումները տարբեր ֆոնդերի միջև[1]: ՀՀ-ում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու դեպքում մասնակցից կարող է գանձվել փոխանակման ենթակա փայերի մարման վճար՝ սույն օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան[2]:

Անհավասարության և հեռանկարի բացակայության զգացումներ ևս առկա են մեր բնակչության շրջանում, ինչպես որ Չիլիում (չնայած որ այս համակարգը այնտեղ բավական հին է), և շատերը այն համոզմանն են, որ չգիտեն, թե ապագայում ինչպես է լինելու իրենց կենսաթոշակի վճարման խնդիրը, և թե ուր են ուղղվում իրենց վճարած միջոցները:

Հեռանկարի բացակայության զգացումը կանխելու նպատակով առաջարկում ենք մշակել համապատասխան սանդղակ հետևյալ տրամաբանությամբ. առաջիկա 10 տարվա վճարումներից հետո շահառուն հնարավորություն ունենա գոյացած միջոցների մի մասը (օրինակ՝ մոտ 20%-ը) ուղղել կրթական ոլորտ (տարիքային շեմն անփոփոխ մնալու դեպքում), իսկ հետագա 10 տարիների ընթացքում՝ հիպոթեքային վարկավորմանը և առողջապահությանը: Այն անձինք, որոնք կցանկանան կենսաթոշակի անցնել 65 տարեկանում (տարիքային շեմը փոփոխելով) և ունեն առնվազն 30 տարվա աշխատանքային ստաժ, հնարավորություն ունենան աշխատել՝ օրենքով սահմանված կարգով նախկին իրենց 5%-ից ազատվելով՝ թողնելով վերջին երկու տարվա պարտադիր կուտակային բաղադրիչի ամբողջ 10%-ի վճարումը պետությանը:

Առողջապահական համակարգ

Հաշվի առնելով ներկայումս ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման վերաբերյալ քննարկումներն ու օրենքի նախագծի ներկայացումը՝ մեր կողմից ուսումնասիրվել է Չիլիում գործող առողջապահական համակարգը, քանի որ այն Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից նույնիսկ մոդելային է ճանաչվել այլ զարգացող երկրների համար: Ներկայիս առողջապահական համակարգի հիմքերը դրվել են 1973 թ.՝ Պինոչետի կառավարման օրոք: Նոր ռեֆորմով մրցակցություն ձևավորվեց առողջության պետական և մասնավոր ապահովագրողների միջև՝ խթանելով առողջապահական մասնավոր ծառայությունները: 1993 թ. Համաշխարհային բանկի «Ներդրումներ առողջապահության ոլորտում» հաշվետվության հրատարակումից հետո Չիլին դարձավ առողջապահական ծառայությունների նեոլիբերալ

[1] Деловая Чили, том VIII. Экономика и связи с Россией в 2000-08 гг., 140 стр., с 26 http://polpred.ru/free/demo_chili/book.pdf

[2] «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին, ՀՕ-67-Ն, 21.06.2014:

բարեփոխումների մոդել[1]: Գոյություն ունեցող պետական համակարգին զուգահեռ ձևավորվեց մասնավոր առողջապահական ապահովագրության համակարգը՝ ISAPRE, որը պետք է գերիշխող դառնար: Երկու համակարգերն էապես տարբերվում էին: Պետականի դեպքում անդամները աշխատավարձից վճարում են որոշակի մաս իրենց կարիքներին համապատասխան առողջապահական ծառայություններ ստանալու համար, որը ենթադրում էր ռիսկերի բաժանում և առողջապահական ոլորտի ռեսուրսների ներքին վերաբաշխում, մինչդեռ մասնավոր համակարգն առաջարկում էր առողջապահության ապահովագրական փաթեթներ յուրաքանչյուր անհատի կատարած վճարումներին համապատասխան:

Պետական ապահովագրությունը գլխավորապես սպասարկում է մեծահասակներին և ցածր ու միջին եկամուտ ունեցող բնակչությանը՝ ընդգրկելով ավելի մեծ չափով կանանց, հիվանդությունների ավելի շատ դեպքեր: Պետական և մասնավոր համակարգերը տարբեր կերպ են գործում. առաջինն ուղղված է հիմնականում առաջնային բուժօգնության, իսկ մասնավոր հատվածի ծառայություններն ուղղված են մասնագիտացված երկրորդային և երրորդային ծառայությունների իրականացմանը:

Ազգային առողջապահական հիմնադրամը (FONASA) ստեղծվել է որպես պետական գործակալություն, որը հավաքագրում և կառավարում էր պետական համակարգը նախընտրող աշխատակիցների (կամ այն քաղաքացիների, որոնք ISAPRE ընկերության ցանկալի փաթեթը չէին կարող իրենց թույլ տալ) պարտադիր վճարումներից և պետական բյուջեից ստացվող հատկացումներից ձևավորվող ֆինանսական միջոցները: Ելնելով ապահովագրական փաթեթից և ֆինանսական ծածկույթից՝ FONASA-ի շրջանակներում գործում են ապահովագրության 4 կատեգորիաներ՝

A – ամենաաղքատներ,

B - խիստ ցածր եկամուտ ունեցողներ,

C - ցածրից միջին եկամուտ ուենցողներ,

D - միջինից բարձր եկամուտ ունեցողներ:

B,C,D կատեգորիաները իրավունք ունեն, պետական կազմակերպություններից բացի, ընտրել առողջապահական ծառայություններ մատուցող այլ կազմակերպություններ, իսկ A կատեգորիայի քաղաքացիները թե՛ հիմնական, թե՛ հիվանդանոցային առողջապահական ծառայությունների համար կարող են դիմել միայն պետական հաստատություններ[2]:

ISAPRE-ն իրավունք ուներ սահմանել առանձին ապահովագրավճարներ՝ հաշվի առնելով անհատական ռիսկային գործոնները: ISAPRE-ի ծախսերը ցածր եկամուտ ունեցող անդամների համար խիստ ցածր էին, և պետական պարտադրանքի արդյունքում այն պարտավորվեց ծածկել որոշակի աղետալի ծախ-

[1] Investing in Health, World Development Report 1993, World Bank, Oxford University Press

[2] Unger J.P., Chile's neo liberal health reform: an assessment and a critique, PLoS Medicine, 5 (4), e79, p. 0542-0547, April, 2008.

սեր, սակայն, այդուհանդերձ, գրպանից կատարվող վճարումները շարունակում էին խիստ բարձր մնալ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ թանկարժեք փաթեթներով ապահովագրվողները գրեթե կարիք չեն ունենում հավելյալ ծախսեր կատարելու, մինչդեռ ավելի էժան փաթեթներով ապահովագրվածները ենթակա են լրացուցիչ ֆինանսական բեռի:

Ներկայումս Չիլիում աշխատակիցների կողմից բժշկական ապահովագրության հիմնադրամներից որևէ մեկին կատարվում է ամսական վճարում՝ աշխատավարձի 7%-ի չափով: Հիմնադրամները ստանում են նաև պետական ֆինանսավորում չաշխատող բնակիչների բժշկական ապահովագրության համար: Հիմնադրամները հսկվում են առողջապահության նախարարության կողմից: Բնակչության գրպանից կատարվող ծախսերը կազմում են 38%, ինչը հիմնականում ընդգրկում է ցածր եկամուտով ընտանիքները: 2013 թ. չիլիացիների 76.3%-ը պատկանում էր FONASA պետական հիմնադրամին, 18.2%-ը՝ ISAPRE մասնավոր հիմնադրամին, մոտ 3%-ը՝ զինված ուժերի առողջապահական համակարգին, իսկ մյուսները չունեին ապահովագրություն: Ընտանեկան եկամուտի մոտավորապես 5%-ը ուղղվում է առողջապահական ծախսերին, և ընտանիքների մոտ 4%-ը բախվում է աղետալի ծախսերի հետ (սահմանագիծը՝ 30%)՝ ենթարկվելով աղքատացման ռիսկի[1]:

Չնայած Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից Չիլիի առողջապահական համակարգի ներդրումը համարվել է կարևոր անցում Լատինաամերիկյան տարածաշրջանի սոցիալական քաղաքականության մեջ[2], մի շարք հետազոտողներ համամիտ չեն դրա արդյունավետության հետ՝ պնդելով, որ այն խորացնում է անհավասարությունն ու չի ապահովում ծառայությունների մատուցման պատշաճ որակ: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գրասենյակի (UNDP) 1998 թ. հաշվետվության մեջ խոսվում է այն մասին, որ Չիլիի բնակչության կարծիքով առողջապահական համակարգը հիմնականում ձախողվում է և չի երաշխավորում բավարար պաշտպանություն սոցիալական ապահովության տեսանկյունից[3]:

Ներկայումս ՀՀ-ում քննարկում է առողջապահական ոլորտում իրականացվելիք բարեփոխումների նախագիծը: Այն ներդրվելու դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել համակարգի առավել ակնհայտ թերությունները, որոնք առկա են եղել Չիլիում.

- մասնավոր հատվածի ծառայությունների համար լրացուցիչ վճարումների անհրաժեշտություն, ինչը նվազեցնում է առողջապահական ծառայությունների հասանելիությունը ցածր եկամուտ ունեցողների համար, ուստի սահմանափակվում է նրանց մատուցվող ծառայությունների ցանկը,

---

[1] WHO, PAHO - Pan-American Health Organization, Chile, Health in the Americas, 2017.

[2] Missoni E., Solimano G., Towards Universal Health Coverage: the Chilean experience, World Health Report Background Paper 4, WHO Health System financing, 2010, p. 28.

[3] Garcia A, Trejos JD, Guzman M., Contreras R., Vergara M., Las relaciones laborales en la reformas de la salud y educacin, ILO/OIT, Lima, 2000.

- մասնավոր հատվածն ավելի պատրաստված է ավանդական առողջապահական խնդիրների ծախսերի ծածկմանը, մինչդեռ Չիլիում առկա հիմնական հիվանդություններին, զարգացող երկրներին բնորոշ համաճարակային իրավիճակներին դժվարությամբ է արձագանքում,
- առողջապահական մի շարք ծառայությունների համար գրպանից վճարվող մեծ գումարների անհարժեշտությունը, որոնք հասու չեն հատկապես աղքատներին:

Այնուամենայնիվ, պետք է ընդգծել, որ բժշկական ծառայությունների համար գրպանից կատարվող վճարումների շնորհիվ հնարավոր եղավ մշակել մասնավոր առողջապահական նախագիծ ըստ պահանջարկի, որոնք նվազեցրին ISAPRE-ի շրջանակներում գրպանից վճարումների բարձր և անկանխատեսելի ռիսկերը:

Բարձր տեխնոլոգիաներ

Ձեռնարկատիրության և նորարարության բնագավառում համագործակցության զարգացման նոր հետաքրքիր ռազմավարության օրինակ է Չիլիի ծրագիրը, որն ուղղված է նպաստելու նոր ձեռնարկությունների ստեղծմանը՝ «Ստարտափ Չիլի»: Այս ծրագիրը մշակվել է Չիլիի կառավարության կողմից, և դրա իրականացումը հանձնվել է Զարգացման ազգային գործակալությանը (CORFO): Ծրագրի նպատակը Չիլիում նոր հեռանկարային ձեռնարկությունների ներգրավումն է դրանց ձևավորման փուլում, որպեսզի նրանք երկիրը օգտագործեն որպես հարթակ միջազգային շուկաներ մուտք գործելու:

Երկրի տնտեսական զարգացման ռազմավարությունը բաղկացած է օտար երկրների փորձի վերլուծությունից: Ամենամոտ համակարգը, որը փորձում են կիրառել չիլիացիները, Հարավային Կորեայի և Թայվանի փորձն է, որտեղ կրթության համակարգը կարևոր դեր է խաղում: Երկիրը զարգացնում է պրակտիկայի և վերապատրաստման համակարգ, խրախուսում ուսումը արտերկրում, հատուկ ուշադրություն հատկացնում հայրենասիրական և թիմային ոգու զարգացմանը: Կառավարությունն ակնկալում է, որ արտերկրում ուսում ստացող ուսանողների վերադարձը կնպաստի ուժեղ ստարտափ թիմերի ձևավորմանը և արտերկրում ստացված գիտելիքների կիրառմանը: Պետությունը թույլ է տալիս ուսանողներին մեկնել արտերկիր և մտավախություն չունի, որ ուսանողները կարտագաղթեն երկրից: Առաջնորդվում է նրանով, որ ապագայում երկրում տնտեսական իրավիճակը բարելավվելը կլինի ուսանողների Չիլի վերադարձի հիմնական դրդապատճառը:

Startup-Չիլի ծրագիրը օգնում է ուժեղացնել թիմերը և ներգրավել միջազգային աշխատակիցների, որոնց շնորհիվ օտարերկրացին կարող է ստանալ 3-ամյա վիզա և համաֆինանսավորում պետությունից՝ 40,000 ԱՄՆ դոլարի չափով: Հիմնական պայմանը Չիլիում գրանցված ստարտափում աշխատելն ու Լատինական Ամերիկայի շուկայի վրա կենտրոնացած լինելն է: Այս քաղաքականության շնորհիվ տարեցտարի Չիլիում ավելանում է ամբողջ մայրցամաքից ձեռնարկատերերի ներհոսքը՝ հնարավորություն տալով ձեռնարկատերերին

ստեղծել բիզնես և արտասահմանում սովորելու հնարավորություն ունենալ: Նման վստահելի հարաբերությունների արդյունքները հայտնի են դառնում մի քանի տարի հետո, երբ շրջանավարտները սկսում են վերադառնալ երկիր:

Համանման ստարտափ ծրագրի օրինակ է «Ներուժ» Սփյուռքի ստարտափ ծրագիրը, երբ մենք Սփյուռքից ակնկալում ենք նոր գիտելիքների, գաղափարների ու կարողությունների ներուժը: Ծրագրին կարող են դիմել այն ստարտափերը, որոնք՝

- ունեն նախնական ձևավորված թիմ,
- համահիմնադիրներից առնվազն մեկը ազգությամբ հայ է,
- ստարտափը գտնվում է (նախապես նշված) զարգացման փուլերից որևէ մեկում,
- համահիմնադիրներից մեկը պատրաստակամ է հաստատել և գրանցել ստարտափը Հայաստանում և այստեղ ապրել առնվազն մեկ տարի[1]:

Սփյուռքահայերը հրավիրվում են Հայաստան ոչ թե հիմնվելու և ապրելու, այլ իրենց տեխնոլոգիական ստարտափը Հայաստանում գրանցելու և զարգացնելու հնարավորություն ստանալու համար[2]: Ծրագիրը մեկնարկել է 2018 թվականին (այն իրականացնում էր Սփյուռքի նախարարությունը, որն արդեն կազմալուծվել է): Ի տարբերություն Չիլի ստարտափի՝ այստեղ կարևորվում է հիմնադիրներից մեկի ազգությամբ հայ լինելը, նման սահմանափակում Չիլիում չկա: Չկա նաև տեխնոլոգիական ուղղվածություն, այնտեղ շեշտադրված են նորարարությունը և Լատինական Ամերիկայի շուկաները որպես հարթակ կիրառելը: Կարծում ենք, որ «Ներուժ» ստարտափ ծրագրի համար նպատակահարմար կլինի՝ հիմնադիրներից մեկի ազգությամբ հայ շեշտադրումը արվի առաջին և երկրորդ տեղերի համար, իսկ երրորդ տեղին հավակնելու հնարավորություն տալ՝ ոչ թե պարտադիր պայման դնելով ազգությամբ հայ լինելը, այլ հաղթելուց հետո իրենց թիմ հայազգի անդամի ներգրավելը: Այսպիսով ծրագիրն ավելի մեծ ճանաչում ձեռք կբերի, և հետագայում ներդրումների ավելացման հնարավորությունն ավելի կմեծանա: Իսկ առաջին և երկրորդ տեղերի համար առնվազն մեկ տարի ՀՀ-ում բնակվելը առաջարկում ենք դարձնել 2 տարի (Չիլիում այն 3 տարի է և, ինչպես ցույց է տալիս փորձը, արդյունավետ է):

Կրթության ոլորտ

Չիլիում զարգացման տեսանկյունից բավական մեծ ճանապարհ են անցել կրթական համակարգի բարեփոխումները: Չիլիի օրինակը ցույց է տալիս, թե ինչպես բաց շուկայական տնտեսության պայմաններում իրավիճակը փոխվում է ազգային «գիտելիքների շուկայում»: Մասնավորեցման գործընթացը ազդում է նաև բուհերի և պետության միջև ֆինանսական հարաբերությունների վրա: Պետությունը դադարում է լինել հիմնական «բարերարը», և գնալով ավելի ու

[1] https://starthub.am/news/4048.html

[2] https://armeniasputnik.am/armenia/20191026/20883572/neruz-2-y-poppoxutyunneri-e-entarkvel-sakayn-pahanjvatc-e-mnum-amboxj-ashxarhum.html

ավելի է կիսվում ֆինանսական պատասխանատվության բեռը հենց «կրթական արժեքներ սպառողների», մասնավոր բիզնեսի, բարեգործական կազմակերպությունների միջև՝ միաժամանակ պահպանելով ազգային կրթության համակարգի զարգացման ընդհանուր ռազմավարության ուրվագծման իրավունքը, դրա նկատմամբ վերահսկողություն իրականացնելը, ինչպես նաև կրթության որակի բարելավման խթանումը:

Չիլիում ուսանողների համար ֆինանսական աջակցություն է ցուցաբերվում հիմնականում ուսանողական վարկերի և ոչ թե կրթաթոշակների տեսքով. 2010 թվականի տվյալներով՝ Չիլիում ուսանողների միայն 14 տոկոսն է ստացել կրթաթոշակներ (ԱՄՆ-ում՝ 51%-ը): Ըստ BBC Mundo-ի՝ չիլիացի ուսանողների 70%-ը դիմում է այնպիսի վարկերի, որոնք այնքան թանկ են, որ շատերը կրթության ավարտից հետո մնում են պարտապաններ 10 տարի. պետության կողմից երաշխավորված վարկերը տրամադրվում էին տարեկան 6%-ով, 15 տարի մարման ժամկետով: Այն ուսանողների համար, ովքեր ընդգրկված են Համերաշխության հիմնադրամում որպես առավել կարիքավորներ, տոկոսադրույքը իջեցվել է մինչև 2%: 2012 թվականի տվյալներով՝ շուրջ 30 հազար ուսանողի ընդհանուր պարտքը կազմում էր 400 հազար դոլար[1]:

Համեմատության համար նշենք, որ Բնակարան երիտասարդներին վարկային կազմակերպության (Ծրագիր) կողմից վերաֆինանսավորվող ուսանողական վարկը մեր երկրում տրամադրվում է ուսանողներին փաստացի տարեկան 9,5%-ով (2-ից 3%-ը սուբսիդավորվում է), սակայն, ի տարբերություն Չիլիի, վարկառուին տրվում է արտոնյալ ժամանակահատված, որի ընթացքում յուրաքանչյուր ամիս վճարվում են միայն տոկոսները, իսկ վարկի մարում սկսում են իրականացնել ուսման ավարտին հաջորդող առաջին ամսվանից[2]:

2012 թ. Պիներան իր պաշտոնավարման ավարտին ուսանողական վարկերի տարեկան տոկոսադրույքը 6%-ից իջեցրեց 2% և մեծացրեց գրանտային ծրագրերի ու կրթաթոշակների պետական ֆինանսավորման ծավալները[3]: Բողոքի նոր ցույցերը բերեցին նրան, որ Բաչելետի իշխանության գալուն պես 2016 թ. Չիլիի խորհրդարանը հաստատեց համալսարաններում անվճար բարձրագույն կրթության մասին օրենքը: Այս օրենքի ընդունումը կարևոր քայլ էր Միշել Բաչելետի կառավարության կողմից մեկնարկած կրթության բարեփոխման շրջանակներում: Մասնավոր համալսարանները նույնպես կարող էին միանալ այս համակարգին՝ պայմանով, որ բավարարվեն որոշակի պահանջներ՝ առևտրային նպատակների բացակայություն, հավատարմագրում յուրաքանչյուր չորս տարին մեկ և մի քանի այլ պայմաններ:

---

[1] Deberia ser gratuita la education en Chile? - www.bbc.co.uk (15.09.2011); New higher education law cuts university costs but doesn't placate protesting students. - www.wenr.org; Centro de estudios MINEDUC. Estadisticas de la Education, 2012.

[2] https://www.conversebank.am/hy/state/

[3] La Camara de Diputados aprueba proyecto de ley que crea una subvention para la clase media.- www.mineduc.cl (15.01.2013).

Օրենքի համաձայն՝ 2016-ից Չիլիի բոլոր պետական համալսարաններում ուսումը անվճար է: Նախատեսվել է, որ մինչև 2020 թվականը Չիլիում բարձրագույն կրթությունն անվճար կլինի[1]:

Միջին մասնագիտական կրթության ոլորտում առկա խնդիրների պատճառով ձևավորվում են այն բացերը, որոնք ազդում են աշխատուժի շուկայի վրա և հանգեցնում են սոցիալ-աշխատանքային շարժունակության բարձրացման[2]: Կրթություն-աշխատաշուկա փոխհարաբերությունների միջև Չիլիում նկատվում է լուրջ հակազդեցություն: Մի կողմից՝ տնտեսության առաջատար ճյուղերը պահանջում են բարձր որակավորված աշխատուժ, մյուս կողմից՝ համատարած առկա է քիչ կրթված աշխատուժի պահանջարկ ոչ ֆորմալ հատվածում: Եվ այդ հակազդեցությունը խանգարում է աշխատաշուկայի արդիականացմանը:

Չիլին եզակի կրթական համակարգ ունեցող երկիր է: Այս հանրապետությունում գործում է վաուչերի համակարգ, որը ներառում է պետական բյուջեից կրթական հաստատությունների ֆինանսավորումը: Ավելին, ֆինանսավորումն իրականացվում է ինչպես պետական դպրոցներում, այնպես էլ մասնավոր[3]: Կրթությունը Չիլիում հարևան երկրների համեմատ բավականին բարձր մակարդակի վրա է[4]: Համատեղ ֆինանսական մասնակցության մոդելի շրջանակներում անընդհատ ավելանում է պետական սուբսիդավորումներ ստացող մասնավոր ուսումնական հաստատությունների քանակը[5]:

Կրթական վաուչերները առաջին անգամ հայտնվեցին Չիլիում 1981 թ.: Դրանց իրականացումը միտված էր մի շարք խնդիրների լուծմանը, մասնավորապես՝ ենթադրվում էր, որ վաուչերների ներդրումը կբարձրացնի ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաների կրթության մատչելիությունը և կբարելավի դպրոցական կրթության որակը, ինչպես նաև կրթական հաստատությունների արդյունավետությունը: Վաուչերների ներդրումով մասնավոր դպրոցներում ուսանողների թիվը զգալիորեն աճեց: 1990-ի սկզբին ծրագիրը ընդգրկում էր ուսանողների ավելի քան մեկ երրորդը՝ ընդգրկվածության ընդհանուր թվից: Մասնավոր և մունիցիպալ դպրոցներում սովորող նույն սոցիալական խմբի ուսանողների գիտելիքների որակի փորձարկման արդյունքները ցույց են տվել, որ մասնավոր դպրոցներում ուսանողները ունեն ավելի բարձր մակարդակ: Բացի այդ, վաուչերի ֆինանսավորման ծրագրին մասնակցող մասնավոր դպրոցներում մեկ ուսանողի համար միավորի արժեքը ցածր էր, քան մունիցիպալ դպրոցներում: 1990 թվականին Չիլիի կառավարությունը մեծացրեց կրթության ծախսերը և ավելացրեց վաուչերի արժեքը: Արդյունքում այն դպրոցները, որոնցում հիմ-

---

[1] https://regnum.ru/news/2042919.html

[2] Hopenhayn M., El encadenamiento educacion y empleo: entre eslabon perdido y reproduction de las desigualadas//Tendencias en foco, 2012, N 22. - www.redetis.org.ar

[3] Ваучер Образовательный:денежный сертификат, выданный родителям ученика со стороны госу дрства для оплаты обучения. Словарь бизнес-терминов. Академик.ру. 2001.

[4] https://visasam.ru/emigration/latinoamerica/zhizn-i-rabota-v-chili.html

[5] Chile: recent policy lessons and emerging challenges. - World bank institute. Washington. 1999.

նականում սովորում էին ցածր եկամուտ ունեցող ընտանիքների ուսանողները, ստանում էին հասցեական ֆինանսավորում և տեխնիկական աջակցություն[1]:

Ուսումնական վաուչերի հիմնական գործառույթներն են՝ սպառողների (կրթություն ստացողների) ընտրության հնարավորությունների ընդլայնում, կրթության համակարգում շուկայական հարաբերությունների զարգացում, կրթական ծառայությունների որակի բարելավում, կրթական ոլորտում ֆինանսական հոսքերի թափանցիկության ապահովում: Քանի որ ընտանիքները կարող են ընտրել, թե որ դպրոցն ուղարկել իրենց երեխաներին (և նրանց վաուչերը կիրառել), իսկ դպրոցների ֆինանսավորումը ուղղակիորեն կախված է այս սխեմայի ներքո ուսանողների թվից, առաջանում են այսպես կոչված քվազիշուկաները[2]. Դպրոցները ստիպված են լինում մրցել՝ առաջարկելով ավելի լավ և (կամ) բազմազան ծառայություններ ուսանողների համար: Բացի այդ, վաուչերները թույլ են տալիս նպատակային աջակցություն ունենալ բնակչության աղքատ հատվածների համար՝ դրանով իսկ նպաստելով հասարակության մեջ սոցիալական արդարության սկզբունքի իրականացմանը[3]:

Ներկայիս աշխատաշուկան պահանջում է լրացուցիչ և շարունակական կրթության և ստեղծագործ կարողությունների զարգացման անհրաժեշտություն: Կրթության շարունակականությունը խթանելու նպատակով՝ կրթական համակարգի վաուչերներ կարելի է ներդնել հետբուհական համակարգում: Նպատակահարմար ենք գտնում սկզբնական շրջանում ներդնել պիլոտային ծրագրի ձևով՝ աշխատաշուկայի պահանջարկից ելնելով վաուչերին տալով համապատասխան ոլորտի ուղղվածություն: Վաուչերների ներմուծումը նաև կընդլայնի «մասնավոր հատված-պետություն» համագործակցության շրջանակը:

Նման վկայագրերի ներմուծումը, անկասկած, թույլ կտա սովորողներին ավելի շատ հնարավորություններ ստանալ իրենց կրթության տեղը ընտրելու և համապատասխան որոշում կայացնելու համար, իրենց հերթին՝ ուսումնական հաստատությունները կդառնան մրցակիցներ՝ ներգրավելու լավագույն ուսանողներին, իսկ կրթությանը հատկացված պետական միջոցները կօգտագործվեն առավել արդյունավետ և նպատակային: Եվ վերջապես, այս համակարգում այսօր նպատակային ներդրում անելը դառնում է մեր վաղվա հաջողության գրավականը:

Արտահանում

Տնտեսագետների մեծամասնության շրջանում լայնորեն ընդունելի է, որ Չիլին բարձր կայուն աճ ապահովել է իր ազատ շուկայական քաղաքականության

---

[1] https://studme.org/65911/ekonomika/obrazovatelnye_vauchery

[2] Քվազիշուկան արդյունքն է շուկայական հարաբերությունների արհեստական պարտադրման որևէ ոլորտում (որտեղ այս կամ այն պատճառով տեղի չի ունենում շուկայի բնական զարգացում)՝ նպատակ ունենալով բարձրացնել ընդհանուր արդյունավետությունը և բաշխել ապրանքները (ծառայությունները) շուկայի մասնակիցների միջև մրցակցության հաշվին:

[3] Fernandes R., Rogerson R., School Voucher as a Redistribute Device. An analysis of Three Alternative Systems. The Economics of School Choice. University of Chicago Press, 2003, p. 195–226.

շնորհիվ, չնայած որ առանձին հետազոտողներ բերում են հակափաստարկներ: Այսպես՝ Ամիր Լեբդիուին, վերլուծելով Չիլիի արտահանման կառուցվածքը 1960-ից ի վեր, այն կարծիքին է, որ նոր ճյուղերի ձևավորման ներուժի մեծացման և արդյունքում արտահանման դիվերսիֆիկացման գործընթացում որոշիչ դերը պատկանում է պետական և շուկայական ուժերին: Լեբդիուին ուսումնասիրել է նոր ճյուղերին ուղղված միջոցների և ներուժի զարգացման կարևոր դերը (պղնձից բացի համեմատական առավելություններ ունեցող այլ ոլորտների ձևավորման գործում)՝ եզրակացնելով, որ վերջին տասնամյակներում Չիլիի՝ որպես լատինամերիկյան ամենաարագ աճող տնտեսություն հանդիսանալու գլխավոր պատճառը պղնձի բարձր գինն է: Իսկապես, Չիլիի տնտեսական աճը 2014-2017 թթ. դանդաղել է պղնձի գնի անկման հետևանքով, ինչը բացասաբար է ազդել մասնավոր ներդրումների և արտահանման վրա: Հեղինակն ուսումնասիրել է Չիլիի ձեռքբերումների հիմքում ընկած մեխանիզմները՝ հատուկ ուշադրություն դարձնելով նոր ճյուղերի ձևավորման և տնտեսության դիվերսիֆիկացման վրա:

Ներկայումս Չիլիում հանքարդյունաբերությունից հետո սաղմոնի արտադրությունն ամենամեծ արտահանման ծավալներն ունի (ձկնամթերքի արտահանումը 2018 թ. կազմել է 7.8%), մինչդեռ մինչ 1980-ականները այն եղել է գրեթե աննշան: Մինչ շատ մասնագետներ ոլորտի զարգացման գործում կարևորում են 1980-ականների ազատ առևտրային քաղաքականությունը, Ակիո Հոսոնոն պնդում է, որ պետք է դիտարկել դրանից ավելի վաղ տեղի ունեցած տեղական ներուժի ձևավորման գործընթացը, ինչը հնարավորություն կտա հասկանալ, թե ինչպես է այդ ոլորտը կուտակել իր զարգացման համար անհրաժեշտ գիտելիքները[1]: 1960-ականներից սկսած այս ճյուղի հաջողության մեջ որոշիչ դերակատարում ուներ պետական միջամտությունը մի քանի դրսևորումներով.

- երկկողմ գիտական և տեխնիկական համագործակցության ծրագրեր, ինչպիսին էր Ճապոնիա-Չիլի սաղմոն նախագիծը,
- պետական և մասամբ պետական գործակալությունների ակտիվ գործունեությունը,
- համագործակցություն գիտահետազոտական լաբորատորիաների հետ և այլն:

Սաղմոնաբուծությունը ահռելի նշանակություն է ունեցել զբաղվածության տեսանկյունից. մոտ 8000 ուղղակի և 2200 անուղղակի աշխատատեղեր 1992 թ., 38400 ուղղակի և 15000 անուղղակի աշխատատեղ 2004 թ. երկրի հարավային շրջաններում, որտեղ զբաղվածության հնարավորությունները խիստ սուղ էին[2]:

---

[1] Hosono A.,'Genesis of Chilean Salmon Farming', in A. Hosono, M. Iizuka and J. Katz (eds) Chile's Salmon Industry: Policy Challenges in Managing Public Goods, 2016, pp. 21– 44. Tokyo: JICA Research Institute.

[2] Iizuka M., Gebreeyesusb M., Using Functions of Innovation Systems to Understand the Successful Emergence of Non-traditional Agricultural Export Industries in Developing Countries: Cases from Ethiopia and Chile, The European Journal of Development Research, 2016.

2018 թ. տվյալներով Չիլին գինու արտահանմամբ աշխարհում գրավում է 5-րդ հորիզոնականը՝ զիջելով Ֆրանսիային, Իտալիային, Իսպանիային և Ավստրալիային, մինչդեռ մինչև 1990-ականները գինու արտահանման ծավալներով Չիլին որևէ կերպ աչքի չէր ընկնում: Իսկ արդեն 1990-ականներին չիլիական գինու արտահանման ավելի քան 50%-ը բաժին էր ընկնում Եվրոպային, արտահանող ընկերությունների թիվը 2003 թ. դարձավ 110՝ 1997թ. 37-ի փոխարեն[1]: Միանշանակ նման զարգացման համար կարևոր գործոն էին բարենպաստ հարկային քաղաքականությունն ու տնտեսական միջավայրը, սակայն միայն դրանք բավարար չէին ճյուղի նման արագընթաց զարգացումն ապահովելու համար, քանի որ տրամաբանորեն նմանատիպ արդյունք պետք է դիտարկվեր նաև մյուս ճյուղերում, ինչը տեղի չունեցավ: Եվրոպացի և ամերիկացի ներդրողներին Չիլին գրավել է իր գերազանց բնական պայմաններով, սակայն պետության դերն այստեղ չպետք է անտեսել, քանի որ առողջ և բյուրոկրատիայից զերծ տնտեսության ստեղծումը, կայուն տնտեսական համակարգը, ձևավորված գույքային իրավունքներն ու պարզ օրենքները, ի տարբերություն տարածաշրջանի մյուս երկրների, ներդրողներին թույլ տվեցին վստահությամբ կառուցել իրենց բիզնեսն այստեղ:

Լատինամերիկյան մյուս երկրներից չիլիական գինին առանձնացավ շնորհիվ բարձրորակության ֆրանսիական մոդելի: Բաց շուկան և խաղողի տարբեր տեսակների մշակման սահմանափակումների վերացումը հնարավորություն տվեցին նոր սարքավորումներ ներմուծել և ներդնել դրանք ճյուղի տեխնիկական զարգացման համար: 1980-ականների սկզբին ներքին շուկայում սպառման կրճատումը ստիպեց արտադրողներին նոր շուկաներ փնտրել՝ պահանջելով նորարարական տեխնոլոգիաների կիրառում: Առաջին գլխավոր նորարարությունը փայտե տակառների փոխարեն ֆերմենտացիոն գործընթացում չժանգոտվող պողպատի կիրառումն էր: Գինու որակն էապես բարելավվեց կաղնու փոքր տակառների օգտագործման շնորհիվ: Այս ժամանակահատվածում նորարարությունները այլ երկրներից փոխանցման արդյունք էին և ոչ տեղական գիտահետազոտական աշխատանքների: Օտարերկրյա տեխնոլոգիաների ներդրումը հիմնականում երկու ուղիով էր տեղի ունենում.

- «սովորել ուսումնասիրելով», երբ մասնագետները պետական ֆինանսավորմամբ մեկնում էին այլ երկրների փորձն ուսումնասիրելու,
- միջազգային խորհրդատուների միջոցով, որոնք հրավիրվում էին Չիլի իրենց փորձով և գիտելիքներով կիսվելու համար:

Ողջ աշխարհում մասնագետների փոխանակման համակարգի առավելությունն այն է, որ նրանք ծանոթանում են տարբեր մեթոդների ու համադրությունների, ինչը թույլ է տալիս կիրառել իրենց մոտ առկա իրավիճակին ամենաշատ համապատասխանող մեթոդը: Նոր գիտելիքների ձեռքբերման մյուս աղբյուրներն են գինու միջազգային ցուցահանդեսները, տոնավաճառները, հրատարակումները,

[1] Benavente J.M., Technology, adaptation and exports, How some developing countries got it right, The World Bank, 2006.

դասընթացներն ու հավաքները: Գիտահետազոտական ծրագրերի շրջանակներում ձեռնարկությունները համագործակցում են համալսարանների հետ՝ հաճախ տրամադրելով տարեկան ֆինանսավորում հետազոտողներին:

1974 թ. ստեղծված Արտահանման խթանման գրասենյակը (ProChile) աջակցում և կոորդինացնում էր փոքր և միջին ձեռնարկությունների՝ արտահանմանն առնչվող գործունեությունը, ֆինանսավորում արտահանմանը նպաստող ծախսերի (տոնավաճառներին մասնակցություն, ճանապարհային և մարքեթինգային ծախսեր և այլն) գրեթե կեսը: Օտարերկրյա շուկաներ, օր.՝ սկանդինավյան շուկա ներթափանցելիս Չիլին օգտագործեց այնտեղ բնակվող չիլիացիների գիտելիքները տեղական շուկաների վերաբերյալ՝ նրանցից շատերին աշխատանքի ընդունելով այնտեղ գտնվող գրասենյակներում[1]:

Արտահանման խթանման գրասենյակի (ProChile) ֆինանսական աջակցությունը շատ արժեքավոր էր փոքր արտադրողների համար, այն նաև տեղեկատվություն էր տրամադրում՝ միջազգային շուկայում հեշտությամբ կողմնորոշվելու համար[2]: Գյուղատնտեսության նախարարության կից կառույցները կարգավորում էին ոլորտին վերաբերող օրենքները և վիճակագրական տվյալների հավաքագրման և ամփոփման շնորհիվ տեղեկացնում գինեգործներին առկա տենդեցների մասին, որպեսզի թույլ չտան այս կամ այն տեսակի խաղողի կամ գինու ավելցուկային առաջարկը: Խիստ կարևոր նշանակություն է ունեցել նախարարության բուսասանիտարական գրասենյակը, որը տեղեկատվություն է տարածել հիվանդությունների և վնասատուների վերաբերյալ:

Փորձենք արտահանման տեսանկյունից զուգահեռներ տանել ՀՀ տնտեսության և Չիլիի տնտեսության միջև: Հանքահումքային արտահանումը կազմում է մեր արտահանման մեծ մասը և 2018 թ. ԱՎԾ տվյալներով կազմել է 26.7%-ը, այն դեպքում, երբ 2017 թ. այն կազմել է 30.2% -ը, այսինքն՝ ողջ արտահանման գրեթե 1/3-ը[3]:

Պղինձը, իսկապես, Չիլիի տնտեսության առանցքն է, այստեղ այս մետաղը կոչվում է oro rojo - «կարմիր ոսկի»: Չիլին պղնձի աշխարհի խոշորագույն արտահանողն է (համաշխարհային արտադրության ավելի քան մեկ երրորդը), ինչպես նաև պղնձի վերամշակման և մոլիբդենի պողպատե արժեքավոր հավելանյութի (ենթամթերքի) համաշխարհային արտադրության 28%-ը բաժին է ընկնում նրան[4]: Արտահանման կառուցվածքում պղնձի հանքաքարը, զտված պղինձը և պղնձի առաջնային վերամշակման արտադրանքները կազմում են ավելի քան 50%: Լեռնահանքային արդյունաբերությունը, ըստ էության, կարող

---

[1] Morel-Astorga P., Patterns of Entrepreneurship, Develoment of Chilean Wine Industry 1850-2000, Lund Papers in Economic History, Development Economics No. 74, 2002.

[2] http://www.prochile.gob.cl

[3] ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 132:

[4] https://www.kommersant.ru/doc/2498160

է համարվել բարձր տեխնոլոգիական տնտեսության մաս[1]: Չիլիի տնտեսությունը կախված է արտահանումից և պղնձի գներից: Կախվածության առումով նույնը կարելի է ասել ՀՀ-ի համար, սակայն եթե Չիլին կարողանում է մատակարարել աշխարհին պղնձի առաջնային վերամշակման արտադրանք, ապա նույնը չի կարելի ասել մեր երկրի համար: Այս առումով Հայաստանը՝ որպես փոքր երկիր, հանքահումքային ռեսուրսները պետք է խնայողաբար օգտագործի և փորձի արտահանել հավելյալ արժեքով, իսկ դրա միակ ճանապարհը տեղում մետաղե արտադրատեսակների արտադրություն կազմակերպելն է, մյուս կողմից՝ պղնձի խնայողաբար արտահանմանը կարող է նպաստել այլ մետաղների արտահանումը: Հաշվի առնելով ներկայումս աշխարհում աճող էլեկտրամոբիլների արտադրությունը, հետևաբար նաև լիթիում իոնային մարտկոցների պահանջարկը, որտեղ կիրառվող հումքը հիմնականում լիթիումն ու կոբալտն են, դրանք կարող են նպաստել, որ Չիլին ապագայում, պղնձի արտահանմանը զուգահեռ, անցում կատարի 21-րդ դարի «սպիտակ ոսկու»՝ լիթիումի արտահանմանը (Չիլիում բոլորովին վերջերս ստեղծվել է լիթիումի ազգային հանձնաժողով), որովհետև հենց այստեղ է կենտրոնացված լիթիումի աշխարհի պաշարների շուրջ 40%-ը[2]: ՀՀ-ն այսօր պղնձից կախվածության հետագա կրճատման և դիվերսիֆիկացման ընդլայնման անհրաժեշտություն ունի: ՀՀ-ն այս առումով կարող է նաև իր հիդրոհանքային ռեսուրսների հիման վրա ստեղծել հազվագյուտ մետաղների (ինչպիսիք են լիթիումը, գերմանիումը, բորը, ռուբիդիումը և այլն) անմիջական արտադրություն՝ դրանով իսկ մասամբ սահմանափակելով հանքահումքային արտադրանքի արտահանումը[3]: Ըստ գնահատված հաշվարկների՝ Հանքավանի ջրերը տարեկան դուրս են բերում մակերես 14 տ լիթիում[4]: Ինչ վերաբերում է արմատական հանքավայրերին, լիթիումի պաշարներ կան Հրազդանի երկաթի հանքավայրի և Աբովյանի երկաթի հանքավայրի ընդերքում, ընդ որում՝ Աբովյանի հանքավայրում լիթիումի պաշարները ավելի շատ են, քան Հրազդանի հանքավայրում[5]: Անհրաժեշտ է իրականացնել հանքային և թերմալ ջրերի մետաղաբանության լայնածավալ հետազոտություն, իրականացնել հիդրոհանքային ռեսուրսներում հազվագյուտ մետաղների պարունակության գնահատում, ինչպես նաև մշակել մետաղների կորզման տեխնոլոգիան՝ իհարկե, նախապես հաշ-

---

[1] «From Natural Resources to the Knowledge Economy: Trade and Job Quality» (От природных ресурсов к разумной экономии: производительность и качество труда), Дэвид де Ферранти (David de Ferranti), Гуилермо Перри (Guillermo Perry), Даниэль Ледерман (Daniel Lederman), Вильям Мэлони (William Maloney), Всемирный банк, 2002 г.

[2] http://rareearth.ru/ru/pub/20161026/02870.html

[3] Մ. Կ. Արշակյան, «Հազվագյուտ մետաղները ՀՀ հիդրոհանքային ռեսուրսներում և նրանց արդյունահանման հեռանկարները», Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 2005, 2, էջ 123-128:

[4] Նույն տեղում, էջ 124:

[5] Հ. Ս. Ավագյան, ՀՀ մետաղական օգտակար հանածոների գնահատումն ըստ մարզերի, մաս 2 (Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի, Տավուշի և Արագածոտնի մարզեր), Եր., «Գիտություն», 2009, 200 էջ, էջ 113-120:

վարկելով երկարաժամկետ հատվածի համար այդ արտադրության արդյունավետությունը ՀՀ տնտեսության համար: Վերջիններս կարող են դառնալ այլընտրանքային հումք ներկայիս արագ զարգացող մեքենաշինության ոլորտում: Անմիջապես հանքային ջրերից թանկարժեք տարրերի կորզման տեխնոլոգիան էկոլոգիապես մաքուր է և քիչ ծախսատար:

Անտառահատումները, օդի աղտոտումը, հանքարդյունաբերության հետ կապված խնդիրները, հողի էրոզիայի և ջրի սակավությունը Չիլիի էկոլոգիայի վրա ազդող խնդիրներ են: Մի երկիր, որ հարուստ է աշխարհի շատ բույսերի և կենդանիների տեսակներով, կանգնած է կենսաբազմազանության կորստի առջև[1]: Այս առումով մեր երկրի ծառահատումները, հանքարդյունաբերության խնդիրները ևս առաջ են բերել օդի աղտոտվածության, կենսաբազմազանության վտանգներ: Սակայն եթե Չիլին ընդգրկված է աշխարհում օդի առավել աղտոտվածությամբ տասը երկրների շարքում, ՀՀ-ում էլ բավական բարձր է օդի մեջ ծանր մետաղների տեսակարար կշիռը, ուստի մենք նման երևույթներից կարող ենք խուսափել և էկոլոգիապես մաքուր միջավայր ապահովել լայնամասշտաբ այլընտրանքային էներգակիրների կիրառմամբ: Հարկավոր է հնարավորինս մատչելի դարձնել այլընտրանքային վերականգնվող էներգիայի տարածումը: Հատկապես մարզերում տնային տնտեսություններին հնարավորություն ընձեռել արագ և լայնամասշտաբ ներդրմանը. վերջինս կնպաստի ջերմոցային տնտեսությունների լայն զարգացմանը, ինչպես նաև կհանդիսանա հավելյալ եկամտի աղբյուր: Նոր կառուցվող հաստատություններին (առևտրային կենտրոններ, հիվանդանոցներ, կրթական հաստատություններ, տեխնոլոգիական կենտրոններ) խրախուսել արևային վահանակներ տեղադրելու: Դա կարող է լինել շինարարական թույլտվության վճարից ազատման ձևով, գույքահարկի ժամանակավորապես զրոյական կամ ցածր հարկման դրույքաչափի ձևով: Գյուղատնտեսական ոչ բերրի հողերը կարելի է վերածել արևային «ֆերմաների», ինչն արվում է Չիլիում: Վերջին հինգ տարվա ընթացքում այս երկիրը էլեկտրաէներգիա ներմուծողից կարողացել է բավարարել ներքին պահանջարկը ընդհուպ մետրոպոլիտենի շահագործում և համագործակցության ընդլայնման միջոցով մոտ ապագայում նույնիսկ մտադիր է դառնալ արտահանող: Ներքին պահանջարկի էլեկտրաէներգիայի խնդիր ՀՀ չունի, սակայն համագործակցության շրջանակների ընդլայնման խնդիր մենք ևս ունենք: Ապագայում արևային վահանակների լայնամասշտաբ ներդրումը պահանջելու է սպառման նոր շուկաներ:

Չիլիի՝ արտահանման նոր ճյուղերի ձևավորման և զարգացման ուղու ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետական նպատակաուղղված քաղաքականության շնորհիվ նախկինում ճանաչում չունեցող ճյուղերը ունակ են ներթափանցելու նոր շուկաներ և դիմակայելու համաշխարհային շուկայի առաջատարների մրցակցությանը: Հենց արտահանումն է տնտեսության գլխավոր

[1] Экологические проблемы стран Латинской Америки в XXI веке, http://greenbelarus.info/articles/07-10-2015/ekologicheskie-problemy-stran-latinskoy-ameriki-v-xxi-veke

շարժիչ ուժը և Չիլիի պարագայում ևս արտահանումն է տարել զարգացման, այլ ոչ թե զարգացման արդյունքում է աճել արտահանումը: Առանձին ճյուղերում արտահանման աճը հանգեցրել է նոր աշխատատեղերի ստեղծմանն ու աղքատության մակարդակի նվազմանը, ինչը խիստ առաջնահերթ նշանակություն ունի նաև Հայաստանում, հատկապես գյուղական շրջաններում:

Կարծում ենք, որ Չիլիում նոր ճյուղերի զարգացմանը և արտահանման խթանմանն ուղղված մեխանիզմներն ու գործիքները կարող են կիրառվել ՀՀ-ում համեմատական առավելություն ունեցող ճյուղերի համար (օրինակ՝ կոշիկի և կաշվե իրերի, թարմ և պահածոյացված մրգերի ու բանջարեղենի արտահանումը և այլն): Չիլիի արտահանման փորձի ուսումնասիրության հիման վրա առաջարկում ենք.

- թիրախային ոլորտ սահմանելով՝ համագործակցել միջազգային կազմակերպությունների հետ, որոնց փորձի փոխանակմանն ու կապիտալի ներգրավմանն ուղղված որոշակի քայլեր պետք է արվեն: Չիլիում ուսումնասիրված երկու ճյուղերի հաջողության մեջ որոշիչ էր միջազգային համագործակցությունը այդ ոլորտի փորձառու օտարերկրյա ձեռնարկությունների հետ:
- Նորարարական տեխնոլոգիաներով ճյուղերի հագեցման համար կառավարության կողմից խրախուսել (աջակցել կապերի հաստատմանը, մասնակի փոխհատուցել ծախսերը) թե՛ տեղական մասնագետների գործուղումները տվյալ ոլորտում առաջատար հանդիսացող երկրներ՝ տեղում ծանոթանալու նորարարական մեթոդներին ու տեխնոլոգիաներին և դրանց կիրառման փորձ ձեռք բերելու, թե՛ օտարերկրյա մասնագետների հրավիրումը՝ սեփական փորձով կիսվելու և առկա իրավիճակին համապատասխան խորհուրդներ տալու նպատակով, ֆինանսավորել և աջակցություն (տաղավարի կառուցում, տարածքի վարձակալություն, կազմակերպիչների հետ համագործակցություն) ցուցաբերել տեղական ձեռնարկություններին միջազգային ցուցահանդես-տոնավաճառներին մասնակցելիս:
- Պետական մակարդակով պաշտոնական կապեր ձևավորել ֆերմերների և գիտահետազոտական հաստատությունների միջև, ինչի շնորհիվ ձեռք բերված գիտելիքներն ու փորձը արագորեն կփոխանցվեն ֆերմերներին և կկիրառվեն: Ձևավորված կապերի շնորհիվ ֆերմերների առջև ծագած խնդիրների լուծմանն ուղղված միջոցներ կառաջարկեն այդ հաստատությունները:
- Որպես ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի վերաբերյալ տեղեկացվածության մեծացման միջոց՝ անհրաժեշտ է խթանել ագրարային զբոսաշրջության զարգացումը, ինչը կնպաստի արտաքին շուկաներում տեղական արտադրանքի ճանաչելիությանը և, հետևաբար, սպառման ընդլայնմանը:
- Հաշվի առնելով հայկական Սփյուռքի լայն աշխարհագրական սփռվածությունը՝ օգտագործել այդ ներուժը օտարերկրյա շուկաներ հայկական ապրանքների առաջմղման նպատակով: Տեղական շուկաների, ինչպես նաև տվյալ երկրներում առկա առանձնահատկությունների (օրենսդրական, ազ-

գային, մշակութային), սահմանված ստանդարտների վերաբերյալ մեր հայրենակիցների գիտելիքները կօգնեն առավել քիչ ռեսուրսներ ծախսելով՝ ներթափանցել այդ շուկաները՝ միաժամանակ ամրապնդելով Հայաստան-Սփյուռք կապերը: Թիրախային շուկա երկրներում արտահանման խթանմանն ուղղված գրասենյակների ստեղծումն ու տեղում բնակվող հայերի ներգրավումն այդ գործընթացին կարող են նոր տեմպ հաղորդել արտահանմանը:

Այսպիսով՝ ելնելով Չիլիում առանձին ոլորտների զարգացման փորձից՝ կարող ենք եզրակացնել, որ պարզապես առևտրի ազատականացումն ու խոչընդոտների վերացումը չէին բերի ցանկալի արդյունքների առանց կոնկրետ ոլորտի զարգացմանն ուղղված հատուկ քաղաքականության մշակման և միջոցառումների իրականացման:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավագյան Հ. Ս., ՀՀ մետաղական օգտակար հանածոների գնահատումն ըստ մարզերի, մաս 2 (Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի, Տավուշի և Արագածոտնի մարզեր), Եր., «Գիտություն», 2009, 200 էջ, էջ 113-120:
2. Արշակյան Մ. Կ., «Հազվագյուտ մետաղները ՀՀ հիդրոհանքային ռեսուրսներում և նրանց արդյունահանման հեռանկարները», Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 2005, 2, էջ 123-128:
3. Գործք, տեղեկատվական ամսագիր, N 103, 2018 (07), էջ 7, www.gortsq.am
4. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին, ՀՕ-67-Ն, 21.06.2014:
5. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, ԱՎԾ, էջ 132:
6. Академик.ру. 2001, Словарь бизнес-терминов.
7. Деловая Чили, том VIII. Экономика и связи с Россией в 2000-08 гг., 140 стр., с 26 http://polpred.ru/free/demo_chili/book.pdf
8. От стабильности до бунта за две недели: в чем причина событий в Чили, https://thebell.io/ot-stabilnosti-do-bunta-za-dve-nedeli-v-chem-prichina-sobytij-v-chili/
9. Страны 20: Коэффициент Джини, https://www.economicdata.ru/economics.php?menu=demographic&data_type=demography&data_ticker=GINI
10. Чилийцы отвергают модель, которую в России считали идеальной, Реформы "чикагских мальчиков" привели страну к нестабильности, http://www.ng.ru/economics/2019-10-28/4_7713_chili.html
11. Чили – евростандарты, http://chile.polpred.com/upload/pdf/Chili.pdf
12. Холодков Н. Н., Латинская Америка на пути экономической модернизации, М.: ИЛА РАН, Институт Латинской Америки Российской Академии Наук, Москва, 2013.

13. Экологические проблемы стран Латинской Америки в XXI веке, http://greenbelarus.info/articles/07-10-2015/ekologicheskie-problemy-stran-latinskoy-ameriki-v-xxi-veke
14. Agosin M., Trade and growth in Chile, Cepal Review 68, Augist, 1999.
15. Benavente J. M., Technology, adaptation and exports, How some developing countries got it right, The World Bank, 2006.
16. Brooks S. M., "Social Protection and Economic Integration: The Politics of Pension Reform in an Era of Capital Mobility", 35 Comparative Political Studies 491 (2002), p. 497.
17. Chile GDP Per Capita 1960-2019, https://www.macrotrends.net/countries/CHL/chile/gdp-per-capita
18. Chandra V., Technology, Adaptation, and Exports: how some developing countries got it right, World Bank 2006, pp. 193-243.
19. Chile: recent policy lessons and emerging challenges. - World bank institute. Washington. 1999.
20. Deberia ser gratuita la education en Chile? - www.bbc.co.uk (15.09.2011); New higher education law cuts university costs but doesn't placate protesting students. - www.wenr.org; Centro de estudios MINEDUC. Estadisticas de la Education, 2012.
21. Fernandes R., Rogerson R., School Voucher as a Redistribute Device. An analysis of Three Alternative Systems. The Economics of School Choice. University of Chicago Press, 2003, p. 195–226.
22. «From Natural Resources to the Knowledge Economy: Trade and Job Quality» (От природных ресурсов к разумной экономии: производительность и качество труда), Дэвид де Ферранти (David de Ferranti), Гуилермо Перри (Guillermo Perry), Даниэль Ледерман (Daniel Lederman), Вильям Мэлони (William Maloney), Всемирный банк, 2002 г.
23. Garcia A, Trejos JD, Guzman M., Contreras R., Vergara M., Las relaciones laborales en la reformas de la salud y educacin, ILO/OIT, Lima, 2000.
24. GLOBAL INNOVATION INDEX 2018, Energizing the World with Innovation.
25. Gregorio J., Economic Growth in Chile: Evidence, Sources and prospects, Banco Central de Chile, November, 2004.
26. Hopenhayn M., El encadenamiento educacion y empleo: entre eslabon perdido y reproduction de las desigualadas//Tendencias en foco, 2012, N 22. www.redetis.org.ar
27. Hosono A.,' Genesis of Chilean Salmon Farming', in A. Hosono, M. Iizuka and J. Katz (eds) Chile's Salmon Industry: Policy Challenges in Managing Public Goods, 2016, pp. 21– 44. Tokyo: JICA Research Institute.
28. Investing in Health, World Development Report 1993, World Bank, Oxford University Press.
29. Kangas S., The Chicago boys and the Chilean 'economic miracle', 2004.

30. La Camara de Diputados aprueba proyecto de ley que crea una subvention para la clase media.- www.mineduc.cl (15.01.2013).
31. Lebdioui A., Chile's Export Diversification since 1960: A Free Market *Miracle* or *Mirage*?, Development and Change, Published on behalf of the International Institute of Social Studies, The Hague, October, 2019.
32. Levy D., Interview with Arnold Harberger, An interview with the dean of "Chicago Boys", Federal Reserve Bank of Minneapolis, March, 1999.
33. Iizuka M., Gebreeyesusb M., Using Functions of Innovation Systems to Understand the Successful Emergence of Non-traditional Agricultural Export Industries in Developing Countries: Cases from Ethiopia and Chile, The European Journal of Development Research, 2016.
34. Mesa-Lago C., "Private and Public Pension Systems Compared: an Evaluation of the Latin American Experience", 18 Review of Political Economy 317 (2006), pp. 317–319.
35. Missoni E., Solimano G., Towards Universal Health Coverage: the Chilean experience, World Health Report Background Paper 4, WHO Health System financing, 2010, p. 28.
36. Morel-Astorga P., Patterns of Entrepreneurship, Develoment of Chilean Wine Industry 1850-2000, Lund Papers in Economic History, Development Economics No 74, 2002.
37. Opazo T., The Boys Who Got to Remake an Economy, Slate.com, January, 2016.
38. Schmidt-Hebbel K., Chile's Economic Growth, Cuadernos De Economía, vol. 43 (MAYO), PP. 5-48, 2006.
39. Unger J.P., Chile's neo liberal health reform: an assessment and a critique, PLoS Medicine, 5 (4), e79, p. 0542-0547, April, 2008.
40. WHO, PAHO - Pan-American Health Organization, Chil, Health in the Americas, 2017.
41. World Bank, Chile: Regime of Explicit Health Guarantees (AUGE). In: Report No. 40047 - GLB. Realizing Rights through Social Guarantees, 2007, June 26, pp. 22-32.
42. https://armeniasputnik.am/armenia/20191026/20883572/neruz-2-y-poppoxutyunneri-e-entarkvel-sakayn-pahanjvatc-e-mnum-amboxj-ashxarhum.html
43. https://corfo.cl
44. https://data.worldbank.org/indicator/TX.VAL.TECH.CD?locations=CL
45. https://habr.com/ru/company/happyfarm/blog/192840/
46. https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/5976/9780195208900_overview.pdf?sequence=3&isAllowed=y
47. https://openknowledge.worldbank.org/handle/10986/5976
48. http://rareearth.ru/ru/pub/20161026/02870.html
49. https://regnum.ru/news/2042919.html

50. https://staff.am/en/company/founder-institute
51. https://starthub.am/news/4048.html
52. https://studme.org/65911/ekonomika/obrazovatelnye_vauchery
53. https://visasam.ru/emigration/latinoamerica/zhizn-i-rabota-v-chili.html
54. https://www.conversebank.am/hy/state/
55. http://www.irtek.am/views/act.aspx?tid=156203
56. https://www.kommersant.ru/doc/2498160
57. https://www.minneapolisfed.org/article/1999/interview-with-arnold-harberger
58. https://www.macrotrends.net/countries/CHL/chile/gdp-per-capita
59. https://www.pbs.org
60. https://www.prochile.gob.cl
61. https://www.thenation.com/article/the-chicago-boys-in-chile-economic-freedoms-awful-toll/

References

1. Avagyan H. S., HH metaghakan o'gtakar hanac'oneri gnahatowmn y'st marzeri, mas 2 (Lor'ow, Kotayqi, Gegharqowniqi, Tavowshi & Aragac'otni marzer), Er., «Gitowt'yown», 2009, 200 E'j, E'j 113-120:
2. Arshakyan M. K., «Hazvagyowt metaghnery' HH hidrohanqayin r'esowrsnerowm & nranc ardyownahanman her'ankarnery'», Er&ani petakan hamalsarani gitakan teghekagir, 2005, 2, e'j 123-128:
3. Gorc'q, teghekatvakan amsagir, N 103, 2018 (07), e'j 7, www.gortsq.am
4. «Kowtakayin kensat'oshakneri masin» Hayastani Hanrapetowt'yan o'renqowm p'op'oxowt'yown katarelow masin, HO'-67-N, 21.06.2014:
5. Hayastani Hanrapetowt'yan social-tntesakan vitwaky' 2018 t'. hownvar-dektemberin, AVC', e'j 132:
6. Akademik.ru. 2001, Slovar' biznes-terminov.
7. Delovaja Chili, tom VIII. Jekonomika i svjazi s Rossiej v 2000-08 gg., 140 str., s 26 http://polpred.ru/free/demo_chili/book.pdf
8. Ot stabil'nosti do bunta za dve nedeli: v chem prichina sobytij v Chili, https://thebell.io/ot-stabilnosti-do-bunta-za-dve-nedeli-v-chem-prichina-sobytij-v-chili/
9. Strany 20: Kojefficient Dzhini,
10. https://www.economicdata.ru/economics.php?menu=demographic&data_type=demography&data_ticker=GINI
11. Chilijcy otvergajut model', kotoruju v Rossii schitali ideal'noj, Reformy "chikagskih mal'chikov" priveli stranu k nestabil'nosti, http://www.ng.ru/economics/2019-10-28/4_7713_chili.html
12. Chili – evrostandarty, http://chile.polpred.com/upload/pdf/Chili.pdf
13. Holodkov N. N., Latinskaja Amerika na puti jekonomicheskoj modernizacii, M.: ILA RAN, Institut Latinskoj Ameriki Rossijskoj Akademii Nauk, Moskva, 2013.

14. Jekologicheskie problemy stran Latinskoj Ameriki v XXI veke, http://greenbelarus.info/articles/07-10-2015/ekologicheskie-problemy-stran-latinskoy-ameriki-v-xxi-veke
15. Agosin M., Trade and growth in Chile, Cepal Review 68, Augist, 1999.
16. Benavente J. M., Technology, adaptation and exports, How some developing countries got it right, The World Bank, 2006.
17. Brooks S. M., "Social Protection and Economic Integration: The Politics of Pension Reform in an Era of Capital Mobility", 35 Comparative Political Studies 491 (2002), p. 497.
18. Chile GDP Per Capita 1960-2019,
19. https://www.macrotrends.net/countries/CHL/chile/gdp-per-capita
20. Chandra V., Technology, Adaptation, and Exports: how some developing countries got it right, World Bank 2006, pp. 193-243.
21. Chile: recent policy lessons and emerging challenges. - World bank institute. Washington. 1999.
22. Deberia ser gratuita la education en Chile? - www.bbc.co.uk (15.09.2011); New higher education law cuts university costs but doesn't placate protesting students. - www.wenr.org; Centro de estudios MINEDUC. Estadisticas de la Education, 2012.
23. Fernandes R., Rogerson R., School Voucher as a Redistribute Device. An analysis of Three Alternative Systems. The Economics of School Choice. University of Chicago Press, 2003, p. 195–226.
24. «From Natural Resources to the Knowledge Economy: Trade and Job Quality» (Ot prirodnyh resursov k razumnoj jekonomii: proizvoditel'nost' i kachestvo truda), Djevid de Ferranti (David de Ferranti), Guilermo Perri (Guillermo Perry), Danijel' Lederman (Daniel Lederman), Vil'jam Mjeloni (William Maloney), Vsemirnyj bank, 2002 g.
25. Garcia A, Trejos JD, Guzman M., Contreras R., Vergara M., Las relaciones laborales en la reformas de la salud y educacin, ILO/OIT, Lima, 2000.
26. GLOBAL INNOVATION INDEX 2018, Energizing the World with Innovation.
27. Gregorio J., Economic Growth in Chile: Evidence, Sources and prospects, Banco Central de Chile, November, 2004.
28. Hopenhayn M., El encadenamiento educacion y empleo: entre eslabon perdido y reproduction de las desigualadas//Tendencias en foco, 2012, N 22. www.redetis.org.ar
29. Hosono A.,' Genesis of Chilean Salmon Farming', in A. Hosono, M. Iizuka and J. Katz (eds) Chile's Salmon Industry: Policy Challenges in Managing Public Goods, 2016, pp. 21– 44. Tokyo: JICA Research Institute.
30. Investing in Health, World Development Report 1993, World Bank, Oxford University Press.
31. Kangas S., The Chicago boys and the Chilean 'economic miracle', 2004.

32. La Camara de Diputados aprueba proyecto de ley que crea una subvention para la clase media.- www.mineduc.cl (15.01.2013).
33. Lebdioui A., Chile's Export Diversification since 1960: A Free Market *Miracle* or *Mirage*?, Development and Change, Published on behalf of the International Institute of Social Studies, The Hague, October, 2019.
34. Levy D., Interview with Arnold Harberger, An interview with the dean of "Chicago Boys", Federal Reserve Bank of Minneapolis, March, 1999.
35. Iizuka M., Gebreeyesusb M., Using Functions of Innovation Systems to Understand the Successful Emergence of Non-traditional Agricultural Export Industries in Developing Countries: Cases from Ethiopia and Chile, The European Journal of Development Research, 2016.
36. Mesa-Lago C., "Private and Public Pension Systems Compared: an Evaluation of the Latin American Experience", 18 Review of Political Economy 317 (2006), pp. 317–319.
37. Missoni E., Solimano G., Towards Universal Health Coverage: the Chilean experience, World Health Report Background Paper 4, WHO Health System financing, 2010, p. 28.
38. Morel-Astorga P., Patterns of Entrepreneurship, Develoment of Chilean Wine Industry 1850-2000, Lund Papers in Economic History, Development Economics No 74, 2002.
39. Opazo T., The Boys Who Got to Remake an Economy, Slate.com, January, 2016.
40. Schmidt-Hebbel K., Chile's Economic Growth, Cuadernos De Economía, vol. 43 (MAYO), PP. 5-48, 2006.
41. Unger J.P., Chile's neo liberal health reform: an assessment and a critique, PLoS Medicine, 5 (4), e79, p. 0542-0547, April, 2008.
42. WHO, PAHO - Pan-American Health Organization, Chil, Health in the Americas, 2017.
43. World Bank, Chile: Regime of Explicit Health Guarantees (AUGE). In: Report No. 40047 - GLB. Realizing Rights through Social Guarantees, 2007, June 26, pp. 22-32.
44. https://armeniasputnik.am/armenia/20191026/20883572/neruz-2-y-poppoxutyunneri-e-entarkvel-sakayn-pahanjvatc-e-mnum-amboxj-ashxarhum.html
45. https://corfo.cl
46. https://data.worldbank.org/indicator/TX.VAL.TECH.CD?locations=CL
47. https://habr.com/ru/company/happyfarm/blog/192840/
48. https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/5976/9780195208900_overview.pdf?sequence=3&isAllowed=y
49. https://openknowledge.worldbank.org/handle/10986/5976
50. http://rareearth.ru/ru/pub/20161026/02870.html
51. https://regnum.ru/news/2042919.html

52. https://staff.am/en/company/founder-institute
53. https://starthub.am/news/4048.html
54. https://studme.org/65911/ekonomika/obrazovatelnye_vauchery
55. https://visasam.ru/emigration/latinoamerica/zhizn-i-rabota-v-chili.html
56. https://www.conversebank.am/hy/state/
57. http://www.irtek.am/views/act.aspx?tid=156203
58. https://www.kommersant.ru/doc/2498160
59. https://www.minneapolisfed.org/article/1999/interview-with-arnold-harberger
60. https://www.macrotrends.net/countries/CHL/chile/gdp-per-capita
61. https://www.pbs.org
62. https://www.prochile.gob.cl
63. https://www.thenation.com/article/the-chicago-boys-in-chile-economic-freedoms-awful-toll/

Շողեր Պողոսյան
Անուշ Սարգսյան

ՉԻԼԻԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համառոտագիր: Ցանկացած երկրի զարգացման ուղին արդյունավետ տնտեսական բարեփոխումների իրականացման մեջ է: Չիլին տնտեսական բարեփոխումների օրինակ է ծառայել Լատինական Ամերիկայի երկրներից շատերի համար: Հոդվածում ներկայացված են երկրի առանձին ոլորտներում կատարված բարեփոխումներն ու դրանց հետևանքները. ուսումնասիրվել են Չիլիի կրթական, առողջապահական, կենսաթոշակային համակարգերում կատարված փոփոխությունները, ներկայացվել արտահանման խթանմանն ուղղված մեխանիզմները, տեխնոլոգիաների ոլորտին առնչվող երկրի ինտեգրման փորձը: Կատարված ուսումնասիրության հիման վրա ներկայացվել են առաջարկություններ Չիլիի լավագույն փորձն ու մեխանիզմները ՀՀ-ում տեղայնացնելու ուղղությամբ:

Բանալի բառեր. տնտեսական բարեփոխումներ, առաջընթաց, Չիլի, արտահանում, կենսաթոշակային համակարգ, շուկայի ազատականացում, աղքատություն, կրթական համակարգ

Шогер Погосян
Ануш Саргсян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» ЧИЛИ

Аннотация: Путь развития любой страны заключается в проведении эффективных экономических реформ. Чили послужила примером экономических реформ для многих стран Латинской Америки. В статье представлены реформы, проведенные в определенных отраслях страны, и их последствия, изучены изменения в системах образования и здравоохранения и в пенсионной системе, представлены механизмы, стимулирующие экспорт, и опыт интеграции страны в сферу технологий. На основе проведенного исследования представлены рекомендации по применению лучшей практики и механизмов Чили в Республике Армения.

Ключевые слова: экономические реформы, прогресс, Чили, экспорт, пенсионная системе, либерализация рынка, бедность, система образования

Shogher Poghosyan
Anush Sargsyan

"THE ECONOMIC MIRACLE" OF CHILE

Abstract: The development path of any country is in implementation of effective economic reforms. Chile has served as an example of economic reforms for many countries of Latin America. The article presents the reforms undertaken in certain sectors of the country and their consequences, studies changes in the systems of education and health care and pension system, presents mechanisms for export promotion and practice of integration of the country into the sphere of technologies. Based on the study undertaken, recommendations on application of the best practice and mechanisms of Chile in the Republic of Armenia are provided.

Keywords: economic reforms, progress, Chile, export, pension system, market liberalization, poverty, education system

Ռազմիկ Իսահակյան

ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Ներածություն

Էստոնիան փոքր պետություն է Հյուսիսային Եվրոպայի Բալթյան տարածաշրջանում: Խոշոր քաղաքներն են Տարտուն, Կոխտլա-Ցարվեն, Նարվան, Պյառնուն, Վիլյանդին, որտեղ էլ կենտրոնացած է բնակչության հիմնական մասը: Մայրաքաղաքը Տալլինն է: Էստոնիայի Հանրապետությունը Եվրամիության ամենասակավաթիվ բնակչությամբ երկրներից մեկն է. բնակչությունը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1.319.133 մարդ[1]: Տնտեսությունը բաց է. ակտիվ արտաքին առևտրից բացի երկրում գործում են արտասահմանյան շատ ձեռնարկություններ: Զարգացման մեծ պոտենցիալ ունի ծառայությունների ոլորտը: 2004 թ. ամռանը նրա մուտքը Եվրամիություն էականորեն մեծացրեց զբոսաշրջիկների ներհոսքը, այցերի քանակը աճեց 20-25%-ով: Սահմանի հատման պարզեցման պատճառով եվրոպացիները շահագրգռված են այցելել ԵՄ նոր անդամ պետություններ: Բացի Ֆինլանդիայից և Շվեդիայից, որոնք Էստոնիայի ամենակարևոր տնտեսական գործընկերներն են, Էստոնիա գալիս են նաև Ռուսաստանից և Լատվիայից[2]: Վերջին տարիներին ավելացել են զբոսաշրջիկների այցերը ՌԴ-ից, որոնք իրենց հանգստյան օրերն անցկացնում են Տալլինում, նաև նշում Ամանորը: Նշենք, որ ԷՀ տնտեսական զարգացումներին հիմնականում նպաստել են զբոսաշրջության ոլորտի առաջանցիկ զարգացումները, տնտեսության տարբեր ոլորտների համալիր էլեկտրոնայնացումը, կրթության ոլորտի բարեփոխումները և գնահատման յուրօրինակ մոտեցումները, որոնց հանգամանորեն կանդրադառնանք ստորև բերված աշխատանքում:

Էստոնիայի բնակիչները արագ յուրացրին բջջային հեռախոսները, և ներկայումս կա 1,6 միլիոն օգտագործող, մինչդեռ երկրի բնակչության թիվը ընդամենը 1,3 մլն մարդ է: Էստոնիայում վճարումները կատարվում են կայանելու, հասարակական տրանսպորտով ճանապարհորդելու կամ թանգարաններ այցելելու, ինչպես նաև բանկային ծառայություններից օգտվելու համար: Էստոնիայի բոլոր ձեռնարկություններն ունեն համակարգիչներ, որոնց օգնությամբ իրականացվում է նաև հաշվապահությունը: Էստոնիայի կառավարության նիստերը էլեկտրոնայնացված են, ու թղթային փաստաթղթերը փոխարինվում են համակարգչային էկրաններով: Հանրային ծառայությունները մատուցվում են հիմնականում համացանցի միջոցով, հաշվետվությունները նույնպես կատարվում են էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային գործառնության մեծ ժողովրդականությունը պայմանավորված է նրանով, որ Էստոնիայի յուրաքանչյուր բնակիչ ունի նույնականացման քարտ, որը թույլ է տալիս ապահով կերպով օգտվել համա-

[1] Statistics in Estonia, 2018-2019, https://www.stat.ee/en

[2] Структура экономики Эстонии, https://www.estonica.org, стр 10.

ցանցի ծառայություններից և տեղադրել թվային ստորագրություն: Հավելենք, որ ընտրություններին կա նաև ինտերնետի միջոցով քվեարկելու հնարավորություն[1]:

Տնտեսական ազատության առումով երկիրը լավագույների շարքում է: Հերիթեջ հիմնադրամի «Տնտեսական ազատության ինդեքս 2016 թ. զեկույց»[2]-ում երկրների առաջին տասնյակում են Հոնկոնգը, Սինգապուրը, Նոր Զելանդիան, Շվեյցարիան, Ավստրալիան, Կանադան, Չիլին, Իռլանդիան, Էստոնիան և Միացյալ Թագավորությունը: Էստոնիան զբաղեցնում է 9-րդ հորիզոնականը 174 երկրների շարքում: Հայաստանի Հանրապետությունը 54-րդն է:

Անդրադառնանք ԷՀ տնտեսական ակտիվության ցուցանիշներին:

Էստոնիայի համախառն ներքին արդյունքի (ըստ ավելացված արժեքի) մոտ 71%-ը ձևավորվում է սպասարկման ոլորտում, արդյունաբերության ճյուղերը կազմում են 25%, իսկ արդյունահանման ճյուղերը (ներառյալ՝ գյուղատնտեսությունը և հանքարդյունաբերությունը)՝ մոտ 4%: Ավելին, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշով նախկին ԽՍՀՄ հանրապետությունների շարքում առաջին տեղում է[3]:

Էստոնիայում 2019 թ. գործազրկությունը կազմել է 4,8%՝ 31.487 մարդ, որը 2018 թ. համեմատ աճել է ընդամենը 0,3%-ով: Գործազրկության նման ցածր ցուցանիշը ցույց է տալիս, որ տնտեսությունն ապահովում է զգալի արդյունքներ և կայուն աճ: Հայաստանի Հանրապետությունը 5 անգամ նվազ դիրքերում է գործազրկության մակարդակով, քանի որ այն երկրում տարիներ շարունակ հատել է 20%-ի սահմանագիծը, ինչն ուղղակի խոչընդոտում և զրկում է ՀՀ քաղաքացիներին օգտվելու և՛ ներգնա, և՛ արտագնա զբոսաշրջության հնարավորություններից:

Հիմնական վերլուծություն

Ամեն տարի մոտ 5.000.000 զբոսաշրջիկ այցելում է Էստոնիա, որից շուրջ 4.000.000-ը՝ Ֆինլանդիայից: Նրանց մի մասը առավոտյան գալիս է Հելսինկիից Տալլին և երեկոյան վերադառնում: Իսկ ովքեր գալիս են մի քանի օրով, հասցնում են այցելել թատրոններ և ճանապարհորդել Տալլինի սահմաններից դուրս: Այցի նպատակներում գերակշռում է հանգստի տուրիզմը՝ մոտ 60% մասնաբաժնով, որին հաջորդում են գործուղումները՝ մոտ 20%, և զբոսաշրջության այլ տեսակներ՝ այցելություն հարազատներին և այլն՝ մոտ 15%: Սեմինարներին, գիտաժողովներին և միջոցառումներին մասնակցելու համար գալիս է զբոսաշրջիկների միայն մի քանի տոկոսը[4]: Էստոնիայ այցելող զբոսաշրջիկների թիվը ինչը 3-ից 4 անգամ գերազանցում է երկրի բնակչության թվին և հաճախ համարվում է ռեկորդային ցուցանիշ:

Eesti Pank-ի (Էստոնիայի կենտրոնական բանկ) տվյալների համաձայն՝ 2017 թ. Էստոնիայի եկամուտները զբոսաշրջությունից (տուրիստական ծառայու-

---

[1] Էստոնիայի տնտեսական կառուցվածքը, https://www.estonica.org, էջ 18-20:

[2] Տնտեսական ազատության ինդեքսը ըստ Հերիթեջ հիմնադրամի գնահատականների, 2016 թ.

[3] Структура экономики Эстонии, https://www.estonica.org, стр 1, 11-13.

[4] Statistics in Estonia, https://www.stat.ee/en

թյունների արտահանում) կազմել են 1,9 միլիարդ եվրո, որից 1,4 միլիարդ եվրո ծախսվել է օտարերկրյա զբոսաշրջիկների կողմից[1]: Ի համեմատ Էստոնիայի Հանրապետության՝ ներգնա զբոսաշրջիկները Հայաստանի Հանրապետությունում ծախսել են 1 մլրդ 121.1 մլն դոլար: 2016 թ. համեմատ զբոսաշրջային ծառայությունների արտահանումից ստացված եկամուտները աճել են 152.1 մլն դոլարով կամ 15.7%-ով[2]: 2007-2017 թթ. զբոսաշրջիկներից ստացված եկամուտները 550 մլն-ից հասել են 1 մլրդ 121.1 մլն-ի, որը դիտարկվող 10 տարիների ընթացքում ավելի քան կրկնապատկվել է: Հավելենք, որ այս ցուցանիշի աճին կարող են նպաստել նաև դեպի մեր երկիր կարճատև զբոսաշրջային այցերի ավելացումները, որի զարգացմանը միտված՝ հոդվածում առաջարկվել է փաստական օրինակ:

Տրանսպորտային կապերը զբոսաշրջության ոլորտում կարևոր դեր ունեն և կարող են ազդել հարևան երկրներից այցելող զբոսաշրջիկների թվաքանակի վրա: Ռիգա-Ստոկհոլմ երթուղով նավը նպաստել է երթուղու ուղևորների թվի ավելացմանը և ազդել լատվիական կացարաններում շվեդ զբոսաշրջիկների կողմից գիշերային ժամերի քանակի ավելացման վրա: Էստոնիայի «Զբոսաշրջության զարգացման 2014-2020 թթ. ազգային պլան»-ում[3] նշված է, որ էստոնացիները գերադասում են իրենց արձակուրդներն անցկացնել Էստոնիայում, դա իր դրական ազդեցությունն է ունենում Էստոնիայի տնտեսության վրա: 2014-2020 թթ. Էստոնիայի զբոսաշրջության զարգացման ազգային պլանի ռազմավարական նպատակներն են[4].

- որպես ճանապարհորդական վայրի իրազեկվածության բարձրացում,
- տուրիստական արտադրանքի զարգացում,
- միջազգային հետաքրքրություն ներկայացնող զբոսաշրջային տեսարժան վայրերի զարգացում:

Նշենք, որ ԷՀ-ում կարևոր ոլորտ է ուղևորափոխադրող նավարկությունը, որն անմիջականորեն կապված է զբոսաշրջության հետ: Մոտավորապես 80 կմ հեռավորություն ունեցող Տալլին-Հելսինկի գծով շուրջօրյա փոխադրում են մոտ 7 միլիոն ուղևորների, որոնք եկամուտ են բերում ինչպես էստոնական, այնպես էլ սկանդինավյան ընկերություններին: Կա նաև կանոնավոր ծովային կապ Էստոնիայի և Շվեդիայի միջև: Վերջին տարիներին Tallink ընկերությունը զգալիորեն ամրապնդեց իր դիրքերը Բալթիկ ծովում նավարկությունների ոլորտում, այդ ընկերության նավերը կանգ են առնում Էստոնիայի, Ֆինլանդիայի, Շվեդիայի, Լատվիայի և Գերմանիայի նավահանգիստներում: Տեղական նավափոխադրումը հիմնականում կապված է մայրցամաքի և կղզիների միջև լաստա-

[1] Statistics, https://www.eestipank.ee

[2] Զբոսաշրջային ծառայությունների արտահանումից ստացվող եկամուտները ՀՀ-ում, business for business, 2017թ.:

[3] Riigikogu, https://m.riigikogu.ee

[4] Էստոնիայի զբոսաշրջության զարգացման ազգային պլան, 2014-2020 թթ.:

նավային ծառայության հետ[1] Այնպես որ, ՀՀ կառավարությունը կարող է օրինակ վերցնել և օգտվել նաև տարանցումից՝ ՎՀ-ից դեպի ԻԻՀ և հակառակը, ինչպես նաև այլ երկրներ, որը կապահովի լրացուցիչ մուտքեր պետական բյուջե:

Էստոնիայի Հանրապետության զբոսաշրջային կապիտալն ապահովում են հնագույն անցյալն ու մեծ թվով ճարտարապետական հուշարձանները: Ավելին, 2007-2013 թթ. զբոսաշրջության ոլորտի զարգացման նպատակադրմամբ 200 մլն եվրո է հատկացվել վերոնշյալ ոլորտի զարգացմանը: Ստեղծվել են մի քանի զբոսաշրջային տեսարժան վայրեր, ինչպիսիք են Ծովային թանգարանը, որտեղ այցելուները կարող են տեսնել հին նավերի գեղեցիկ մոդելներ, Տալլինի հեռուստաաշտարակը և այլն: Հավելենք, որ Էստոնիայի խոշոր քաղաքներից Նարվայի տնտեսական կյանքում էլ կարևոր դեր է կատարում Ռուսաստանի Դաշնությունը և Էստոնիայի Հանրապետությունը կապող Բարեկամության կամուրջը, որը զբոսաշրջային այցերի գլխավոր ենթակառուցվածքներից մեկն է: Մինչև 2020 թ. զբոսաշրջության ոլորտի զարգացմանը պետությունը պատրաստվում է ներդնել մոտ 123 մլն եվրո:

Էստոնիայի զբոսաշրջության ոլորտը նման զարգացածության հասել է նաև Եվրամիության անմիջական աջակցությամբ, որը բացի ֆինանսական օգնությունից, առաջադրում է ոլորտի զարգացման հետևյալ քաղաքականությունը[2].

- նպաստել եվրոպական զբոսաշրջության ոլորտի մրցունակությանը,
- նպաստել կայուն, պատասխանատու և բարձրորակ զբոսաշրջության զարգացմանը,
- բարելավել Եվրոպայի հեղինակությունը՝ որպես կայուն և որակյալ զբոսաշրջային նպատակների հավաքածու,
- Եվրամիության հարկաբյուջետային քաղաքականության և գործիքների արդյունավետ օգտագործում:

Նշենք, որ առաջիկայում ԵՄ և ՀՀ կառավարության հաստատած 13 մլն եվրո արժողությամբ զբոսաշրջության զարգացման ծրագիր է կյանքի կոչվելու նաև մեր հանրապետությունում, որը և ներառելու է հյուսիսային երեք մարզերը՝ Շիրակը, Լոռին և Տավուշը: Կես միլիոն եվրո էլ պահուստավորված է ձմեռային մարզաձևերի կենտրոնի համար, որն անկասկած ավելացնելու է զբոսաշրջային հոսքերը: 13 մլն եվրո գումարի շրջանակներում փոքր ձեռնարկատերերը հնարավորություն կունենան նաև ստանալ փոքր դրամաշնորհներ՝ զբոսաշրջության խթանման նպատակով[3]:

Զբոսաշրջության ոլորտի առաջանցիկ տեմպերն ապահովել առանց ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև մատչելիության ապահովման՝ հնարավոր չէ: Այդպիսի ենթակառուցվածքների շարքին է դասվում նաև օդային ուղևորափոխադրող ընկերությունների գործունեությունը. դրանք, բացի կանո-

---

[1] Նույն տեղում:

[2] Եվրամիության զբոսաշրջության զարգացման քաղաքականությունը, 2019 թ.:

[3] ԵՄ կողմից իրականացվելիք ՀՀ հյուսիսային երեք մարզերում զբոսաշրջության խթանման ծրագիր, armenpress.am, 2019 թ.:

նավոր ուղևորափոխադրումներից, հնարավորության դաշտ են ստեղծում զբոսաշրջային հոսքերի համար: Դիտարկվող նկատառումները պատկերավոր դարձնելու նպատակով ներկայացնենք ՀՀ քաղավիացիայի վերջին ձեռքբերումներից մեկը: Հայտնի է, որ աշխարհահռչակ Ryanair ավիաընկերությունը չվերթներ է իրականացնում 2000 ուղղություններով՝ Եվրոպայի ավելի քան 240 օդանավակայաններից: ՀՀ-ն 40-րդ երկիրն է, որտեղ ընկերությունը սկսում է իր գործունեությունը: Լոուքոսթերի թռիչքները Երևանից կմեկնարկեն արդեն 2020 թ. հունվարից: Երևանից երեք նոր ուղղությամբ չվերթներ կիրականացվեն Երևան-Միլան, Երևան-Հռոմ և Երևան-Բեռլին ուղղություններով: Ավելին, քաղավիացիայի կոմիտեն խորհրդարան օրինագիծ է ներկայացնելու, որպեսզի նոր ուղղությունների համար օդի հարկ ասվածը հանվի, և 1998 թ. գանձվող 10 հազար դրամ պետական տուրքն առաջինը հենց Ryanair ընկերությունը չվճարի: ՀՀ քաղավիացիայի ղեկավարությունը շարունակում է տնտեսական ակտիվություն առաջացնող քաղաքականությունը: Բանակցություններ են վարվում նաև հունգարական «Wizz air» ավիաընկերության հետ: Արդյունքում կարող ենք փաստել, որ ավիատոմսերի գների աննախադեպ մատչելի լինելը նպաստելու է ոչ միայն մեր համերկրացիների մուտքին և ելքին, այլև զբոսաշրջային հոսքերի աճին, որը տնտեսական ակտիվության նախահիմքեր կարող է ստեղծել: Կարելի է համեմատականներ անցկացնել Ռիգա-Ստոկհոլմ նավային երթուղու, որը նպաստեց դեպի Էստոնիայի Հանրապետություն զբոսաշրջային հոսքերի ավելացմանը, և ՀՀ-ում գործող Ryanair ավիափոխադրող ընկերությունների միջև, որը և մեր երկրում կարող է ապահովել զբոսաշրջիկների թվի դինամիկ ավելացում[1]:

Հայաստանի Հանրապետությունում վերջին շրջանում առկա են ակնհայտ ձեռքբերումներ: Մեր երկիրն արդեն ընդգրկվել է 10 լավագույն զբոսաշրջային երկրների ցանկ, և աշխարհում հյուրանոցներ առաջարկող ամենահայտնի ճանապարհորդական կայքերից մեկը՝ Booking.com-կայքը, մայրաքաղաք Երևանն ընդգրկել է 2020 թ. զբոսաշրջային ամենաթրենդային ուղղությունների տասնյակում: Կայքի կողմից պատվիրված հարցմանը մասնակցել է 22 հազար չափահաս մարդ աշխարհի տարբեր երկրներից, որոնք 12 ամիսների ընթացքում ճամփորդել են կամ նախատեսում են ճամփորդել առաջիկա մեկ տարում: Հարցումն անցկացվել է 2019 թ. օգոստոսի 9-ից մինչև օգոստոսի 28-ը[2]:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ոլորտում առկա դրական միտումների մասին է փաստում այն, որ դեպի մեր երկիր զբոսաշրջային հոսքերն աճել են երկնիշ թվերով: Այսպես՝ 2018 թ. առաջին եռամսյակում ՀՀ է այցելել 346.458 մարդ, ինչը 2017 թ. առաջին եռամսյակի համեմատությամբ աճել է 16%-ով, իսկ 2018 թ. երրորդ եռամսյակում՝ 589.230 մարդ, ինչը 2016 թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է շուրջ 26%-ով, 2018 թ.

---

[1] Ռազմիկ Իսահակյան, Զբոսաշրջության ոլորտի զարգացումը՝ որպես կայուն տնտեսական աճի նախադրյալ, զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2019 թ., էջ 65-67:

[2] Զբոսաշրջային ամենաթրենդային 10 երկրների ցանկը, booking.com, 2020 թ.:

չորրորդ եռամսյակում՝ 376.573 մարդ, ինչը 2017 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 16,8%-ով:

Ստորև ներկայացնենք նաև 2009-2018 թթ. ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների փաստական ցուցանիշները 10 տարիների կտրվածքով:

Աղյուսակ 1

ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թվաքանակը (մարդ)**, 2009-2018 **թթ. [1]

Տարիներ	2009	2010	2011	2013	2015	2017	2018
Ներգնա	586,755	729,260	832,746	1,081,984	1,192,119	1,494,779	1,651,782
Արտագնա	551,682	715,470	830,492	1,080,021	1,187,369	1,481,755	1,622,791

Ըստ ՀՀ ԱՎԿ տվյալների՝ 2018 թ. Հայաստանի Հանրապետություն է ժամանել 1.651.783 զբոսաշրջիկ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 10,5%-ով: 2018 թ. ժամանողների 21%-ը եղել է ՌԴ-ից, 13,9%-ը՝ ԱՄՆ-ից, 6,8%-ը՝ Իրանից, 6,4%-ը՝ Գերմանիայից, 2,3%-ը՝ Վրաստանից: Այսպիսով՝ փաստական թվերը հիմք են տալիս պնդելու, որ դիտարկվող 10 տարիների ընթացքում զբոսաշրջային հոսքերը դեպի մեր երկիր եռապատկվել են՝ հասնելով ավելի քան 1.500.000 մարդու, ինչն ավելի է ընդգծում, որ տվյալ ոլորտն ունի զարգացման լուրջ ներուժ, և այն կարելի է համարել ՀՀ տնտեսության զարգացման այլ ճյուղերին իրական այլընտրանք:

Հայաստանի Հանրապետությունում զարգացման պոտենցիալ ունեն զբոսաշրջության ոլորտի հետևյալ հիմնական ուղիներն ու տեսակները[2].

Կրոնական զբոսաշրջություն: Հայաստանն առաջինը 301 թ. քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն: Էջմիածնի Մայր տաճարը կառուցել են Սուրբ Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ Գ-ն այն վայրում, որտեղ, ըստ Գրիգոր Լուսավորչի երազի, իջել է Միածինը՝ Աստծո որդին: Այս տաճարը հայության համար սրբազան ուխտատեղի է համարվում: Խոր Վիրապը, Գեղարդը, Հաղարծինը, Գոշավանքը, Հաղպատը ևս համարվում են յուրահատուկ սրբազան վայրեր, որոնք կարող են զբոսաշրջիկներ գրավել աշխարհի տարբեր անկյուններից: Տաթևի վանքն էլ համարվում է հայկական միջնադարյան ճարտարապետության գոհար: Վանքի տարածք մուտքը բարելավելու համար կառուցվել է «ՏաԹևեր» ճոպանուղին, որը կապում է վանքը Հալիձոր գյուղին: Այն աշխարհի ամենաերկար հետադարձելի ճոպանուղին է (5,7 կմ), որը կառուցվել է 1 կտորով և զբոսաշրջիկների շրջանում մեծ պահանջարկ է վայելում:

Էքստրեմալ զբոսաշրջություն: Հայաստանում վերջին ժամանակներում

[1] ՀՀ վիճակագրական կոմիտեի վիճակագրական տվյալների բազաներ, Միջազգային զբոսաշրջություն, 2009-2018 թթ., www.armstat.am

[2] Գ. Թովմասյան, Զբոսաշրջության առկա վիճակը և հիմնական տեսակների զարգացման հնարավորությունները ՀՀ–ում, Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր, միջազգային 5-րդ գիտաժողով, ԵՊՀ երիտասարդ գիտնականների միավորում, Երևան, 2017թ., էջ 49-51:

զարգացում է ապրում էքստրեմալ զբոսաշրջությունը: Իջևանից մի փոքր հեռավորության վրա՝ Ենոքավանում, գործում է Yell Extreme Park-ը, որը հայտնի է իր Zip line-երով, որոնցից ամենաերկարը 750 մետր է, իսկ թռիչքն անցնում է 200-300 մետր բարձրության վրա: Նախագծային աշխատանքներ են սկսվել աշխարհի ամենաերկար Zip line-ը կառուցելու ուղղությամբ, որի երկարությունը կկազմի շուրջ 3 կիլոմետր: Zip line-եր գործում են նաև Երևանում և Ծաղկաձորում:

Ագրոզբոսաշրջություն: Հայաստանի Հանրապետությունն ունի գեղատեսիլ բնություն ու հարուստ բուսականություն, մարգագետիններ, անտառներ ու կանաչ այգիներ: Ագրոզբոսաշրջությունը հանգիստն է գյուղական վայրում: Հանգստի այս ձևը այցելուներին, զբոսաշրջիկներին, հատկապես քաղաքաբնակներին հնարավորություն է տալիս գիտելիքներ ձեռք բերել տնտեսության վարման մասին, ծանոթանալ տեղի ավանդույթներին, ծեսերին և գյուղատնտեսական մթերքների արտադրությանը: Ագրոտուրիզմը մեծ հետաքրքրություն է առաջացնում զբոսաշրջիկների շրջանում, ինչն էլ անմիջականորեն ազդում է գյուղատնտեսության զարգացման վրա, բարելավում է գյուղաբնակների կյանքը և կրճատում գործազրկության մակարդակը: Կազմակերպվում են բազում գյուղատնտեսական փառատոներ ու տոնավաճառներ, որոնք զբոսաշրջիկներին գրավում են դեպի հայկական գյուղեր: Պետական աջակցությամբ ձևավորվում, զարգանում և միջազգային շուկայում աստիճանաբար ավելի ճանաչելի են դառնում ՀՀ-ում անցկացվող ավանդական փառատոները: Ավելին, National Geographic ամսագրի կողմից ներկայացված վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ներգրավվել է հինգ առաջատար երկրների ցանկում՝ որպես խոհարարական տեսանկյունից մատչելի և հետաքրքիր երկիր[1]:

Ագրոզբոսաշրջությունը ընտանեկան հանգստի ուղղություններից մեկն է, մեծ ծախսեր իրենից չի պահանջում, օժանդակում է գյուղական տնտեսությունների բարելավմանը և ենթակառուցվածքների զարգացմանը:

Գործարար զբոսաշրջություն: Զբոսաշրջության զարգացման ամենաեկամտաբեր ուղղություններից է գործարար զբոսաշրջությունը: Այն նպաստում է ներդրումների ներգրավմանը: Գործարար զբոսաշրջիկները, այցելելով տվյալ զբոսաշրջային կենտրոն, տեսնում են տվյալ կենտրոնի գրավչությունը և հետագայում վերադառնում այնտեղ՝ գործունեություն ծավալելու նպատակով: Նրանք կարող են նաև յուրօրինակ դեսպաններ հանդիսանալ տվյալ զբոսաշրջային կենտրոնի համար՝ իրենց գործընկերներին փոխանցելով տվյալ կենտրոնի մասին ձևավորված դրական տպավորությունը[2]: Հայաստանի Հանրապետության համապատասխան պատկան մարմինները պետք է քայլեր ձեռնարկեն՝ գործարար զբոսաշրջիկների ներուժը փոխշահավետ պայմաններով ծառայեցնելու մեր երկրի տնտեսության տարբեր ոլորտների զարգացմանը:

Զբոսաշրջության ոլորտի զարգացման համար լավ պայմաններ ունի ինչպես Երևանը, այնպես էլ Գյումրին, Վանաձորը, Իջևանը, Դիլիջանը, Ծաղկա-

[1] www.nationalgeographic.com

[2] Peter Robinson, Sine Heitmann, Peter Dieke: „Research Themes for Tourism", CABI, 2011, p. 32.

ձորը և այլն: Վարդագույն Երևանն էլ թանգարան է բաց երկնքի տակ՝ իր հին ու նոր կառույցներով, հարուստ պատմությամբ ու մշակույթով:

Մեր օրերում զբոսաշրջային մեծ պահանջարկ են վայելում նաև Գեղարքունիքի մարզում գտնվող Սևանա լիճն ու համանուն վանքը, որոնք առանձնահատուկ և բացառիկ նշանակություն ունեն ՀՀ-ի համար: Սևանա լիճը վաղուց ի վեր համարվում է հայ ժողովրդի գլխավոր խորհրդանիշներից ու ուխտավայրերից մեկը: Այն ներառվել է նաև Եվրոպայի ամենագեղեցիկ վայրերի ցանկում: Այստեղ է հնագույն վանքերից մեկը՝ Սևանավանքը, որը կառուցված է սև քարից և գտնվում է հրաշալի դիտակետում. այն հենց լճում է[1]: Զբոսաշրջության ոլորտը զարգացնելու նպատակով անհրաժեշտ է օգտվել բնության ընձեռած այս հրաշքից և ողջ գործիքակազմը օգտագործել այն զարգացնելու, զբոսաշրջային հոսքերը ավելացնելու նպատակով: Այս ուղղությունը զարգացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է վերանայել լճի շրջակայքում ծառայություններ մատուցող ընկերությունների գնային քաղաքականությունը. գները, համեմատ մեր հարևան Վրաստանի Հանրապետության, զգալիորեն բարձր են, ինչը և ուղղակի խոչընդոտ է դիտարկվող ոլորտի զարգացման համար: Հարկ է ընդգծել, որ զբոսաշրջության զարգացման տեսլականը կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսության զարգացման ռազմավարության բաղկացուցիչ մաս, հիմք հանդիսանալ ոչ միայն զբոսաշրջային հոսքերի ավելացման առումով, այլև մեր երկիրը դարձնել կարճատև զբոսաշրջային այցելությունների հանգրվան: Հարկային արտոնություններով կարելի է ներազդել ծառայությունների գների վրա՝ վերականգնելով Սևանա լճի՝ որպես հանգստյան գոտու երբեմնի կարգավիճակը[2]:

Զբոսաշրջության ոլորտի զարգացման համար տարվող պետական քաղաքականության հիմնական և կարևոր նպատակներից մեկն այն պիտի լինի, որ զբոսաշրջիկների կենտրոնացումը սահմանափակվի ոչ միայն մայրաքաղաք Երևանով, այլև տարածքային համաչափ զարգացման հենքի վրա ձևավորված մարզերում ևս, ինչը զբոսաշրջիկների համար այլընտրանքային հնարավորությունների հիմքեր կարող է ստեղծել: Զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության իրականացման կարևորագույն ուղղություններից է նաև լիցենզավորման, որակի համակարգի և ստանդարտացման ներդրումը[3]: Երկրի վարկանիշի համար շատ կարևոր է, որ պատահական ընկերություններ չներկայացնեն ՀՀ-ն: Զբոսաշրջիկների աճի հետ մեկտեղ տարեցտարի ավելանում է նաև զբոսավարների պահանջարկը: 2011 թ. հունվարի 1-ից դադարեցվել է զբոսավարների և ուղեկցորդների լիցենզավորումը[4]: Որպեսզի մատուցվող ծառա-

---

[1] Հայաստանի տեսարժան վայրեր, 2019 թ., peoplemedia.am

[2] Ռազմիկ Իսահակյան, Զբոսաշրջության ոլորտի զարգացումը՝ որպես կայուն տնտեսական աճի նախադրյալ, զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2019 թ., էջ 71-73:

[3] «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 17.12.2003 թ.:

[4] Ռ.Իսահակյան, ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունները և տեսակները, Ֆինանսներ և էկոնոմիկա, Երևան, 2018 թ., էջ 34-37:

յությունների որակը բարձրանա, անհրաժեշտ է ոչ միայն վերականգնել վերջիններիս լիցենզավորումը, այլ նաև պետք է լիցենզավորել զբոսաշրջային ընկերությունները[1]:

Անդրադառնանք նաև Էստոնիայի կրթական համակարգի առանձնահատկություններին, որը, ի հակադրություն մեր երկրի, ունի մի շարք առավելություններ: Էստոնիայում լայնորեն տարածված են դասավանդման ժամանակակից մեթոդները, ներառյալ պրոբլեմային ուսուցումը, ծրագրային ուսուցումը, թվայնացված ուսուցումը, կյանքի հմտությունների ուսուցումը: Նպատակն այն է, որ միավորվեն տարբեր առարկաները, և ուսուցումը դառնա առավել գործնական՝ կապված իրական կյանքի հետ: Ստորև ներկայացնենք դասավանդման այս ձևերը հերթականությամբ.

- պրոբլեմային ուսուցումն այն է, երբ պատրաստի գիտելիքների փոխարեն ուսուցիչը առաջարկում է աշակերտներին միասին խնդիր դնել և լուծել այն, որպեսզի հասնեն այդ գիտելիքներին,
- ծրագրային ուսուցումը ենթադրում է, որ աշակերտները միայնակ կամ խմբակային իրականացնեն տարբեր ծրագրեր՝ հաճախ տարբեր առարկաների դասընթացների սահմանագծին,
- թվայնացված ուսուցումը ներառում է և՛ համակարգչային գրագիտություն, և՛ սովորական ուսման համադրությունը համացանցային ուսման հետ,
- կյանքի հմտություններն ուսուցանվում են ցածր դասարաններում:

2019 թ. հրապարակված դպրոցական կրթության որակի վարկանիշով Էստոնիան զբաղեցրել է առաջին տեղը Եվրոպայում և հինգերորդ տեղն աշխարհում՝ գերազանցելով Ռուսաստանին և Լատվիային: Համաձայն PISA վարկանիշի[2] հրապարակած տվյալների (դպրոցականների կրթության որակի գնահատման միջազգային ծրագիր)՝ Էստոնիայի դպրոցականները Եվրոպայում առաջին տեղն են գրավել բոլոր երեք դասակարգերում՝ ընթերցանություն, մաթեմատիկա և բնական գիտություններ: Էստոնիայում դպրոցի ուսուցչի միջին աշխատավարձը 2019 թվականին կազմել է 1,513 եվրո, ինչը մի փոքր ավելի է, քան երկրում միջին աշխատավարձը, իսկ մանկապարտեզի դաստիարակի միջին աշխատավարձը 1145 եվրո էր:

Հատկանշական է նաև, որ տարբերվում է աշակերտների գնահատման կուլտուրան, որը, ի տարբերություն ՀՀ-ի, ավելի զարգացած է և մոտիվացնող. Ուսուցիչը չի նշանակում «հինգ» կամ «երկու», փոխարենը նշանակում կամ ասում է հետևյալ բառերը՝ «շատ լավ» կամ, օրինակ, «այ այստեղ դեռ պետք է աշխատել», որը կիրառվում է Էստոնիայի ցածր և միջին դասարաններում, իսկ բարձր դասարաններում արդեն գնահատականներ են նշանակում և օգնում

[1] Ռազմիկ Իսահակյան, Զբոսաշրջության ոլորտի զարգացումը՝ որպես կայուն տնտեսական աճի նախադրյալ, զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2019 թ., էջ 41:

[2] Դպրոցական կրթության որակի գնահատման միջազգային ծրագիր, PISA վարկանիշի համաձայն՝ Էստոնիան դպրոցական կրթության որակով 1-ին հորիզոնական: www.picuki.com.

ճիշտ կողմնորոշվել և շտկել կատարված սխալները: Էստոնիայում աշակերտները սովորում են ինչպես էստոներեն, այնպես էլ ռուսերեն: Ռուսախոս աշակերտների արդյունքները ավելի ցածր էին: Էստոնիայում անցկացված ուսումնասիրության մեջ ներգրավված էր 5371 աշակերտ: Նրանցից 4000-ը թեստերը հանձնել են էստոներեն, 1371-ը՝ռուսերեն:

Անդրադառնանք նաև դպրոցականների վարկանիշներին՝ ըստ ընթերցանության, մաթեմատիկայի և ճշգրիտ գիտությունների, որը ներկայացված է աշխարհի զարգացած երկրների օրինակով.

Աղյուսակ 2

Դպրոցականների վարկանիշները՝ ըստ ընթերցանության, մաթեմատիկայի և ճշգրիտ գիտությունների *2018* ***թ.***[1]

	Ընթերցանություն	Մաթեմատիկա	Գիտություններ
Չինաստանի քաղաքներ	555	591	590
Սինգապուր	549	569	551
Մակաո	525	558	544
Հոնկոնգ	524	551	517
Էստոնիա	523	523	530
Կանադա	520	512	518
Ֆինլանդիա	520	507	522
Իռլանդիա	518	500	496
Հվ. Կորեա	514	526	519
Լեհաստան	512	516	511
Շվեդիա	506	502	499
Նոր Զելանդիա	506	494	508
ԱՄՆ	505	478	502
Մեծ Բրիտանիա	504	502	505
Ճապոնիա	504	527	529
Ավստրալիա	503	491	506

Խորհրդային կրթական համակարգի մյուս իրավահաջորդ երկրների արդյունքները զգալիորեն ավելի ցածր էին, քան Էստոնիայինը, չնայած լավ տեղեր էին զբաղեցնում՝ Լատվիան՝ 30-րդ (79-ից), Ռուսաստանը՝ 31-րդ, Լիտվան՝ 34-րդ, Բելառուսը՝ 36-րդ, Ուկրաինան՝ 39-րդ:

Պետք է փաստել, որ կրթական մակարդակը ուղղակիորեն ազդում է երկրի տնտեսական զարգացումների վրա, և դիտարկվող ոլորտի զարգացածությունը հենց այդ ամենի դրական արգասիքն է, ուստի այս գործիքակազմը արժանի է ընդօրինակման, որը և ՀՀ տնտեսական զարգացմանը ևս մեկ ազդակ կարող է հաղորդել:

ԷՀ զբոսաշրջության ոլորտի համեմատական առավելություններից մեկը մեր երկրի նկատմամբ այն է, որ ոլորտի զարգացմանը մեծապես նպաստում են

[1] Эстонские школы признаны лучшими в Европе, estonianworld.com, 2019 г.

կարճատև զբոսաշրջային այցելությունները: 2017 թ. ավելի քան 6 միլիոն օտարերկրյա զբոսաշրջիկներ են այցելել Էստոնիա՝ 3%-ով ավելի, քան 2016 թ.: Արտասահմանցի զբոսաշրջիկների գրեթե կեսը Էստոնիայում մնացել է ընդամենը մեկ օր[1]: Այսպիսի արդյունքների հասնելուն մեծապես կարող է նպաստել մեր երկրում ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ներկայացվող գնային քաղաքականության համընդհանուր մատչելիության ապահովումը:

Եզրակացություններ և առաջարկություններ

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ զբոսաշրջության ոլորտը տնտեսության զարգացման առաջնահերթ ուղղություններից է ինչպես Էստոնիայի Հանրապետությունում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում: Առաջարկվել է մեր երկիրը դարձնել տարանցիկ ինչպես ուղևորափոխադրումների, այնպես էլ բեռնափոխադրումների համար, որի դրական միտումները ներկայացվել է Էստոնիայի Հանրապետության օրինակով: Նշենք, որ զբոսաշրջության ոլորտի զարգացմանը ԷՀ-ում մեծապես նպաստել է նաև գործազուրկների ցածր մակարդակը, որը հնարավորությունների դաշտ է ստեղծել մարդկանց ավելի լայն պահանջմունքների բավարարման տեսակետից, որի վառ ապացույցն էլ այն է, որ ԷՀ տնտեսությունը գործում է համարյա լրիվ զբաղվածության պայմաններում (5% գործազուրկներ), ուստի աշխատատեղերի ստեղծմամբ պետք է հասնել նման արդյունքների: Հարկ է փաստել նաև, որ ԷՀ կրթական համակարգը ևս ունի առավելություն մեր երկրի նկատմամբ. նրանում առկա գնահատման յուրօրինակ մոտեցումների պիլոտային գործարկումը կարող է իրականացվել ՀՀ համապատասխան պատկան մարմնի կողմից:

Դիտարկվող երկրներում զբոսաշրջության ոլորտի աճը ներկայացված է փաստական երկնիշ թվերով, ընդ որում՝ շեշտվել է, որ ԷՀ-ում գերակշռում են կարճատև զբոսաշրջային այցելությունները, ինչը ՀՀ-ում դեռևս զարգացած չէ: Ավելին, ներկայացվել է նաև ոլորտը զարգացնող մեկ ուղղություն ևս մեր երկրի օրինակով, որը հանգամանորեն կարող է ուսումնասիրվել ՀՀ կառավարության, ինչպես նաև ոլորտը ներկայացնող պատկան մարմինների կողմից: Այն ոչ միայն ՀՀ քաղաքացիներին հնարավորություն կտա հանգիստն անցկացնել մեր հայրենիքում, այլև այլընտրանքային զբոսաշրջային հոսքերի ավելացման նախադրյալներ կստեղծի, կնպաստի կարճատև զբոսաշրջային այցելություններին հարևան երկրներից, որի արդյունքները ապագայում կներկայացվեն տնտեսական դրական ցուցանիշներով: Ավելին, մեր երկրում զբոսաշրջային հիմնական տեսակներից և ուղղություններից զատ, կարելի է ստեղծել նոր զբոսաշրջային հանգստատեղեր, և հաշվի առնելով պետական բյուջեի սուղ լինելը՝ պետք է ներգրավել այլընտրանքային ներդրողներին, հատկացնել հարկային արտոնություններ, ինչը Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ոլորտի զարգացման գործիքներից մեկը կարող է դառնալ:

[1] Statistics Finland, 2017, https://www.stat.fi

Ամփոփելով՝ որպես հետազոտության արդյունք՝ կարելի է նշել հետևյալ կիրառական առաջարկությունները.

- համայն աշխարհում Հայաստանի Հանրապետությունը ներկայացնել որպես քրիստոնեությունը առաջինը պետական կրոն հռչակած երկիր,
- հարկային արտոնություններ տրամադրել զբոսաշրջային ընկերություններին և ներդրողներին՝ նպաստելով ներքին զբոսաշրջության զարգացմանը,
- հետևողականորեն վերականգնել Սևանա լճի՝ որպես հանգստյան գոտու կարգավիճակը, որով մեր երկիրը կարելի է դարձնել նաև կարճատև զբոսաշրջային այցերի հանգրվան, մասնավորապես՝ մեր դարավոր հարևանների՝ ՎՀ և ԻԻՀ զբոսաշրջիկների համար,
- գործարար զբոսաշրջիկներին ներգրավել տնտեսության զարգացմանը նպաստող ոլորտներում, տարբեր գնողունակություն ունեցող զբոսաշրջիկների համար մշակել մատչելի փաթեթներ և իրագործել արդյունավետ մարքեթինգային քաղաքականություն,
- դիվանագիտական՝ ներքին և արտաքին, գործիքակազմերով ընդգծել մեր երկրի հեղինակությունը և ցուցաբերել առանձնահատուկ վերաբերմունք զբոսաշրջիկների հանդեպ, ինչպես նաև վերականգնել զբոսավարների և զբոսաշրջային ընկերությունների լիցենզավորման ընդհատված գործընթացը, ինչը կնպաստի մեր երկիր այցելող զբոսաշրջիկների թվի ավելացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գ. Թովմասյան, Զբոսաշրջության առկա վիճակը և հիմնական տեսակների զարգացման հնարավորությունները ՀՀ–ում, Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր, միջազգային 5-րդ գիտաժողով, ԵՊՀ երիտասարդ գիտնականների միավորում, Երևան, 2017թ., էջ 49-51:
2. Դպրոցական կրթության որակի գնահատման միջազգային ծրագիր, PISA վարկանիշի համաձայն՝ Էստոնիան դպրոցական կրթության որակով 1-ին հորիզոնական:
3. ԵՄ կողմից իրականացվելիք ՀՀ հյուսիսային երեք մարզերում զբոսաշրջության խթանման ծրագիր, 2019թ.:
4. Եվրամիության զբոսաշրջության զարգացման քաղաքականությունը, 2019թ.:
5. Զբոսաշրջային ամենաթրենդային 10 երկրների ցանկը, 2020թ.:
6. Զբոսաշրջային ծառայությունների արտահանումից ստացվող եկամուտները ՀՀ-ում, 2017թ.:
7. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 17.12.2003թ.:
8. Էստոնիայի զբոսաշրջության զարգացման ազգային պլան, 2014-2020 թթ.:
9. Էստոնիայի տնտեսական կառուցվածքը, էջ 18-20:
10. Հայաստանի տեսարժան վայրեր, 2019 թ.:
11. ՀՀ վիճակագրական կոմիտեի վիճակագրական տվյալների բազաներ, Միջազգային զբոսաշրջություն, 2009-2018թթ.:

12. Ռազմիկ Իսահակյան, Զբոսաշրջության ոլորտի զարգացումը՝ որպես կայուն տնտեսական աճի նախադրյալ, զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2019 թ., էջ 41:
13. Ռազմիկ Իսահակյան, Զբոսաշրջության ոլորտի զարգացումը՝ որպես կայուն տնտեսական աճի նախադրյալ, զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2019 թ., էջ 65-67:
14. Ռազմիկ Իսահակյան, Զբոսաշրջության ոլորտի զարգացումը՝ որպես կայուն տնտեսական աճի նախադրյալ, զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2019 թ., էջ 71-73:
15. Ռ.Իսահակյան, ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղություն-ները և տեսակները, Ֆինանսներ և էկոնոմիկա, Երևան, 2018 թ., էջ 34-37:
16. Տնտեսական ազատության ինդեքսը ըստ Հերիթեջ հիմնադրամի գնահա-տականների, 2016թ.:
17. Структура экономики Эстонии, стр 1, 11-13.
18. Структура экономики Эстонии, стр 10.
19. Эстонские школы признаны лучшими в Европе, estonianworld.com, 2019г.
20. Peter Robinson, Sine Heitmann, Peter Dieke: „Research Themes for Tourism", CABI, 2011, p. 32.
21. Statistics Finland, 2017.
22. Statistics in Estonia, 2018-2019.
23. armenpress.am
24. www.armstat.am
25. booking.com
26. estonianworld.com
27. https://www.estonica.org
28. https://www.eestipank.ee
29. www.nationalgeographic.com
30. peoplemedia.am
31. www.picuki.com
32. https://m.riigikogu.ee
33. https://www.stat.ee/en
34. https://www.stat.fi

References

1. G. T'ovmasyan, Zbosashrjowt'yan ar'ka vitwaky' & himnakan tesakneri zargacman hnaravorowt'yownnery' HH–owm, Tntesagitowt'yan jhamanakakic himnaharcer, mijazgayin 5 rd gitajhoghov, EPH eritasard gitnakanneri miavorowm, Er&an, 2017t'., e'j 49-51:
2. Dprocakan krt'owt'yan oraki gnahatman mijazgayin c'ragir, PISA varkanishi

hamad'ayn` E'stonian dprocakan krt'owt'yan orakov 1-in horizonakan:
3. EM koghmic irakanacveliq HH hyowsisayin ereq marzerowm zbosashy'rjowt'yan xt'anman c'ragir, 2019t'.:
4. Evramiowt'yan zbosashrjowt'yan zargacman qaghaqakanowt'yowny', 2019t'.:
5. Zbosashrjayin amenat'rendayin 10 erkrneri canky', 2020t'.:
6. Zbosashrjayin c'ar'ayowt'yownneri artahanowmic stacvogh ekamowtnery' HH-owm, 2017t'.:
7. «Zbosashrjowt'yan & zbosashrjayin gorc'owneowt'yan masin» HH o'renq` y'ndownvac' 17.12.2003t'.:
8. E'stoniayi zbosashrjowt'yan zargacman azgayin plan, 2014-2020 t't'.:
9. E'stoniayi tntesakan kar'owcvac'qy', e'j 18-20:
10. Hayastani tesarjhan vayrer, 2019 t'.:
11. HH vitwakagrakan komitei vitwakagrakan tvyalneri bazaner, Mijazgayin zbosashrjowt'yown, 2009-2018t't'.:
12. R'azmik Isahakyan, Zbosashrjowt'yan olorti zargacowmy'` orpes kayown tntesakan atwi naxadryal, zargacman himnaxndirnery' & dranc lowc'man owghinery' Hayastani Hanrapetowt'yownowm, Er&an, 2019 t'., e'j 41:
13. R'azmik Isahakyan, Zbosashrjowt'yan olorti zargacowmy'` orpes kayown tntesakan atwi naxadryal, zargacman himnaxndirnery' & dranc lowc'man owghinery' Hayastani Hanrapetowt'yownowm, Er&an, 2019 t'., e'j 65-67:
14. R'azmik Isahakyan, Zbosashrjowt'yan olorti zargacowmy'` orpes kayown tntesakan atwi naxadryal, zargacman himnaxndirnery' & dranc lowc'man owghinery' Hayastani Hanrapetowt'yownowm, Er&an, 2019 t'., e'j 71-73:
15. R'.Isahakyan, HH-owm zbosashrjowt'yan zargacman himnakan owghghowt'yown-nery' & tesaknery', Finansner & e'konomika, Er&an, 2018 t'., e'j 34-37:
16. Tntesakan azatowt'yan indeqsy' y'st Herit'ej himnadrami gnahatakanneri, 2016t'.:
17. Struktura jekonomiki Jestonii, str 1, 11-13.
18. Struktura jekonomiki Jestonii, str 10.
19. Jestonskie shkoly priznany luchshimi v Evrope, estonianworld.com, 2019g.
20. Peter Robinson, Sine Heitmann, Peter Dieke: „Research Themes for Tourism", CABI, 2011, p. 32.
21. Statistics Finland, 2017.
22. Statistics in Estonia, 2018-2019.
23. armenpress.am
24. www.armstat.am
25. booking.com
26. estonianworld.com
27. https://www.estonica.org
28. https://www.eestipank.ee
29. www.nationalgeographic.com
30. peoplemedia.am

31. www.picuki.com
32. https://m.riigikogu.ee
33. https://www.stat.ee/en
34. https://www.stat.fi

Ռազմիկ Իսահակյան

ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համառոտագիր: Հոդվածում ներկայացվել է ԷՀ և ՀՀ զբոսաշրջության ոլորտների համեմատական վերլուծությունը: Ընդգծվել են զբոսաշրջության ոլորտի ընդհանրությունները, որոնք ուղղակիորեն կարող են նպաստել ինչպես բնակչության երկկողմանի փոխադրումներին, այնպես էլ զբոսաշրջային հոսքերի ավելացմանը: Արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ կառավարության տնտեսության զարգացման տեսլականը արդարացի է, ըստ որի՝ դիտարկվող ոլորտը տնտեսության զարգացման գերակա ճյուղերի շարքին դասելը տվել է իր տնտեսական դրական էֆեկտները:

Բանալի բառեր. զբոսաշրջություն, զբոսաշրջային հոսքեր, ներքին զբոսաշրջություն, գնողունակ զբոսաշրջիկ, տնտեսություն, ենթակառուցվածք, գներ

Размик Исаакян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» РЕСПУБЛИКИ ЭСТОНИЯ

Аннотация: В статье представлен сравнительный анализ отраслей туризма Республики Эстония и Республики Армения. Подчеркнуты общие черты в отрасли туризма, что может напрямую поспособствовать как двухстороннему передвижению населения, так и увеличению туристических потоков. В результате был сделан вывод, что видение развития экономики правительства Республики Армении обосновано, согласно которому классификация рассматриваемой отрасли к ряду приоритетных отраслей развития экономики дало свои положительные экономические эффекты.

Ключевые слова: туризм, туристические потоки, внутренний туризм, турист способный покупать, экономика, инфраструктура, цены

Razmik Isahakyan

"THE ECONOMIC MIRACLE" OF THE REPUBLIC OF ESTONIA

Abstract: In the article is presented comparative analysis of tourism industries of the Republic of Estonia and Republic of Armenia. Common features of tourism industry are emphasized, which can directly contribute to both two-way movement of population and increase of tourism flows. As a result, a conclusion has been made that the vision of development of the economy of the government of the Republic of Armenia is justified, according to which classification of the industry under review to the priority industries of development of the economy has given positive economic effect.

Keywords: tourism, tourism flows, domestic tourism, able to buy tourist, economy, infrastructure, prices

Գոհար Ոսկանյան
Ծաղկանուշ Միրզոյան

ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Լատվիան Բալթյան երկրներից է, գտնվում է Եվրոպայի հյուսիսում: Այն սահմանակից է Լիտվային, Էստոնիային, Ռուսաստանին և Բելառուսին[1]: Լատվիան նախկին Խորհրդային Միության երկրներից էր, որն անկախացավ 1991 թ.: Ներկայիս տարածքը 64.573 կմ² է, որի 30%-ը կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը: Այն ունի շուրջ 2 միլիոն բնակչություն, որի 36.6%-ը բնակվում է գյուղական բնակավայրերում[2]: Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն 18.033 ԱՄՆ դոլար է[3]: Գործազրկության մակարդակը 2019 թ. դրությամբ կազմել է 6%[4]: Լատվիայում աղքատության մակարդակը 28.4% է, և այն ԵՄ անդամ այն 7 երկրներից մեկն է, որտեղ աղքատ է բնակչության ավելի քան ¼-ը[5]: Դրամական միավորը եվրոն է: Ըստ կառավարման ձևի՝ պառլամենտական հանրապետություն է: Բարձրագույն օրենսդիր մարմինը Սեյմն է: Երկիրը ղեկավարում է նախագահը, որն ընտրվում է Սեյմի կողմից 4 տարի ժամկետով: Գործադիր իշխանությունը իրականացնում են նախարարությունները:

Լատվիայի Հանրապետությունը ինդուստրիալ-ագրարային երկիր է: Արդյունաբերության մասնաբաժինը կազմում է ՀՆԱ-ի 26%-ը, գյուղատնտեսության մասնաբաժինը՝ 5%-ը: Երկրի ազգային տնտեսության գերակշռող մասը կենտրոնացված է ծառայությունների ոլորտում (ՀՆԱ-ի 69%-ը): Ծառայությունների ոլորտում գերակշռում են տուրիզմը և տրանսպորտը: Ամեն տարի Լատվիա են այցելում ավելի քան 2 մլն զբոսաշրջիկ, որոնց հիմնական մասը նախկին Խորհրդային Միության երկրներից է և ԵՄ-ից: Զբոսաշրջիկներին Լատվիան գրավում է ոչ միայն բնությամբ, այլև տեսարժան վայրերով, ճարտարապետությամբ, մշակույթով և այլն: Տրանսպորտի կառուցվածքում գերակշռում է երկաթուղային և խողովակաշարային տրանսպորտը: Ավտոմոբիլային և ջրային տրանսպորտը կազմում է մոտավորապես 20%[6]-ը:

Ներկայացված տվյալները փաստում են, որ Լատվիայի և Հայաստանի միջև առկա են մի շարք ընդհանրություններ: Մասնավորապես՝ երկուսն էլ հետխորհրդային երկրներ են՝ բնակչության ոչ մեծ թվաքանակով, աղքատության

---

[1] https://hy.wikipedia.org/wiki/Լատվիա
[2] EU Common Agricultural Policy in Latvia 2014-2020, on-line`
file:///F:/latviayi%20targmanelu%20nyut.pdf
[3] https://countryeconomy.com/gdp/latvia
[4] https://tradingeconomics.com/latvia/unemploymentrate?continent=europe
[5] https://ec.europa.eu/eurostat/documents/2995521/10163468/3-16102019-CP-EN.pdf/edc3178f-ae3e-9973-f147-b839ee522578
[6] https://spravochnick.ru/ekonomika/suschnost_celi_i_zadachi_smeshannoy_ekonomiki/smeshannaya_ekonomika_latvii/

բարձր մակարդակով, հետխորհրդային երկրներին բնորոշ առանձնահատկություններով ու խնդիրներով և այլն:

Լատվիայի տնտեսական զարգացման պատմությունը բաժանվում է մի քանի փուլերի:

Տնտեսությունը մինչև 1918 **թ**.: Մինչև արդյունաբերական երկիր դառնալը Լատվիայի տնտեսությունում գերակշռում էին գյուղատնտեսությունը, անտառային տնտեսությունը և ձկնորսությունը: Քաղաքի բնակչությունը զբաղված էր հիմնականում առևտրով և արհեստագործությամբ: Տրանսպորտի ճյուղը զարգանում էր հիմնականում Դաուգավա գետի ափին և նավահանգիստներում, ինչպիսին էր Ռիգան: Բալթիկ ծովը կապ էր հաստատում աշխարհի հետ: Սկանդինավիայի և Բյուզանդիայի, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի միջև առևտրային կապերն անցնում էին Լատվիայի տարածքով: Աշխատանքի մեքենայացումը և քաղաքաշինությունը բարձրացրին նաև գյուղաբնակների կյանքի որակը: Գյուղացիները կարողացան կառավարել իրենց հողերն ու կյանքը՝ 1914 թ. գնելով ֆեոդալական ունեցվածքի կեսը:

19-րդ դարի երկրորդ կեսին կառուցված առաջին երկաթուղու շնորհիվ Լատվիայում սկիզբ առավ արդյունաբերության զարգացումը: Նավահանգստային գործունեությունը, բեռնափոխադրումները, արդյունաբերությունը և ֆինանսական ոլորտը ծաղկում ապրեցին: Բարձր որակավորում ունեցող աշխատուժը Լատվիան դարձրեց ծանր արդյունաբերության զարգացման իդեալական վայր: Մեքենաշինությունը, մետաղամշակումը և քիմիական արդյունաբերությունը հասան միջազգային մակարդակին: Արդյունաբերության անցման և Առաջին համաշխարհային պատերազմի միջև ընկած ժամանակահատվածը զարգացման աննախադեպ հնարավորություններ ընձեռեց: Լատվիացիների եկամուտները կայունացան, ինչը հնարավորություն տվեց երեխաներին ընդունել բարձրագույն ուսումնական հաստատություններ: Այսպես ձևավորվեց լատվիական քաղաքական էլիտան, որը պետությունը և տնտեսությունը հասցրեց զարգացման բարձր մակարդակի:

Տնտեսությունը 1918-1940 **թթ**.: Լատվիայի Հանրապետությունը մշակեց խոշոր պլաններ, սակայն դրանց իրականացման համար առկա հնարավորությունները շատ քիչ էին: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում արդյունաբերական սարքավորումների մեծ մասը տարհանվեց Ռուսաստան և ետ չվերադարձվեց: Մշտական պատերազմական գործողությունները կործանեցին առկա ենթակառուցվածքները: Բարձր որակավորում ունեցող շատ աշխատողներ և ղեկավարներ տիրող քաոսի պատճառով հեռացան երկրից: Այսպիսի պայմաններում լատվիական տնտեսության կայունացումը արժանի է ուշադրության: 1922 թ. ազգային արժույթի՝ լատի շրջանառության մեջ դնելը վերջ տվեց դրամական քաոսին: Արդյունաբերությունը վերածնվեց մոխրից և մտավ արևմտյան արտահանման շուկաներ: Փոքր և միջին չափի գյուղացիական տնտեսությունները զարգացման խթան ստացան՝ ֆեոդալական կալվածքներն աղքատ գյուղացիներին և պատերազմի մասնակիցներին բաժանելու շնորհիվ:

Երկիրը հաղթահարեց ճգնաժամը ուժեղ գյուղատնտեսության շնորհիվ: Եվրոպա էին արտահանվում շաքարի ճակնդեղ, կաթնամթերքներ և գործվածքներ: 20-րդ դարի 30-ականներին Լատվիայից արտահանվող փայտը կազմում էր փայտի համաշխարհային շուկայի 10%-ը: Լատվիայի հիմնական ռեսուրսը շարունակում էր մնալ հարուստ մարդկային կապիտալը: Համալսարան ընդունվողների գործակիցն ամենաբարձրն էր:

Տնտեսությունը 1940-1991 **թթ**.: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Խորհրդային Միությունը և Գերմանիան Լատվիային հասցրին հսկայական վնասներ: Հարյուր հազարավոր մարդիկ սպանվեցին, մահացան կամ հեռացան երկրից: Գույքը և ենթակառուցվածքների օբյեկտները կա՛մ վերացվեցին, կա՛մ ազգայնացվեցին: Մի շարք բնական ռեսուրսներ արտահանեցին ինչպես գերմանացիները, այնպես էլ խորհրդային կառավարությունը:

Լատվիան վերակառուցվեց ԽՍՀՄ-ի կենտրոնացված պլանավորման սկզբունքով, որի արդյունքում երկիրը հայտնվեց անմխիթար վիճակում: Լատվիայի ազգային տնտեսությունը ծառայում էր քաղաքական և ռազմական նպատակներին: Խորհրդային Լատվիայի 176 գործարաններն իրենց արտադրական հնարավորությունների 10-100%-ը օգտագործում էին ռազմական նպատակների համար:

Կենտրոնացված պլանավորումն առաջացրեց համընդհանուր ճգնաժամ: Կոլխոզներն արտադրում էին նախկին գյուղացիական տնտեսությունների արտադրած ծավալի ոչ ավել, քան 45%-ը: Ծանր արդյունաբերությունը, որում ընդգրկված էին աշխատանքային միգրանտները, հիմնականում բավարարում էր քաղաքական նպատակները: Արտադրողականության անիրական ստանդարտները ծառայում էին որպես քարոզչություն և խարխլեցին շուկան: Շրջակա միջավայրի նկատմամբ ոչ բավարար հոգատարությունը հանգեցրեց էկոլոգիական խնդիրների, որոնց հետևանքները Լատվիան փորձում է լուծել մինչ օրս: Խորհրդային տնտեսական համակարգը չկարողացավ մրցակցել համաշխարհային ազատ շուկայի հետ: 80-ականների վերջին այն փլուզվեց, որի արդյունքում փակվեցին շատ գործարաններ, որն իր հերթին հանգեցրեց զանգվածային գործազրկության և ֆինանսական համակարգի խափանման:

Տնտեսությունը 1991 **թ. հետո**: 90-ականների սկզբներից Լատվիան անցում կատարեց պլանային տնտեսությունից դեպի շուկայականի, և սկսվեց գների ազատականացման գործընթացը: 90-ականների կեսերին հիմնադրվեցին շուկայական տնտեսության և դրամավարկային համակարգի կայունացման հիմնական ինստիտուտները: 1998 թ. տարածաշրջանային տնտեսության բանկային ճգնաժամին հաջորդեց նպատակաուղղված կայուն զարգացումը: Եվրոատլանտյան քաղաքական ինտեգրացիան հնարավորություն տվեց ամրապնդել կապերը արևմտյան երկրների շուկաների հետ[1]:

[1] https://www.latvia.eu/ru/economy/economic-history

Լատվիան 2004 թ. անդամակցեց Եվրամիությանը (ԵՄ), որին հաջորդեց երկրում օրենսդրական փոփոխությունների իրականացման գործընթացը. այն միտված էր Եվրամիության սկզբունքների ամրագրմանը: Եվրամիության անդամ դառնալուց հետո ձևավորվել է սոցապահովվածության համակարգը, որը հիմնված է սոցիալական ապահովագրության նոր սկզբունքների վրա: Բարեփոխումներ են իրականացվել կենսաթոշակային, առողջապահության և կրթական համակարգերում: Ընդհանուր առմամբ եկամուտների վերաբաշխման սոցիալական քաղաքականությունն իրականացվել է բավականաչափ արդյունավետ, ինչը թույլ է տվել համահարթել հասարակության տարբեր խմբերի միջև առկա անհավասարությունը և կանխել երկրում գործազուրկների թվի աճը: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ պետական քաղաքականության մեխանիզմը դեռևս հեռու է կատարյալ լինելուց[1]:

Լատվիայի Հանրապետությանը բնորոշ է տնտեսավարման խառը մոդելը, որը հիմնված է մասնավոր և պետական ոլորտների համագործակցության, ազատ շուկայական հարաբերությունների և տնտեսության կարգավորման վրա: Մոդելին բնորոշ են ցածր հարկերը և օտարերկրյա ներդրումների ներգրավումը: Խառը մոդելին բնորոշ առանձնահատկություն է նաև բոլոր ոլորտներում պետական ձեռնարկությունների մասնավորեցումը: Փաստացի կարող է մասնավորեցվել ամեն ինչ, բացառությամբ զենքի արտադրության: Վերջին տվյալներով՝ մասնավոր հատվածին բաժին է ընկնում զբաղված բնակչության 67%-ը:

Բալթյան երկրների, մասնավորապես Լատվիայի բարեփոխումներին բնորոշ են՝

- ձեռնարկությունների գործունեությանը պետական ուղղակի միջամտությունից հրաժարում,
- գների և ընդհանուր տնտեսական գործունեության պայմանների ազատականացման վճռական գործողություններ,
- մասնավոր ձեռներեցության աջակցություն,
- պետական սեփականության մասնավորեցում,
- Եվրամիության և համաշխարհային շուկաների հետ կապված արտադրության վերակազմավորում,
- օտարերկրյա կապիտալի ներգրավում,
- կոշտ ֆինանսավարկային քաղաքականության իրականացում,
- պետական բյուջեի նախատեսվող ծախսերի կրճատում և վարկերի սահմանափակում[2]:

Ընդամենը 2 մլն բնակչություն ունեցող Լատվիան մեծ շուկա չունի, միևնույն ժամանակ բարենպաստ աշխարհագրական դիրքը թույլ է տալիս երկրին կարևոր տեղ զբաղեցնել Եվրոպայում: 2008 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամից դուրս գալու համար տնտեսության կայունացման նպատակով Լատվիան ստացել է 7.5 մլրդ եվրո վարկ Եվրախորհրդից, Համաշխարհային բանկից և Միջազգային

[1] https://spravochnick.ru/ekonomika/suschnost_celi_i_zadachi_smeshannoy_ekonomiki/smeshannaya_ekonomika_latvii/

[2] http://finuni.ru/ekonomika-latvii/

արժութային հիմնադրամից: Միջազգային փոխառության ծրագրի շրջանակներում համալրվել է պետական բյուջեն 2.3 մլրդ եվրոյով, և իրականացվել են կառուցվածքային փոփոխություններ: Ծրագիրն ավարտվել է 2011 թ., ընդ որում՝ ֆինանսատնտեսական իրավիճակի բարելավման համար Լատվիան չի օգտագործել տրամադրված բոլոր միջոցները (օգտագործվել է շուրջ 4.4 մլրդ եվրո): 2011-2012 թթ Լատվիան հաջողությամբ վերադարձավ միջազգային ֆինանսական շուկա: Վերջին տարիներին տնտեսության առաջ տանող ուժը արտահանումն է: Արտահանման մեջ շարունակական տեմպերով աճում է վերամշակող արդյունաբերության ծավալը: Ներքին շուկայի կարգավորմանը զուգահեռ աճում են շինարարության և առևտրի ծավալները: Տնտեսական ակտիվության մեծացման հետ աստիճանաբար բարելավվում է աշխատաշուկան: Լատվիայի տնտեսության վերականգնումը ճանաչվեց միջազգային մակարդակում, և բարձրացավ Լատվիայի վարկային վարկանիշը:

Լատվիայում գրանցված արտասահմանյան ներդրողները իրավունք ունեն ձեռք բերել հող և անշարժ գույք, և առկա է մշտական և ակտիվ երկխոսություն Արտասահմանյան ներդրողների խորհրդի և Լատվիայի կառավարության միջև: Չորս ռազմավարական նշանակություն ունեցող վայրերում ձևավորվել են այսպես կոչված «հատուկ տնտեսական տարածքներ», որոնցում տեղակայված ձեռնարկություններն օգտվում են որոշակի արտոնություններից՝ անշարժ գույքի հարկի, շահութահարկի և այլնի հետ կապված:

Երկրի համար կարևոր նշանակություն ունեցող տեղական և արտասահմանյան ներդրումային ծրագրերի բարելավման համար մշակվել է ներդրումների ներգրավման POLARIS ռազմավարությունը, որը ենթադրում է միասնական և համաձայնեցված գործողություններ նախարարությունների, ինքնակառավարման մարմինների, ձեռնարկատիրական ենթակառուցվածքների և պետական հաստատությունների միջև ռազմավարական նշանակություն ունեցող տեղական և արտասահմանյան ներդրումային ծրագրերի իրականացման համար՝ գործընթացին մասնակից դարձնելով նաև մասնավոր հատվածին, համալսարաններին և գիտական ինստիտուտներին: POLARIS-ի գործընթացի շրջանակներում ձևավորվել է Համակարգող խորհուրդ՝ խոշոր և կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրերի և հարցերի գծով ներդրումային բարենպաստ միջավայր ապահովելու նպատակով: Խոշոր ներդրումային ծրագրի իրականացման դեպքում ձեռնարկատերերը կարող են օգտվել նաև շահութահարկի հետ կապված արտոնություններից:

Ինչպես ցույց է տալիս պատմությունը, լատվիական արդյունաբերության աճի հիմնական տարրերը միաժամանակ եղել են կիրթ աշխատուժի, արտասահմանյան շուկաների, գիտելիքի, ինչպես նաև կապիտալի ներգրավումը: Բարձր տեխնոլոգիական ճյուղերի զարգացման հարցում կարևորվում է հետազոտություններում ներդրումների իրականացումը և զարգացման ապահովումը: «Լատվիայի զարգացման 2014-2020 թթ. ազգային պլան»-ով նախատեսված է հետազոտությունների և զարգացման ուղղությամբ ներդրումները հասցնել ՀՆԱ-ի

1.5%-ին: Սակայն փաստացի իրավիճակը այլ է. 2014-2016 թթ. ներդրումների ծավալը 0.69%-ից իջել է 0.44%-ի ՀՆԱ-ի նկատմամբ: Լատվիայում ամենաքիչ ներդրումներն են կատարվել հետազոտությունների և զարգացման ուղղությամբ: Մինչդեռ ԵՄ ամենազարգացած երկրներում, օրինակ՝ Շվեյցարիայում և Գերմանիայում, դրանք կազմել են ՀՆԱ-ի մոտավորապես 3%-ը, իսկ ԵՄ-ում այս ցուցանիշի միջին մեծությունը 2%-է: Բացի այդ, երկրների մեծ մասում ներդրումների հիմնական մասը բաժին է ընկնում մասնավոր և ոչ թե պետական հատվածին, ինչպես, օրինակ, Լատվիայում է[1]:

Լատվիայի տնտեսության վերաբերյալ բազմակողմանի վերլուծություն է իրականացրել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ, Organization for Economic Co-operation and Development - OECD), որի արդյունքներն ամփոփված են «ՏՀԶԿ Տնտեսական հետազոտություններ-Լատվիա» (OECD Economic Surveys, Latvia) աշխատությունում[2]: ՏՀԶԿ-ի նպատակն է մշակել այնպիսի քաղաքականություն, որը կապահովի առաջընթաց, հավասարություն, հնարավորություն և բարեկեցիկ կյանք բոլորի համար: ՏՀԶԿ-ն ունի գործունեության գրեթե 60 տարվա պատմություն: Կառավարությունների, քաղաքականություն մշակողների և քաղաքացիների հետ ՏՀԶԿ-ն մշակում է միջազգային նորմեր և փորձում է գտնել սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի հետ կապված մարտահրավերների մեղմման լավագույն տարբերակներ[3]: ՏՀԶԿ-ի կողմից Լատվիայի տնտեսության շուրջ կատարված հետազոտությունների արդյունքում դուրս են բերվել այն հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են Լատվիայի տնտեսական զարգացմանը, և առաջադրվել են դրանց լուծման ուղիներ: Լատվիայի նոր կառավարությունը ձևավորվել է 2019 թ. հունվարին: Հաշվի առնելով ՏՀԶԿ-ի կողմից տրված առաջարկությունները՝ կառավարությունը իր առջև դրել է ստորև ներկայացված առաջնահերթությունները:

Փողերի լվացման դեմ պայքար: Մշակվել է գործողությունների պլան, որի իրագործման ուղղությամբ տեխնիկական աջակցություն է ցուցաբերում ՏՀԶԿ-ն, և այս գործընթացին մասնակցում են համապատասխան նախարարությունների, Կենտրոնական բանկի ներկայացուցիչները, ֆինանսական շուկայի վերահսկողները և այլ շահագրգիռ անձինք: 2019 թ. բյուջեով նախատեսված է ֆինանսական միջոցներ հատկացնել իրավապահ մարմինների կարողությունների զարգացման նպատակով փողերի լվացման դեմ պայքարի ուղղությամբ վերապատրաստման դասընթացների կազմակերպման համար: Մշակվել են մի շարք օրենքների նախագծեր, որոնք ուղղված են փողերի լվացման դեմ պայքարի միջոցառումների իրականացմանը:

---

[1] https://www.seb.lv/ru/info/ekonomicheskaya-sreda/promyshlennost-kraeugolnyy-kamen-ekonomiki

[2] OECD Economic Surveys, Latvia, May, 2019, 102 p. http://www.oecd.org/economy/latvia-economic-snapshot/

[3] https://www.oecd.org/about/

Դատական համակարգի արդյունավետություն: Դատական համակարգի կարողությունների զարգացման նպատակով մշակվել են մի շարք վերապատրաստման դասընթացների ծրագրեր, որոնք ֆինանսավորվում են Եվրոպական սոցիալական ֆոնդից (Europeans Social Fund):

Մրցակցային քաղաքականություն: Նոր կառավարությունը փոփոխություններ է կատարել «Մրցակցության մասին օրենքում», որպեսզի Մրցակցության խորհուրդը իրավունք ունենա միջամտելու այն պետական կառավարման մարմինների աշխատանքին, որոնք համակրանք ունեն այն ձեռնարկությունների նկատմամբ, որոնց իրենք վերահսկում են:

Սոցիալական համահարթեցում և հմտություններ: Կառավարությունը խնդիր է դրել ապահովելու համընդհանուր առողջապահության համակարգ՝ ընդգրկելով ամբողջ բնակչությանը: Նախատեսվում է մեծացնել ցածր եկամուտ ունեցող անձանց սոցիալական պաշտպանություն ստանալու հնարավորությունները: Սոցիալական համապարփակ հմտությունների ռազմավարությունը մշակվել է ՏՀԶԿ-ի հետ համատեղ:

Վարչատարածքային բարեփոխումներ: Կոալիցիոն համաձայնագրին և խորհրդարանի մանդատին համապատասխան՝ շրջակա միջավայրի պաշտպանության և տարածքային զարգացման նախարարությունը որոշում է կայացրել խոշորացնել վարչատարածքային միավորները[1]:

Հաշվի առնելով կրթության և գիտության դերը տնտեսության զարգացման գործում՝ կարևորել ենք հատկապես այս ոլորտում իրականացվող քաղաքականության ուսումնասիրումը: Լատվիայի կրթության և գիտության ոլորտներում առկա խնդիրները ներկայացրել և դրանց լուծման տարբերակներ է առաջադրել ՏՀԶԿ-ն: Մասնավորապես՝ Լատվիայում տնտեսական զարգացմանը խոչընդոտող գործոններից է բարձր որակավորում ունեցող մասնագետների պակասը: Հենց այս հանգամանքն է Լատվիային հետ պահում նորարարական, առաջադեմ տեխնոլոգիաներից օգտվելուց և միջազգային գործընթացներին մասնակցելուց, որոնք կարևոր են տնտեսական աճի ապահովման համար: Թվային տեխնոլոգիաների մասով ոչ բավարար հմտությունները խոչընդոտում են նաև դրանց կիրառմանն արտադրական գործընթացներում: Պետք է նշել, որ 2009-2016 թթ. Լատվիայից արտագաղթածների 40%-ը կազմել են բարձր որակավորում ունեցող մասնագետները: Հետևաբար այս բացը լրացնելու համար Լատվիան պետք է մասնագետներ հրավիրի դրսից, միաժամանակ վերապատրաստի երկրում առկա աշխատանքային ռեսուրսները:

Որակյալ մասնագետների պակասը պայմանավորված է նաև մի շարք այլ հանգամանքներով: Մասնավորապես՝ աշխատողների շրջանում կատարված հարցումներից պարզ է դարձել, որ հարցվողների 35%-ի կողմից կրթական հաստատություններում ստացած գիտելիքները չեն համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին: Նախատեսվում է կրթական բարեփոխումները

[1] OECD Economic Surveys, Latvia, May, 2019, p. 9-10.

սկսել դպրոցից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքային և գյուղական բնակավայրերի դպրոցներում տրամադրված գիտելիքների միջև առկա է էական տարբերություն: Բարձր որակավորում ունեցող ուսուցիչները խուսափում են աշխատել գյուղական բնակավայրերում՝աշխատանքային ոչ բավարար պայմանների պատճառով: Ուստի առաջարկվում է որոշ արտոնություններ տրամադրել հատկապես գյուղական համայնքներում աշխատող ուսուցիչներին՝ ապահովելով նրանց համար բարենպաստ աշխատանքային պայմաններ:

Վերջին տասնամյակում Լատվիայի կառավարությունը մեծ առաջընթաց է ապահովել մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում, որը ներառում է նոր աշխատանքային ստանդարտների և դրանց համապատասխան՝ մասնագիտությունների և մոդուլային ծրագրերի մշակում: Այս գործընթացին մասնակցել են նաև արտաքին շահագրգիռ անձինք:

Աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող մասնագետ պատրաստելու համար կարևորվում է գործնական աշխատանքի վրա հիմնված ուսուցումը: Լատվիայում այս մոտեցումը կիրառվել է 2013 թ. և սկսել է արագ տեմպերով զարգանալ հատկապես 2017 թ. հետո, երբ կառավարությունը մեկնարկեց Եվրոպական սոցիալական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագիրը: Ուսուցման այս ձևը հատկապես տարածված է հյուրանոցային, ռեստորանային և գեղեցկության ծառայությունների ոլորտում: Նման պահանաջարկ նկատվում է նաև ֆինանսական ոլորտների համար մասնագետներ պատրաստող բարձրագույն ուսումնական հաստատություններում: Այս ուղղությամբ աշխատանքներ են տարվում ոչ միայն խոշոր կազմակերպությունների, այլև փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների ներգրավման համար:

Լատվիայում նորարարությունները քիչ են կիրառվում հատկապես բիզնեսի ոլորտում: Բիզնեսի վրա հիմնված հետազոտությունը և զարգացումը (R&D) կազմում է ՀՆԱ-ի ընդամենը 0,14%-ը: Երկարաժամկետ զարգացման համար շատ կարևոր է նորարարությունների կիրառումը: Դրա համար անհրաժեշտ է լատվիական կազմակերպությունների կողմից նորարարությունների նկատմամբ պահանջարկի ձևավորումը, իսկ բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետազոտական ինստիտուտների կողմից՝ նորարարական լուծումներ, առաջարկներ ներկայացնելու կարողությունը: Լատվիայում գիտական հետազոտությունների ֆինանսավորման ցածր մակարդակը և աշխատանքային պայմանները չեն նպաստում հետազոտությունների ուղղությամբ հասնել գերազանց արդյունքների: Հետազոտողները չեն ստանում մրցունակ աշխատավարձ: Նրանց գերակշիռ մասը միջինից բարձր տարիքի է: Լատվիայի կառավարության որոշմամբ 2014 թ. հետազոտական ինստիտուտները միավորվեցին, որոնց միջև համագործակցության հաստատման և ամրապնդման ուղղությամբ տարվում են համապատասխան աշխատանքներ: Գիտական հետազոտական աշխատանքների որակը բարձրացնելու համար կարևորվում է միջազգային համագործակցության հաստատումը: Միջազգային կրթական ծրագրերի համակարգումն

իրականացնում է Պետական կրթության զարգացման գործակալությունը (State Education Development Agency - SEDA):

Բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետազոտական ինստիտուտների համագործակցությունը կարող է բարելավվել նորարարական կարողությունների զարգացմանը նոր տեխնոլոգիաների փոխանցման միջոցով: Թվայնացման հետ մեկտեղ սա դառնում է նույնիսկ ավելի կարևոր: Մինչև 2018 թ. համալսարանները հիմնականում կենտրոնացած էին գիտական հրապարակումների վրա և չէին համագործակցում տնտեսության այլ ոլորտների ներկայացուցիչների հետ: Հենց այս հանգամանքն էլ խոչընդոտում էր գիտելիքի փոխանցման գործընթացը: Ներկայումս կառավարությունը մշակել է մեթոդական ցուցումներ գիտելիքի փոխանցման գործընթացի ուղղությամբ, որի հետ կապված՝ վերապատրաստման դասընթացներ է տրամադրում հետազոտական ինստիտուտներին:

Լատվիայում ձեռնարկատերերը նորարարությունները չեն դիտարկում որպես իրենց բիզնեսի զարգացման գրավական: Գործարարները տեխնիկական խնդիրներ լուծելու համար երբեմն ընդամենը «զրուցում են» համալսարանական հետազոտողների հետ, սակայն խուսափում են դիմել նորարական լուծումներին ֆորմալ հետազոտական համագործակցության միջոցով: Տեխնոլոգիական խորհրդատվական ծառայությունները արդյունավետ են այս կազմակերպություններին գիտելիքի փոխանցման առումով աջակցություն ցուցաբերելու համար և կարող են առաջին քայլը լինել ֆորմալ հետազոտական համագործակցության հաստատման համար: Կառավարությունը մշակել է «Նորարարական վաուչերի սխեմա»-ն, որի միջոցով կազմակերպությունները կարող են ստանալ տեխնոլոգիական խորհրդատվական ծառայություններ: Համալսարաններում գործող Տեխնոլոգիայի փոխանցման գրասենյակները (Technology Transfer Offices - TTOs) տեղափոխվեցին Լատվիայի ներդրումների և զարգացման գործակալություն (Latvian Investment and Development Agency - LIDA), որը զբաղվում է տեխնոլոգիաների փոխանցման արդյունավետ միջոցների մշակմամբ: Շատ փոքր կազմակերպություններին անհրաժեշտ է միավորել հետազոտական համագործակցությանը մասնակցելու համար: Որպեսզի փոքր կազմակերպությունները ևս կարողանան օգտվել տեխնոլոգիաների փոխանցման հնարավորություններից, կազմակերպվում են «Տեխնոլոգիական տոնավաճառներ»: Կառավարությունը մշակել է «Ինովացիոն-մոտիվացիոն ծրագիրը», որը կազմակերպում է մի շարք միջոցառումներ և խթանում հատկապես երիտասարդների շրջանում նորարական ձեռներեցության ձևավորմանը և զարգացմանը:

Հաշվի առնելով, որ գյուղատնտեսությունը Լատվիայի ազգային տնտեսության գերակա ոլորտներից է, ինչպես և Հայաստանում, նպատակահարմար ենք գտել առավել մանրամասն անդրադառնալ այս ոլորտում իրականացվող քաղաքականությանը:

Լատվիայի գյուղատնտեսությունը վերջին 20 տարիների ընթացքում զգալի տուժել է քաղաքական կտրուկ փոփոխությունների պատճառով: Անցյալ դարի

90-ականներին Լատվիայի հողերի կառավարման համակարգը հիմնովին փոխվեց, և կոլեկտիվ ֆերմերային տնտեսություններին փոխարինելու եկան մասնավոր ֆերմերային տնտեսությունները: Եվրամիության անդամ դառնալուց հետո գյուղատնտեսության ոլորտում անցում կատարվեց Եվրամիության միասնական ագրարային քաղաքականությանը (Common Agricultural Policy), որի հիմնական նպատակն է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված տնտեսվարողների կայուն եկամուտների ապահովմանը, շուկայի պահանջներին համապատասխան բարձրորակ արտադրանքի արտադրությանը, ինչպես նաև խրախուսել ֆերմերներին՝ գտնելու գյուղատնտեսության զարգացման նոր հնարավորություններ և բազմազանեցնելու գործունեության տեսակները: Ընդհանուր առմամբ կարող ենք նշել, որ Լատվիայի գյուղատնտեսության զարգացումը, մեծապես կախված է ԵՄ միասնական ագրարային քաղաքականությունից: Անդամակցությունից ի վեր ոլորտում նկատվել է զգալի առաջընթաց, սակայն ԵՄ այլ անդամ պետությունների համեմատ նրա մրցունակությունը բավականին ցածր է, ավելին՝ աշխատանքի արդյունավետության ցուցանիշներով ամենացածր երկրներից է[1]: Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը 7,7 % է: Մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում 23 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածք[2]:

Լատվիայի գյուղատնտեսության ոլորտում առավել զարգացած ուղղություններն են հացահատիկի և կաթի արտադրությունը: Շնորհիվ հացահատիկի արտադրության խոշոր ծավալների՝ այն տարածաշրջանում հացահատիկ արտահանող երկրներից մեկն է:

Տարերային աղետները գրեթե ամեն տարի հսկայական վնասներ են պատճառում Լատվիայի գյուղատնտեսությանը: Միայն 2019 թ. այդ վնասը կազմել է 400 մլն եվրո: Երկրի գյուղատնտեսության նախարարությունը բանակցություններ է վարում Եվրամիության խորհրդի հետ՝ հասցված վնասները որոշ չափով փոխհատուցելու ուղղությամբ[3]: Չնայած վերջին տարիներին տարերային աղետների բավականին մեծ վնասներին՝ ապահովագրական ընկերությունների առաջարկած ապահովագրության ոչ շահավետ պայմաններից դժգոհ ֆերմերները չեն շտապում ապահովագրել իրենց ցանքատարածությունները: 2017 թ. ապահովագրված է եղել ցանքատարածությունների ընդամենը 3,7%-ը, իսկ 2018 թ.՝ 15%-ը: Մասնագետները գտնում են, որ այց ցուցանիշը դեռևս շատ ցածր է: Ընդ որում՝ ցանքատարածությունների ապահովագրության դեպքում պետության մասնակցությունը կազմել է 65%[4]:Նախատեսվում է այն հասցնել 70%-ի և ընդլայնել ապահովագրական ռիսկերի ցանկը:

---

[1] https://www.zm.gov.lv/en/lauksaimnieciba/jaunumi/agriculture-is-one-the-most-ancient-sectors-of-the-national-economy?id=4096

[2] EU Common Agricultural Policy in Latvia 2014-2020, on-line` file:///F:/latviayi%20targmanelu%20nyut.pdf

[3] https://agroinsurance.com/ru/latviya-ubyitki-agrariev-iz-za-neblagopriyatnoy-pogodyi-dostigli-400-mln-evro/

[4] https://gorod.lv/novosti/294555-krestyane-latgalii-ne-gotovy-strahovatsya-ot-gubitelnyh-livnei

Գյուղատնտեսության ոլորտի սեզոնային աշխատողների համար մշակվել է հատուկ հարկային ռեժիմ: Ֆերմերները, որոնք ապրիլի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը սեզոնային բնույթի աշխատանք են ապահովում գյուղաշխատողների համար, աշխատողների աշխատավարձից կվճարեն 15% եկամտահարկ, սակայն յուրաքանչյուր օրվա համար ոչ պակաս, քան 0,7 եվրո: Սեզոնային գյուղաշխատողների գրանցման համար գործատուն պետք է օգտագործի «Գյուղի աջակցության ծառայության» դիմումների ընդունման էլեկտրոնային համակարգը՝ նշելով աշխատած օրերի թիվը, որքան աշխատավարձ է դրա համար ստացել, և ինչ պայմանագիր է նրա հետ կնքվել: Այլ տեղեկություններ անհրաժեշտ չեն: Ֆերմերը մեղմացված հարկային ռեժիմից օգտվելու համար պետք է

- ունենա մշտական օգտագործման իրավունքով իրեն պատկանող սեփականություն կամ վարձակալած հողակտոր, որի վրա կատարվում են մրգատու ծառերի, հատապտուղների և բանջարեղենների մշակման գյուղատնտեսական աշխատանքներ,
- գրանցած լինի այդ հողակտորը՝ միավոր հեկտարի համար միասնական հարկի վճարման համար,
- լինի միկրոձեռնարկության մասով հարկատու:

Իր հերթին աշխատողը մեղմացված հարկային ռեժիմից օգտվելու համար պետք է բավարարի հետևյալ 3 պահանջները.

- զբաղված լինի սեզոնային գյուղատնտեսական աշխատանքներում ոչ ավել, քան 65 օրացուցային օր մեկ կամ մի քանի ֆերմերների մոտ միաժամանակ,
- աշխատողի սեփական եկամուտը մի քանի ֆերմերներից մեկի մոտ չպետք է գերազանցի 3000 եվրոն,
- չորս ամսվա ընթացքում՝ մինչև սեզոնային աշխատանքների սկսելը, այդ աշխատողը չպետք է տվյալ ֆերմերի հետ մտած լինի աշխատանքային հարաբերությունների մեջ[1]:

Լատվիայի գյուղատնտեսության նախարարությունը ոլորտային կառույցների հետ համատեղ մշակել է «Գյուղատնտեսության զարգացման 2014-2020 թթ.» ծրագիրը, որը հաստատվել է Եվրահանձնաժողովի կողմից 2014 թ. ապրիլի 15-ին: Ծրագրի իրականացման համար հատկացվել է 1,5 միլիարդ եվրո, որից 1 միլիարդը ԵՄ միջոցներից է, իսկ 500 միլիոնը՝ երկրի պետական բյուջեից: Նշված ծրագրով նախատեսվել է իրականացնել հետևյալ միջոցառումները[2].

Գիտելիք և ուսուցում. միջոցառումը նպատակաուղղված է նպաստել գիտելիքի և նորարարության փոխանցմանը և տարածմանը գյուղատնտեսության ոլորտում, որի համար հատկացվել է 43,50 միլիոն եվրո, որը կազմում է ծրագրի բյուջեի շուրջ 3%-ը: Նշված ուղղության շրջանակներում, մասնավորապես, նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

---

[1] https://gorod.lv/novosti/304011-dlya-sezonnyh-selhozrabotnikov-osobyi-nalogovyi-rezhim

[2] Website of Ministry of Agriculture of Latvia -https://www.zm.gov.lv/en/saites/

✓ գիտելիքի փոխանցման և մասնագիտական տեղեկատվության տրամադրման դասընթացներ, կուրսեր, սեմինարներ, աշխատաժողովներ, փորձի փոխանակում ինչպես Լատվիայում, այնպես էլ արտերկրում, մասնավորապես՝ ԵՄ երկրներում: Նշված խումբ միջոցառումների համար ծրագրից հատկացվել է 13,38 մլն եվրո:

✓ Մասնագիտական խորհրդատվության տրամադրում անհատական մեթոդով, որի շրջանակներում տրամադրվում է տեղեկատվություն փոքր և միջին ֆերմերային տնտեսությունների արդյունավետ կառավարման համար, որոնք վերաբերում են ինչպես ձեռնարկատիրական գործունեության վարմանը, ներդրումների ներգրավմանը, այնպես էլ բնակլիմայական ռիսկերի կառավարմանը: Այս միջոցառման համար հատկացվել է 10,45 միլիոն եվրո:

✓ Երկրում գիտելիքահենք տնտեսություն վարելու համար ոլորտի գիտնականների, ֆերմերների և սննդի վերամշակման ձեռնարկությունների միջև համագործակցության ուժեղացմանն ուղղված միջոցառումներ, որի իրականացման համար ծրագրից հատկացվել է 19.66 մլն եվրո:

✓ Գյուղատնտեսական առաջադիմական տեխնոլոգիաներով վերազինել 3600 տնտեսություն, ինչը կնպաստի երկրում գյուղատնտեսական արտադրանքի բազմազանեցմանը և եվրոպական շուկայի պահանջներին համապատասխանեցմանը:

Մրցունակության բարձրացում. միջոցառման նպատակն է բարելավել ձեռնարկատիրական գործունեության մրցունակությունը գյուղատնտեսության բոլոր ճյուղերում և ուժեղացնել գյուղացիական տնտեսություն վարողների կենսունակությունը: Նշված միջոցառման համար հատկացվել է 584,31 միլիոն եվրո, որը կազմում է ծրագրի 38.16 %-ը, և նախատեսվել է իրականացնել հետևյալ միջոցառումները.

✓ *ներդրումներ ֆիզիկական ակտիվներում.* միջոցառման նպատակն է ներդրումներ կատարել գյուղացիական տնտեսություններում վերակառուցման նպատակով, ինչը կնպաստի արտադրության արդյունավետության բարձրացմանը, որն էլ իր հերթին կկրճատի շուկայի տատանումների բացասական ազդեցության հետ կապված ռիսկերը: Հատկացված ֆինանսավորումը կազմում է 328,76 միլիոն եվրո:

✓ *Ագրովերամշակման զարգացում, ներառյալ տնայնագործական արտադրությունը.* այս միջոցառումը նպատակ ունի սննդի արտադրության ձեռնարկություններում, տեխնոլոգիական և արտադրական օբյեկտներում ներդրումներ կատարել: Հատկացված ֆինանսավորումը կազմում է 75,59 միլիոն եվրո:

✓ *Փոքր տնտեսությունների զարգացում.* այս միջոցառման շրջանակներում փոխհատուցվում են փոքր ֆերմերային տնտեսությունների այն ծախսերը, որոնք կատարվել են բիզնեսի սկզբնական փուլում կապիտալ ակտիվներ ձեռք բերելու, ֆերմերային տնտեսությունների կառուցման կամ վերակառուցման, արտադրական գործընթացի արդիականացման համար: Այս ենթածրագրի նպատակն է աջակցություն ցուցաբերել փոքր գյուղացիական տնտեսությունն-

ին շուկայական պայմաններում մրցունակ արտադրանք արտադրելու համար: Հատկացված ֆինանսավորումը 34,75 միլիոն եվրո է:

✓ *Աջակցություն երիտասարդ ֆերմերներին.* այս միջոցառման շրջանակներում երիտասարդ ֆերմերին տրամադրում են տնտեսության վարման մի շարք արտոնություններ՝ այդպիսով մոտիվացնելով նրան զբաղվել գյուղատնտեսությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնականում երիտասարդներն են նորամուծությունների կիրառողները, այս նախաձեռնությունը նպաստում է երկրում առաջադիմական գյուղատնտեսության զարգացմանը, հետևաբար նաև՝ մրցունակ արտադրանքի արտադրությանը: Հատկացված ֆինանսավորումը 13,90 միլիոն եվրո է:

Համագործակցություն և ռիսկերի կառավարում. այս ծրագրային ուղղության նպատակն է նպաստել տնտեսվարողների և արտադրող խմբերի միջև համագործակցության ձևավորմանը և ամրապնդմանը, ինչը հնարավորություն կտա միասնական ուժերով առավել արդյունավետ կառավարել արտադրության գործընթացում առկա բոլոր տեսակի ռիսկերը: Ծրագրի շրջանակներում նաև ֆինանսական աջակցություն կցուցաբերվի բնական աղետներից տուժած տնտեսություններին և ռիսկերի կառավարման արդյունավետ տեխնոլոգիաների ներդրմանը: Այս գործընթացների իրականացման համար հատկացվել է 23,34 միլիոն եվրո, որը կազմում է ծրագրի բյուջեի 1,51%-ը:

Էկոհամակարգերի պահպանություն, վերականգնում և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործում. սա նպատակաուղղված է գյուղատնտեսության վարման գործընթացում էկոհամակարգերի խոցելիության նվազմանը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև կլիմայի փոփոխության մեղմմանը, մասնավորապես՝ CO_2-ի արտանետումների ցածր մակարդակի վրա հիմնված գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության վարմանը: Օրինակ՝ օրգանական գյուղատնտեսության զարգացման համար ավելի քան 2700 հա հողատարածքում կմշակեն բացառապես օրգանիկ արտադրանք՝ տնտեսվարողներին տրամադրելով անհրաժեշտ մասնագիտական և ֆինանսական աջակցություն: Նախատեսված միջոցառումների ցանկում առանձնահատուկ տեղ է հատկացված նաև գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործմանը: Ընդհանուր առմամբ այս խումբ միջոցառումների համար հատկացվել է 586,39 միլիոն եվրո, որը կազմում է ծրագրի բյուջեի 37.94% -ը, և նախատեսվել է իրականացնել հետևյալ միջոցառումները.

գյուղական տարածքների զարգացում. այս միջոցառման շրջանակներում իրականացվում են գյուղական բնակավայրերի ենթակառուցվածքների վիճակի բարելավման աշխատանքներ, մասնավորապես՝ միջհամայնքային ճանապարհների բարեկարգում, ոռոգման ցանցի և ջրամատակարարման համակարգի բարելավում, ինչպես նաև գյուղական բնակավայրերում կյանքը բարեկեցիկ և գրավիչ դարձնելու համար նախատեսվել են միջոցառումներ ծառայությունների որակի բարելավման և առավել մատչելի դարձնելու համար:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է գյուղական բնակավայրերի զար-

գացումը խթանելու նպատակով աջակցել տեղական տնտեսությունների հզորացմանը, բիզնեսի դիվերսիֆիկացմանը, տեղական ռեսուրսների առավելագույն արդյունավետ օգտագործմանը: Թվարկված միջոցառումների համար հատկացվել է 205.0 մլն եվրո, որը կազմել է ծրագրի ընդհանուր բյուջեի 13.3 % -ը[1]:

Եզրակացություններ և առաջարկություններ

Կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները հիմք են հանդիսանում փաստելու, որ Լատվիան և Հայաստանն ունեն մի շարք ընդհանրություններ, որոնք հնարավորություն են տալիս տեղայնացնելու Լատվիայի տնտեսական քաղաքականության որոշ ուղղություններ և մոտեցումներ: ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալուց հետո երկրում սկսվել են շուկայական տնտեսության անցման գրեթե նույն գործընթացները, որոնք բնորոշ են նախկին խորհրդային երկրներին: Եվրամիության անդամ դառնալուց հետո տնտեսական քաղաքականության հիմքում դրվեցին Եվրամիության օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի հիմնական դրույթները: Լատվիան համագործակցում է միջազգային տարբեր կառույցների հետ ինչպես ֆինանսական աջակցություն ստանալու, ներդրումային ծրագրեր իրականացնելու, այնպես էլ ինտեգրված տնտեսական քաղաքականություն մշակելու նպատակով:

Նեկայումս Լատվիայում գործում են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ընկերություններ, որոնց նկատմամբ պետությունը ցուցաբերում է հավասար և ոչ խտրական վերաբերմունք: Արտասահմանյան ներդրողներին ներգրավելու նպատակով Լատվիայի կառավարությունը նրանց տրամադրում է որոշակի իրավասություններ և արտոնություններ: Եվրամիության համաֆինանսավորմամբ իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են կրթություն-գիտություն-բիզնես կապի ամրապնդմանը: Կարևորելով գյուղատնտեսության դերը երկրի տնտեսությունում՝ Լատվիայի կառավարությունը մշակել է գյուղատնտեսության զարգացման 6 տարվա ռազմավարությունը, որտեղ հստակ նշված են իրականացվելիք միջոցառումները՝ հստակ նշելով դրանց համար հատկացված ֆինանսական միջոցների չափը:

Այսպես, ուսումնասիրելով Լատվիայի տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները՝ առաջակում ենք.

✓ ՀՀ-ում մշակել ներդրումային ծրագրերի ռազմավարություն՝ POLARIS-ի սկզբունքներով: Այսինքն՝ ստեղծել միասնական և համաձայնեցված համակարգ նախարարությունների, ինքնակառավարման մարմինների, ձեռնարկատիրական ենթակառուցվածքների և պետական հաստատությունների միջև ռազմավարական նշանակություն ունեցող տեղական և արտասահմանյան ներդրումային ծրագրերի իրականացման համար՝ այս գործընթացին մասնակից դարձնելով նաև մասնավոր հատվածին, համալսարաններին և գիտական ինստիտուտներին:

[1] Website of Ministry of Agriculture of Latvia -https://www.zm.gov.lv/en/saites/

✓ Նորարարական տեխնոլոգիաների և գիտելիքի փոխանցման նպատակով համալսարաններում և գիտահետազոտական ինստիտուտներում հիմնել հատուկ «գրասենյակներ», որտեղ ձեռնարկատերերը կներկայացնեն լուծում պահանջող իրենց խնդիրները, իսկ ուսանողները և գիտաշխատողները կփորձեն տրամադրել այդ խնդիրների լուծման իրենց տարբերակները: Այս ծառայությունները պետք է մատուցվեն վճարովի հիմունքներով:

✓ ՀՀ գյուղատնտեսությունում ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ավելի մեծ պետական աջակցություն ցուցաբերել գյուղատնտեսության ապահովագրության գործընթացին, որը ներկայումս իրականացվում է պիլոտային ծրագրի շրջանակներում (հիմնել վնաս գնահատողների անկախ ինստիտուտ, որը կֆինանսավորվի պետության կողմից, ագրոապահովագրական պետական ընկերություն, տրամադրել մասնագիտական խորհրդատվություն գյուղացիական տնտեսություններին և այլն): Այս գործընթացում կարևորում ենք այնպիսի մասնագետների ներգրավումը, որոնք տիրապետում են ապահովագրության և գյուղատնտեսության վերաբերյալ գիտելիքների և կարող են ներկայացնել ավելի հիմնավորված ու կիրառական առաջարկություններ գյուղատնտեսության ապահովագրության համակարգի արդյունավետ իրագործման ուղղությամբ:

✓ Նախագծային փուլում գտնվող «ՀՀ գյուղատնտեսական զարգացումն ապահովող 2020-2030 թթ. ռազմավարական ծրագրի» մեջ, որպես ագրարային քաղաքականության հիմնական ուղղություն, դիտարկել հետևյալները.

- ագրարային ոլորտում գյուղատնտեսական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրում և մասնագիտական խորհրդատվության տրամադրում,
- տնտեսվարողների և վերամշակողների մինչև սերտ պայմանագրային հարաբերությունների ձևավորում,
- ագրարային ոլորտում փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության համար բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորում,
- գյուղատնտեսական արտադրանքների մրցունակության բարձրացման համար արտադրամասերի տեխնիկական զինվածություն բարձրացում,
- գյուղական համայնքների ենթակառուցվածքների բարելավում:

Օգտագործված գրականության ցանկ

1. https://hy.wikipedia.org/wiki/Լատվիա
2. EU Common Agricultural Policy in Latvia 2014-2020, on-line`
   file:///F:/latviayi%20targmanelu%20nyut.pdf
3. https://countryeconomy.com/gdp/latvia
4. https://tradingeconomics.com/latvia/unemploymentrate?continent=europe
5. https://ec.europa.eu/eurostat/documents/2995521/10163468/3-16102019-CP-EN.pdf/edc3178f-ae3e-9973-f147-b839ee522578
6. https://spravochnick.ru/ekonomika/suschnost_celi_i_zadachi_smeshannoy_ekonomiki/smeshannaya_ekonomika_latvii/

7. https://www.latvia.eu/ru/economy/economic-history
8. http://finuni.ru/ekonomika-latvii/
9. https://www.seb.lv/ru/info/ekonomicheskaya-sreda/promyshlennost-kraeugolnyy-kamen-ekonomiki
10. OECD Economic Surveys, Latvia, May, 2019, 102 p. http://www.oecd.org/economy/latvia-economic-snapshot/
11. https://www.zm.gov.lv/en/lauksaimnieciba/jaunumi/agriculture-is-one-the-most-ancient-sectors-of-the-national-economy?id=4096
12. https://www.zm.gov.lv/en/partika/jaunumi/food-industry-is-the-largest-processing-sector-in-latvia-and-it-stands?id=4099
13. https://agroinsurance.com/ru/latviya-ubyitki-agrariev-iz-za-neblagopriyatnoy-pogodyi-dostigli-400-mln-evro/
14. https://gorod.lv/novosti/304011-dlya-sezonnyh-selhozrabotnikov-osobyi-nalogovyi-rezhim

References

1. https://hy.wikipedia.org/wiki/Լատվիա
2. EU Common Agricultural Policy in Latvia 2014-2020, on-line` file:///F:/latviayi%20targmanelu%20nyut.pdf
3. https://countryeconomy.com/gdp/latvia
4. https://tradingeconomics.com/latvia/unemploymentrate?continent=europe
5. https://ec.europa.eu/eurostat/documents/2995521/10163468/3-16102019-CP-EN.pdf/edc3178f-ae3e-9973-f147-b839ee522578
6. https://spravochnick.ru/ekonomika/suschnost_celi_i_zadachi_smeshannoy_ekonomiki/smeshannaya_ekonomika_latvii/
7. https://www.latvia.eu/ru/economy/economic-history
8. http://finuni.ru/ekonomika-latvii/
9. https://www.seb.lv/ru/info/ekonomicheskaya-sreda/promyshlennost-kraeugolnyy-kamen-ekonomiki
10. OECD Economic Surveys, Latvia, May, 2019, 102 p. http://www.oecd.org/economy/latvia-economic-snapshot/
11. https://www.zm.gov.lv/en/lauksaimnieciba/jaunumi/agriculture-is-one-the-most-ancient-sectors-of-the-national-economy?id=4096
12. https://www.zm.gov.lv/en/partika/jaunumi/food-industry-is-the-largest-processing-sector-in-latvia-and-it-stands?id=4099
13. https://agroinsurance.com/ru/latviya-ubyitki-agrariev-iz-za-neblagopriyatnoy-pogodyi-dostigli-400-mln-evro/
14. https://gorod.lv/novosti/304011-dlya-sezonnyh-selhozrabotnikov-osobyi-nalogovyi-rezhim

Գոհար Ոսկանյան
Ծաղկանուշ Միրզոյան

ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Համառոտագիր: Հոդվածում ներկայացվել են Լատվիայի ընդհանուր բնութագիրը, տնտեսության զարգացման փուլերը, կառուցվածքը և առանձնահատկությունները: Համահեղինակներն ուսումնասիրել են Լատվիայի կառավարության առաջնահերթությունները, ներդրումային միջավայրը երկրում, գիտակրթական համակարգում առկա խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ կատարվող աշխատանքները: Հաշվի առնելով գյուղատնտեսության դերը երկրի տնտեսությունում՝ հեղինակներն անդրադարձել են այդ ոլորտում կատարվող աշխատանքներին: Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում արվել են գիտագործնական բնույթի համապատասխան առաջարկություններ:

Բանալի բառեր. տնտեսություն, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, հարկային արտոնություններ, արտահանում, օտարերկրյա ներդրումներ, գիտական հետազոտություններ, ապահովագրություն

Гоар Восканян
Цахкануш Мирзоян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» РЕСПУБЛИКИ ЛАТВИИ

Аннотация: В статье представлены общее описание Латвии, этапы экономического развития, структура экономики и ее особенности. Соавторы изучили приоритеты правительства Латвии, инвестиционную среду в стране, проблемы, существующие в научно-образовательной системе, и действия, осуществляемые для их решения. Учитывая роль сельского хозяйства в экономике страны, авторы рассмотрели деятельность, проводимую в этой области. В результате проведенных исследований и анализов были предоставлены соответствующие рекомендации научного и практического характера.

Ключевые слова: экономика, промышленность, сельское хозяйство, налоговые льготы, экспорт, иностранные инвестиции, научные исследования, страхование

Gohar Voskanyan
Tsaghkanush Mirzoyan

"THE ECONOMIC MIRACLE" OF THE REPUBLIC OF LATVIA

Abstract: The article presents general outline of Latvia, stages of economic development, structure of the economy and its peculiarities. The co-authors have studied the priorities of the government of Latvia, investment environment in the country, the issues in the scientific and educational system and actions undertaken for their solution. Given the role of agriculture in the country's economy, the authors have reviewed the activities carried out in this sector. As a result of the research and analysis conducted, relevant recommendations of scientific and practical nature have been made.

Keywords: economy, industry, agriculture, tax credits, export, foreign investments, scientific research, insurance

Գրիգորի Վահանյան
Վիկտոր Զախարյան

ՄԻԱՑՅԱԼ ԱՐԱԲԱԿԱՆ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ» ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ

«**Նորարարությունը**, **հետազոտությունը**, **գիտությունը և տեխնոլոգիաները** ՄԱԷ-ի գիտելիքահենք, բարձր արտադրողական և մրցակցային տնտեսության հիմնասյուներն են, որոնք առաջնորդվում են բիզնեսի բարենպաստ միջավայրում, որտեղ պետական և մասնավոր հատվածները ձևավորում են արդյունավետ համագործակցություն» (UAE Vision 2021)[1]: Ըստ Համաշխարհային բանկի՝ Doing Business-ի լավագույն երկրների դասակարգման վարկանիշի՝ ՄԱԷ-ն աշխարհում 16-րդն է, իսկ Մերձավոր Արևելքի և Արաբական տարածաշրջանում՝ առաջինը: Համեմատելով, վերլուծելով և գնահատելով երկու տնտեսությունների զարգացման աստիճանը, այդ թվում՝ մրցունակության WCI (2019) և GII (2019)[2] ցուցանիշները՝ տեսնում ենք հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակը).

Համաձայն Համաշխարհային մրցունակության 2019 թ. զեկույցի՝ **Հայաստանը** 69-**րդ տեղում է, ՄԱԷ-ն՝ 25-րդ,** իսկ Գլոբալ նորարարության GII (2019) ինդեքսի համաձայն՝ համապատասխանաբար 64-**րդ և 36-րդ**:

Աղյուսակ

Հայաստանի և ՄԱԷ-ի համաշխարհային ցուցանիշների կլաստեր

Ցուցանիշ	ՄԱԷ-ի տեղը	Հայաստանի տեղը
Արտասահմանյան ուղղակի ներդրումներ	13	77
Կրթություն	17	112
Տնտեսության զարգացմանը նպաստող մարդկային կապիտալ	18	107
Համաշխարհային R&D թոփ երեք ընկերությունների միջին ծախսերը	18	43
Մտավոր սեփականության անդորրագրերի գրանցում	19	109
Համաշխարհային մրցունակության 2019 թ.	25	69
Հետազոտություն և զարգացում (R&D)	28	97
Տնտեսության ինստիտուցիոնալ կառուցվածք	28	64
ՏՀՏ և բիզնես մոդելների ստեղծում	29	88
Գիտելիքի կլանում	34	114
Մարդկային զարգացում (2019)	35	81
Գլոբալ նորարարության GII (2019)	36	64
ՀՆԱ-ի R&D ծախսեր (GERD)	36	86
QS վարկանիշային աղյուսակի 3 լավագույն համալսարանների միջին ցուցանիշ	37	78
Գիտելիքի տարածում	37	67
Բարձր տեխնոլոգիաների ներմուծում	38	109

[1] https://www.itp.net/605564-uae-announces-science-technology-and-innovation-policy
[2] https://www.globalinnovationindex.org/home

Բջջային հավելվածների ստեղծում	47	60
Գիտության ու ճարտարագիտության մասնագետներ	50	88
Համակարգչային ծրագրային ապահովման ընդհանուր ծախսեր	50	84
ISO 9001 որակի սերտիֆիկատներ	52	107
Մտավոր սեփականության վճարումներ	54	120
Բարձր և միջին բարձր տեխնոլոգիական արտադրանք	57	96
Առցանց ստեղծագործականություն	57	34
ՏՀՏ ծառայությունների արտահանում	59	15
Հոդվածների ցիտման (H index)	62	69
Գիտելիքների և տեխնոլոգիաների արտահանում	63	54
Գիտելիքի ազդեցություն	73	70
ՏՀՏ ծառայությունների ներմուծում	74	102
Գիտելիքի ստեղծում	88	37
Գիտական և տեխնիկական հրատարակություններ	101	13
Արտոնագրային հայտերն ըստ ծագման	106	29
Բարձր տեխնոլոգիաների արտահանում	107	77

Նշված ցուցանիշները մատնանշում են այն ուղղությունները՝ տնտեսության այն կարևոր ոլորտները, որոնց զարգացման առաջնահերթությունը պետք է արժանանա կառավարության առավելագույն ուշադրությանը: Միայն այս դեպքում մենք կարող ենք ունենալ խելացի տնտեսություն և խելացի կառավարիչներ:

Դուբայի կառավարությունն իրականացնում է արդյունավետ նպատակասլաց կառավարում՝ հիմնված ռազմավարական պլանավորման գործիքակազմի կիրառման վրա: Արդյունքում կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածում ՀՆԱ-ի իրական աճի տեմպերը կանխատեսվում են 2020 և 2021 թվականներին հասցնել համապատասխանաբար 3.8% և 2.8%:

2019 թ. առաջին երեք ամիսների ընթացքում տրվել է 6709 նոր բիզնես լիցենզիա, ինչը, համեմատած 2018 թ. նույն ժամանակահատվածի հետ, աճել է 29%-ով: Նմանապես, առաջին եռամսյակի համար բիզնեսի վստահության ինդեքսը (BCI) նախորդ տարվա համեմատ բարձրացել է 10.2 կետով[1]: Տարվա առաջին երեք ամիսների ընթացքում շուկայում զուտ արտաքին ներդրումները հասել են 680 միլիոն AED՝ ընդգծելով ներդրողների աճող վստահությունը Դուբայի տնտեսության զարգացման նկատմամբ:

«Գիտության, տեխնոլոգիայի և նորարարության նոր քաղաքականությունը շրջադարձային պահ է զարգացման և առաջընթացի համար»,- ընգծում է ՄԱԷ-ի նախագահ շեյխ Խալիֆա իբն Զայեդ ալ Նահյանը: ՄԱԷ փոխնախագահ, վարչապետ և Դուբայի ղեկավար շեյխ Մուհամմադ իբն Ռաշիդ ալ Մակտումը նշում է. «Գիտությունը, տեխնոլոգիան և ինովացիոն քաղաքականությունը մեր ճանապարհային քարտեզն են՝ գալիք սերունդների ավելի լավ ապագա կերտելու համար: Մենք ունենք մարդկային կապիտալ, արդյունավետ կառավարում և ֆինանսական ռեսուրսներ ՄԱԷ-ում գիտական առաջընթացի համար»:

Դեռ 2015 թ. ՄԱԷ-ի նախագահի կողմից հաստատվել է «Գիտության,

[1] https://www.zawya.com/mena/en/in-the-news

տեխնոլոգիաների և նորարարությունների (STI) քաղաքականությունը», որը կոչված էր նավթային դարի ավարտից հետո երկիրը նախապատրաստել նոր մարտահրավերների: Հաստատվել է **Ազգային նորարարությունների ռազմավարության ծրագիրը**, որի իրականացման նպատակով ձևավորել է **Գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների ազգային հանձնաժողով**:

Ծառայությունների մեկ հարթակ

Դուբայի կառավարության՝ մեկ էլեկտրոնային հարթակի սպասարկման կենտրոնը մատուցում է ինտեգրված ծառայություններ առանց այլ սպասարկման կենտրոններ[1] հաճախորդների այցելելության: Հարթակը մեկնարկվել է 2017 թ., օգտագործում է արհեստական ինտելեկտի տեխնոլոգիան, որը թույլ է տալիս մատուցելու ինտեգրված ծառայություններ: Հարթակի նպատակն է 2020 թ. արժանանալ աշխարհի առաջնորդի կոչմանը: Այն գտնվում է Դուբայում՝ Boulevard Emirates Towers-ի առաջին հարկում, խնամքով մշակված բաց միջավայրում[2], որը հիմնված է IBM-ի «Արհեստական ինտելեկտի» (AI) լուծումների և ռոբոտատեխնոլոգիաների ինտեգրված համակարգերի հարուստ փորձի վրա:

Խելացի քաղաք (Smart City)

2013 թ. հոկտեմբերին Դուբայի կառավարիչը ներկայացրեց մի նախագիծ, որը վերափոխելու էր Դուբայը «խելացի քաղաքի»: Նախագծի նպատակն էր հանրությանը տրամադրել մատչելի ու արդյունավետ ծառայություններ, հասնել անձանց ու Դուբայի կառավարության՝ միմյանց հետ միջգերատեսչական կապերի ստեղծմանը: Մարդիկ խելացի սարքերի միջոցով, որոնց հասանելի էր արագագործ անլար ինտերնետ կապը, պետք է ստանան տարբեր կառավարական ծառայություններ: Ծրագիրը իրականացվում է տրանսպորտի, կապի տարբեր ենթակառուցվածքների, տնտեսական ծառայությունների, կրթության, առողջապահության, քաղաքաշինության, շրջակա միջավայրի և կառավարման ոլորտներում: Երեք տարիների ընթացքում 6 սյուների և 100 նախաձեռնությունների, 1000 ծառայությունների միջոցով Դուբայը վերափոխվեց «խելացի քաղաքի»:

Խելացի քաղաքի առանձնահատկությունները

Wi-Fi անվճար: 2015 թ. մայիսին Դուբայում գործում էին ավելի քան 200 անվճար Wi-Fi կետեր[3], այդ թվում՝ լողափերում և այգիներում:

Դիզայն դիստրիկտ: Սա հասարակական վայր է, որը վերածվել է աշխարհի ամենախելացի գրասենյակի: Տարբեր ընկերություններ հաճախորդների համար ապահովում են խելացի լուծումներ և հեշտացնում գործարքները՝ լիցեն-

---

[1] http://www.s1.ae/English.html

[2] https://www.mediaoffice.ae/en/media-center/news/9/9/2017/shiekh-moahmmed-servi-ces-1-centre.aspx - Mohammed bin Rashid inaugurates 'Services 1' model centre.

[3] http://gulfnews.com/news/uae/government/more-than-200-spots-in-dubai-offer-access-to-free-wifi-1.1508134

զիաների, արտոնագրերի, մաքսային և այլ պետական ծառայությունների իրականացումը:

5-D **վերահսկողության կենտրոն**: Կենտրոնը աշխարհի նմանատիպ կենտրոններից խոշորագույնն է, որն օգտագործվում է տարբեր գործառույթների մշտադիտարկման նպատակով, իրականացնում է կառավարական տարբեր նախագծերի հավասարակշռված ցուցանիշների վերլուծություն ու գնահատում, ինչպես նաև ճանապարհների, եղանակային պայմանների և արտակարգ իրավիճակների վերահսկում:

Էլեկտրական մեքենաների լիցքավորման կայաններ և խելացի ավտոկանգառներ: Խելացի ավտոկայանատեղերը թույլ են տալիս կարգավորել վարորդների դիրքերը: Իրականացվում է Live երթևեկության մոնիտորինգ, որը վարորդներին օգնում է կառավարել երթևեկությունը, նախքան տնից դուրս գալը պլանավորել ճանապարհորդությունը:

Խելացի ջրի և էլեկտրական ցանցեր: Խելացի ջրի համակարգը օգնում է բաժանորդին վերահսկել ջրի օգտագործումը իրական ժամանակում: Խելացի էլեկտրական ցանցերը թույլ են տալիս վաճառել չօգտագործված արևային էներգիան:

«Ամենամեծ բաց գլոբալ լաբորատորիա»: Նրանց համար, ովքեր ցանկանում են նորարարությամբ զբաղվել, խթանում է նորարարությունը՝ անցկացնել հետազոտություններ, զարգացնել գիտությունը և անմիջապես կիրառել նորարարական գաղափարները:

Խելացի զբոսայգիներ: Ապահովում են կոնկրետ տեղեկատվություն եղանակային պայմանների, ծովի ջրի ջերմաստիճանի վերաբերյալ և ծառայում են որպես անվտանգության ուղեցույցներ:

RFID: Ռադիոհաճախականության նույնականացման համակարգը օգտագործում է ճանապարհատրանսպորտային պատահարների մասին տեղեկությունները, գործում է 2007թ. հուլիսից[1]:

Խելացի Nol Card[2]: Օգտագործվում է 2013 թ. սեպտեմբերից՝ որպես միասնական քարտ տրանսպորտային ծառայություններից օգտվելու և վճարելու համար:

RTA eWallet: 2013 թ. մայիսից գործում է առցանց հաշիվ ճանապարհների և տրանսպորտի ծառայությունների համար, որի միջոցով կարելի է կատարել առցանց վճարումներ:

QR կոդեր: 2011 թ. ապրիլից Դուբայի քաղաքապետարանը գործարկում է «Թվային City» նախագիծը, որի համաձայն՝ յուրաքանչյուր շինության տրամադրվում է արագ արձագանքման QR կոդ, որը պարունակում է բոլոր մանրամասները՝ կապված շենքի և հողամասի հետ: Օգտվողները կարող են իրենց բջջային հեռախոսների սկանի միջոցով արագ մուտք գործել քաղաքապետարանի ցանկալի eService ծառայություն: 2014 թ. հունվարին Դուբայի ոստիկանությունը

[1] https://www.salik.gov.ae/en

[2] http://www.nol.ae/RtaPortal/Portal.portal?_nfpb=true&_pageLabel=home_eWallet_default&lang=en&_nfls=false

հայտարարեց, որ իրենք պետք է կոդերի միջոցով սկսեն օգտագործել Segway-style՝ էլեկտրական հեծանիվների[1] նկատմամբ հսկողական ծրագիր[2]:

Տվյալների շտեմարան: Նախաձեռնությունը[3] հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչներին հնարավորություն է տալիս օգտվելու Դուբայի տվյալների շտեմարաններից, ինչը խթանում է նոր տվյալների ստեղծումը քաղաքի զարգացման համար, բարձրացնում պետական մարմինների, մասնավոր կազմակերպությունների, ներդրողների, բնակիչների և այցելուների կյանքի որակը:

Դուբայի Խելացի ինդեքս: Խելացի ինդեքսը մի շարք ցուցանիշների ամբողջություն է, որը կարևորում է բոլոր տեսակի ձեռքբերումները քաղաքում և պարզ ներկայացնում ապագա հնարավորությունները: Ինդեքսը բաղկացած է վեց բաժիններից, որոնք նկարագրում են միջոցառումների ցուցանիշները, ցույց են տալիս խելացի նախաձեռնությունների հաջող իրականացումը կամ զարգացումը ապրանքների և ծառայությունների միջոցով:

Հավելվածներ: Դուբայի կառավարությունը ձեռնամուխ է խելացի հավելվածների ստեղծմանը, որոնք հեշտացնում են կյանքը, թույլ են տալիս արագ մուտք գործել մատուցվող ծառայություններ և կատարել վճարումներ: Օրինակ՝ DubaiNow հավելված տարբեր ծառայությունների համար. կոմունալ ծառայություններ, կրոն, առողջություն, կլինիկական օրդինատուրա, անվտանգություն և արդարադատություն, կրթություն և բիզնես: DubaiNow-ն հասանելի է iTunes-ում[4] և Google Play-ում[5], նաև DubaiNow կայքի[6] միջոցով: Այն ապահովում է ակնթարթային թվային մուտք դեպի ավելի քան 70 կառավարական և մասնավոր ծառայություններ՝ բոլորը մեկ տեղում, մեկ պատուհանի հայեցակարգով:

Խելացի Udrive[7] հավելվածը թույլ է տալիս հաճախորդներին, հատկապես հասարակական տրանսպորտային միջոցներից օգտվողներին կարճ ժամանակահատվածի համար (վեց ժամը չգերազանցող) ավտոմեքենաներ վարձակալել: Ռեզիդենտ հաճախորդները պետք է նախ գրանցվեն համակարգում՝ ծառայությունից օգտվելու համար, մուտքագրեն իրենց ID-ն, վարորդական վկայականի և վարկային քարտի տվյալները, բացի ID տիրապետողի լուսանկարից: Այցելուներից կարող են պահանջվել նաև անձնագրի, վիզայի, վարորդական վկայականի և վարկային քարտի տվյալները: Հաճախորդին տրվում է PIN կոդ՝ անհատական նույնականացման համար (PIN), որտեղ նշված են օգտվողի անունը և գաղտնաբառը:

---

[1] https://government.ae/en/information-and-services/transportation/smart-mobility-solutions/makani

[2] http://gulfnews.com/news/uae/use-a-segway-to- beat-traffic-congestion-1.1283477

[3] https://www.smartdubai.ae/initiatives

[4] https://itunes.apple.com/ae/app/dubainow

[5] https://play.google.com/store/apps/details?id=com.deg.mdubai&hl=ar

[6] https://dubainow.dubai.ae/en/pages/default.aspx

[7] Android (https://play.google.com/store/apps/details? id=ae.udrive&hl=ar) / iOS (https://itunes.apple.com/ae/app/udrive-uae/id1062813715?mt=8) և ekar (Android (https://play.go-ogle.-com/store/apps/details?id=ae.ekar&hl=ar) / iOS (https://itunes.apple.com/ae/app/ekar/id106-8848-847?mt=8)

Արտահանողների դարպաս: Կառավարությունը գործարկել է «Արտահանողների դարպաս» պլատֆորմը, որը առավել հետախուզվող ընդերքի մասին տրամադրում է ՄԱԷ-ի և Դուբայի կենսական, կարևոր տնտեսական և առևտրային տվյալներ: Պլատֆորմը արտահանողներին տրամադրում է մանրամասն տեղեկատվություն, օգնում է գտնել արտահանման նոր շուկաներ իրենց արտադրանքի և ծառայությունների համար, բացահայտել գործընկերներ և գնահատել արտահանման ծախսերը:

Տպավորիչ փաստեր

ՄԱԷ-ի բնակչությունը կազմում է 4.5 միլիոն մարդ, որից արաբները 1/3 մասն են, իսկ տեղաբնակները՝ 11%, մնացածները Պակիստանից, Հնդկաստանից, Բանգլադեշից, Շրի Լանկայից և Հարավային Ասիայի մյուս երկրներից ներգաղթածներ են որոնք ժամանակավոր աշխատողի կարգավիճակով տեղափոխվել են ՄԱԷ: Բնակչության 85%-ը չի համարվում երկրի քաղաքացի: Արաբ ներգաղթածները հիմնականում Պաղեստինի բնակիչներ են: Բնակչության 88%-ը կենտրոնացված է քաղաքներում: Խոշորագույն և ավելի դինամիկ զարգացող քաղաքը Դուբայն է՝ 1, 5 միլիոն բնակչությամբ:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների (FDI) ներհոսքը Դուբայ արագանում է. այն 2018 թ. հասավ AED 38,5 միլիարդի, ինչը 2017 թ. մակարդակից 41 տոկոսով ավել է: 2018 թ. ՀՆԱ-ի աճին նպաստել է նաև արտադրողականության աճը, որը 2017 թ. համեմատ 2018 թ. աճել է երկու տոկոսով: Արտասահմանյան ուղղակի ներդրումների մասին օրենքը նպաստել է Դուբայի տնտեսական գործունեությանը: 2019 թ. թողարկվել է 38.377 նոր արտոնագիր, ինչը ռեկորդային աճ է գրանցել 2018 թ. համեմատ (20.129): Դա հանգեցրել է 184.437 նոր աշխատատեղի ստեղծման: Դուբայում վարձակալության արժեքը անցյալ տարի հասել է AED 26,2 միլիարդի: 2019 թ. 2018 թ. համեմատ չեղյալ հայտարարված լիցենզիաների թիվը նվազել է ՝ 5.037-ից հասնելով 4.949-ի:

Դուբայի կառավարությունը 2020 թ. որպես ներդրումային նպատակակետ հայտարարել է գլոբալ ռազմավարությունների խթանման հիմնական ծրագրերի մասին: Հունվարի 14-ին հայտարարվել է «Դուբայի ապագա թաղամաս» նախաձեռնության մասին, որը նվիրված է նոր տնտեսությանը: «Դուբայի Future District-ը կկապի DIFC-ը, Emirates Towers-ը և Դուբայի World Trade Center-ը՝ այն դարձնելով Մերձավոր Արևելքի ամենամեծ ապագա տնտեսությանը նվիրված կենտրոնացված թաղամաս: Այն կներառի հետազոտական կենտրոն, ինկուբատորներ և նորարարական տարածքներ ապագա տնտեսության համար»: Դուբայի ղեկավարությունը հայտարարել է Դուբայի ապագա տնտեսության հիմնադրամի՝ AED 1 միլիարդ դրահմի հիմնադրամի գործարկման մասին, իսկ կառավարությունը հաստատել է մինչև 2025 թ. AED 2 տրիլիոն՝ արտաքին առևտրի ծրագրերի համար ուղղված Դուբայում ներդրումների, առևտրի և տուրիստական ծառայությունների խթանման նպատակով աշխարհում 50 գրասենյակների ստեղծման աջակցությունը:

Սկսնակ ձեռնարկությունների զարգացմանն աջակցելու և ձեռնարկատերերին օգնելու համար առանցքային դեր է ունենալու ստեղծագործական գոտին՝ որպես հզոր շարժիչ նորարարության և տնտեսական աճի ապահովման համար: 2019 թ. Դուբայի տնտեսական զարգացման դեպարտամենտը նախորդ տարվա համեմատ տվել է 90%-ով ավելի շատ բիզնես արտոնագրեր: Ընկերությունները կարող են ձևավորվել որոշակի ոլորտներում 100%-անոց արտաքին ներդրումներով: Արտասահմանյան ներդրողները հիմնականում **Միացյալ Թագավորությունից**, **Սաուդյան Արաբիայից**, **Հնդկաստանից**, **Չինաստանից**, **Բանգլադեշից**, **Պակիստանից**, **Եգիպտոսից**, **Հորդանանից և Սուդանից** են: 2020 թ. հոկտեմբերից մինչև 2021 թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում Դուբայում առաջին անգամ իր պատմության մեջ կանցկացվի Համաշխարհային ցուցահանդես՝ Expo 2020, որտեղ 192 մասնակից երկրների 25 միլիոն այցելուի համար կցուցադրվի միջազգային փորձը: Expo 2020-ի թեման է՝ «Մտքերը միացնել՝ ապագան կերտելու համար». գլոբալ հիմնախնդիրների կայուն լուծումներ տալը պահանջում է մշակույթների, ազգերի և տարածաշրջանների միջև համագործակցություն:

2019 թ. Knight Frank-ի գլոբալ բնակելի քաղաքների ինդեքսում Դուբայում գրանցվել է գույքի գների 7,3% անկում: Այնուամենայնիվ, դա ազդանշան է տնտեսական դիվերսիֆիկացիայի համար, որը ամուր հեռանկար ունի:

2020 թ. Ստեղծագործական շրջանը՝ Creative Zone-**ը**, կենտրոնանալու է նոր նախաձեռնությունների իրականացման վրա, որոնք կշարունակեն աջակցել տարածաշրջանում ՓՄՁ-ների, սկսնակ ձեռնարկությունների և ձեռնարկատերերի զարգացմանը: Մշակվել է Creative Zone-ի «Սկսնակ արագացնող» նոր ծրագիրը:

2030-2117**թթ. ճանապարհային քարտեզ**[1]

Մարս 2117 **նախագիծը**: ՄԱԷ-ն մտադիր է առաջին մարդկային արբայնակը ուղարկել Մարս: Դա կլինի արաբական աշխարհում առաջին առաքելությունը, որը նախատեսվում է սկսել 2020 թ.: Ակնկալվում է, որ այն կտևի 9 ամիս, ճանապարհորդությունը կկազմի 62 միլիոն կիլոմետր դեպի Կարմիր մոլորակ: Առաքելության նպատակն է ուսումնասիրել Մարսի մթնոլորտը և բացահայտել կյանքը բացառող պատճառները: Շեյխ Մուհամմադ իբն Ռաշիդը ասել է, որ նախագիծը մի սերմ է, որը բույսեր է ակնկալում, որպեսզի ապագա սերունդները օգուտներ քաղեն՝ պայմանավորված նոր գիտելիքների ստեղծմամբ: Նա հրահանգներ է տվել ստեղծել Տիեզերական կենտրոն Մարս 2117 նախագծի իրականացման նպատակով և պատրաստել 100-ամյա ծրագիր: Ըստ ծրագրի՝ կառուցվելու է մասնագիտացված ազգային կադրերի պատրաստման կենտրոն, որտեղ զարգացնելու են տիեզերական գիտության կարողությունները՝ հետազոտությունների, արհեստական ինտելեկտի, ռոբոտատեխնիկայի և առաջադեմ տիեզերական տեխնոլոգիաների մշակման նպատակով: ՄԱԷ-ն տեղ է գտնելու

[1] https://www.government.ae/en/about-the-uae/uae-future

աշխարհում լավագույն ինը երկրների շարքում, որոնցում տիեզերական գիտությունների բնագավառներում ներդրումներ են իրականացվում:

Մարս գիտական քաղաք: ՄԱԷ-ում կկառուցվի համալիր, որը կոչվելու է Մարս գիտական քաղաք: Այն բաղկացած կլինի լաբորատորիաներից, որտեղ կիրականացվեն սննդի, ջրի և էներգիայի, գյուղատնտեսության արտադրանքի թեստավորումներ և ուսումնասիրություններ՝ ապահովելով սննդամթերքի անվտանգությունն ապագայում: Գիտական քաղաքը կներառի լաբորատորիա, որը կստեղծի Կարմիր մոլորակի տեղանքի պայմանները. կոշտ շրջակա միջավայրում 3D տպագրության տեխնոլոգիայով կկառուցվեն սարքավորումներ ջերմության և ճառագայթման մեկուսացման համար: Համապատասխան գիտնականներից և տիեզերագնացներից կազմված թիմը մեկ տարի կապրի նշված լաբորատորիայում՝ Մարսի միջավայրը մոդելավորող պայմաններում:

2071: **ՄԱԷ-ի հարյուրամյակին** նվիրված առաջարկներն ամրացնելու են երկրի հեղինակությունը և ուժը:

2051: **Պարենային անվտանգություն**. ՄԱԷ-ի նպատակն է դառնալ աշխարհի լավագույն երկիրը՝ 2051 թ. Global սննդամթերքի անվտանգության ինդեքսով տեղ գտնել լավագույն 10 երկրների ցանկում:

2050: 2017 թ. ՄԱԷ-ն գործարկել է **Էներգետիկ ռազմավարություն** 2050, որը առաջարկի և պահանջարկի վրա հիմնված առաջին միասնական էներգետիկ ռազմավարությունն է: Ռազմավարությունը նպատակ ունի բարձրացնել մաքուր էներգիայի մասնաբաժինը ընդհանուր էներգետիկայի ծավալում 25%-ից մինչև 50%:

2050: **Դուբայի Մաքուր էներգիա ռազմավարություն**: Այդ ռազմավարության նպատակի ներքո Դուբայի էներգետիկայի պահանջների 75 տոկոսը կգեներացվի մաքուր աղբյուրներից: Ռազմավարությունը նաև նպատակ ունի Դուբայը դարձնել գլոբալ մաքուր էներգիայի և կանաչ տնտեսության կենտրոն: Այն կկառուցվի հինգ հիմնական սկզբունքների համադրությամբ՝ ենթակառուցվածքներ, օրենսդրություն, ֆինանսավորում, կարողություններ և հմտություններ, ինչպես նաև շրջակա միջավայրի և էներգետիկ համակարգերի համաձուլում: Սույն ռազմավարության ենթակառուցվածքը ներառում է նաև այլ նախաձեռնություններ, ինչպես, օրինակ, **Արեգակնային պարտեզը**, որն աշխարհում մեկ վայրում խոշորագույն արևային էներգիայի կայանն է 5000 մվտ-ի հզորությամբ: Արեգակնային պանելների համալիրի համար նախատեսվել է 12 միլիարդ դրահմ (3.27 միլիարդ դոլար): Համալիրը կզբաղեցնի մոտ 48 քառ. կմ տարածք: Նախատեսում է մինչև 2030 թ. ավելացնել արևային էներգիայի մասնաբաժինը էմիրության ընդհանուր կարիքների մեջ մինչև 5 տոկոս: Ստեղծվելու է այնպիսի միջավայր, որը բաղկացած կլինի արևային էներգիայից (25 տոկոս), միջուկային էներգիայից (7 տոկոս), մաքուր ածխից (7 տոկոս) և գազից (61 տոկոս): Աստիճանաբար մինչև 2050 թ. բարձրացվելու է մաքուր էներգիայի ծավալի աճը՝ 75 տոկոս, իսկ Դուբայ քաղաքը կդառնա աշխարհում նվազագույն ածխածնի քաղաք:

2036: **ՄԱԷ-ի** նպատակն է 21 տոկոսով նվազեցնել ընդհանուր պահանջարկը **ջրային ռեսուրսների նկատմամբ**:

2031: **Ազգային առաջատար գիտությունների** օրակարգը նախանշում է գիտական նպատակների գերակայություն, որը պետք է իրականացվի մինչև 2031 թ.: Օրակարգը օգտագործելու է առաջադեմ գիտություններն ապագա մարտահրավերների լուծումների համար և աջակցելու է կառավարության հարյուրամյա պլանին: Երկրում առավելագույն ռեսուրսներից օգտվելու համար Օրակարգը սահմանում է ութ գիտական առաջնահերթություններ և 30 գիտական թիրախներ: Այն ստեղծվելու է 50 առաջատար մասնավոր և հասարակական կազմակերպությունների ավելի քան 100 փորձագետների ջանքերով՝ 55 օժանդակ մարմինների հետ համագործակցության արդյունքում: Այն կիրականացվի պետական կառավարման 10 սուբյեկտների մասնակցությամբ:

2017 թ. գործարկված **Արհեստական ինտելեկտի ռազմավարությունը** (AI) առաջին մեգա նախագիծն է տարածաշրջանում և աշխարհում, որը նպաստելու է կառավարության գործունեության արդյունավետության բարձրացմանը:

2030: **Արդյունաբերական ռազմավարություն**: 2016 թ. հունիսին մեկնարկել է **Դուբայի արդյունաբերական ռազմավարության** 2030 ծրագիրը: Ռազմավարությունը պարունակում է հինգ նպատակ՝ բարձրացնել արտադրանքի ծավալները, ավելացված արժեքի հիման վրա ստանալ լրացուցիչ եկամուտներ, բարձրացնել գիտելիքահենք նորարարության մակարդակը, խթանել կանաչ արտադրութան ծավաները, նպաստել էներգաարդյունավետ արտադրությանը և Դուբայը դարձնել համաշխարհային իսլամական արտադրանքի շուկայի կենտրոն: Ռազմավարությունն ունի վեց առաջնահերթ ենթաոլորտներ՝ տիեզերական, ծովային, մետաղների, դեղերի և բժշկական սարքավորումների, սննդամթերքի և խմիչքների, մեքենաների և սարքավորումների: Ռազմավարությունը պարունակում է 75 նախաձեռնություններ, մինչև 2030 թ. AED 160 մլրդ ներդրումներ:

2014 թ. ՄԱԷ-ում նախաձեռնվել է **նորարարությունների ազգային ռազմավարությունը**՝ նպատակ ունենալով յոթ տարվա ընթացքում այն դարձնել աշխարհի ամենաարդիական երկրներից մեկը: Ռազմավարությունը խթանելու է նորարարությունը յոթ ոլորտներում՝ վերականգնվող էներգիա, տրանսպորտ, կրթություն, առողջապահություն, տեխնոլոգիաներ, ջուր և տարածքներ: Ռազմավարության առաջին փուլն իր մեջ ներառում է 30 ազգային նախաձեռնություններ, որոնք պետք է ավարտվեն երեք տարվա ընթացքում: Դրանք ներառում են նոր օրենսդրություն, ինովացիոն ինկուբատորներ, ներդրում մասնագիտական հմտությունների ձևավորման համար, մասնավոր հատվածի խթանների ստեղծում, միջազգային հետազոտական գործընկերությունների ապահովում և ինովացիոն դրայվի իրականացում: Կառավարության այդ ռազմավարությունը հիմնված է չորս սյուների վրա՝

1. նորարարության միջավայր,
2. ինստիտուցիոնալացման նորարարական գործելակերպեր,
3. մասնավոր հատվածի նորարարություն. կխթանվի ընկերությունների նորարարության և գիտական կենտրոնների ստեղծումը,
4. հնարավորություններ կստեղծվեն անհատներին բարձր նորարարական

հմտություններ փոխանցելու համար, կկենտրոնացվեն գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության և մաթեմատիկայի դասընթացները:

Դուբայ Vision 2021 ծրագիրը **Ազգային նորարարության ռազմավարություն է**, որի նպատակն է մինչև 2021 թ. ՄԱԷ-ն դարձնել աշխարհի լավագույն երկրներից մեկը:

Vision 2021-ը յոթ տարվա ազգային օրակարգ է՝ բաժանված վեց ազգային առաջնահերթությունների.

1. պահպանել ինքնությունը,
2. ստեղծել անվտանգ հասարակական և արդար դատաիրավական համակարգ,
3. ստեղծել գիտելիքի տնտեսություն,
4. առաջին տոկոսադրույքը կատարել կրթության համակարգի զարգացման վրա՝ կրթությունը դարձնել ազգային օրակարգ,
5. ստեղծել համաշխարհային կարգի առողջապահական համակարգ,
6. ստեղծել կայուն միջավայր և ենթակառուցվածքներ:

Վերոգրյալ հեռանկարները բաժանվում են 6 թեմաների. յուրաքանչյուրը կարևորում է մի խումբ ռազմավարական զարգացման նպատակներ, և միասին ձևավորում են **Դուբայ քաղաքի զարգացման տեսլականը մինչև** 2021 **թ**.: Դրանք են՝

1. երջանիկ և ստեղծագործ ժողովուրդ,
2. ներառական հասարակություն,
3. ապրելու, աշխատելու և այցելության համար նախընտրելի վայր,
4. խելացի և կայուն քաղաք,
5. համաշխարհային տնտեսության առանցքային հանգույց,
6. գերազանց և մրցունակ կառավարություն:

2016 թ. հունվարին իրականացվել է Դուբայի 2021 **Առողջապահության ռազմավարությունը**, որը ներառում էր առողջ ապրելակերպ, գերազանց ծառայություն, խելացի առողջապահություն և կառավարում, ինչպես նաև 6 նպատակ, 15 ծրագիր և 93 նախաձեռնություն: Արդյունքում՝ քրոնիկ հիվանդություններ ունեցող հիվանդներին բժշկական օգնություն կտրամադրվի ամենաբարձր որակի ապահովմամբ, ինչպես նաև կզարգացվի հիվանդությունների վաղ հայտնաբերման մշակույթը: Ռազմավարությունն ունի 6 նպատակ՝ ապահովել առողջ և անվտանգ միջավայր Դուբայի ժողովրդի համար, ապահովել բարձր որակի համապարփակ և միասնական առողջապահական համակարգի տրամադրումը, հասնել ոլորտում նորարարության, բարելավել առողջապահական արդյունավետության տրամադրումը, ստեղծել միասնական տվյալների բազա, որը պետք է նպաստի Սմարթ կառավարության քաղաքականությանը նպաստող որոշումների կայացմանը, ստեղծել Դուբայում արդյունավետ էկոլոգիական համակարգ առողջապահության ոլորտի մասնավոր և հանրային հատվածների հետ համագործակցությամբ:

Կրթություն 2020: Ներառում է մի շարք հավակնոտ ինգամյա ծրագրեր, որոնք նախատեսված են կրթության համակարգում, հատկապես ուսուցիչների

և ուսանողների միջավայրում էական որակական բարելավում իրականացնելու համար: Խելացի ուսուցման ծրագրերը, ուսուցիչների նոր ծածկագրերը, լիցենզավորման և գնահատման համակարգերը, ինչպես նաև ուսումնական ծրագրերի վերանայումը, ներառյալ անգլերենի միջոցով մաթեմատիկայի և այլ գիտությունների դասավանդումը ռազմավարության մաս են կազմում[1] :

Դուբայի Harbour **աշտարակը**: «The Tower Dubai Creek Harbour»-ը կլինի աշխարհի ամենաբարձր աշտարակը, որի կառուցումը կավարտվի 2020 թ.: Այն կամրապնդի ՄԱԷ-ի հեղինակությունը ճարտարապետության, ճարտարագիտության և շինարարության ոլորտներում, կսահմանի նոր համաշխարհային ուղղորդման կետ և կծառայի որպես մագնիս ամբողջ աշխարհի զբոսաշրջիկների և այցելուների համար:

Masar 2020: Ենթադրում է **ճանապարհային ցանցի և տրանսպորտային համակարգի** զարգացում Դուբայում: 10.6 միլիարդ AED արժողությամբ նախագիծը ենթադրում է Դուբայի մետրոյի Կարմիր գծի երկարացում Նախելի նավահանգստից և աշտարակի կայարանից 15 կմ հեռավորության վրա՝ մինչև «Էքսպո 2020» կայանի տեղակայումը: Երկարաձգված գիծը կկազմի 11.8 կմ ճանապարհահատված և 3.2 կմ ստորգետնյա անցուղի:

Դուբայի 2020 **զբոսաշրջության ռազմավարությունը** ճանապարհային քարտեզ է, որի հիմնական նպատակն է ներգրավել տարեկան 20 միլիոն այցելու: Ռազմավարությունը հետամուտ է միջազգային ժամանցի և բիզնես ճանապարհորդների համար Դուբայը դարձնել «առաջին ընտրություն»: Սա ներառում է միջոցառումների, տեսարժան վայրերի, ենթակառուցվածքների, ծառայությունների և փաթեթների առաջարկներ, դրանց ընդլայնումը և Դուբայը գրավիչ դարձնելը ավելի լայն հանրության համար:

2016 թ. ապրիլից իրականացվում է **Դուբայի** 3D **Տպագրություն ռազմավարությունը**: Այս նախաձեռնության նպատակն է նպաստել 2030 թ. Դուբայի զարգացմանը՝ որպես աշխարհի 3D տպագրության առաջատար հանգույցի, շինարարության, բժշկական սարքավորումների և սպառողական ապրանքների ոլորտներում: Ռազմավարության հիմնական նպատակներից է նաև 2030 թ. ապահովել Դուբայում շենքերի 25 տոկոսի ծավալը՝ հիմնված 3D տպագրության տեխնոլոգիաների վրա:

Տրանսպորտային ռազմավարության նպատակն է մինչև 2030 թ. քաղաքում փոխադրումների ընդհանուր ծավալի 25 տոկոսը վերափոխել ինքնավար ռեժիմի: Ակնկալվում է, որ ռազմավարությունը բերելու է 22 միլիարդ AED տարեկան տնտեսական եկամուտներ մի շարք ոլորտներում՝ կրճատելով տրանսպորտային ծախսերը, ածխածնի արտանետումները, վթարները և բարձրացնելով անհատների արտադրողականությունը, ինչպես նաև խնայելով սովորական տրանսպորտում վատնված հարյուր միլիոնավոր ժամերը: Ռազմավարությունը կօգնի կրճատել տրանսպորտային ծախսերը 44%-ով, խնայել տարեկան մինչև

[1] https://government.ae/en/more/uae-future

900 մլն AED: Այն կօգնի նաև խնայել 1.5 մլրդ AED տարեկան՝ նվազեցնելով շրջակա միջավայրի աղտոտումը 12%-ով:

Ռազմավարությունը նաև նպատակ ունի նվազեցնել ճանապարհատրանսպորտային պատահարները և կորուստները 12%-ով, որը համարժեք է տարեկան 2 մլրդ AED խնայողության, ինչպես նաև նվազեցնել ավտոկանգառների համար հատկացված տարածքները: Հիմնական ոլորտներն են մետրոն, ավտոբուսները և տաքսիները:

Թվային ԱՄԷ ծրագրի նպատակն է ՄԱԷ-ն դարձնել **խելացի երկիր**, որտեղ կկիրառվեն հետևյալ տեխնոլոգիաները՝ Թվային invoicing-ը (eInvoice), eServices որոնումը առանցքային ոլորտներում, Հինգերորդ Generation-5G, Թվային կառավարության մոդելը, Խելացի՝ Smart Դուբայը, Կիբեր անվտանգությունը և թվային անվտանգությունը, Մեծ տվյալները, Արհեստական ինտելեկտը, Ռոբոտաշինությունը, Վիրտուալ իրականությունը, Blockchain-ը, Gamification-ը, Քվանտային computing-ը, RegLab օրենսդրությունը, Ընդլայնված բջջային կապը:

Խելացի քաղաքի զարգացումը գնահատվում է ենթաչափորոշիչներով, որոնք ներառում են տարբեր գնահատման թվային հասունության աստիճան յուրաքանչյուր ոլորտում և, որպես կանոն, արտահայտվում են երեք ցուցանիշով՝ շատ ցածր, շատ բարձր և բավարար: Բոլոր ոլորտների կառավարիչների համար պատրաստված են ընթացակարգեր և գործողությունների քարտեզներ, որոնք նպաստում են թվային կառավարության վերափոխմանը:

Թվային կառավարության մոդելի նպատակն է օգնել ղեկավարությանը և հասարակությանը՝ բարձրացնելու երկրի մրցունակությունը, հասարակության բարեկեցությունը ու երջանկությունը: Բացի այդ, այն ուղղված է 4-րդ արդյունաբերական հեղափոխության տեխնոլոգիաների և արհեստական ինտելեկտի կիրառմանը: Մոդելը օգնելու է գտնել կառավարման բացերը և մատնանշելու է դրանց համար պատասխանատու անձանց:

Blockchain 2021 ռազմավարության նպատակներն են մինչև 2021 թ. կապիտալիզացնել blockchain տեխնոլոգիաները և վերափոխել կառավարության գործարքների 50 տոկոսը blockchain հարթակում:

Ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ ՄԱԷ-ն իրականացրել է քվանտային թռիչք թվային ոլորտում. **Էլ-կառավարության** զարգացման ինդեքսը (EGDI) 29-րդ տեղից (2016 թ.) տեղափոխվել է 21-րդ տեղը (2018 թ.): Այս ցուցանիշով ՄԱԷ-ն առաջինն է 25 առաջատար երկրներից: EGDI-ն բաղկացած է երեք ենթաինդեքսներից՝ **օնլայն ծառայություններ ցուցանիշ** (OSI), **հեռահաղորդակցության ենթակառուցվածքների ցուցանիշ** (Tii) և **մարդկային կապիտալի ինդեքս** (HCI): **Առցանց ծառայություններ ցուցանիշը** (OSI) ավելացել է. 2018-ին 2016-ի համեմատ երկիրը 8-րդ տեղից անցել է 6-րդ տեղը, ՄԱԷ-ն զբաղեցրել է արաբական աշխարհում առաջին տեղը: E-**Մասնակցություն** Index. աշխարհում eParticipation ցուցանիշով ՄԱԷ-ն 2016 թ. 32-րդ տեղից 2018-ին զբաղեցրեց 17-րդ տեղը: **Հեռահաղորդակցության ենթակառուցվածքի** Index-**ը** (Tii) 2016 թ. 24-րդ տեղից 2018-ին տեղափոխվեց 2-րդ տեղը:

Վիրտուալ իրականություն (VR)՝ Վիրտուալ իրականությունը օգտագործվում է կաթվածով հիվանդների վերականգնման գործնթացներում, կրթության ոլորտում և միջուկային էներգետիկայում: Վիրտուալ իրականությունն ապահովում է համակարգչային գեներացում՝ 3D միջավայր, որը շրջապատում է օգտագործողին և արձագանքում է այդ անձի գործողություններին բնական ճանապարհով: Ձեռքի շարժումները վերահսկվում են հատուկ ձեռնոցների օգնությամբ՝ զգայուն դիպչող տեխնոլոգիաներով: VR-ը օգտագործվում է բազմաթիվ ոլորտներում: Բժշկության ոլորտում VR վերականգնողական տեխնոլոգիաները մոդելավորում են իրական աշխարհը տարբեր պահանջների համար, թույլ են տալիս արդյունավետ բժշկական միջամտություն իրականացնել, հասնել լավագույն արդյունքների՝ օգտագործելով տեսավերահսկիչ և շարժվող սենսորը:

ՄԱԷ-ի առողջապահության նախարարությունը և հիվանդությունների կանխարգելման կազմակեպությունը (MoHAP) մտադիր են ներկայացնել Վիրտուալ իրականությունը վերականգնողական և ֆիզիոթերապիայի խնդիրների լուծման համար. կաթվածով հիվանդները, ովքեր տառապում են շարժողականության խանգարումներով, ստացել են մանկական ուղեղային կաթված կամ տառապում են Պարկինսոնի հիվանդությամբ, կարող են օգտվել Վիրտուալ իրականությունն ապահովող տեխնոլոգիաներից: Իրականացվելու են գիտական ուսումնասիրություններ՝ ապացուցելու այդ մեթոդների արդյունավետությունը նորարարական տեխնիկայի օգնությամբ վերականգնման և բուժման բազմաթիվ դեպքերի համար: Հիվանդները հաղորդում են, որ նրանք վայելում են VR թերապիան առանց տառապանք պատճառող կողմնակի ազդեցությունների:

Դուբայի քաղաքապետարանը ստեղծել և գործարկել է **խելացի վիրտուալ իրականության վերապատրաստման կենտրոն**: Կենտրոնը հնարավորություն է տալիս դասընթացներ իրականացնել քաղաքաշինական կանոնների և կառուցման կանոնակարգի իրական միջավայրում, ինչպես նաև թույլ է տալիս լուծել հողի հատկացման, գծահատման խնդիրները:

Միջուկային էներգետիկ կորպորացիան (ENEC) օգտագործում է նորագույն վիրտուալ իրականության տեխնոլոգիա՝ առաջարկելով վիրտուալ շրջայց Barakah ատոմային էլեկտրակայան, որը գտնվում է գրեթե 300 կիլոմետր հեռավորության վրա: Մարդիկ կարող են ուսումնասիրել ռեակտորային շենքը, տուրբինների դահլիճը և հիմնական վերահսկման սենյակը: Նրանք կարող են նաև տեսնել տրոհման շղթայական ռեակցիան, էլեկտրաէներգիայի արտադրության գործընթացը և ավելի:

Կենտրոնը հագեցած է բարձրակարգ VR սարքերով, վերահսկվում է քաղաքապետարանի կողմից, համարվում է առաջինը Մերձավոր Արևելքում, ունի հնարավորություն՝ ծանոթացնելու քաղաքաշինության մեջ օգտագործվող սարքավորումների առանձնահատկություններին, մեխանիզմներին և շենքերի վերահսկման մեթոդներին, նաև իրականացնելու հողամասերի հատկացման և ուսումնասիրման առաջադրանքներ:

Առաջարկություններ

1. Վարչապետին կից ստեղծել **կրթության**, **գիտության և նորարարության հանձնաժողով**, **որը պետք է մշակի ռազմավարական ազգային քաղաքականություն**, **համակարգի ոլորտները** և գնահատի բոլոր ծրագրերը, առաջնահերթ գործողությունները, ճանապարհային քարտեզները, ինչպես նաև ռեսուրսների բաշխումը և մշտադիտարկմամբ վերահսկի նշյալ քաղաքականության իրագործման ընթացքը՝ ներկայացնելով գնահատականներ:
2. Զարգացնել ՀՀ-ում **մտավոր սեփականության** (IP) **տնտեսությունը**, նպաստել գիտելիքի առևտրայնացմանը, խթանել համալսարաններում **տեխնոլոգիաների արտահանման գործակալությունների ստեղծումը**: Կառավարությունը պարտավոր է սահմանափակել ուղեղների, գիտելիքի և մտավոր սեփականության կապիտալի անվերահսկելի արտահանումը, ապահովել երկրում գիտելիքի տարածումը, խրախուսել երկրում արտոնագրերի, մտավոր սեփականության իրավունքի գրանցումը և պաշտպանումը:
3. Բոլոր նախարարությունների և քաղաքապետարանների, ինչպես նաև մարզպետարանների աշխատակազմերի հաստիքացուցակները համալրել պատասխանատուներով՝ կրթության, գիտության և նորարարության գործառույթները համակարգելու և զարգացնելու նպատակով:
4. Մարդկային կապիտալի արդյունավետ կառավարման համար կազմակերպել ամենամյա միջազգային գիտաժողով՝ վերոգրյալ ծրագրերի և առաջարկությունների իրականացման արդյունքները ամփոփելու նպատակով:

Օգտակար հղումներ

1. Դուբայի կառավարության պաշտոնական պորտալ[1]
2. Խելացի Դուբայ քաղաք[2], Smart City Office[3]
3. Ինչպես գտնել ձեր անհատական 10-նիշանոց կոդը[4]

---

[1] http://www.dubai.ae/en/AboutDubaieGovernment/Pages/default.aspx

[2] http://www.khaleejtimes.com/nation/government/6-key-pillars-100-initiatives-to-make-dubai-a-smart-city

[3] http://www.thenational.ae/uae/government/dubai-sets-up-smart-city- office

[4] http://www.emirates247.com/news/emirates/click-here-to-find-your-personal-10-digit-dubai-add-ress-code-2013-12-19-1.531958) - Emirates24/7.com

Օգտագործված գրականության ցանկ
1. https://government.ae/en/more/uae-future
2. http://www.dubai.ae/en/AboutDubaieGovernment/Pages/default.aspx
3. http://www.khaleejtimes.com/nation/government/6-key-pillars-100-initiatives-to-make-dubai-a-smart-city
4. http://www.thenational.ae/uae/government/dubai-sets-up-smart-city- office
5. http://www.emirates247.com/news/emirates/click-here-to-find-your-personal-10-digit-dubai-add-ress-code-2013-12-19-1.531958) - Emirates24/7.com

References
1. https://government.ae/en/more/uae-future
2. http://www.dubai.ae/en/AboutDubaieGovernment/Pages/default.aspx
3. http://www.khaleejtimes.com/nation/government/6-key-pillars-100-initiatives-to-make-dubai-a-smart-city
4. http://www.thenational.ae/uae/government/dubai-sets-up-smart-city- office
5. http://www.emirates247.com/news/emirates/click-here-to-find-your-personal-10-digit-dubai-add-ress-code-2013-12-19-1.531958) - Emirates24/7.com

Գրիգորի Վահանյան
Վիկտոր Զախարյան

ՄԻԱՑՅԱԼ ԱՐԱԲԱԿԱՆ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ» ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ

Համառոտագիր: Հոդվածում քննարկվում է Դուբայի տնտեսական հեղափոխության փորձը, ղեկավարության գաղափարները, ռազմավարական ծրագրերը և գործունեության արդյունքները՝ գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու, գիտության, տեխնոլոգիաների և կրթության, ինչպես նաև Խելացի քաղաքի կերտման օրինակներով: Ընգծվում է, որ հաջողության բանալին մարդկային կապիտալի արդյունավետ կառավարման մեջ է: Դուբայը համեմատաբար կարճ ժամանակահատվածում դարձավ աշխարհի խելացի քաղաքներից մեկը, ինչպես նաև ընդգրկվեց նորարարության ոլորտում համաշխարհային առաջատարների ցանկում: Դուբայը աշխարհում ճանաչված առաջատար է էլեկտրոնային կառավարման և թվային տնտեսության, ինչպես նաև առողջապահության, տրանսպորտի, վիրտուալ տեխնոլոգիաների, արհեստական ինտելեկտի, բջջային հավելվածների, միջուկային էներգիայի զարգացման գործում: Տրվում են առաջարկություններ, որոնք կարող են օգտակար լինել Հայաստանի տնտեսության, կրթության, գիտության և նորարարության ոլորտներում թռիչքային զարգացում իրականացնելու համար:

Բանալի բառեր. կրթություն, գիտություն, նորարարություն, հետազոտություն, տեխնոլոգիա, մրցունակություն, ինդեքս, խելացի քաղաք, մեծ տվյալներ, քաղաքականություն, ռազմավարություն, կառավարում, թվային տնտեսություն, մարդկային կապիտալ, վիրտուալ իրականություն, արհեստական ինտելեկտ, մտավոր սեփականություն, արտահանում

Григорий Ваганян
Виктор Захарян

«ЭКОНОМИЧЕСКОЕ ЧУДО» ОБЬЕДИНЕННЫХ АРАБСКИХ ЭМИРАТ И КАРТА ЭКОНОМИЧЕСКИХ ИННОВАЦИЙ

Аннотация: В статье рассматривается опыт экономической революции Дубая, идеи, стратегические планы и результаты деятельности руководства на примерах создания экономики, основанной на знаниях, науки, технологий и образования и создания умного города. Подчеркивается, что ключом к успеху является эффективное управление человеческим капиталом. Дубай за сравнительно короткий период времени стал одним из умных городов мира и был включен в список мировых лидеров в области инноваций. Дубай признанный лидер в мире по развитию электронного управления и цифровой экономики, здравоохранения, искусственного интеллекта, мобильных приложений и ядерной энергетики. Приводятся рекомендации, которые могут быть полезны для быстрого развития экономики, образования, науки и инноваций в Армении.

Ключевые слова: образование, наука, инновации, исследования, технологии, конкурентоспособность, индекс, умный город, большие данные, политика, стратегия, управление, цифровая экономика, человеческий капитал, виртуальная реальность, искусственный интеллект, интеллектуальная собственность, экспорт

Grigory Vahanyan
Viktor Zakharian

“THE ECONOMIC MIRACLE” OF THE UNITED ARAB EMIRATES AND MAP OF ECONOMIC INNOVATIONS

Abstract: The article studies experience of economic revolution of Dubai, the ideas, strategic plans and results of activities of the leadership as exemplified by creating an economy based on knowledge, science, technology and education and creating a smart city. It is emphasized that the key to success is the effective management of human capital. Dubai in a relatively short period of time has

become one of the smartest cities in the world and has been included in the list of world leaders in innovation. Dubai is a recognized leader in the world in the development of e-governance and the digital economy, healthcare, artificial intelligence, mobile applications and nuclear energy. Recommendations are provided that can be useful for the rapid development of economy, education, science and innovations in Armenia.

Keywords: education, science, innovation, research, technology, competitiveness, index, smart city, big data, policy, strategy, management, digital economy, human capital, virtual reality, artificial intelligence, intellectual property, export

4. ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սամվել Բալասանյան

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Փողոցաշինություն

2018 թվականին Գյումրիում մեկնարկեց Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ֆինանսավորմամբ իրականացվող փողոցաշինական ծրագիրը (23.8 մլն եվրո), որի առաջին փուլով նախատեսված էր հիմնանորոգել 12 փողոց և 2 հրապարակ: Փողոցաշինական ծրագրի շրջանակներում 2018 թվականին շահագործման են հանձնվել Կոմիտասի փողոցը, Մուշ և Անի թաղամասերն իրար կապող 600 մետր երկարություն՝ մայթերի հետ միասին՝ մոտ 6.520 քմ մակերես ունեցող ճանապարհահատվածը:

2019 թվականին հիմնանորոգվել և շահագործման են հանձնվել՝

Երևանյան խճուղին,

Գարեգին Նժդեհի հրապարակը,

Տիգրան Մեծի, Սայաթ-Նովայի, Գարեգին Նժդեհի, Վազգեն Սարգսյան, Գերցենի փողոցները,

Ջիվանու փողոցը (Ջիվանու հրապարակից Շիրազի փողոց),

Ղորղանյան փողոցը (Գայի փողոցից Շիրազի փողոց),

Վարպետաց փողոցը (Վարդանանց հրապարակից Շիրազի փողոց),

Աբովյան փողոցը (Աբովյան փողոցից Ռուսթավելու փողոց),

Անկախության հրապարակը,

Շառլ Ազնավուրի հրապարակը:

2019 **թվականին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Գյումրիում իրականացված փողոցաշինական աշխատանքներն են**.

Շիրազի փողոցը,

Ղորղանյան փողոցը (Գայի փողոցից Շիրազի փողոց),

Ջիվանու փողոցը (Ջիվանու հրապարակից Շիրազի փողոց),

Վարպետաց փողոցը (Վարդանանց հրապարակից Շիրազի փողոց),

Ջիվանու հրապարակը,

Գայի, Վարպետաց, Աբովյան, Ղորղանյան փողոցները,

Վարդանանց հրապարակը:

Համայնքային բյուջեի միջոցներով հիմնանորոգված փողոցները, փողոցի հատվածները 2018-2019 **թվականներին**.

Ղուկասյան փողոցը (Ռուսթավելու փողոցից Գորկու փողոց),

Մադոյան փողոցը (Էլ. ցանցից Գորկու փողոց),

Հակոբյան փողոցը (Ռուսթավելու փողոցից Շիրազի փողոց),

Գործարանային նրբանցքը,

Նեկրասովի փողոցը,

Ղանդիլյան փողոցի 1-ին նրբանցքը ընթացքի մեջ է:

Կառավարության հետ համատեղ իրականացվող ծրագրեր- փողոցաշի-նություն, ներհամայնքային փողոցներ. 2019 **թվական**.

Մադոյան փողոց (թիվ 255 շենքից մինչև ցորենի ընդունման կետ),

Խ. Դաշտենցի փողոց (Գորկու փողոցից Ռուսթավելու փողոց),

Ե/գծի ավան, Գարեգին Ա-ի փողոցից դեպի Մեքենավարների, Շիրվան-զադեի, Աղայան փողոցներ,

Թիվ 29 դպրոցից Կոշտոյան փողոց ձգվող ճանապարհ,

«Մայր Հայաստան» հուշահամալիրի հարակից տարածք,

Գյումրի քաղաքի արևմտյան օղակային շրջանցող ճանապարհ:

Տեխնիկայի ձեռքբերում

ՀՀ կառավարության հետ համատեղ իրականացված ծրագրի շրջանակնե-րում Գյումրու քաղաքապետարանը 2018 թվականին ձեռք է բերել 2 ինքնաթափ և 3 աղբատար մեքենա: Ծրագիրն իրականացվել 47-53 տոկոս հարաբերակ-ցությամբ: 47 տոկոս վճարումն իրականացրել է կառավարությունը, 53 տոկոսը՝ քաղաքապետարանը:

2019 թվականին համայնքային բյուջեի միջոցներով քաղաքապետարանը ձեռք է բերել փողոցների գծանշման տեխնիկա:

ՀՀ կառավարության հետ համատեղ իրականացվող սուբվենցիոն 2 առան-ձին ծրագրերով (50-50% հարաբերակցությամբ) ձեռք է բերվել 15 մեքենա՝ 4 բազ-մաֆունկցիոնալ և 7 աղբատար, 2 էքսկավատոր-ամբարձիչ, գրեյդեր, փոշեկուլ:

Հրապարակի կառուցում

Գյումրու քաղաքապետարան – ՀՀ կառավարություն համատեղ ծրագրի շրջանակներում 2018 թվականին մեկնարկեցին նորակառույց Մուշ թաղամասի հրապարակի շինաշխատանքները: Հրապարակն ընդգրկում է մոտ 3 հեկտար տարածություն, աշխատանքներն իրականացնում է «Վահրադյանշին» ընկերու-թյունը: Հրապարակի կառուցումը թաղամասի բնակիչներին հնարավորություն կընձեռի հանգիստը կազմակերպել իրենց թաղամասում, քանի որ թաղամա-սում չկա ժամանցի, զվարճանքի և հանգստի կազմակերպման ոչ մի վայր:

Բնակիչները զրկված են թաղամասում զբոսնելու, հանգստանալու, զվարճանալու հնարավորությունից: Թաղամասում հնարավոր չէ կազմակերպել մշակութային բացօթյա միջոցառումներ: Շինաշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:

Գյումրու քաղաքապետարան – ՀՀ կառավարություն համատեղ ծրագրի շրջանակներում շարունակվում են Գյումրու քաղաքապետարանի վարչական շենքի կիսանկուղի վերակառուցման և վերահատակագծման շինաշխատանքները: Մրցույթը շահել է «Գոհարիկ» ՍՊԸ-ն (72.510 մլն դրամ): Շենքի կիսանկուղային հատվածում գործելու են Գյումրու պատմության թանգարանը, Մկրտիչ Արմենի անվան կենտրոնական գրադարանը և պատկերասրահ:

Սոցիալական բնակարանաշինություն

Գյումրու քաղաքապետարանը շարունակում է համագործակցությունը «ԱՐԴԱ» բարեգործական հիմնադրամի հետ: 2019 թվականի մայիսի 10-ին Գյումրու քաղաքապետ Սամվել Բալասանյանը և «ԱՐԴԱ» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն Հրահատ Ստեփանյանը ստորագրեցին պայմանագիր, որով հիմք դրվեց սոցիալական բնակարանաշինության ծրագրի շարունակությանը: 3-րդ փուլով Մովսես Խորենացու փողոցի 46/1 հասցեում գտնվող շենքի վերջին երկու մուտքերի կառուցմամբ շահագործման հանձնվեց ևս 18 սոցիալական բնակարան: Այս բնակարաններից 14-ը մեկ սենյականոց բնակարաններ են, իսկ 4-ը՝ երկու սենյականոց:

Սոցիալական բնակարանների կառուցման գործում քաղաքապետարանը ունի ներդրում՝ 15 %-ի չափով:

Գյումրու քաղաքապետարան-«ԱՐԴԱ» բարեգործական հիմնադրամ համագործակցության արդյունքում Գյումրիում կառուցված սոցիալական բնակարանների հանձնման արարողությանը տեղի ունեցավ 2019 թվականի դեկտեմբերի 27-ին: Ծրագրի այս փուլով կառուցված 18 սոցիալական բնակարաններից 3-ը տրամադրվել էր նախորդ տարվա վիճակահանությանը մասնակցած, բայց բնակարանի շահառու չդարձած բնակիչների, 3 հատ 1 սենյականոց բնակարան տրամադրվեց Գարեգին Նժդեհի փողոցի թիվ 7 հասցեի՝ Տեքստիլագործների նախկին հանրակացարանում բնակվող երեք բնակչի, քաղաքապետարանի առաջարկով 1 հատ 2 սենյականոց բնակարան տրամադրվել է գյումրեցի Մնոյանների ընտանիքին (4 անձից բաղկացած), իսկ մեկ հատ մեկ սենյականոց բնակարան բարերարի առաջարկով տրամադրվել է Գոհար Ստեփանյանին:

Մնացած բնակարանների բաշխման համար այս տարվա սկզբին հանձնաժողովը գումարել է նիստ, փոփոխություններ կատարել չափորոշիչներում, որի հիման վրա տրվելու է հայտարարություն, ընդունվելու են դիմումներ, և իրականացվելու է հետագա գործընթացները:

«ԱՐԴԱ» բարեգործական հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում 2018 թվականին շահագործման է հանձնվել 12 բնակարան, ևս 11 սոցիալական բնակարան շահագործման էր հանձնվել 2017 թվականին:

2018 թվականին Գյումրու քաղաքապետարանի միջոցներով ձեռք էր բերվել և սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել 9 բնակարան:

Շենքերի կառուցում

Համայնքային բյուջեի միջոցներով 2018 թվականին մեկնարկել էին «Անի» փողային նվագախմբի շենքի կառուցման աշխատանքները: 2019 թվականի դեկտեմբերի 25-ին պաշտոնապես շահագործման հանձնվեց նվագախմբի նոր շենքը: Շենքի կառուցման համար Գյումրու համայնքային բյուջեից հատկացվել է մոտ 20 միլիոն դրամ: Այս բոլոր տարիներին նվագախումբը փորձերն իրականացրել է տարբեր կառույցներում՝ չունենալով մշտական հասցե ու հիմնական կառույց: Շենքը կառուցվել է նախկին «Պիոներ պալատի» տարածքում, նրա կառուցման համար հատկացվել է մոտ 29 մլն դրամ, ևս 7 մլն դրամ հատկացվել է շենքի հարակից տարածքի բարեկարգման համար:

2019 թվականի դեկտեմբերի 25-ին վերանորոգումից հետո պաշտոնապես վերաբացվեց Գյումրու ազատ ոճի ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոցը: Շենքի վերանորոգման համար ծախսվել է մոտ 26 մլն դրամ, որից 10 մլն-ը հատկացվել է համայնքի բյուջեից, իսկ մնացած գումարը տրամադրել է ֆրանսիական Քրեթեյ քաղաքը: Գյումրին և Քրեթեյը քույր քաղաքներ են:

Համայնքային բյուջեի միջոցներով իրականացվում է Յուրի Վարդանյանի անվան ծանրամարտի մարզադպրոցի համար շենքային պայմանների բարելավման ծրագիր: Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են, նախատեսվում է դրանք ավարտին հասցնել 2020 թ. գարնանը:

Մանկապարտեզներ

2018 թվականին շահագործման հանձնվեցին Գյումրու «Նանուլիկ» և «Արևիկ» մանկապարտեզները

«Նանուլիկ» մանկապարտեզի նոր շենքի կառուցման աշխատանքները իրականացվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից: Աշխատանքները մեկնարկել են 2017 թվականի հոկտեմբերին, հատկացվել է մոտ 160 մլն դրամ: Մանկապարտեզն ամբողջությամբ կահավորվել է, նախատեսված է 75 երեխայի համար: Նորակառույց շենքի հարակից տարածքում իրականացվել են բարեկարգման աշխատանքներ, տեղադրվել է խաղահրապարակ:

«Արևիկ» մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներն իրականացվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից: Հիմնանորոգումը մեկնարկել է 2016 թվականի դեկտեմբերին, որի համար հատկացվել է

մոտ 140 մլն դրամ: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և քաղաքապետարանի համագործակցության արդյունքում մանկապարտեզն ամբողջությամբ կահավորվել է, բակում տեղադրվել է խաղահրապարակ: Մանկապարտեզը նախատեսված է 100 երեխայի համար:

Ներկայումս ընթացքի մեջ են Գյումրու «Սուրբ Մարիամ» և «Զանգակ» մանկապարտեզների հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքները: Այս երկու մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքները ևս իրականացվելու են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից:

Համաձայն Գյումրու համայնքապետարանի և իսրայելական «Լոջիստիք էֆ Թի Զի» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի փետրվարի 21-ին կնքված «Փոխըմբռնման հուշագրի» 14-րդ կետի՝ համայնքապետարանը պետք է իր ջանքերը գործադրի «Շիրակ» օդանավակայանից դեպի Լոգիստիկ ԱՏԳ (ազատ տնտեսական գոտի) տանող ավտոճանապարհի կառուցումն ապահովելու համար:

Հիմնանորոգվելու է նաև «Մայր Հայաստան» հուշահամալիրին հարող տարածքը՝ 5.800 քառ. մ ընդհանուր մակերեսով: Հուշահամալիրի այս հատվածը գտնվում է անմխիթար վիճակում: Հուշահամալիրի տարածքում չկան պահակակետ և հասարակական զուգարան: Հիմնանորոգումից հետո հուշահամալիրի ընդհանուր տեսքը կդառնա ավելի բարեկարգ:

Ներդրումային ծրագրեր

Գյումրիում տեղադրվում են սմարթ կանգառներ: Առաջին սմարթ կանգառն արդեն տեղադրված է: Սմարթ կանգառներում արևային էներգիայի միջոցով քաղաքացիները կկարողանան վերալիցքավորել հեռախոսները, կանգառներն ապահովված կլինեն նաև Wi-Fi կապով: Գյումրիում առկա 100 կանգառներից 30-ն արդեն ապամոնտաժվել են:

2018 թվականին Գյումրու քաղաքապետարանը և իսրայելական «Լոջիստիք էֆ Թի Զի» ՍՊԸ-ն կնքեցին փոխըմբռնման հուշագիր: Ընկերությունը հետաքրքրված է Գյումրու տարածքում կառուցելու, շահագործելու և զարգացնելու օդանավերով փոխադրվող ապրանքների համար նախատեսված լոգիստիկ ազատ տնտեսական գոտի (ԱՏԳ), իսկ քաղաքապետարանը աջակցում է ընկերության նախաձեռնությանը և պատրաստակամ է վերջինիս հետ համագործակցելու և օժանդակելու Լոգիստիկ ԱՏԳ-ի զարգացման հարցում: Ծրագիրն ընթացքի մեջ է:

2019 թվականի փետրվարին Գյումրի համայնքը և «Բալետ 2021» զարգացման հիմնադրամը կնքեցին փոխըմբռնման հուշագիր Գյումրու Սայանի մշակույթի պալատի վերականգնման ծրագրի մասով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստեղծել «Խառատյանի կատարողական արվեստի փորձառական կենտրոն» անվանումով կատարողական արվեստի ժամանակակից բազմաֆունկցիոնալ կենտրոն: Ծրագրի իրականաց-

ման համար համայնքը պատրաստակամություն է հայտնում հիմնադրամին նվիրաբերությամբ կամ 99 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ղանդիլյան փողոցի 46/6 հասցեում գտնվող ակումբի՝ 0.21381 հա ընդհանուր մակերեսով տարածքը, որը նախկինում ծառայել է որպես Սայանի անվան մշակութային պալատ:

Ծրագրի իրականացումն իր մեջ ներառում է տարածքի ընդհանուր բարեկարգում և ակումբի շենքի հիմնական վերանորոգում, որը հիմնված կլինի տարածքի ճարտարապետական նախագծի վրա: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ակումբի շենքում ապահովել համերգային դահլիճ, փոքր միջոցառումների դահլիճ, երեք փորձասենյակ, ինը հանդերձարան, բազմաֆունկցիոնալ հանդիպումների սրահ, գրադարան, ցուցասրահներ, սրճարան-խանութ:

Տարածքի վերականգնման նախագծի մշակումը և շինարարական աշխատանքների կատարումն իրականացվելու է մի քանի փուլերով՝ նախնական ուսումնասիրությունների կատարում, նախագծում, շինարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակում և այլն: Ըստ հուշագրի՝ նախատեսվում է աշխատանքները սկսել 2019 թվականին և ավարտին հասցնել 2022 թվականին:

«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամը նախաձեռնել է Գյումրիի Շառլ Ազնավուրի հրապարակին հարակից Բարեկամության զբոսայգու վերակառուցման ծրագիրը, որի նպատակն է այգին դարձնել հանրային հանգստի կազմակերպման ինքնատիպ վայր: Վերջին ամիսներին IDeA հիմնադրամը և Գյումրու համայնքապետարանն աշխատանք են տարել այգու տարածքում բնակվող ընտանիքների բնակարանային խնդիրը լուծելու ուղղությամբ: IDeA հիմնադրամի և «Ազնավուր» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ 22 ընտանիք տեղափոխվել է նոր բնակարաններ, որոնք ընտրված են այդ ընտանիքների հետ համատեղ քննարկումների ու բանակցությունների արդյունքում:

Հոկտեմբերի 17-ին հանդիսավոր արարողությամբ տրվեց Գյումրու Բարեկամության այգու վերականգնման ծրագրի մեկնարկը:

Ծրագիրն իրականացվում է «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի՝ Գյումրու զարգացման ծրագրի շրջանակում: Այգու վերակառուցման նախագիծը նպատակ ունի զարգացնել քաղաքի ենթակառուցվածքները և արտացոլել բարեկամության ու երախտագիտության խորհուրդը:

Մշակույթ և սպորտ

Գյումրին մշակութային համայնք է, և այդ փաստը, թերեւս, ամենագործուն ու խոսուն կերպով ապացուցվել է 2019-ի ընթացքում՝ մշակութային միջոցառումների, նախաձեռնությունների, փառատոների ու ձեռնարկների աննախադեպ հոսքով. «**Արթ շաբաթ**» խորագրով դասական երաժշտության փառատոն,

«Դալան ֆեստ» եռօրյա ռոք փառատոն, **Արվեստի ու արհեստի փառատոներ և այլն**:

«**Գյումրու օր** - 2019»: Քաղաքի օրվան նվիրված բոլոր տոնական միջոցառումները եղել են ապակենտրոնացված՝ հասանելի քաղաքի բոլոր հատվածներում ու բոլոր բնակիչներին: Գյումրու Վարդանանց հրապարակը երբեք այդքան մարդաշատ չի եղել, որքան օգոստոսի 25-ին՝ հանդիսականների աննախադեպ, մոտ 20.000 մարդ ցուցանիշով: Առաջին անգամ հնչել է 3 ժամ կենդանի հնչողությամբ երաժշտություն:

Գյումրու թիվ մեկ արվեստի դպրոցին նվիրաբերվել է տասը նոր երաժշտական գործիք՝ լրացնելով դասական գործիքների բացը դպրոցում:

Արհեստի, արվեստի փառատոներով ու ժողովրդական երգ ու պարով Գյումրին նշեց նաեւ առաջին անգամ երկրում անցկացվող «Քաղաքացու օրը» :

2019-**ին** Գյումրին նախաձեռնել և ընդունել է ոչ միայն պետական նշանակության տոներ ու հոբելյանական առիթներ, այլև դարձել միջազգային մշակութային կյանքում ազդեցիկ նախաձեռնությունների ու իրադարձությունների կենտրոն:

«**Մանսուրյան**-80» համերգաշարի վերջին՝ տոնական ակորդը տրվեց Գյումրու Սև բերդում: Համերգի ողջ հասույթը տրամադրվեց Գյումրու թիվ 4 երաժշտական դպրոցի հիման վրա աշակերտական կամերային նվագախմբի ստեղծմանը: Սա աննախադեպ է ու բացառիկ Գյումրու համար և որպես չափելի ցուցանիշ՝ անգնահատելի ներդրում քաղաքի մշակութային կյանքի զարգացման գործում:

ՀՀ անկախության տոնը Գյումրիում նշելու կառավարության ձեռնարկը իսկական փորձություն էր քաղաքի համար. 7 երաժշտական բեմ, լայնածավալ ու մեծամասշտաբ միջոցառումներ, որոնք Գյումրին ընդունեց պատվով: Քաղաքն այդ օրն ընդունել է 15.000 մարդու, և նրանից յուրաքանչյուրը մշակութային Գյումրիում ուներ ի՛ր հարթակը, ի՛ր զբաղմունքն ու իրե՛ն հետաքրքիր միջոցառումը:

Կոմիտասի 150-**ամյակին** նվիրված պետական միջոցառումների վերջին ակորդը ևս տրվեց Գյումրիում. պետական ծրագրի՝ Գյումրիում իրականացումը փաստում է, որ մշակութային անհրաժեշտ միջավայրի համար Գյումրին իսկապես անմրցելի է:

Գյումրու մշակութային զարգացումը ուղիղ համեմատական է քաղաքում փառատոնային արվեստի ու մշակույթի զարգացմանը: Այդ նպատակով 2019-ը ծնունդ է տվել մի շարք փառատոների՝ ընդգրկելով արվեստի ու մշակույթի ամենատարբեր ուղղություններ ու ոճեր:

Անցկացված մեծամասշտաբ միջոցառումներն իրենց հերթին նպաստեցին Գյումրիում զբոսաշրջության զարգացմանը: 2019 թվականին Գյումրի այցելեցին մեծ թվով զբոսաշրջիկներ ոչ միայն ՀՀ ողջ տարածքից, այլ նաև ամբողջ

աշխարհից: Միայն սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Գյումրու համայնքապատկան թանգարաններ այցելությունների այսպիսի ցուցանիշ է արձանագրվել.

Սեպտեմբեր
«Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան» - 5.279 այցելու
Ավ. Իսահակյանի թանգարան – 4.223
«Միեր Մկրտչյան» թանգարան – 3.516
«Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ» -2.161
Հոկտեմբեր
«Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան» - 2.603 այցելու
Ավ. Իսահակյանի թանգարան – 2.682
«Միեր Մկրտչյան» թանգարան – 6.139
«Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ» - 1.460

Բոլոր ժամանակների սպորտային մայրաքաղաք Գյումրին 2019 թվականին ևս փայլել է իր հաջողություններով. գյումրեցի մարզիկները Հայաստանի, աշխարհի, Եվրոպայի առաջնություններում և միջազգային տարբեր մրցաշարերում նվաճել են ընդհանուր թվով 586 մեդալ, որից 228-ը՝ ոսկե:

Մամիկոն Ասլանյան

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

2018-2019 թթ. Վանաձոր համայնքում տարբեր ոլորտներում տեսանելի զարգացման, ինչպես նաև 2020 թվականի համար զարգացման բյուջե ծրագրելու և հաստատելու համար հիմք հանդիսացավ համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա հիմնարկների կողմից ցուցաբերված բյուջետային կարգապահությունը:

2018 և 2019 թվականների ընթացքում բյուջեի եկամուտների աստիճանաբար ավելացման և ծախսերի արդյունավետության բարձրացման շնորհիվ հնարավոր դարձավ 2020 թվականի համար նախատեսել աշխատակազմի և ենթակա մարմինների բոլոր աշխատակիցների աշխատավարձի բարձրացում շուրջ 20 տոկոսով: Հիշեցնենք, որ Վանաձորի համայնքապետարանում աշխատավարձի բարձրացում չէր իրականացվել 2010 թվականից ի վեր:

Ստորև ներկայացնենք ֆինանսական այն տվյալների վերլուծությունը, որոնք բնութագրիչ են կատարված աշխատանքների համար:

Եկամուտներ

Վանաձոր համայնքի 2020 թվականի բյուջեն եկամուտների մասով պլանավորվել է 2 մլրդ 824 մլն 182 հազար դրամ: Նախատեսված է զգալի աճ սեփական եկամուտների մասով: Սեփական եկամուտները 2020-ին պլանավորված են 1 միլիարդ 43 միլիոն 838 հազար դրամ: Այս ծավալը 146,3 մլն դրամով գերազանցում է 2018 թվականի փաստացի կատարման ծավալը (897 մլն 569 հազար դրամ) և 42,9 մլն դրամով՝ 2019 թվականի ճշտված պլանով նախատեսվածին (1 մլրդ 969 հազար դրամ): Այսպիսով՝ 2018-ի նկատմամբ Վանաձորի 2020-ի բյուջեի սեփական եկամուտների մասով աճը կկազմի շուրջ 16.2 տոկոս կամ 146.3 մլն դրամ:

Հարկեր և տուրքեր

- **Հողի հարկ**

Հողի հարկի գծով նախատեսվում է 2020-ին հավաքագրել 34 մլն 263 հազար դրամ: 2019 թվականին այդ ցուցանիշը 34 մլն 238 հազար դրամ էր, և աճը 2019 թվականի նկատմամբ կկազմի 0.4 տոկոս, իսկ 2018 թվականին նույն ցուցանիշը եղել է 31 մլն 95 հազար դրամ, 2020-ին աճը 2018-ի նկատմամբ կկազմի 10.2 տոկոս: Այսպիսով՝ երկու տարում հողի հարկի գծով հավաքագրումների աճը կկազմի շուրջ 10.9 տոկոս կամ 3 մլն 167 հազար դրամ:

- **Գույքահարկ**

Գույքահարկի գծով նախատեսվում է 2020-ին հավաքագրել 471 մլն 960 հազար դրամ: 2019 թվականին այդ ցուցանիշը 440 մլն 793 հազար 8 հարյուր դրամ էր, և աճը 2019 թվականի նկատմամբ կկազմի 7.1 տոկոս, իսկ 2018 թվա-

կանին նույն ցուցանիշը եղել է 368 մլն 493 հազար դրամ, 2020-ին աճը 2018-ի նկատմամբ կկազմի 26.7 տոկոս: Այսպիսով՝ երկու տարում գույքահարկի գծով հավաքագրումների աճը կկազմի շուրջ 28 տոկոս կամ 103 մլն 466 հազար դրամ:

- **Տեղական տուրքեր**

Տեղական տուրքերի գծով նախատեսվում է 2020-ին հավաքագրել 71 մլն 100 հազար դրամ: 2019 թվականին այդ ցուցանիշը 81 մլն 935 հազար դրամ էր, և առկա է նվազում 2019 թվականի նկատմամբ 13.2 տոկոսով, իսկ 2018 թվականին նույն ցուցանիշը եղել է 63 մլն 624 հազար դրամ, 2020-ին աճը 2018-ի նկատմամբ կկազմի 11.7 տոկոս: Երկու տարում տեղական տուրքերի գծով հավաքագրումների աճը կկազմի շուրջ 11.7 տոկոս կամ 7 մլն 375 հազար դրամ:

- **Վարչական գանձումներ**

Վարչական գանձումների մասով նախատեսվում է 2020-ին հավաքագրել 377 մլն 116 հազար դրամ: 2019 թվականին այդ ցուցանիշը 363 մլն 980 հազար դրամ էր, և աճը 2019 թվականի նկատմամբ կկազմի 3.6 տոկոս, իսկ 2018 թվականին նույն ցուցանիշը եղել է 351 մլն 650 հազար դրամ, 2020-ին աճը 2018-ի նկատմամբ կկազմի 7.2 տոկոս: Այսպիսով՝ երկու տարում վարչական գանձումների մասով հավաքագրումների աճը կկազմի շուրջ 7.2 տոկոս կամ 25 մլն 435 հազար դրամ:

Քաղաքաշինության ոլորտ

Երկու տարում լուրջ առաջընթաց է գրանցվել նաև քաղաքաշինության ոլորտում:

Սուբվենցիոն ծրագրեր

2019 թվականը Վանաձորի համար աննախադեպ էր սուբվենցիոն ծրագրերին մասնակցության և դրանց իրականացման առումով:

Համայնքապետարանի կողմից մշակվել և լիազոր մարմին է ներկայացվել սուբվենցիոն ծրագրերի 7 հայտ, որոնցից 6-ը 2019 թ. հունիսի 30-ի դրությամբ հաստատվել են և կա՛մ իրականացման փուլում են, կա՛մ ավարտվել են:

	Ծրագրի անվանումը	Գումար (միլիոն դրամ)	Համայնքի ներդրում %	Համայնքի ներդրում (միլիոն դրամ)
1	Հայքի հրապարակի բարեկարգում և վերականգնում	245.700	60	147.420
2	Վանաձորի Կ. Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան ՀՈԱԿ ի հիմնանորոգում	91.250	60	54.750
3	Վանաձոր համայքի այգիների և պուրակների վերանորոգում	103.073	60	61.843
4	Վանաձոր համայնքի կարիքների համար 2 բազմաֆունկցիոնալ տեխնիկայի ձեռք բերում	101.000	50	50.500

	Ծրագրի անվանումը	Գումար (միլիոն դրամ)	Համայնքի ներդրում %	Համայնքի ներդրում (միլիոն դրամ)
5	Վանաձոր համայնքի մարզադպրոցների վերանորոգում, մարզագույքի ձեռքբերում	99.614	60	59.768
6	*Վանաձոր համայնքի գլխավոր փողոցների արտաքին լուսավորության փոխարինում արևային–ֆոտովոլտային կայաններով (չի հաստատվել)*	111.328	45	50.097
7	Վանաձոր համայնքի երկրորդային փողոցների կապիտալ վերանորոգում	250.000	45	112.500
	Ընդամենը	1.001.965		536.879

Սուբվենցիոն ծրագրերի հայտերի կազմումը նպատակ ուներ հիմք ստեղծել համայնքի զարգացման 2018-2021 թթ. ծրագրով նախատեսված առաջնահերթությունների իրականացման խթանման համար, քանի որ Վանաձոր համայնքի զարգացման հիմնական ուղղությունը զբոսաշրջությունն է:

«Հայքի հրապարակի բարեկարգում և վերականգնում» սուբվենցիոն ծրագրով ամբողջովին բարեկարգվեց Հայքի հրապարակը, իրականցվեց հրապարակի նոր լուսավորության համակարգի տեղադրում, վերկանգնվեցին սալիկապատ տարածքները, և Վանաձորն ունեցավ տարածաշրջանում ամենաժամանակակից և հատուկ լուսաձայնային էֆեկտներով շատրվաններ: Այժմ Հայքի հրապարակը դարձել է երիտասարդության և զբոսաշրջիկների այցելության հիմնական վայրերից մեկը, ուր կազմակերպվում են նաև համաքաղաքային հիմնական մշակութային միջոցառումները: Տեղին է հիշեցնել, որ «Վանաձորի օր» տոնակատարության շրջանակներում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ևս մասնակից էր շատրվանների փորձնական գործարկմանը:

Քաղաքի մշակութային կյանքում առանցքային նշանակություն ունեցող և զբոսաշրջիկների կողմից սիրված վայր համարվող Վանաձորի Կ. Աբովյանի անվան կերպարվեստի թանգարանը հիմնանորոգման արդյունքում այսուհետ նորացված արտաքին տեսքով է դիմավորելու այցելուներին:

Սուբենցիոն ծրագրերից ներկայումս ընթացքի մեջ են 3 այգիների շինարարական աշխատանքները, որոնք ձմռան պատճառով հետաձգվեցին: Դրանք կշարունակվեն մինչև 2020 թվականի մայիս և արդեն ամռանը լիարժեք կծառայեն բնակիչներին:

2020 թվականի համար նախնական քննարկման ընթացքի մեջ են սուբվենցիոն չորս ծրագրեր, որոնք սահմանված կարգով հավանության արժանանալուց հետո լուրջ ազդեցություն կունենան Վանաձորի սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

- «Վանաձոր համայնքի «Աթլետիկայի օլիմպիական մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում» ծրագիր

  Արդյունքում աթլետիկայի օլիմպիական մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցում կունենանք վարժասարքերի նորակառույց մարզադահլիճ, մարզագույքի ձեռքբերում, մարզասրահի ռետինապատ հա-

փակի փոխարինում նոր ծածկույթով, դրսի վազքուղիների ասֆալտապատում և 120 մ ռետինապատում, պարսպի կառուցում, երկաթյա դարպասի տեղադրում:

- «Վանաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ էներգախնայող միջոցառումների կիրառմամբ» ծրագիր

  Ծրագրով նախատեսվում է 11 բարձրահարկ պանելային շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում, այն է՝ արտաքին պատերի ջերմամեկուսացում, շքամուտքի դռների և պատուհանների փոխարինում, տանիքի ջերմամեկուսացում:

- «Վանաձոր համայնքի Շառլ Ազնավուրի անվան այգու հիմնանորոգում, Տարոն-2 և Տարոն-4 այգիների կառուցում» ծրագիր

  Ծրագրով նախատեսվում է Շառլ Ազնավուրի անվան այգու հիմնանորոգում (2,6 հա), «Տարոն-2» (0,2 հա) և «Տարոն-4» (1 հա) այգիների կառուցում: Շառլ Ազնավուրի անվան այգում ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2 փուլով: 1-ին փուլ՝ լուսավորության համակարգի արդիականացում, կանաչապատում, արահետների ծածկույթի վերանորոգում, սմարթ նստարանների, աղբամանների տեղադրում, եզրաքարերի փոխում, ջրավազանի և շատրվանների վերականգնում, լուսաձայնային երաժշտական համակարգի տեղադրում: 2-րդ փուլ (մասնավոր ներդրում)՝ սահադաշտի կառուցման աշխատանքներ, ժամանակակից խաղահրապարակների կազմակերպում, բացօթյա բեմ (էստրադա): Տարոն-2 և Տարոն-4 թաղամասերում այգիների կառուցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծայրամասային այս թաղամասերում չկան այգիներ, պուրակներ, ինչպես նաև հանգստի գոտիներ: Նախատեսվում է տարածքի բարեկարգում, ամֆիթատրոնի և սիզամարգերի կառուցում, կանաչապատում, նստարանների և աղբամանների տեղադրում, լուսավորություն:

- «Վանաձոր համայնքի Չուխաջյան, Լալվարի փողոցների և կենտրոնական մայթերի կապիտալ նորոգում» ծրագիր

  Հիմնանորոգման ենթակա են 2 փողոցներ և 5 փողոցների մայթեր: Ծրագրի արդյունքում կունենանք տրանսպորտային ենթակառուցվածքների բարեկարգ և գրավիչ վիճակ, տրանսպորտային միջոցների և հետիոտների համար ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում, ոչ կենտրոնական թաղամասերի բնակիչների համար զբոսանքի վայրեր, փողոցներին հարակից գործող բիզնեսների աճի, նոր բիզնեսների համար գրավիչ միջավայր, տուրիզմի զարգացում:

Քաղաքաշինություն և ճարտարապետություն

2019 թ. կապիտալ շինարարության ոլորտի ֆինանսական շրջանառությունը կազմել է մոտ 7 մլրդ դրամ՝ ներառյալ պետական, համայնքային և մասնավոր ներդրումները, 2018 թ. 5 մլրդ դրամի փոխարեն: 2019-ին համայնքի տարած-

քում շահագործման է հանձնվել 60 քաղաքաշինական օբյեկտ, և նույնքան օբ-յեկտների շինարարություն էլ ընթացքի մեջ է: Մասնավոր ներդրումներից առանձնացնենք Բաղրամյան պողոտայի սկզբնամասում «Դոմուս» առևտրային ցանցի շինարարությունը և Վարդանանց փողոցում ակնաբուժական կլինիկայի շինարարությունը: Պետական բյուջեով իրականացվող շինարարություններից հիաշատակենք Մ. Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնա-նորոգումը, Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջի հիմնանորոգումը:

2019-ին մշակվել և ավագանու կողմից հաստատվել է քաղաքաշինական կանոնադրությունը, ինչը շատ կարևոր է քաղաքի զարգացման համար: Մշակ-վել են Բուլղարական 1 և Բուլղարական 2 ավանների կառուցապատման հա-տակագծերը, որոնք ներկայացվել են Քաղաքաշինության կոմիտե՝ պետական գույք հանդիսացող այդ հողամասերը համայնքային դարձնելու և բնակիչների խնդիրը լուծելու համար:

Զգալի առաջընթաց է գրանցվել համայնքի հողային ֆոնդի կառավարման և օտարման գործընթացում՝ ապահովելով ֆոնդային բյուջեի մուտքերի մեծ մասը: 2019 թ. 141 մլն նախատեսված ֆոնդային բյուջե մուտքի դիմաց մուտ-քագրվել է 222 մլն դրամ: Աճը կազմել է 54 տոկոս: Վարչական մասով նախա-նշված 15 մլն 600 հազ դրամի փոխարեն մուտքագրվել է 33 մլն 200 հազար դրամ: Աճը կազմել է 112 տոկոս:

Քայլեր են կատարվել քաղաքի ճարտարապետական տեսքի վերականգնման ուղղությամբ: 2019-ին այդ նպատակով ապամոնտաժվել են 80 ժամանակավոր տաղավարներ և այլ կարգի ժամանակավոր կառույցներ, և այդ աշխատանք-ները շարունակվելու են նաև 2020 թվականին:

Աղբահանություն

2017 թվականին և 2018 թվականի առաջին կիսամյակում Վանաձոր քաղա-քում լուրջ խնդիր էր աղբահանությունը: Քաղաքացիների ամենօրյա բողոքները աղբահանության աշխատանքներից և կապալառուների թերացումները ստի-պում էին համայնքապետարանին կտրուկ միջոցներ ձեռնարկել աղբահանու-թյունը քաղաքում պատշաճ կազմակերպելու նպատակով: Եթե որոշված էր, որ Վանաձորը զարգանալու է զբոսաշրջիկների աճող ներհոսքի հաշվին, ապա առանց մաքուր ու բարեկարգ տեսքով քաղաք ունենալու բոլոր ծրագրերը կարող էի ձախողվել:

2018 թվականին աղբանահությունը պլանավորվեց իրականացնել նոր պայմաններով, և այդ պայմանները ներառվեցին մրցութային տեխնիկական պահանջների մեջ: Քաղաքի տարածքը բաժանվեց 7 գոտիների, որոնք սկսե-ցին սպասարկել 5 աղբահանող կազմակերպություններ՝ ամենօրյա հաճախա-կանությամբ, բազմաբնակարան շենքերի աղբամուղներից՝ երեք օրը մեկ, սե-փական սեկտորից՝ շաբաթը 2 անգամ՝ շրջիկ երթի միջոցով: Քաղաքի սահ-մանված հատվածներում 2018-2019 թթ. ընթացքում տեղադրվել են 165 մեծ և 38 փոքր աղբամաններ, դրանց տեղադրման տարածքներում իրականացվել են

ցանկապատման աշխատանքներ: Աղբահանող կազմակերպությունների նկատմամբ համայնքապետարանի ամենօրյա հսկողության շնորհիվ բնակիչներից բողոքների քանակը 2018 թվականի երկրորդ եռամսակից մինչ օրս չի անցել երկու տասնյակից: Կարելի է փաստել, որ որակյալ և արդյունավետ աղբահանության խնդիրը Վանաձորում լուծված է:

Քաղաքացիների սպասարկում

2017 թվականին Վանաձորի համայնքապետարանում գործարկվել է քաղաքացիների սպասարկման գրասենյակը, որը թույլ է տալիս համայնքապետարանի կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայություններն ավելի հասանելի, արագ և արդյունավետ դարձնել: Համակարգված ձևով քաղաքացիներին մեկ կետից մատուցվում է 63 ծառայություն:

Սպասարկման գրասենյակում գործարկվել է նաև հերթերի կառավարման էլեկտրոնային համակարգ, ինչը քաղաքակիրթ ձևով կարգավորում է հերթերը, քանի որ առկա է սեզոնային բնույթի հաճախումների կտրուկ աճ:

Սպասարկման գրասենյակի գործարկումը առավել թափանցիկ է դարձնում համայնքապետարանի աշխատանքը և պաշտոնյա-բնակիչ հարաբերությունները:

2019 թվականին իրականացված մոնիտորինգի արդյունքներով քաղաքացիների սպասարկման գրասենյակ այցելած բնակիչների շուրջ 80 տոկոսը գոհ է սպասարկման որակից և ծառայությունների մատուցումից: Քաղաքացիների սպասարկման գրասենյակը տարեկան սպասարկում է շուրջ 25 հազար բնակչի:

Դիանա Գասպարյան

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Ոչ ոք չի կարող իմանալ, թե որքան կարող են բավականացնել իր ուժերը, մինչև չփորձարկի դրանք:
Գյոթե

2018 թվականին հայ ժողովուրդը ամբողջությամբ ներդրեց և փորձարկեց իր ուժերը՝ արդյունքում արձանագրելով ոչ բռնի թավշյա հեղափոխություն, որից հետո էլ ձևավորվեց նոր կառավարություն: Որոշ քաղաքներում քաղաքապետերը հրաժարական տվեցին, և ընտրվեցին նորերը (դրանց թվում էր Էջմիածինը), այնուհետև դեկտեմբերին տեղի ունեցան արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Այս հարուստ քաղաքական գործընթացներից հետո հերթը տնտեսական հեղափոխությանն է, որը հանդիսանում է «թավշյա հեղափոխության» արգասիքը, և որի մեկնարկը ազդարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կառավարության հնգամյա ծրագրի խորհրդարանական քննարկումների ժամանակ:

Տնտեսության մեջ համապետական նշանակության հաջողություններ գրանցելու համար անհրաժեշտ է ցուցաբերել անհատական ջանք ու մոտեցում, ինչպես նաև քաղաքական կամք: Տնտեսական հեղափոխությունը պետք է լինի համընդհանուր և ուղեկցվի գործուն մեխանիզմներով ու կառուցակարգերով: Այն ժողովուրդը, որը կարողացել է իրականացնել «քաղաքական հրաշք», միանշանակ ի վիճակի է իրականություն դարձնել նաև «տնտեսական հրաշքը»: Այսպիսով, այս համազգային առաքելության իրագործման մեջ պետք է իր ուրույն ներդրումն ունենա յուրաքանչյուր գյուղ, քաղաք, մարզ, և միայն դրանից հետո այն կարող է դառնալ իրողություն, ինչի արգասիքն էլ կլինի բնակչության բարեկեցության բարձր մակարդակի ապահովումը:

Վերոնշյալ գործընթացի իրագործման համար Էջմիածին քաղաքը՝ ի դեմս քաղաքապետարանի, որդեգրել է հեղափոխամետ ուղի և իրականացնում է բազմաթիվ միջոցառումներ, որպեսզի իրականացնի բարեփոխումներ՝ սկսած մանկապարտեզից, վերջացրած ճանապարհաշինությունով և ներքաղաքային տրանսպորտով:

Այսպես, 2018-2019 թվականներին Էջմիածնի քաղաքային իշխանությունների համակարգված ու հետևողական գործունեությունը միտված է եղել Էջմիածնի բնակիչների և հյուրերի համար հարմարավետ և ժամանակակից պահանջներին համապատասխան քաղաքային միջավայր ձևավորելուն և մեր համաքաղաքացիների պահանջներին ու խնդիրներին լուծում տալուն:

Այս ժամանակահատվածում բարեկարգման մի շարք ծրագրեր են իրականացվել փողոցներում, բակային տարածքներում, այգիներում ու պուրակներում, վերանորոգվել են բազմաբնակարան շենքերի տանիքներ, համայնքապետա-

ռանի ենթակայության մանկապարտեզներ և մշակութային օջախներ, կառուցվել են նոր խաղահրապարակներ, լուծվել են տարիներ շարունակ արդարացիորեն բարձրաձայնված խնդիրներ: 2019 բյուջետային տարում Էջմիածին քաղաքային համայնքի եկամուտների պլանը կատարվել է 108,4 տոկոսով. նախատեսված 1 մլրդ 513 մլն դրամի փոխարեն հավաքագրվել է 1 մլրդ 640 մլն դրամ: Ինչ վերաբերում է սեփական եկամուտների հավաքագրմանը, ապա այս մասով պլանային առաջադրանքը կատարվել է 113,4 տոկոսով:

Փորձենք հակիրճ ամփոփել կատարվածն ու ձեռքբերումները ըստ ոլորտների:

Սոցիալական ոլորտ

Անցած երկու տարում Էջմիածնի համայնքապետարան են ստացվել 5.964 դիմում և 6.209 գրություն, իսկ համայնքի ղեկավարի մոտ ամեն հինգշաբթի անցկացվող ընդունելությանը մասնակցել է 3.782 բնակիչ: Սոցիալական տարբեր հարցերով ստացվել է 867 դիմում, արխիվային տեղեկանքի, միջնորդագրի ու այլ հարցերով դիմել է 256 բնակիչ: 618 ընտանիքի հատկացվել է դրամական օգնություն, որից՝

- բուժման վճար՝ 354 քաղաքացու,
- ուսման վճար ՝ 96 քաղաքացու,
- սոցիալական տարբեր հարցերով՝ 168 քաղաքացու,
- դպրոցական պարագաների ձեռքբերման համար՝ 39 ընտանիքի 84 երեխայի,
- 1 ընտանիքի էլ տրամադրվել է վառելափայտ:

2018-2019 թթ. ընթացքում Էջմիածին համայնքի 2.116 քաղաքացու տրամադրվել է հարկային արտոնություն գույքահարկի գծով՝ 14 մլն 806 հազար դրամի, հողի հարկի գծով՝ 2.067 հոգու՝ 13 մլն 133 հազար 900 դրամի չափով: Արտոնությունը տրամադրվել է այն ֆիզիկական անձանք, որոնք մինչև սահմանված ժամկետը կատարել են գույքահարկի կամ հողի հարկի գծով պարտավորությունների մայր գումարների /ապառքների/ մարում: Հողի հարկի և գույքահարկի արտոնություն է տրվել նաև զոհված ազատամարտիկների ընտանիքներին:

Շարունակվել է հետևողական աջակցության ցուցաբերումը Արագած 2 զանգվածի ծերերի տանն ու «Մեր տունը» հասարակական կազմակերպությանը: 2019 թվականի ընթացքում այս հաստատություններին հատկացրել ենք 2 մլն դրամի սնունդ:

Քաղաքացիներին, այդ թվում՝ սոցիալապես անապահով էջմիածնեցիներին համայնքապետարանի մասնագետները ցուցաբերել են անվճար իրավաբանական աջակցություն /խորհրդատվության/:

Բարեկարգում

Երկու տարիների ընթացքում հսկայածավալ աշխատանքներ է կատարել «Բարեկարգում» տնօրինությունը: Այս ոլորտում թվարկումները շատ են:

Կատարվել են բոլոր անհրաժեշտ սեզոնային աշխատանքները՝ ծառերի բների սպիտակեցում, վնասատուներից բույսերի բուժման աշխատանքներ, սիզամարգերի խնամում, էտման և այլ աշխատանքներ: Բոլոր կենտրոնական փողոցների սիզամարգերում տեղադրվել են մեծ քանակությամբ ծաղկասածիլներ, ինչը նպաստել է քաղաքի գեղեցիկ տեսքի ապահովմանը:

Կատարվել են քաղաքի փողոցների նշագծման, խորքային հորերի վերանորոգման և տեխզննման աշխատանքներ: Պարբերաբար վերացվել են լուսավորության ցանցի անսարքությունները:

Էջմիածնում ասֆալտբետոնե ծածկի պահպանման և բարեկարգման նպատակով 2018 թվականին իրականացվել են շուրջ 18.606 քմ ընթացիկ նորոգման և ասֆալտապատման աշխատանքներ՝

- փողոցների և բակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի նորոգում՝ 18.406 քմ,
- մայթերի սալիկապատում՝ 200 քմ:

2019 թվականի ընթացքում կատարվել են փողոցների ասֆալտբետոնե ծածկույթի մասնակի նորոգումներ 36 փողոցներում ու բակերում՝ ընդհանուր 13.405 քմ մակերեսով: Այդ փողոցներն ու բակերն են՝ Օրջոնիկիձեի, Ն. Եվդոկիայի, Մ. Մեխակյան, Պիոներական, Զորավար Անդրանիկի, Մատրոսովի, Կույբիշևի, Կրուպսկայայի, Կարճիկյան, Վ. Սարգսյան, Սպանդարյան, Մայակովսկու, Լոմոնոսովի, Մ. Մաշտոցի, Կամոյի, Մ.Խորենացու, Բաղրամյան, Թումանյան, Շահումյան, Չարենցի, Պատկանյան, Ա.Ասատրյան, Իսակովի, Լիդիցեի, Իսի-լե-Մուլինոյի, Տերյան փողոցները, ինչպես նաև Վազգեն Առաջինի 1, 37, 38, 47, 49, 43ա, 40, 38ա, 41ա, Թումանյան թ. 2, Բաղրամյան թ.16,18, 20, 22, 24 շենքերի բակերը, Ալավերդյան, Արարատյան, Նալբանդյան, Զվարթնոց թաղամասի ճանապարհներն և բակային տարածքները, ինչպես նաև Միչուրինի, Պետրոզավոդսկի, Մ. Մաշտոցի 12, 14 շենքերի բակերը: Փողոցների ասֆալտբետոնե ծածկույթի հիմնանորոգումներ են կատարվել նաև Իսի լե Մուլինո - Կամո – Արարատյան հատվածում, Զվարթնոց թաղամասի 1, 2, 3, 4, 5, 5ա շենքերի բակերում՝ ընդհանուր 4.728 քմ մակերեսով:

2019 թվականի սուբվենցիոն ծրագրով հիմնանորոգվել են Էջմիածնի երկու կարևորագույն՝ Վազգեն Առաջինի և Վռամ Կոստանյան փողոցները, փոխվել են եզրաքարերը, Վ.Կոստանյան փողոցի անձրևատարը և հիմնանորոգվել են 4-րդ, 6-րդ, 8-րդ շենքերի բակերը՝ ընդհանուր 14.564 քմ մակերեսով:

Աղացած ասֆալտով 16.493 քմ հարթեցման աշխատանքներ են կատարվել քաղաքի հողապատ փողոցներում ու բակերում՝ Չարենց թաղամասի 3, 4, 4ա, 6, 7, 9, 18, 19, 21, 23, 25, Պատկանյան 43, 51, Շահումյան 50, Կարճիկյան 1 շենքերի բակերում, Լերմոնտովի-Վ. Մամիկոնյան-Իսակովի փողոցների խաչմերուկում:

Էջմիածնի 4 խնդրահարույց խաչմերուկներ կահավորվել են նոր՝ թվատախտակային լուսացույցներով՝ Բաղրամյան-Սպանդարյան, Խորենացու-Պատկանյան, Արարատյան-Իսի լե Մուլինոյի, Կամոյի-Վ.Կոստանյան:

Հիմնովին նորոգվել և վերագործարկվել է Մարիանե այգու ջրավազանը: Բարեկարգման աշխատանքներ են իրականացվել նաև քաղաքի մյուս այգիներում: Նորոգվել ու ներկվել են համայնքապետարանի հարակից պուրակի երկու, Զվարթնոց թաղամասի այգիների ու Անմար կրակ հուշահամալիրի ջրավազանները, վերագործարկվել են Չարենց թաղամասի 3 ջրավազանները:

Բոլորովին նոր տեսք է ստացել համայնքապետարանին հարակից այգին. այն ձևավորվել է գունավոր խճաքարերով: Հիմնվել են գունավոր անձրևանոցներով ու լուսային շարաններով ճեմուղիներ, որոնք էապես բարելավել են այգու արտաքին տեսքն ու գրավչություն հաղորդել: Արտաքին լուսավորություն է անցկացվել Ա. Մանուկյան, Չարենց, Տերյան, Անդրանիկ թաղամասերում և Արագածի զանգվածի քոթեջներում: Փոխվել են դեկորատիվ էլեկտրական սյուների լուսատուների 188 լապտեր և այգու տարածքում տեղակայված եկեղեցիների պուրակի ապակե պատվանդանների խամրած ապակիները: Քաղաքի գլխավոր՝ Մ.Մաշտոցի փողոցի երկայնքով երկկողմ սիզամարգերի ծառերի արանքներում տնկվել են արևմտյան սյունաձև տույաներ ու վարդագույն ծաղկող ակացիաներ, խոտածածկով լրացվել են սիզամարգերի բաց հատվածները: Վռամ Կոստանյան ու Սպանդարյան փողոցներում կատարվել են մայթերի կանաչ գոտիների բարեկարգման աշխատանքներ:

Ամբողջ քաղաքում տեղադրվել է 67 ճանապարհային նշան, որոնք կօգնեն ավելի անվտանգ ու հարմար դարձնել ինչպես վարորդների, այնպես էլ հետիոտների տեղաշարժը: Քաղաք այցելող զբոսաշրջիկների, ինչպես նաև այստեղ մշտապես բնակվող մարդկանց համար գրավիչ ու հետաքրքիր դարձնելու համար ձեռնարկվել են մի շարք քայլեր քաղաքի կենտրոնական հրապարակի շենքերի ու շինությունների արտաքին ճարտարապետական լուսավորության համակարգ ներդնելու ուղղությամբ, և Ամանորին ընդառաջ ճիշտ ու գրագետ լուսավորությամբ են ապահովվել Էջմիածնի Կոմիտասի անվան հրապարակին հարող շենք-շինությունները՝ Մայր Աթոռի Վազգենյան դարպասը, «Վեոն Արմենիա» ՍՊԸ-ին պատկանող շենքը և հրապարակի բազմաբնակարան շենքը, ինչը, վստահաբար, նոր շունչ է հաղորդել մեր քաղաքի սրտին և դարձրել այն ավելի ներկայանալի:

Բնակարանային կոմունալ ոլորտ

Այս ոլորտում ևս Էջմիածնի համայնքապետարանը իրականացրել է բազմաթիվ ծրագրեր:

2018 թվականին վերանորոգվել է 27 բազմաբնակարան շենքերի շուրջ 5.390 քմ մակերես տանիք: 2019 թվականին հիմնանորոգվել է 38 բազմաբնակարանային շենքի տանիք՝ ընդհանուր 6.268 քմ մակերեսի չափով, որից 6-ը հարթ տանիք՝ 1.300 քմ մակերեսով:

Արամ Մանուկյան 1-ին թաղամասում լուծում է ստացել 20 տարուց ի վեր առկա խնդիրը՝ ջրահեռացման համակարգի բացակայությունը. կառուցվել է

4.500 գծամետր երկարությամբ կոյուղագիծ: Ծրագիրն իրականացվել է ՀՀ Կառավարության միջոցներով և համայնքի 20%-ի չափով համաֆինանսավորմամբ:

Աղբահանության որակի բարձրացման համար ձեռք է բերվել 30 մեծ աղբաման, իսկ քաղաքի փողոցների մայթեզրերի հին աղբամանները փոխարինվել են նորերով:

Քաղաքային իշխանության մշտական ուշադրության կենտրոնում է նաև թափառող կենդանիների հիմնախնդիրը: Փոքր, բայց հաստատուն քայլերով առաջ ենք գնում նաև այս հարցում: Նախորդ 2019 թվականի ընթացքում ստերջացվել է 100-ից ավելի շուն, ինչը ենթադրում է նաև թափառող կենդանու քարտեզագրում, նույնականացում ու խնամքի ապահովում: Հատկանշական է, որ Երևանից հետո Էջմիածինն առաջին քաղաքն է, որտեղ իրականացվել է շների ստերջացման ծրագիր, և դա կրելու է շարունակական բնույթ:

Կրթության և մշակույթի ոլորտ

Նախադպրոցական կրթության համար ավելի հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով 2018-2019 թթ. ընթացքում կատարվել են մանկապարտեզների հիմնանորոգման, նորոգման ու գույքի թարմացման աշխատանքներ:

Մանկապարտեզ ընդունվող երեխաների «հերթագրում» հասկացությունը վերացնելու նպատակով՝ որդեգրվել է նոր խմբասենյակներ բացելու և մեծ թվով երեխաների ընդունելու սկզբունքը: 2019 թվականի հունիս ամսին թիվ 16 «Ոստան» մանկապարտեզում բացվել է նոր խմբասենյակ՝ ընդունելով ևս 25 երեխայի:

Բարերարների հետ համագործակցության արդյունքում բոլոր նորմերին համապատասխան հիմնանորոգվել և դեկտեմբերին վերաբացվել է քաղաքի կենտրոնում գտնվող թիվ 13 մանկապարտեզի չշահագործվող մասնաշենքը, ինչը հնարավորություն ստեղծեց մանկապարտեզ ընդունել ևս 100 երեխայի ու կրճատել հերթերի թիվը:

Այս աշխատաոճը շարունակական է լինելու, և ելնելով անհրաժեշտությունից՝ կքննարկվի նաև այլ մանկապարտեզներում հավելյալ խմբեր բացելու հարցը:

Նախորդ տարում բարեկարգման աշխատանքներ կատարվել են բոլոր մանկապարտեզներում.

Էջմիածնի քույր քաղաք ֆրանսիական Իսի լե Մուլինոյի հետ համատեղ ներդրմամբ թիվ 10 «Շուշան» մանկապարտեզում հիմնանորոգվել են սանհանգույցները, պատուհանները, տանիքն ու խոհանոցը: Խոհանոցը համալրվել է նաև անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով: Օգոստոսին Վիեննայի հայ համայնքի կողմից թիվ 5 մանկապարտեզին նվիրաբերվել է 96 անկողնային հավաքածու՝ բարձ, վերմակ և սպիտակեղեն: Թիվ 16, թիվ 6, թիվ 5, թիվ 11, թիվ 15 մանկապարտեզները համալրվել են 65 երկհարկանի մահճակալով, ինչի արդյունքում խմբասենյակներում երեխաների ու մահճակալների թվերը հավասարվել են: Թիվ 11 և թիվ 14 մանկապարտեզները համալրվել են 20-ական աթոռներով, բոլոր մանկապարտեզները համալրվել են երաժշտական կենտրոններով, մսաղացներով և, ըստ անհրաժեշտության՝ գազօջախով, ջեռուցման

կաթսայով, ջրի պոմպով և այլն: Մանկապարտեզներ հաճախող երեխաների մտածողությունն ու խոսքի ճիշտ զարգացումն ապահովելու համար անցած մեկ տարում համայնքապետարանի ենթակայության բոլոր մանկապարտեզները համալրվել են զարգացնող ու կառուցողական խաղերով, զանազան խաղալիքներով, հեծանիվներով, իսկ ավարտական խմբերի երեխաները ստացել են դպրոցական պայուսակներ:

Ճաշացանկում ընդգրկվել են վարսակի փաթիլներ, մանրաձավար, հավի կրծքամիս, բանան ու սեզոնային մրգեր: Բոլոր մանկապարտեզներին տրամադրվել են մսաղացներ ու ջեռոցներ՝ երեխաների սննդակարգը բազմազան և համեղ դարձնելու նպատակով:

Մանկապարտեզների բոլոր աշխատակիցների համար պարբերաբար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ համապատասխան մասնագետների կողմից: Տնօրենների և դաստիարակների վերապատրաստումը կայացել է համայնքապետարանի միջնորդությամբ՝ Կրթության ազգային ինստիտուտի կողմից, և իրականացվել է Երևանում:

Բարեկարգման աշխատանքներ կատարվել են նաև երաժշտական դպրոցներում:

Մ. Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի համար ձեռք են բերվել աթոռներ, կոմպոզիտորների նկարներ, վերանորոգվել են առաջին հարկի նախասրահը և դեպի բեմ գնացող միջանցքը: Սպ. Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտականում հուլիս ամսին վերանորոգվել են նախասրահը և մուտքի աստիճանահարթակը: Երկու երաժշտականներում միասին սովորում է 574 երեխա, վարձավճարի արտոնությունից օգտվում են 50-ը:

Կոմիտասի անվան մշակույթի պալատում վերանորոգվել է բեմը, ձեռք են բերվել շերտավարագույրներ, լուսային էֆեկտներ: Միջոցառումները պատշաճ կազմակերպելու համար ձեռք են բերվել նաև անհրաժեշտ ռեկվիզիտներ: Միայն 2019 թվականին անցկացվել է շուրջ 210 միջոցառում՝ մեծամասնությունը՝ լայնամասշտաբ: Աննախադեպ մեծ շուքով 2019-ին նշվեց Էջմիածին քաղաքի տոնը, և մենք հստակորեն կատարեցինք մեր առջև դրված խնդիրը՝ լրացնել տոնը նորանոր միջոցառումներով, լցնել այն նոր բովանդակությամբ.

Էջմիածնի 2704-ամյակի միջոցառումները մեկնարկեցին Կոմիտասի անվան մշակույթի պալատից՝ հանդիսավոր նիստով: Տոնական նիստին ներկա էին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նախարարներ, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ և այլ բարձրաստիճան այրեր: Չխախտելով տարիների ընթացքում ձևավորված ավանդույթը, քաղաքի տոնին մեծարվեցին տարբեր ոլորտներում բազմամյա գործունեություն ծավալած, հարգանք վայելող և քաղաքի զարգացման գործում ավանդ ունեցող մի շարք անձինք՝ պարգևատրվելով «Քաղաքի բարեկամ» և «Պատվավոր քաղաքացի» կոչումներով:

Տոնի շրջանակներում Էջմիածնի համայնքապետարանի և «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման հասարակական կազմակերպության» համագործակցությամբ առաջին անգամ կայացավ Քուֆթայի

(կոլոլակի) փառատոնը: Մեծ հետաքրքրություն առաջացրած փառատոնն ուներ 14 մասնակից՝ ռեստորաններ, հասարակական կազմակերպություններ, հանրային սննդի կետեր, անհատներ: Անդրանիկ փառատոնի հաջողությունն այն շարունակական դարձնելու վստահություն է ներշնչել քաղաքային իշխանություններին:

Տոնական միջոցառումների շարքում էին էջմիածնեցի նկարիչների կտավների ցուցահանդեսը Մշակույթի պալատի նախասրահում՝ Կոմիտասի հնչյունների ներքո, նարդու և շախմատի ցուցադրական խաղերը՝ «Անմար կրակ» հուշահամալիրում, որի ընթացքում երեխաներին անակնկալ հյուրընկալվել էին գրոսմայստերներ Զավեն Անդրիասյանն ու Հայկ Մարտիրոսյանը: Տոնի բարձրակետ էր ավանդական շքերթը՝ հոգևոր դասի, ուսանողության, մարզիկների, Արցախյան պատերազմի մասնակից և պատանի երկրապահների, ԱԻՆ փրկարար ծառայության էջմիածնի ստորաբաժանման աշխատակիցների, էջմիածնի զինծառայողների, քաղաքի ամենօրյա մաքրության պատասխանատուների՝ համայնքապետարանի բնակարանային կոմունալ վարչության աշխատակիցների, կրթական և մշակութային հաստատությունների կոլեկտիվների ու սաների և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ:

Էջմիածնի զարգացման գործում չափազանց կարևորում ենք համայնքապետարան-մասնավոր հատված համագործակցությունը: Մեր կողմից նախընտրելի այս ձևաչափով անցած տարում համատեղ իրականացվել են բարեկարգման ու զարգացման բազմաթիվ ծրագրեր:

Բարերարների հետ ակտիվ համագործակցության ու բանակցությունների շնորհիվ քաղաքում հիմնվել է 3 նոր խաղահրապարակ՝ համայնքապետարանին հարակից այգում, Զվարթնոց թաղամասում ու Վազգեն Առաջինի փողոցի 5-րդ շենքի բակում: Իսկ համայնքապետարանին հարող պուրակի նախկին՝ պլաստմասե խաղային պարագաները համայնքապետարանի միջոցներով վերանորոգվել և տեղադրվել են Վազգեն Առաջինի փողոցի թիվ 1 շենքի բակում:

Բարերարների հետ համագործակցությունը շարունակական բնույթ է կրելու:

Ներքաղաքային տրանսպորտ

Տարիներ շարունակ էջմիածնեցիները արդարացիորեն բարձրացրել են քաղաքի կարևորագույն խնդիրներից մեկը՝ ներքաղաքային տրանսպորտի բացակայությունը: Այսօր դա այլևս խնդիր չէ: Իսկ լուծումը տրվել է ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության հետ ակտիվ համագործակցության և Ֆրանսիայի Նիցցա քաղաքի քաղաքապետի հետ արդյունավետ բանակցությունների շնորհիվ:

Նիցցա քաղաքի քաղաքապետ պրն Քրիստիան Էստրոզին ցանկություն էր հայտնել էջմիածին համայնքին նվիրել ավտոբուսներ՝ համայնքի տրանսպորտային ցանցի զարգացմանը նպաստելու համար: Արդյունքում՝ էջմիածնում արդեն շահագործվում են Նիցցա քաղաքի նվիրած մեքենաները՝ կանոնավոր ուղևորափոխադրումներ կատարելով 4 ուղղությամբ: 2 մեծ ավտոբուսներ էլ տրամադրվել են Երևանում ուսանող մեր համաքաղաքացիներին՝ որպես ուսանողական ավտոբուսներ:

Ներքաղաքային տրանսպորտի ներդրմանը զուգահեռ՝ մասնավոր հատվածի հետ համագործակցության շրջանակներում վերջերս Էջմիածնում բացվեցին «Խելացի կանգառ»-ներ: Կանգառը քաղաքացուն տեղեկացնում է մոտեցող ավտոբուսի համարի և ժամանման մասին, ունի wi-fi՝ անվճար ու անսահմանափակ, տեղեկատվական վահանակ զբոսաշրջիկների համար, տեղեկացնում է քաղաքի թանգարանների ու տեսարժան վայրերի մասին, առաջարկում սննդի կետեր և այլն: Կանգառն ունի սմարթֆոնների լիցքավորման հնարավորություն, անվտանգության համակարգ, ԱԻՆ կանչի կոճակ, բանկոմատներ, վճարային ապարատներ, աղբի տեսակավորման հնարավորություն, օդափոխության և ջեռուցման համակարգ:

Առաջիկայում քաղաքը կունենա 8 այդպիսի կանգառ: Երկուսն արդեն իրականություն է, և ընթացքի մեջ են 3-րդ խելացի կանգառի նախագծման աշխատանքները:

Քաղաքաշինություն

2019 թվականը Էջմիածնի համար անկասկած կարելի է բնութագրել նաև որպես շինարարության աճի ժամանակահատված: Մենք բավականին մեծ ներուժ ունենք, որն այս ընթացքում տարբեր պատճառներով չէր օգտագործվել: Քաղաքային իշխանությունը լիահույս է, որ շինարարական ոլորտի աճը կարևոր դեր կունենա տնտեսության զարգացման համար: Միայն 2019 թվականին տրամադրվել է 152 շինթույլտվություն, որից 51-ը՝ հասարակական նշանակության, 101-ը՝ բնակելի:

Միևնույն ժամանակ համայնքապետարանի աշխատակիցների հետևողական աշխատանքի շնորհիվ դադարեցվել և կասեցվել են քաղաքում կատարվող ապօրինի շինարարությունները:

Արտաքին կապեր

Արտաքին կապերի ոլորտում ևս եղել են հաջողված ու արդյունավետ համագործակցություններ:

2019 թ. ապրիլի 12-ին Ֆրանսիայի Իսի լե Մուլինո քաղաքի Շառլ Ազնավուրի անվան կենտրոնում Էջմիածին և Իսի լե Մուլինո քաղաքների միջև համագործակցության 30-ամյակին նվիրված հանդիսավոր արարողություն տեղի ունեցավ: Այդ ժամանակ 450 հյուրերի ներկայությամբ Իսի լե Մուլինոյի և Հայաստանի որևէ քաղաքի պատմության մեջ առաջին անգամ երկու քաղաքների միջև ստորագրվեց «Smart Cities»՝ «խելացի քաղաքների» վերաբերյալ համագործակցության պայմանագիր՝ ի դեմս Էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարյանի և Իսի լե Մուլինոյի քաղաքապետ Անդրե Սանտինիի:

Պայմանագրով կողմերը պարտավորվում են մշակել Էջմիածնում խելացի քաղաքի զարգացմանը նպաստող և նորարարական լուծումների ընդունումը խթանող համատեղ ծրագրեր՝ պայմանագրով սահմանված և առաջնային համարվող ոլորտներում՝ զբոսաշրջություն, կրթություն, հանրային գործերի կառավարում, քաղաքաշինություն, տրանսպորտ:

Շարունակական բնույթ է կրում նաև ֆրանսերենի անվճար ուսուցման ծրագիրը, որն իրականացվում է Էջմիածնի համայնքապետարանի, Երևանի SPFA ֆրանսախոսների ակումբի և Էջմիածնի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոցի համագործակցությամբ: Եվս մեկ նվեր քաղաքը ստացավ ֆրանսիական Բուշ դյու Ռոն նահանգից՝ «Խաղաղության ծառ» հուշարձանի տեսքով:

Այն պատկերում է ձիթենու ծառ, որը նաև Բուշ դյու Ռոն նահանգի խորհրդանիշն է համարվում: Այս հուշարձանից տեղադրված է Երուսաղեմում, Բուշ դյու Ռոն նահանգում և արդեն նաև Էջմիածնում: Բացմանը ներկա էր Բուշ դյու Ռոն նահանգային խորհրդի և Էքս-Մարսել մետրոպոլի նախագահ տիկին Մարտին-ժիլ Վասալը:

Մեր քաղաքի տոնի շրջանակներում յուրօրինակ նվեր է մատուցել Էջմիածնի քույր քաղաք Պետրոզավոդսկը՝ իր փողոցներից մեկն անվանակոչելով Էջմիածին:

Շարունակվել է նաև հետաքրքիր մշակութային համագործակցությունը Ճապոնիայի դեսպանության հետ: Եղ. Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոցում 2018-2019 թթ. ընթացքում ևս անցկացվել է «սումի-է» գեղանկարչության վարպետության դաս: Էջմիածինը շարունակել է մասնակցել Ճապոնական ֆիլմերի ամենամյա փառատոնին:

Առաջիկայում նախատեսվում է ընդլայնել արտաքին կապերը, համագործակցային հարաբերություններ հաստատել Չինաստանի ու Կանադայի քաղաքների հետ:

Սպորտ

Էջմիածնի համայնքապետարանի թիվ 1 մարզադպրոց ՀՈԱԿ-ում գործում են հունա-հռոմեական ըմբշամարտ, ազատ ոճի ըմբշամարտ, ֆուտբոլ, ծանրամարտ, եռամարտ, վոլեյբոլ, աթլետիկա, մարմնամարզություն, շախմատ, մարտեր առանց կանոնների, բռնցքամարտ մարզաձևերի խմբեր: 33 մարզախմբերում ընդգրկված են 473 պատանիներ և աղջիկներ: Մարզադպրոցի մարզիկների հետ աշխատում են 24 մարզիչ-մանկավարժներ. նրանցից 5-ը հանրապետության վաստակավոր մարզիչներ են, իսկ 5-ը՝ սպորտի վարպետներ:

Մարզադպրոցի մարզումներն անվճար են, ֆինանսավորումը իրականացվում է համայնքապետարանի բյուջեից:

2018-2019 թթ. ընթացքում Էջմիածինը ներկայացնող տաբեր տարիքային խմբերի մարզիկներ հաղթողներ և մրցանակակիրներ են դարձել ինչպես անրապետական, այնպես էլ՝ միջազգային մրցաշարերում, այդ թվում՝ Եվրոպայի և աշխարհի առաջնություններում:

Լավագույն մարզիկները և մարզիչները քաղաքապետի կողմից արժանացել են պատվոգրերի և դրամական պարգևների:

Անցկացվել են նաև մի շարք մասսայական միջոցառումներ, որոնցից հիշատակման են արժանի.

- հունա-հռոմեական և ազատ ոճի ըմբշամարտի մրցումներ՝ նվիրված մայիսյան տոներին,

- համայնքապետարանին ենթակա մանկապարտեզների միջև սպորտի նախարարության հետ համատեղ անցկացված սպորտլանդիա,
- վոլեյբոլի ֆեդերացիաի կողմից անցկացված «Վոլեյբոլը դպրոցում» մարզական փառատոն,
- «Ազգային մարզական խաղեր» հանրապետական տոնահանդես,
- սպորտային մարմնամարզության բաց առաջնություն՝ նվիրված Էջմիածին քաղաքի 2704-ամյակին,
- շախմատի բաց առաջնություն՝ նվիրված Էջմիածին քաղաքի 2704-ամյակին,
- հունա-հռոմեական և ազատ ոճի ըմբշամարտի՝ 2007-2009 թթ. ծնված դպրոցականների բաց առաջնություն՝ նվիրված Լևոն Շաղոյանի հիշատակին,
- դպրոցականների 2019 թ. վոլեյբոլի բաց առաջնություն,
- Պերճ Խաչատրյանին նվիրված հուշամրցաշար վոլեյբոլի ֆեդերացիայի հետ համատեղ,
- շախմատի հուշամրցաշար՝ նվիրված 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին:

Այլ ոլորտներ

Այս ընթացքում հստակորեն աշխատել են համայնքապետարանի բոլոր կառույցներն ու ստորաբաժանումները: Համայնքապետարանի աշխատակիցներին և սոցիալապես անապահով էջմիածենցիներին համայնքապետարանի մասնագետները ցուցաբերել են անվճար իրավաբանական աջակցություն, խորհրդատվություն: www.ejmiatsin.am կայքի, էլեկտրոնայի փոստի, ինչպես նաև ֆեյսբուքյան էջի միջոցով հստակ աշխատել է էջմիածնեցու հետ հետադարձ կապը՝ արագ արձագանք ապահովելով առցանց տարբերակով քաղաքացիների կողմից բարձրացվող հարցերին:

Շարունակել ենք նաև համայնքապետարանի աշխատակազմը համալրել առավել արհեստավարժ կադրերով, շարունակաբար ջանքեր ենք թափել աշխատակիցների մասնագիտական որակների բարձրացման ուղղությամբ:

Համայնքապետարանի գործունեությունը դրական գնահատականի է արժանացել նաև պետական, հասարակական տարբեր կառույցների կողմից:

Մասնավորապես՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ու Հայաստանի համայնքների միության կողմից Էջմիածինը 2018 թվականին հաղթող է ճանաչվել «Մաքուր համայնք» անվանակարգում, իսկ 2019 թվականին ճանաչվել է «Նորարար և խելացի» համայնք:

Եվ չնայած վերոնշյալ ձեռքբերումներին և հաջողություններին՝ Էջմիածնի համայնքապետարանը շարունակում է թափանցիկ և հետևողական աշխատաոճը՝ միտված համայնքի առջև ծառացած խնդիրների լուծմանը և համայնքի զարգացմանն ու հզորացմանը:

Վլադիմիր Հարությունյան

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ (ՀՆԱ) ԲԵՎԵՌԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ժողովածուն գրեթե պատրաստ էր տպագրության, երբ մահաբեր կորոնավիրուսը, ծնունդ առնելով Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում և պատերազմ հայտարարելով ամբողջ մարդկությանը, սկսեց «իր ճիրանների մեջ առնել» աշխարհի տասնյակ երկրների ու ժողովուրդների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը և հայ ժողովրդին: Շատ երկրներում, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետությունում, արտակարգ դրություն հայտարարվեց, սկսեցին ձեռնարկվել արտակարգ դրությանը բնորոշ միջոցառումներ և կարգավորումներ, և ես որոշեցի «Վերջաբանի փոխարեն» խորագրի տակ տեղադրել իմ հոդվածը, որը ներկայացնում եմ ստորև:

Բայց մինչև հոդվածի բուն շարադրանքին անցնելը ցանկանում եմ ներկայացնել կորոնավիրուսի հետ կապված մի քանի առանձնահատկություններ, որոնք, մեր կարծիքով, ստորև ներկայացվող երեքն են.

1. **Կորոնավիրուսի վնասակար հետևանքները փոքրիշատե համեմատելի կարող են լինել (դրա գնահատման ժամկետն էլ ասելը հնարավոր չէ) միայն համաշխարհային պատերազմների վնասակար հետևանքների հետ՝ չհաշված մարդկային կորուստները: Ես կիսում եմ այն տեսակետը, որ կորոնավիրուսի արդյունքում մարդկությունը խուսափեց 3-րդ համաշխարհային պատերազմից, որը մարդկային զոհերի առումով ավելի կորստաբեր կլիներ, քան կորոնավիրուսն է: Ճիշտ է, կորոնավիրուսն իսկական փոթորիկ է համաշխարհային տնտեսության համար, և երկրագունդը հայտնվել է կիսամեռ վիճակում, այդուհանդերձ համաշխարհային պատերազմի համեմատությամբ կորոնավիրուսը չարիքի փոքրագույնն է: Եվ որքան էլ մարդկությունը ուշ հայտնաբերի կորոնավիրուսի դեղամիջոցը (պատվաստանյութը), մարդկությունը պարտավոր է սովորել և ապրել կորոնավիրուսի հետ կողք կողքի՝ հետևելով նրա զարգացումներին և իրենց առողջությանը՝ փորձելով առավելագույն օգուտներ քաղել ստեղծված իրավիճակից:**

2. **Եթե համաշխարհային պատերազմների ժամանակ տնտեսությունները մասամբ աշխատում էին, ապա կորոնավիրուսի աղետի ժամանակ տնտեսական կյանքը երկրագնդի վրա գրեթե ամբողջությամբ կանգ է առել: Եվ այս գերծանր աշխատանքային պայմաններում հանրօգուտ գործունեություն ծավալելու համար ես իմ սրտի և հոգու պարտքն եմ համարում առանձնահատուկ շնորհակալություն հայտնել՝**

ա) ՀՀ բարձրագույն իշխանություններին և մասնավորապես՝ ՀՀ կառավարության անդամներին, ՀՀ ԱԺ ղեկավարությանը և հանձնաժողովների նախագահներին, ՀՀ դատական համակարգի ղեկավարությանը և ՀՀ պարետին, ովքեր, իմ համոզմամբ, արժանի են նյութական խրախուսման ու պետական պարգևների, քանի որ նրանք իրենց գերծանրաբեռնված աշխատանքով փորձում են ամեն ինչ անել հանուն հանրային շահի:

բ) Այն քաղաքական ուժերին, անձանց ու աշխատանքային կոլեկտիվներին (մասնավորապես՝ բժիշկներին, ոստիկաններին, անվտանգության, արտակարգ իրավիճակների համակարգի և վերահսկողական ծառայությունների աշխատակիցներին), ովքեր «կորոնավիրուս-հայ ժողովուրդ» ճակատամարտում կանգնած են և հետագայում էլ կկանգնեն ՀՀ իշխանությունների կողքին: Մեր ազգը կորոնավիրուսի ժամանակ առավել, քան երբևէ պետք է միասնական լինի: Մենք բոլորս մեկ նավի մեջ ենք՝ անկախ ամեն ինչից: Ստեղծված իրավիճակը գրեթե հավասարազոր է Տիտանիկի օրինակին:

3. Եթե համաշխարհային պատերազմները մարդածին էին, ապա կորոնավիրուսի պատերազմը կամ, ավելի ճիշտ կլինի բնորոշել, աղետը մարդածին չէ, այլ աստվածածին է, և դա Աստծու պատասխանն է մարդկության գործած մեղքերին, որ նա իրագործել է Աստծու կողմից ստեղծված մարդու և բնության նկատմամբ: Ուստի կորոնավիրուսի բացասական հետևանքները նվազեցնելու և կորոնավիրուսի դեղամիջոցը (պատվաստանյութը) շուտ հայտնաբերելու համար անհրաժեշտ է ուժեղացնել հավատն առ Աստված, ինչում էական գործ ունեն կատարելու աշխարհի բոլոր ազգերի ու ազգությունների հոգևոր առաջնորդները: Սա հոգևոր մասով, իսկ աշխարհիկ մասով՝ բոլոր պետությունների իշխանությունները պետք է խորացնեն հակաճգնաժամային միջոցառումների ու կարգավորումների ծրագրերը և ջանքեր գործադրեն տնտեսությունների ու ազգաբնակչության սոցիալական վիճակի վրա այս աղետի վնասակար հետևանքների նվազեցման ուղղությամբ, իսկ ազգերն ու ժողովուրդները և նրանց տարբեր շերտերը պարտավոր են զորավիգ լինել իրենց պետությունների իշխանություններին: Որքան ես եմ հասկանում, Աստված երկընտրանք չի թողնում մարդկությանը և պարտադրում է սիրել ու զորավիգ լինել միմյանց:

Կորոնավիրուսը որպես Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) բևեռացման միջոց

Բոլորին պարզ է և հստակ, որ կորոնավիրուսին հաջորդելու է ֆինանսատնտեսական խոր ճգնաժամը, որն ունենալու է ոչ թե տեղական կամ մայրցամաքային, այլ համաշխարհային բնույթ և իր մեջ ներառելու է սոցիալ-տնտեսական ու քաղաքական բոլոր ոլորտները, և միայն մարդկության հավաքական միտքը կարող է նվազեցնել այս աղետի բացասական

հետևանքները: Եվ պատահական չէր, որ ՀՀ տնտեսության վրա այդ բացասական հետևանքները նվազեցնելու նպատակով ՀՀ կառավարությունը ձեռնարկեց խոշորամասշտաբ ու ոչ ստանդարտ հակաճգնաժամային միջոցառումների ու կարգավորումների բազմաթիվ փաթեթներ, որոնք ՀՀ պետական բյուջեի առկա պայմաններում պետք է գնահատել աննախադեպ:

Ողջունելով իրականացվող այդ միջոցառումներն ու կարգավորումները՝ միաժամանակ ցանկանում եմ բարձրաձայնել, որ դրանք չպետք է նպատակաուղղված լինեն դեպի բանկերը, վարկային կազմակերպությունները և ապահովագրական ընկերությունները, քանի որ ՀՀ օրենքով ԱԱՀ-ից ազատելու միջոցով հարկային հսկայածավալ արտոնություններ են սահմանված ապահովագրական և վերապահովագրական ընկերությունների (ներառյալ դրանց հետ կապված ապահովագրական միջնորդները և գործակալները) կողմից մատուցվող ծառայությունների, բանկերի ու վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող ֆինանսական հսկայածավալ գործառնությունների ու ծառայությունների նկատմամբ[1], որոնց օրենքում կատարված փոփոխությամբ ավելացվել են նաև բանկեր և վարկային կազմակերպություններ չհանդիսացող այլ անձանց կողմից վարկերի ու փոխառությունների տրամադրման գործարքները[2]: Եվ դա այն դեպքում, երբ Հայաստանում չկա մեկ այլ հարկատու, որը բանկերի և վարկային ու ապահովագրական կազմակերպությունների նման հնարավորություն ունենա իրականացնելու այդչափ շատ և բազմաբնույթ գործառնություններ, և դրանց գրեթե լրիվ գործարքների ու մատուցվող ծառայությունների գծով սահմանված լինեն ԱԱՀ-ի արտոնություններ, մանավանդ որ բանկային համակարգը Հայաստանում կայացած է ու զարգացած[*], բանկային ու ապահովագրական

---

[1] «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, «Հարկեր, տուրքեր և վճարներ», առաջին մաս, Եր., 2009, էջ 137-139:

[2] Նույն տեղում:

[*] Հետհեղափոխական Հայաստանում կայացած ու զարգացած են դարձել հարկային համակարգը և հարկային վարչարարությունը, ինչի խոսուն վկաներն են ՀՀ կառավարության գործունեության հաշվետվություններում հրապարակվող փաստերը՝ կապված հսկայածավալ կապիտալ շինարարության, տարբեր ոլորտների աշխատավարձերի բարձրացման ու այլնի իրականացման հետ, որոնք իրականություն են դարձել հարկային համակարգի արդյունավետ գործունեության շնորհիվ: Իսկ ո՞ւր են նայում ՀՀ ՊԵԿ-ի համապատասխան պատասխանատուները, ովքեր նախաձեռնություն չեն ցուցաբերում հարկային առանձին օրենքներ օրենսդրական մակարդակի բարձրացնելու և ուժը կորցրած ճանաչելու համար, որոնց մասին ես բարձրաձայնել եմ 2019թ. նոյեմբերին կայացած գիտաժողովին (տե՛ս Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու - 2019) Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ., 2019, 464 էջ, էջ 21-33), որը փոստային առաքմամբ ուղարկվել է ՀՀ ՊԵԿ-ին և տեղադրված է ինստիտուտի կայքում: Հարկ եմ համարում արձանագրել նաև, որ տարեկան 1 մլրդ դրամից ավելի շրջանառություն ունեցող տնտեսվարողների հարկային ստուգողների կողմից այդքան շատ հարկային պարտավորություններ, տույժեր ու տուգանքներ չէին արձանագրվի և դրա արդյունքում էլ հարկային տեսուչները օրինական այդքան ճչացող պարգևատրումներ չէին ստանա՝ առաջացնելով հասարակության առանձին չիրազեկ-

բիզնեսները շահութաբեր են և աշխատում են շուկայական հարաբերություններին բնորոշ մեխանիզմներով, վարկային ռեսուրսները հիմնականում շրջանառվում են առևտրում, իսկ բանկերի ու ապահովագրական ընկերությունների և վարկային կազմակերպությունների մատուցած ծառայությունների սակագները որոշվում են շուկայի օրենքներով և այլն:

Դա նշանակում է, որ Հայաստանի օրենսդիր մարմինը ժամանակին չարդարացված լիբերալ վերաբերմունք է դրսևորել բանկերի, վարկային ու ապահովագրական կազմակերպությունների նկատմամբ և նրանց կողմից իրականացվող հսկայածավալ ու բազմաբնույթ գործարքների ու մատուցվող ծառայությունների համար հարկային արտոնություններ սահմանելով՝ չի արժևորել դրանք (հարկային արտոնությունը պետք է ունենա գին), քանի որ բանկերն ու վարկային կազմակերպությունները չունեն դրանց սահմանմամբ պայմանավորված պարտավորություններ: Մինչդեռ հարկային արտոնությունները հնարավորություն են տալիս այդպիսի ծառայություններ ու գործարքներ իրականացնող կազմակերպություններին (բանկեր, ապահովագրական ու վարկային կազմակերպություններ), ի հաշիվ բյուջեի, ստանալու լրացուցիչ եկամուտներ, որոնք «կերպարանափոխվում» և հանդես են գալիս ծառայության վճարի ձևով, այսինքն՝ այն, ինչ բյուջեն չի ստանում որպես ԱԱՀ, նրանք ստանում են ծառայության վճարի ձևով: Ավելին, ներկայումս բանկերով, ապահովագրական ու վարկային կազմակերպություններով որպես կապիտալ հիմնականում շրջանառվում են օլիգարխների (հարուստների) գումարները, և իրականում ԱԱՀ-ի նշված արտոնությունը լրացուցիչ եկամուտ է բերում այդ մարդկանց և «ծառայում է» նրանց: Բացի դրանից, ՀՀ-ում ապահովագրական բիզնեսի օբյեկտներ են դարձել, որպես կանոն, խոշոր գումարներ ունեցող տնտեսվարող սուբյեկտները, քանի որ նրանք հնարավորություն ունեն օգտվելու այդպիսի մասնագիտական ծառայությունից, իսկ ապահովագրական ընկերությունները ստեղծվում են հիմնականում խոշոր գործարարների կողմից, և նույն անձին պատկանող գումարներն իր մի կազմակերպությունից անցնում են մյուսին՝ առանց ԱԱՀ-ով հարկվելու, ինչի արդյունքում հարուստն ավելի է հարստանում, իսկ աղքատը՝ աղքատանում:

Հետևաբար քանի դեռ քաղաքացիների ու տնտեսվարող սուբյեկտների գերակշիռ մասը չունի ապահովագրական ծառայություններից օգտվելու ֆինանսական հնարավորություն, այդպիսի ծառայությունների գծով ԱԱՀ-ի հարկային արտոնությունների սահմանումը նպաստում է ապահովագրական ընկերությունների լրացուցիչ շահույթի ստացմանը ի հաշիվ բյուջեի:

ված շերտերի դժգոհությունը, եթե միջազգայնորեն ընդունված աուդիտ անցկացնելու նորմը (որի հասցեատերը ՀՀ ֆինանսների նախարարությունն է) ՀՀ կառավարության որոշմամբ տարածվեր այդ տնտեսվարողների վրա:

Ուստի արդարացված պետք է համարել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ և 17-րդ կետերով սահմանված հարկային արտոնությունների ուժը կորցրած ճանաչելը:

Հայաստանի բանկերը այսպես կոչված առողջացման միջոցառումների կարիք չունեն՝ շնորհիվ նաև հայ ժողովրդի այն հսկայական ավանդների, որոնք ցածր տոկոսադրույքներով տեղաբաշխված են բանկերում կամ, ավելի ճիշտ կլինի ասել, ի պահ են տրված բանկերին: Բավական է նշել, որ վերջին տասնամյակում (2008-2018 թթ.) միջին տարեկան ավանդները ՀՀ մասնավոր բանկերում կազմել են 1.028.8 մլն ամերիկյան դոլար, իսկ ՀՀ դրամով՝ 784,8 մլն դրամ, և դա այն դեպքում, երբ Հայաստանի միջին տարեկան ՀՆԱ-ն այդ նույն ժամանակաշրջանում կազմել է 2912,2 մլրդ դրամ, իսկ ավանդներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է շուրջ 27%:

Ստացվում է, որ 3-րդ հանրապետության վերջին տասնամյակում հայ ժողովուրդն ավելի շատ աշխատել է բանկերի սեփականատերերի համար, իսկ այդ ժամանակահատվածում ընդունված տնտեսական օրենքներն էլ ծառայեցվել են մարդկանց այդ խմբերի ու այդ տնտեսվարողների շահերին: Ահա թե ինչու է անհրաժեշտ վերանայել այդ ժամանակահատվածում ընդունված տնտեսական և, մասնավորապես, հարկային օրենքները:

Վերոնշյալները և այլ հանգամանքներ վերջին տասնամյակում մեծ օգուտներ են ապահովել բանկերի սեփականատերերին, բայց ոչ ավանդատուներին կամ պետությանն ու երկրի տնտեսությանը: Այլ կերպ ասած՝ 3-րդ հանրապետության վերջին տասնամյակը բանկերի սեփականատերերի համար եղել է «ոսկե տասնամյակ»՝ հետևյալ 2 պատճառներով.

1. բանկերը հարկման դաշտում ունեցել են հսկայածավալ հարկային արտոնություններ,

2. վերջին տասնամյակի միջին տարեկան ՀՆԱ-ի շուրջ 1/3-ի չափով ավանդատուներն ավանդի ձևով գումար են ի պահ տվել բանկերին՝ ապահովելով նրանց վարկային ռեսուրսներով, իսկ վերջիններս էլ որոշակի գործիքակազմերով վարկի ձևով դրանք տրամադրել են իրենց հաճախորդը հանդիսացող իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ իրենց համար ապահովելով զգալի չափերի տոկոսային եկամուտներ, իսկ ազատ դրամական միջոցների սեփականատերերը, այսինքն՝ ավանդատուները, ավելի նվազ գումարներ են շահել: Եվ դրա պատճառը եղել է այն, որ ազատ դրամական միջոցների մանր սեփականատերերը, այսինքն՝ ազգաբնակչությունը, տարիներ շարունակ չի տիրապետել և այժմ էլ չի տիրապետում ազատ դրամական միջոցների ներդրման ապահով և առավել եկամտաբեր ոլորտի, ինչպիսին է կապիտալի շուկան: Իսկ այդ աշխատանքների կազմակերպման հասցեատերը ՀՀ Կենտրոնական բանկը կարող էր լինել, ինչպես նաև կառավարական և գիտական շրջանակները, որոնք իրենց գործիքակազմերով ավանդատուներին պետք է քաջալերեն իրենց խնայած միջոցներն ուղղելու

կապիտալի շուկաներ և ձևավորելու այդ մշակույթը ՀՀ-ում, որը, ի դեպ, հանդիսացել է Ճապոնիայում «տնտեսական հրաշքի» բաղադրիչներից մեկը:

Եթե մտովի համեմատություններ անցկացնենք 90-ականների և հետվիրուսային շրջանի իրավիճակների միջև, ապա կտեսնենք, որ տարբերությունները մեծ չեն: Բայց 90-ականներից մենք դասեր պետք է քաղենք: Հայտնի է, որ 90-ական թվականներին առանձին մարդիկ, ցածր գներով ձեռք բերելով սովի ճիրաններում հայտնված մարդկանց սեփականաշնորհման սերտիֆիկատները, գնեցին հսկա գործարաններ՝ ձևավորելով օլիգարխիայի խավը՝ իրեն բնորոշ բոլոր բացասական հետևանքներով (մենաշնորհների ձևավորում, կաշառատվության զարգացում և այլն), երևույթներ, որոնց դեմ պետությունը հետագայում անզոր եղավ պայքարել կամ պայքարը տանում էր ոչ արդյունավետ: Ներկայումս Հայաստանը կանգնած է ավելի մեծ մարտահրավերի առջև, և «քամիները փչում են» բանկերի սեփականատերերի կողմից, քանի որ, մի կողմից, ավանդատուների հսկայական գումարները կենտրոնացված են բանկերում, իսկ մյուս կողմից էլ՝ շարժական ու անշարժ գույքի, ինչպես նաև արժեթղթերի գնանկումները պարարտ հող կարող են ստեղծել բանկիրների համար՝ ավանդատուների գումարներով ձեռք բերելու նրանց նշանակալի մասը և դառնալու Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի նշանակալի մասի սեփականատերեր, որոնց երևի թե կարելի է անվանակոչել ոչ թե օլիգարխներ (ինչպես անում էին 90-ական թվականներին), այլ գերօլիգարխներ:

Վերոնշյալները վկայում են այն մասին, որ դրամավակային և հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնող պետական մարմինները հետվիրուսային շրջանում կարգավորումների առումով պետք է վերանայեն իրենց մոտեցումները, որպեսզի Հայաստանում իշխանությունը «ավանդատուների աջակցությամբ» ժողովրդից չանցնի մի խումբ մարդկանց՝ հանձինս բանկերի սեփականատերերի և նրանց մենեջերների:

Հավելեմ նաև, որ այն միջոցառումներն ու կարգավորումները, որոնք ուղղվում են տնտեսության առողջացմանն ու ազգաբնակչության սոցիալական վիճակի բարելավմանը, իհարկե, քիչ չեն, և աշխարհի տարբեր երկրներում դրանք տարբեր ծավալներ ու դրսևորումներ են ունենում: Բայց պետք է խոստովանենք, որ այդ միջոցառումների ու կարգավորումների տակ թաքնված հսկայածավալ ֆինանսական միջոցները ոչ ամբողջությամբ են իրենց նպատակին ծառայեցվում: *Այդ միջոցները հիմնականում սնում են բանկերին և մարսվում նրանց կողմից, քանի որ ժողովուրդները և տնտեսությունները «խաղալիք են դառնում բանկերի ու նրանց սեփականատերերի ձեռքին»: Այդպիսին է բանկային համակարգի անատոմիան կամ, եթե կարելի է այսպես արտահայտվել, թափանիվը (махина-ն): Ուստի առաջարկում եմ, որ պետությունները տնտեսություններն առողջացնելու և ազգաբնակչության վիճակը բարելավելու գործընթացներում բանկային գործիք-*

ները փոխարինեն այլ գործիքներով, որպեսզի նվազագույն ծախսերով ստանան առավելագույն արդյունք: Իսկ որպես «այլ գործիքներ» առաջարկում եմ օգտագործել ու գործածել գանձապետական համակարգին տիպական և բնորոշ գործիքներ: Ինչո՞ւ, որովհետև, օրինակ, Հայաստանում գանձապետական համակարգը իր գոյության 25-ամյա գործունեության ընթացքում ցույց է տվել իր կենսունակությունը և պետականամետությունն այն առումով, որ այս համակարգն իր ներդրման օրվանից սկսած երբեք պետության փողը միջոց չի դարձրել փող աշխատելու համար, այսինքն՝ գանձապետական համակարգում, ի տարբերություն բանկայինի, երբեք պետական փողը (փ) չի վերածվում փ^1-ի (փ^1=փ+Δփ):

Գանձապետական համակարգի այլ գործիքների՝ խնդրի լուծման հաստատերերը կարող են լինել՝

1. ***Համաշխարհային բանկի հայաստանյան ներկայացուցչությունը, որը ժամանակին Հայաստանում ներդրեց գանձապետական համակարգը,***
2. ***Հայաստանի գանձապետական համակարգը,***
3. ***Հայաստանի տեսաբան և պրակտիկ տնտեսագետները,***
4. ***ՀՀ կենտրոնական բանկը,***
5. ***ՀՀ մասնավոր բանկերը,***
6. ***գործարարները:***

Վերոնշյալ ներկայացուցչական մասնագիտական հանձնաժողովը ՀՀ կառավարության անդամի (հանձին ֆինանսների նախարարի) նախագահությամբ, կարծում եմ, ի զորու կլինի լուծելու այս խնդրահարույց հարցը և հետագայում առաջարկելու նաև այլ երկրների:

Մի խոսքով՝ այս գիտաժողովը հնարավորություն է՝ հասկանալու՝

- երկրի տնտեսությունում ինչը պետք է փոխել, ինչպես և ում միջոցով,
- ովքեր են մտահոգված երկրի տնտեսական խնդիրների լուծմամբ,
- եկել է առավել արդյունավետ ու բարձր արտադրողականությամբ աշխատելու ժամանակը, քանի որ հետվիրուսային շրջանում մրցակցությունը բոլոր ոլորտներում լինելու է առավել դաժան,
- **միասնականությունն ու միմյանց աշխատանքի նկատմամբ փոխադարձ հարգանքն է մեր երկրի, մեր ազգի ու պետականության խնդիրների լուծման բանալին,**
- **այս գիտաժողովը կօգնի որ Հայաստանը վիրուսային շրջանից դուրս գա «նոր աշխարհի» իրողություններին ավելի պատրաստված ինքնաբավ դառնալու միջոցով:**

Անհրաժեշտ ու ժամանակին ենք համարում ՀՀ կառավարության՝ կորոնավիրուսի բացասական հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումներն ու կարգավորումները, որոնք նպատակաուղղված են ինչպես տնտեսության առողջացմանը, այնպես էլ ազգաբնակչության սոցիալական վիճակի բարելավմանը, որոնք ներառված են բազմաթիվ փաթեթներում:

Պետության սահմանափակ միջոցների պարագայում արվածը անհրաժեշտ էր և բավարար: Սակայն տնտեսությանն ու ազգաբնակչությանը լիաթոք շնչելու հնարավորություն տալու համար ՀՀ կառավարությունը պետք է մտածի միջազգային ֆինանսական կազմակերպություններին դիմելու և հրատապ օգնություն ստանալու մասին, մասնավորապես՝

1. Համաշխարհային բանկին, որը հայտարարել է, որ 14 միլիարդ հրատապ օգնության փաթեթ է կազմելու և 15 ամսվա ընթացքում պատրաստ է 160 մլրդ ներարկել հիմնականում զարգացող երկրներին՝ կորոնավիրուսի դեմ պայքարի ազդեցության մեղմման շրջանակներում[1],

2. Արժույթի միջազգային հիմնադրամին, որը հայտարարել է 1 տրիլիոն օգնության հնարավորության ստեղծման մասին (ի դեպ, Ղրղզստանը դիմել և ստացել է 122 միլիոն դոլար օգնություն),

3. Ասիական զարգացման բանկին, որը հայտարարել է 6,5 միլիարդ հրատապ փաթեթի մասին,

4. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին, որը 5 տրիլիոն դոլարի փաթեթի մասին հայտարարություն է տարածել,

5. Այս ճգնաժամը նոր դուռ է բացում նաև Հայաստան-Սփյուռք հարաբերություններում՝ համահայկական տարբեր ծրագրեր իրականացնելու իմաստով՝ ներգրավելով Սփյուռքին տնտեսական իրավիճակի բարելավման գործում: Ծրագրեր պետք է մշակվեն ներքին և արտաքին ներդրումներ ներգրավելու ուղղությամբ: Հայաստանը պետք է ականջալուր լինի տարբեր տեղերից հնչող խորհուրդներին՝ հաղթահարելու համար այն վատ վիճակը, որում հայտնվել է երկրագունդը:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը վերոնշյալ բոլոր միջազգային ֆինանսական կառույցներին անդամակցում է, հետևաբար կարող է ակտիվ աշխատել դրանց հետ և հրատապ ծրագրեր կազմել, թե որ ուղղություններով ունենք օգնության կարիք: Դրանք կարող են լինել որոշակի ոլորտների օգնության համար: ***Այս համատեքստում առաջարկում եմ***

- ***շտապ կարգով ձևավորել աշխատանքային խմբեր (վճարովիության սկզբունքով), որոնք հնարավորինս կարճ ժամկետներում պատրաստեն և միջազգային ֆինանսական կազմակերպություններին ներկայացնեն այդ օգնության փաթեթները,***
- ***շտապ կարգով ձևավորել վերահսկողության խմբեր՝ ստացվելիք գումարների ծախսման նպատակայնության և ծախսման արդյունավետության բարձրացման վրա վերահսկողություն իրականացնելու համար,***
- ***այդ օգնության գումարները (լինի հայաստանյան թե մեջազգային ֆինանսական կազմակերպություններից) հնարավորինս շուտ հասցվեն հաս-***

[1] Պետք չէ վախենալ արտաքին պարտքի ավելացումից: Պետք է հրատապ կերպով ստանալ միջազգային ֆինանսական կազմակերպությունների օգնությունը:

ցեպտերերին և դրվեն շրջանառության մեջ, քանի դեռ էականորեն չի նվազել սպառումը, և չեն սնանկացել ձեռնարկությունները՝ դրա բոլոր բացասական հետևանքներով,

- *ինչպես Երևանի համայնքներում, այնպես էլ մարզկենտրոններում ձևավորել մասնագիտական խմբեր, որոնք, շրջելով մարդաշատ կոլեկտիվներով (նախապես ունենալով ուղեցույցներ), փորձեն փոխել հայ ժողովրդի մտածողությունը, որը 21-րդ դարում հայ ժողովրդի ամենամեծ մարտահրավերն է:*

Պետք է հայ մարդու մեջ սերմանել՝

1. հայրենասիրություն, որպեսզի հայրենիքին վերաբերվի այնպես, ինչպես իր ընտանիքին ու հարազատին,

2. սեփական հողում մնալու և այստեղ աշխատելու հոգեբանություն,

3. միասնականություն, միմյանց թև և թիկունք լինելու գաղափարը:

Պետք է ոգեկոչել երիտասարդներին, որ սիրեն ու հարգեն տարեցներին և իրենց ծեր ծնողներին խնամեն (ինչո՞ւ պետք է պետությունը պահի ծերանոցներ և ծերության թոշակ վճարի): Պետությունը պետք է պայմաններ ստեղծի, որ երիտասարդները աշխատատեղեր ունենան:

Եվ, ի վերջո, բոլորիս խնդիրն է փոխել հայ ժողովրի մտածողությունն ու հոգեբանությունը և հայ ժողովրդի մեջ մեծացնել հավատն առ Աստված: Իսկ այս գործում նշանակալի է Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Արամ Առաջինի, Արցախի թեմի առաջնորդի և Սփյուռքի ու հայաստանյան թեմական առաջնորդների դերը: Այս նոր իրավիճակում մենք միայն միասնական կամքի ու ջանքերի շնորհիվ կարող ենք հաղթահարել համավարակի հետևանքները և կառուցել «տնտեսական հրաշքի» երկիր՝ Նոր Հայաստան, որը երազում ենք:

Աստված մեզ բոլորիս պահապան:

Գագիկ Մակարյան

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Ներածություն

Վերջին 15 տարվա ժամանակահատվածում ՀՀ տնտեսությունը անցավ մի քանի ճգնաժամային իրավիճակներով, մասնավորապես՝ 2008-2009 թթ. ֆինանսատնտեսական համաշխարհային ճգնաժամը, 2014 թ. վերջին ՌԴ-ում ռուբլու արժեզրկման ճգնաժամը, 2016 թ. ապրիլյան պատերազմը և այժմ՝ 2020 թ. առաջին ամիսներից խորացող կորոնավիրուսի բացասական ազդեցությունը աշխարհի երկրների, այդ թվում՝ ՀՀ-ի վրա: Ստացվում է, որ 12 տարվա ընթացքում շուրջ 4 ճգնաժամային իրավիճակներ են եղել, և համարյա բոլորը երկարատև՝ առնվազն մեկ տարի բացասական ազդեցության տևողությամբ:

ՀՀ փոքր տնտեսությունը՝ համեմատաբար աղքատության և գործազրկության բարձր ցուցանիշներով, բնականաբար հեշտությամբ չէր կարող դիմակայել այդ ճգնաժամերի բացասական ազդեցություններին: Հաճախ կայունությունը և տնտեսական ակտիվությունը հնարավոր է եղել ապահովել ներքին ռեսուրսների խիստ օգտագործմամբ և ծայրահեղ լարված աշխատանքի արդյունքում: Այդպիսի ճգնաժամային ժամանակներում ավելի մեծ հաջողությամբ է հնարավոր դարձել առաջացած նոր խոչընդոտների և տնտեսական անկման գործընթացների արգելակումը, եթե առկա է եղել արդյունավետ և երբեմն ամենօրյա ռեժիմով երկխոսություն բիզնեսի և կառավարության միջև: Պատահական չէ, որ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) կորոնավիրուսի ժամանակաշրջանում՝ հատկապես 2020 թ. մարտ-ապրիլ ամիսներին, իր մի շարք վերլուծություններում և երաշխավորական ուղեցույցներում է՛լ ավելի է կարևորել երկրներում «սոցիալական երկխոսությունը» գործատուների կազմակերպությունների և կառավարությունների միջև: Դրա հետ մեկտեղ ԱՄԿ-ն տարբեր երկրների համար այս իրավիճակում ընդգծել է «արժանապատիվ աշխատանքի» ապահովման և դրա խթանման անհրաժեշտությունը:

ՀՀ սոցիալ-տնտեսական ցուցանիշների փոփոխության դինամիկան

ՀՀ-ում կորոնավիրուսի բացասական ազդեցությունը ավելի ուժգին է տնտեսական զգայուն ճյուղերի և մի շարք ոլորտների արտադրությունների վրա՝ պայմանավորված ՀՀ տնտեսության կառուցվածքով և դրան համապատասխան՝ ձեռնարկությունների մեծությամբ և բաշխվածությամբ: ՀՀ-ում ակտիվ գործող ձեռնարկությունների շուրջ 75%-ը կազմում են միկրո և փոքր ձեռնարկությունները, համապատասխանաբար միջինը 3-4 և 10-15 աշխատողով: Ընդ որում՝ միկրո ձեռնարկությունների հիմնական զբաղմունքն է առևտուրը և փոքր տնա-

յին արտադրությունները, տուրիստական ծառայությունները, չրագործությունը և սպասարկման ոլորտի ծառայությունները: Փոքր բիզնեսի հիմնական զբաղմունքն է բիզնես խորհրդատվությունը, հաշվապահական, իրավաբանական և թրեյնինգային ծառայությունները, անշարժ գույքի առք ու վաճառքի և գնահատման ծառայությունները, փոքր արտադրությունները, հյուրատնային և տուրիստական տարբեր ծառայությունները, հրուշակեղենի, քաղցրավենիքի և սննդի որոշ տեսակների արտադրությունները, ինչպես նաև համակարգչային տեխնիկայի և այլ էլեկտրոնային սարքերի սպասարկումը, ՏՏ ոլորտի ծառայությունները: Հետևաբար այսպիսի կառուցվածքի դեպքում բնական է, որ կորոնավիրուսի պատճառով ավելի մեծ բացասական ազդեցություն կկրեն առաջին հերթին տուրիզմի, սպասարկման, հանրային սննդի և առևտրի ոլորտները: Դա հատկապես պայմանավորված է տարբեր երկրներում տեղաշարժի սահմանափակումներով, սահմանների ժամանակավոր արգելափակմամբ, ավիաթռիչքների և փոխադրամիջոցների տեղաշարժի սահմանափակմամբ ինչպես երկրների միջև, այնպես էլ յուրաքանչյուր երկրում առանձին վերցրած: Այս ամենը խիստ կրճատեց ներքին և ներգնա տուրիզմը այլ երկրներից դեպի ՀՀ: Դրանով պայմանավորված, ինչպես նաև ներքին բնակչության մեկուսացման կարգի և արտակարգ դրության հետևանքով ՀՀ-ում նույնպես նշված ոլորտներում կատարվեց սպառողների թվի խիստ նվազում և ստացվող եկամուտների անկում: Բացի այդ, ՀՀ-ում սահմանափակվեցին կամ դադարեցին ձեռնարկատիրական գործունեության մի շարք տեսակներ՝ պայմանավորված ներկրման և արտահանման դժվարացող լոգիստիկայով, սպառման անկումով, ինչպես նաև պարետի որոշմամբ, որի համաձայն՝ ժամանակավորապես դադարեցվեցին մի շարք արտադրություններ և ծառայություններ: Այսպիսի ճգնաժամերի պայմաններում և մասնավորապես կորոնավիրուսի դեպքում ՀՀ համար կարևորվում է հետևյալ 3 ուղղություններով քայլերի արդյունավետությունը.

- տնտեսության հնարավոր պահպանումը փլուզումից կամ հնարավորինս փոքր չափերով անկումը,
- բիզնեսի կայունության հնարավորինս ապահովումը,
- գործազրկության զանգվածային աճի կանխարգելումը:

Այս 3 ուղղությունները փոխկապակցված են և պահանջում են արագ և լայնամասշտաբ գործողություններ պետական անհապաղ միջամտությամբ և աջակցության տարբեր գործիքներով: Դրա հետ մեկտեղ պետք է նախագծել և իրականացնել այնպիսի գործառույթներ, որոնք լինեն արագ հասանելի և առավելապես թիրախային:

ՀՀ տնտեսության պահպանման համար կարևոր է ուշադրությունը հատկացնել ստորև ներկայացված 3 ուղղությունների վրա.

1. արտաքին առևտրում կարևորել և վերլուծել առաջին թոփ երկրների ցանկը, դրանց վիճակը կորոնավիրուսի և հետկորոնավիրուսային ժամանակաշրջանում, ներմուծվող և արտահանվող ապրանքների ցանկի շրջանակում,

2. առաջնահերթ ապրանքների ցանկը և պարենային ապրանքների քանակների երաշխավորված մատակարարման դինամիկան և անհրաժեշտ կուտակումները,
3. ներքին կարիքների համար արտադրությունների պահպանումը և նորերի խթանումը:

ՀՀ արտաքին առևրտի թոփ երկրների ցանկում են ՌԴ-ն, Չինաստանը և Իրանը: Ստացվում է, որ կորոնավիրուսի պայմաններում 2 կարևոր երկրների հետ՝ Իրան և Չինաստան, խիստ նվազելու են ներմուծման և արտահանման ծավալները: Սակայն գերակշռում է ներմուծումը, այդ երկրները էժան ապրանքներ մատակարարող երկրներ են, և ներմուծվող ապրանքների մի զգալի մասը՝ որպես պատրաստի արտադրանք, հանդիսանում է հազարավոր միկրո բիզնեսների համար վաճառքի և սպասարկման ծառայությունների միջոցով եկամտի հիմնական աղբյուրը: Ներմուծվող ապրանքների մյուս մասը օգտագործվում է տարբեր արտադրություններում որպես հումք կամ օգտագործվում է որպես տեխնիկա: Ստացվում է, որ այդ երկու երկրների հետ պասիվ ռեժիմով առևտուրը էական բացասական ազդեցություն կունենա հազարավոր միկրո և փոքր ձեռնարկությունների վրա, քանի որ նրանք էժան ապրանքներ են վաճառում փոքր մարժայով:

ՌԴ-ի մասով խնդիրը երկակի է, քանի որ բացի կորոնավիրուսով պայմանավորված առևտրի ցուցանիշների անկումից, նաև առկա է ցածր եկամուտների ստացումը ՀՀ արտահանող ձեռնարկությունների համար: Նրանք կորցնում են իրենց եկամտի շուրջ 30-40%-ը՝ պայմանավորված ռուբլու արժեզրկմամբ: Իսկ արտահանող ընկերությունների մեծամասնությունը գյուղմթերքների վերամշակողներ են՝ պահածոների, մուրաբաների, հյութերի, կոմպոտների, գինու, մրգային օղիների և կոնյակի արտադրողներ: Նրանց եկամտաբերության կտրուկ անկումը խիստ բացասական կազդի 2020 թ. ընթացքում գյուղմթերքների մթերման վրա: Այդ ձեռնարկությունները դժվարությամբ կմթերեն գյուղատնտեսական ֆերմերների արտադրանքը, օրինակ՝ թարմ մրգեր և բանջարեղեն, խաղող և այլն: Սա էլ իր հերթին բացասական կազդի ֆերմերային տնտեսությունների եկամտաբերության վրա, որը կհանգեցնի նրանց վարկունակության անկմանը: Այսպիսի իրավիճակում խիստ հասցեական և լայնամասշտաբ պետական աջակցություն է անհրաժեշտ: Միկրո և փոքր բիզնեսը դեռևս 2019 թ., մեր հետազոտության արդյունքներով, նշել էր, որ իր եկամտաբերությունը այնքան ցածր է, որ հազիվ բավարարում է սննդամթերքի և հագուստի գնման համար, և նրանք չեն կարողանում գնել միջին շքեղության ապրանքներ, օրինակ՝ հեռուստացույց, լվացքի մեքենա կամ սառնարան: Այսպիսի պատասխան տվել էր հարցված միկրո և փոքր ձեռնարկությունների շուրջ 49%-ը: Հետևաբար այժմ կորոնավիրուսով պայմանավորված տնտեսական ցածր տեմպերի պարագայում է՛լ ավելի կնվազի նրանց եկամտաբերությունը, և նրանց մի զգալի մասը ի վիճակի չի լինի շարունակելու իր ձեռնարկատիրական գործունեությունը:

Բացի այդ, նույն իրավիճակում կարող են հայտնվել բազմաթիվ ՓՄՁ-ներ, որոնք գործում են սպասարկման, տուրիստական ծառայությունների մատուցման և հանրային սննդի ոլորտներում: Բանկերի միջոցով վարկերի տրամադրումը, նույնիսկ զրոյական տոկոսադրույքով, ունի մի շարք դժվարին նախապայմաններ բիզնեսի կամ գործատուների համար: Թե՛ բանկերը և թե՛ բիզնեսը որոշակի անորոշություններ և մշուշոտ կանխատեսումներ ունեն կորոնավիրուսի վերացման ընթացքի վերաբերյալ և տնտեսության հետագա վերականգնման հնարավորությունների և արագության նկատմամբ: Դժվարին նախապայմաններից են նաև լավ հարկային և լավ վարկային պատմությունների առկայությունը, ինչպես նաև այդ վարկերի ներքո միայն մեկ բաղադրիչի օգտագործման պահանջը: Այսինքն՝ տնտեսվարող սուբյեկտը՝ բիզնեսը կամ գործատուն, իր գործունեության ընթացքում ձեռք է բերում հումք, սարքավորումներ, օգտագործում է էներգակիրներ, վճարում է աշխատավարձ և համապատասխան բոլոր հարկերը, սակայն ըստ ՀՀ Կառավարության թիվ 1 միջոցառման՝ գումարը կարելի է օգտագործել միայն մեկ նպատակի համար, օրինակ՝ միայն աշխատավարձի վճարման կամ հումքի ձեռքբերման: Ցանկալի կլիներ, որ վարկը հնարավոր լիներ օգտագործել բազմակի ձևով վերը նշված բոլոր ուղղություններով, թեկուզև որոշակի համամասնությամբ: Բացի դրանից, տնտեսական աջակցության բոլոր հիմնական 1, 2 և 3 միջոցառումների կիրարկման համար անհրաժեշտ է իրավիճակի որոշակի կայունացում և կանխատեսելիություն: մինչդեռ գործատուների մոտ օրեցօր վատթարանում է վիճակը: Հետևաբար վարկի ստացման և մարման հնարավորությունները նույնպես կվատթարանան: Դա է պատճառը, որ բիզնեսին ուղղված այդ միջոցառումները հասանելիության խնդիր են ունենալու շատ գործատուների համար: Այդ առումով մեր կողմից առաջարկվել են մի շարք այլ գործառույթներ, օրինակ՝

1. հարկերի վճարման ժամկետների հետաձգում,
2. հարկային պարտավորությունների կատարումը ուշացնելու դեպքում չհաշվարկել տույժ և տուգանքներ,
3. 2020 թ. պետական գնումները խտացնել և իրականացնել 2020 թ. մայիս-հուլիս ամիսների ընթացքում, հատկապես տեղական արտադրողներից գնումների մասով՝ դրա շնորհիվ մեծ գումարներ ներարկելով տնտեսության մեջ: Դրա արդյունքում կխթանվեն տեղական ձեռնարկությունները,
4. նպատակահարմար է իրականացնել մեծ ծավալի շինարարական աշխատանքներ, քանի որ ՀՀ-ն հիմնականում ինքնաբավ է շինարարական անհրաժեշտ նյութերով, օրինակ՝ քար, ցեմենտ, ավազ, մետաղյա կամ կավե կղմինդրներ և մեկուսիչ նյութեր: Շինարարական աշխատանքների պատվիրումը տեղական շինարարական ընկերություններին իր հետևից կբերի շինարարական նյութեր արտադրող հարյուրավոր ընկերությունների ակտիվացման և մուլտիպլիկատիվ մեծ ազդեցությամբ կաշխուժացնի ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությունը, կխթանի զբաղվածությունը և կառաջացնի հարկեր պետական բյուջեի համար: Շինարարական ծրագրերի

պատվիրումը նաև հնարավորություն կընձեռնի այլ երկրներ չմեկնած աշխատանքային միգրանտներին ինտեգրվելու ՀՀ աշխատաշուկայում՝ նրանց ներգրավելով շինարարական աշխատանքներում և շինարարական նյութերի արտադրություններում:

Համաձայն ԱՄԿ վերլուծությունների՝ կատարված ս/թ մարտի վերջին և ապրիլի սկզբին[1], աշխարհի երկրներում ենթադրվում է շուրջ 25 մլն նոր գործազուրկների առաջացում: Ներկայումս աշխարհի ամբողջ աշխատուժի շուրջ 81%-ը, որը կազմում է 3.3 մլրդ մարդ, երկրներում արտակարգ դրությունների կամ կարանտինի պատճառով գտնվում է աշխատանքի մասնակի կամ լրիվ ընդհատման իրավիճակում: Սա կհանգեցնի աշխատավարձի մասնակի վճարման կամ գործազրկության: Աշխարհում սպասվում է ընդհանուր ՀՆԱ-ի նվազագույնը 2%, միջինը՝ 6% և վատագույնը 8%-ի անկում: Դա կնշանակի, որ աշխարհում տեղի կունենան տնտեսական հզորությունների վերաբաշխում երկրների միջև: Բացի այդ, բազմաթիվ պետությունների համար առաջնային լինելու ցուցանիշները նույնպես կփոփոխվեն:

Տեղի կունենա աշխատուժի հմտությունների նկատմամբ պահանջների էական փոփոխություն, որը կհանգեցնի աշխատուժի զգալի քանակների տեղաշարժման, այսինքն՝ տեղի կունենան աշխատուժի կապիտալի որակական և քանակական փոփոխություններ: Այս ամենը կհանգեցնի աշխատուժի միգրացիայի նոր հոսքերի առաջացման և հների վերաբաշխման: Այս բոլորից հետո շատ կարևոր է հետկորոնավիրուսային ժամանակաշրջանում տնտեսության ու զբաղվածության վերականգնման համար արդյունավետ բարեփոխումների իրականացումը, հատկապես գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից:

Անհրաժեշտ բարեփոխումներ հետկորոնավիրուսային ժամանակաշրջանի համար

Գլոբալ առումով անհրաժեշտ կլինի բարելավել գործարար միջավայրը մի շարք օրենքների պարզեցման և առկա խոչընդոտների վերացման միջոցով: Անհրաժեշտ կլինի թուլացնել որոշ օրենսդրական նորմեր՝ կապված, օրինակ, հարկերի մեծության, տույժերի տոկոսադրույքների նվազեցման, աշխատանքի երեկոյան ժամերի և շաբաթ կամ կիրակի օրերի համար աշխատավարձի նկատմամբ հավելյալ վճարումների հետ: Բացի այդ, ցանկալի կլինի վերանայել արդեն մշակված մի քանի ռազմավարություններ, ինչպես, օրինակ, ՀՀ-ում ՓՄՁ և ՀՀ արդյունաբերության զարգացման հնգամյա ռազմավարությունները, ինչպես նաև զբաղվածության նոր ռազմավարությունը: Օրենսդրական բարեփոխումներ, ըստ մեզ, պետք է իրականացվեն հետևյալ օրենքների նկատմամբ.

1. ՀՀ օրենքը սնանկության մասին: Նոր իրավիճակում ավելի մեծ թվով սնանկացման վարույթներ կարող են սկսվել տնտեսվարող սուբյեկտների հանդեպ՝ պայմանավորված իրենց պարտավորությունների չկատարումով,

[1] https://www.ilo.org/global/about-the-ilo/newsroom/news/WCMS_740893/lang--en/index.htm

պետական բյուջե հարկերի վճարման կամ գործընկեր կազմակերպությունների հանդեպ պարտավորությունները ժամանակին և որակով չկատարելու հետևանքով: Որոշ թվով ընկերություններ նաև կդիմեն ինքնասնանկացման՝ պայմանավորված իրենց օբյեկտիվ խնդիրներով, իսկ որոշները՝ իրենց պարտավորությունները չկատարելու դիտավորությամբ:

2. Ներդրումների մասին ՀՀ օրենքը՝ տեղական և օտարերկրյա ներդրումները նոր իրավիճակում խթանելու համար: Այս պարագայում առաջարկում ենք օրենսդրության մեջ ավելի հստակեցնել և բարելավել պետական արտոնությունների և աջակցությունների համակարգը, ինչպես նաև ՀՀ գրավչությունը ապահովող նոր նախապայմանների ներառումը:
3. ՀՀ օրենքը ազատ տնտեսական գոտիների մասին և առկա ազատ տնտեսական գոտիների աջակցման գործիքակազմի վերանայման անհրաժեշտությունը՝ պայմանավորված այլ տնտեսական ճյուղերի ներառման նպատակով (առկա 5 ազատ տնտեսական գոտիներում նաև աջակցության գործիքակազմը ընդլայնելու տեսանկյունից): Այս առումով նպատակահարմար կլինի, ըստ մեզ, վերանայել ազատ տնտեսական գոտիների հետ կնքված պայմանագրերը՝ ՀՀ կառավարության և ազատ տնտեսական գոտիների միջև:
4. Պետական գնումների ՀՀ օրենքով նախատեսված պարզեցված գնումների շեմը առաջարկում ենք 10 մլն ՀՀ դրամից բարձրացնել մինչև, օրինակ, 100 մլն ՀՀ դրամի: Բացի այդ, առաջարկում ենք 2020 թ. գնումները խտացնել և իրականացնել գալիք 3-4 ամիսների ընթացքում, հատկապես տեղական արտադրողներից գնումների մասով: Առաջարկում ենք նաև գնումների պահանջներում կանխավճարից բացի նախատեսել նաև միջանկյալ վճարումների կատարումը՝ ի տարբերություն ներկայիս օրենքի այն պահանջի, որ հիմնական վճարումը կատարվում է գնումներով նախատեսված մատակարարումը ավարտելուց հետո: Սրանք հնարավորություն կտան տնտեսության մեջ ներարկելու ֆինանսներ և մեծ թվով ընկերությունների, այդ թվում՝ ՓՄՁ, մասնակցելու գնումների գործընթացներին, և դրանց շնորհիվ տնտեսվարողները ձեռք կբերեն գործունեության որոշակի կայունություն: Հարցը վերաբերում է հատկապես այն գնումներին, որոնք կապ ունեն տեղական արտադրությունների հետ: Միաժամանակ թվային տնտեսության զարգացումը ՀՀ-ում խթանելու նպատակով անհրաժեշտ կլինի ապահովել նաև դրա հետ կապ ունեցող անհրաժեշտ տեխնիկայի գնումները: Գնումների համակարգը նաև կխթանի ֆորմալ զբաղվածությունը և կփոքրացնի սպասվելիք գործազրկության ռիսկը:
5. Քանի որ մինչ օրս ՓՄՁ զարգացման նոր ռազմավարությունը, ՀՀ արդյունաբերության զարգացման հնգամյա ռազմավարությունը և զբաղվածության նոր ռազմավարությունը դեռևս ընդունված չեն և չեն գործարկվել, առաջարկում ենք վերամշակել այդ երեք ռազմավարությունները՝ կորոնավիրուսի բացասական ազդեցությունները հաղթահարելու տեսանկյու-

նից, և դրանք, անհրաժեշտ նպատակների և միջոցառումների համալրման արդյունքում, գործարկել արդեն 2020 թ. երկրորդ կեսին:

6. Հաշվի առնելով աշխատաշուկայում առկա նոր մարտահրավերները, ինչպես նաև աշխարհի տնտեսության մեջ Հայաստանի նոր դիրքադրման ՀՀ կառավարության նոր առաջարկը՝ նպատակահարմար կլինի արմատապես վերանայել մասնագիտական և բարձրագույն կրթության բնագավառներում առկա մասնագիտությունների ցանկը և հմտությունները՝ աշխատաշուկայի նոր պահանջարկի տեսանկյունից: Ընդ որում, մեր կարծիքով, ցանկալի կլինի վերանայել նաև պետական աջակցության գործիքակազմը՝ անվճար ուսուցումների և ուսումնական նոր չափորոշիչների մշակման տեսանկյունից:
7. Կրթության բնագավառում, հեռավար ուսուցման լավագույն օրինակների հիման վրա, դեռևս որոշ ժամանակահատվածում անհրաժեշտ կլինի շարունակել հեռավար ուսուցումը՝ որպես կորոնավիրուսի կանխարգելման հաջողված գործիքակազմ: Այդ նպատակով նախատեսել հեռավար ուսուցման ընդհանրացված կենտրոնների ստեղծում և պետական ու ոչ պետական գնումների միջոցով դրանց զինում անհրաժեշտ համակարգչային և այլ տեխնիկայով ու կապի միջոցներով:
8. Կրթական համակարգում ուսումնական ծրագրերի բարելավման և նոր չափորոշիչների մշակման շրջանակում ուժեղացնել առողջության պահպանման և աշխատանքի անվտանգության բաղադրիչը ու նաև այդպիսի մասնագետների ուսուցանումը, որպես առանձին մասնագիտություն: Այս նպատակի կատարումը կապահովի բիզնեսի և ՀՀ քաղաքացիների շրջանում սանիտարահիգիենիկ պահանջների և աշխատանքի անվտանգության ապահովման մշակույթի խթանումը:
9. ՀՀ Աշխատանքային օրենսգրքում առաջարկում ենք պարզեցնել աշխատանքային հարաբերությունները երեկոյան և շաբաթ-կիրակի օրերի համար նախատեսված վճարումների մասով: Դրանց շնորհիվ հնարավոր կդառնա ապահովել ընկերությունների ֆորմալացումը, ստվերային աշխատուժի տեղափոխումը դեպի սպիտակ դաշտ, ինչպես նաև գլոբալ առումով գործազրկության կանխարգելումը:
10. ՀՀ Հարկային օրենսգրքում առաջարկում ենք նախատեսել հարկերի և տույժ ու տուգանքների չափերի ժամանակավոր նվազեցում կամ տույժ ու տուգանքների ժամանակավոր զրոյացում:
11. Առաջարկում ենք նաև առավելապես տնտեսապես տուժած ոլորտներում չգանձել եկամտահարկը մինչև ս/թ նոյեմբերի 1-ը: Այն ընկերությունները, որոնք ի վիճակի են վճարելու եկամտային հարկը, կամավոր սկզբունքով կշարունակեն կատարել իրենց վճարումները:
12. Առաջարկում ենք գործարկել այնպիսի տնտեսական ծրագրեր, որոնք կարող են ունենալ մեծ մուլտիպլիկատիվ սոցիալ-տնտեսական նշանակություն և լայնամասշտաբ զբաղվածության ապահովում, օրինակ՝ շինարարական

լայնածավալ ծրագրերի իրականացում, ներառյալ սոցիալական բնակարանաշինությունը:

13. Օրավարձով աշխատողների և ինքնազբաղված անձանց ֆինանսական վիճակը բարելավելու համար առաջարկում ենք ապահովել նրանց գրանցումը որպես «գործազուրկ», այնուհետև սահմանել հատուկ նպաստ նրանց համար, օրինակ՝ ամսական նվազագույն պարենային զամբյուղի չափով՝ 2-3 ամիս տևողությամբ:

Ամփոփում

Ցանկանում ենք ընդգծել նաև այն փաստը, որ հետկորոնավիրուսային ժամանակաշրջանում, աշխարհի երկրների տնտեսությունների վերադասավորման համատեքստում, էականորեն կվերանայվեն տնտեսական տարբեր ճյուղերի պահպանման և զարգացման մոտեցումները, և քննադատական ձևով կվերանայվեն տնտեսության գերակա հանդիսացող ճյուղերը:

Այսօր կորոնավիրուսի տնտեսական ազդեցության հետևանքով ՀՀ տնտեսության գերակա ճանաչված մի շարք ճյուղեր/ոլորտներ ցույց տվեցին, որ չունեն էական դիմադրողականություն ներկայիս ճգնաժամային իրավիճակում և, փոխանակ ապահովելու տնտեսության պահպանումը և առաջընթացը, հակառակը, իրենք դարձան ամենախոցելի ճյուղերը: Հետևաբար ՀՀ տնտեսության նոր դիրքադրումը աշխարհի տնտեսության մեջ պետք է պատճառաբանված լինի այնպիսի զարգացման ծրագրերով և տնտեսական ճյուղերով, որոնք օժտված են ավելի մեծ դիմադրողականությամբ և կայուն եկամտաբերությամբ:

Հավելված 1

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔՆԵՐԻ ԱՐՏԵՐԿՐՅԱ ՓՈՐՁՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԽՄԲԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ԵՐԿՐՆԵՐԸ

№	Տնտեսական հրաշք իրակա-նացրած երկրի անվանումը	Փորձն ուսումնասիրող խմբի անդամների ա. ա.	Գիտական աստիճանը և կոչումը	Աշխատանքի վայրը
1	2	3	4	5
1.	Գերմանիա	1. Սարինյան Ռոբերտ	տ.գ.դ., պրոֆեսոր	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, գլխավոր գիտաշխատող
		2. Գաբրիելյան Բելլա	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, ավագ գիտաշխատող
2.			տ.գ.թ.	
3.	Չինաստան	1. Բախշյան Գևորգ	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող
		2. Թումանյան Ռոբերտ	տ.գ.թ.	Մակրոէկոնոմիկայի դասախոս Չինաստանի Բանգոր Համալսարանում
4.	Սինգապուր	1. Սարգսյան Լիլիթ	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, փոխտնօրեն, գիտաշխատող
		2. Գրիգորյան Դոնարա		ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող
5.	Ճապոնիա	Դալլաքյան Սվետլանա	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, բաժնի պետ, գիտաշխատող
6.	Իսրայել	1. Մանուչարյան Մերի	տ.գ.թ., դոցենտ	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, բաժնի պետ, ավագ գիտաշխատող
		2. Մուրադյան Մերի		ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, 1-ին կարգի տնտեսագետ
7.	Մալայզիա	1. Բաղդասարյան Քրիստինե	տ.գ.թ., դոցենտ	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, գիտքարտուղար, թեմայի ղեկավար, ավագ գիտաշխատող
		2. Մարգարյան Սոնա		ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, 1-ին կարգի տնտեսագետ
8.	Նոր Զելանդիա	1. Հակոբյան Եվգենյա	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, գիտաշխատող
		2. Ազատյան Լիանա		ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, գիտաշխատող
9.	Ինդոնեզիա	1. Փարսադանյան Տաթևիկ	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող
		2. Շահինյան Տաթևիկ		ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող
10.	Իտալիա	1. Պետրոսյան Դավիթ		ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, ասպիրանտ, կրտսեր գիտաշխատող
		2. Հարությունյան Աննա	տ.գ.թ.	ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ
11.	Իռլանդիա	Թորգոմյան Սևակ	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող
12.	Հարավային Կորեա	Զախարյան Արմինե	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, գիտաշխատող
13.	Վրաստան	1. Խաչատուրյան Վահագն	տ.գ.թ.	Տնտեսագետ, փորձագետ
		2. Խաչատուրյան Արամ	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող

14.	Չիլի	1. Պողոսյան Շողեր	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, գիտաշխատող
		2. Սարգսյան Անուշ		ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ
15.	Հնդկաստան	Մանուկյան Գրիգոր	տ.գ.թ., դոցենտ	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, գիտաշխատող
16.	Իսպանիա	Հարությունյան Գևորգ	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող
17.	Էստոնիա	Իսահակյան Ռազմիկ	տ.գ.թ.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող
18.	Ֆինլանդիա	1. Մկրտչյան Թաթուլ	տ.գ.դ.	ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
		2. Հովհաննիսյան Աստղիկ		ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտ-րոնի հետազոտող
19.	Լեհաստան	1. Հախվերդյան Դավիթ	տ.գ.դ., պրոֆեսոր,	ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտ-րոն, տնօրեն
		2. Մովսիսյան Շուշան		«Ամբերդ» հետազոտական կենտրոն, փորձագետ, ՀՊՏՀ հայցորդ
20.	Իսլանդիա	1. Թովմասյան Ռուբիկ	տ.գ.թ. , դոցենտ	ՀԱԱՀ, դասախոս
		2. Թովմասյան Գայանե	տ.գ.թ.	ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող
21.	Լատվիա	1. Ոսկանյան Գոհար	տ.գ.թ.	ՀԱԱՀ, դասախոս
		2. Միրզոյան Ծաղկանուշ		ՀԱԱՀ, դասախոս
22.	Միացյալ Արաբական Էմիրություններ	1. Վահանյան Գրիգորի	տ.գ.դ., պրոֆեսոր	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, գլխավոր գիտաշխատող
		2. Զախարյան Վիկտոր		UNIDO-ի միջազգային փորձագետ

Հավելված 2

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔՆԵՐԸ». ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ժամանակակից աշխարհի բոլոր երկրներում տեղի են ունենում տնտեսության արդիականացում, տնտեսության նորացում՝ «տնտեսական բարեփոխումներ» անվանումով, որոնց նպատակն է տնտեսության արագացված կամ թռիչքային զարգացումը: Այդ զարգացումները տարբեր երկրներում բնորոշվում են տարբեր եզրույթներով: Հայաստանում այդ եզրույթը ստացել է «տնտեսական հեղափոխություն» անվանումը:

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի կողմից հետազոտվել է աշխարհի շուրջ 2 տասնյակ մեծ ու փոքր ասիական, եվրոպական ու ամերիկյան երկրների տնտեսական հրաշքների իրականացման փորձը՝ օգտագործելով բազմաթիվ գրքեր, հոդվածներ, կայքեր, և կարևորվել ու արժևորվել են այն մոտեցումները, որոնց գործարկումը հնարավոր կլինի ՀՀ-ում տնտեսական հրաշք իրականացնելու համար: Դրա համար անհրաժեշտ է.

Առաջին՝ քաղաքական կամք, որն ունեն հանրապետության քաղաքական բարձրագույն իշխանությունները:

Երկրորդ՝ «հայկական հրաշքի» իրականացման գործիքակազմերը, որոնց փնտրտուքին էլ նպատակաուղղված է այսօրվա գիտաժողովը: Մենք հավակնություններ չունենք գործիքակազմեր հորինելու, քանի որ դրանք եղել են, կան ու կլինեն Եվրոպայում, Ասիայում և Ամերիկայում: Մեզ մնում է վերցնել այն գործիքակազմերը, որոնք գործածական կարող են լինել Հայաստանի Հանրապետությունում:

Տնտեսական հրաշքների իրականացման փորձից կարևորվել և արժևորվել են այն մոտեցումները, որոնց գործարկումը հնարավոր կլինի ՀՀ-ում: Դրանք ներկայացված են ժողովածուի թիվ 2 հավելվածում: Ուստի դրանց մանրամասնորեն չեմ անդրադառնա, այլ կներկայացնեմ լոկ ընդհանուր գծերով և այն էլ ամենակարևորները:

Այսպես, օրինակ,

1. «***տնտեսական վագր***» եզրույթը սկզբնապես օգտագործվում էր Ասիայի տարածքում գտնվող չորս պետությունների տնտեսությունները բնութագրելու համար[1], հետագայում այն վերագրվեց նաև այլ երկրների: Վերոնշյալ երկրների շարքին դասվում է նաև Իռլանդիայի Հանրապետությունը, որը մարդկային կապիտալ «ազատ արտահանող» աղքատ, գործազրկության բարձր մակարդակ ունեցող երկրից վերածվեց գիտելիքահենք տնտեսություն ունեցող, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և օտար-

[1] Birdsall, Nancy M.; Campos, Jose Edgardo L.; Kim, Chang-Shik; Corden, W. Max; MacDonald, Lawrence [editor]; Pack, Howard; Page, John; Sabor, Richard; Stiglitz, Joseph E.. 1993. The East Asian miracle: economic growth and public policy: Main report (English). A World Bank policy research report. New York, New York: Oxford University Press.

երկրյա ուղղակի ներդրումների ցուցանիշներով աշխարհում առաջատար դիրքերում գտնվող երկրի՝ շնորհիվ գյուղատնտեսության զարգացման:

2. Իսրայելում նախաձեռնված լայնամասշտաբ բարեփոխումները կոչվեցին «***տնտեսական հեղաշրջում***», որի հեղինակը ֆինանսների նախարարն էր: Ինչպես և Ինդոնեզիան, Իսրայելը ևս սկսեց մեծ թափով զարգացնել գյուղատնտեսությունը և դարձավ թարմ մթերքների, գյուղատնտեսական տեխնոլոգիաների համաշխարհային շուկայի առաջատար արտահանողներից՝ չունենալով հող և ջուր: Եվ այդ ամենին նրանք հասնում են շնորհիվ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման: Հարկերի հարցում Իսրայելում գերադասում են չկատակել պետության հետ և ժամանակին ու ամբողջությամբ վճարում են հարկերը, քանի որ հարկերից խուսափելու համար պատիժը չափազանց մեծ է: Իսրայելի ուժեղ կողմերից մեկն էլ բժշկությունն է, քանի որ այնտեղ շատ բարձր է գնահատվում յուրաքանչյուր մարդու կյանքը: Իսրայելի մյուս ուժեղ կողմը նրա բանակն է. այնտեղ բոլորը զորակոչվում են զինվորական ծառայության (տղամարդիկ ծառայում են 3 տարի, իսկ կանայք 2 տարի՝ սկսած 18 տարեկանից, նրանց բանակում 50 տարեկանից բարձր գեներալ չկա): Իսրայելում կյանքի մակարդակը ամենաբարձրն է Մերձավոր Արևելքում: Հրեա ժողովուրդն ունի ամուր միասնականություն, նրանք հայրենասերներ են ու սիրում են Իսրայելը, ինչում էլ կայանում է հրեաների ֆենոմենը[1]:

3. Չիլիի տնտեսական հեղափոխությունը կամ «տնտեսական հրաշքը» տեղի է ունեցել Նոբելյան մրցանակակիր Ֆրիդմանի գաղափարների ազդեցության տակ, երբ իրականացվեցին տնտեսության ազատականացման բարեփոխումները, իսկ 1970 թ. ընտրված նոր նախագահը ձեռնամուխ է եղել պղնձի հանքերի, ինչպես նաև օտարերկրացիներին պատկանող այլ սեփականության ազգայնացմանը: Չիլիացիներին ամենամոտ համակարգը, որ կիրառեցին չիլիացիները, Հարավային Կորեայի և Թայվանի փորձն է, որտեղ **կրթության համակարգը կարևոր դեր է խաղում**, **խրախուսվում է ուսումը արտերկրում**, **հատուկ ուշադրություն է դարձվում հայրենասիրության և թիմային ոգու զարգացմանը**:

4. Վիետնամը բարեփոխումների համար ընտրում է **չինական մոդելը՝ չդադարելով վերլուծել Արևելյան Եվրոպայի երկրների**, **Ռուսաստանի և ԱՊՀ երկրների փորձը**: Տնտեսական աճի տեմպերով (միջին տարեկանը՝ 6-7%) և գործազրկության ցածր մակարդակով (1.9%) Վիետնամը աշխարհի ամենաարագ զարգացող երկրներից մեկն է համարվում:

5. Թաիլանդը աշխարհում աչքի է ընկնում իր գործազրկության ամենացածր ցուցանիշով (2018 թ.՝ 1.2%): Թաիլանդի **կառավարությունը ընդլայնել է թվային տեխնոլոգիաների ոլորտում պետական ներդրումները՝ բարձր գիտական հասարակության ստեղծելու համար**: **Այս համատեքստում առաջնային իրականացվել են** արդյունաբերության, ռոբոտաշինության, զբոսաշրջության կազմակերպումը և գործարկման գործընթացը:

6. Ինդոնեզիայի կառավարությունը **խրախուսում էր թվային տնտեսության**

[1] https://mnews.world/ru/video/fenomen-izrailva-v-chem-sekret-uspeha-evreiskogo-gosudarstva/

զարգացումը արդյունաբերության և էլեկտրոնային առևտրի միջոցով: Ինդոնեզիայում ևս հատուկ ուշադրություն է դարձվել ազգաբնակչության կրթությանը, քանի որ կառավարությունը **գտնում էր, որ պետությունը կկայանա առողջ ու կրթված ժողովրդի միջոցով**:

Ինդոնեզիայի **նախագահը արգելել էր չմշակված հանքաքարի արտահանումը, ինչը խթանեց ներդրումների ներհոսքը և դրդեց մեծ գումարներ ներդնելու վերամշակման գործարանների շինարարության մեջ**:

Տնտեսական հրաշք իրականացրած երկրների զգալի մասը խրախուսել է թվային տնտեսության զարգացումը (Ինդոնեզիա, Վիետնամ, Թաիլանդ):

7. 2003 **թ. նոյեմբերին Վրաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունն անվանվեց «վարդերի հեղափոխություն», որն էապես ազդեց թե՛ ներքաղաքական և թե՛ աշխարհաքաղաքական զարգացումների վրա**: **Վրաստանի նոր իշխանությունը Միխեիլ Սաակաշվիլու գլխավորությամբ, ունենալով երկրի ազգաբնակչության հզոր աջակցությունը, կարճ ժամանակում կարողացավ բոլոր ոլորտներում փոխել իրավիճակը**: **Վրաստանում ընդունվեցին այնպիսի օրենքներ, որոնք դյուրացրին կոռումպացված պաշտոնյաների կալանավորումը և նրանց գույքի պետականացումն այն դեպքում, երբ նրանք չկարողացան ապացուցել այդ ունեցվածքի ծագման օրինական աղբյուրները**: **Արդյունքում ձերբակալվեցին մեծ թվով նախկին բարձրաստիճան պաշտոնյաներ, քրեական հեղինակություններ**:

8. «**Ասիական վագրերի», այդ թվում՝ նաև Մալայզիայի բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ տնտեսության արդիականացումը իրականացվել է արևմտյան և ազգային զարգացման մոդելների համադրման միջոցով**: **Որպես Մալայզիայի արդիականացման նախաձեռնող՝ Մահաթիր Մուհամմադն իրականացրեց բնակչության մտածելակերպի, առևտրի նկատմամբ նրա վերաբերմունքի փոփոխություն, ինչպես նաև կրթության մակարդակի բարձրացմանն ուղղված բարեփոխումներ: Նա որպես թիրախ ընտրեց մի քանի հիմնական ուղղություններ, և դրանց շուրջ սկսեցին իրականացվել մյուս բարեփոխումները**:

Ըստ էության, Մահաթիր Մուհամմադը առաջին հերթին սահմանազատեց կրոնն ու քաղաքականությունը, երկրորդ՝ ձեռնամուխ եղավ երկրի զարգացմանը: Դրա շնորհիվ, ժամանակակից ձեռքբերումներին, տնտեսական աճին և բարձր կենսամակարդակին զուգահեռ, մալայզիական հասարակությանը հաջողվել է պահպանել իր կրոնական ու մշակութային ավանդույթները: Մահաթիր Մուհամմադը քննադատում է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը»՝ շեշտելով, որ զարգացող երկրների ժողովուրդներին անհրաժեշտ են, առաջին հերթին, ոչ թե հռչակագրային իրավունքներ, այլ տնտեսության իրական առաջընթաց:

9. «Ճապոնական տնտեսական հրաշքից» (որը համեմատում են Ջորջ Մարշալի պլանի հետ) արժանահիշատակ և ՀՀ-ում գործարկելի են՝

9.1. ճապոնացիների աշխատասիրությունը և կարգապահությունը, ինչում էլ

կայանում է ճապոնացիների ֆենոմենը,

9.2. ճապոնական մենեջմենթի ներդրումը, որի էությունը կայանում է նրանում, որ պետական և ազգային նպատակներին հասնելու համար ճապոնացին անձնական շահը զոհում է հանուն պետության ու ազգի,

9.3. որոշումների կայացման գործընթացի համաձայնեցման սկզբունքի ներդրումը, երբ ընդունված որոշումը բխում է բոլորի շահերից, և դրա համար պատասխանատվությունն ընկնում է ոչ թե մեկի, այլ բոլորի վրա, ինչը չի կարող հանգեցնել ընդվզումների ու սթրեսների,

9.4. բնակչության խնայողությունների ուղղորդումը դեպի կապիտալի շուկաներ՝ ներդրումների նպատակով՝ ակտիվացնելով բաժնեմասային ֆինանսավորման մշակույթը, որի արդյունքում երկիրը արձանագրում է լրացուցիչ տնտեսական աճ:

10. Ինդոնեզիայի տնտեսական հեղափոխության փորձից արժանահիշատակ և ՀՀ-ում գործարկելի է այն, որ երկրում արգելվեց չմշակված հանքաքարի արտահանումը, ինչը խթանեց ներդրումների ներհոսքը և շահադրդեց մեծ գումարներ ներդնելու վերամշակող գործարանների շինարարության մեջ:

Կիրառական առաջարկություններ և եզրակացություններ

Հետազոտելով 20-րդ դարում «տնտեսական հրաշքներ» իրականացրած ավելի քան երկու տասնյակ պետությունների առաջավոր փորձը՝ եկել ենք այն եզրահանգման, որ դրանցում կիրառված հիմնուղիներից ու գործիքակազմերից ՀՀ տնտեսությունում գործարկելի ու արդյունքաստեղծ են հետևյալները.

1) հակակոռուպցիոն գործողությունների լայնածավալ ու արդյունավետ կազմակերպումը, ինչպես կատարվեց Սինգապուրում,
2) ճապոնական մենեջմենթի և որոշումների կայացման գործընթացի համաձայնեցման սկզբունքի ներդրումը,
3) բնակչության խնայողությունների ուղղորդումը դեպի կապիտալի շուկաներ, ինչպես կատարվեց Ճապոնիայում ու Չիլիում,
4) չմշակված հանքաքարի արտահանման արգելումը, ինչպես կատարվեց Ինդոնեզիայում,
5) բնական ռեսուրսները սահմանադրորեն ընդմիշտ ժողովրդին ընդհանուր սեփականության իրավունքով ամրագրելը, ինչպես կատարվեց Իսլանդիայում,
6) հատուկ ուշադրություն պետք է դարձնել հայրենասիրության, միասնականության, թիմային ոգու բարձրացմանը,
7) անհրաժեշտ է խրախուսել թվային տնտեսության զարգացումը և ուսումը:

Համոզված եմ, որ վերոնշյալ առաջարկությունների կիրարկումը կբարելավի Հայաստանի Հանրապետության տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշները և կամրապնդի երկրի դիրքը տարածաշրջանում:

Վերոնշյալների հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ «հայկական հրաշքը» պետք է կառուցվի՝ հաշվի առնելով մեր առավելությունները և թերությունները: Քանի որ յուրաքանչյուր երկիր իր առանձնահատկություններն ունի, միշտ չէ, որ այլ երկրների ձեռնարկած միջոցառումները որևէ երկրում ճշգրտորեն կրկնելը

հնարավոր է, կամ այն նույնքան արդյունավետ կլինի: Բայց արտերկրյա առաջավոր փորձի օգտագործումը, անկասկած, տնտեսության մեջ դրական տեղաշարժեր արձանագրելու առումով շատ արդյունավետ կարող է լինել, միաժամանակ կարող են բացահայտվել մինչ այդ չերևացող բազմաթիվ խնդիրներ: Ուստի մեծ է հավանականությունը, որ գիտաժողովում հնչեցված առաջարկությունները հաշվի առնելը դրական տեղաշարժեր կառաջացնի ՀՀ տնտեսությունում: Եվ ընդհանրապես բազմաթիվ հարցերի լուծումը այս գիտաժողովից հետո, թույլ տվեք հույս հայտնել, կարող է գոնե մեկ քայլ առաջ գնալ: Հայ ազգն ունի իրեն բնորոշ արժեհամակարգ (մենթալիթետ), պրպտուն մտքի տեր, ստեղծագործ մտածողությամբ որդիներ ու դուստրեր, բավականին արտաքին ներուժ (Սփյուռք), ապրում է արևոտ, անվտանգ, բերրի, չքնաղ ու ազատ երկրում: Մեզ պետք չէ դառնալ նոր Սինգապուր, նոր Ճապոնիա կամ նոր Իսրայել: Մեզ պետք է դառնալ նոր Հայաստան՝ առավել արդիական, ազատ ու հզոր:

«Տնտեսական հրաշք» իրականացրած երկրների փորձը, մասնավորապես թիվ 4 հավելվածի ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են, որ «տնտեսական հրաշք» իրականացրած բոլոր երկրներում եղել է հրաշքը իրականացրած ընդգծված հեղինակ, ասենք՝ որևէ նախարարի, բարձր պաշտոնյայի կամ դրսից հրավիրված հայտնի տնտեսագետի, ռեֆորմատորի (բարեփոխչի) կարգավիճակով, որի շուրջ համախմբվել են մյուս բոլորը: Մինչդեռ իմ դիտարկումները ցույց են տալիս, որ Հայաստանում իրականացվող տնտեսական հեղափոխությունը չունի ընդգծված հեղինակ: Ստեղծված իրավիճակում և հատկապես հետվիրուսային շրջանում Հայաստանում անհրաժեշտ է իրականացնել ոչ թե տնտեսական հեղափոխություն, այլ տնտեսական հրաշք, և անհրաժեշտ է, որ Հայաստանում տնտեսական հրաշքի իրականացումը կատարվի կոնկրետ բարեփոխչի ձեռքով, որի համար առաջարկում եմ ստորև բերվող 2 տարբերակ՝ 1-ին տարբերակը հարգարժան վարչապետին, իսկ երկրորդ տարբերակը՝ ինստիտուտի տնօրինությանը:

Տարբերակ 1-ին. փնտրել և կառավարություն հրավիրել բարեփոխչի (ռեֆորմատորի), ընդ որում՝ փոխվարչապետի կարգավիճակով, որը լինի անպայման արտերկրից, բայց ոչ նախկին Խորհրդային Միության հանրապետություններից, քանի որ այդ դաշտի ու նաև Հայաստանի երևելի տնտեսագետները խորհրդային կրթություն են ստացել, և դա նրանց կարող է խանգարել բարեփոխումների տեմպերի հարցում: Ուստի անհրաժեշտ է, որ այդ անձը լինի եվրոպացի կամ ամերիկացի և, բնականաբար, կրի նրանց արժեհամակարգը:

Որպես հավանական բարեփոխչի թեկնածու՝ առաջինը կարելի է նշել Տարոն Աճեմօղլուի անունը: Նա ծնվել է Ստամբուլում, կրթություն է ստացել Լոնդոնում, 2004-ին ստացել է Չիկագոյի համալսարանի Շուլցի մրցանակ, 2005-ին՝ Կլարկի մեդալ, որը տրվում է մինչև 40 տարեկան ամերիկյան ամենաանվանի տնտեսագետին (այն իր վարկանիշով զիջում է միայն Նոբելյան

մրցանակին), 2006-**ին ընտրվել է ամերիկյան գիտությունների ակադեմիայի անդամ**, 2007-**ին արժանացել է Ջոն Նեյմանի մրցանակի**: **Հայազգի ամերիկյան հայտնի տնտեսագետը տեղ է զբաղեցրել համաշխարհային** 100 **ինտելեկ-տուալների ցանկում և ընդամենը** 53 **տարեկան է**:

Կարելի է նշել նաև այլ թեկնածուների անուններ, իսկ նրանց օժանդակողի դերում կարող են և պետք է հանդես գան՝

1. **Հայաստանի տնտեսագիտական էլիտան և մյուս մտավոր սերուցքը**,
2. **պետական բուհերը**,
3. **պետական գիտական կազմակերպությունները**,
4. **պետական կառավարման մարմինները**:

Տարբերակ 2-**րդ. ինստիտուտի տնօրինությունը Գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ և նրա աջակցությամբ առաջիկա տարում պետք է հնարավորություն գտնի գիտաժողովի նյութերը ռուսերեն ու անգլերեն թարգմանելու և** 100-**ական օրինակ տպագրելու համար, և դրանք կտրամադրվեն ՀՀ ԿԳՄՍՆ-ին, որպեսզի դրանք գործածվեն՝**

ա) ապագա արտասահմանցի բարեփոխչիի և նրան օժանդակողների կողմից,

բ) կառավարության անդամների և ԱԺ պատվիրակությունների՝ միջազգային կազմակերպությունների, դեսպանների ու գործարար շրջանների հետ հանդիպումների ընթացքում:

Կարծում եմ, որ այս երկու տարբերակների զուգորդմամբ ու համատեղմամբ հնարավոր կլինի «տնտեսական հրաշք» իրականացնել Հայաստանի Հանրապետությունում, և մենք 3-5 տարի հետո կարձանագրենք իրականություն դարձած «տնտեսական հրաշքի» առաջին պտուղները:

Իսկ այժմ ցանկանում եմ համոզվածությամբ հույս հայտնել, որ ՀՀ ԳԱԱ ՏԻ աշխատանքի արդյունք հանդիսացող գիտաժողովի նյութերը կծառայեն իրենց նպատակին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի (ընդունված 14.04.2011 թ.) 4-րդ հոդվածի համաձայն՝ ակադեմիան գիտական գործունեության գծով ՀՀ կառավարության պաշտոնական խորհրդատուն է, որի առաջարկները քննարկում են ՀՀ կառավարությունը և պետական կառավարման համապատասխան մարմինները, ինչին էլ նպատակաուղղված է եղել ՀՀ ԳԱԱ ՏԻ նախորդ տարիների գիտական գործունեությունը, որի խոսուն վկաներն են հանդիսանում.

Առաջին՝«Ազգային տնտեսություն. ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հետազոտական հետագիծը (2007-2017 թթ.): Եզրակացություններ, կիրառական առաջարկություններ» գիրքը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 504 էջ:

Ժողովածուում ամփոփվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում 10 տարվա ընթացքում կատարված հետազոտական աշխատանքները, որոնցից բխող եզրակացություններն ու առաջարկությունները ամեն տարի ներկայացվել են ՀՀ կառավարությանը: Այն իրենում ներառում է շուրջ 5 տասնյակ կիրառական առաջարկություններ և եզրակացություններ,

որոնք վերաբերում են տարբեր բնագավառների ու ոլորտների, իսկ հասցեատերերը եղել են այդ տարիների վարչապետները և համապատասխան ոլորտային նախարարները: Այդ առաջարկություններից երկուսը Տիգրան Սարգսյանի վարչապետության օրոք բարձրացվել է օրենսդրական մակարդակի, ինչի արդյունքում 2009 թ. հունվարի 1-ից ուժը կորցրած են ճանաչվել «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը և «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթներ, իսկ առանձին կիրառական առաջարկություններ իրենց արտացոլումն են ստացել կառավարության հայեցակարգային փաստաթղթերում: Սակայն անուշադրության են մատնվել կիրառական և այն էլ արժեքավոր շատ առաջարկություններ (հատկապես հանքարդյունաբերության մասով), որոնք իրենց արդիականությունը պահպանում են մինչ օրս և օգտակար կարող են լինել ՀՀ կառավարությանը տարբեր ստորաբաժանումների ռազմավարական խնդիրները լուծելիս:

Երկրորդ՝ 2017 թ. գիտահետազոտական աշխատանքների կիրառական արդյունքները, որոնք վերաբերում են՝

1. ստվերային տնտեսության պատճառների քննական վերլուծությանը,
2. գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրներին,
3. միջուկային էներգետիկան զարգացնելու հիմնախնդիրներին,
4. տրանսֆերային գնագոյացման առանձնահատկություններին,
5. արտահանումը խթանելու և ներմուծումը փոխարինելու հիմնախնդիրներին,
6. ռազմաարդյունաբերության նորարարական զարգացման կլաստերային մեխանիզմներին,
7. փոքր և միջին ձեռնարկատիրության խթանմանը:

Սրանք թեմաներ են, որոնց արդիականությունը վիճարկելի չէ, քանի որ դրանք վերցված են ՀՀ կառավարության գործունեության ծրագրի ելակետային դրույթներից:

Երրորդ՝ «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտաժողովը, որի 22 գիտական հոդվածները բխում են ՀՀ կառավարության ծրագրի ելակետային դրույթներից (տե՛ս հոդվածների ժողովածուի 348 էջում տեղադրված թիվ 1 հավելվածը), ինչը վկայությունն է այն փաստի, որ գիտաժողովի նյութերի արդիականությունը վիճարկելի չէ: Վերջում ցանկանում եմ հավելել, որ ՀՀ ԳԱԱ ՏԻ կիրառական եզրակացություններն ու առաջարկությունները և նշված 2 գիտաժողովների նյութերն ու ընդհանրապես ինստիտուտի բոլոր հրապարակումները տեղադրված են ինստիտուտի կայքէջում (economics.sci.am):

Ինստիտուտի էլեկտրոնային կայքում տեղադրվելու են նաև սույն գիտաժողովի նյութերը:

Հավելված 3

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

հ/հ	*Անուն, ազգանուն*	*Գիտական աստիճանը, գիտական կոչումը, աշխատանքի վայրը*
1.	**Սամվել Բալասանյան**	Գյումրու քաղաքապետ
2.	**Մամիկոն Ասլանյան**	Վանաձորի համայնքի ղեկավար
3.	**Դիանա Գասպարյան**	Էջմիածնի քաղաքապետ
4.	**Գագիկ Մակարյան**	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ, ՀՀ Հանրային խորհրդի անդամ
5.	**Վլադիմիր Հարությունյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
6.	**Ռոբերտ Սարինյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, բաժնի պետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
7.	**Գրիգորի Վահանյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
8.	**Վիկտոր Զախարյան**	UNIDO-ի միջազգային փորձագետ
9.	**Թաթուլ Մկրտչյան**	ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
10.	**Աշոտ Մարկոսյան**	ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի նորարարության տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
11.	**Վալերի Միրզոյան**	Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
12.	**Դավիթ Հախվերդյան**	«Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
13.	**Էլյանորա Մաթևոսյան**	ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի նորարարության տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու
14.	**Բելլա Գաբրիելյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
15.	**Դավիթ Պետրոսյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ինստիտուտի ասպիրանտ
16.	**Աննա Հարությունյան**	ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու

17.	**Սևակ Թորգոմյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող
18.	**Գևորգ Հարությունյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
19.	**Շուշան Մովսիսյան**	«Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ, ՀՊՏՀ հայցորդ
20.	**Ռուբիկ Թովմասյան**	ՀԱԱՀ ագրարային էկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
21.	**Գայանե Թովմասյան**	ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող, տնտեսագիտության թեկնածու
22.	**Գևորգ Բախշյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
23.	**Ռոբերտ Թումանյան**	Չինաստանի Բանգոր Համալսարանի Մակրոէկոնոմիկայի դասախոս, տնտեսագիտության թեկնածու
24.	**Լիլիթ Սարգսյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն, տնտեսագիտության թեկնածու
25.	**Դոնարա Գրիգորյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող
26.	**Սվետլանա Դալլաքյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, բաժնի պետ
27.	**Քրիստինե Բաղդասարյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտ. քարտուղար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
28.	**Սոնա Մարգարյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող
29.	**Տաթևիկ Փարսադանյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
30.	**Տաթևիկ Շահինյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ինստիտուտի ասպիրանտ
31.	**Արմինե Զախարյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
32.	**Գրիգոր Մանուկյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

33. **Մերի Մանուչարյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, բաժնի պետ
34. **Մերի Մուրադյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնտեսագետ
35. **Վահագն Խաչատուրյան**	Տնտեսագետ, փորձագետ, տնտեսագիտության թեկնածու
36. **Արամ Խաչատուրյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
37. **Շողեր Պողոսյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
38. **Անուշ Սարգսյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ինստիտուտի ասպիրանտ
39. **Գոհար Ոսկանյան**	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու
40. **Ծաղկանուշ Միրզոյան**	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասիստենտ
41. **Ռազմիկ Իսահակյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
42. **Եվգենյա Հակոբյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
43. **Լիանա Ազատյան**	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող
44. **Աստղիկ Հովհաննիսյան**	ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող

Հավելված 4

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔ» ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՆՐԱՆՑ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

№	«Տնտեսական հրաշք» իրակա-նացրած երկրի անվանումը	«Տնտեսական հրաշք» իրակա-նացրած անձի անուն-ազգանունը	«Տնտեսական հրաշք» իրականացրած անձի զբաղեցրած պաշտոնը	«Տնտեսական հրաշքի» իրակա-նացման ժամանա-կահատվածը	Լրացուցիչ տեղեկություններ
1	2	3	4	5	6
1.	Գերմանիա	Լյուդվիգ Էրհարդ	Էկոնոմիկայի նախարար, ֆեդերատիվ կանցլեր	1948-1966	
2.	Չինաստան	Դեն Սյաոփին	Կուսակցության գլխավոր քարտուղար	1978-2014	
		Ցզյան Ցզեմին	Կուսակցության գլխավոր քարտուղար		
		Հու Ձինթաո	Կուսակցության գլխավոր քարտուղար		
		Սի Ձինփին	Կուսակցության գլխավոր քարտուղար		
3.	Սինգապուր	Լի Կուան Յու	Վարչապետ	1965-1995	
4.	Ճապոնիա	Հիրոհիտո	Ճապոնիայի կայսր	1950-1973	Ճապոնիայում իրականացված բարեփոխումների հեղինակներն են վարչապետներ՝ 1. Իչիրո Հատոյամա՝ 1956-1960 թթ.՝ «Ինքնուրույն տնտեսության ստեղծման ծրագրի», 2. Նոբուսուկե Կիսի՝ 1958-1962 թթ.՝ «Նոր երկարաժամկետ տնտեսական ծրագրի» 3. Հայաթո Իկեդա՝ 1961-1964 թթ. «Ազգային եկամուտների կրկնապատկման ծրագրի»
5.	Իսրայել	Դավիդ Բեն-Գուրիոն	Վարչապետ	1952-1963	
		Շիմոն Պերես	Իսրայելի վարչապետ, արտ. գործ. նախարար, փոխվարչապետ, ֆինանսների նախարար, տարածքային զարգացման նախարար, նախագահ	1984-2014	
6.	Մալայզիա	Մահաթիր Մուհամմադ	Վարչապետ	1981-2003	

1	2	3	4	5	6
7.	Նոր Զելանդիա	Ռոջեր Դուգլաս (1984-1990)	Ֆինանսների նախարար	1984-1995	Նոր Զելանդիայում բարեփոխումները սկսվեցին 1984 թվականին, երբ արտահերթ ընտրություններում հաղթեց լեյբորիստական կուսակցությունը, իսկ վարչապետ դարձավ Դեյվիդ Լանժը, սակայն որպես «տնտեսական հրաշք» իրականացնող անձինք պատմության մեջ հիշատակվում են երկրում այդ ժամանակ պաշտոնավարած ֆինանսների նախարարները, հետագայում երկրորդ նախարարի իրականացրած քաղաքականությունը պատմության մեջ մտավ որպես «ռութանազիա»:
		Ռութ Ռիչարդսոն (1990-1995)	Ֆինանսների նախարար		
8.	Ինդոնեզիա	Հաջի Մուհամմադ Սուխարտո	Նախագահ	1968-1998	
9.	Իտալիա	Ալբերտո Բենեդուչե	Հանրային հատվածի վարկավորման կոն-սորցիումի տնօրեն	1951-1962	Բանկային համակարգի բարեփոխումներ, ֆինանսական շուկայի զարգացում, արդյունաբերական պարտատոմսերի ներդրում
		Պասկուալե Սարասենո	Արդյունաբերական վերակառուցման ինստիտուտի տնօրեն	1951-1962	Բանկային հատվածի բարեփոխումներ
		Դոնատո Մենիչելլա	Կենտրոնական բանկի նախագահ	1951-1962	
10.	Իռլանդիա	Ջոն Բրատոն	Վարչապետ	1994-1997	
		Բերտի Ահերն	Վարչապետ	1997-2008	
11.	Հարավային Կորեա	Պակ Չոն Հի	Ազգային վերակառուցման գերագույն խորհրդի նախագահ (1961-1963), երկրի նախագահ (1963-1979)	1961-1979	Երկրում **տնտեսության զարգացման հնգամ-յակները** գոյություն են ունեցել մինչև 1984 թվականը Երեք հնգամյակների ընթացքում Հարավային Կորեան իրականացրել է մեծագույն տնտեսական թռիչք: Հաջողության հասնելու կախարդական բանաձևը շատ պարզ էր՝ **բռնապետություն + էժան աշխատուժ + օտարերկրյա կապիտալ = հարավկորեական տնտեսական հրաշք**
12.	Վրաստան	Մ. Սաակաշվիլի	Նախագահ	2004-2012	
		Կ. Բենդուկիձե	Էկոնոմիկայի նախարար		

1	2	3	4	5	6
13.	Չիլի	Աուգուստո Պինոչետ	Կառավարական խունտայի նախագահ (1973-1981), նախագահ (1974-1990), զինված ուժերի գերագույն հրամանատար (1973-1998)	1980-1997	
		Խոսե Պիներա	Հանքարդյունաբերության նախարար (1980-1981), աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարար (1978 -1980)		
		Հերնան Բուչի Բուկ	Ֆինանսների նախարար (1985-1989)		
14.	Հնդկաստան	Ռաջիվ Գանդի	Վարչապետ	1984-1989	
15.	Իսպանիա	Ֆրանցիսկո Ֆրանկո	Պետության ղեկավար (caudillo)	1963-1973	
		Ֆելիպե Գոնսալես	Վարչապետ	1986-1991	
16.	Էստոնիա	Յուրի Ռատաս	Մայրաքաղաք Տալլինի քաղաքապետ	2005-2007	ԷՀ-ն Եվրամիության ամենասակավաթիվ բնակչությամբ երկրներից մեկն է. բնակչությունը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1.319.133 մարդ: ԷՀ-ն տարեկան դիմավորում է ավելի քան 5.000.000 զբոսաշրջիկների, ինչը 3-ից 4 անգամ գերազանցում է երկրի բնակչության թվաքանակը և հաճախ համարվում է ռեկորդային ցուցանիշ
			ԷՀ օրենսդիր իշխանության փոխխոսնակ,	2007	
			վարչապետ	2016-2020	
17.	Ֆինլանդիա	Ուրհո Կեկկոնեն	Նախագահ	1-ին փուլ՝ 1960-ականներ	1960-ական թթ. Ֆինլանդիայում ձեռնարկվեցին հիմնական կառույցների և կառավարման համակարգի բարեփոխումներ Բարեփոխումների առանցքը կրթական համակարգն էր, իսկ 2-րդ փուլում՝ արդեն գիտելիքահենք տնտեսության կառուցումը. տեխնոլոգիական առաջընթացի խթանումը, ազգային նորարարական համակարգը
		Մարտի Ահտիսաարի	Նախագահ	2-րդ փուլ՝ 1990-ականներ	

1	2	3	4	5	6
18.	Լեհաստան	Լեշեկ Բալցերովիչ	Ֆինանսների նախարար	1989-1991	Բարեփոխումների սկզբնական ծրագիրը մշակվել է մի խումբ տնտեսագետների կողմից՝ Լեշեկ Բալցերովիչի գլխավորությամբ, իրագործվել են Մազովեցկու կառավարության կողմից: Լեհաստանի տնտեսական հրաշքը պայմանավորված էր ոչ թե անձերով, այլ բարեփոխումների շարունակականությունն ապահովելու իշխանությունների հաստատակամությամբ: Բարեփոխումները կարճաժամկետում բացասական ազդեցություն են ունեցել հասարակության բարեկեցության վրա, ինչը հանգեցրել է իշխանափոխության: Հաջորդ՝ բարեփոխումների նկատմամբ չեզոք իշխանությունները թեև նոր ծրագրեր չեն նախաձեռնել, սակայն նախորդ իշխանության կարևոր ծրագրերը չեն չեղարկել և թույլ են տվել, որ դրանք արդյունքներ տան: Հասարակությունը, տեսնելով այդ ծրագրերի երկարաժամկետ դրական արդյունքը, նորից ընտրել է բարեփոխումների հակված կառավարություն, որն էլ ձեռնամուխ է եղել նոր ծրագրերի իրականացմանը:
		Տադեուշ Մազովեցկի	Վարչապետ	1989-1991	
		Եժի Բուզեկ	Վարչապետ	1997-2001	
19.	Իսլանդիա	Յոհաննա Սիգուրդարդոտիր	Վարչապետ	2009-2011	2008 թ. հունվարին բանաստեղծ և երգիչ Հորդուր Տորֆասոնը խորհրդարանի շենքի դիմաց սկսեց քաղաքական բնույթի երգեր երգել, իսկ հոկտեմբերին դուրս եկավ փողոց խոսափողով և բոլոր ցանկացողներին առաջարկեց խոսել: Մեկ շաբաթ անց սկսվեցին զանգվածային կազմակերպված ցույցերը: Ի վերջո, աջակողմյան լիբերալ կառավարությունը ստիպված եղավ հրաժարական տալ: 2009-ի փետրվարին ձևավորվեց ձախակողմյան նոր կառավարություն:
20.	ՄԱԷ	Շեյխ Խալիֆա իբն Զայեդ ալ Նահյան	Նախագահ	2008-2019	
		Շեյխ Մուհամմադ իբն Ռաշիդ ալ Մակտում	Փոխնախագահ, վարչապետ և Դուբայի ղեկավար		

Հավելված 5

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀՐԱՎԻՐՅԱԼՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

	Կառուցվածքային ստորաբաժանման անվանումը, հրավիրյալի պաշտոնը և ա.-ա.	**Միավորների թիվը**
	1. **ՀՀ կառավարություն**	
1.	ՀՀ վարչապետ (Նիկոլ Փաշինյան)	1
2.	ՀՀ փոխվարչապետ (Միեր Գրիգորյան)	1
3.	Վարչապետի մամուլի խոսնակ (Մանե Գևորգյան)	1
		Ընդամենը՝ 3
	2. **ՀՀ գիտության և տնտեսական բլոկի նախարարությունների ներկայացուցիչներ**	
4.	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար (Արայիկ Հարությունյան)	1
5.	ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի նախագահ (Սարգիս Հայոցյան)	1
6.	ՀՀ Ֆինանսների նախարար (Ատոմ Ջանջուղազյան)	1
7.	ՀՀ Էկոնոմիկայի նախարար (Տիգրան Խաչատրյան)	1
8.	ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ (Էդվարդ Հովհաննիսյան)	1
		Ընդամենը՝ 5
	3. **ՀՀ ԱԺ գիտության և տնտեսական բլոկի հանձնաժողովների ներկայացուցիչներ**	
9.	ԱԺ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (Մխիթար Հայրապետյան)	1
10.	ԱԺ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (Բաբկեն Թունյան)	1
11.	ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (Արկադի Խաչատրյան)	1
		Ընդամենը՝ 3

	4. **Զեկուցողներ**	
12.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն (Վլադիմիր Հարությունյան)	1
13.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն (Լիլիթ Սարգսյան)	1
14.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտքարտուղար (Քրիստինե Բաղդասարյան)	1
15.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի բաժնի պետ (Մերի Մանուչարյան)	1
16.	ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի բաժնի պետ (Սվետլանա Դալլաքյան)	1
17.	Տնտեսագետ, փորձագետ (Վահագն Խաչատուրյան)	1
18.	Գյումրու քաղաքապետ (Սամվել Բալասանյան)	1
19.	Վանաձորի համայնքապետ (Մամիկոն Ասլանյան)	1
20.	Էջմիածնի քաղաքապետ (Դիանա Գասպարյան)	1
		Ընդամենը՝ 9
	5. **Գործարարների ներկայացուցիչներ**	
21.	ՀՀ Արդյունաբերողների և գործարարների միության նախագահ (Արսեն Ղազարյան)	1
22.	Հայաստանի Գործատուների հանրապետական միության նախագահ (Գագիկ Մակարյան) (հոդվածի հեղինակ)	1
		Ընդամենը՝ 2
	6. **ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ներկայացուցիչներ**	
23.	ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Նորարարության տնտեսագիտության ամբիոնի վարիչ (Աշոտ Մարկոսյան) (հոդվածի հեղինակ)	1
24.	ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան (Հայկ Սարգսյան)	1
25.	Ֆակուլտետի դասախոս, ժողովածուի խմբագրական խորհրդի անդամ (Տիգրան Հարությունյան)	1
		Ընդամենը՝ 3

	7. **ՀԱԱՀ ներկայացուցիչներ**	
26.	ՀԱԱՀ ռեկտոր (Վարդան Ուռուտյան)	1
		Ընդամենը՝ 1
	8. **ՀՊՏՀ ներկայացուցիչներ**	
27.	ՀՊՏՀ ռեկտոր (Դիանա Գալոյան)	1
		Ընդամենը՝ 1
	9. **Բանկիրներ**	
28.	ՀՀ ԿԲ նախագահ (Մարտին Գալստյան)	1
29.	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ գործադիր տնօրեն (Սարիբեկ Սուքիասյան)	1
30.	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ նախագահի խորհրդական (Դավիթ Հարությունյան)	1
		Ընդամենը՝ 3
	10. **Դեսպանատներ (հյուպատոսներ) և միջազգային ֆինանսական կազմակերպություններ**	
31.	Ճապոնիայի դեսպանատուն Երևանում Արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. պարոն Ջուն Յամադա	1
32.	Վրաստանի դեսպանատուն Հայաստանում Արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. պարոն Գիորգի Սագանելիձե	1
33.	Իսրայելի պատվավոր հյուպատոս Պարոն Աշոտ Շախմուրադյան	1
		Ընդամենը՝ 3
	11. **Այլ Կազմակերպություններ**	
34.	Նկարահանող (Արթուր Դանիելյան) (լրագրող)	1
35.	Նկարահանող (Նարինե Ադամյան) (լրագրող)	1
		Ընդամենը՝ 2

	12. **Միջազգային ֆինանսական կազմակերպություններ**	
36.	Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցչություն Հայաստանում Մշտական ներկայացուցիչ՝ տիկին Յուլիա Ուստյուգովա	1
37.	Համաշխարհային բանկի գրասենյակ Հայաստանում Հայաստանյան գրասենյակի տնօրեն՝ տիկին Սիլվի Բոսութոր	1
		Ընդամենը՝ 2
	13. **ՀՀ ԳԱԱ ղեկավարություն**	
38.	ՀՀ ԳԱԱ նախագահ (Ռադիկ Մարտիրոսյան)	1
39	ՀՀ ԳԱԱ փոխնախագահ (Յուրի Շուքուրյան)	1
40.	ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար (Յուրի Սուվարյան)	1
		Ընդամենը՝ 3
		Ընդամենը՝ 40

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔՆԵՐԸ».
ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ- ՀԱՏՈՐ 1)

Ժողովածուն նվիրվում է թավշյա հեղափոխության երկամյակին

(2018-2020 **թթ**.)

Հրատարակության խմբագիր՝ բ. գ. թ. Ա. Մանուկյան

Շարվածքը՝ Մ. Բաբայանի

Դ. Սարաֆյանի

Էջադրումն ու ձևավորումը՝ Մ. Համբարձումյանի

Չափսը՝ 70×100 1/16, 30.5 տպ. մամուլ

Տպաքանակը՝ 100 օրինակ: